TEXTS AND TRANSLATIONS OF THE CHRONICLE OF MICHAEL THE GREAT

Texts and Translations of the Chronicle of Michael the Great

General Editor

GEORGE A. KIRAZ

VOLUME 8

The Armenian Epitome of the Chronicle of Michael the Great

VERSION I

Edited by

TIGRAN SAWALANEANTS

Introduction by

ANDREA SCHMIDT

GORGIAS PRESS
2011

First Gorgias Press Edition, 2011

Copyright © 2011 by Gorgias Press LLC

All rights reserved under International and Pan-American Copyright Conventions. No part of this publication may be reproduced, stored in a retrieval system or transmitted in any form or by any means, electronic, mechanical, photocopying, recording, scanning or otherwise without the prior written permission of Gorgias Press LLC.

Published in the United States of America by Gorgias Press LLC, New Jersey

ISBN 978-1-61143-927-4

GORGIAS PRESS
954 River Rd., Piscataway, NJ 08854 USA
www.gorgiaspress.com

The paper used in this publication meets the minimum requirements of the American National Standards.

Printed in the United States of America

FOREWORD TO THE ARMENIAN VERSIONS I AND II

BY ANDREA SCHMIDT

Michael the Great held a prominent place in Armenian historiography. His Chronicle is constantly transmitted in Armenian manuscripts from the 13th to the 19th centuries[1]. Fifty years after the achievement of the original history by the Syriac patriarch, his Armenian translators Vardan Areweltsi and Isho‘ do not hold back from words of esteem and admiration for the author and his work; they praise its value for those Armenian readers « *who love erudition* », and put their appreciation into the words: ‘Michael's Chronicle is like a rich and useful garden, full of interesting thoughts and expressions. It assembles important events of ancient and contemporary history in many nations and countries of the world. Unknown and new information can be found in it collected from Greek, Roman, Egyptian, Hebrew and Syriac sources. The Syrian people speak the oldest language of the world; they are highly respected for their arts and knowledge. Michael is a representative of this old and scholarly tradition of the Syrians; his book is trustworthy, estimable and practical for those who love learning. Furthermore his history is a solid bulwark of the apostolic orthodox faith that the Armenians share with the Syrians; and the Syriac patriarch shows in his work a special love and understanding for the Armenians’[2].

As for the manuscripts, they, too, reflect the positive reception by the Armenians of Michael's Chronicle. Around 40 Armenian manuscripts are presently extant, very important ones being found in the libraries of Jerusalem, Erevan and Nor-Julfa (Isfahan)[3]. Most of these manuscripts are carefully written: the title and the beginning of the text is placed under a colorful *khoran* with ornaments, birds and zoomorphic initials[4]; the title is executed in red, blue or even golden letters; beautiful ornaments embellish the margins of the pages. Some manuscripts even give a portrait of Michael portraying him as a patriarch in rich liturgical vestments or as a diligent scribe[5]. In the Armenian manuscripts, Michael's Chronicle can mostly be found in combination with other historical works of Armenian writers (e.g. Samuel of Ani, Stephanus Orbelean Kirakos of Gandzak)[6] or with theological and canonical writings of distinguished Armenian authors like Nerses Shnorhali, Nerses of Lambron or Grigor of Narek. Rare are those manuscripts which contain only his history[7]. Besides the transmission of the complete text there can be found numerous minor and major extracts of Michael's Chronicle in Armenian manuscripts.

---

[1] See A. SCHMIDT, Manuscrits arméniens de la chronique du Michel le Syrien dans le fond patriarcal à Jérusalem, in: C. MUTAFIAN – G. DÉDÉYAN (ed.), *La Méditerranée des Arméniens (XI–XV siècle)*, Paris, 2012 (in print).

[2] See the translators' conclusions in their translation of *Version I*: Jerusalem 1870, pp. 610–11; *Version II*: Jerusalem 1871, pp. 41*–42*.

[3] See SCHMIDT, *Manuscrits arméniens de la chronique du Michel le Syrien.*

[4] See for example the beautiful Ms. Erev. 1518 (A.D. 1594–1600) written for the priest Serapion in Urfa, , the later Katholikos Girgor XIII (1603-1606). He himself was a historian and thus quite interested in the Chronicle. He was in the possession of another manuscript with Michael's history, Ms. Tübingen Ma XIII 70, which was written in A.D. 1432 in Agulis (Finkck– L. Gjandschezian (ed.), *Systematischer Hauptkatalog der Königlichen Universitätsbibliothek zu Tübingen. M. Handschriften, a. Orientalische*; vol. 13: *Verzeichnis der Armenischen Handschriften der Königlichen Universitätsbibliothek*, Tübingen, 1907, col. 108-110).

[5] See Ms. Erev. 1870 (A.D. 1602–18), fol. 1v; Ms. Erev. 6411 (A.D. 1658), fol. 2v.

[6] It is striking that Michael's Chronicle is not found together with the history of Vardan Areweltsi though he played such an important rôle for the origin of the Armenian translation and subsequent versions.



Ms. Erev. 6411, fol. 2v–3r (A.D. 1658): Michael the Syrian and the beginnning of the Chronicle placed under a *khoran*
© A. Schmidt

The translation of Michael's Chronicle was done in 1246/48[8] at the order of Catholicos Constantine Bardzrbertsi (1221-1267) at the patriarchal residence in Hromkla. The *Vorlage* was Michael's own manuscript from the monastery library of Barsauma. The Armenian translators were renowned personalities in the patriarchate and at the Armenian court of king Hethum in Cilicia: on the one hand Vardan Areweltsi (d. 1271) was a prominent historian[9] and theologian (*vardapet*) of the Armenian Church, since 1241 having been assigned to several ecclesiastical and royal missions in Cilicia, Armenia and the Mongol court; and on the other hand Isho'/Yeshu' of Hasankeyf (d. 1247)—according to the Armenian spelling also known as Ishokh[10]—, was a writer of philosophical texts and appointed priest of the Syriac Church of Our Lady in Hromkla[11]. He had close relations with the Syriac Patriarch Ignatius who lived at that time in the residence of the Armenian catholicos in Hromkla and allowing the use of Michael's autograph in his patriarchal library[12].

---

[7] For example the manuscripts Jerus. 343 (A.D. 1480) and Jerus. 32 (A.D. 1273), which were edited in Jerusalem 1870 and 1871; or the unpublished manuscripts Nor-Julfa 27 (A.D. 1674) and Erevan 5904 (13th c.), 10862 (A.D. ante 1639), 1485 (17th c.), Vienna 81 (16th c.), 236 (a 19th c. copy from a ms. of A.D. 1656).

[8] Two dates of the translation are given in the manuscripts: the year 695 (A.D. 1246) and 697 (A.D. 1248) of the Armenian era. Only a complete examination of all available manuscripts and a critical edition of the two distinct versions of the Armenian translation (in preparation by A. Schmidt) can clarify the question if the different dates indicate rather a process of translation (1246) and subsequent revision (1248), or a simple slip of the pen by the copyists of the manuscripts, because the Armenian letters ե for 5 and է for 7 are quite similar. The scientific literature generally dates the translation to A.D. 1248, see A.B. SCHMIDT, Die zweifache armenische Rezension der syrischen Chronik Michaels des Großen, in: *Le Muséon* 109 (1996), pp. 305–6.

[9] R.W. THOMSON, The Historical compilation of Vardan Arewelc'i, in: *Dumbarton Oak Papers* 43 (1989), p. 125–224; ID., Vardans Historical Compilation and its Sources, in: *Le Muséon* 100 (1987), p. 343–352. (See P. HALFTER – A. SCHMIDT, Der römische Stuhl und die armenische Christenheit zur Zeit Papst Innozenz IV. Die Mission des Franziskaners Dominikus von Aragon nach Sis und Hromkla und das Lehrbekenntnis des Katholikos Konstantin I. Bardzrbertsi, in: *Le Muséon* 116 (2003), pp. 91–135.)

[10] The Armenian tradition transformed the name afterwards into Sahak (Isaac), see SCHMIDT, Die zweifache armenische Rezension, p. 304 n. 29.

Both translators worked together in a bilingual cooperation of native speakers, which was not unusual in this period of the heyday of literary activity in Cilicia and the region of Antioch[13]. The Syrian Isho' perhaps worked out a first translation, and Vardan improved the text into a good and comprehensible Armenian style. However Vardan's part seems not only the revision in linguistic and literary regards. His rôle is also that of a co-author and historian. He continues Michael's Chronicle from A.D. 1216 up to his time (the year of the translation) relating the events in Armenia, Georgia and the Near East, and particularly in the Armenian kingdom of Cilicia under the rule of king Leo and his successor Hethum. He is much worried by the invasion of the Mongols ("Tartars", or "Nation of Archers"), a political event of imminent actuality. He laments the devastation of Armenia and gives information about the origin, settlements and customs of the Mongols. As a co-author he further supplements Michael's tables of patriarchs with a complete list of the Armenian patriarchs from the time of the apostle Thaddeus up to catholicos Constantine Bardzrbertsi, and, in an extra paragraph, he emphasizes the apostolic origin and orthodoxy of the Armenian church. Besides his own historical supplements Vardan embarks on a thorough revision of Michael's work. The structure and contents change significantly under his hand. The former arrangement of the historical material in three columns, separating profane and ecclesiastical history, and in 21 books and various chapters, is transformed by him into a continuous text[14]. Vardan changes the order of the chapters, he adds new material to the Syriac narratives or sums them up; he abbreviates other parts or cuts them down, shifting the focal points of the original text towards a pro-Armenian interpretation[15]. His attitude towards the different chronological data given by Michael the Syrian is focused on Armenian interests. The time of the Seleucids is in general maintained, but the chronological data using the Byzantine and Hijra eras is replaced by the Armenian calendar. The beginning is clearly made known by him when the Chronicle comes to the year 871 of the Seleucids (= year 1 of the Armenians according to Vardan)[16]. To put matters briefly: instead of an exact and literary translation, Vardan gives a paraphrastic rendering and introduces his specific views and concepts into the historic material. He changes Michael's Chronicle into a historical work of its own.

Hence the Syriac original and the Armenian Chronicle can hardly be read as identical texts. It nevertheless might be useful to compare the parallels in the Armenian translation, extant in very old manuscripts, with Chabot's edition or the Aleppo Codex for supplementing Syriac lacunae[17] and errors in the much later Syriac manuscript tradition, but prudence and a critical sense is required.

---

[11] See H. TAKAHASHI, Simeon of Qalʿa Rumaita, Patriarch Philoxenus Nemrod and Bar ʿEbroyo, in: *Hugoye* 4,1 (2001), [6 n. 22], [40] suggesting the identification of Ishokh with Isho' of Hasankeyf and not with the physician 'Isa of Edessa, who was active at the Cilician court in Sis (SCHMIDT, Die zweifache armenische Rezension, pp. 305–6).

[12] See the colophon in *Version I* : Jerusalem 1870, p. 612; V. LANGLOIS, Chronique de Michel le Grand, Venice 1868, p. 375.

[13] See A. SCHMIDT, Die armenisch-syrischen Beziehungen im Spiegel der kilikischen Übersetzungsliteratur, in: A. DROST-ABGARJAN – H. GOLTZ (eds.), *Armenologie in Deutschland. Beiträge zum ersten deutschen Armenologen-Tag*, (Studien zur Orientalischen Kirchengeschichte. 35), Münster 2005, p. 119–126, J. WEITENBERG, Armeno-Syrian Cultural relations in the Cilician Period (12.-14th c.), in: H. TEULE et al. (ed.), *The Syriac Renaissance*, (Eastern Christian Studies. 9), Leuven 2010, p. 341-352.

[14] In detail see SCHMIDT, Die zweifache armenische Rezension, pp. 307–19.

[15] See for example A. SCHMIDT, Syrische Tradition in armenischer Adaption. Die armenische Rezeption des Geschichtswerks von Michael Syrus und der antichalcedonische Judenbrief an Kaiser Markianos, in: R. LAVENANT (ed.), *VII. Symposium Syriacum*, (OCA. 256), Rome 1998, pp. 359–71.

[16] See *Version I*: Jerusalem 1870, p. 199; LANGLOIS, *Chronique de Michel le Grand*, p. 273; *Version II*: Jerusalem 1871, p. 256.

[17] See for example the supply of a preface, lacking in the Syriac Chronicle by the Armenian preface of *Version II*, see J.B. CHABOT, Chronique de Michel le Syrien, Patriarche jacobite d'Antioch*e*, vol. I, Paris 1899, p. 1–2.

The editorial situation of the Armenian translation is even more complicated. It has come down to us in two versions. On the one hand they differ in wording, names and chronological data[18], as well as in a series of omissions and additions; on the other hand both versions are written in the same style and are obviously from the same authors, Vardan Areweltsi in cooperation with Isho‘. Even though he articulates it in different ways, Vardan mentions in both versions the same historical circumstances of the translation of Michael's Chronicle[19]. In general, he maintains the same sequence of events, episodes and themes apart from a series of omissions, additions and changes of emphasis in the historical material.

The Armenian manuscript tradition witnesses both versions; they are both extant in very old manuscripts going back to the last decades of the 13th century, hence they go back very close to the lifetime of Vardan himself[20]. Yet only a critical edition and translation of the two versions can give us explicit clues for clarifying their differences and literary interdependency. At this state of research the designation *Version I* and *II* of the Armenian translation is used in a neutral sense, it does not express a priority in respect to the quality or chronological order of one or other version.

Version I was published in 1870 and *Version II* in 1871 in the Patriarchal monastery of Surb Yakob in Jerusalem. The edition of *Version I* is based on ms. Jerus. 343 (A.D. 1480), and *Version II* on ms. Jerus. 32 (A.D. 1273). They are important manuscripts; ms. Jerus. 32 is in fact the oldest manuscript available for *Version II*. However the editions do not respond to our present standard of scientific editions. *Version I* can be edited on the basis of much older manuscripts, and *Version II* must be compared with other ancient testimonies. What is more, the Jerusalem editions of 1870 and 1871 are not always reliable, they do not render fully the text of the manuscripts. Tigran Sawalaneants, the editor of the Jerusalem versions, has introduced small additions on his own authority which are not found in the manuscripts. He has homogenized or corrected names and words, and he has arranged the text into paragraphs, numbers, titles and chapters, which are not testified by the manuscripts. He even added variants and sections from other Jerusalem manuscripts without designating explicitly their origin (« an old manuscript », « six manuscripts » etc.). Sawalaneants' intention apparently was to bring a structure and standardization into the mass of text material, that is presented in the Armenian manuscripts – other than in the Syriac original – without clear arrangement in headings, summaries and chapters. Only the indication of the years at the beginning of a new period is marked out by red initials or majuscules; otherwise, the Chronicle is presented as a continuous text in the Armenian manuscripts.

However some parts in the Chronicle of the two Armenian versions are clearly singled out in the manuscripts. These parts are introduced by their own titles and separated from the preceding texts by an ornamental line; or the *Incipit* is written in red or highlighted in bigger and embellished letters. These parts are:

1. « The reasons for the Council of Chalcedon » (only in *Version II* as a separate title)
2. « The Plerophories of John Rufus » (in *Version I* and *II*), which is indeed a text which is found in Armenian manuscripts and literature[21] in a tradition independent of Michael's Chronicle.
3. The statement of the « beginning of the Armenian era in the year 871 of the Syrians » (title in *Version I* and *II*)
4. Michael's treatise on the « Ranks of Priesthood » (in *Version I* and *II*)[22]. This text is likewise transmitted separately in the manuscripts[23].

---

[18] *Version II*, for example, keeps more data of the Seleucid era from Michael's Chronicle than *Version I* which often replaces them by the general expression "in this time/in this year". *Version II* is also more interested in indicating the parallel years of the Armenian calendar besides the Seleucid era. Very frequently both versions differ for the same event in up to 13 years of computation according to the Armenian era.

[19] *Version I*, Jerusalem 1870, pp. 611–13; *Version II*, Jerusalem 1871, pp. 40*–42*.

[20] For the oldest manuscript tradition of the versions see SCHMIDT, Manuscrits arméniens de la chronique du Michel le Syrien.

[21] See A. SCHMIDT, Warum schreibt Petrus der Iberer an die Armenier? Ein pseudonymer Brief und die Armenisierung der syrischen Plerophorien, in: M. KOHLBACHER—M. LESINSKI (eds.), Horizonte der Christenheit, Erlangen 1994, pp. 250–67.

5. Michael's « Confession of Faith » (only in *Version I*)[24].
6. The « History of the Mongols» by Grigor of Akants (only in *Version II*).
7. The « Tables of the Patriarchs » (in *Version I* and *II*).

It is noteworthy that the probable pseudonymous treatises on « Priesthood » and « Faith » are considered in the Armenian tradition as Michael's original works; they are always transmitted together with his Chronicle. The « History of the Mongols» is likewise transmitted together with the Chronicle (*Version II*). The text is considered as a continuation of Michael's history up to the contemporary period of the writer, and its author is clearly named: Grigor from the famous Cilician monastery of Akants. Grigor was a close friend of Vardan Areweltsi[25], probably copying *Version II* from Vardan's original *Vorlage*, kept in the Cilician monastery of Awag[26], and adding his history to the Chronicle.



Ms. Jerus. 32 (A.D. 1273), fol. 169r:
The beginning of the Plerophories of John Rufus
© A. Schmidt

There are no translations of the Jerusalem editions. Widely known is a translation (Venice 1868) of the great French armenologist Victor Langlois (1829–1869), professor at the *École des langues orientales* in Paris and author of quite a number of works on Armenian numismatic, literature and history, especially on Cilicia. He used for his translation three manuscripts of the Mekhitarists' library in Venice and another of the Bibliothèque nationale in Paris[27]. The manuscripts, however, are of recent date (17th–18th cc.) and they render *Version I.* It is this use of different manuscripts which explains some dissimilarities between the translation of Langlois and the Armenian text of the Jerusalem edition of 1870, the latter based, as we have seen, on a much older manuscript from the year 1480.

---

[22] Michael's authorship and the Syriac origin of the text is uncertain, see D. WELTECKE, Die « Beschreibung der Zeiten » von Mor Michael dem Grossen (1126–1199). Eine Studie zu ihrem historischen und historiographiegeschichtlichen Kontext, (CSCO, 594; Subsidia, 110), Louvain 2003, p. 117.

[23] A quite old testimony is ms. Erev. 1098 (A.D. 1320). The text agrees with *Version I*, but the name of Michael as author of the treatise is not mentioned here.

[24] The authorship of Michael is dubious, see WELTECKE, *Die « Beschreibung der Zeiten » von Mor Michael dem Grossen*, p. 7, 92.

[25] See SCHMIDT, *Manuscrits arméniens de la chronique du Michel le Syrien.*

[26] See the summary of *Version II*, p. 45*.

[27] LANGLOIS, *Chronique de Michel le Grand*, p. 15. For the identification of the manuscrits which are described by Langlois only rather vaguely, see SCHMIDT, *Manuscrits arméniens de la chronique du Michel le Syrien.*

TEXT SUMMARY OF VERSION I

Preliminary note:

The number on the left is the page number of the Armenian edition, Jerusalem 1870, the number in square brackets is the corresponding page number of the French translation of Langlois.

As explained above, the chapters and headings in the Armenian edition are introduced by T. Sawalaneants, with the exception of the main title of the Chronicle. I have thus neither translated the titles nor respected his numbering of chapters. My assignment of the contents is done with regard to the Syriac text in order to facilitate comparison of the two texts. Only the key topics of the chapters are given here: thus they do not include all the details, or - what are often - only short mentions of events; rather, they just point to the general episodes and topics covered by the Chronicle.

Title	**Short histories of the times compiled from various historians by Mar Michael, patriarch of the Syrians, for those who love erudition, overviewed[28] from Adam until the last days [of our time]**
1 [17]	Preface.
5 [21]	From Adam to Jared; Jared's 40th year = 1000 year after Adam's departure from paradise.
9 [23]	Seth and Cain; pre-Flood kings.
11 [25]	Enoch to Noah; the Flood.
15 [26]	The Ark on Mount Ararat in Armenia.
15 [26]	Descendants of Shem, Japheth and Ham; the division of the earth.
20 [30]	The tower of Babel; the oldest language of the world.
22 [33]	Time of Serug and Nahor; Nimrod and Haik.
24 [34]	The Amazons.
25 [34]	The kings of Nimrod.
28 [36]	Abraham and the Chaldeans.
37 [41]	Time of Ishmael, Isaac, Jacob and Joseph.
41 [43]	Time of Moses.
51 [50]	Time of Joshua and the Judges.
59 [56]	Time of Saul, David and Solomon.
63 [58]	Meeting with, and questions and answers which the Queen of Sheba put to Solomon.
69 [61]	Time of the divided Kingdom.
79 [65]	End of the Kingdom of Israel; from Adam = 4330 years; other events in the world.

---

[28] According to the oldest manuscripts of *Version I*, the original title had no verb, see also the title of *Version II*. Later manuscripts have the variant "counted" instead of "overviewed", see SCHMIDT, *Manuscrits arméniens de la chronique du Michel le Syrien*.

80 [67]	Time of Hezekiah.
83 [69]	Time of Manasseh, Amon and Josiah.
87 [71]	Time of the Achaemenids, beginning with Nebuchadnezzar.
96 [76]	Time of Philip the Macedonian and Alexander the Great.
98 [77]	Time of the Ptolemies; the dynasty of Haik and the Armenian kingdom.
111 [85]	Time of Herod.
113 [87]	Birth of Jesus Christ and time of Augustus; from Adam to Christ's birth = 5198 years—or according to other calculations 5026, 5091, 5284, 5503 years.
123 [92]	Lists of the 12 and 72 Apostles [68 names].
127 [95]	Time of Tiberius; Philo of Alexandria.
129 [96]	Reign of Abgar, king of Armenia and Syria; the image of Christ, and the tunic of Christ.
134 [99]	Reign of Caligula and Claudius.
137 [101]	Destruction of Jerusalem by Vespasian; from Adam = 5495 years; reigns of Titus and Domitian.
139 [104]	Reign of Trajan and his successors; beginning of the reign of the Sassanian kings.
146 [111]	Reign of Diocletian and his colleagues.
149 [113]	Reign of Constantine; the conversion of the Armenians by Grigor [Lusaworitch].
152 [115]	The heresy of Arius.
156 [118]	Meeting of Pope Sylvester with the Armenian patriarch Grigor and emperor Constantine.
156 [118]	Council of Nicaea; from Adam = 5833 years.
159 [121]	Reign of the sons of Constantine.
162 [124]	The impious deeds of the emperor Julian.
171 [132]	Reign of Jovian and his successors.
177 [138]	Reign of Theodosius; the bishop Rufinus.
187 [144]	Reign of Arcadius and Theodosius the Younger.
190 [148]	The first and the second Councils of Ephesus.
198 [151]	Reign of Marcian; Council of Chalcedon.
202 [153]	Peter the Iberian's Letter to the Armenians.
204 [154]	**The Plerophoriae of John Rufus, disciple of Peter the Iberian.**
222 [167]	Reign of Leo, Zeno and Basiliscus.
226 [170]	Zeno re-establishes orthodoxy.
228 [171]	Reign of Anastasius; Jacob of Serug.
235 [175]	Reign of Justin [Justianus] and the persecution of the Orthodox.
242 [179]	Other events during his reign.

246 [182]	The kingdoms of Indians, Kushites and Himyarites; persecution of the Orthodox in Himyar.
252 [187]	Other events during his reign.
262 [193]	The plague in Constantinople and other calamities.
267 [196]	The appearance of many heresies.
269 [197]	The Arab king Harith.
270 [198]	The [fifth] Council of Constantinople; the heresy of the Julianists.
273 [199]	**Beginning of the Armenian Era in the year 871 of the Syrians** and 40 years after « *our* » persecution because of Chalcedon.
274 [200]	Troubles in Amida.
275 [201]	Condemnation of Julian of Halicarnass; death of Justinian.
276 [201]	Reign of Justin II.
277 [202]	His help for the Armenian Christians under Persian pressure.
278 [202]	Persecution of the Orthodox in Constantinople and elsewhere.
283 [204]	The Catholicos of Armenia in Constantinople; the Armenian Christians are a solid bulwark of orthodoxy.
284 [205]	Events between the Romans, Persians and Arabs.
287 [207]	Chosrow's present of 5000 virgins to the Turkish king.
289 [207]	Again, persecution of the Orthodox; Tiberius proclaimed emperor.
290 [208]	The Persian war in Armenia; the destruction of Melitene and the fate of the Armenians.
295 [211]	Meeting of Mundhir with Tiberius and other events.
299 [214]	The pious deeds of Tiberius for the poor; beginning of the reign of Maurice.
300 [215]	Events in Persia; peace between the Romans and Persians; the murder of Maurice.
302 [217]	Reign of Phokas; Chosrow conquers Mesopotamia.
304 [218]	Theological dispute of the Syrians and Armenians with the Chalcedonians before Chosrow.
308 [220]	Athanasius, patriarch of Antioch.
310 [222]	Beginning of the reign of Heraclius; Persian conquest of Jerusalem, Egypt and other Roman territories.
312 [223]	Appearance of Muhammad in Arabia; other military events between the Romans and Persians; the situation in the Armenian Church under the heretical catholicos Ezr; the Syriac patriarch Athanasius.
319 [229]	Death of Muhammad; reign of the Arab king ‘Umar, Damascus his new capital.
323 [232]	Death of the Persian king Yazdgard, end of the Persian empire.
326 [234]	Death of Heraclius and ‘Umar; ‘Uthman his successor conquers Cilicia and Cyprus.
328 [235]	Letter of the Syriac patriarch Athanasius to the Armenian catholicos Christophorus about the wicked Barsauma of Nisibis.

334 [238]	Devastation of Cyprus, Rhodes and other islands by the Arabs; appearance of the heretic Maximus.
336 [239]	The Arabs before Constantinople; reign of Constans.
338 [241]	Murder of ʻUthman, divisions between the Arabs about his succession; murder of Constans; beginning of the reigns of emperor Constantius and the Arab king Muʻawiya.
339 [242]	Arab invasion in Cilicia and Africa; invention of Naphtha-fire by the Syrian Callinicus; death of Muʻawiya and Constantius, beginning of the reign of Justinus.
341 [244]	Military encounters between the Romans and the Arabs; on Jacob of Edessa; the deposition of Justinus; reign of ʻAbdulmalik.
344 [247]	On patriarch Athanasius bar Gumaye and his purchase of the "acheiropoieton" image of Christ.
345 [248]	Emperor Justinian, with the help of the Khazars, returns to Constantinople; Armenian settlement in Melitene; the end of the reign of ʻAbdulmalik.
347 [250]	Death of Justinian; events during the reigns of emperor Leo and the Arab Maslama.
350 [253]	Anti-Christian orders by the Arabs; patriarch Athanasius of Antioch and the Armenian catholicos John Odznetsi; the land of Sasun, Vaspurakan and Albania inhabited by orthodox Armenians and Syrians.
352 [254]	The Syrian-Armenian synod of Mantzikert, condemnation of the heresy of Julian of Halicarnassus (Phantasiasts) in the year 1035 according to the Syrians, and the year 166—or 135—according to the Armenians.
353 [255]	Beginning of the Turkish invasion in Azerbaijan; death of Leo and the Arab king Hisham; civil war among the Arabs.
356 [258]	Cosmological prodigies and a serious earthquake in the Eastern Mediterranean countries; the murder of the Arab king Marwan; the emperor Constantine shares power with his son Leo.
360 [260]	Leo settles Syrians and Armenian from Melitene in the Roman empire; the [seventh] Council of Constantinople, condemnation of the veneration of images and the heretic Maximus; Leo's sympathy with the Orthodox.
361 [261]	Events during the reign of Abu Jaʻfar; reconstruction of Melitene, Erzerum, Ani.
363 [262]	Events during the reigns of the emperor Leo and the Arab king Mahdi; the settlement of Armenians and Syrians in Thrace; Constantine becomes emperor.
365 [263]	Events during the reign of Harun; the fall of the emperor Constantine and his mother.
368 [266]	Beginning of the reign of emperor Nicephorus; Bishop Ananias buys precious relics of prophets and apostles; death of Harun and Nicephorus.
370 [267]	Reign of emperor Michael [II]; civil war among the Arabs.
373 [269]	Military and other events at the time of the emperor Theophilus and Ma'mun; the Kurdish people; the town Basra; George, king of the Nubians, visits the Arabs and patriarch Dionysius.
381 [274]	Theophilus' military expedition to Melitene and Lesser Armenia; destruction of Ancyra and Amorium by the Arabs.

384 [276]	Events during the short reigns of several Roman emperors and six Arab caliphs.
386 [278]	The reign of the emperor Romanus [II]; the re-conquest of Lesser Armenia, Cilicia and Antioch.
389 [279]	The debate of patriarch John of Antioch with the Chalcedonians in Constantinople, his imprisonment by the emperor Nicephorus; the murder of Nicephorus by Theophanou; she marries John Tzimiskes, of Armenian origin; the persecution of the Orthodox in Antioch by the Greek patriarch.
391 [281]	The reigns of Basil [II] and Constantine [VIII]; the reign of Romanus [III]; the Syriac patriarch John at a synod with the Chalcedonians in Constantinople, his sanctity, and his death in prison.
394 [283]	Reign of the emperor Michael [VII]; after him Zoe and Theodora; the Arab caliph ‘Abdullah.
394 [284]	The origin of the Turkish people and their original settlement behind the „Breasts of the North“; their customs and religion; the Byzantine embassy at the Khakan’s court; their settlements after the invasions.
400 [289]	Reign of Constantine [IX] Monomachos; the Arab caliph Abul Abbas; Togri-bek, the first king of the Turkish people; the Turkish invasion in Armenia, Persia, Syria.
403 [291]	Several Roman emperors; the rebuilding of the wall of Melitene; the Turkish conquest of Aleppo and other parts of the Roman empire, up to the Mediterranean and the Pontus; patriarch Athanasius and the Orthodox in Antioch are harassed by the patriarch of Constantinople.
404 [292]	Alp Arslan invades Armenia; Romanos [IV] Diogenes faces the Turkish army in Kars; the beginning of the reign of Michael [VII].
405 [293]	Philaretus the Armenian re-conquers Turkish strongholds; the political entente between the Turkish and Arab peoples.
408 [295]	The time of Nicephorus [III] and Alexis; the Turks in Jerusalem; the arrival of the Franks in Antioch and Edessa.
411 [297]	The beginning of the reign of Qilij-Arslan; the conquest of Jerusalem and massacre by the Franks; Godefroid and Baudouin rulers of Jerusalem; Turkish rule over Melitene.
413 [299]	Quarrels in the Turkish realm after the death of Qilij-Arslan; the foundation of the order of the Hospitaller knights.
416 [301]	On the Turk Balaq; the Armenian emigration to Sebaste and Cilicia; the Armenian dynasty of the Rubenids.
419 [302]	The siege of Melitene and Aleppo by the Turks; the miracles performed by the relic of the right arm of St. Barsauma, and by the holy lance.
424 [305]	Events during the reign of the emperor Manuel; the Frankish ruler Baudouin and the Turkish Qara Arslan; the conquest of Edessa by the Turks; short history of Edessa.
427 [307]	Thoros, the Armenian ruler over Cilicia; the sack of the monastery of Barsauma at the hands of Joscelin.

430 [310]	The Franks' conquest of Ashqelon; Thoros defeats the Greek army at Tarsus; the Arab power in Egypt; events in the Turkish realms; the beginning of the rule of Qilij-Arslan.
437 [314]	The Armenians in Antioch and Marash; the Franks in Cyprus and Harim; the Atabeks of Khorasan and the Khakans of Cappadocia; events in the Frankish and Armenian realms.
441 [317]	The Arab settlement in Spain and propagation of Islam; wars between Manuel, Nur ad-Din and Qilij-Arslan; the defeat of the Turks in Erzerum by the Georgian king; events in the realms of the Armenians, Franks and Turks.
447 [320]	Military confrontations between Ya'kub-Arslan, Qara-Arslan and Qilij-Arslan, and between the Greeks and the Armenians in Cilicia; the Georgian king conquers Dvin; Nur ad-Din enters Aleppo and Tripolis; Amaury enters Egypt; the defeat of the Frankish troops at Harim.
453 [324]	War between Thoros and Nur ad-Din at Marash; the second entry of Amaury in Egypt; the death of the Armenian Thoros; divisions between Sunnites and Shi'ites in Egypt; the origin and reign of Salah ad-Din (Saladin) in Egypt; on Dionysius bar Salibi.
459 [329]	Reign of the emperor Manuel; the attempt to reunite the Armenian Church to the Byzantine; the debate on theological and liturgical matters between Theorianus and the Armenian catholicos Nerses.
463 [331]	Amaury in Egypt; earthquake in Antioch.
466 [333]	Death of the Atabek of Mosul; Nur ad-Din increases his power; Qilij-Arslan rules over Melitene; time of snow and hunger.
470 [335]	Propaganda of the Armenian dissidents in Edessa; the Armenian catholicos Nerses and his successor Grigor Abirad; the exchange of letters of consent and faith between the Syriac patriarch and the Armenian catholicos.
473 [337]	The deaths of Nur ad-Din and of Amaury; Qilij-Arslan increases his influence; the murder of Mleh in Cilicia; the Turks in Sasun.
476 [339]	Salah ad-Din departs from Egypt and takes control of Damascus; the release of the Frankish prisoners in Aleppo; the war with Seif ad-Din.
478 [341]	The death of Najim ad-Din of Mardin; war between Manuel and Qilij-Arslan; the Turkish oppression of Christians in Melitene.
483 [343]	The war of Salah ad-Din with the Franks in Palestine and his defeat; his victories in Baalbek and Damascus.
487 [345]	The death of the emperor Manuel; military events among the Turks; the death of Seif ad-Din.
490 [346]	The struggle over succession between Andronicus and Isaac [II] in Constantinople; the murder of Andronicus; the deaths of the Turkish Atabeks of Amida, Mardin and Khelat; military expeditions of Saladin; Leon prince of Cicilia.
493 [349]	The war between the Kurds and Turcomans; the customs and settlements of the Kurds.
495 [350]	Saladin conquers Jerusalem, Akko and the whole of Palestine; the war between Qilij-Arslan and his son.

502 [354]	The Franks arrive in Akko to liberate Jerusalem; the defeat of the Turks at Iconium by German troops; their emperor [Frederick Barbarossa] drowns at Silifke; the support of the Frankish troops by the Armenian prince Leo.
505 [356]	The deaths of Qilij-Arslan and Saladin, the struggle of their successors.
509 [359]	Leo, Armenian king of Cilicia [1187–1219]; the wealth and prosperity of his country.
510 [360]	[1. Continuation] King Hethum [1226–1269] and his pious wife Zabel, the daughter of king Leo, are ruling « *today* » over Cilicia.
511 [—][29]	Political events in Armenia, Georgia and the Near East between 665 of the Armenian era [A.D. 1216] and 678 [A.D. 1229].
532 [361]	Intercession to God for the king and the queen. « *We want to speak now about the institution of priesthood …* ».
532 [—][30]	**Mar Michael on the Ranks of Priesthood and from where it took its origin.**
574 [—][31]	**The Confession of Faith of Michael, patriarch of the Syrians.**
583 [363]	**Tables of the Patriarchs of Antioch, Rome, Alexandria, Ephesus, Constantinople, Jerusalem.**
593 [365]	[2. Continuation] The apostolic origin and orthodoxy of the Armenian Church.
599 [368]	The succession of the Armenian patriarchs from the apostle Thaddeus up to the catholicos Nerses Shnorhali « *in our time* ».
608 [373]	[3. Continuation] From catholicos Gregor [IV Tgha] up to Constantine Bardzrbertsi, who « *is now in the 25th year of his patriarchate at Hromkla* »; eulogy on catholicos Constantine.
611 [374]	The translation from Syriac into Armenian ordered by Constantine; the value of Michael's Chronicle for the Armenians.
611 [374]	The date of the translation in the year 697 of the Armenians and in the year 1248 during the patriarchate of catholicos Constantine and the reign of king Hethum and his wife Zabel; the Syriac patriarch Ignatius has given the original of the Chronicle to the priest Isho' for translation.
613 [375]	[4. Continuation] The invasion of the « nation of archers » [Mongols] into Armenia, their looting and devastation of the country; the origin, customs and settlements of the Mongols.
621 [378]	Wishing a long life for king Hethum and catholicos Constantine.

---

[29] This part, pp. 511–31 (according to the manuscript tradition), does not belong to *Version I*. T. Sawalaneants has taken over the text from *Version II* (ed. Jerusalem 1871, pp. 503–25) and inserted it into his edition.

[30] Not translated by Langlois.

[31] Not translated by Langlois.

TEXT SUMMARY OF VERSION II

Preliminary note:

The number on the left is the page number of the Armenian edition, Jerusalem 1871. The division into chapters is made in accordance to *Version I*. The numbering of chapters and the titles of the Jerusalem edition is not respected.

Title	**Mar Michael, the patriarch of the Syrians: Chronicle from Adam up to us**
1	Preface.[32]
4	From Adam to Jared; Jared's 40th year = 1000 year after Adam's move from Paradise.
6	Seth and Cain; pre-Flood kings.
8	Enoch to Noah; the Flood.
10	The Ark on Mount Ararat in Armenia.
15	Tower of Babel; the language of Paradise.
16	Time of Serug and Nahor; Nimrod and Haik.
17	The Amazons.
19	Kings of Nimrod.
22	Abraham and the Chaldeans.
25	Time of Ishmael, Isaac, Jacob and Joseph.
29	Time of Moses.
33	Time of Joshua and the Judges.
39	Time of Saul, David and Solomon.
43	Time of divided Kingdom.
54	End of Kingdom of Israel; from Adam = 4330 years; other events in the world.
54	Time of Hezekiah.
58	Time of Manasseh, Amon and Josiah.
62	Time of the Achaemenids, beginning with Nebuchadnezzar.
71	Time of Philip the Macedonian and Alexander the Great.
73	Time of the Ptolemies; the dynasty of Haik and the Armenian kingdom.
86	Time of Herod.
88	Birth of Jesus Christ and time of Augustus; from Adam to Christ's birth = 5198 years—or according to other calculations 5026, 5091, 5284, 5503 years.

---

[32] See the French translation by D. Parisot in I.-B. CHABOT, *Chronique de Michel le Syrien, Patriarche jacobite d'Antioche*, vol. I, Paris 1899, p. 1–2.

100	Lists of the 12 and 72 Apostles [69 names].
104	Time of Tiberius; Philo of Alexandria.
105	Reign of Abgar, king of Armenia; the image of Christ.
108	Reign of Caligula and Claudius.
111	Destruction of Jerusalem by Vespasian; from Adam = 5437 years; reigns of Titus and Domitian.
114	Reign of Trajan and his successors; beginning of the reign of the Sassanian kings.
123	Reign of Diocletian and his colleagues.
127	Reign of Constantine; the conversion of the Armenians by Grigor [Lusaworitch].
130	The heresy of Arius.
133	Council of Nicaea; from Adam = 5833 years.
136	Reign of the sons of Constantine.
139	The impious deeds of the emperor Julian.
146	Reign of Jovian and his successors.
152	Reign of Theodosius; the bishop Rufinus.
161	Reign of Arcadius and Theodosius the Younger.
164	The first and the second Councils of Ephesus.
166	**The reasons for the Council of Chalcedon.**
171	Reign of Marcian; Council of Chalcedon.
174	Peter the Iberian's letter to the Armenians.
176	**The Plerophoriae of John Rufus, disciple of Peter the Iberian.**
207	Reign of Leo, Zeno and Basiliscus.
211	Zeno re-establishes orthodoxy.
213	Reign of Anastasius.
218	Reign of Justin [Justianus] and the persecution of the Orthodox.
225	Other events during his reign.
228	The kingdoms of Indians, Kushites and Himyarites; persecution of the Orthodox in Himyar.
233	Other events during his reign.
243	The pest in Constantinople and other calamities.
248	The appearance of many heresies.
250	The Arab king Harith.
251	The [fifth] Council of Constantinople; the heresy of the Julianists.
256	**Beginning of the Armenian Era in the year 871 of the Syrians.**
256	Troubles in Amida after 40 years of persecution, and the sowing of the Chalcedonian heresy.

257	Condemnation of Julian of Halicarnassus; death of Justinian.
258	Reign of Justin II.
260	His help for the Armenian Christians under Persian pressure.
261	Persecution of the Orthodox in Constantinople and elsewhere.
264	The Armenian catholicos of Dvin in Constantinople; the Armenian Christians are a solid bulwark of orthodoxy.
266	Events between the Romans, Persians and Arabs.
269	Chosrow's present of 5000 virgins to the Turkish king.
271	Again, persecution of the Orthodox; Tiberius proclaimed emperor.
272	Persian war in Armenia; destruction of Melitene and the fate of the Armenians.
276	Meeting of Mundhir with Tiberius and other events.
280	The pious deeds of Tiberius for the poor; beginning of the reign of Maurice.
281	Events in Persia; peace between the Romans and Persians; the murder of Maurice.
284	Reign of Phokas; Chosrow conquers Mesopotamia.
285	The theological dispute of the Syrians and Armenians with the Chalcedonians before Chosrow.
292	Beginning of the reign of Heraclius; the Persian conquest of Jerusalem, Egypt and other Roman territories.
293	The appearance of Muhammad in Arabia; other military events between the Romans and Persians; the situation in the Armenian Church under the heretical catholicos Ezr; the return to the orthodox belief under the Armenian patriarch John Odznetsi; the Syriac patriarch Athanasius.
303	Death of Muhammad; reign of the Arab king ʻUmar; Damascus his new capital.
307	Death of the Persian king Yazdgard; end of the Persian empire.
310	Death of Heraclius and ʻUmar; ʻUthman his successor conquers Cilicia and Cyprus.
313	Letter of the Syriac patriarch Athanasius to the Armenian catholicos Christophorus about the wicked Barsauma of Nisibis.
318	Devastation of Cyprus, Rhodes and other islands by the Arabs; appearance of the heretic Maximus.
321	The Arabs before Constantinople; the reign of Constans.
323	The murder of ʻUthman, divisions among the Arabs over his succession; the murder of Constans; beginning of the reigns of emperor Constantius and the Arab king Muʻawiya.
324	Arab invasion in Cilicia and Africa; invention of Naphtha-fire by the Syrian Callinicus; death of Muʻawiya and Constantius, beginning of the reign of Justin.
327	Military encounters between the Romans and the Arabs; on Jacob of Edessa; the deposition of Justin; the reign of ʻAbdulmalik.
329	On patriarch Athanasius bar Gumaye and his purchase of the "acheiropoieton" image of Christ.

331	The emperor Justinian, with the help of the Khazars, returns to Constantinople; the Armenian settlement in Melitene; the end of the reign of ‘Abdulmalik.
333	Death of Justinian; events during the reigns of the emperor Leo and the Arab Maslama.
338	Anti-Christian orders by the Arabs; patriarch Athanasius of Antioch and the Armenian catholicos John Odznetsi; the land of Sasun, Vaspurakan and Albania inhabited by orthodox Armenians and Syrians.
339	The Syrian-Armenian synod of Mantzikert; condemnation of the heresy of Julian of Halicarnassus (Phantasiasts) in the year 1035 according to the Syrians, and the year 164 according to the Armenians.
340	Beginning of the Turkish invasion in Azerbaijan; death of Leo and the Arab king Hisham; civil war among the Arabs.
344	Cosmological prodigies and a serious earthquake in the Eastern Mediterranean countries; the murder of the Arab king Marwan; the emperor Constantine shares power with his son Leo.
348	Leo settles Syrians and Armenian from Melitene in the Roman empire; the [seventh] Council of Constantinople, condemnation of the veneration of images and of the heretic Maximus; Leo’s sympathy with the Orthodox.
350	Events during the reign of Abu Ja’far; the reconstruction of Melitene, Erzerum, Ani.
353	Events during the reigns of the emperor Leo and the Arab king Mahdi; settlement of Armenians and Syrians in Thrace; Constantine becomes emperor.
357	The beginning of the reign of the emperor Nicephorus; Bishop Ananias buys precious relics of prophets and apostles; the deaths of Harun and Nicephorus.
360	The reign of the emperor Michael [II]; civil war among the Arabs.
362	Military and other events at the time of the emperor Theophilus and Ma’mun; the Kurdish people; the town Basra; George, king of the Nubians, visits the Arabs and patriarch Dionysius.
371	Theophilus’ military expedition to Melitene and Lesser Armenia; the destruction of Ancyra and Amorium by the Arabs.
374	Events during the short reigns of several Roman emperors and six Arab caliphs.
378	The reign of the emperor Romanus [II]; the reconquest of Lesser Armenia, Cilicia and Antioch.
380	The debate of the patriarch John of Antioch with the Chalcedonians in Constantinople; his imprisonment by the emperor Nicephorus; the murder of Nicephorus by Theophanou; she marries John Tzimiskes of Armenian origin; the persecution of the Orthodox in Antioch by the Greek patriarch.
384	The reigns of Basil [II] and Constantine [VIII]; the reign of Romanus [III]; the Syriac patriarch John at a synod with the Chalcedonians in Constantinople, his sanctity, and his death in prison.
386	Reign of the emperor Michael [VII]; after him, Zoe and Theodora; the Arab caliph ‘Abdullah.

387	The origin of the Turkish people and their original settlement; their customs and religion; the Roman embassy at the Khakan's court; their settlements after the invasions.
393	Reign of Constantine [IX] Monomachos; the Arab caliph Abu'l 'Abbas; some Christians in Antioch deny the orthodox faith and take control of the church St. Luke; Togri-bek, the first king of the Turkish people; the Turkish invasion in Armenia, Persia, Syria.
396	Several Roman emperors; the rebuilding of the wall of Melitene; the Turkish conquest of Aleppo and other parts of the Roman empire, up to the Mediterranean and the Pontus; patriarch Athanasius and the Orthodox in Antioch are harassed by the patriarch of Constantinople.
398	Alp Arslan invades Armenia; Romanos [IV] Diogenes faces the Turkish army in Kars; beginning of the reign of Michael [VII].
399	Philaretus the Armenian re-conquers Turkish strongholds; the political entente between the Turkish and Arab peoples.
401	The time of Nicephorus [III] and Alexis; the Turks in Jerusalem; the arrival of the Franks in Antioch and Edessa.
405	Beginning of the reign of Qilij-Arslan; conquest of Jerusalem and massacre by the Franks; Godefroid and Baudouin rulers of Jerusalem; Turkish rule over Melitene.
407	Quarrels in the Turkish realm after the death of Qilij-Arslan; foundation of the order of the Hospitaller knights.
410	On the Turk Balaq; the Armenian emigration to Sebaste and Cilicia; the Armenian dynasty of the Rubenids.
412	The siege of Melitene and Aleppo by the Turks; the miracles performed by the relic of the right arm of St. Barsauma and by the holy lance.
417	Events during the reign of the emperor Manuel; the Frankish ruler Baudouin and the Turkish Qara Arslan; the conquest of Edessa by the Turks; short history of Edessa.
422	Thoros, the Armenian ruler over Cilicia; the sack of the monastery of Barsauma at the hands of Joscelin.
424	The Franks' conquest of Asqelon; Thoros defeats the Greek army at Tarsus; the Arab power in Egypt; events in the Turkish realms; the beginning of the rule of Qilij-Arslan.
436	The Armenians in Antioch and Marash; the Franks in Cyprus and Harim; the Atabeks of Khorasan and the Khakans of Cappadocia; events in the Frankish and Armenian realms.
440	The Arab settlement in Spain and propagation of Islam; wars between Manuel, Nur ad-Din and Qilij-Arslan; the defeat of the Turks at Erzerum by the Georgian king; events in the realms of the Armenians, Franks and Turks.
444	Military confrontations between Ya'kub-Arslan, Qara-Arslan and Qilij-Arslan, and between the Greeks and the Armenians in Cilicia; the Georgian king conquers Dvin; Nur ad-Din enters Aleppo and Tripolis; Amaury enters Egypt; the defeat of the Frankish troops at Harim.

451	War between Thoros and Nur ad-Din at Marash; the second entry of Amaury in Egypt; the death of the Armenian Thoros; divisions between Sunnites and Shi□ites in Egypt; the origin and reign of Salah ad-Din (Saladin) in Egypt; on Dionysius bar Salibi.
459	Reign of the emperor Manuel; the attempt to re-unite the Armenian Church to the Byzantine; the debate on theological and liturgical matters between Theorianus and the Armenian catholicus Nerses.
462	Amaury in Egypt; earthquake in Antioch.
465	Death of the Atabek of Mosul; Nur ad-Din increases his power; Qilij-Arslan rules over Melitene; time of snow and hunger.
470	Propaganda of the Armenian dissidents in Edessa; the Armenian catholicos Nerses and his successor Grigor Abirad; the exchange of letters of consent and faith between the Syriac patriarch and the Armenian catholicos.
474	Deaths of Nur ad-Din and of Amaury; Qilij-Arslan increases his influence; the murder of Mleh in Cilicia; the Turks in Sasun.
476	Salah ad-Din departs from Egypt and takes control over Damascus; release of the Frankish prisoners in Aleppo; war with Seif ad-Din.
479	The death of Najim ad-Din of Mardin; war between Manuel and Qilij-Arslan; the Turkish oppression of Christians in Melitene.
483	The war of Salah ad-Din with the Franks in Palestine and his defeat; his victories in Baalbek and Damascus.
486	The death of the emperor Manuel; military events among the Turks; the death of Seif ad-Din.
488	The struggle over succession between Andronicus and Isaac [II] in Constantinople; the murder of Andronicus; the deaths of the Turkish Atabeks of Amida, Mardin and Khelat; the military expeditions of Saladin; Leon, prince of Cilicia.
492	The war between the Kurds and Turcomans; the customs and settlements of the Kurds.
494	Saladin conquers Jerusalem, Akko and the whole of Palestine; the war between Qilij-Arslan and his son.
498	The Franks arrive in Akko to liberate Jerusalem; the defeat of the Turks at Iconium by German troops, their emperor [Frederick Barbarossa] drowns at Silifke.
500	The deaths of Qilij-Arslan and Saladin; the struggle of their successors.
503	Leo, the Armenian king of Cilicia; the wealth and prosperity of his country.
506	[1. Continuation] The « *son of Konstantin* » [Hethum, 1226–1269], still a child, is married to the pious empress Zabel and later becomes king.
507	*« And now is the year 695 of the Armenian era [A.D. 1246] and we will report briefly what had happened in between ».*
507	Political events in Armenia, Georgia and the Near East between 665 of the Armenian era [A.D.1216] and 678 [A.D.1229].

525	[Colophon of the scribe Grigor of Akants in the year 1273] *« In the year 678 of the Armenians* [A.D. 1229] *was completed the world history of Mar Michael, the holy patriarch of the Syrians, beginning with the time of Adam … these are from Adam up to the completion of the books of Mar Michael 6430 years. And now is the year 722 of the Armenians* [A.D. 1273]*; in this year was written this manuscript through the hand of the miserable Grigor. With the will of God we will write down the remaining 44 years* [the period from A.D. 1229 to 1273] ».
—	**History of the Nation of Archers [Mongols] by Grigor [of Akants].**[33]
1*	**Again from Mar Michael the Syrian: On Priesthood.**
21*	**Tables of the Patriarchs of Antioch, Rome, Alexandria, Ephesus, Constantinople, Jerusalem.**
27*	[2. Continuation] The apostolic origin and orthodoxy of the Armenian Church.
32*	The succession of the Armenian patriarchs from the apostle Thaddeus up to catholicos Constantine Bardzrbertsi.
40*	[3. Continuation] « *He* [Constantine] *is now in the 25th year of his patriarchate at Hromkla*»; eulogy on the catholicos.
41*	The translation from Syriac into Armenian; the value of Michael's history for the Armenians.
42*	The date of the translation, ordered by Constantine, in the year of Christ 1248 and in the year 695 [sic] of the Armenians, in the 25th year of catholicos Constantine and in the 25th year of king Hethum.
43*	[Colophon of Stephanus, abbot of the monastery of Akants]. His order to Grigor to write down the history of Mar Michael[34] beginning from Adam up to the year 678 [A.D. 1229] of the Armenians, as well as the history of the Archers [Mongols], who « *were in Armenia 44 years until our time* ».
45*	[Colophon of the scribe Grigor of Akants]: the *Vorlage* of Michael's history comes from the monastery Awag Anapat [Cilicia].

---

[33] The history of the Mongols composed by Grigor and considered as a continuation of Michael's chronicle is extant in all manuscripts of *Version II*. Nevertheless the text was left out in the edition, Jerusalem 1871, neither was it translated by Langlois. For the full text see Ms. Jerus. 32, fol. 523–592 and the edition by N. Bogharian, *History of the Tartars* [in Armenian], Jerusalem 1974, pp. 17–67; translation by R. Blake—R. Frye, History of the Nation of the Archers, in: Harvard *Journal of Asiatic Studies* 12 (1949), pp. 269–399.

[34] Another colophon of the scribe Grigor in Ms. Jerusalem 32, fol. 594 (see N. BOGHARIAN, Main Catalogue of Manuscripts in the Monastery of St. Jacob [in Armenian], vol. 1, Jerusalem 1966, col. 146), which was not taken over in the edition, Jerusalem 1871, repeats that Stephanus ordered the copy of Michael's Chronicle.

ՏԵԱՌՆ ՄԻԽԱՅԷԼԻ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՍՈՐՒՈՑ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԵԱՌՆ ՄԻԽԱՅԷԼԻ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՍՈՐԻՈՑ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ
ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ. ԵՍԱՅԵԱՅ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈ
Տ. ՄԿՐՏՉԻ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆ
1870

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

ԶՄԻԽԱՅԵԼԻ պատրիարքի Ասորւոց ըզպատմութեան գիրսն, զհամբաւեալն յազգիս, 'ի լոյս ընծայեցաք 'ի խնդրոյ ուսումնասէր ազգայնոց, բնագիր կալեալ մեզ զօրինակն բոլորագիր ընդօրինակեալ 'ի Թուին Հայոց ՋԻԹ (1480), 'ի խնդրոյ Ամիր-Տովլաթ բժշկի և 'ի վայելումն որդւոյ նորին Ամիր-Էտիլին, 'ի Կոստանդինուպօլիս քաղաքի, ձեռամբ Ներսէս քահանայի Ամասիացւոյ ։ Էին առ մեզ և այլ ինն օրինակք զանազանք, ընդ որոց համեմատեալ՝ զտարբերութիւնսն եդաք 'ի ներքոյ իւրաքանչիւր էջից ։ Իսկ զոր կոչեցաքս Հին օրինակ, տարբերի յոյժ 'ի միւս ընկից օրինակաց եթէ թարգմանութեամբն և եթէ կարգաւ և ընթացիւք պատմութեանցն, զոր թողաք այլով բարեպատեհ առթիւ 'ի լոյս ընծայել ։

Զհետ պատմութեանս յարեցաք անմիջապէս և զճառն քահանայութեան Նորին Տեառն Միխայէլի ասացեալ և զխոստովանութիւնն հաւատոյ, և զբանսն որ վասն աստիճանաց եկեղեցւոյ՝. որում՝ հետեւի Գաւազանագիրք աթոռակալացն Անտիոքայ, Հռոմայ, Աղեքսանդրիոյ, Եփեսոսի՝ որոյ աթոռն փոխեցաւ յետոյ ’ի Կոստանդինուպօլիս, և Երուսաղեմի, սկիզբն առեալ յառաջին հիմնադրաց նոցին յԱռաքելոց։ Ապա առանձինն դնէ և զկարգ կաթողիկոսացն Հայոց, զՔրիստոս եդեալ հիմն եկեղեցւոյն և զսուրբ Առաքեալսն Թադէոս և Բարդողիմէոս, և իջանէ մինչեւ ’ի Ս. Ներսէս Շնորհալի ժամանակակիցն իւր։ Իսկ Վարդան վարդապետ, որպէս ասէ ’ի վերնագրին, որ և համարի թարգմանիչ գրոցս, շարունակէ զանուանս յաջորդաց Շնորհալւոյն մինչեւ ’ի տէր Կոստանդին Բարձրբերդցի, և աւարտէ զբան իւր խօսելով զթարգմանութենէ գրոցս լեալ ’ի թուին Հայոց ՈՂԷ, գործակցութեամբ Իշօխ քահանայի ասորւոյ. խօսի և զՀեթմոյ Բ. արքայէ Հայոց, և ապա համառօտ բանիւ ճառէ զյարձակմանէ Թաթարաց ’ի Հայս։

ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱՂԱՃԵԱՆԻ

Կարգաթիւ ....



Ս ԱԲԳԱՐ.

ՏԵԱՌՆ ՄԻԽԱՅԵԼԻ
ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՍՈՐՒՈՑ
ՀԱՄԱՌՕՏ ԺԱՄԱՆԱԿԱՑ ԶՐՈՅՑՔ
ՔԱՂՈՒԱԾՈՒ ԱՐԱՐԵԱԼ ՅՈԼՈՎԻՑ ՊԱՏՄԱԳՐԱՑ՝
Ի ՎԱՐԺՍ ԲԱՆԱՍԻՐԱՑ ՍՂԱՄԱՆԱԿ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ (1)

յԱդամայ հետէ մինչեւ յետին աւուրս
թեւացեալ ։

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս յԱդամայ հետէ. մինչեւ յԱմազունք.

Եւ արդ լուարուք (2) ուսումնասէրք եւ Աստուածասէրք կարօտեալք գիտից եւ ժամանակաց. եւ հաւաքեալ վէպս բազումս ժրաջան աշխատութեամբ, խնայեցի յիս եւ 'ի լսելիս ձեր յաճախութենէ զրուցաց. առնելով (3) միայն զառաւել պիտանացուն յեկեղեցական մատենից եւ յարտաքնոց՝ ընդոստուցանել զմիտս բանաւորաց 'ի մահաբեր ծուլութեանց (4), թողլով զոչ կարեւորւըն 'ի Նոցանէ ։ Բանզի Նոքա 'ի ծագման առաւօտուն, և 'ի հասարակեալ տունջեանն գոլով, և տեսանելով զքանաւորութիւն արանց ժամանակին՝ փարթամագոյնս գրեցին ։

---

(1) Երկու օրինակք. տե-
ղեկութեամբ ։

(2) Ա. Բ. օրինակք ունին
Եւ եղբարք ուսումնասէրք եւ
աստուածասէրք ։

(3) Հնագոյն օրի. համա-
ռօտեցի քաղելով ։

(4) Հնա. օրի. ընդոստու-

Իսկ մեր վատաբախտութեամբ ․ դիպեալ յերեկոյացեալ ժամանակիս և հայելով բրդեալ հեղգութեամբ յօժարութիւնս մեր և բազմաց՝ կարճաբանութեամբ և թեթեւակի անցցուք ընդ իւրաքանչիւրսն ․ փչելով հողմով հոգւոյն յանգիտութեանն խաւար ․ (1) զի եկեսցեն ճառագայթք առաւուն արդարութեան 'ի սիրտս մեր ․ զի և մեր առեալ տացուք զայս ճրագ Սիոնի մօր մերոյ սրբոյ լինել վարժարան մանկանց նորա, ակն ունելով ողորմութեանն վերին ․ զոր տացէ մեզ աղօթիւք ձերովք պտուղ 'ի սատար վաստակոյս մերոյ ։

Այլ արժան է մեզ ծանօթս առնել ձեզ յանուանէ զպատմագիրսն յորոց հանդերձեալ եմք զնիւթ շինուածոյս մերոյ հաւաքել ։

Արդ 'ի յարմատոյ անտի մարդկութեանս մինչեւ 'ի գալուստն Քրիստոսի գրեցին

ցանել զմահաբեր ծուլութիւնս բազմաց ։

(1) Հին օրի ․ 'ի բաց հանել զանգիտութեանն խաւար ։

Ափրիկանոս և Յեսով և Հեգեսիպոս և Յովսեպոս հրեայք ։

Անանոս կրօնաւորն Աղէքսանդրացի գըրեաց յԱդամայ մինչեւ ՚ի Կոստանդիանոս թագաւոր ։

Եւսեբի Պամփիլեայ ՚ի սոցանէ և յայլոց պատմագրաց ժողովեալ արար գիրք մի, և անուանեաց եկեղեցականս ։

Զոսիմոս և Սոկրատ և Թէոդորոս (1) հերետիկոս ՚ի Կոստանդիանոսէ մինչեւ ՚ի Թէոդոս փոքրն գրեցին ։

Յովհաննէս աղէքսանդրացի (2) և Ճեպելու և Թէոդորէ գրակարդաց կոստանդինուպօլսեցին . և Զաքարիա եպիսկոպոս Մելետինւոյ գրեցին ՚ի Թէոդոսէ մինչեւ Յուստիանոս ծերն ։

Յովհաննէս Ասիացին գրեաց յԱնաստաս թագաւորէ մինչ ՚ի Մօրիկ (3) թագաւոր ։

Կուրիա իմաստունն գրեաց Յուստիանոսէ մինչեւ ՚ի Հերակլ թագաւոր ։

Եւ զմտանելն Տաճկաց յԱսորիս ՚ի ժամանակս Հերակլեայ ։ Սուրբն Յակովբ ուռհայեցին էանց համառօտ ընդ ասացեալսդ ։

---

(1) Ոմանք ընդ հնագունին Թէոդորիտոս ։

(2) Ոմանք Անտիոքացի · Աւքն · հնագոյնն առ Յովհաննէս Անտիոքայ և Ճեպելու ։

(3) Ոմանք Մաւրիկ ։

Դիոնեսիոս սարկաւագն (1) գրեաց 'ի Մօրկայ մինչեւ 'ի Թէոփիլոս Թագաւոր Յունաց . և ցԱհարոն ամիրայն տաճկաց ։

Իգնատիոս եպիսկոպոսն Մելետինեւոյ . և Մլիւեայ երէց 'ի նմին քաղաքէ . և Յովհաննէս 'ի Բեսնոյ , և Դիոնեսիոս Աղէքսանդրացին (2) դրեցին յԱդամայ մինչեւ յիւրեանց ժամանակն կարճառօտ պատմութիւնս ։ (3)

Եւ մեր օգնականութեամբն Աստուծոյ զնոյն ջան առաջի եդեալ, հիւսեսցուք 'ի սոցանէ , և յոմանց արտաքնոց զսատոյնս մեր ցանկալի ծաղկերանգ յօրինուածով 'ի փառս Աստուծոյ ։

Բայց պարտ է հանճարեղ մտաց ոչ տըկարանալ յաղագս աւելի և պակաս բերելոյն զԹիւս ժամանակաց . քանզի յոլով զանազանութիւնս գտանեմք յեւԹանասնիցն և յայլոց Թարգմանչացն գրութիւնս . և մանաւանդ զոր Աբգար արքայն է Թարգմանեալ (4) հրամանաւ Թադէոսի Առաքելոյն (5) ։

---

(1) Հին . օրի . պատրիարք . գրոյն 'ի սարկաւագութեան պատմագրէին իջէ սա . և սոյն 'ի պատրիարքութեան նուէրէին . զսա ոչ յիշեն այլ Երէց օրինակն ։

(2) Այս ըստ հնոյն ասէն զսա Սաղիբայայ որդին ։

(3) Հնագոյնն ասէ . պարին կարճառօտ պատմագրութիւնս ։

(4) Հնագոյնն և այլք ասէն ետ Թարգմանել ։

(5) Հնագոյն օրի . չունի հրամանաւ Թադէոսի Առաքելոյն ։

Այլ զոր ստուգեաց Յակոբ ուռհայեցի միտեալ ընդ հրէութեանն յաղագս կարծելոյն թէ չետուն զբաւանդակ (1) գրեանն իւրեանց ճշմարտութեանն հեթանոսաց սակս նախանձու :

Այլ զի՞ զարմանաս եթէ քան Տեառն ճշմարիտ է ակարանալ մարդկան ՚ի գիտութիւն ժամուց և ժամանակաց, և գիտել միայն արարչին և տեառն ժամանակաց :

Այլ արդ սկիզբն դիցուք գրոցս մերում զսկիզբն մարդկութեանս զԱ՛դամ. և աստէն իսկ յայտ արասցուք զանմիաբանութիւն պատմողաց ՚ի թիւս ժամանակաց կալով մեր հաստատուն ՚ի հաւատս :

Արդ ըստ եւթանասնիցն գրուճեան (2) Ադամ լեալ երկու հարիւր երեսուն ամաց ծնաւ զՍէթ. և եկաց այլ եւս չորս հարիւր վաթսուն ամ. և են ամենայն կեանք նորա ինն հարիւր երեսուն ամ; մինչեւ ՚ի հարիւր երեսուն և եւթն (3) ամին Մաղաղիէլի. և մեռաւ վաթսուն ամաւ յառաջ քան զծնունդըն Ենովքայ, և է յայտ սխալ միջացն :

Իսկ ըստ Աքգարու, որով Ասորիք վարին Ադամ լեալ երկու հարիւր երեսուն (4) ամաց.

---

(1) Այլք բովանդակ :

(2) Հին օրի. գիտութեան

(3) Ոմանք ՃԼԵ. (135) :

(4) Հին օրի. ՃԼ. (130)

ծնանի զՍէթ. և եկաց այլ ևս եւթն հարիւր (1) ամ. և է ստուգապէս ամենայն ժամանակք նորա ինն հարիւր երեսուն ամ։ Ենանոս առնու վկայութիւն յԵնովքայ գրոյն թէ Ադամ յետ ելանելոյն 'ի դրախտէն՝ յետ եւթանասուն ամի գիտաց զԵւայ՝ և ծնաւ զԿայէն. և եւթն ամաւ յետոյ ծընաւ զԱբէլ. և յետ յիսուն և երեք (2) ամի ծննդեանն Աբելի սպան զնա Կայէն, և սգացին զնա ծնողք նորա հարիւր և վեց ամ. և ապա ծնաւ զՍէթ որդի մխիթարութեան։ Եւ Մադիդիմոս պատրիացի ասէ. յետ երեսուն ամի ելիցն 'ի դրախտէն՝ Ադամ ծնաւ զԿայէն, և զԿլիմայ (3) քոյր իւր. և երեսուն ամաւ զկնի ծնաւ զԱբէլ, և զԱբելուհի (4) քոյր իւր. և յետ հարիւր երեսուն ամի ըսպանաւ Աբէլ. և երկու հարիւր երեսուն (5) ամաց լեալ Ադամ՝ ծնաւ զՍէթ. և այսու գիտասցես զաննմանութիւն (6) առիցն վասն ժամանակաց։

Սէթ կեցեալ ամս երկու հարիւր և հինգ (7) ծնաւ զԵնովս. իսկ ըստ Ասորոցն հարիւր և վաթսուն ամ. և ամենայն աւուրք ժամանակաց նորա ինն հարիւր եւթանասուն, ըստ Հրէից և Ասորոց։ Ենովս լեալ ամաց հարիւր ինսուն՝ ծնաւ զԿայնան ըստ Ափրիկանոսի (1). իսկ ըստ Ասորոց՝ հարիւր վաթսուն ամաց։

---

(1) Հին օրի. Պ. (800)։

(2) Վեց օրի. ԺԳ. (13)։

(3) Հին օրի. զԿահէլ և զԿլեմիայ։ Վեց օրի. զԿահէլ և զԿլամիայ։

(4) Հին օրի. զԲելուդա.

(5) Վեց օրի. ՃԼ. (130)։

(6) Վեց օրի. զանմիաբանութիւն

(7) Վեց օրի. ՄԷ. (207). Հնագոյնն. ՄԵ. (205)

Այս Ենովս ՚ի բնութենէ օրինացն պատկառեալ սկսաւ գործս բարիս առնել. և ուսուցանել որդւոց իւրոց. և յուսով կոչեաց զանուն Տեառն Աստուծոյ յօգնութիւն բարւոք մտածութեանցն։(2)

Ի սմանէ ուսեալ որդիք նորա և եղբարք յիշեցին զկեանս դրախտին և հրաժարեցին յամուսնանալոյ անձինք երկու հարիւր. և ելին ՚ի լեառն Ահերմոն և կային ժուժկալութեամբ, պարապեալք երկնաւոր առաքինութեանց. և յաղագս այսորիկ անուանեցան Որդիք Աստուծոյ. և եղեն ժամանակք Ենովսայ ամք ինն հարիւր և հինգ (3), և վճարեաց։ Կայնան լեալ ամաց հարիւր երեսուն՝ ծնաւ զՄաղաղիէլ ըստ եւթանասնիցն. և ըստ Ասորոցն՝ եւթանասուն ամաց. և եղեն ամենայն աւուրք նորա ութն հա-

(1) Հին օրի. և Ընանոսի

(2) Վ.եց օրի. ՚ի բարւոք մտածութեանցն։

(3) Վեց օրի. ՋԷ. (907)։ հնին. ՋԲ. (902)։ ըստ Ափրիկանոսի.

րիւր վաթսուն ամ ։ Մաղաղիէլ լեալ ամաց հարիւր վաթսուն և եւթն՝ ծնաւ զՅարեդ(1). և ըստ Ասորոցն, վաթսուն և եւթն ամաց. և ութն հարիւր իննսուն և եւթն (2) ամաց մեռաւ ։

Յարեդ լեալ հարիւր վաթսուն և երկու ամաց, ծնաւ զԵնովք ըստ եւթանասնիցն (3). և ըստ Ասորոյն (4) վաթսուն և երկու ամաց. և ամենայն ժամանակքն ինն հարիւր վաթսուն և երկու, մինչեւ ՚ի վեց հարիւր ամն Նոյի ։

Ի սորա. (Ենովքայ) քառասուն ամին լցաւ հազար ամն. յելիցն Ադամայ ։

Յայսքան ժամանակս ոչ գոյր թագաւոր, զի Ադամ՝ նախաստեղծն բաւականայէս խրատէր զնոսա մինչեւ ՚ի հարիւր երեսուն և եւթն ամն Մաղաղիէլի, և վճարեաց հարիւր ամաւ յառաջ քան զծնունդն Յարեդի. և Սէթ և որդիք նորա առեալ հրամանս ՚ի Տեառնէ ոչ խառնէին յազգն Կայենի ։

Եւ ՚ի հազար ամին լցելոյ կացուցին որդիքն Կայենի իւրեանց թագաւոր Սամիրոս (5) անուն ։

---

(1) Ոմանք՝ Արեդ.

(2) Վեց օրի. ՊՂԵ. (895) ։

(3) Հին օրի. ըստ Ասորոցն ։

(4) Հին օրի. Սամարացւոցն.

(5) Հին օրի. կացուցին

Եւ յայսմ ժամանակի որդիքն Սեթայ. որ կային յՀերմոն լերան հանձրացեալք իջին ի լերանէ անտի և ի կրօնաւորական (1) վարուցն որպէս պատմէ Ենանոս ի գրոց անտի Ենովքայ։ Եւ բարկացեալ եղբարց իւրեանց ի վերայ նոցա՝ հալածեցին և ոչ ետուն նոցա կանայս. և նոքա գնացին խառնեցան յազգն Կայենի, և առին իւրեանց կանայս յամենայնէ զորս ընտրեցին. և աստի սկսաւ յաճախութիւն չարեաց ի վերայ երկրի, պոռնկութիւն և զրկողութիւն (2), և յայսմանէ պատերազմունք և սպանութիւնք։

Ի նմին ժամանակի որդիքն Սեթայ որ կային յերրորդ կլիմն որ է բաժին երկրի, կացուցին և նոքա իւրեանց թագաւոր (3) Աղորոս անուն. որ սա եգիտ նախ զթիւս կենդանակերպից և մոլորակաց (4), և զշրջմունս (5) նոցա, և ի սմանէ անուանեցաւ քաղդէութիւն՝ և աշխարհն այն երկիր Քաղդէացւոց. սա թագաւորեաց ամս իննսուն

Թագաւոր՝ որում անուն էր Սամարիտաս Երկաւ օրի. Թագաւոր՝ Սամիրոս անուն։ Այլ երեք օրի. կացուցին թագաւոր Ամիրոս անուն։

(1) Հին օրի. և այլ երեք. ի հրեշտակական վարուցն։

(2) Երեք օրի. զրկութիւն

(3) Հինն յաւելու ի քաղդէացւոց երկրին։

(4) Հինն և այլ երեք օրի. մոլորականաց։

(5) Երեք օրի. զշարժմունսն։

և ութն, և աւուրս երկու հարիւր երեսուն։ Եւ զկնի նորա որդին Եղփարոս ամս քսան և ինն և աւուրս երկու հարիւր տասնևհինգ։ Եւ զհետ նորա Ալմիոն քաղդեացի (1) ամըս իննսուն և եւթն, (2) և աւուրս ութսուն։ (3)

Եւ զկնի նորա Ամանոն քաղդէացի ամս երկու հարիւր տասնեւութն, և աւուրս հարիւր տասնեւութն (4)։ Եւ զկնի նորա Ամակորոս (5) քաղդէացի ամս հարիւր իննըսուն և եւթն. և աւուրս հարիւր իննսուն և հինգ։ Եւ յետ նորա Դինոս հոլլիւ քաղդէացի ամս իննսուն և ութն, և աւուրս ութսուն (6)։ Յետ սորա Եւտուրինքոս (7) ամս հարիւր եւթանասուն և հինգ (8) և աւուրս երկու հարիւր երեսուն (9)։ Եւ ապա Սամիլոս յԼանարքոն քաղաքէ ամս հարիւր իննսուն և եւթն (10), և աւուրս երկու հարիւր երեսուն ։ Եւ զկնի սորա Աւտիարտիոս (1) յԱնարքոն քաղաքէ ամս եւթանասուն և ութն, և աւուրս երեք հարիւր և երեսուն. Եւ յետ սորա Քախսութրոս (2) որդի նորա թագաւորեաց հարիւր եւթանասուն և հինգ ամ. և աւուրս հարիւր յիսուն և հինգ. Ժողովին ամք թագաւորացս հազար հարիւր ութսուն. (*) և աւուրք երկու հարիւր ութն ։ Ըստ զամս թագաւորացս և զաւանդ թագաւորութեան ժամանակն հազար յիսուն և երկու (3). ամք լինին երկու հազար երկու հարիւր երեսուն և երկու ։ Յայսու ժամանակաւ էր ջրհեղեղն մեծ ։

---

(1) Հինն յաւելու 'ի փուգիւխլոն քաղաքէ։

(2) Հինն ՃԻԸ. (128)։

(3) Հինգ օրի. ՄԽ. (240)։

(4) Հին օրի. ՃԼ. (150)։

(5) Հին օրի. Ամակարոս։

(6) Հին օրի. ՃԼ. (150)։

(7) Ոմանք օրի. Եւտուրքինոս. և մի օրի. Տուրինոս։

(8) Վեց օրինակ. ՃՀԷ. (177)։

(9) Հինն օրի. ՃՂԵ. (195)։ այլ ՃՂԷ. (197)։

(10) Հին օրինակք ՃՂԵ. (195)։

Այլ մեք դարձցուք անդրէն յուր կարգին ։ Ենովք լեալ հարիւր վաթսուն և հինգ ամաց (4)՝ ծնաւ զՄաթուսաղա, և զամս երկու հարիւր հաճոյ եղեւ Աստուծոյ. և տրւաւ սմա շնորհք մարգարէութեան ապագայից. և սա արար նշանագիրս կարճառօտանս (1) և բազմատարս, և այնու եթող զկեանս վարուց առաջնոցն և զմարգարէութիւն իւր, և փոխեալ կենդանւոյն յաստեացս ոչ ուրեք գտանիւր. և գիտէ զտեղի փոխմանն փոխադրողն Աստուած: Բայց ասեն ոմանք ի դրախտին և այլք խմանան (2) թէ դրախտն աւազակին բացաւ: Այլ յայտ է թէ ի վերայ դրախտին յօդն ըստ կարելոյն Աստուծոյ զամենայն ինչ. և յորժամ բացաւ խաչիւն, էջ ի դրախտն. թէ հաճոյ է քեզ ընկալ անվնաս է:

---

(1) Հին օրի. Աւտիարտոս ։ մի օրի. Աւտարիտոս ։ մի օրի. Աւտարտիոս ։ այլք Աւտարփիտոս ։

(2) Հին օրի. Քախսաթրոս ։

(*) Այս հազար հարիւր ութսուն թիւն սխալ թուի մեզ. զի ոչ պատասխանէ գումարի ամաց իշխանութեան նշանակեալ թագաւորացն ։

(3) Հին օրի. և այլք ՌԿԲ. (1062) ։ և այս իսկ անհամաձայն է տոմարացն ՚ի վերայ ։ զի ասաց եթէ ՚ի 40 ամի Յարեդի լցան հազար ամք. և թէ Յարեդ ծնաւ ՚ի 165 ամին Մաղաղիէլի. և թէ Ադամ ննջեաց 930 ամաց՝ ՚ի հարիւր երեսուն և եւթն ամի Մաղաղիէլի.

(4) Հին օրի. յաւելու ըստ եւթանասնիցն և ըստ Ասորւոցն ԿԵ. (65) ամաց։

Մաթուսաղա եղեալ ամաց հարիւր ութսուն և եօթն՝ ծնաւ զԼամեք ըստ եւթանասնիցն. իսկ Ենանոս հարիւր վաթսուն և հինգ ամէ: Եւ Սամարացիքն ութսուն և երկու ամէն. և լինին ժամանակք նորա ինն հարիւր վաթսուն երկու ամք, մինչեւ յիննսուն և եւթն ամն Սեմայ. այլք ասեն ինն հարիւր վաթսուն և ինն ամք. և Աղէքսանդրոս ասէ թէ յետ որդեծնութեան եկաց եւթն հարիւր ութսուն և եւթն ամ. և առ ջըրոյն մեծի մեռաւ։

---

(1) Ոմանք կարճառօտանս: դիմանան. զոր լսէ հնաւան. և երկու օրինակք ընդ-

(2) Երեք օրի. ընդ խմա- գոյնն:

Ղամէք լեալ հարիւր ութսուն և եւթն ամաց՝ ծնաւ զՆոյ. (1) և ըստ Ասորոցն հարիւր ութսուն երկու՝ ըստ Սամարացւոցն յիսուն երեք. և եղեն ամենայն աւուրք եօթն հարիւր եւթանասուն և երեք ամք. մինչեւ 'ի վաթսուն և ինն ամն Սեմայ, եւ մեռաւ նախ քան զհայր իւր քսան և ինն ամօք. այլ քառասուն և ինն ամաւ աւելի։ Ի հազար վեց հարիւր վաթսուն և վեց ամի ելիցն Ադամայ 'ի դրախտէն ծնաւ Նոյ արդար, որ և հասեալ 'ի չափս հաճոյ եղեւ 'ի վարս արանց ժամանակին. ոչ ամուսնացաւ զամս հինգ հարիւր առանձնացեալ բնակութեամբ. 'ի սորա յիսուն և ութն (2) ամին լցան երկու դարքն։ Պատմէ Անանոս եթէ հսկայք մեծամեծք և անձոռնիք էին յաւուրսն յայնոսիկ, և թողեալք էին (3) 'ի ձեռաց Աստուծոյ. և յաճախեաց անիրաււութիւն. և անդ էր տեսանել պատերազմօք զաշխարհս լցեալ. և դիզեալք լինէին դիակունք կոտորելոցն կոյտս կոյտս 'ի կատարս լերանց, և ցրուեալք ընդ երեսս դաշտաց զի վերացաւ 'ի նոցանէ հոգի տեառն զօրութեանց :

---

(1) Հին օրի. յաւելու ըստ եւթանասնիցն։

(2) Հինն և այլ վեց օրի. ունին զթիւս ՅԾԸ. (358) բաց 'ի յերկուց որոց մին եւս հնագոյն. որում եւս հետեւիմք 'ի տպագրութեան. սակայն երեւի թէ ընդօրինակողն զԾ կարծելով նախդիր աւելորդ՝ 'ի բաց հանեալ իցէ 'ի թուահամարութենէ. և այս կրկին օրինակք 'ի նմանէ կամ յայնպիսեաց իցեն ընդօրինակեալք.

(3) Հինն և այլ վեցք՝ եղեն։

Իսկ որբասէրն Նոյ հրամանաւ Տեառն տուեալ կին Նեմզաւայ (1) անուն՝ ծնաւ երեք որդիս, զՍէմ, զՔամ, և զՅաբեթ. և շինեաց զարկղն (2) մեծ եռայարկ 'ի բնակութիւն սերմանեաց երկրորդի աճման 'ի խնամոց Արարչին :

Ի լնուլ հինգ հարիւր երրորդի կենաց Նոյի եղեւ ջրհեղեղ մեծ սկսեալ յերրորդում ամսեանն ի ար. (3) քսան և եւթն օր ամսեանն. և տեւեաց ջուրն ամ մի ողջոյն. մինչեւ 'ի նոյն ամիսն և 'ի նոյն քանիսն. և ել Նոյ 'ի տապանէն որդւովքն և կենդանիքն (4) որք ընդ նմա մտեալ էին : Եւ պատուեաց զԱստուած պատարագօք և էառ զօրհնութիւն առաջին մարդոյն. և պատուիրան չհեղուլ արիւն (5) բանականի և չուտել տրիւն տնքանի, (1) և ետ նմա նշան ուխտի ոչ հարկանել զամենայն մարմին կենդանի վասն մեղաց. այլ ըստ մասին խրատել զպարտաւորն : (2)

---

(1) Մի օրի. Նեմզարայ :

(2) Երկք օրի. զՑարկն

(3) Երկք օրի. ի արի :

(4) Այլօրինակք կենդա- նաք որ երեւի սխալ ընդօրինակողին լինել :

(5) Այլք՝ զարիւն բանականին :

Բայց զարմանամ զի Յովսեպոս ասէ, ըզտապանն 'ի Կիլիկեցւոց աշխարհն յԵւփիմէս (3) լեառն որ է ստուգապէս 'ի մեծն Հայք 'ի լեառն Մասիք (4) ըստ բնագրոյն ոյութեան : Եւ եկաց Նոյ յետ ջրոյն ամս երեք հարիւր յիսուն. և ծնաւ որդի մի Մանիտոն անուն. և բաժանեաց նոցա զերկիր :

Սեմայ ետ զՊարսից աշխարհն. և զԱսորոց, և զՊաղեստինէ մինչև յԱփինոյ կորուրս (5) որ է Նեղոս, և զԻեկտուրիայ : Եւ Քամայ ետ յԱփինոյ կորուրս մինչև 'ի Գադիրոն : Իսկ Յաբեթի ետ 'ի Մադիէ մինչև 'ի Գադիրոն հիւսիսոյ :

Եւ արդ ունի ազգն Յաբեթի յԱկնէն (6) Տիգրիս գետոյ որ բաժանէ ընդ Մադէ և ընդ Պարսս: Եւ ազգն Սեմայ ունի յարեւելից և յարեւմտից Եւփրատ գետոյ և Դկլաթու։ Եւ ազգն Քամայ ունի զԳեհոն գետ որ բաժանէ զսահմանս նոցա։

---

(1) Այլ վեց օրի. թանականի :

(2) Երեք օրի. զպարտաւորն ամենայն :

(3) Երեք օրի. յԵւփեմիէս:

(4) Երեք օրի : Մասիս. Հին օր Արարադայ՝ որ է Մասիս :

(5) Երեք օրի. և հինն. յԱփինոյ կորուրսյ :

(6) Այլ օրինակք. յԱկանէն :

Եւ որդիք Յաբեթի են Հայք, և Մակեդոնացիք, և Մադացիք, Յոյնք, և Լատինացիք,(1) և Աղուանք,(2) և Վրացիք։

Եւ որդիք Քամայ են Եգիպտացիք, և Հնդիկք, Հեթացիք, Յեբուսացիք, Հաբաշիք, որք են Քուշացիք, Ամուրացիք, Գերգեսացիք, Արուաթացիք, և այլք։

Եւ որդիք Սեմայ են Աթուրացիք, Քաղդէացիք, որք են Ասորիք, Եբրայեցիք. Փռուանդք,(3) Պարսիկք, և այլք։

Եւ ունին Սեմացիք՝ յարեւելից մինչեւ յարեւմուտս ընդ մէջ երկրի։

Յաբեթացիք ունին զհիւսիս յարեւելից մինչեւ յարեւմուտս։ Եւ որդիքն Քամայ ունին զհարաւ։ Եւ Մանիտոն (4) էառ յայնկոյս ծովուն զվիճակ իւր։ Նա խնդրեաց 'ի հօրէ իւրմէ յոսկերացն Ադամայ, զոր ունէին 'ի տապանին. և ետ նմա զլառուունս ծրնդացն. և արձակեաց զնա յարեւմուտս այս։ Նա ածեցոյց զաստեղագիտութիւն, և եգիտ զհաւահմայութիւն եւ զկատրութիւն երեւման. և ոմանք 'ի սմանէ ասեն զՄադիանացիսն։ Ասեն և այլ դուստր մի Նոյի Աստղ անուն. որ եառ 'ի հօրէ զմասն ինչ հարաւոյ 'ի ժառանգութիւն։

---

(1) Մերս օրի. Իտալացիք։

(2) Հինն և այլ հինգ. Ալանք։

(3) Ոմանք վերջին օրինակք Ֆռանկք։

(4) Հին օրի. Մանեթոնոս.

Եւ զգուշացաւ Նոյ. և կացոյց 'ի վերայ երդումն. և ետ նզովս. զի մի զրկեսցեն զմիմեանս. այլ կալցին արդարութեամբ զիւրաքանչիւր վիճակս երկիւղիւն Աստուծոյ զի մի սատակեսցին։ Եւ եկաց Նոյ մինչեւ յերեք հարիւր ութսներորդ ամն Եբերայ. և մեռաւ։ Սէմ լեալ ամաց հարիւր, երեսուն՝ ծնաւ զԱրփաքսադ ըստ եւթանասնիցն։ Իսկ ասորոյն հարիւր երկու (1) ամաց։ Սէմ ժառանգեաց զօսկերս նախաստեղծիցն և ամփոփեաց 'ի վիճակի կալուածոյ իւրոյ (2)՝ զի վշտացուցանէին զնա Քամ՝ և որդիքն իւր։ Արփաքսադ լեալ ամաց հարիւր յիսուն և եւթն (3)՝ ծնաւ զԿայնան՝ սա բազմացոյց զՔաղդէացւոյն մոլորութիւնն, և զկախարդելն (4) եգիտ. և եցոյց բախտ և ճակատագրութիւն ըստ աստեղացդ ընթացից, և շրջագայութիւն մոլորակացդ։ Եւ որդիք նորա իբրեւ Աստուածս (1) համարեցան ըզնա, և երկիրպագանէին նմա, և կանգնեցին նմա պատկեր 'ի կենդանութեանն իւրում: Եւ այս եղեւ սկիզբն պատկերապաշտութեան մեծի չարեացն: Սա շինեաց քաղաք և անուանեաց Խառան յանուն որդւոյ իւրոյ Խառանայ, զոր Ղուկաս աւետարանիչն յիշէ (2), զի եկեալ էր բարձողն կռապաշտութեան՝ և Մովսէս արածապատումն ոչ յիշէ վասն ասացելոյ պատճառին: Կայնան լեալ ամաց հարիւր երեսուն և ինն (3) ծնաւ զՍաղայ: Եւ Սաղայ լեալ ամաց հարիւր երեսուն՝ ծնաւ զԵբեր և զԵկտան (4) ըստ Ենանոսի պատմողի. և ըստ Ասորոց՝ երեսուն և չորս ամաց: Եբեր լեալ ամաց հարիւր երեսուն և չորս՝ ծնաւ զՓաղեկ. յաւուրս սորա բազմացան ազգ մարդկան, և սկսան զմիմեամբք ելանել և զրկել զմիմեանս. և ժողովեալք 'ի միասին հին արանց՝ դարձեալ բաժանեցին զերկիր, և ստուգաբանե-

---

(1) Հին օրի. (ՃԸ) 108։

(2) Երկու օրի. կալուածոց իւրոց։

(5) Հինն և այլ երեք օրի. ՃԼԵ. (135)։

(4) Հինն և միւս այլ օրի՝

կռապաշտութիւն:

(1) Այլ օրին. չաստուածս:

(2) Ղու. Գ. գլ. 36:

(3) Երկու օրին. ՃԼ. (130): փոխեալէ այս ընդօրինակութեան: զի չյիշէն զՍաղա. զծնողն Կայնանայ և զծնունդն Սաղայի ոչ 'ի հարիւր երեսուն ամի հատանէին իւրեանց, այլ Կայնանայ. սապի մանկաբերելի թէ օրինակն առյա մոռացեալ իցէ զմի դարն:

(4) Հին օրինակին ըստ դնէ 'ի վերայ ծննդոց Եբերայ. առաջնորդն-բեր ՃԼԳ. ամի ծնաւ ըզ-

ցաւ Փաղէկ անունն, զի բաժանումն լսի. և լեալ Փաղէկ հարիւր երեսուն և երեք ամաց (1)՝ ծնաւ զՌագաւ ։

Յայնմ ժամանակի տանուտեարք երկրի հաւաքեալք ՚ի միասին խորհեցան գնալ յարևելս խնդրել զառաջին բնակութիւնն Եդեմայ, և գնացին ։ Եւ ահա ծով անջրպետեալ էր ՚ի մէջ Եդեմայ, և յիշեցին զջրհեղեղն մեծ, թէ յայնմ հետէ է ջուրս այս, և զահի հարան. քանզի և գործք իւրեանց նոյնպիսիք էին. որպէս կորուսելոյն ջուրք ։ Եւ զի անցեալ էին զուխտիւ, և զնզովիւքն Նոյի արդարոյ, և փոխեալ էին զեդեալ սահմանս նորա, և ասէին ցմիմեանս և մեք մի՛ անհոգասցուք յակնկալութենէ նոյնպիսի անցից ապականիլ դարձեալ երկրի, և կործանիլ մեզ ջրով նոյն օրինակաւ ։ Վասն որոյ դարձան և եկին յերկիրն Սենաար ՚ի լայնանիստ դաշտն Բղանէ և անդ արկին հիմն շինուածոյ աշտարակին, գտանել հը-

---

Փաղէկ. և այսպ դնէկան ըստ Եւսեբեայ ժամանակագրին, իսկ ըստ Ասորոյն ԼԴ. ամաց. և եկաց ՅԽԳ. ամ. և են որ ասեն թէ սմաւ կոչեցան Եբրայեցիքն ։ Եւ զի այսոքիկ պատականին Եբերայ. զորտայ Փաղէկայ և Եկտանայ. ուստի վստահութեամբ կալցուք զնա առ սխալ ընդօրինակութեան ։ Զի և զոր կցէ սմին պատմութեան, և այն վերաբերի Փաղէկայ ։ Զոր օրինակ ասէ. բաժանեցաւ երկիր յաճախել ազգին ։

(1) Հին օրի. ՃԼ. (130).

նորս փրկութեան անձանց յարկածից ջուրցն ։

Ի սկիզբն ծննդեան Ռագաւայ սկսան շինել զաշտարակն մինչեւ ցքսանեւերրորդ ամն Նոյա (1). և բերին (2) զծախս պիտոյիցն յերկրէ խուրեանց . այլ և Նեբրովթ որսայր շինողացն գազանս և անասունս , և կերակրէր զնոսա ։ Եւ գլխաւորք էին Յամուր . և Հայկն . և Նեբրովթ , և մինչդեռ շինէին զնա մրացեալք անհեղգաբար զքաղաքն բազմատար , և զամբարտակն (3) ամրակառոյց , էջ Տէր հողմով . և փլոյց (փլոյզ) զնա . և զբազումս կորոյս 'ի շինողացն ։ Ոմանք ասեն զՆեբրովթ 'ի յաշտարակին անկմանէն մեռանիլ . (4) բայց մեք ստուգեցաք յետ ժամանակի սպանանիլ նմա 'ի Հայկայ որդւոյ Թորգոմայ , (5) որդւոյ Թիրասայ . որդւոյ Գամերայ . որդւոյ Յաբեթի . զի ոչ առար Հայկն զպատկերն Բելայ , և ոչ համարեցաւ զնա Աստուած . և եկն 'ի վերայ նորա ծանր ամբոխիւ Բէլ . և սպան զնա Հայկ ։

---

(1) Յօրինակին մերում Բերլինոյ սխալմամբ գրեալ "ցքսանաւսուն երրորդումն" ։

(2) Երկու օրի . բերէին ։

(3) Մեր օրինակ . բաղմապարտակն . որպէս որ և հնգետասն ամենապատմանոց օրինակացն ։

(4) Մեր և այլ երկու . մեռաւ ։

(5) Զայս չունի մերս Բ օրինակ . ում՝ հետեւիմք . այլք ամենայն նշանակեն ։

Իսկ 'ի փլանիլ աշտարակին խառնակեցան եզուքն : Եւ բաժանեցաւ Աստուած զմի լեզուն յեւթանասուն եւ երկու : Հնգետասան լեզու առին (1) ազգն Յաբեթի : Երեսուն երկու ազգն Քամայ : Քսան եւ հինգ ազգն Սեմայ : եւ գնացին այր իւրաքանչիւր զճանապարհ իւր . եւ շինեաց Նեբրովթ զԵրեգ քաղաք, եւ զԱծբին եւ զԱռահայ : Իսկ իշխանն Եբեր այր աստուածապաշտ (2) ոչ՝ միաբանեալ ընդ շինողս աշտարակին . եւ 'ի յաւերմանն նա կոչեաց զերկիրն Բաբիլոն, որ թարգմանի աւերումն : Եւ ասեն թէ մնաց բուն լեզուն առ նմա : Եւ վկայեն Սուրբն Յակոբ . եւ Սուրբն Եփրեմ . եւ Յովհաննէս Եթրացին :

Բայց զարմանամ, զի ոմանք ասեն թէ յԵբերայ կոչեցան Իսրայէլացիքն Եբրայեցիք : Եւ թէ զնորա լեզուն ունին տակաւին ազգքն Ջհտաց, (Հրէից) : Եւ այսպէս անգիտացաւ 'ի նոցանէ, զի ազգին Իսրայելի սկիզբն 'ի Յակոբայ է, եւ յանցանելն ընդ ծովըն կարմիր կոչեցան Եբրայեցիք . զի եբերան՝ (3) անցիք թարգմանի : Եւ առին նոր լեզու լինել զայլ պարգեւսն. ըստ այնմ որ ասէ "լեզու զոր ոչ գիտէր, լուաւ"։ Եւ առաջին լեզուն բարձաւ որ էր Ադամայն, զոր Քաղդէացիք ունին այժմ. զի Աբրահամ Քաղդէացի էր, եւ հայրենի լեզուն Աբրահամու որ մնաց առ Եբեր, այս է զոր մեք ունիմք Քաղդէացիքս (1)։

---

(1) Ոմանք օրինակք արարին :

(2) Ա. Լ. օրինակք . յաւելուն այր ծեր եւ աստուածապաշտ :

(3) Հին գրչ . զի Եբրայե-

Ռագաւ լեալ ամաց հարիւր երեսուն երկու (2)՝ ծնաւ զՍերուք։ Սերուք լեալ ամաց հարիւր երեսուն՝ ծնաւ զՆաքովր։ Յայսմ ժամանակի լցաւ երկիր ժխորք պատերազմաց, եւ սպանութեամբ։ Քանզի որդիքն Քամայ 'ի դառնալն իւրեանց 'ի ցրմանէ աշտարակին եկեալ յերկիրն Փղշտացւոց, եւ առ լերամբն Կարմեղայ եւ Լիբանանու, եւ հայեցեալ 'ի պարարտութիւն երկրին, եւ 'ի վայելչութիւն նորա, եւ բռնացեալ 'ի վերայ ազգին Սեմայ առին զնա, եւ բնակեցան անդ եւ ոչ կամեցան գնալ (3) 'ի վիճակն իւրեանց. եւ առին կրկին զնզովս Նահապետին Նոյի. վասն ծիծաղելոյն՝ եւ յաղագս սահմանափոխութեանն։ Եւ յայսմհետէ յաճախեաց

ցիս՝ անցին Թարգմանի։ Ոմանք՝ Եբերան, եւ ոմանք՝ Եբերան։

(1) Ոմանք. Ասորիքս՝ ասեք

եմք Քաղդէացիք։

(2) Երկու օրի. ՃԿԲ. (162։)

(3) Երկու օրի. դառնալ։

հեղմունք արեանց ի վերայ երկրի, այլ և անկաւ խռովութիւն յորդիսն Սեմայ այսպիսի պատճառաւ։

Որդիքն Յեկտանայ 'ի մեռանել հօրն իւրեանց ոչ հաճեցան ընդ բաժինս իւրեանց, այլ եդին իւրեանց իշխանս զՍաբա և զԵւիլայ, զՈւփիր կամ՝ (զՈվփեր), և կազմեցին զէնս զոր գտեալ էին առաջինք. և յաւելին նոքեանք, թուր, և աղեղն. զրահ, և սաղաւարտ և վահան. և այսու հալածէին զեղբարս իւրեանց և զօտարս. և յաղթողացն կանգնէին պատկեր՝ յաղթութեան. և երկուցեալքն մտանէին յամուրս անձեռագործս, և յայնմանէ իմացեալ շինէին բերդս և ամրոցս և մտանէին անդ յերկիւղէ (1) որդւոյն Յեկտանայ։ Վասն որոյ եւ յայնմանէ դարձեալ իմացան զմեքենայս առման Բերդից և Քաղաքաց և տապալէին զնոսա. մինչեւ յոլովք անկեալ աղաչէին ըզնոսա, զի առցեն բաժինս իւրեանց տեղի զորս ընտրեսցեն, և արասցեն խաղաղութիւն, և դադարեսցէ խռովութիւնն, եւ լուան նոցա։ Եւ էառ Սաբայն զխնկաբեր երկիրն, զոր Սաբայ անուանեաց իւրով անուամբն։ Եւ Ուփիր էառ Տեառն ոսկեհանաց որ է Հնդիկք, և էառ Եւիլայ զերկիրն պատուական ականց, որև շինեցաւ և կոչեցաւ անուամբ նորա Եւիլատ ։ Իսկ սերունք յետ ծնանելոյ նորա զՆաքովր. շինեաց քաղաք և կոչեաց զանուն նորա Սրուճ ։ Բայց գիտասցես զի 'ի Ջրհեղեղէն մինչև ցայս վայր յամէն նահապետէ հարիւր ամ՝ պակաս բերէ Ասորոց Թարգմանն ։ Նաքովր լեալ ամաց եւթանասուն և ութն, ծնաւ զԹարայ. և Թարայ լեալ ամաց եւթանասուն՝ ծնաւ զԱբրահամ ։

---

(1) Ոմանք յերկիւղէ։

ԳԼՈՒԽ Բ.

Ամազոնք, որ և կին էր թագաւոր, և այլ կարգ թագաւորացն Բաբիլոնացւոց. և ոսկեհանութիւն. և հաւատալն Աբրահամու.

ՅԱՅՍՄ ժամանակի եղեն Ամազոնիքն, որ է զօրութիւն կանանց պատերազմողաց այսպիսի պատճառաւ. զի կին միայն թագակալ թագաւորութեանն Թորգոմայ հատեալ արու զաւակացն, և ոչ կամեցաւ առն լինիլ, և էր քաջասիրտ և քաջազն. և ելանէր ծանր զօրու, և աւերէր և գերէր զաշխարհս բազումս մեծաւ յաղթութեամբ. և աջողէր նմա. և ոչ ոք կարէր 'ի դիմի հարկանել նմա ։ Եւ եղեւ դաւ ինչ և նենգութեան խորհուրդ ի զօրսն. զի ասացին զթագաւորութիւն 'ի նմանէ ։ Իսկ նորա նախագէտ եղեալ՝ կոտորեաց առ սակաւ սակաւ զամենայն արտաւական զօրսն, և արար իւր զօր կռնացի ։ Եւ նոյնպէս յաջողէր յաղթութիւն 'ի ձեռս նորա, և ստացաւ աշխարհս բազումս. Եւ զառոյց զօրուս աշխարհաւ. և մի անգամ յամին խառնէին ընդ նոսա և դարձեալ մեկնէին. և զծնեալ արուօրն, էր զի սպանանէին և էր զի սայրին յայրան և ետ իւր հզօր իշխանութիւն, և քաղաք ամուր ստացաւ իւր 'ի կողմանս հիւսիսոյ Ալեան անուն ։ Եւ նեղեցան ձանձրացան 'ի նմանէ ամենայն թագաւորք երկրի և ժողովեցան 'ի միասին մետասան թագաւորութիւնք և գնացին 'ի վերայ նորա. և առին զամրոց թագաւորութեան նորա. և բարձին զանարգութիւն յաշխարհէն, և արքն առին զթագաւորութիւնն բունք ազգին՝ (1) օրինօք ամենայն երկրի ։

Այլ մեք անդրէն դարձուսցուք զկարգ պատմութեան 'ի կարգ թագաւորացն Բաբելացւոց որ և առաջին թագաւորեաց անդ Նեբրովթ ամս վաթսուն և ինն. և էր թագ նորա հիւսածու՝ որպէս Մենադրոս (2) պատմէ մոգն, և ոչ կռածու : Իսկ զկնի սատակման նորա. Թագաւորեաց անդ Կամբիւսոս քաղդէացի ՚ի ժամանակս Սերուքայ ՚ի յիսուն և վեցն : Սա շինեաց զՇօշ քաղաք որ առեն զԱսպահան, և եղեւ այս յետ քառասուն ամի մահուանն Բելայ : (1) Իսկ այս Թագաւոր սկսաւ վաճառել զգերեալսն, և սկսաւ ոսկեհանութիւն և արծաթագործութիւն : Սա թագաւորեալ ամս ութսուն և հինգ՝ մեռանի : Իսկ թագաւորէ ընդ նմա Սամիրոս . ՚ի հարիւր վեց (2) ամին Սերուքայ և թագաւորէ ամս եւթանասուն և երկու : Սա պատերազմեցաւ ընդ Յոյնս . և ընդ Փռանգս . և էր սա յազգէն Սեմայ : Իսկ եա պատերազմ ընդ որդիսն Քամայ և ընդ ազգին Կալատու (3) կռուեալ սաստկապէս եհան զնոսա ՚ի լերինս . և արար ընդ հարկաւ զազգն Քամայ : Սա շինեաց քաղաքս բազումս յաշխարհին (1) Բաղդէացւոց, և Պարթևաց։ Սա սկսաւ չափ գնել և կշիռ և գոյնս ներկուածոց. և խայտուածս. և նըկարս տաճարաց. և դրամս, և դահեկանս անուամբ կնքոյ իւրոյ, և կառուագործութիւնս. և գնել պատկերս ՚ի կտաւս. որպէս վկայէ ըզ նմանէ Սամանդրոս (2) Սոդ. և ասէ թէ երեք աչք ունէր, և եղջիւրք. այր ուժգին, և հսկայ անձն. և ասէ թէ հան ՚ի Բաղդէացւոց աշխարհէ զազգն Նեբրովթայ։ ՚Ի քսան և եւթն ամին Նաքովրայ էր ճգնութիւնն Յովբայ, որպէս ասէ զնմանէ. Բրուս քանանացին ասէ այսպէս, „ Այր մի էր մեծատուն յորդւոց Յեկտանայ՝ անուն նորա Յովբ, պատերազմեցաւ Եւթն ժամանակս ընդ սատանայի. և զօրութեամբն Աստուծոյ յաղթող գտաւ ՚ի վերայ նորա „։ Իսկ Յովսէփ (3) դպիր ասէ ՚ի յիննսուն ամին Նաքովրայ եղեւ ծնունդն Յովբայ։ Բայց ոմանք ասեն թէ էր նա յորդւոցն Եսաւայ, այն որ ասէ ՚ի կարգ որդւոցն նորա, թէ Յոբաբ որդի Զարեհի. և հինգ հարիւր ամաւ յառաջ է քան զՄովսէս։ Յեւթներորդ ամին Թարայի թագաւորեաց ՚ի Բաբելոն. Արփաքսադ ամս ութն և տասն։ Եւ յետ սորա խափանեցաւ թագաւորութիւն Քաղդէացւոց ամս եւթն, մինչեւ 'ի Բելոս թագաւորն աթուրացի. զի պատերազմեցին ընդ միմեանս Քաղդէացիք, և Աթուրացիք. և Մարացիք. յաղագս թագաւորութեանն, մինչեւ զօրացաւ Բելոս Աթուրացի. և ել 'ի հնազանդութենէն Բաբելացւոց և թագաւորեաց և իշխեաց ամենայն Ասիոյ (1) ամս վաթսուն և երկու։ Եւ Աթուրա քաղաք է առ ընթեր Մօսլայ, զոր Ասորիս կոչեն, յԱսուրէ զինեալ կառուցեալն։ Քաոսրոս ամս թագաւորեաց 'ի Բաբելոն և Մահերոն եղբայր Թարայի սպան զնա. և ասեն թէ վասն ոսկեղէն պատկերին զոր եառ 'ի Նաքովրայ որ էր քրմապետ Կայնան կռոցն։ Ասա շինեցաւ Դամասկոս 'ի Մարիդոս (2) հինթացւոյ նախ քան զծնանիլն Աբրահամու քսան ամաւ։ Եւ Յովսեպոս ասէ թէ «Յովսէէ որդւոյ Արամայ շինեցաւ Դամասկոս»։ Անդրոնիկոս պատմագիր ասէ թէ 'ի ջրոյն մինչեւ զԱբրահամ են ամք, հազար ութսուն և մի. և յԱդամայ երեք հազար երեսուն և հինգ. Եւ 'ի բաժանմանէ երկրին մինչեւ զԱբրա-

---

(1) Հին օրի. որք ծնեալք էին ի կանանց անտի ։

(2) Հին. օրի. Մենադրոս. ամենք. Մենանդրիոս ։

---

(1) Հին օրի . Զկնի քառասուն ամի մահուանն Նեբրոթայ և խափանելոյ Թագաւորութեան յորդւոցն Քամայ ի Բաբիլոն . Թագաւորեաց Կամբիւրոս Քաղդէացի ի ժամանակս Սերուքայ ի ԾԶ . (56) ամին . Սա շինեաց զՇօշ քաղաք և այլն . Սմա պայ [illegible] [illegible]րութեան և արծաթահանութեան զորս այլք միւսներումն տան յանձորդին Սեւում (Սամերոս) :

(2) Մի օրի . ի ՃԶ . (106) ամին . որով ընդ օրինակութեան [illegible] լինել :

(3) Զայս պատերազմ էառ . և պարտութեան ի վերայ ազգին Կալատու կամեցելոյն այս հին օրինակին :

---

(1) Եւթն օրի. աշխարհին։

(2) Հին օրի. Սամարոս։

(3) Այլ օրինակք Յովսեփպոս։

---

(1) Երկու օրին. ամենայն հինթացւոյն։ մի օրին. ի Մար-
Ասիոյ։ զխաս։ մի օրին. 'ի Մարդոս

(2) Մէկ օրին. ի Մարդոս հինթացւոյ։

համ չորս հարիւր քսան և մի ամ, և աստ հաւասարեցան Յունաց և Ասորւոց թիւն ։ Ի ծնանելն Աբրահամու մեռաւ Նաքովր ։ Աբրահամու մօրն Մալքա թուէր անունն։ Եւ յետ ժամանակի ծննդեան Աբրահամու ծընաւ Սարա դուստր Թարայի, 'ի Արմուլթայ կնոջէ, և ոչ 'ի մօրէն Աբրահամու. որպէս ինքն ասէ առ Փարաւոն, և առ Աբիմելէք։ Եւ եղեալ Աբրահամ եւթն և տասն ամաց, սկսաւ խնդրել զաստուած այսպիսի պատճառաւ ։ Աշխարհն Քաղդէացւոց պարարտ և արգաւանդ է, վասն որոյ յղփացեալ բընակչաց աշխարհին պարապեցին աստեղագիտութեան եւ հմայութեան. և զայլոր գործոց։ Եւ գտեալ Տեառն Աստուծոյ զնոսա յանբաւ չարիսն. Ետ նոցա պատուհաս. տարակոյս, և կարօտութիւն, և եբեր 'ի վերայ նոցա բազմութիւն ձագուց զոր ճայ կոչեն. և 'ի ժամանակս հասման այգեաց և անդաստանաց ուտէին զբեր երկրին. և այս եղեւ զամս բազումս ։ Եւ Քաղդէացիքն իւրաքանչիւր ոք սակաւ ինչ հերկէր և ցանէր. և արամբք պահէին զնոսա 'ի բաց քըշելով զթռչունսն, և զոհեցին զոհս դիցն իւրեանց, և ուխտեցին ուխտս և ոչ լինէր դիւրութիւն, և ոչ կախարդութեամբն կարէին հնարս գտանել ։ Իսկ Աբրահամ եօթն և տասն ամաց եղեալ պահէր զանդաստանս հօրն իւրոյ, և ձանձրանայր. և վաստակէր 'ի վարել զհաւուն, և յոգւոց ելանէր (հանէր)(1) խնդրէր յամենայն անուանեալ չԱստուածոցն, տալ նմա սակաւ մի հանգիստ. յարեգակնէ, և 'ի լուսնէ, և յաստեղաց, և 'ի ձուլածոյ կռոց, և ոչ լինէր լսելի ։ Եւ 'ի գիշերի միում մտախորհ եղեւ եթէ պատուհաս այս յԱստուծոյ է, և ոչ է սա դիպուած, զի բազմաժամանակեայ եղեւ, և ոչ է չարս յաստուածոցս մերոց զի թէ 'ի սոցանէ էր, բառնալ կարէին աղաչեալք ի մէնջ յորժամ՝ զկամս նոցա կատարեմք ։ Եւ. զի ուսանէր 'ի հօրէ իւրմէ զաստեղագիտութիւն՝ յորում քաջ տեղեակ էին 'ի նախնեացն. հայեցաւ Աբրահամ յարուեստն այն, և եգիտ զամենայն գունդն երկնից եւ աստեղօքն որք 'ի նմա կան, զամենեսեան 'ի ներքոյ հարկի. ապա ծագեաց ի սիրտ նորա ։ Նշոյլ լուսոյ մեծին Աստուծոյ. և ասաց է ոմն անծանօթ Աստուած շարժիչ և հարկանող ամենայնի և արարիչ կազմիչ նա է բոլորից, և մուացօնք լեալ է արարածոց իւրոց, և կամք հրամանի նորա ոչ է առ մեզ և 'ի նմանէ է վրէժխնդրութիւնք պատուհասի 'ի վերայ մեր։ Եւ զգիշեր ամենայն հաստատեաց 'ի սրտի իւրում զբանս զայս. և 'ի տունջեանն երթեալ յանդն ել 'ի վերայ ծնգաց իւրոց և ամբարձեալ 'ի վեր ըզբազուկսն իւր ասաց. ամենակալ Աստուած. արարիչդ ամենայնի, և շարժիչ. և այս թռչնոցս ստեղծիչ և հարկիչ, հալածեա՛ ըզոսոխս, և ծանո մեզ ըզքեզ. և զկամս քո։ Եւ ընդ ասելն զբանս զայս վաղվաղակի անյայտ եղեն ձագքն յամենայն անդաստանաց քաղաքին, և ասաց Աբրահամ՝ մեծութիւն և փառք 'ի բարձունս՝ ահա գտայ (1) զԱստուած. ոչ է այլ Աստուած բաց 'ի քէն Տէր արագալուր և բարի, և ողորմութիւնն քո ընդ քեզ, և փառք քո լցցէ զամենայն երկիր։ Եւ գնաց Աբրամ խնդութեամբ 'ի տուն իւր. և պատմեաց 'ի տան հօր իւրոյ, և ոչ հաւատացին նմա, այլ նա ոչ դադարեաց 'ի խնդրելոյ զճշմարիտ Աստուած. զի յայտնեսցի նմա ծանօթապէս։

---

(1) Երկու օրի. յոգւոց հանէր.

Յայն ժամանակի մեռաւ Վելոս թագաւորն և թագաւորեաց Նինոս որդի նորա ամս յիսուն երկու (2)։ Երկրորդ թագաւոր

---

(1) Մի օրի. գտաք։ Միւս օրի. գտայ։

(2) Երկու օրի. ԺԲ. (12)

Աթուրայցւոց։ Սա շինեաց զՆինուէ և եդ զարքայութիւն իւր անդ. սա կազմեաց կուռս հօր իւր ոսկեղէն (1), և ետ երկրպագանել նմա։ Ի ժամանակս նորա շինեցան Սաբովթ. և Սասան, և Քղանէ, ի սոյն ժամանակս շինեցաւ Երուսաղէմ՝ ի Մելքիսեդեկէ Քանանացւոյ, զոր ասեն որդի թագաւորին Քանանացոց որում անունն Մելքի ճանաչիւր. և կամեցաւ հայր նորա զոհել զնա կռոցն, և տեսեալ Աստուծոյ զզօրութիւն որ կայր ծածկեալ՝ ի մանուկն. և արժանի իսկ էր լինել օրինակ միածնի իւրոյ, սատակեաց մեհենիւն, և ընկղմեցան ծնողքն նորա քրմօք, (2) և յափշտակեցաւ մանուկն յանապատ և սնաւ խնամօքն Աստուծոյ. և եղեւ այր հրաշալի Քահանայ Աստուծոյ և թագաւոր երկրին. և շինեալ քաղաք դնէր նմա անուն Սուրիշ ղէմ (3). որ թարգմանի գեօղ խաղաղութեան։

---

(1) Մի օրի. կազմեաց կուռս հարկիւր ոսկեղէն։

Մի օրի. կանգնեաց կուռք մեծարկու հօր իւրոյ ոսկեղէն։

Մի օրի. կանգնեաց կուռք մեծ ահարկու հօր իւրոյ՝ ոսկեղէն։

Հին օրի. շինեաց զՆինուէ և փոխեաց զաթոռ թագաւորութեն իւրոյ յԱթուրեայ ՝ի Նինուէ. և կազմեաց կուռք մեծ արկածու հօր իւրոյ Բելոսի, և ետ երկրպագել նմա։

(2) Երկու օրի յաւէլեալ հանգերձ։

(3) Երկու օրի. Ուրիշլէմ։

Իբրեւ Աբրահամ եղեւ յառաջադէմ հաճոյ Աստուծոյ և էր նա վաթսնամեայ. եւ լուաւ Աստուած բազմաժամանակեայ և անձանձրոյթ աղօթից նորա և աներկբայ հաւատոյն և ասէ ցնա. ել յերկրէդ յազգանէ և տարայց զքեզ 'ի զրկեալ վիճակ ժառանգութեան Սեմայ հօր քո. և անդ ծանուցայց քեզ ըստ կարօտութեան քո. եւ տաց զերկիրն քեզ, և զաւակի քում յաւիտեան ։

Իբրեւ լուեալ Աբրահամու պատմեաց հօր իւրոյ, և կամեցաւ ելանել ընդ նմա. և եկին մինչեւ 'ի Խառան ելեալ յՈւռհայէ քաղդէացւոց. և անդ զտեղի առին և ըստացան անդ տունս և ստացուածս, և կանգնեաց հայր նորա անդ կուռս, և այրեաց Աբրահամ զմեհեանն յորում կանգնեցաւ կուռքն. և Առան եղբայր նորա կամեցաւ շիջուցանել զհուրն, և անդէն այրեցաւ առաջի հօր իւրոյ ։

Բայց ոմանք զկիշակէան 'ի հնարից նորա ասեն լեալ, և 'ի Տեառնէ սպանեալ ։

Իբրեւ եղեալ Աբրահամու եւթանասուն և հինգ ամաց՝ դարձեալ լինի նմա հրաման յԱստուծոյ գնալ յերկիրն Քանանու. եւ թողեալ նորա զաղգատոհմն իւր 'ի Խառան։

Ասեն ոմանք այլ կին նորա բայց 'ի Սառայէ և որդի Սվրեստէ անուն, որք ոչ յօժարեցին ելանել ընդ նմա ։ Իսկ նորա անդիմադարձ եղեալ հրամանի Ամենակալին (1) ել և գնաց ։

Բայց խնդիր տարակուսի (2) է 'ի տեղւոջս, զի հայր նորա եւթանասուն ամաց ծնաւ զնա, և երկու հարիւր հինգ ամաց մեռաւ ։ Եւ Ստեփաննոս ասէ, թէ յետ մեռանելոյ հօրն փոխեաց զնա անտի ։ Եւ Աբրահամ եւթանասուն և հինգ ամաց էր . զարմանք է զի Աբրահամ հարիւր երեսուն և հինգ ամաց գայ ։ Բայց թէ Սամարացւոյն որք ճշմարտէ (3) զի ասեն Թարայ լեալ եւթանասուն ամաց ծնաւ զԱբրահամ և եկաց այլ եւս եւթանասուն և հինգ ամ . կամ որք զՍառայ յԵսքանոյ ասեն և դուստր Առանայ . զիա՞րդ Առան քան զտասն ամի ծնանել կարէր զՍառայ . զի գիր յայտնապէս ասէ զԱբրամ տասն ամաւ երէց քան զՍառայ . այլ որպէս ասացաքն այնպէս ճշմարիտ համարիմ գոլ զիրդ ։

Եւ եկեալ Աբրամ յերկիրն Քանանացւոց և եղեալ ութսուն և հինգ ամաց՝ մտաւ (եմուտ) յԵգիպտոս ։

---

(1) Երկու օրի, յաւելուն Աստուծոյ .

(2) Երկու օրի . տարակուսելի ։

(3) Երեք օրի . բայց զՍամարացւոյն որք ճշմարտէ .

Եւ ելեալ անտի ծնաւ զԻսմայէլ (1) 'ի Հագարայ Եգիպտացւոյ. և Սառայ անփորձ մնաց 'ի փարաւոնէ, զի ծնցի զօրինակ Տեառն մերոյ մաքուր յարգանդի։

Իսկ Թագաւորն Նինոս զահի հարեալ 'ի կնոջէ իւրմէ խստագունէ քան զինքն՝ փախչի յանծանօթութիւն. ոմանք ասեն 'ի Կրիտէս, և անդ մեռանի։

Եւ առնու զԹագն Շամիրամ կին Նոսա և իշխէ Աթուրացւոցն։ Սա Թագաւորեաց ամս քառասուն և վեց, այլք երկոտասան (2) ասեն. սա արար զհողակոյտ բլուրսդ՝ զոր կոչեն Թլկս, վասն Թշնից զգուշութեան և ամրոյաց աղագաւ. բայց գտաք և այլ պատճառ Թլացդ, ասացեալ եթէ 'ի յաճախել կռապաշտութեան յամենայն երկիր, սաստեաց Տէր դիւաց և եհան հողմ փոթորիկ յերկիր, և դողաց երկիր 'ի հիմանց, և տապալեցան քաղաքք և տունք. և առեալ փոթորիկն զկուռսն հանդերձ դիւօքն Թաղեաց 'ի տեղիս տեղիս հողակուտիւք. և բնակեալ են 'ի նոսա դեւքն, կամ 'ի տանջանս մինչև ցայսօր և տակաւին լսեմք եթէ կախարդք մանաւանդ առ Թլօքդ առնեն զարուեստս իւրեանց, և գայ 'ի դիւաց անտի որոտումն ձայնից։

(1) Յմանք օրի. Սմայէլ։ (2) Երկու օրի. ԾԲ. (52)։

Աբրամ նորոգեալ Աստուածածանօթութեամբն, և նոր իմն ծնեալ պանդխտութեամբ օտարութեանն կոչեցաւ Աբրաամ՝ և կին նորա Սառա, անուանեցաւ Սարրա, որ իմացեալ լինի հայր ընտիր, և իշխանական տիկին։

Ապա եղեալ Աբրաամ իննսուն և ինն ամաց Թլփատի, և զատչի այնու յազգացն (1) յուրոց միջի բնակեալն էր։ Ապա եղեալ հարիւր ամաց ծնաւ նմա Սահակ ըստ աւետեացն Աստուծոյ։ Ապա հարիւր տասն և եւթն (2) ամաց լեալ էած զորդին 'ի զենումն, և տուաւ նմա կրկին պարգեւօք նորադոյ խոյիւն փոխանակեալ յօրինակ մեծին։ Ոմանք ասեն երեսնամեայ զՍահակ ած 'ի զենումն։ Ի յինըն ամին Սահակայ՝ պատմեցաւ Աբրահամու թէ ծնան ուստերք և դստերք Նաքովրայ եղբօր քո. և յերեսուն և եւթն (3) ամին Սահակայ մեռաւ Սարրա։

Ոմանք ասեն սատանայ գոյժ ետ Սառայի թէ զենաւ որդին քո և մահացաւ 'ի ժամըն՝ չէ ընդունելի բնաւ։ Ապա եղեալ Աբրաամ հարիւր եւթանասուն և հինգ ամաց մինչեւ յերեսուն եւ եւթն (1) ամն Յակովբայ, կատարի լի բարութեամբ, եւ հաճոյիւք Աստուծոյ:

---

(1) Ոմանք ազգացն։

(2) Հինն. և այլ երկու օրի. ՃԺԵ. (115)։

(3) Հինն. և երկու օրի. ԼԵ. (35)։

Ի հարիւր քառասուն եւ ութն (2) ամին առ գլենտուր (3) եւ ստացաւ վեց որդիս 'ի նմանէ:

Եւ յաւուրս սորա Շամիրամ հարթեաց զհող երկրին Ասորոց (4) վասն ջրհեղեղաց: Եւ զԱբրահամ ասեն ոմանք աշխատեալ 'ի գործն: Եւ 'ի ժամանակս յայս է Թագաւորութիւնն Սիկիոնացւոց: Նոյնպէս եւ Կրետացւոցն (5) Թագաւորեաց Կրէս անուն, որով կոչեցաւ եւ երկիրն՝ եւ յայսմ ժամանակս էր Պիայ (6) որ եւ Պեղղոպենէս (7) ասի, եւ յանուն նորա կոչի երկիրն: Յութսուն եւ հինգ ամին Աբրահամու Իսմայէլ ծնաւ, ուստի Ագարացիք (8) եւ Սարակինոսք, եւ Իսմայէլացիք եւ Տաճիկք կոչին: Ի քառասուն (9) ամին առ Սահակ զՌեբեկա, եւ 'ի վաթսուն ամին յղղացաւ, եւ գնաց հարցանել զԱստուած 'ի ձեռն Մելքիսեդեկի, որ Նախածանօթ (1) էր նոցա. քանզի երկու որդիքս էր յղացեալ, և վրիժէին մանկունքն :

---

(1) Երեք օրի. ԼԵ. (35):

(2) Հին օրի. ՃԽԵ. (145):

(3) Հին օրի. կենդաւրա:

(4) Երկու օրի. Ասիոյ Բերէաս սխալմամբ:

(5) Եւթն օրի. Կրետացւոց. որ է այժմ. Կղ. 'ի Կրետէ կոչեցաւ ասէ երկիրն:

(6) Երեք օրի. Պիրա:

(7) Երկու օրի. Պելլոպէննէսացի:

(8) Երկու օրի. Հագարացիք:

(9) Հին օրի. ԼԸ. (38):

Եւ ասէ Մելքիսեդեկ Քահանայն Աստուծոյ բանիւ տեառն, երկու ազգք են յարգանդի քում, և երկու ժողովուրդք. որք էին Յակոբ՝ յորմէ Իսրայէլացիք: Եւ Եսաւ՝ յորմէ Եդովմայեցիք որք են Ֆրանկք :

Զայսու ժամանակօք Թագաւորեաց Արգիացւոյն Ինաքս, զոր Եգիպտացիքն Իսիս և Սեբուսիս (2) կոչեցին : Եւ էր սա կին դուստր Ովրայ, և սա կոչեաց զԱրգոս գետն Ինաքոս :

Ի յեւթանասուն և հինգ ամին Սահակայ եւթն և տասներորդ իշխանացաւ յԵգիպտոս Ապիս, և Աստուած կոչեցաւ (3) և ոմանք Սարապին (4) կոչեցին. և եկաց Սահակ հարիւր ութսուն ամ մինչեւ յերեսուն և մի (5) ամն Ղեւեայ :

Եւ Աբիմելէք ագարայի (6) Թագաւոր

---

(1) Ոմանք. Նախ անծանօթ :

(2) Մի օրի. ասէ միայն Իսիս. և չէ զՍեբուսիս :

(3) Ոմանք՝ չաստուած կոչեցաւ. ոմանք աստուած կարծեցաւ :

(4) Մի օրի. սարապին :

(5) Երկու օրի. Լ. (50) : Մի օրի. ԼԲ. (52) :

( ) Հին օրի. Աբիմելէք Թագաւոր քաղդէացի որ է Գերարայ փղշտացւոց բարեկամ տան Աբրահամու :

փղշտացւոց բարեկամ էր նոցա (1)։ Ի հարիւր երեսուն և եւթն (2) ամին Սահակայ գնաց Յակոբ օրհնութեամբ հօր իւրոյ 'ի Խառան։

Զայսու ժամանակաւ յերկիրն փղշտացւոց շինեաց Եմովր իշխանն զՍիւքեմ քաղաք. յանուն որդւոյ իւրոյ Սիւքեմայ յորմէ յափշտակեցաւ Դինայ։

Յակովբ լեալ անդ ութն ամաց՝ առ զԼիայ դուստր Լաբանայ Ասորւոյ. և ութսուն և հինգ ամաց, ծնաւ զՌուբէն (3) և յութսուն և ինն ամաց՝ (4) ծնաւ զՂեւի, և յիննսուն և մի ամին ծնաւ զՅովսէփ. և 'ի հարիւր ամին ել առ Սահակ հայր իւր։

Ի յիսուն ամին Յակոբեայ Փորոնեւս թագաւորեաց Արգիացւոցն, որ նախ օրէնս և ատեանս և դատաւորս եդ. և յեւթանասուն և հինգ ամին Յակոբեայ Ովգիսիս շինեաց զԵլեւսինա Յատտիկէ, և Թէսաղոս թագաւոր Թեսաղացւոցն (5) որով կոչեցաւ աշխարհն։ Եւ Մեսինէ քաղաք շինեցաւ։ Ի հարիւր տասն ամին Յակոբայ Թագաւորէ Արգիացւոցն Ապիս։ Ոմանք ասեն թէ զեղբայր իւր եթող Թագաւոր Արգիացւոյն, և ինքն չոգաւ յԵգիպտոս, և սա է Ապիսն Եգիպտոսի։ Սա շինեաց զՄեմփիս յԵգիպտոս։

---

(1) Հին օրի. Եւ լեալ Յակոբ ՀԵ. (75) ամաց 'ի ՃԼԵ. (135) ամին . . .

(2) Մի օրի. ՃԼԵ. (135)։

(3) Հին օրի. դնէ նախ զՌուբէն, զՇմաւոն ապա զՂեւի։ Երկու օրի. չյիշեն զՌուբէն և զՇմաւոն։

(4) Հին օրի. 'ի Ժ. (10). մին Ղեւայ, չէնի յիննսուն և ինն ամին խորամ.

(5) Երկու օրի. Թեսաղոնիկեցւոց։

Ի տասն և ութն (1) ամին վախճանեցաւ Յովսէփ. և յերեսուն ամին տիրեաց Եգիպտացւոցն ամս ութսուն. զոր պատմութիւնք Եգիպտացւոցն, ութն և տասներորդ հարստութիւնք հովուաց անուանեն։

Ի հարիւր երեսուն ամին էջ Յակովբ յԵգիպտոս. 'ի յիսուն ամին Յովսեփայ Սպարտա շինեցաւ 'ի Սպարտայ որդւոյ Փորոնեայ (2)։

Իսկ յետ Շամիրամայ Թագաւորէ Զամէս և զկնի նորա Բեղուքոս, յետ նորա Մննա։ Յակովբ եղեալ հարիւր քառասուն և հինգ ամաց վախճանի։ Բայց մինչդեռ էր նա յերկիրն Քանանացւոց զկնի մահուանն Սահակայ վարձեաց Եսաւ զորդիսն Ամոնայ և Մովաբու և զԱրամ, և եկն 'ի վերայ նորա և սպանաւ 'ի Յակովբայ. և հարկեցան որդիքն Եսաւայ՝ Յակովբայ։

---

(1) Երկու օրի. ԺԵ. (15)։ Այս օրի. 'ի խորգին [illegible] [illegible]

(2) Մի օրի. փոռորեայ։ [illegible]

Եւ 'ի մտանելն Յակովբայ յԵգիպտոս՝ Ասորոց Թարգմանն եւթանասուն ոգի ասէ ։ Եւթանասունքն՝ եւթանասուն և հինգ ոգի (1) ։ Քանզի որդիսն Յովսեփու և զորդիս որդւոց նորա որ չէին ծնեալ՝ 'ի համար առնուն եւթանասունքն ։

Ղեւի լեալ քառասուն և հինգ ամաց ծնաւ զԿահաթ, ոմանք զփորձանքն Յովբայ աստ ասեն ։ Կահաթ լեալ վաթսուն ամաց ծնաւ զԱմրամ (2). Ամրամ եւթանասուն ամաց ծնաւ զՄովսէս ։

Յայսմ ժամանակի թագաւորեաց Աթուրացւոցն Ալապարոս ։

Յովսէփ եղեալ հարիւր տասն ամաց վախճանի, և 'ի վեց ամին Ամրամայ. և խոստմանն Աստուծոյ յերկու հարիւր ութսուն և վեց ամին ։

Մտին որդիքն Իսրայէլի 'ի ծառայութիւն յետ մահուանն Յովսեփու ։ Եւ թագաւորեաց Քեբրոն՝ ամս երեքտասան, և յետ նորա Ամենոփթիս ամս քառասուն երեք. սա սկըսաւ հեղձուցանել զտղայսն Իսրայէլի 'ի Նեղոս գետ ։

---

(1) Առաքեաց Յովսէփ և կոչեաց զՅակովբ զհայր իւր և զամենայն ազգատոհմն ոգիս եւթանասուն և հինգ ։ Գործ. է. 14 ։

(2) Հին օրի. յաւելու. և եկաց ՃԼԳ. (133). ամ. մինչեւ յերկք ամն Մովսիսի ։

Եւ Մովսէս ընկեցեալ ըստ ոճոյն եբարձ զնա Թերմութէս դուստր փարաւոնի, զոր Եբրայեցիքն Մառի կոչեն, որ եղեւ կին Բանադրա Թագաւորին Մեմփիս քաղաքի: Եւ ապրեալ Մովսէս ՚ի ջրոյն յերեք հարիւր յիսուն ամի խոստմանն Աստուծոյ. Եւ եղեալ տասնամեայ՝ տուաւ յուսումն յԱնէսն եւ յԱմրէսն որք էին յորդւոյն Բարխաբայ կախարդի քաղդէացւոյ: Եւ հալածեալք անտի վասն գողանալոյ զողայս երկրին եւ զոհելոյն կռոցն զոր յանուն հօրն իւրեանց կանգնեալ էին. եւ էին սոքա հմտացեալք քաղդէական եւ յունական ճարտարութեամբ, եւ յաւելին զԵգիպտոսին, եւ այնու վարժեցաւ Մովսէս ստիպեալ զնոսա Բամբշանն Մառիայ:

Ի քսան երկու ամին Մովսէս իշխանացաւ, եւ շինեաց զքաղաքն Հերմուպոլիս (1), որ եւ կոչեցաւ յանուն սնուցչին Մովսիսի Մառիս:

Յայնմ ժամանակի Եթովպացիքն որ լեալ էին հարկատուք Եգիպտացւոյն, եւ պտին զնոսա, և ապա ապստամբեցին, և եկին ՚ի վերայ Եգիպտացւոց և գտին զնոսա անպատրաստս, և գերեցին և առին զանուանեալ մայրն Մովսիսի, և տարան։ Եւ Մովսէս լեալ զօրավար Եգիպտոսի՝ կռուեցաւ ընդ Եթովպիայ զտասն ամ, և գնացեալ ՚ի վերայ նոցա ընդ օձուտ անապատն եղամբք և արագլօք՝ ուստի նոքա ակն ոչ ունէին, և զկնի տասն ամի առ զԵթովպիա՝ և առ ըզթագուհի նոցա զԹեսբաա և զՄառի մայր իւր, և դարձաւ յԵգիպտոս քաջ և արի անուամբ։ Եւ նախանձեցաւ ընդ նմա այրն Մառեայ և կամէր սպանանել զնա, բայց պատկառէր ՚ի կնոջէ իւրմէ։

---

(1) Երկու օրի. ՚ի քսան երկու ամին Մովսիսի սկսաւ կաւագործութիւն իսրայէլի. ՚ի քսան եւ ութն ամին Մովսէս իշխանացաւ, եւ շինեաց զՀերմուպոլիս քաղաք . . . : Հին օրի. ՚ի քսան երկու ամին Մովսիսի նեղել սկսաւ Թագաւորն զիսրայէլ շինուածոք քաղաքաց: Եւ ՚ի քսան եւ ութն ամին Մովսիսի շինեցին զՀերմուպոլիս:

Եւ մեռաւ Մառի, և թաղեաց զնա Մովսէս, և առաքեաց այրն Մառեայ զՔասնթիս (1) չարչարիչն Իսրայելի սպանանել ըզՄովսէս՝ և յառաջեաց Մովսէս, և սպան զնա և ինքն փախեաւ ՚ի Մադիամ։ Եւ զկնի փախչելոյն Մովսիսի առին Յանէսն և Յամբրէսն զորդիսն Իսրայելի, և տարան զնոսա յանապատ հնգետասան (2) աւուր ճանապարհաւ և շինեցին անդ դրախտ զեւթն և տասն (3) ամ, և ամրացուցին յոյժ յոյժ, և ՚ի կատարման չքնաւածոյն առին ՚ի տղայոյն Իսաբայելի լինն հարիւր ութսուն մանկունս անմեղս, և զոհեցին դիւաց՝ և կոչեցին զնշխամն դիւաց ՚ի զոհն, և եդին պահապան դրախտին. և յայնմ հետէ մանաւանդ հնազանդեցան դեւք կախարդացն ՚ի գործս տըրմաց և յամենայն հնարս։

---

(1) Մի օրին. Քսանոր.
(2) Մի օրին. ԺԷ. (17)։
(3) Մի օրին. ԺԵ. (15)։

Զայսու ժամանակաւ էր Պրամիթեւս իմաստասէր՝ որ ստեղծանել ասեն զմարդիկ, զի իմաստութեամբ ՚ի գիտութիւն ածէր զտգէտսն։

Իսկ Մովսէս գնացեալ ՚ի Քուշացիսն (1) առ Հռագուէլ որդի Դադանայ որդի (2) Յեկտանայ յորդւոց անտի Կենդուրայ. և առ զդուստր նորա ՚ի կնութիւն և ծնաւ ՚ի նմանէ երկուս որդիս՝ և էր Մովսէս քառասուն ամաց։ Յայսմ ժամանակի ասեն զԱսկղեպիդէս բժիշկ երեւեալ ճարտար, և Ատղաս (3) Պրամիդեայ եղբայր՝ աստեղագէտ որ զերկինս կրեալ (4) ասիւր, զոր Իւրիպիդիս լեառն անուանէ ՚ի վերոյ քան զամպս։

Եւ զայսու ժամանակաւ ասեն Եթովպացիք ՚ի Հնդիկէս գետոյ գնացեալ առ

---

(1) Մի օրի. ՚ի Քուշացիսն։

(2) Մի օրի. որդի Դադանայ որ յԵկտանայ։

(3) Ոմանք Ատղաս։

(4) Երկու օրի. կրել։

Եգիպտոսիւ բնակեցան ։ Եւ Կորիտացիք և Կորիւբանդք զզինուք կաքաւուն գտին ։

Եւ աստ ասեն առ Դեւկաղիոնիւ Եթեսաղիայ եղեալ ջրհեղեղ , և առ Փայիթոնիւ յԵթովպիոյ հրայրեացքն . և բազում այլականութիւնք ՚ի տեղիս տեղիս ըստ Պղատոնի պատմելոյն . և զԿիկրոփս յԱտկեայ որ է Ատտիկէ Թագաւորել (1) ասեն ոմանք , եկեալք յԵգիպտոս ասեն Թագաւորել նախ , և ապա յԱտտիկէ ։ Իսկ Յոյնք ասեն սա շինեաց զԱթէնս յանուն կնոջ իւրոյ ։ Զսա կոչեն երկբոյս կամ զի երկայն էր և կամ զի երկու լեզու գիտէր զԵգիպտոսին և զՅունացն ։ Տիրեաց սա և միջերկրեայց և յանուն սորա կոչեցաւ Կապադովկիա ։

Եւ յաւուրս սորա երևեցաւ ձիթենի ՚ի Դղեկին Աթենայ ուստի առասպելն եղեւ ստեղծեալ ։ Եւ սա կոչեաց զԱրամազդ Զեւս , և նախ եզն զոհեաց և յայսմ ամի Դեւկաղիոն Պառնասացւոց (2) կողմանցն սկիզբն արար Թագաւորելոյ ։

Եւ յԵլլենոսէ որդւոց Դեւկաղիոնի Եղղադացիք կոչեցան , Գրեկք Եղենքն , (3) և յԱկտէ Ատտիկեցիք ։

---

(1) Կեալք Թագաւորեալ ։ Թեան երկուս լինել ։

(2) Մի օրի . Պառնասւոց ։ Սխալ ընդօրինակու-

(3) Հելլենք և կուէք ։

Ի քսան և հինգ (1) ամի աւետեացն Աբրահամու Կորնթոս քաղաք շինեցաւ՝ որ երբեմն Եփրա կոչէր ։ Եւսեբի ասէ թէ Կրոնոսի Աթենացւոյ դուստր էր Եփրա անուն ՚ի նմանէ կոչեցաւ աշխարհն Ափրիկէ ։

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս Մովսիսի ընդ ծովն կարմիր ։

ՄՈՎՍԷՍ լեալ եւթանասնամեայ , երեւմանն Աստուծոյ արժանացաւ . և զառաջին ամն յապաղէր գնալ յԵգիպտոս , և հարկեալ ՚ի Տեառնէ գնաց ութսուն ամաց . և յաւետեացն Աստուծոյ չորս հարիւր երեսուն ամ էր թուին . և յեւթանասունն և հինգ ամին Աբրահամու ։ Երկու հարիւր հինգ ամ, մինչ ՚ի գալն (2) Յակովբու յԵգիպտոս . և երկու հարիւր քսան և հինգ ամ կացին յԵգիպտոս . և չորս հարիւր ամն լցեալ էր ըստ հրամանի Տեառն սպանանել զԵգիպտացին՝ և ոչ կամեցան փրկել որդիքն Իսրայելի՝ այլ մերժեցին զփրկիչն ։ Եւ զառաջին ամն Մովսէս յապաղեաց զի սա Աստ-

---

(1) Մի օրի . ՚ի ՆԻ . (420)։ (2) Ոմանք ՚ի գնալն ։

ուած վճարեալ էր․ և գնացեալ Մովսէս յԵգիպտոս տասն հարուածով տանջեաց զԵգիպտոս, փոխանակ տասն փորձանացն Աբրահամու, և փոխարէն հարիւր քառասուն և չորս ամի չարչարանացն Իսրայելի։

Եւ Եգիպտոսն Թարգմանի հալոց երկաթի։ Զառաջինն շինեաց զնա Մեծրայիմ որդի Քուշեայ որդւոյ Քանանու․ և կոչեցաւ յանուն նորա Մսր։ Եւ զկնի յԵրիանէ Երիա կոչեցաւ՝ և Ոսամասխա Թագաւոր կոչեաց (1) զնա յանուն գետոյն Եգիպտոս․ զի Նեղոս Եգիպտոս կոչիւր, որ է ինքնաբուղխ։ Եւ անուն Թագաւորին ընդ որ պատերազմէր Մովսէս, Փլէսիոս (կամ Փէսիոս) (2) կոչէր, այլք Կանաքարիս անուանեն։

Եւ յորժամ արիւն ըմպէին Եգիպտացիքն տաղտկանային, և երթային ՚ի Գեսեմ, և խնդրէին ջուր՝ և յորժամ տային՝ արիւն լինէր (3) և այսպէս կամէին ՚ի բերանացն Իսրայելի առնուլ ՚ի բերանս իւրեանց, և ՚ի կլանելն իւրեանց փոխէր յարիւն։ Նոյնպէս և զխաւարն նոցա ոչինչ կարէր լուսաւորել, ոչ կրակ և ոչ ճրագ․ և նողկտէին ՚ի ծծել լըդ-

---

(1) Ոմանք շինեաց։

(2) Հին օրի․ Փասանոս։

(3) Երկու օրի․ յաւելու․ և Ջանային ըմպել ՚ի ձեռացն Իսրայելի, և լինէր արիւն։

Թանձրութիւնն խաւարեալ օդոյն . և 'ի մահ անդ անդրանկացն Եգիպտացւոց եղեն որդիքն Իսրայելի վեց հարիւր հազար արու 'ի քսանամենից մինչեւ 'ի վաթսուն ամն թըւեալք : Եւ էր յելիցն Ադամայ երեք հազար ութ հարիւր քառասուն և երկու ամ : Եւ եղեն յաւուր հինգշաբաթի և անցին ընդ. ծովն 'ի կիւրակէի :

Եւ 'ի ձգելն Մովսիսի զգաւազանն 'ի վերայ ծովուն զայն ասաց . Այէա Աստուած իմ(1), Շրայէա դու հաներ զմեզ Աստուած , և 'ի ձախն ասաց , Ադոնայ տէր Աստուած ընդ մեզ , և խաչանիշ նկարու դրոշմն արար նոցա ճանապարհ նոր՝ ոչ միայն ցամաքեալ՝ այլ և կանանչացեալ լայնացեալ յոյժ , մինչեւ երկոտասան ցեղքն Իսրայելի աղխիւք իւրեանց հանդէպ միմեանց չուէին :

Նախ եմուտ ցեղն Բենիամինի և ապա ցեղն Ղեւեայ ապա Յուդային և այլոցն՝ և աստի կոչեցան Եբրայեցիք . և տուաւ նոցա նոր լեզու և բարձաւ Եգիպտոսին , և նման է հայրենի լեզուին , զոր և արդ ունին , և այնու երգէին "օրհնեսցուք զՏէր զի փառօք է փառաւորեալ" :

Եւ զկնի նոցա եմուտ Փարաւոն և սուզան 'ի ջուրսն փոխանակ մանկանցն Իսրայելի ։ Եւ եհան ջուրն զսպանեալսն՝ մասն բազում 'ի կողմն Իսրայելի զինուքն իւրեանց, և իւրաքանչիւր զտէր իւր ճանաչեաց և թաղեաց․ և առին զսպառազինութիւնս նոցա, և այնու կոտորեցին զԱմաղէկ․ և յայնմ կողմանէ զհանեալն 'ի ծովէն առին Եթովպացիքն որք եկեալ էին 'ի Գանգէս (1) գետոյն, և կատարեցաւ բան Սաղմոսին (2) կերակրել զԵթովպացիսն ։

---

(1) Երկու օրի . յաւելուածն և 'ի յաջ կողմն ձգեալ ասէ :

Ասա երեւեցաւ Երակլէս 'ի Փիւնիկէ և գիւտ որթոյ առասպելեալն 'ի Դիոնեսիոյ ոչ 'ի Սելովմայեւոյն (3) ։

Եւ 'ի սոյն ժամանակս Աւրոպագոս (4) կոչեցաւ դատարանն, և յետ ելիցն Իսրայելի շարժեցաւ Եգիպտոս զեւթն ամիս՝ և 'ի տունս ոչ բնակեցին ։ Եւ ասեն թէ յընկղումին Փարաւոնի՝ մնացեալքն յԵգիպտոս իւրաքանչիւր ոք զգործս իւր աստուածացուցին, իբր թէ եղեալ նոցա փրկութեան պատճառ ։ Ի նոյն ամի ութսներորդի Մովսեսի պարտեցաւ Ամաղէկ հարձորդքն Եսաւայ՝ քինախնդիր լինել (5) նախնւոյն իւրոյ ։ Եւ 'ի

---

(1) Մի օրի. Գանգէս ։

(2) Յմանս՝ մարգարէին ։

(3) Երկու օրի. Իսմայելացւոյն ։

(4) Երկու օրի. Արիսպագոս ։

(5) Եղեալ ։

Նմին տարւոյ յերկրորդումն ամսեանն ել 'ի լեառն մթապատ առ տէր ։

Ապողիմոս իմաստնասէր եբրայեցի ազգաւ ասէ․ թէ նախ Մովսէս շնորհիւ Աստուծոյ գիր արար 'ի վերայ նոր լեզուին, զոր առին․ և այն գրովն ետ Աստուած Մովսիսի 'ի տախտակսն յետ յիսուն աւուր ելից նոցա ։ Եւ յառաջ զԵլից գիրքն գրեաց Մովսէս զոր տեսեալ էր և գիտէր․ և ապա զԱստուած՝ զոր չէր տեսեալ զլինելութիւն արարածոցս որպէս գրեցից․ վասն այսորիկ իմանալի և անմարմնապէս արար առաջի նորա զաշխարհս աւուրս քառասուն․ և զգալապէս ետ հրաման ձեւակերպել զնա 'ի կազմութիւն խորանին՝ որ գործեցաւ զեւթն ամիս ընդ եւթն աւուր արարչութեանն ։

Եւ ապա գրեաց զգիրս Ծննդոցն և զայլ երիսն․ և 'ի մուտս երկրորդի ամի ելից կանգնեցաւ խորանն․ և անդրէն դարձան կեանք դրախտին անաշխատ և անցաւ ։ Ի կարճոյ կամէր տանել զնոսա Աստուած յերկիրն պարգեւաց զաւուրս քառասուն յետ լրտեսելոյ զերկիրն, որ էր յերկրորդում ամի ելիցն յորժամ կանգնեցաւ խորանն ։ Բայց զի բամբասեցին զերկիրն օրհնեալ 'ի Տեառնէ, և 'ի կոխմանէ ոտից Աբրահամու զսրբեալն, որ ըստ տարւոյ. եւ Նոցա յամեալ զամս քառասուն. և ոչ Մովսէս եմուտ յերկիրն. զի երկմտեաց և զայրացաւ ՚ի հարկանելն զվէմն. զի Նորա սուգ էր ՚ի վերայ Մարիամու քեռըն իւրոյ։

Զկնի վեց ամի ելիցն Իսրայէլի՝ Թագաւորեաց Աթենացւոցն Կրօնոս, յորոյ դստերըն անուն կոչեցաւ աշխարհն Ատտիկէ։ Տէրեաց և Միջերկրեայ աշխարհին որ Կապադովկիայ կոչեցաւ ՚ի Կիկրոպեայ, որ Նախ Աքտէ կոչէր։ Ի քսան ամի իշխանութեանն Մովսիսի Թագաւորեաց յԵգիպտոս Եգիպտոս անուն ամս վաթսուն և ութ. ասեն թէ սմա անուամբ կոչեցաւ երկիրն Եգիպտոս. սա ասեն շինեալ տաճար Ապողոնի յԱթէնս, և անուանել Արիստագոս։ Մովսէս լեալ հարիւր քսան ամաց կատարի, և այն է սկիզբն Յոբելինին Եբրայեցւոց։ Եւ կատարեցան հինգ գիրքն Մովսիսի. որ ունին գործք և պատմութիւնք երեք հազար եւթն հարիւր ութն ամաց ըստ Եւսեբեայ։

Եւ առ Յեսու որդի Նաւեայ զգաւազանն և զիշխանութիւն Մովսիսի, և առաջնորդեաց ժողովրդեանն Իսրայելի ամս քսան և եւթն։ Ի վեցերրորդ ամի իշխանութեանն Յեսուայ Դանաւոս եղբայր Եգիպտոսի Թադաւուրի յիսուն դստերօք զյիսուն որդիս եղբօր իւրոյ կոտորեաց . բաց 'ի Լինկեայ՝ որ յետ նորա թագաւորեաց՝ սա է յամենայն կողմանց աչացեալն :

Ի տասն և ութերրորդ ամին Յեսուայ Փիւնիկս և Կադմոս 'ի Թեբայւոց Եգիպտոսէ յԱսորիս եկեալ՝ թագաւորեցին Տիւրոսի և Սիդոնի . և անուամբ նոցա կոչեցաւ երկիրն Փիւնիկէ և տուն Կադմեայ : Եւ զկնի սոցա բերաւ իմաստութիւն յաշխարհըն յայն որպէս Կեկրոպս եբեր զբնակիչս Մեմփիս քաղաքի 'ի յԱթէնս. և Սերմանեցաւ աղանդն իմաստասիրութեան 'ի Յոյնս (1) . և նա արար Յունաց գիր , զոր այլք զԿադմոսէ ասեն թէ Յունաց գիր արար :

Յեսու կատարեցաւ հարիւր եւթն ամաց , և դատաւորացաւ Գոդոնիէղ եղբայր Քաղեբայ կրտսեր ամս քառասուն :

Ափրիկանոս երեսուն ամ դնէ 'ի մէջ Յեսուայ և Գոդոնիէղի : Եւ Յոյնք յիսուն ամ դնեն զԳոդոնիէղի դատաւորութիւնն: Բայց ութն ամ ծառայեցին Քուշայ զոր ասեն Գոդոնիէղ՝ այն այլ սմա է համարեալ: Յաւուրս սորա շինեցաւ քաղաքն Բիւթանից որ կոչին Սալօս, Պաղաս, Թէսոտէ, Նկղէսոտէ, Սարօնոս, և աստ շինեցաւ քաղաքն Սեկիլեայ:

---

(1) Ոմանք փոխանակ ասելոյ 'ի Յոյնս ասէն անդ իմաստու- -աղանդն իմաստասիրութեան թեան 'ի Յոյն :

Եւ յայսմ ժամանակի թագաւորեաց Արգիացւոյն Պալապօս, ուստի և Փիլոտոն երեւեցաւ բարոյախօսն անասնոց և թռչնոց:

Յետ Գոդոնիէղի ծառայեաց Իսրայէլ Եգղոմայ արքային Մովաբացւոց ամս ութ, զոր յարեալ են յամս Աւոդայ (1) Եփրեմացւոյ որ դատեաց զԻսրայէլ ամս ութսուն:

Աստ շինեցաւ Ակատամն Բաղուք ի Դուադամոսէ. և յութ ամին սորա թագաւորէ Աթենաց Արքխալթոս. և ի քսան ամին սորա թագաւորէ Աթուրացւոյն Լամբարիդոս ամս երեսուն և երկու. և շինեաց ըզԲաղաքսէ. և աստ կատարեցաւ չորեք դարքըն, որ է չորս հազար ամք: յԱդամայ մինչեւ ցՄովսէս քսան և հինգ (2) ծնունդ է, և անտի ոչ զծնունդն թուէ ոճով այլ զանուանս դատաւորացն: Յետ Աւոդայ ծառայեցին այլազգեացն ամս քսան. և զօրացաւ Սամեգար և սպան ի Փղշտացւոյն վեց հարիւր այր մաճով արօրոյն. և թագաւորեաց Բարակ Դեբովրայիւ ամս քառասուն. զայլողգեացն ծառայութիւնն նոցա համարին ։ Յաւուրս սորա Յովն կացեալ սպարապետ Աթենացւոց Յոյնս անուանեաց զԱթենացիս ։ Եւ Կիրինէ քաղաք շինեցաւ ՚ի Լիբէայ . և Արգիւացւոց Թագաւորքն դադարեցին, զորս մեք ոչ գրեցաք յանուանէ ։ Սիկոնացւոց Թագաւորեաց Սիկոն, և ՚ի նմանէ Սիկոնացիք անուանեցան՝ որ նախ կոչէին Եգեղացիք ։ Ի տասն և եւթն ամին Բարակայ Իղիոն շինեցաւ յԻղիոսէ, և Սպարտացւոց իրքն, որ ասեն թէ վասն ամենայն կողմանց գումարելոյ Թշնամեայն Սպարտայ անուանեցաւ, որ է ցան ժողովածոյ ։

---

(1) Մի օրի. Յաւդաւդայ: (2) Երկու օրի. քսան և ութ:

Յաւուրս Բարակայ եկն Սիսարայ զօրավարն Յաբենայ և կոտորեցաւ ։ Եւ Յայէլ կին Քաբերայ լախտ վարսեայ ընդ փողս նորա որ էր յաներացն Մովսեսի . և աստ էր տեսիլ հարիւր իմաստասիրացն ՚ի Հռովմ, որք տեսին ՚ի միում գիշերի զմի տեսիլ եւթն արեգական . զոր Աբիլէ կին իմաստուն մեկնեաց ՚ի վերայ եւթն դարուց և եւթն նշանաւոր Թագաւորաց . և զվեցերրորդն ՚ի Քրիստոս մեկնեաց, որոյ ճառագայթն ծածկէր զայլսն և ոչ մնանէր նման այլոցն ։

Եւ Թագաւորեաց Սիդոն ՚ի վերայ Ափրիկեցւոցն . և Աթուրացւոցն Պանաւաս ամս քառասուն և չորս ։ Յետ Բարակայ իշխեցին Մադիանացիք 'ի վերայ Իսրայելի ամս եւթն, և ել Գեդէոն կոտորեաց զնոսա հարիւր քսան հազար (անձինս) և դատեաց զԻսրայէլ ամս քառասուն․ յայլազգեացն յարէն 'ի Գեդէոնին։

Գեղասոս (1) հիւսն սա երեւեցաւ․ որ կարծեցուցանէր շարժուն զպատկերան զոր առնէր՝ զի նախ զոտսն պատառանէր, զոր այլք կից գործէին։ Ի մետասան ամի Գեդէոնի Կիզիկոն քաղաք շինեցաւ․ և Տիւրոս քաղաք շինի նախ քան զտաճարին Երուսաղեմի երկու հարիւր քառասուն ամաւ, որպէս ասէ Յովսեպոս։

Յաւուրս Գեդէոնի Որփէոս Թրակացին, և Միւսա վարդապետն Հերակլի երեւէին, Թամիրաս փիլամոնեայ։ Յերեսուն երեք ամին Գեդէոնի Թագաւորէ Աթուրացւոյն Սաւսրամոս ամս տասն և ինն․ և Թագաւորէ 'ի Թեբայիս Ամողան երաժիշտ․ որ (ասեն) նուագօքն շարժէր զքարինսն։

Զկնի Գեդէոնի եւթանասուն որդիսն կոտորեաց Աբիմելէք հարճորդին, և իշխեաց Իսրայելի ամս երեք․ և յետ նորա Թովլաս ամս քսան և երիս․ և սա երեւեցաւ կինն Հեդրաս (2) անհնարին Սոփեստէսն զոր ասէ

---

(1) Երկու օրին․ Դեդալոս։ (2) Երկու օրին․ Հիդրաս։

Պղատոն ։ Այլ Հերակլէս զԻղիոն աւար հարկանէր և զԱնդէոս սպանանէր զոր երկրածին ասէին ։ Այլ Աթենացւոյն թագաւորեաց Թեսևս ամս քսան և ութ ։ Այլ Աթուրացւոյն Մեթրոս տիրեաց ։

Ի քսան և մի ամին Թովղայ շինեցաւ Տարսուս Կիւլիկեցւոց ՚ի Պերսեայ որդւոյ Տանայի ։ Շինեցաւ և Կարկեդոն․ և Իղիոն առաւ ։

Յետ Թովղայ Յայիր դատաւորի ամս քսան և երկու․ ՚ի վեցերորդ ամին սորա թագաւորէ Աթուրացւոյն Տաւտէոս ամս երեսուն և մի․ Յոյնք Ամ Տիտոնիս (1) ասեն․ և ասեն թէ՝ սա էառ զԻղիոն քաղաք․ ՚ի սորա վեշտասաներորդ ամին թագաւորէ Աթենացւոյն Մոսթոս (2) ամս քսան և երկու․ և նախ քան զսա Թեսևս զԱթենացւոց ցրուեալն ժողովեաց․ և զխեցեկեալն մահու վճիռ եդ ։

Աստ երևեցաւ Փիլամն երաժիշտ, որ արար դասս երաժշտաց ։

Զկնի Յայիրայ ծառայեցին այլազգեացն որդիքն Իսրայէլի ամս ութ․ և ոմանք տասն և ութ ամ ասեն, որ յայլոյն խառնեն ։

---

(1) Մի օրի․ Տիթոլուն․ մի՝ Տիթոլունիս․ մի՝ Տիթոնիսաս ։

(2) Մի օրի․ Մէնեթիոս․ մի՝ Մէնեթաս ։

Յեփթայէ ամս վեց (1) ։

Ի սա ասեն թագաւորել զԼակեդեմոն Մենադոս (2) ։ Եսեբոն դատաւորեաց Իսրայելի ամս հինգ (3) ։ Ոմանք սոսա ասեն թէ Աղեքսանդրոս զՀեղինէ առեւանգեաց, և զԵղինեական պատերազմն վասն Նախանձու ըդտասն ամ ։ Եւ Հերակլէս խոցեալ սրով, այրեաց զանձն հրով ։ Իսկ յետ Եսեբոնի կայ յեբրայական մատենին դատաւոր Իղոն, և տասն ամ՝ ոչ կայ (4) յեւթանասնիցն ։

Աբդոն ամս ութ, և սոսա թագաւորեցին Լատինացիք որ կոչին Հռովմայեցիք ։ Առաջին թագաւորն Ենիաս անուն ։ Յետ Աբդոնի ծառայեցին որդիքն Իսրայելի Փղշտացւոյն ամս քառասուն. և յայնժամ Սամփսոն փրկել զԻսրայել ամս քսան ։

Ի յեւթն ամին սորա եղեն իրքն Հռութայ ։ Եւ թագաւորեաց Աթուրացւոյն Տոտէմէոս ամս քառասուն ։ Եւ ՚ի տասն և իններորդ ամին Սամփսոնի մեռաւ Զեւս, և թաղեցաւ ՚ի Կրետէ. զոր առեն կեցեալ ամս ութ հարիւր ութսուն. և վասն շատակեցութեանն Զեւս կոչեցաւ յանուն աստեղըն զի 'ի ծնողացն Պրիայ կոչէր։ Եւ Լիւդացիք ծովակալեցին զառաջինն ամս իննսուն և երկու։ Եւ յետ ամաց ութից առնլոյ Իղիոնի Թագաւորեցին Լատինացիք որ և Հռովմայեցիք. յետոյ կոչեցան Հեթանոսք։

---

(1) Մի օրի. առ. դատաւորուն Յեփթայի ամս վեց ։

(2) Մի օրի. զԼակեդեմոն ՚ի Մենադոյ ։

(3) Մի օրի. եւթն ։

(4) Երկու օրի. որ չկայ ։

Ասեն թէ Սամփսոն գործէր գործ իբրև Հերակլէս , և Եբրայեցիք զՍամփսոնի իշխանութիւնն քառասուն ամ ասեն. և Եւթանասունքն քսան. և Յովհաննէս պատմագիր՝ դատաւոր մի այլ յիշէ զկնի Սամփսոնի Սամեգար անուն. և տայ նմա ժամանակ քառասուն ամաց։ Իսկ Ափրիկանոս ասէ զքառասուն ամն չգոյր նոցա դատաւոր և խաղաղութիւն էր նոցա՝ և ոչ ուստեք խռովէին։

Հեղի քահանայ դատեաց զԻսրայէլ ամս քսան, ըստ Եւթանասնիցն, և ըստ Ասորոցն քառասուն ամ՝ և ամենայն ժամանակն՝ Հեղեայ եւթանասուն և ութ ամ՝ յերեսուն և ութ ամին դատաւորեաց, և 'ի տասն և ութ ամի իշխանութեան նորա ծնաւ Սամուէլ. և 'ի քսան և մի ամին ընծայեցաւ 'ի խորանն։ Սա նորոգեցաւ Իղիոն յԵկտորի որդւոցն, և Ամազոնքն զԵփեսացւոց մեհեանն այրեցին՝ և Միկոնացւոց թագաւորն բարձան. և քուրմքն առին զթագաւորութիւնն մինչ 'ի Բարիտոն քուրմն, որ առ 'ի չժուժալ ծախուցն փախստական եղեւ. եւ Եթենայւոյ թագաւորութիւնն յայլ ազգ փոխեցաւ. զի Սեղանթոս Թիմնիտէ յաղթեաց Պայապատի. եւ տօն սկսան կատարել խաբեբայից, զի խաբէութեամբ յաղթեաց։

Յետ մահուանն Հեղեայ եղեւ տապանակն 'ի տան Ադեդարայ (1) ամս քսան. դարձեալ այլազգեացն. եւ դատաւորեաց Սամուէլ ըստ Եբրայեցւոյն ամս քառասուն։

Բայց 'ի քսան ամի իշխանութեան նորա խնդրեցին իւրեանց թագաւոր եւ կատարեցաւ ժամանակ դատաւորաց, եւ սկսաւ թագաւորացն։ Բայց Սաւուղայ ժամանակն Սամուելի է համարեալ (2)։ Սաւուղ թագաւորեալ ամս քառասուն. յերրորդ ամի թագաւորութեանն իւրոյ կոտորեաց զԱմաղէկ։

Եւ 'ի տասներորդ ամի թագաւորութեան նորա ծնաւ Դաւիթ՝ եւ 'ի քսան երեք ամի թագաւորութեան նորա օծաւ Դաւիթ։ Եւ 'ի քսան եւ ութերորդ ամին իւրոյ Դաւիթ սպան զԳողիաթ։ Եւ յերեսուն և մի ամի թագաւորութեան իւրոյ Սաւուղ մարգարէանայր 'ի Նաւաթհռամա, մարգարէութիւն չար տան իւրոյ, թէ Դաւիթ է թագաւորելոց։ Յերեսուն ամի ծննդեան Դաւթի մեռաւ Սամուէլ, և յետ եւթն ամի մահուանն Սամուէլի սպանան Սաւուղ, Յովնաթան, և Դաւիթ արքայացաւ 'ի Քեբրոն եւթն ամ։ Սա առ զԵրուսաղէմ և շինեաց զՍիոն, և թագաւորեաց անդ ամս երեսուն և երիս՝ և 'ի տասն ամի թագաւորութեան իւրոյ եհան զտապանակն 'ի տանէն Աբեդդարայ (1), և 'ի բերելն մեռաւ Ոզիա, զի արգելուլ կամէր զշնորհն Աստուծոյ որ 'ի տապանակին 'ի սիրելոյն իւր յԱդամայ. զի անկաւ 'ի վերայ գերեզմանի նորա, որպէս սիրելիք առնեն խանդաղատեալ գըթովք իւրեանց, որպէս ասաց Սուրբն Յակոբ Ուռհայեցին։ Եւ այլք այլ պատճառ ասեն։ Եւ էր Քահանայապետ Աբիաթար և մարգարէք Դան (2) և Ասափ։ Եւ Նաթան որ խնամէր զԴաւիթ միշտ կալով ընդ նմա. և մինչ էր Նաթան 'ի Գաբաւոն, յայտնեցաւ նմա մեղքն Դաւթի 'ի Բերսաբէ՝ և եկն փրկել զնա. և 'ի գալն պատահեաց նմա մեռեալ մի, և 'ի թաղելն զնա յամեաց և գործեցաւ շնութիւնն. և դարձաւ տրտմութեամբ. և 'ի սպանանելն զՈւրիա, եկն յանդիմանեաց զնա 'ի վերայ երկուց չարեացն. և 'ի զղջմանալն՝ թողութեան յոյս ետ նմա. և նշան ետ զմահ առաջին որդւոյն Բերսաբեայ. և երկեաւ Դաւիթ յԱստուծոյ՝ և ապաշաւեաց զամենայն ժամանակս իւր։

---

(1) Երկու օրի. Ամինադաբայ. ըստ Աստուածաշնչոյ գրոց։

(2) Հնագոյն օրի. ունի այսպէս. Եւ 'ի քառասուն եւ երկու ամի կենացն Սամուէլի եւ 'ի քսան ամի իշխանութեան նորա։

---

(1) Ամինադաբայ.

(2) Երկու օրի. Գադ։

Յաւուրս Դաւթի Քաղկեդոն շինեցաւ 'ի Քաղկեդոնէ Տիւրացւոյ. նոյնպէս և Սամոս շինեցաւ։ Յերեսուն և ինն ամի թագաւորութեանն իւրոյ Դաւիթ ընտրեաց 'ի Ղեւտացւոց անտի հարիւր ութսուն և ութ անձինս, և արար դասս քսան և չորս, երկոտասան այր 'ի դաս մի սաղմոսասաց և սպասաւորս տապանակին։ Եւ յամենայն ժամանակս ետ պատերազմ ընդ այլազգիս մեծաւ յաղթութեամբ։ Կեցեալ ամս եւթանասուն՝ թագաւորեալ ամս քառասուն՝ կատարի։

Եւ թագաւորեաց Սողոմոն որդի նորա ամս քառասուն. երկոտասան ամաց էր 'ի թագաւորելն իւրում, և յառաջին ամին եղև նմա որդի Ռոբովամ 'ի Նամայէ կնոջէ յԱմմոնացւոյն. սա 'ի չորրորդ ամի թագաւորութեան իւրոյ, սկսաւ շինել զտաճարն, և կատարեաց զնա ութ ամ. 'ի չորս հարիւր ութսուն և մի ամի ելիցն Իսրայելի յԵգիպտոսէ։

Եւ Աստուածընկալն Պօղոս ասէ ետ նոցա դատաւորս մինչեւ 'ի Սամուէլ Մարգարէ ամս չորս հարիւր յիսուն ։ Եւ եթէ այսպէս է յիսուն ամ աւելի գայ . բայց սխալն 'ի ծառայութենէ այլայլեալն է անդ տես։

Յերեսուն ամի թագաւորութեան իւրոյ Սողոմոն երկմտեաց 'ի Տեառնէ եւ շինեաց տունս կռոց Խամովսայ Մովաբացւոցն եւ Մեղքոմայ Ամմոնացւոյն . ուր եւ կայր տունն Ափրոդիտեայ Աստուածուհւոյն Յունաց . եւ էր բարձրութիւն տաճարացն երեսուն կանգուն եւ լայնութիւնն յիսուն . եւ շինեցաւ տաճար Ամմոնացւոյն երեքտասան ամ եւ Մովաբացւոյն եւթն ամ, արարող նոցա ոսկւոյ եւ ծախուց ոչ էր չափ ։ Արար եւ ծով պղնձի եւ եդ եզինս 'ի ներքոյ նման տաճարին Տեառն ։ Եւ սա քակեաց զԱնտիոք քաղաք, եւ շինեաց զքաղաքս եւթն՝ ըզԹէտիւր, մերձ Հէմայ . եւ զԱալու, եւ ըզՀէսուր, եւ զԱսիտուր, եւ զԳազարէ, եւ ըզԲեդդուր ներքին եւ վերին, այլ եւ զԲէլէօթ ութերորդ . եւ այսոսիկ 'ի Դամասկոս, թագաւորեաց Հադադ սատան Սողոմոնի (1) ։

Յաւուրս սորա . Աքիաս մարգարէ տեասնէր, զի լուծք երինջոյ կոխէին զԵրուսաղէմ, և զտաճարն, և զքահանայսն. և ասաց Սողոմոնի թէ կանայքդ այլազգիք հեռացուցանեն զքեզ ՚ի տեառնէ. որպէս և եղեւն ։

---

(1) Մի օրին. Հադադսա հա- օրին. Հադադաա տան Սողո- կառակ. տան Սողոմոնի. այլ . մեծին ։

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս թէ Դշխոյ եկն առ Սողոմոն ։

Առ սա եկն Դշխոյն հարաւոյ զոր ասեն յազգէ դստերն Նոյի Յատղկէ սերեալ, որ և իշխան (1) կանայք կողմանցն հարաւոյ ժառանգութիւն առեալ ՚ի նախահայրենէն Նոյէ մինչեւ ցայսօր, և անուն Դշխային Նոյայ կոչի. որ եկն ՚ի համբաւ իմաստութեան նորա և փորձեաց զնա բանիւք ՚ի հարցուածս առակաց զոր կարգեսցուք աստ սակաւ ինչ ։

Ա. Նախ եհարց յաղագս Աստուծոյ ։ Զինչ է Աստուածն քո. և ո՞ւմ նման է և որո՞վ կերպարանի ։

Ասէ Սողոմոն Աստուածն իմ Ա է, և ամենայն էից վեհագոյն, և յոչ ինչ կերպարանի. զի ամենայն ինչ եղեալ, և հակառակ ունի,և իմ Աստուածն անեղ և աններհակ է։

---

(1) Մի օրի. իշխեին.

Բ. Արդէ՞ս շարժի գունդն երկնից. յա՞ջ թէ յահեակ, բոլորիւն շրջի թէ մասամբ։

Երկուս օրինակս ունի անուագայութեան՝ որ շրջաբոլորն երկնից յարեւելից յաջակողմն շարժմամբ ընդ հարաւ յարեւմուտս գնացեալ՝ դառնայ ընդ հիւսիսի 'ի նոյն՝ հրամանաւ հարկի ընդ տիւ և ընդ գիշեր շուրջ մի կատարէ անմոլար գնդիւն աստեղաց։ Իսկ մոլորակքդ կոչեցեալ յամանց շրջագայիւն յարեւմտից ընդ ձախակողմն կոյս յարեւելս. եւ իւրաքանչիւր ըստ բարձրութեան՝ և ըստ ցածութեան՝ ըստ նեղութեան՝ և ըստ արձակութեան՝ զօտեացդ կատարեն զշուրջն իւրեանց յամաց երեսնից մինչեւ յաւուրս երեսուն, 'ի Կռօնեայ որ է Երեւակն մինչեւ 'ի Սահրա, որ է Լուսին։

Գ. Նախ քան զէանալն ամենայնի ո՞ւր էր ամենայարն, և զկնի լուծմանն ո՞ւր դադարէ անշարժակայանն։

Յառաջ քան զէանալն ամենայնի, կայր միշտ Էն 'ի յինքեան, և լինէր (1) էական բնութեամբ և զուարճանայր յանեղական քարխան ։ Ո՛ւ այժմ 'ի նա են , և կան արարեալքս , և յետ լուծմանն մնայ նոյնպէս 'ի յինքեան և 'ի սրբոյն հոգխան և սուրբքն 'ի նա , փառաւորէ և փառաւորի ։

---

(1) Այլք, լի էր էական բնու։

Դ. Զ՞ինչ է զի կին Հնդկաց յետ ուտելոյ նուռն ոչ եւս յղանայ ։

Նուռն ցրտին է և գիճին . և Հնդկաց երկիրն ջերմին է և չորին . և կին Հնդկացի ցրտին է և գիճին . բնութիւն կնոջ և նռան խառնեալ 'ի միմեանս հակառակ բնութեան երկրին՝ ոչ յղանայ ։

Ե. Ո՞յր հնդուկքն ըմպու- անպտուղ է սերմամբ ։

Բնութիւն կնոջ ջերմին է և չորին՝ և յաւելու քուն . և բնութիւն առն նոյնպէս , և յաճախեալ առն 'ի հակառակն՝ լինի անսերմն ։

Զ. Խնամութիւն ընդհանուր է թէ մասնական . և բնութեամբ է թէ ուսմամբ . թէ պարգեւօք ։

Խնամութիւն ընդհանուր է սեռին , և մասնական է տեսակօք , և է բնութեամբ գոյից շնչաւորաց և տնկոց և բուսոց ։ Իսկ մարդկան ազգի է 'ի բնական խառնուածոց (1). և է ուսմամբ յաշխատանաց գոյացեալ 'ի բնութեանց գիւտից. և է պարգեւօք 'ի փառս տուողին Աստուծոյ. և այս ոչ է հասարակաց, այլ ընտրութեամբ արժանեաց ։

---

(1) Երկու օրի. բնական 'ի խառնուածոց ։

Աշակ. Տունկն թագաւորդ, և ոչ 'ի բընութենէ, և փարթեայն նման շառաւիղք յոռոգմանէ բոյս և հիւսեցան պսակք անարժան որդւոց ։

Վարժապ. Լուեալ է քո զի Աստուած փառեալ մարմնեաւ յայտնեցաւ Մովսիսի, և յերեւմանէ անոր հարցուածք և դարձուածք պատասխանւոյ եղեն ։

Աշակ. Մայր ասար և որդիք պղծութեան սպանող և սնուցանող անօրինաց, յայտնեալ գողութիւն և ապրեալ թագաւորք արատովք ։

Վարժապ. Օհարքն իմ և զիս այպանես, Թամար կարծեալ սպանող արանցն մնայր ընհայրն իմ գողացեալ 'ի Յուդայէ ։

Աշակ. Ո՞ր է դարձն և ղալկին՝ որ փոփոխեալ անկօք մնացանէ զթագաւորս ։

Վարժապ. Ի դաշտանէ կանանց թագաւորք և աղքատք մանկին պատուելի սակիս անկայ (1) ։

---

(1) Մի օրի. 'ի դաշտանէ կանանց փոխեալք 'ի սակիս անկոյ թագաւորք և աղքատ մանկին ։ Եւ այլ մի օրի. 'ի դաշտանէ կանանց թագաւորք և աղքատք մանկին պատուեալք 'ի սակիս անկոյ ։

Առակ. Խորտիկայն պահանջողն յաճախեաց զխոհակերսն. յորդորս զանազանութեան համոյ աշխատի և աշխատէ, և մի է ճաշակն ։

Լուծումն. Եթէ ունիս ազնիւ խոհագործ յաւել ՚ի հացարս մեր, սակայն որպէս Թըւի քեզ մի է ճաշակն. բայց օտար է անօրէնն ՚ի սեղանէ մերմէ (1) և զատանէ մեզ ՚ի դատաստան ։

Առակ. Փեսայն աներեւոյթ և հարսանիքըն անփոփոխ. և սենեակն անարատ և կազմեալ հարսինն դիպի ամօթոյ մեծի ։

Լուծումն. Մի՛ նախատեր զժողովուրդս մեր անմահապէս հարսնացեալ Աստուծոյ անճառելի խոստմամբ. և ոչ դիպիմք ամօթոյ պոռնկելով յօտար Աստուածս. և ձեզ է ամաչելն պաշտողացդ զԹռչունն Փիւնիկէ որ է արմաւն ։ Բայց առ և դու ՚ի մէնջ առակ մի այդու ։

Աշտարակ մի զօրաւոր և անօթ վիրաւորութեան. և ՚ի նմա տաճար եռանկիւնի որոյ քարինքն ցնծութիւն, և հիմունք նորա սէր. շինուածք նորա ջուր, սկզբունք արձակմանն գգուանք՝ ձեղունք նորա կաքաւք. սիւնք նորա ուրախութիւն. դուռ նորա օտար, և բնակչաց նորա ոչ գոն անձինք. և հետեւողք նորա ընդ վայր, և մահարձանք նորա ՚ի նմանէ և յինքն. և պատուհանք նորա մեկնակք. և գործիք նորա հակառակ են կազմուածոյն (1), և պահապանք նորա ոչ երևին։

---

(1) Մի օրին. իւրմէ, մի օ. փր. իմմէ ։

Ով ամէ դշխոյն լուեալ էաք զքեղ իմաստուն, այլ ծածկատես ոչ կարծէաք. և արդ գիտեմ (2) զի Աստուածն քո միայն է Աստուած երեւելեաց և աներեւութից։ Գովեաց Դշխոյն և զկազմուած տաճարին. և զսպասաւորս տաճարին, որք ըստ ամսոց պաշտէին առաջի տեառն երկոտասան դասք քսան և չորս հազար ՚ի դաս մի, և վեց հազար դատաւորք. և չորս հազար քնարերգուք և չորս հազար դռնապանք, զոր Դաւիթ հայր նորա կարգեալ էր. և չափ տաճարին վաթսուն կանգուն, և քսան լայն, և հարիւր քսան՝ բարձր. տասն սեղան ոսկի և տասն աշտանակ ոսկի. և երկու սիւն առաջոյ երեսուն և ութն կանգուն յաջմէ և ՚ի ձախմէ, որոց անուանք Բոոզ և Յաքում, որք ասին զօրութիւն և ուղղութիւն։ Ով Սուրբն սրբոց քսան կանգուն լայն, և քսան երկայն՝ ընդ որ շատ զարմացաւ Դշխոյն։

(1) Մի օրի. կազմածոյն։ հաւատամ, եթէ։

(2) Մի օրի. իմացայ եւ

Եւ գնաց 'ի նմանէ բազում օգտութեամբ։

Եւ Սողոմոն զկնի մեղացն զղջացաւ, և յիշեաց զպատուէր հօր իւրոյ, և մտեալ 'ի սենեակ ապաշաւեաց, և մեռաւ յիսուն և երկու ամաց, թագաւորեալ ամս քառասուն։

Եւ էառ զթագաւորութիւնն Ռոբովամ որդի նորա ամս տասն և եւթն. և բաժանեցան տասն ցեղքն և եդին իւրեանց թագաւոր զԵրոբովամ որդի Նաբատայ 'ի ցեղէն Եփրեմի։ Եւ Յուդա և Բենիամին եղեն ընդ Ռոբովամու և անուանեցան Յուդայեանք և տասն ազգն կոչէր Իսրայէլ եւ Եփրեմ։

Յաւուրս յայսոսիկ մարգարէք էին Սադովկ և Աքիաս սիլոնացի և Սամեայ. եւ իմաստասէրք Հոմերոս և Իսադոս (1) որ այլք քան զա յառաջ պատմեն։

Եւ էր քահանայապետ Սադովկ 'ի ցեղէն Եղիազարու և ութերորդ յԱհարոնէ։ Եւ 'ի տասն և եւթներորդ ամին Ռոբովամու ել Սօսակիմ արքայ Եգիպտոսի յԵրուսաղէմ և կողոպտեաց զտաճարն Տեառն և գնաց։

Զկնի Ռոբովամու թագաւորեաց Աբիա որդի նորա ամս երեք։ Եւ յետ նորա որդի

(1) Մի օրի․ Սիոդոս․ մի դոս․ մի օրի․ Հոմերոս աօրի․ Հոմերոս անուն և Սի- նուն ի խոհդոս։

նորա Ասա ամս քառասուն և մի ։ Իսկ Իսրայէլի թագաւորեաց Երոբովամ ամս քսան և երկու. և զկնի նորա Նաբատ որդի նորա ամս երկու, և յետ նորա Բաասա ամս քսան և չորս։

Եւ յաւուրս Ասայի և Բաասայ էր քահանայապետ Աբիմելէք 'ի ցեղէն Իթամարայ ։ Եւ մարգարէք Աքիա, Սամիա և Յովէլ. Ազարիա որ և Ադդովլանուանի, և Յովլ որ յանդիմանեաց զԵրոբովամ, կէսք զՕզբարիա ասեն ։ Եւ Եպիփան՝ Իուդ կոչէ, զոր սպան առիւծն ։

Ի տասն և եւթն ամին իւրոց Ասա այրեաց զպատեալ կուռսն յԵրուսաղէմ, և զմայր իւր եհան 'ի տիկնութենէն զի պաշտէր զԱստարովն ։

Ի քսան և ինն ամի նորա թագաւորեաց Եղայ 'ի վերայ Իսրայէլի ամս երկուս. և Զամբրի ծառայ նորա սպան զնա և թագաւորեաց աւուրս եւթն, և յարեան երկու արք որք Ամրի և Փաւմնի թագաւորել. և աջողեցաւ թագաւորել Ամրայ ամս երկոտասան. սա գնեաց զլեառն Սամիրոն 'ի Սամարիայ, և շինեաց քաղաք, և կոչեաց Սամարիայ յանուն տեառն լերինն, և յետոյ կոչեցաւ Սեբաստիա. և այժմ ասի Սամլուղ ։

Իսկ Փաւմնի այրեաց զարքունիսն 'ի Սամարիաց և ինքն ընդ նմին այրեցաւ․ ՚ի քառասուն և մի ամին Ասայի թագաւորեաց Ագիւտոս Փալքերիս (1)։

Եւ յետ Ասայի թագաւորեաց Յովսափաթ որդի նորա ամս քսան և հինգ։ Իսկ յերկրորդ ամին սորա թագաւորեաց Իսրայէլի Աքաաբ որդի Ամրեայ ամս քսան երեք․ սա առ կին զԵզաբէլ դուստր Եքթիլի թագաւորին Սրոյ և Սադոյի (2) և շինեաց զԵրիքով զնզովեալն ՚ի Յեսուայ․ և Աբիրոն անդրանիկ նորա մեռաւ ՚ի սկիզբն շինուածոյն։ Եւ Ճաւ կրոսներն ՚ի դնել դրամն․ և այլք զԱզամն Բեթելացի առին շինիչ Երիքովի, և այս որդւոցս հայր և զՃաւէ Օեծել կոչէին։

Յերկրորդ ամի Յովսափաթու թագաւորէ Լատինացւոցն Կարպանդոս ամս տասն և երեք․ և չորս ամին թագաւորէ Աթենացւոցն Ամիպոս․ Եւ ՚ի նոյն ամի թագաւորէ Աթուրայւոց Սուրբանուքոս ամս յիսուն։ Եւ յերեքտասան ամի նորա թագաւորէ Եգիպտացւոցն Իսաքարոս ամս վեց, և ՚ի քսաներեք (3) ամի նորա թագաւորէ Լատինացւոցն Ագրիպաս ամս քառասուն և մի․ և ՚ի քսան և հինգերորդ ամին սորա թագաւորէ

---

(1) Ոմն փալքերոս․ այլ ո․ մին փալքիրոս։

(2) Որ և Ծայդան,

(3) Զորս որի․ քսան և հինգ։

Իսրայելի Աքոզիա ամ մի։ Եւ յետ նորա Յովրամ եղբայր իւր ամս երկոտասան։ Եւ 'ի նոյն ամի Թագաւորէ 'ի վերայ Յուդայ Յովրամ ամս ութ։ Եւ զկնի նորա Աքոզիա ամ մի։ Եւ յետ նորա Աքոզիայի մայրն ամս եւթն։ Եւ յեւթներրորդ ամին Ովրամայ վերացաւ Եղիա։

Եւ Գոդողիայ կին Յովրամայ քոյր էր Աքաաբու, և Տէր սպան զՈվրամ զի սպան զեղբարս իւր․ և յաւել 'ի չարն, և առ ըզԳոդողիայ կինն կառավարիչս։ Ոմանք դուստըր ասեն զնա Եզաբելի։ Եւ առաքեաց Եղիսէէ և օծ զՅէու արքայ 'ի վերայ Իսրայելի որդի Ամղեայ որ սպան զՈվրամ որդի Աքաաբու, և զԱքոզիայ որդի Յովրամայ․ և սպան զԱքաաբու զեւթանասուն երկու որդիսն, և զկնի տասն և եւթն ամի սպան զԱքաաբու զկինն զԵզաբէլ։

Իսկ Յովիդայ քահանայ սպան զԳոդողիա․ և Թագաւորեցոյց զՅովաս վեցամեայ 'ի վերայ Յուդայ ամս քառասուն։ Եւ Յովիդիա եկեաց միայն յետ Մովսիսի ամս հարիւր երեսուն․ և մարգարէանայ Ազարիա որդի իւր։ Յէու Թագաւորեաց ամս քսան և ութ յետ նորա Յովաքազ ամս տասն եւ եւթն։

Յերեսուն ամին Յովաս սպան զԱզարիա մարգարէ, և յերեսուն և եւթներորդ ամի նորա վախճանեցաւ Եղիսէ մարգարէ։

Եւ յայնմ ժամանակի Թագաւորեաց Աթուրացւոցն Ակրատղանիս ամս քառասուն և երկու։ Եւ Եգիպտացւոցն Թագաւորեաց Եւքինոս. և Լատինացւոցն Թագաւորեաց Հռոմելոս, որ և ամբարտաւանեալ այրեցաւ 'ի բարկութենէն Տեառն արքունեովքն։

Յերեսուն և մի ամին Յովասայ եղև դատաւոր Աթենացւոցն Բարակլէս ամս տասն եւ ինն. և 'ի քառասներորդ ամին սպանաւ Յովաս 'ի ծառայից իւրոց, զի 'ի բաց 'ի տեառնէ եկաց յետ մահուանն Յովիդայ. և սպան զորդի նորա զքահանայ եւ զմարգարէ։

Եւ Թագաւորէ 'ի վերայ Յուդայ Ամասիա որդի Յովասայ ամս տասն և ինն։ Սա Աստուծով յաղթեաց Եդովմայեցւոցն, և բերեալ զԱստուածս նոցա պաշտէր։ Եւ 'ի սորա տասներորդ ամին Թագաւորեաց Իսրայէլի Յովաս ամս տասն և վեց. և 'ի վերայ Լատինացւոցն Անտոնինոս (1) ամս քառասուն և հինգ։ Եւ Եգիպտացւոցն Եսթրոս ամս տասն և վեց։ Եւ աստ եղեւ դատա-

(1) Չորս օրի. Նաւինոս։

ւոր Աթենացւոց Արխոն ամս քսան ։

Ի սմին և իններորդ ամին Ամասիայ թագաւորէ Աթուրայցւոյն Թոնոսկոն Կողերոս, որ ասի յունարէն Սարդանի՝ ամս քսան ։ Յորոյ ՚ի ժամանակս քարոզեաց Յովնան մարգարէ, և զղջացաւ և դարձաւ յերկիւղ տեառըն. որ և զկնի ապրելոյն Աթուրայ որ է Նինուէ, պատերազմեցաւ ընդ Արբակէս Մադացին որ է Մար ։ Եւ տեսեալ թէ յաղթի ՚ի Մարէն, այրեաց զանձն հրով և բարձաւ թագաւորութիւնն յԱթուրայ, տեւեալ ամս հազար հարիւր իննսուն և վեց ։ Եւ ՚ի խափանուածէ թագաւորութեանն Քաղդէացւոց որ է Բաբելացւոյն յառաջին ամէն Բելոսի հօրն Նինոսի լինին ամք հազար երեք հարիւր ։ Եւ Արբակէս Մար Արբակէս օգնութեամբն հայոց եբարձ զթագաւորութիւնն Աթուրացւոց. և փոխեցաւ ՚ի Մարս, և զկնի մահուանն Արբակայ Արբակոյ թագաւորէ ՚ի Նինուէ որ զառաջին Աթուր կոչէր. և ՚ի Նինոսէ Նինուէ կոչեցաւ. Փուլ անուն Որ ամբարձ զգուխ իւր՝ և կոչեցաւ թագաւոր յորոյ Շաղմանասար և Թակղաթբասար(1) և Սենեքերիմ թագաւորք գերիչք Իսրայելի ։

---

(1) Ոմանք Սաղմանասար և և. Թակլաթբաղասար ։

Յիշեն զայսմանէ Աստուածային գիրք , որք տիրեցին Միջագետաց և Կապադովկիոյ և Կիւլիկոյ և Փիլիպեցւոց . և 'ի սոցանէ են Նաքոնոս և Նաքուբոլոս և Նաբուպալասար և Նաբուգոդոնոսոր . և թուին ամք սոցա 'ի Փուլայէ մինչեւ յԱղեքսանդր Մակեդոնացին չորս հարիւր քառասուն և չորս ։ Իսկ զկնի մահուանն Աղեքսանդրի , Սելեւկոս , Անտիոքոս, Կիլիքոս, որ զԿիւլիկիա շինեաց, Սուրոս՝ որ զՍուրիա շինեաց , յորմէ Ասորիք կոչեցան Քաղդէացիքն ։

Ի տասն և ութերորդ ամին Ամասիայ թագաւորէ Ռոբովամ 'ի վերայ Իսրայելի ամս քառասուն . և յԵգիպտոս Տուլութիս ամս երեքտասան ։ Ոմանք ասեն թէ Յովաս արքայ Իսրայելի սպան զԱմասիա արքայ Յուդայ , զի չոքաւ պատերազմել ընդ նմա . և յետ մահուանն Ամասիայ եկին Իսրայելացիքն և քակեցին 'ի պարսպէն Երուսաղեմի չորս հարիւր գիրկս , և առին զոսկին և զարծաթն որ կայր 'ի տաճարին տեառն և 'ի տան արքունեայն , և դարձան 'ի Սամարիա ։

Եւ Ամասիա թաղեցաւ յԵրուսաղէմ, և թագաւորեաց Ազարիա որդի նորա ամս յիսուն և երկու ։

Եւ առաջին ամին Ազարիայ որ և Ոզիա եկաց դատաւոր Աթենայ Թասպիոս ամս քսան և եւթն ։ Եւ յԵգիպտոս թագաւորեաց Իսիա։ Եւ ՚ի տասներրորդ ամին Ոզիայ թագաւորեաց Լատինացւոյն Փրիկաս ։ Եւ ՚ի քսան և ութերրորդ ամին Ոզիայ եկաց դատաւոր Աթենայ Աքմիսդէոր . և ՚ի քսան և ինն ամին Ոզիայ թագաւորեաց Իսրայելի Զաքարիա ամս վեց ։ Եւ զկնի նորա Սեղղում ամիս մի, և յետ նորա Մանայէմ ամս տասն ։

Եւ ՚ի քսան և չորս ամի թագաւորութեան իւրոյ Ոզիայ արկ խունկ ՚ի տաճարին տեառն և բորոտեալ եղեւ . և արգել ՚ի մարգարէանալոյ տէր զԵսայի վասն մեղացն Ոզիայ . և ժամանակ լռութեան նորա ամք քսան և ութն , մինչեւ մեռաւ Ոզիայ , եւ վերստին մարգարէացաւ վաթսուն և մի ամ։ Եւ նախ քան զլռութիւն նորա , քսան եւ չորս ամ էր մարգարէութեան նորա բովանդակ ութսուն և եւթն ամ . յերեսներրորդ երրորդ ամի թագաւորութեանն Ոզիայ թագաւորեաց յԵգիպտոսի Իասմոս ամս տասն. և յերեսներրորդ չորրորդ ամին Ոզիայ ել Փուլ արքայ Բաղդէացւոց ՚ի Սամարիա . և առ ՚ի Մանայեմայ հազար քանքար ոսկւոյ, և դարձաւ ։

Եւ ՚ի քառասներրորդ ամին Ոզիայ թագաւորեալ Իսրայելի Փակէէ ամս տասն ։ Ի քառասներրորդ առաջներրորդ ամին Ոզիայ թագաւորէ Մակեդոնացւոյն Կաւոս երկրորդ թագաւոր ամս երկոտասան. և 'ի վերայ Նինուէի թագաւորէ Թակղաթփաղասար ամս երեսուն և եւթն ։ Ի քառասուն և վեցերրորդ ամին Ոզիայ թագաւորէ Եգիպտոս Կուքըր ամս քառասուն և չորս. և 'ի քառասուն և ութերրորդ ամին Ոզիայ ել Թակղաթփաղասար 'ի վերայ Իսրայելի, և գերեաց զմեծ մասն տասն ցեղիցն՝ և իշխանք մեծամեծք գերեցան որոց անուանք այսոքիկ էին Նեբէլ. Բոթմայք, Ենոք, Կանծ, Եսուր, Պեղաթ, Պաւթի, և զբոլոր վիճակըն Նեփթաղիմայ ։

Եւ յորժամ մեռաւ Ոզիա երեւեցան փառքն տեառն 'ի Տաճարին, որ մեկնեցաւ 'ի խնկարկութեան նորա և թագաւորեաց Յովաթամ որդի Ոզիայ ամս վեշտասան. սա արար ուղղութիւն առաջի Տեառն, և հնազանդեաց զԱմոնացիս ։

Յերրորդ ամին Յովաթամայ թագաւորէ Մակեդոնացւոյն Տունիմոս ամս երեսուն և ութ՝ սոքա են ազգայինք հայոց Պորփիքըրոս (1) Պուեսէս ։

---

(1) Հինգ օրի. Պորփիւրոս ։

Զայսու ժամանակաւ էին և մարգարէք Եսայի, Ամովս, Ովսէէ, Յովնան: Եւ Բոքր արքայ Եգիպտոսի օրէնս դնէր, առ որով ասի թէ գառն խօսեցաւ. եւ աստ սկսաւ Լիւդացւոց թագաւորութիւնն:

Զկնի Յովաթամու թագաւորէ Աքազ որդի նորա ամս վեշտասան. սա արար չարիս առաջի տեառն. և Փակէէ արքայ Իսրայելի առեալ ընդ իւր զՌասոն արքայ Դամասկեայ, և գնացեալ յԵրուսաղէմ կոտորեաց արս երկոտասան բիւր: Եւ առաքեաց Աքազ վարձեաց զԹակղա, և եկն ՚ի Դամասկոս և սպան զՌասոն և գերեաց զԵդովմայեցիս և գնաց:

Եւ յերկրորդ ամին Աքազու ապստամբ լեալ Ովսէ սպան զՓակէէ, և թագաւորեաց Իսրայելի ամս ինն. և յութերորդ ամին Աքազու թագաւորեաց ՚ի Նինուէ Սաղմանասար ամս չորեքտասան. և եկն ՚ի վերայ Իսրայելի, և արար ընդ հարկաւ և առեալ գերի, գնաց:

Եւ առաքեաց Յովսիա առ Աբիմելէք քուշացին գալ օգնել նմա, և լուեալ Սաղմանասար եկն ՚ի վերայ Սամարիայ յեւթներորդ ամի թագաւորութեանն Յովսեայ և յութերորդ ամին Աքազու. և պաշարեաց ամս երիս. և առ զնա և գերեաց զտասն ցեղայն, և տարաւ 'ի Բաբելոն. և բարձաւ թագաւորութիւնն Իսրայելի որ տեւեաց ամս երկու հարիւր և յիսուն. և լինի յԱդամայ չորս հազար երեք հարիւր երեսուն ամ։

Յայսմ ժամանակի դատաւորէ Աթենացւոյն Եսքողոս, առ որով եղաւ ագոնն, որ է մրցութիւն, Ողոմպիադն կոչեցեալ. որով Հելլենացիքն վարեն զժամանակս իւրեանց. և հնարեցաւ զայս Իփիտոս. որպէս թէ 'ի հրամանէ Հերակլեայ առ 'ի խաղաղել խիստ զպատերազմ. կացէք առէ մինչեւ 'ի տարին ուրախութեան և ապա ցուցցէ իւրաքանչիւր որ զոյժ իւր և զարուեստս և պսակեսցի։ Բայց Եւսեբի առ Յովաթամու արքայիւ ասէ Ափրիկանոսի բանիւ։ Բայց առնեն զագոնն 'ի հինգ ամին յորժամ չորքն լնու, և 'ի հնգէն սկսանի և առնէ նահանջ։

Իսկ զգերին Իսրայելի բնակեցոյց Սաղմանասար 'ի լերինն Մարաց, և առաքեաց Ասորիս 'ի Սամարիայ տեղապահս որպէս և անուն է։ Եւ մարգարէք էին Եսայի և Յովսէլ։ Իսկ Արիստոտէլ 'ի Մակեդոնիայ պարէտ երեւէր։

Իսկ զկնի մահուանն Աքազու թագաւորեաց Եզեկիա որդի Նորա ամս քսան և ինն. և թագաւորեաց Լատինացւոյն Հռոմուլոս, և շինեաց զՀռովմ յանուն իւր. կամ ըստ ոմանց յանուն դստերն որում անունն էր Ռոմէ, և մինչեւ ցայս Լատինացիք կոչէին թագաւորք եւթն և տասն. և են արդ Հռովմայեցիք:

Յայսմ ժամանակի շինեցաւ Ռոդոս կղզի որոյ պտուղք ծառոյն մաղտաք (1) էին, և շինեցաւ Սաղինոս քաղաք 'ի Սիկիլեայ. և Բիւթանիայ, Կիզիկոն. և 'ի Պոնդոս Տրափոն քաղաք և յԻտալիայ: Կալաւ Նոյն և Լիւկիայ: Եւ աստ սկսաւ թագաւորութիւն 'ի Լակեդեմոն ամս երեք հարիւր քառասուն յերկարեալ. որոյ առաջինն Եւրիսս անուն. և աստ շինեցան 'ի Հռոմ տաճարք քսան և չորս. փողոցք երեք հարիւր քսան և չորս. կուռք ոսկեղէնք ութսուն, փղոսկրեայ պատկերք վաթսուն և չորս. դարպասք քառասուն և վեց հազար. իշխանաց նիստք հազար եւթն հարիւր ինսուն և հինգ. փողերակք ջրոյ՝ հազար երեք հարիւր յիսուն երկու. խապաղք՝ երկու հազար եւթանասուն և չորս. տղոմունք պղնձիք՝ երեք հազար եւթն հարիւր ութսուն և եւթն. Երուպագոյք՝ երկու. և արտաքոյ քաղաքին դայր շուրջն քառասուն մի, և ՚ի մէջ քաղաքին ՚ի չորից կողմանց երկոտասան երկոտասան. և է միջն երկոտասան ոտն որ է հինգ դարձս եղանց արօրաձգւոյ. և Թիւ տանց՝ երկոտասան բիւր. և երկրորդ անգամ Թուեալ զտասն բիւրն, և երրորդ անգամ Թուեալ զքսան եւթն բիւր. և չորրորդ անգամ Թուեալ զչորս հարիւր տասն և վեց բիւրն: Եւ ՚ի Թագաւորութեանն Կղոդեայ վեց հարիւր լինեաւն և չորս բիւր:

---

(1) Թերեւս մաստաղք:

Իսկ զՍամարացիսն ուտէին առիւծք. և առաքեաց նոցա Սաղմանասար քահանայ մի Եղր անուն որ եկեալ ուսոյց նոցա զօրէնսն, զհինգ գիրսն Մովսիսի. և զայն միայն ընդունէին Սամարացիք յօրինաց և ՚ի մարգարէից:

Իսկ Եզեկիա երկիւղիւ Տեառն զարդարեալ արար ուղղութիւն յաչս տեառն և սրբեաց զԵրուսաղէմ ՚ի կռոց. զի Թէպէտ հայր նորա չարաւ գնայր, այլ մայր նորա բարի էր դուստր Զաքարիայ Եբիւդ անուն աստուածպաշտութեամբ սնոյց զնա: Զի Եբիւդ խորտակեաց զօձն պղնձի, զոր պաշտէին Հրեայքն. քանզի ՚ի վեցերրորդ ամի Թագաւորութեանն Եզեկիայ, Թագաւորէ Աթուրացւոյն Սենեքերիմ՝ և ել 'ի վերայ Երուսաղեմի՝ և լուաւ եթէ Բարքաթա արքայ Եթովպիոյ գայ 'ի վերայ նորա՝ դարձաւ 'ի Նինուէ. և առաքեաց զզօրս իւր յԵրուսաղէմ, և սատակեցան տասն և ութ բիւրք. և հինգ հազար 'ի հրեշտակէ Աստուծոյ. զի աղաչեաց Եզեկիա զԱստուած արդարութեամբ իւրով։

Զայսու ժամանակաւ 'ի Սիկիլիա Պենենետոն շինեցաւ։

Իսկ Սենեքերիմ յիններորդ ամի թագաւորութեանն զբազումս կոտորեալ 'ի դերբելոյն. և անթաղ ընկեցեալ լինէին շանց զի զօրք նորա ապականեալ յԵրուսաղէմ, և որդիք նորա Սանասար և Աբելա սպանին զնա 'ի տան կռոցն և փախեան 'ի Հայս։

Եւ Ասորդան միւս որդին թագաւորեաց ամս երիս. և յետ նորա Աբեղդան եղբայր նորա ամս եւթն։ Սա առաքեաց պատարագ Եզեկիայի յութուտասներորդ ամի թագաւորութեան նորա յաղագս դարձի արեգականն 'ի նշան առողջութեան նորա։ Եւ այս Բեղդան քարոզութիւնս եւ առնել փառն զօրաւոր անուան տեառն Աստուծոյ ընդ ամենայն Ասորիս և Բաբելացիս. և կանգնեաց պատկեր Ճշմարտին Աստուծոյ և անքան. և զոհեաց նմա, և երկրպագեաց նմա. և հրամայեաց իւրոյն զնոյն առնել. և հրամայեաց մի պաշտել զարեգակն զծառայս հարկի, այլ զշարժողն նորա. և եհան զյոլովս ՚ի բանտէ Հրէիցն, և ուտէին ընդ նմա ոսկեղինօք, և զգեցոյց նոցա պատմուճանս ազնիւ. ՚ի քսաներորդ ամին Եզեկիայ՝ թագաւորեաց Եգիպտոսի Տարաքոս Հնդկացի ամս քսան. և Մադացւոցն Կարտակոս ամս երեքտասան ։

Յետ Եզեկիայ թագաւորեաց Մանասէ որդի նորա ամս յիսուն և հինգ ։ Սա ոչ գնաց ՚ի ճանապարհս հօր իւրոյ, այլ յերրորդ ամի թագաւորութեան իւրոյ սպան զԵսայի մարգարէն սղոցիւք. և բազում արիւն եհեղ արդար ՚ի մէջ Երուսաղեմի, և թողու ՚ի ձեռանէ Աստուծոյ. և եղեւ ՚ի գնալն իւրում ապստամբեալ Ասորիս մատնեաց զնա Տէր ՚ի ձեռս զօրացն. և կալան զնա և տարան Աթուրիս, և արկին զնա ցուագին կապանօք ՚ի հօր խորագոյն. և անդ եհար զնա սիրտ իւր ապաշաւանօք. և ետ իրաւունս Տեառն, և ապաշխարեաց արտասուօք և անդ ասաց զպատուական աղօթքն ապաշխարողաց. և ընկալաւ Աստուած զզղջումն նորա, և արձակեցին ձրի, և եկն Երուսաղէմ՝ յերեսներորդ հինգերորդ ամին արքայութեան իւրոյ ։

Իսկ Եսայի մարգարէն եղաւ ՚ի Սելովմ. զնովաւ գնացեալ ժողովրդեան ՚ի պաշարման Ասորոյն, ելանէր ջուրն և ՚ի գալն այլազգեացն արգելոյր յաւուրս Աքազու եւ յաւուրս Եզեկիայ. և ՚ի պատճառս գերեզմանին Եսայեայ առաքեաց Աստուած շնորհքս բժշկութեան ջրոյն Սելովմայ որ ասի Առաքեալ ։

Յերեսներորդ երրորդ ամին Մանասէի թագաւորեաց յԵգիպտոս Թեփանեթոս ամս քսան և վեց. և յերեսներորդ վեցերորդ ամին Մանասէի թագաւորեաց Ասորոց փոքր Սենեքերիմ ամս երեսուն և ութն ։

Ի քառասներորդ ամին Մանասէի թագաւորեաց Հռովմայեցւոյն Տուլլոս ամս երեսուն և երեք ։ Սա եգիտ զհանդերձն ծիրանի արքունի և զմականն ոսկի. այլք Տուլլոս ասէն ամս ։

Յաւուրս Մանասէի Նումա Պոմպիլոս երկու ամիս յաւել ՚ի տարին Հռովմայեցւոյ. զի յառաջ քան զնա տասն էր ամիս, և յաւել նա զՅունուար և զՓետրուար. եւ Նիկոմիդիայ շինեցաւ, որ նախ Աստակոն կոչէր. և Եկբատան շինեցաւ ՚ի Դիոկեսարէ.

և սա խմացաւ Գողիոս զերկաթոյ զօղն:

Եւ թագաւորն Փռիւգացւոց ցլու արիւն արբ, և մեռաւ. և Կաղքեդոն քաղաք շինեցաւ: Ի քառասներորդ (1) ամին Մանասէի թագաւորեաց յԵգիպտոս Փսամետիքոս (2) ամս քառասուն և հինգ: Եւ Աթենացւոյն թագաւորք և դատաւորք դադարեցին: Եւ Բիւզանդիոն շինեցաւ 'ի Բիւզաս իշխանէ, որ զկնի ինն հարիւր եւթանասուն ամի ընդարձակեցաւ 'ի Կոստանդիանոսէ:

Յետ Մանասէի թագաւորեաց Ամոն որդի նորա 'ի վերայ Յուդայ ամս երկոտասան. և յերրորդ ամին սորա թագաւորեաց Մադացւոյն Բրաւկտոս ամս քսան և չորս. եւ յերկոտասան ամին Ամոնի թագաւորեաց Աթուրացւոյն Նաբուպալասար ամս երեսուն և երեք. և էր սա Մոգ քաղդ. և 'ի սոյն ամի թագաւորեաց Մակեդոնացւոյն Փիլիպպոս ամս երեսուն և ութ:

Յերրորդ ամի թագաւորութեանն Ամանի ծնաւ Ովսիա, և Ամոն պաշտէր կուռս և սպանաւ 'ի ծառայից իւրոց. և ամենայն ժամանակ նորա քառասուն և երկու (3) ամ:

---

(1) Երկու օրի. 'ի քառասուն և չորս:

(2) Երկու օրի. Փսմետիկոս. մի օրի. Խփիսմիաքիկոս

(3) Երկու օրի. քսան և չորս:

Եւ թագաւորեաց Յովսիա որդի Ամոնի յԵրուսաղէմ ամս երեսուն և մի. և արար ուղղութիւն առաջի Տեառն, և եղեն նորա որդիք չորք՝ Յովհաննէս, Յովակիմ, Յովաքազ, Մատթանի. և մարգարէացաւ Սոփոնիա յազգէ Շմաւոնին:

Ի տասներորդ ամին Յովսիայ թագաւորեաց ի Հռոմ, Մարկոս Անկիանոս ամս քսան և չորս: Յերեքտասան ամին սորա մարգարէացաւ Երեմիա. ի վեշտասաներորդ ամին մարգարէացաւ Ողդի կին քահանայի, և գտաւ օրէնքն կորուսեալ առ Քեղկեաւ քահանայիւ որ է հայրն Երեմիայի:

Եւ ելաց Յովսիա առաջի տեառն և հատաւ վճիռ եւթանասուն ամի գերութեանն Իսրայելի: Յերեսներորդ առաջներորդ ամին Ովսիայ թագաւորեաց յԵգիպտոս Նեփոս ՝Նեքաւով (1) ամս վեց: Սա ել ի վերայ Աթուրայ և Ասորոց. և գնաց ընդ առաջ նորա Ովսիայ և սպանաւ ի նմանէ. իսկ Նեփոս գնաց և առ զերկիրն Աթուրայ գերի. և դարձաւ յետ երեք ամսոյ, և եկն յԵրուսաղէմ. և տարաւ զՈքազիա յԵգիպտոս զոր թագաւորեցուցեալ էին յԵրուսաղէմ. և կացոյց նորա թագաւոր զՅովակիմ եղբայր

---

(1) Երկու օրի․ Նեփոս Նեքաւով:

Աքուղէայ. և եդ հարկս յԵրուսաղէմ տասն քանքար ոսկւոյ. և հարիւր՝ արծաթոյ, և գնաց։

Եւ յերրորդ ամին Յովակիմայ՝ Թագաւորէ և Աթուրայեցւոյն Նաբուգոդոնոսոր որդի Նաբուպաղասարայ Քաղդէացւոյ ամս քառասուն և չորս։ Եւ յառաջին ամին իւրոյ եկն յԵրուսաղէմ, և առ զանօթս տանն Տեառն, և յաղթէ թագաւորացն զԴանիէլ, և զընկերս իւր, և տարաւ գերի ՚ի Բաբելոն, և շինեաց զԲաբելոն և անդ փոխեաց զաթոռ թագաւորութեան իւրոյ յԱթուրայ։ Եւ եկ դարձեալ Նեքաւով ՚ի կողմանս Եփրատայ և աւերեաց զՄնբէճ և. եկն ընդ առաջ նորա Նաբուգոդոնոսոր, որ և սպան զնա. և վերստին շինեաց զՄնբէճ և անդ փոխեաց զկայեան կուռքն, և կոչեաց զնա Մաբուգոլս որ է քաղաք քահանայից. զի յանձնեաց անդ դքուրմն։

Եւ յութերորդ ամին Յովակիմայ եկն Նաբուգոդոնոսոր յԵրուսաղէմ յեւթներորդ ամի թագաւորութեանն և առ զհարկն և դարձաւ։ Եւ ՚ի մետասաներորդ ամին թագաւորութեանն (իւրոյ) մեռաւ Յովակիմ։ Եւ թագաւորեաց որդի նորա Ավաքին (1)։

---

(1) Յեքոնիա։

Եւ լուեալ Նաբուգոդոնոսոր եկն յԵրուսաղէմ յութերորդ ամին իւրոյ թագաւորութեանն, և առ զՅեքոնիա և զմայր նորա. և զիշխանսն որ թագաւորեցուցին զՅեքոնիա, և տարաւ գերի ՚ի Բաբելոն. և եդ ՚ի կապանս ամս երեսուն և եւթն. և Յերուսաղէմ եդ թագաւոր զՄատթանիա զոր Սեդեկիա անուանեաց. և մեծացաւ Նաբուգոդոնոսոր, և աջողէր նմա. զի առաջին զաւրն Յերուսաղէմ, հայրն իւր առաքեալ զնա, և յորժամ դարձաւ յաղթութեամբ մեռեալ էր. և եղև ինքնակալ:

Ի չորրորդ ամին Սեդեկիայ թագաւորեաց Մարացւոցն Կիաքսար ամս երեսուն և ութ. և ՚ի մետասաներորդ ամին Սեդեկիայ թագաւորեաց յԵգիպտոս Ափրոս ամս քսան և հինգ: Եւ ՚ի նոյն ամին ապստամբեաց Սեդեկիա, և գերեցաւ ինքն և ամենայն Հրեայքն բայց ՚ի սակաւուց աղքատացն որ գործէին զգործն արքունի, և այրեցաւ Երուսաղէմ և տաճարն. բայց զերիս ամս պաշարումն կրեաց և սով մեծ: Եւ նախքան զգալ Քաղդէացւոցն Երեմիա մարգարէ տարաւ զտապանակն տեառն ծածկեաց ՚ի Սեդեկիայ, և պահեաց ՚ի մէջ Քորեբայ և Սինայի. և այրեցաւ տաճարն ՚ի Նաբուզօրգայ Պահճապետուէն յիններորդ ամի թագաւորութեանն Նաբուգոդոնոսորայ ։ Եւ Սեդեկիա խաւարեալ աչօք մեռաւ ՚ի գնալն ՚ի Բաբելոնի ։ Ոմանք ասեն թէ ՚ի տասն և իններորդ ամին իւրոյ եկն Նաբուգոդոնոսոր յԵրուսաղէմ . և նա առ զնա . և եթէ զՍեդեկիա նա սպան զի արգել ըզհարկն ։

Այլ զկնի աւերմանն Երուսաղեմի գնաց Նաբուգոդոնոսոր ՚ի վերայ Տիւրոսի, որ է Սուր . և Սուրացիք յետ բազում ընդդիմութեան . յաղթահարեալ լինէին ՚ի Քաղդէացւոցն . վասն որոյ զպատուական ստացուածս իւրեանց ՚ի ծովն ընկեցեալ . և զոր կարացին առնուլ ընդ ինքեանս եկեալ ՚ի նաւ բազումք փախեան ՚ի Կարքեդոն . և Նաբուգոդոնոսոր առ զՍուր և քակեաց զնա, և ըզքարինսն ծովամոյն արար ։ Եւ ըմբռնեալ զԱփրեամ արքայն նորա սպան . որ կեցեալ էր հինգ հարիւր ամ զամենայն ժամանակ թագաւորութեան Յուդայ ։ Եւ յետ այսորիկ մատնեաց Տէր զԵգիպտոս ՚ի ձեռն Նաբուգոդոնոսորայ փոխանակ աշխատութեանն նորա և զօրաց նորա ՚ի Սուր ։ Եւ ՚ի քսան և հինգերորդ ամի աւերմանն Երուսաղեմի մեռաւ Նաբուգոդոնոսոր . և առ զթագաւորութիւնն Բաղտասար ամս երիս։ Եւ յետ նորա Եւղմարուդակ եղբայր նորա ամս երիս։ Ոմանք զայս ասեն, բայց զկնի Նաբուգոդոնոսորայ Եւլմարուդակէս թագաւորեաց. և եհան զՅեքոնիա ՚ի բանտէն զկնի երեսուն և հինգ ամի գերութեան իւրոյ. և ապա Բաղտասար եղբայր իւր։ Եւ յառաջին ամին Բաղտասարայ ետես Դանիէլ զտեսիլն չորից կենդանեացն. և Դարեհ Մար եսպան զԲաղտասար. և էառ զթագաւորութիւնն Քաղդէացւոց. և կացոյց զԴանիէլ վեհագոյն ամենայն իշխանաց իւրոց. և վասն նախանձու արկաւ ՚ի գուբ առիւծուց և ապրեցաւ ՚ի Տեառնէ Աստուծոյ. և զկնի երից ամաց եկն Կիւրոս Պարսիկ ՚ի վերայ Բաբելոնի, և սպան զԴարեհ, և եբարձ զթագաւորութիւնն Մադայեցւոց և Աթուրացւոց, և դրաւեաց ՚ի Պարսս. և խոստացեալս չարչարէր զՀրէայսն յառաջնում ամի թագաւորութեան իւրոյ։ Եւ լուաւ զԴանիանոյն և կոչեաց զնոսա, և ստիպէր զոհել և նոքա անարգեցին զնա, և հրաման ետ [illegible] զնոսա։ Եւ յետ սպանման յարեցան կցեցան գլուխք նոցա ՚ի մարմինս իւրեանց, և եղեն սքանչելիք մեծամեծք. և տէր չարչարեաց զԿիւրոս, և զղջացաւ յետ չարչարելոյն զԴանիէլ և կրկին արկանելոյն զնա 'ի գուբ և ապրելոյն ։ Եւ յերկրորդի ամի թագաւորութեան իւրոյ Կիւրոս արձակեաց զգերիսն , և արար զԴանիէլ հաւատարիմ իւր և եդ` զաթոռ թագաւորութեան իւրոյ 'ի Բաբելոն ։ Իսկ Դանիէլ նախանձու Աստուծոյ վառեալ կործանեաց զկուռն զոր կանգնեալ էր Բելայ անուն Մխոռի , և սպան զվիշապն զոր պաշտէր Կիւրոս ։ Եւ զչարեալ յոյժ Քաղդէացւոյն զայրացուցին զԿիւրոս . և յոլովք 'ի պատմողաց ասա ասեն զարկանելն Դանիէլի 'ի մէջ եւթն առիւծուց 'ի գուբ . և Ամբակումայ բերեալ ճաշ կերակուր ։

Եւ եղեալ անուն կենդանւոյն մեծացաւ անուն Աստուծոյ , և Ամբակում 'ի նոյն ամին մեռաւ ։ Իսկ Դանիէլ պահեաց զքսան և զմի օր , և խնդրեաց զլրումն եւթանասուն ամի վճռելոյն ասացան 'ի ձեռն Երեմիայ մարգարէի . և ետես զտեսիլ եւթներրորդացն , և զայրն որ զգեցեալն էր սպիտակ և կայր 'ի վերայ Տիգրիս գետոյ , որ ասէր ցնա . քսան և մի օր է որ կռուիմ ընդ իշխանին Պարսից դարձուցանել զգերիս ազգի քո . որ և դարձան զառաջինն հինգ բիւր , և սկսան շինել զտաճարն ։

Եւ 'ի վաթսներորդի ամի գերութեանն Հրէից սպանաւ Կիւրոս 'ի Մասագետայ կնոջէ Թամրէ, և առ զԹագաւորութիւնն Կամբիւս որդի նորա ամս ութ. զսմանէ ասեն Եբրայեցիքն Թէ Նաբուգոդոնոսոր կոչէր՝ որ սպան զԱրփաքսադ Մար. և առ սմաւ եղեն Իրքն Յուդիթ կնոջ որ սպան զՀողեփեռնէս 'ի յազգէն Աւովկայ՝ որ են Թուրք:

Զկնի Կամբիւսայ Թագաւորեցին Մոգք երկու, երկու եղբարք ամիս եւթն. եւ յետ նոցա Թագաւորեաց Դարեհ մադացի Վշտասպեայ որդի ամս երեսուն և երկու. յերկրորդ ամի սորա կատարեցաւ երկրորդ եւթանասուն գերութեանն սկսեալ յայրմանէ տաճարին: Եւ առաջին եւթանասունն յերեքտասան ամին Յովսիայ, և 'ի վճարելն Երեմիայի 'ի Կիւրոս Պարսիկ, և ժողովելն ամք ի Սողոմոնէ և 'ի շինուածոյ տաճարին մինչեւ 'ի վեցերորդ ամն Դարեհի, հինգ հարիւր ութ ամ: Եւ հնգետասան ամին Դարեհի լցաւ հինգ դարն. և 'ի վեշտասաներորդ ամին Դարեհի սկսաւ վեցերորդ դարն:

Եւ մարգարէանային Անգէոս, և Զաքարիաս, և Մաղաքիաս, և Զօրաբաբէլ որդի

Սաղաթիէլի որդւոյ Յեքոնեայ առաջնորդ դարձի գերութեան. և Յեսու Յովսեդեկեայ Քահանայապետ։ Ոմանք զՍաղաթիէլ ասեն որդի Սեդեկիայ 'ի Բաբելոն ծնեալ 'ի կուրութեանն։ Զայսու ժամանակօք Բլոն յեւթն իմաստնոյն պարէտ եղեւ. Լակեդէմոնացւոյն. սա և Տարկինոս ասեն եգիտ տանջանարանս, բանտս, կոճեղս, շղթայս և տուեալ 'ի պղնձահատս գործել հրամայեաց և Դէոգնիս՝ Պոետէս ճանաչէր։

Զկնի Դարեհի Թագաւորեաց Քսերքսէս որդի իւր ամս քսան և մի։ Սա յերկրորդ ամի Թագաւորութեան իւրոյ առ զԵգիպտոս. և 'ի մետասաներրորդ ամին առ զԱթէնս, և հրով այրեաց զնա. և էառ սա քաղաքս բազումս, և աշխարհս յոլովս, և հարիւր քսան գաւառս. Եւ յաւուրս սորա եղեն իրքն Եսթերայ, Մուրթքէի և Համանայ, որ էր յազգէն Ամաղեկայ։ Բայց Յովհաննէս Եփեսացին ասէ. թէ աստ լեալ էր Եսթերայ իրքն՝ Եզր ընդէ՞ր ոչ գրեաց։ Եւ սմա ասեն ոմանք զդարձն Հրէից. յետ սորա Թագաւորեաց Արտաւան եւթն ամիս։

Եւ զկնի սորա Արտաշէս երկայնաձեռն ամս քառասուն և մի։ Ի սորա եւթներրորդ ամին եւ Եզրաս զայլսն Յերուսաղէմ՝ օգնել շինուածոյն ։ Այլ և Նա ՚ի պարգեւաց Հոգւոյն գրեաց վերստին զհին մատեանսն ։ Եւ ՚ի քսաներրորդ ամին Արտաշիսի եւ Նէեմի տակառապետն շինել զպարիսպն Երուսաղեմի հրամանաւ նորին . եւ կատարեցաւ գործն ամս երկոտասան ՚ի ձեռն Նէեմեայ ։ Եւ սա եւս բերել զմխիթար ողջակիզացն մոռացեալ ՚ի ջրհորն և սրսկեալ ՚ի սեղանն վառեցաւ հուր ։

Յետ Արտաշիսի միւս Արտաշէս զոր Բռուերքսեան կոչեն ամս երկու ։ Եւ զկնի նորա Սեկդիոս ամիսս եւթն . և յետ նորա Դարեհ Նոթոս հարճորդի ամս տասն և ինն (1) . և ՚ի հնգետասան ամին սորա ապստամբեաց Եգիպտոս ՚ի Պարսից և եդին իւրեանց թագաւոր զԱմինէոսիոս , զկնի հարիւր քսան և չորս ամի դադարելոյն . և ՚ի տասն և իններրորդ ամին Դարեհի թագաւորեաց Մակեդոնացւոյն Արքեաոս ամս երիս ։ Իսկ ՚ի Հռոմ՝ պատերազմ սաստիկ էր . զի Կոլորիան պատերազմէր ընդ Կալատուկիք և ընդ Դալատացիս կեղտս , և յետ հարիւր ամի յաղթեցան Հռովմայեցիք . և առաւ Հռոմ և քակեցաւ ՚ի հիմանց , և մնաց միայն արքու-

(1) Մի օրի . քսան և ինն ։

նիքն ։ Եւ ՚ի սոյն ժամանակս եղեւ շարժ սաստիկ, և կլաւ երկիր քաղաքս բազումս ։

Եւ Պարսից Թագաւորեաց Արտաշէս ուշեղ ամս քառասուն ։ Եբրայեցիք առ սա վաւ առեն զԵսթեր ։ Յեւթն և տասներորդ ամին սորա յԱփրիկէ Աստուկարտ Հռոմայ աւերեաց զԿարքեդոն, և յանուն իւր կոչեաց զնա վերստին շինելով ։ Եւ յԵգիպտոս Թագաւորեաց Ամիրեարիս ամս վեց . և Մակեդոնացւոյն Արքեղայոս ամս ութ (1) . և դարձեալ Ամինտաս ամ մի ։ Եւ ապա Կարիս ամ մի ։ Եւ ապա Նեկտանաբիս ամս տասն և ութ ։ Եւ յերեսուն և հինգերորդ ամին Արտաշիսի Թագաւորէ Մակեդոնացւոյն Աղեքսանդրոս ամ մի . և զկնի նորա Պտղոմէոս ամս երիս ։

Ի քառասներորդ ամին Արտաշիսի Թագաւորէ Եգիպտացւոց Դիոս ամս երկուս . և զկնի նորա Նեքտանիփոս ամս երկոտասան ։ Յետ մահուանն Արտաշիսի Թագաւորէ Պարսից միւս Արտաշէս Ոքոս ամս քսան և եւթն . այլք երեսուն և վեց ասեն ։ Սա եբարձ զԹագաւորութիւնն Եգիպտացւոց հնազանդել զնոսա . զի Նեկտանեբէ աղանդով իմացեալ զլուրն իւրեանց փախեաւ

(1) Ոմանք՝ տասն և վեց ։

յԻթալիա . և անտի եկն 'ի Մակեդոնիա . զսա ասեն ոմանք հայր Աղեքսանդրի ։

Եւ մնաց Եգիպտոս անթագաւոր ամս քսան և երկու մինչեւ 'ի Պաթիմոս . որ է Պտղոմէոս մի 'ի բարեկամացն Աղեքսանդրի ։

Իսկ Արտաշէս թագաւոր Պարսից բնակեցոյց զՀրէայսն առ ընթեր Կասբից ծովուն յՈւռկանա քաղաք ։ Եւ յայնմ ժամանակի թագաւորէ Մակեդոնացւոցն Փիլիպպոս հայրն Աղեքսանդրի ամս քսան և եւթն . և անուն կնոջ նորա Ոլոմպիադայ . և հնազանդեցաւ Պարսից ։ Եւ իմաստասէրքն էին Արիստոտէլ և Եպիկուրոս ։

Յերեքտասաներրորդ ամին Ոքոսեայ ծընաւ Աղեքսանդր որդի Փիլիպպեայ յութերրորդ ամի թագաւորութեանն հօր իւրոյ . յետ Արտաշէսի Ոքոսայ թագաւորեաց Պարսից Արշէս որդի նորա ամս չորս ։

Եւ զկնի նորա թագաւորէ Պարսից Դարեհ որդի Արշաւրի ամս վեց ։ Եւ յառաջին ամի նորա թագաւորէ Մակեդոնացւոցն Աղեքսանդրոս որդի Փիլիպպեայ ամս երկոտասան՝ և էր ամաց քսանից , հասակաւ երեք կանգուն և երկայն իմաստութեամբ և բարձըր քաջութեամբ ։ Սա կորոյս երեսուն և եւթն թագաւոր , որոց մի էր Վահէ Հայոց մեծաց Թագաւոր. և զառաջինն Թագաւորեաց Յելոսայ(1), և ունէր զօրք երկոտասան բիւր և բնակէր անդ երկոտասան հազարօք :

Եւ 'ի վեցերորդ ամի Թագաւորութեան իւրոյ, և 'ի նոյն քանիս Դարեհի Պարսից, պատերազմեցաւ ընդ Դարեհի 'ի Սիս Կիլիկեցւոց, և սպանաւ Դարեհ և կատարեցաւ 'ի նա Թագաւորութիւնն Պարսից տեւեալ ամս երկերիւր երեսուն և մի : Սա շինեաց քաղաք երկոտասան յանուն իւր. սա եգ դուռն 'ի կողմ Հոնաց՝ չապականել նոցա զերկիր. և դուռն երկաթի, երկայնութիւն ունելով կանգունս երկոտասան, և լայնութիւն կանգունս ութ : Սա եկն յԵրուսաղէմ և պատարագս մատոյց Աստուծոյ և պատուեաց զքահանայապետն Անդրիմաքոս, և գնաց յԵգիպտոս. և լուան Սամարացիքն զայն, եւ սպանին զԱնդրիմաքոս զի ոչ արգել զհեթանոսն 'ի տաճարէն և 'ի պատարագելոյն. և լուր եղեւ Աղեքսանդրեայ. և եկն ցասմամբ, և քակեաց զՍամարիա և բնաւին ջնջեաց զազգն Սամարացւոց. և ածեալ 'ի տեղի նոցա Մակեդոնացիս բնակեցոյց անդ. սա կոչի առաջին Թագաւոր Յունաց.

---

(1) Մի օրի. Ելայ :

Սա մեռաւ ՚ի Բաբելոն դեղատուութեամբ. և առին զթագաւորութիւն նորա չորեքին բարեկամք նորա. և կատարեցաւ բանն, եթէ քօշն այծեաց կռուեցաւ ընդ խոյին Դարեհի. և բարձաւ մի եղջիւր։ Եւ յայտնեցաւ չորեքին եղջիւրք՝ բարեկամքն Աղեքսանդրի. և առ զթագաւորութիւն Եգիպտոսի Պտղոմէոս ամս քառասուն։ Սա տարաւ զմարմինն Աղեքսանդրի յԵգիպտոս, և անդ թաղեաց. սա յառաջին ամին առ զԵրուսաղէմ նենգութեամբ առ Օնիաւ քահանայապետիւ. և ած գերիս յԵգիպտոս. անուամբ սորա կոչէին և այլ թագաւորք Պտղոմեանք։

Ի յերկրորդ ամի սորա թագաւորեաց յԱսիա Անտիգոնոս ամս տասն և ութ։ Սա ընդարձակեաց զԱնտիոք, և անուամբ որդւոյ իւրոյ կոչեաց։

Յերեքտասան ամին Պտղոմեայ թագաւորեաց Ասորւոց և Բաբելացւոց մինչեւ ՚ի Հնդիկս Սելեւկոս ամս երեսուն և երիս։ Եւ սա յինքն գրաւեաց զԱնտիոք. և եւս արձակեաց և շինեաց զՍելեւկիա յանուն իւր առ լերամբն Ոասախանձրայ. և զԱնտիոք կոչեաց յանուն որդւոյ իւրոյ. որ նախ Անտեղիա կոչէր առ ողիւսաչէն գետոյն, զոր

Դիոկղետոլիանոս եւս մեծացոյց։ Ունէր Սելեւկոս չորս դստերս, Լէոդիկա յորոց անուն շինեաց զԼաւոդիկէ, որ է Օատիկ. զԵփեմիս, յորոց անուն շինեաց զԵփեմիա. զԲէւիա, յորոց անուն շինեաց զԲերիա որ է Հալապ։ զԵդեսէ, յորոց անուն շինեաց զԵդեսէ որ է Ուռհայ։ Շինեաց և զԲալու և զՄարաշ և բնակեցոյց 'ի նոսա Հրեայս։ Եւ պատուեաց զԻսրայէլ. և հրամայեաց մտանել առ նա ընդ սիրելիս նորա ըստ կամաց իւրեանց։ Եւ աստ կատարեցաւ մեծ աշտարակն 'ի մէջ ծովուն Նեփրոսի և կոչեցաւ Պրոտոս (1). և շինեաց զնա Սոստրատոս Կանտիոացի, դէտ լինել Աղեքսանդրու ընդ ծով և ընդ ցամաք։

Եւ Սելեւկոս ըմբռնեաց զԴեմետրոս քանզի 'ի բարեկամացն Աղեքսանդրի էր։ Կասանդրոս թագաւորեաց 'ի Մակեդոնիա ամս տասն։ Եւ յետ նորա Դեմետրիոս, որ և յինքն գրաւեաց զԿիլիկիա և թագաւոր կոչեցաւ. Ասիոյ զօր. կալաւ Սելեւկոս, եւ տիրեաց ամենայն Ասիոյ։ Ի սկիզբն թագաւորութեանն Սելեւկեայ, որ է երկոտասան ամ զկնի մահուանն Աղեքսանդրի, սկսաւ թուականն Ասորոց։ Իսկ յետ մահուանն առաջինն Պտղոմեայ, Թագաւորեաց Եգիպտոս Պտղոմէոս փիլադելփոս ամս երեսուն և ինն ։ Յառաջին ամին սորա Թագաւորեաց Մակեդոնացւոց Կռոնոս ամ մի. Պալադարոս՝ ամիս երկուս. Անթիպատրոս՝ աւուրս քառասուն և վեց. Սոսթենէս՝ (1) ամս երկու, զկնի Սելեւկոսի Թագաւորեաց Անտիոքոս Սովտէր՝ ամս տասն և ինն ։

---

(1) Ընթեր՝ Փարոս։

Յերկրորդ ամին սորա Թագաւորեաց Մակեդոնացւոյն Անտիգոնոս՝ ամս երեսուն և վեց ։

ԳԼՈՒԽ Է.

Յաղագս Թարգմանութեան հին կտակարանացն 'ի Կիպրոս լեզու ։

Ի վեցերորդ ամին Պտղոմեայ Թարգմանեցան հին կտակարանքն 'ի Կիպրոս լեզու. այլք ասեն Աղեքսանդրիա Եգիպտոսի, եւթանասուն երկու արամբք, վեց վեց այր 'ի ցեղիցն Իսրայելի. որք են յանուանէ այսոքիկ ։ Ի ցեղէն Ռուբենի՝ Յովսեպոս, Եզեկիէլ, Եղիսէէ, Զաքարիայ, Յովհաննէս,

---

(1) Երկու օրի. Սոսինթէս

Եզեկիէլ։ Ի ցեղէն Շմաւոնի՝ Յուդայ, Շմաւոն, Եդդէ, Սամուէլ, Մաթէ, Սաղամիա։ Յազգէն Ղեւեայ՝ Նոյեմի, Յովսէփ, Թէոդոս, Իբատոս, Ուրանիայ, Տուկիոս։ Ի ցեղէն Յուդայ՝ Յովնաթան, Եբարի, Եղիսէ, Անանիա, Զաքարիա, Եզեկիա։ Ի ցեղէն Իսաքարայ՝ Իսահակ, Յակոբ, Յեսու, Շամպսոն, Շմաւոն, Ղեւի։ Յազգէն Զաբուղոնի՝ Յուդայ, Յովսէփ, Շըմաւոն, Զաքարիա, Շմաւոն, Սաղամիա։ Ի ցեղէն Գադայ՝ Սմպատրիա, Սեդեկիա, Յակոբ, Իսահակ, Եսայի, Մատթէոս։ Ի ցեղէն Ասերայ՝ Թէոդոս, Իասոն, Յեսու, Թէոդորոս, Յովհաննէս, Յովնաթան։ Ի ցեղէն Դանայ՝ Թէոփիլէ, Աբրահամ, Իդասմոս, Իասոն, Երեմիա, Դանիէլ։ Ի ցեղէն Նեփթաղիմայ՝ Երեմիա, Ղազար, Զաքարիա, Բանիա, Եղիշէ, Տաթան։ Ի ցեղէն Բենիամինի՝ Յովհաննէս, Իւղոս, Եկտի, Թէոդոս, Ներսամ, Եզեկիէլ։ Ի ցեղէն Յովսեփայ, Բաղէք, Սամուէլ, Յովսէփ, Յուդա. Յովնաթ Եւթոպի։ Յարանց աստի թարգմանեցան հին մատեանք 'ի Կիպրոս կղզւոջ և տարեալ յԵգիպտոս եղան յարքունական տան. այլք յԵգիպտոս ասեն 'ի Փարան կղզւոջ։ Այլ մեք ստոյգն խուզեցուք յետ եւթանասուն և չորս ամի իշխանութեանն Յունաց, և 'ի վախճանն երկութուին Ասորւոց 'ի խորհուրդ մտին կողմանք Արեւելից Պարթեւք, և Պարսիկք և առեն. պատառեցաւ թագաւորութիւնն Մակեդոնացւոց և տկարացաւ, զի՛ կայ մեր և նոցա այնչափ հեռաւորաց. դիպուք մեզ թագաւոր 'ի միջի մերում: Եւ թագաւորեցուցին յորդւոցն Աբրահամու որ 'ի Կենդուրայ 'ի ցեղէ Ամրամայ զԱրշակ քաջ 'ի Բահլ մայրաքաղաքի աշխարհին, և հնազանդեցան նմա Պարթեւք և Պարսք և Մադացիք սահմանակիցք նոցա:

Եւ զայն տեսեալ վրկան աշխարհին որ կայ 'ի հիւսիսոյ Պարսից, եդին և նոքա իւրեանց թագաւոր, բայց հնազանդեցան Պարթեւաց: Նմանապէս և Հայք եդին իւրեանց թագաւոր զկնի քաջ և յաղթող և տիեզերաստատ թագաւորացն Հայկազանց, որք բարձին զթագաւորութիւնն Մադացւոց և հնազանդեցուցին զամենայն թագաւորութիւնսն հիւսիսոյ, և զամենայն ազգն շուրջանակի զոր մեք ոչ տեսաք 'ի գրի զշարս նոցա և զժամանակս, վասն որոյ ոչ գրեցաք աստ:

Քանզի ձգեցաւ թագաւորութիւնն

Հայկայ մինչեւ 'ի Վահէ, զոր սպան Աղեքսանդր և վերստին տիրեցին 'ի Պաղեստինէ մինչեւ ցԹէսսալիա 'ի ծովն Կասպից յայնկոյս լերինն Կաւկասու։ Եւ Թագաւորեաց 'ի վերայ նոցա մի յորդւոց Արշակայ Վաղարշակ անուն, հզօր Թագաւորութիւն զոր Թողումք մեք հաւաստի գրողաց։

Այլ զկնի Պտղոմեայ խոհեմագունի՝ Թագաւորեաց յԵգիպտոս Պտղոմէոս Երկաթիս։ Եւ 'ի կողմանս Ասորւոց Թագաւորեաց Սելեւկոս, Կալլինիկոս։ Եւ Մակեդոնացւոցն Թագաւորեաց Դեմետրիոս Փիլիպպոս։

Եւ յայսմ ժամանակի Քահանայապետն Հրէից Ոնիա որդի Սիմէոնի արդարոյ ոչ կամեցաւ տալ զհարկն Պտղոմեայ։ Եւ զայրացեալ Պտղոմէոս կամեցաւ գալ 'ի վերայ Երուսաղեմի. և Հրեայքն առաքեցին առ նա զՅովսեպոս առնել խաղաղութիւն. և եգիտ շնորհս առաջի նորա, և արար զնա զօրագլուխ ամենայն Հրէաստանի։ Ի յութսուն և հինգերորդ Թուին Ասորոց Թագաւորեաց Ասիոյ Սելեւկոս Կռաւնոս ամս երիս. և զհետ նորա Անտիոքոս մեծ ամս երեսուն և վեց։ սրով նահատակեցան Մակաբայեցիք։

Եւ յիննսուն և երեք Թուին Ասորոց Թագաւորեաց յԵգիպտոս Պտղոմէոս Փիլոպատար ամս տասն եւթն. սա յոյժ նեղէր զՀրեայսն։ Իսկ գնաց Անտիոքոս և հնազանդեաց զԵգիպտոս կոտորմամբ սրոյ. և դարձաւ յԵրուսաղէմ, և առ զնա. և աստ կատարի առաջին գիրքն Մակաբայեցւոցն։ Ի հարիւր տասն թուին Յունաց թագաւորեաց յԵգիպտոս Պտղոմէոս Եպիփանէս ամս քսան և մի. սա առաքեաց զՍքոպա զօրավար և հնազանդեաց զՀրեայս և զՓղշտացիս։ Իսկ եկն Անտիոքոս ընդդէմ նորա, և կոտորեաց զնա, և առ յինքն գրաւեաց զքաղաքսն զոր առեալն էր։

Այս Անտիոքոս արար աւերակս զգիւղից քաղաքաց բազմաց. և սա տայր նշանս չափածոյս իջաւանաց ՚ի ճանապարհս. զոր փարսախն կոչեն. և շինեաց կամուրջս քարակուռս յանցս գետոց և առուաց. և հաստեաց զխոշորութիւն ճանապարհաց ՚ի դիւրագնացութիւն. և ՚ի մետասան ամին իւրոյ արար պատերազմ ընդ Հռովմայ և պարտեցաւ ՚ի նոցանէ, և ըմբռնեցաւ։ Իսկ եդ զորդին իւր պատանդս տալ զգինս անձին իւրոյ, և հարկս ամի ամի հազար քանքար ոսկւոյ. և այս եղեւ սկիզբն հարկելոյ Ասիոյ և Ասորւոց ՚ի Հռոմայեցւոյն։

Ի սոյն ժամանակս թագաւորեաց Սելեւկեդոնացւոյն Փիլիպպոս ամս քառասուն և չորս (1). և աստ կատարեցաւ մարգարէութիւնն Դանիելի թէ. Թագաւորն հիւսիսոյ տացէ պատերազմ ընդ արքային հարաւոյ. որ է Անտիոքոս ընդ Պտղոմեայ, որ եւ նմա զդուստր իւր. և անդրէն էառ վերստին ։

Այս Անտիոքոս սպան զՕնեայ և զորդիսն իւր, և այսահարեալ չարչարէր զաւուրս իւր. և գնաց սա յերկիրն Ելամայեցւոց բժշկել անդ 'ի դիցն իւրոց ։ Եւ անդ ասացին ցնա ծերքն եթէ տուր բերել զոսկերս ընպանելոցն 'ի քէն. և անկեալ առաջի նոցա ողջացիս, և առաքեաց փութանակի յԱնտիոք և բարձին սակաւօք զնշխարս սրբոցն և գնացին ։ Եւ հասեալ 'ի Համթախ քաղաք դիպեցան նոցա արք, որք ասացին եթէ քարկոծեցաւ Թագաւորն 'ի տան աստուածուհւոյն իւրոյ վասն չարեաց իւրոց ։ Եւ իբրև լուան զայն եդին 'ի տեղւոջն զոսկերսն առընթեր կաղնւոյն մեծի ։ Եւ յետ ժամանակաց յայտնեցան նշխարքն նոցա, և շինեցաւ տեղին Սանք և է մինչեւ ցայսօր ժամանակի ։

Եւ Թագաւորեաց Ասիոյ Սելեւկոս. և Դիոդորոս հաւատարիմ նորա նենգէր զՀրեայսն. և պատժեաց զնա Տէր ։

(1) Մի օրին. քառն. և չորս ։

Ի հարիւր երեսուն և մի թուին արձակեցաւ Անտիոքոս ՚ի Հռոմայ և թագաւորեաց ՚ի տեղի հօր իւրոյ ։ Սա կոչէր Եպիփանէս և թագաւորեաց ամս մետասան . կամեցաւ գնալ յԵգիպտոս և արգելին զնա Հռոմայեցիքն , և դարձաւ եկն ՚ի Հրէաստան և ետ զՔահանայապետութիւնն յԱսոն՝ յեղբայրն Ոնիայ . և յետ սակաւու առ ՚ի նմանէ և ետ յՈնիա . և եղեւ աղմուկ ՚ի մէջ եղբարցն ։ Իսկ Մատաթէ որդի Յոհաննու որդւոյ Շմաւոնի Քահանայի յորդւոցն Յովիարիբու բնակէր ՚ի Մուդիմ քաղաք . և եւթն որդիք նորա ընդ նմա Յովհաննէս , Շմաւոն , Յուդա , Մակաբէ , Եղիազար , Աւարէ , Յովնաթան . սա վառեցաւ նախանձու Աստուծոյ և տեսեալ մեղս անհնարինս սպան զյանցաւորս . և ապստամբեալ ել ՚ի լեառն իւրայօքն ։

Իսկ Անտիոքոս հարուածովք հօր իւրոյ մեռաւ ՚ի Պարս ՚ի յանդիմանէ Տեառն, զի նա գնաց զճանապարհս հօր իւրոյ, այն որ պղծեաց զտաճարն կանգնելով ՚ի նմա պատկեր Զեւսայ . և ՚ի լեառն Գարիզին շինեաց տաճար յանուն Զեւսայ և Քսանթեայ՝ աղաչեցեալ զնա Սամարացւոցն ։

Յութուտասաներորդ ամին Պտղոմեայ

Թագաւորեաց Եպիփան Ուպատոր ամս երկուս. սա առաքեաց զՇաւրղորա զօրապետն իւր հարիւր քսան հազար զօրօք և փղօք 'ի Հրէաստան, և կոտորեցան 'ի նմանէ բազմութիւն Հրէից, եւ մեռաւ Եղիազար 'ի ներքոյ փղի. և եղեւ 'ի Թաղելն զսպանեալոցն Իսրայելի գտան 'ի ներքոյ հանդերձիցն, նկարք և պատկերք կռոց:

Յայսմ ժամանակի Ոնիա Քահանայապետն գնացեալ յԵգիպտոս շինեաց տաճար Տեառն նման տաճարին որ յԵրուսաղէմ, առանց հրամանի տեառն. և առնէին անդ քահանայագործութիւն ըստ օրինացն: Եւ զտաճարն որ յԵրուսաղէմ նորոգեաց Յուդա Մակաբէ և մնաց չէն մինչեւ յաւերն վերջին 'ի Հռոմայեցւոցն, զի նա էր առաջնորդ Հրէիցն:

Եւ յետ Յուդայի եկաց Յովնաթան, որ սպանաւ ընդ Աղեքսանդրի 'ի Տրիփոնայ: Եւ եկաց 'ի տեղի նորա Շմաւոն. սա առաքեաց 'ի Հռոմ վահան ոսկեղէն, և խնդրեաց դաշն և բերին նմա տախտակ պղնձի նշան ուխտի: Եւ սա առաքեաց զՅովհաննէս զորդին իւր. և կոտորել ետ զզօրսն Անտիոքոսի և ազատեցան 'ի հարկէ նոցա: Եւ աստ կատարեցան երկրորդ գիրքն Մակաբայեցւոց:

Ի հարիւր եւթանասուն և չորս թուին սպանաւ Շմաւոն 'ի Պտղոմեայ. և առ ըզտեղի նորա Յովհաննէս որդի նորա։ Յայսմ ժամանակի իշխանացաւ ամն Հրեայ յՈւռհայ, և մնաց մինչեւ 'ի հայրն Աբգարու Արքայի։

Եւ զայսու ժամանակաւ գնաց Յովհաննէս յՈւռկանիայ, և եհար զնոսա. և կոչեցաւ անուն նորա Հիւրկանոս։

Եւ թագաւորեաց Անտիոքոս Ակրիպաս, և եկն յԵրուսաղէմ խնդրեաց հարկս յոյժ ծանրագոյն. և եբաց Յովհաննէս զգերեզմանս Դաւթի թագաւորի, և եհան անտի զոսկին և զզարդն ամենայն թագաւորացն Յուդայ, և երեք հազար քանքար ոսկւոյ առեալ՝ ամփոփեաց զայլսն. և տուեալ երեք հարիւր քանքար Անտիոքու գնաց 'ի նմանէ՝ և չքաւ Հիւրկանոս որ և Յովհաննէս, եւ քակեաց զՍամարիա։

Ի թուին հարիւր իննսուն և վեց թագաւորեաց յԵգիպտոս Պտղոմէոս Սովտէր ամս եւթն և տասն։ Եւ գնաց Անտիոքոս, և Հիւրկանոս ընդ նմա, և սպանին զՏիտոս թագաւորն պարթեւաց։

Ի չորրորդ ամին Պտղոմեայ թագաւորեաց յԱսիա Անտիոքոս Կիզիկոս ամս ութ և տասն ։ Ի մետասաներրորդ ամին Պտղոմեայ մեռաւ Յովհաննէս Հիւրկանոս, և առ զտեղի նորա Արիստաբողոս որդի Յովնաթայ ամ մի. սա 'ի վերայ սճղնաւորին թագ յաւել. և երկոքին եղբարք նորա Աղեքսանդրոս և Անտիգոնոս նենգութեամբ սպանին զմիմեանս ըստ մարգարէութեան հօրն իւրեանց զի շնորհ մարգարէի գոյր ընդ նմա ։

Յետ Արիստաբուղեայ առ զպատիւն Յովհաննէս եղբայր իւր, որ կոչեցաւն Յանէ ամս քսան և եւթն, որ խստագոյնս դատէր զազգն իւր ։ Յայսմ ժամանակի հալածեցաւ Պտղոմէ 'ի Կղէոպատրայ մօրէն իւրմէ ։ Եւ թագաւորեաց յԵգիպտոս Պտղոմէոս Աղեքսանդրոս ամս տասն ։ Ի վեցերորդ ամին սորա բարձան թագաւորք Ասիոյ և Ասորւոց, և եղեն ընդ Հռովմայեցւովք ։

Եւ աստ կատարեցան հին գիրք ժողովրդեանն ։ Եւ են յԱդամայ հինգ հազար և եւթանասուն երկու ամք, և աստի մինչեւ 'ի ծնունդն Քրիստոսի ամք հարիւր քսան և չորս ։ Եւ ժամանակ թագաւորացն Ասիացւոց ամք երկերիւր վեշտասան. որ սկսաւ զկնի մահուանն Աղեքսանդրու և 'ի թուին Ասորւոց՝ երկերիւր քսան և երկու ։ Դարձաւ Պտղոմէոս հալածեալն յաթոռ իւր ամս ութ ։

Եւ յետ նորա Թագաւորեաց Պտղոմէոս Դիոնեսիոս, ամս երեսուն որ էր եղբայր Կղէոպատրայ ։ Ի հինգերորդն (1) ամին Պտղոմեայ մեռաւ Յովհաննէս որ և Աղեքսանդրոս, և առ զիշխանութիւնն կին նորա Աղեքսանդրիայ որ կոչեցաւ Սաղինա ամս ինն. օրինապահ և Աստուածապաշտ, որ ունէր ուստերս երիս, զՀիւրկիանոս, զԱրիստաբուլոս, զԱնտիգոնոս ։ Եղեւ Հիւրկիանոս քահանայապետ, և Արիստաբուլոս առնուլ կամէր 'ի նմանէ. մինչեւ եկն Պոմպէոս զօրապետն Հռովմայեցւոց, և տարաւ զնա կապանօք, և հաստատեաց զՀիւրկիանոս ամս երեսուն և չորս ։ Սա շինեաց զպարիսպն Երուսաղեմի և զքակեալն 'ի Պոմպեայ և մտին Հրեայք ընդ Հռոմովք ։

Իսկ Պոմպէոս կրճատեաց բազում աշխարհս 'ի Հայոց և յԱսորոց և յԱրաբացւոց և մեծացաւ յոյժ, մինչեւ կոչել նմա Եւտուկրատոր ։ Եւ 'ի նոյն ժամանակս մեռաւ Պտղոմէոս, և Թագաւորեաց Կղէոպատրա ամս երկու ։

Եւ սպանաւ Պոմպէոս 'ի Յուլիոսէ որ և Կայիոս 'ի կարծիս ապստամբութեան ։

Զայսու ժամանակաւ էր Հերովդէս, և այս է ազգն նորա ։

---

(1) Երեք որի. չորրորդն ։

Այր մի էր յԱսկաղոնայ Անթիպատրոս անուն որդի Հրովդէի Իդումայեցւոյ Ասկաղոնի կռոց։ Սա գերեալ յԻդումայեցւոյն և անդէն ամուսնացեալ, առեալ ՚ի կնութիւն զԿուփրիոն դուստր Արետայ արքային Արաբացւոց. և եղև սա բարեկամ Հիւրկանայ. զի օգնէր նմա ՚ի Պոմպէոսի կողմանէ. սակս քահանայութեանն. զի ծանօթացեալ Հռոմայեցւոցն և շնորհ եգիտ յաչս նոցա. մինչ կացուցին զնա իշխան Հրէիցն կամելով Հիւրկանեայ. և ունէր նա չորս որդիս Յովսէփ և Փերուրի և Փեսաղոս և Հերովդէս և դուստր մի Սաղոմ անուն։ Իսկ Յովսէփ և Փեսաղոս եղեն ընդ հօրն գործակալք Հրէիցն։ և ոմն ՚ի Հրէից սպան զԱնթիպատրոս դեղմպութեամբ՝ Յովսեփաւ. որդւոյն իւրով։ Եւ զՓեսաղոս Անտիգոնոս սպան դեղելով ըզխոցեալ գլուխ նորա։ Քանզի զօրապետն Հայոց Բարզափրան եկն յԵրուսաղէմ՝ զայսու ժամանակաւ, և գերեաց զնա. և հանեալ զՀիւրկանոս եդ ՚ի տեղի նորա զԱնտիգոնոս, և զՓերուրի, և զՀիւրկանոս տարաւ կապանօք ՚ի Հայս։

Եւ Հերովդէս գնացեալ ՚ի Հռոմ եւ պատմեաց զվիշտս հօրն իւրոյ. և զեղբարցն

՚ի վերայ հաւատարմութեան իւրեանց , և վասն այսորիկ Թագ եդ ՚նմա կայսրն Հռոմայ , և եկեալ յԵրուսաղէմ սպան զԱնտիգոնոս, և յետ ժամանակի զՀիւրկիանոս. և զերծեալ ՚ի գերութենէ Հայոց , Թագաւորեաց Հրէից անհոգապէս :

Այնպէս սպան և զորդին Հիւրկանեայ. և զԱնաթան :

Եւ. կատարեցան գիրք եթէ ՚ի պակասեալ պետութեանցն Հրէից երեւի բնածին արքայ . և եւթներրորդքն Դանիէլի որ ասէ եւթներրորդք եւթն . և եւթներրորդ վաթսուն երկու . որ լինի վաթսուն և ինն եւթներրորդք որք են ամք չորս հարիւր ութսուն երեք: Սկսեալ ՚ի վեցերրորդ ամէն Դարեհի Մադիայ մինչեւ յաւետիս կուսին մօրն Էմմանուէլի . և գտաք ՚ի թարգմանութեանն Աբգարու արքայի՝ եթէ Դանիէլ յետ իմանալոյն վասն Քրիստոսի , նեղէր ՚ի կարօտութենէն . և ՚ի վախճանէն իւրում յեզր Տիգրիս գետոյ , անկեալ ՚ի վերայ երեսաց իւրոց , կոչեաց առ Տէր և ասէ. ցոյց Աստուած Իսրայելի զՔրիստոսն քո մինչչեւ մեռեալ իցեմ: Եւ եկն առ նա Գաբրիէլ և ասէ. հանգիր խաղաղութեամբ այր ցանկութեան . զի չեւ է ժամանակ , այլ

՚ի կատարման տեսլեանն քո գայ · և խաչի, և մեռանի, և ինքնին իջեալ ՚ի դժոխս հանէ զձեզ անտի · արդ՝ մխիթարեա՛ զքեզ յուսով գալստեան Նորա ։

Ըստ որում և ՚ի կատարման ժամանակին ծնաւ Յիսուս Քրիստոս օծեալն Աստուած ՚ի Բեթղեհէմ Յուդայ ՚ի քառասուն և չորս ամի Թագաւորութեանն Օգոստեայ, և իջեալ հուր յերկնից այրեաց զյաճախութիւն կռոցն որ կայր յԱլոմպիոս լեառն, զոր աստուածաբնակն կոչեն ։

Եւ էր ամն առաջին Թագաւորութեանն Աբգարու, և Հերովդի՝ երեսուն և երկու ։ Եւ այսպէս մեր պսակաւորն Աբգարիոս արքայակից է ըստ մարմնոյ արքայութեան Տեառն ։ Եւ է յԱդամայ հինգ հազար հարիւր ութ՝ ըստ եւթանասնիցն ։ Ըստ Եւսեբեայ՝ հինգ հազար երկու հարիւր ութսուն և չորս ։ Ըստ Երանոսի՝ հինգ հազար իննսուն և մի · և ըստ այլոց՝ հինգ հազար հինգ հարիւր երեք ։ Եւ ըստ Ասորոց՝ հինգ հազար քսան և վեց · և էր մուտն Նիսանայ և երկուշաբաթ · և տարին երկոտասան լուսնեայ (1) յորում ամի առաքեցաւ Կիւրինոս ՚ի Սենկղիտոսէ յԱսորիս, և ՚ի Պաղեստին գրել զազգն, և դնել հարկս ։ Քանզի լուան 'ի Հռովմ վասն Թեւդասայ և զՅուդայի ապստամբեաց, եթէ ամէն Հրէից մի տալ հարկս մահկանացու Թագաւորի, և բարկացան յոյժ. և 'ի պատճառս ապստամբութեան (1) եղեւ խռքս այս, որ բնաւ չէր լեալ ։

---

(1) Մի օրի · լուսնոց ։

Իսկ Օգոստոս երկրորդ ինքնակալ էր, և կայսր Հռովմայեցւոց յետ Յուլիոսի, զոր ասեն Փորահան, այն որ բարեբախտ եղեալ Թագաւորեաց յետ չորս հարիւր վաթսուն երկու ամի խափանելոյ Թագաւորացն Հռովմայեցւոց 'ի Տարկինոսէ մինչեւ ցնա ։

Եւ զառաջինն պատիւ Թագաւորացն նոցա Բոքիոս էր. և արդ կայսերք Եւտուկատորք կոչին ։ Եւ 'ի շինելոյն Հռովմայ մինչեւ երկրորդ անգամ Թագաւորեցին եւթն հարիւր երկու ամք. և մեծք եղեն յերկրորդումն քան յառաջնումն. զի Գայիոս առաջին Թագաւոր նոցա գնացեալ յԵգիպտոս՝ հնազանդեաց այն որոյ անունն Թարգմանի Կայսան, որ է Անդրոնիկոս (2) կոչեցեալ յոմանց ։ Եւ այս (3) Յուլիոս, որ է հինգ ամ Թագաւորեալ սպանաւ նենգութեամբ ։ Երկրորդեաց Օգոստոս, որ մե-

---

(1) Մի օրի. ապստամբեացն կոս ։

(2) Զօրս օրի. Անդրանիկ.

(3) Ամենայն օրինակք ունին զայս.

Ծագումն ի փառաց արժանացաւ մեզ եղեալ ՚ի ժամանակ Տեառն մերոյ ։

Եւ տիրեցին Ասիոյ և Ասորեստանեայցն։ Եւ կացուցին զայսու ժամանակօք զԼուգիոս Հռովմայեցի ՚ի կողմանս Ասորւոց, զի գրեսցէ ՚ի Հռովմ զամենայն պատահեալսն յայսմ կողմանէ․ ըստ որում և գրեաց ըզժամանակ ծննդեան Տեառն մերոյ և զգալ Մոգուցն, և այլն ։

Գիտասցէ ինքնակալութիւնդ քո, զի Պարսիկք ոմանք արք փառաւորք եկին և մտին յիշխանութիւնս ձեր․ և երկրպագեցին տղայի միոյ ծնելոյ ՚ի Հրէաստանի, առաջնորդեալք յերկնաւոր փառաց ։ Բայց թէ ով է մանուկն, կամ ո՞յր որդի անտեղեկանամք ։

Եւ գրեցաւ նմա պատասխանի եթէ ըզՀերովդէսդ արքայ կացուցեալ է մեր ՚ի վերայ Պաղեստինեայ․ ՚ի նմանէ լուիցուք Մոգուցն գալ ։ Իսկ եթէ ո՞ք էին Մոգքն․ Եւսեբի և Գրիգոր ասեն յորդւոցն Աբրահամու էին․ և այլք՝ եթէ յորդւոցն Բաղամու Մոգք էին ։ Եւ գտաք մեք Նիւսացւոյն բանիւ գրեալ զայս, և նմանն է․ և Յակովբ ասէ, յազգէն Իլամայ էին Մեմացիք ։ Եւ ոմանք՝ եթէ ՚ի Թագաւորացն Արաբայ, և․․․

Սաբայ էին ըստ Դաւթայ վկայելոյն։ Սակայն էին երեք թագաւորք զի երեք ցեղ պատարագս մատուցին։ Եւ ոմանք ութն ասեն ըստ Միքիայ, թէ ութ վարիչ։ Եւ սուրբն Յակովբ երկոտասան իշխան ասէ․ և ստուգիւ գրեալ է նորա գիրք մի․ երեք հազար հեծեալ ասէ, և հինգ հազար հետեւակ։ Եւ եկեալ Եփրատ ՚ի տեղին որ ասի Կալանիկոս որ է Ռաղայ, լուան եթէ սովէ ՚ի Հրէաստան այլ եւս վասն կասկածի շփոթման, թողին զյոլովս և ինքեանք երկոտասանքն հազար հեծելով գնացին եւ դարձան առ զօրս իւրեանց։ Եւ անուանք իշխանացն են այս՝ Դահանդուր՝ որդի Երտաղդայ։ Շահէփ, որդի Դուդբարայ․ Երշակ որդի Մահգուդայ, Զրեւանդ (1) որդի Վարիդուդայ, Երիհու որդի Խոսրովու, Երտաշէս որդի Աւլիաթայ, Եշթանքուզա որդի Շիշրոնթայ (2), Մեհդուք (3) որդի Հումայ, Եքշիրիշ որդի Սահապանայ, Սարտանա (4) որդի Բելդանայ, Բարուդոք որդի Բեղայ։ Իսկ թագաւորն որ առաքեաց զնոսա՝ Փիրշապուհ անուն․ ոմանք երկու ամաւ յետ ծննդեան ասեն զգալն նոցա։ Բայց ճշմարտեն ոմանք երկու ամաւ յառաջ գուշակեալ աստեղք և յուղի անկեալ։ Եկեալ ժամանեցին 'ի (տեղի) ծննդեանն, միով աւուրբ զկնի ծննդեանն, ըստ որում գտին պատեալ 'ի խանձարուրս և եդեալ 'ի մսուր։

---

(1) Երկու օրի․ Զրուանդ։

(2) Երկու օրի․ Շիշրոնայ։

(3) Երկու օրի․ Մեհրդուդ։

(4) Երկու օրի․ Սատրանաւ

Եւ քառասուն օր կացեալ անդէն 'ի Բեթղեհէմ, և գնացեալ 'ի տաճարն՝ ընկալաւ զնա Սիմէօն որ հրամանաւ Հոգւոյն պահեցաւ կենդանի։

Ի Պտղոմեայ հետէ, որ մի էր 'ի Թարգմանչացն, որ 'ի գրել զԵսային և զտեղին թէ՝ Կոյսն յղասցի, գրեաց և ապա զղջացաւ, և ասաց թէ՝ Հեթանոսքս որ խնդրեցին զգրեանս, ծաղր առնեն, զիարդ հաւատան։ Եւ դարձաւ ջնջեաց, և դարձեալ տրտմեցաւ. և ասէ. Ընկերքն իմ գրեն և այդն լինիմ ես, և լինի հակառակութիւն։ Գիտելով ընկերին որ ընդ նմա, և 'ի տրտմութենէն ննջեցին երկոքեանն. և յայնժամ զարթեան, տեսին զի գրեալ էր զարմանալի գրով ոսկեղինաւ։

Իսկ Սիմէօն ելաց զօրն ողջոյն, և երանի տայր ժամանակին և տեսողացն զկուսածին Մանուկն։ Եւ ասէ ցնա Հոգին. Ոչ մեռցիս մինչեւ հասցես երանութեանդ։ Եւ եհաս բաղձանացն յերեք հարիւր քառասուն և չորս ամի ժամանակաց կեցոց. և 'ի տաճարէն գնաց (1) ՚ի Նազարէթ, և անտի յԵգիպտոս, զկնի վաթսուն երկու աւուր ծննդեան իւրոյ. այլք ասեն յետ երկու ամի գնաց յԵգիպտոս. և դու զայս ընկալ։

Եւ Հերովդէս խաբեալ ՚ի մոգուցն և զայրացեալ՝ այրեաց զամենայն գրեանն Հրէից, և ջնջեաց զյիշատակ թագաւորացն Հրէից և զքահանայութեանն, զի իւր լիցի թագաւորութիւն սեպհականութեամբ. և կոտորեաց զմանկունսն թուով հազար չորս հարիւր վաթսուն և երկու, յութսուն և չորս գեղջէ։

Նոյն Հերովդէս խափանեաց զթագաւորութիւն և զքահանայութիւն Հրէից. զի ընդ ձեռամբ արար զվակասն, և տայր կաշառօք անարժանից։ Նա քակեաց զպարիսպն Երուսաղէմի, և արար կոտորած սաստիկ մինչև ընկալան զնա ամենայն Իսրայէլ։ Նա առաքեաց ՚ի Բաբելոն և ետ բերել զԱնանէ, և արար զնա քահանայապետ ամ մի, որ չէր Ղեւտացի։ Եւ ապա արար զԱրիստաբուլոս զորդին Հիւրկիանեայ զեղբայր կնոջ իւրոյ, և սպան զնա և արար դարձեալ զԱնանէ։

Ի սմին ժամանակի յաղթեցան զօրքն

---

(1). Մի օրի. յաւելու Յիսուս ։

Հայոց որ կային 'ի վերայ Եփրատայ. և եղեւ Սամուսատ ընդ Հռոմովք ։

Եւ 'ի ժամանակս Օգոստեայ, զօրավար նորա Անտոնինոս սիրեաց զԿղէոպատրայ. և ապստամբեալ թագաւորեաց և գնաց յԵգիպտոս. և գնաց 'ի վերայ նորա Օգոստոս և կալաւ զնա, և եթող կենդանի զի աղաչեցին վասն նորա Սինկղիտոսքն ։ Եւ ած Օգոստոս գերի բազում յԵգիպտոսէ 'ի Հռովմ. և չոգաւ ինքն, և վերստին ապստամբեաց Անտոնինոս, առեալ զԿղէոպատրայ. և ունէր ոխս Կղէոպատրայ ընդ Հայս և ընդ Հրեայս և ընդ Արաբացիս. և 'ի ձեռն Անտոնինոսի թափէր զնախանձ իւր ։

Իսկ լուեալ Օգոստեայ գնաց 'ի վերայ նորա և պաշարեաց զնա յԵգիպտոս. և յորժամ գիտացին զպարտութիւնս իւրեանց Կղէոպատրայ և Անտոնինոս որք կռուէին ընդ Օգոստեայ 'ի միասին, անձնասպան եղեն ։ Եւ Օգոստոս եսպան զԱրեգակն և զԼուսին զորդիսն Կղէոպատրայ. և եբարձ զթագաւորութիւնն Պտղոմեանց, որ Յունաց կոչէր. տեւեալ ամս երկու հարիւր իննսուն և վեց ։ Եւ Սեբաստոս կոչեցաւ Օգոստոս որ է յաղթող ։

Եւ են ոմանք որ աստի թուեն զժամանակն Օգոստեայ ։ Եւ առաքեաց Օգոստոս զՏիբերիոս զօրավարն իւր և արար ընդ նոսա խաղաղութիւն ։ Եւ անտի գնացեալ ՚ի Արեւելեան աշխարհն, արար զնոսա հնազանդս ։ Եւ շինեաց Հերովդէս զՍամարիա, և Սեբաստիա կոչեաց յանուն կայսեր. և շինեաց քաղաքս բազումս և մեծացոյց զարքունիսն յԵրուսաղէմ ։ Եւ շինեաց զաշտարակն Ստրատոնեայ, և կոչեաց յանուն կայսեր. և իրքս այս գործեցան յառաջ քան զծնունդն Տեառն մերոյ Թէպէտ դրեցաւ այսպէս ։

Բայց Հերովդէս յաճախեաց ՚ի չարիս իւր և սպան զՄարի զկին իւր, և զամենայն արուեստագէտս և զիմաստունս Հրէից. և Տէր եհար զնա չարաչար ցաւովք յոտից մինչեւ ցգլուխն. և տրորեցաւ ամենայն մարմին նորա, և բժիշկք ոչ կարացին օգնել նմա. և եդին զնա ՚ի ջերմ ձէթ, եւ խստացաւ ցաւն. և կալեալ զգլխաւորս Հրէից և պատուիրեաց փեսային իւր Ալեքսին և Սողոմեայ քեռ իւրում զի սպանցեն զնոսա յելանել ոգւոյ նորա. զի ակամայ լացցեն Հրէայքն յաւուր մահուան նորա. զոր և արարին իսկ. զի նեղեալ ՚ի ցաւոց ըսպան զանձն իւր և եղեւ չարամահ յերեսուն և եւթն ամի արքայութեան իւրոյ ։

Այս Հերովդի էին կանայք ինն, և որդիք ութ ։ Ի Դոսիթոսէ կնոջէ ծնաւ Անթիպատրոս, սա եսպան զերկու եղբարս իւր, և սպան զնա հայրն իւր ։ Եւ Մարի դուստրն Հիւրկանեայ ծնաւ զԱղեքսանդրոս և զԱրիստաբուլոս, զոր սպան Անթիպատրոս, և զՀերովդէս զոր ոմանք կոչէին Անթիպատրոս. սա էառ և զՀերովդիադայ և սպան զՅովհաննէս ։ Եւ Մեղքոս Սամարացին ծնաւ զԱրքեղայոս զոր Օգոստոս Թագաւոր կացոյց 'ի տեղի հօրն ամս ինն ։ Կղէոպատրա ծնաւ միւս Հերովդէս, զՓիլիպպոս, զորոյ կինն առ Հերովդէս եղբայր նորա (1) և ըսպանաւ 'ի պատճառս կնոջ իւրոյ ։ Եւ Քաղըսյ ծնաւ զՓիլպոս ։

Եւ այս են որդիք որդւոց նորա, Արիստաբուլոս ծնաւ զՀերովդէս, որ թագաւորեաց 'ի Քաղկիդա ։ Եւ զԱգրիպպաս որ կոչեցաւ Հերովդէս, որ սպան զՅակոբոս գեղջայրն Յովհաննու ։ Սա մկրտեաւ ընդ հօրեղբօրն և առ զթագաւորութիւնն ՚ի նըմանէ , և սմա եղեւ որդի Ագրիպպաս որ յետ նորա թագաւորեաց ։ Եւ դստերք սորա Բերինիկայ և Դրուսեղա որ եղեւ կին Փելիքսի դատաւորի ։

---

(1) Ըստ խառն և չիոթդան անուանցս ըստ Ս. Գրոց կրկնեալ առաւել. որպէս Հերովդէս զոր ասացն 'ի վերոյ առեալ զՀերովդիադայ 'ի կընութիւն, և սպանեալ զՅովհաննէս, զՄկրտիչն անշուշտ, և ասա առէ ծնեալ 'ի Կղէոպատրայ Հերովդէս եղբայր Փիլիպպոսի. որ նոյն ինքն է, և առ 'ի կին զՀերովդիադայ զկին եղբօր իւրոյ Փիլիպպոսի. որոյ 'ի պատճառս եւ. Յովհաննէս սպանաւ ։

Իսկ իբրեւ թագաւորեաց Արքեղայոս ինն ամ տուաւ յաքսորս ՚ի Բիենան (1) քաղաք վասն չարեաց իւրոց։ Եւ թագաւորեաց Հերովդէս չորրորդապետ . և ՚ի նմին ամի մեռաւ Օգոստոս ։ Եւ առ զթագաւորութիւնն Տիբերիոս ամս քսան երեք ։

Իսկ ամենեցուն Տէրն դարձեալ յԵգիպտոսէ , մնայր ՚ի Նազարէթ լռելեայն օրինօք մանկանց ։ Յերեք հարիւր երեսուն և եւթն թուին՝ ՚ի չորեքտասան ամին Տիբերիայ, առաքեցաւ Պիղատոս դատաւոր Երուսաղեմի . և հնգետասան ամին Տիբերիայ գայ Տէրն մեր ՚ի մկրտութիւն ՚ի Յովհաննէ որդւոյ Զաքարիայ յամին հինգ հազար հինգ հարիւր երեսուն և եւթներրորդի ելիցն Ադամայ ՚ի դրախտէն՝ ՚ի վեցն Յունուարի ըստ Հռովմոց՝ ՚ի քսան և մի ՚ի Տբէթ ամսոյ ըստ Եբրայեցւոցն ։ Յամս Տիբերիայ կայսեր շինեաց Հերովդէս զՏապարիա և զԱրայիս (1)։ Իսկ Պիղատոս զպատկերն Զեւսայ եմոյծ ի տաճարն, և զգանձանակ տաճարին թափեաց ի ջրեջսն ։

---

(1) Մի օրի . Իբենան քա- քաղաք ։
ղաք ։ Մի օրի . ՚ի Քեննենէա

ԳԼՈՒԽ Ջ.

Յաղագս կարգաւ առաքելոցն որք կատարեցան ։

Յերեսներորդ ամի տնտեսութեան Տեառն մերոյ ընտրեցան Առաքեալքն և կոչեցան. առաջին Սիմոն Պետրոս՝ ի ցեղէն Նեփթաղեմի, որ եդ խորան առաջին յԱնտիոք, որ յամս Կղօդեայ եկ ի Հռոմ, և եղեւ անդ ամս քսան և եւթն. և ի Ներոնէ պսակեցաւ ։ Եւ Անդրէաս եղբայր նորա, որ քարոզեաց ի Նիկիա, և ի Նիկոմիդիա, և ի Սկիւթիա և յԱքայիա. և նախ սմա գրեցաւ աթոռն Եփեսոսի, որ փոխեցաւ ի Կոստանդնուպօլիս ։ Յակոբոս որդի Զեբեդեայ՝ ի ցեղէն Զաբուղոնի, որ չոգաւ ի Սպանիա, և դարձաւ յԵրուսաղէմ, և սպանաւ ի Հերովդիայ յութ ամի Տեառն չարչարանացն. և կայ մարմին նորա ի Յուբ Մարմարիկէ ։ Եւ Յովհաննէս եղբայր նորա յետ Ննջման Աստուածածնին գնացեալ յԵփեսոս կատարեցաւ յեւթներորդ ամի Տրայիանու ։ Փիլիպպոս՝ յազգէ Անդրեայ ի Բեթսայիդայ, քարոզեաց յԱփրիկէ, և կատարեցաւ 'ի Փիսիդա։ Բարդուղիմէոս՝ 'ի ցեղէն Իսաքարայ, յԱդաւիր գեղջէ. քարոզեաց 'ի Պարթեւս և եկեալ 'ի Հայք ներքին՝ խաչեցաւ 'ի Սանատրկոյ արքայէ. և հանաւ մորթ նորա։ Թովմաս՝ 'ի ցեղէն Յուդայ. քարոզեաց Պարթեւաց և Մարաց և Հնդկաց, և անդէն կատարեաց զկեանս իւր վկայութեամբ։ Մատթէոս՝ յազգէն Իսաքարայ 'ի Նազարեթէ. քարոզեաց Հրէից և մեռաւ 'ի Պաբաաղ, և թաղեցաւ յԱնտիոք. և յետ ժամանակի տարան զնա յայնկոյս ծովուն։ Սիմոն կանանացի՝ 'ի ցեղէն Եփրեմի, ննջեաց 'ի Համա, և գտաք ուրեք թէ 'ի Կուրիս։ Յուդա՝ որ կոչեցաւն Թադէոս, որ սակս իմաստութեան նորա կոչէին Ղեբէոս՝ որ է սիրտ և հոգի. քարոզեաց յԱսորիս և 'ի Հայս, և կատարեցաւ 'ի ներքին Հայս 'ի Բիւրուդիս տեղւոջ 'ի Սանատրկոյ. և գտաք ուրեք, թէ բերաւ յՈւռհայ։ Յակոբոս Ալփեայ՝ յազգէն Մանասէի, կատարեցաւ 'ի Սրուձ։ Յուդա մատնիչ՝ 'ի ցեղէն Դանայ 'ի Սկարիովտոյ, որ գնաց 'ի տեղի իւր։ Մատաթէ փոխանորդ նորա՝ յազգէ Ռուբենի, կատարեցաւ յերկիրն Մարդակերաց։

---

(1) Երկու. օրի. յաւելու. յանուն Տիբերեայ կայսեր ։

Եւ յետ սոցա երեւեցոյց Տէր եւս եւթանասուն երկու, որոց անուանքն են այս։

Ադդէ որ կատարեցաւ յՈւռհայ, Ախէ՝ որ կատարեցաւ ՚ի Միրինոսէ յԱբգարայ որդւոյն։ Անանիա՝ զոր Փաւլ զօրավարն եսպան ՚ի բարին սա էր որ զՊօղոս պաշտէր ՚ի Դամասկոս(1)։ Ղազար զոր յարոյց Տէր, ՚ի Կիպրոս կատարեցաւ։ Մելքեաւ՝ որ ՚ի Րոդոս ծովակալուր եղեւ։ Կեփաս կացեալ ՚ի Հեմս, եւ կատարեցաւ ՚ի Փիլիզոր իւրով մահուամբ։ Բառնաբաս՝ որ ՚ի Սամոս մեռաւ։ Սոսթենէս՝ որ ՚ի Պոնտոս ՚ի ծով ընկեցաւ։ Կիւրակոս որ յԱղէքսանդրիա ՚ի բանտի(2) մեռաւ։ Յովսէփ Փիլիտոս՝ որ զՏէրն թաղեաց ՚ի տան իւրում մեռաւ։ Նիկոդեմոս՝ որ յԵրուսաղէմ կատարեցաւ։ Շիղայ՝ որ ՚ի Փիլիպուս կատարեցաւ։ Յուդայ Յակոբեան որ ՚ի Պիրութ կատարեցաւ. եւ ըստ այլոց յԱրմի քաղաք Հայոց Յուդայ՝ Շապկու որդի ՚ի Խլաթ քարոզեաց եւ անդ կատարեցաւ։ Մարկոս որ կոչեցաւն Յովհաննէս յԱղխազու կատարեցաւ։ Ումնաս՝ ՚ի Սելտինէ կատարեցաւ։ Նիկէ ՚ի Պտունի կատարեցաւ։ Յասոն՝ գազանակուր եղեւ ՚ի Պոլոմպուս։ Մանաւլ որ այրեցաւ յԱքքայ։ Ռուփոս ՚ի

---

(1) Թերեւս լինի. Անանիա՝ ՚ի Դամասկոս։ զոր Փաւլ զօրավարն սպան ՚ի Բարին. սա էր որ զՊօղոս պաշտէր։

(2) Մի օրի. յաւելու տպագիրն։

Տրուք սպանաւ ։ Աղէքսանդրոս ընկեցաւ 'ի վիհ յԵրակլիապօլիս (1) ։ Սիմոն Կիւրինեայ սըրով կատարեցաւ ։ Օլինոս, որ 'ի մէջ ձիոյ կոխեցաւ ։ Կղէոպաս՝ խաչեցաւ յԵրուսաղէմ ։ Սիղուէս և Յակովբ եղբարք քարկոծեցան 'ի Սպարտայ ։ Թէոդորոս հրով կատարեցաւ 'ի Լաւոդիկէ ։ Դեստորիոս կատարեցաւ 'ի Բաղու ։ Եւիղիոն և Մամոսոն մտին 'ի քօշացւոց երկիրն և անդ կատարեցան ։ Յոնիաս 'ի Սամոս կատարեցաւ ։ Տիտոս 'ի Պաշրիտէ կատարեցաւ ։ Պատրուբաս 'ի Քաղկեդոն կատարեցաւ ։ Յասոն կրիտէ 'ի Խուզիա կատարեցաւ ։ Երմէ հովիւն յԱնտիոք Պիսիդա կատարեցաւ ։ Միւս Կիրակոս 'ի Կեսարիա կատարեցաւ ։ Խրիսիմոս 'ի Բզնունիս կատարեցաւ ։ Նարկէսոս 'ի Լատիկն կատարեցաւ ։ Երողոս 'ի Կեսարիա կատարեցաւ ։ Մամաւ 'ի Սիկիլիա հրով կատարեցաւ ։ Տէմոթ յԵփեսոս մեռաւ ։ Մարկոս աւետարանիչ յԱղեքսանդրիա կատարեցաւ ։ Ղուկաս աւետարանիչ 'ի Ղաւոս քաղաք կատարեցաւ ։ Ղեւի, 'ի Փուենիս կատարեցաւ սրով 'ի Խարոմնէ ։ Եվրեմիոս 'ի Կաշաւ կատարեցաւ ։ Նիկիտոս 'ի Տիբերիա աղոցեցաւ ։ Բոդոս, և Ղինոս յԱքայիա սպանան ։ Յովհաննէս եւ Պէուղոս ՚ի Բաղփաք գաղանաց արկան ։ Ստեփաննոս՝ յԵրուսաղէմ քարկոծեցաւ ։ Նիկիէս՝ սպանաւ յԵկեղեցին ՚ի խիսոնեայ իշխանէն ։ Մարտէլոս՝ ՚ի Պաղնամօտոս կատարեցաւ ։ Լիասօն ՚ի Պափիս կատարեցաւ ։ Զաքարիա այրւոյն որդի քարկոծեցաւ ՚ի Հուրինա. եւ միւս Զաքարիա ընդ նմա ։ Զաքէ եւ միւս Զաքէ կատարեցան յանապատն ։ Սիմոն բորոտն յԱմթայ(1) կատարեցաւ ։ Ուլումպոս եւ Ստեփանէ եւ Ստուգի ՚ի Տապարիա ՚ի բանտի մեռան ։ Եպենդէ ՚ի Գանգրա այրեցաւ ՚ի դատաւորէն Գէոկլրիտեայ ։ Ապելլէս որ Երակլեայ կատարեցաւ ։ Անանիա եւ Սիմոն ՚ի Բիւզանդիա սրով կատարեցան յեպարքոսէն ։

---

(1) Երկու օրի. յԵրապօլիս։

Այսոքիկ Թիւք պատուեալք եւ յորովայնէ ընտրեալք եւ յառաջ քան զլինելն աշխարհի նկատեալք (2) ։ Կազմեցան բաղկօք բանին եւ եղան հիմունք Եկեղեցւոյ. եւ սոքօք սկաւ հաւատն որ է Կաթուղիկէ եկեղեցի, որ է բնակարան փառացն Տեառն խոսուն աստեղօք բոցափայլեալ ՚ի փառս երկնաւոր փեսային ։

Յամս Տիբերիոյ կայսեր փայլէր իմաստութեամբ սքանչելին Փիլոն Աղեքսանդրիա ։ Սա գրեաց զամենայն պատահմունս Հրէից․ գրեաց և մեկնութիւնս արարածոցըն․ և վասն վաստակոց երկրի․ և վասն մտացն արդարոց ։ Զի յորժամ զարթնու ուղօլթէ և ոչ նզովէ․ գրեաց և վասն աւերման լեզուայ․ և վասն աշխատելոց 'ի վարդապետութիւն․ և վասն զանազան անուանց դրոց․ և վասն երկու կտակարանաց․ և հինգ ճառս վասն տեսլեան երազոց․ և հինգ ճառս վասն ելանելոյ հոգւոյ 'ի մարմնոյ․ և չորս՝ վասն օրինացն գրեաց և վասն արանցն որ յԵգիպտոս ըստ Քրիստոսի ճգնէին ։ Գրեաց եպերանս Պաւղոսի որ զանձն իւր Աստուած արար․ և այլ բազում ճառս խրատուց ։ Խօսեցաւ և վասն Քրիստոսի մարգարէաբար․ և յետ խաչին, հաւատաց եկելութեան նորա յարանցն որ յԵգիպտոս զուսումն Տեառն ունէին․ որք էին յաշակերտաց անտի առաքելոցն ։ Եւ յաւուրս Կղօդեայ կայսեր եղաւ գրեան նորա 'ի դիւանին արքունի ։

---

(1) Երկոր. օրին. ՚ի Յրամթաս ։

(2) Ոմանք՝ կատարեալք ։

Եւ 'ի ժամանակս Տեառն մերոյ գտաւ 'ի Հրէայսն եւթն հերձուած որպէս ասէ Յովսեպոս ։ Առաջին Դպրացն, որ կոչէին Օրինականք․ երկրորդ Ղեւտականք որ ունէին զաւանդութիւն ծերոցն․ Երրորդ Փաընծեցուոցն՝ որ մկրտէին յաճախ և հաւատան աստեղաց և բախտից. բայց հաւատան յարութեան. և խոստովանէին հոգի և հրեշտակ, և պահեն երկիցս 'ի շաբաթու, զերկուշաբաթ և զհինգշաբաթ։ Չորրորդ՝ Սադուկեցիքն որք ոչ խոստովանէին հոգի և հրեշտակ և յարութիւն. և առին զանուն և զուսումն 'ի Սադովկայ(1) քահանայէ։ Հինգերորդ՝ Անկրատողքն, որք ասեն թէ ոչ կարէ մարդ ապրիլ եթէ ոչ ամենայն աւուր մկրտի։ Վեցերորդ՝ որք շնչաւոր ինչ ոչ ուտեն և զՄովսէս և զմարգարէսն ոչ ընդունէին։ Նաև այլ գրեանս ունէին փոխանակ նոցա։ Եւթներորդ՝ Հրէութիւնն որ զօրութիւն գրոց ոչ իմանան, այլ 'ի գիրն հային. և մի Աստուած մի անձն դաւանէին, և պահեն զօրէնսն։

ԳԼՈՒԽ Է.

Յաղագս Աբգարու որ առաքեաց յԵրուսաղէմ նկարագիր վասն պատկերին Քրիստոսի։

ՅԻՍՆ և տասն ամին Տիբերեայ կայսեր Աբգար արքայ Հայոց և Ասորոց լուաւ ըզհամբաւ Տեառն մերոյ, և երկրպագեաց նըմա . և հաւատաց 'ի նա , և առաքեաց նմա թուղթ աղաչանաց 'ի ձեռն Անանէ հաւատարմին իւրոյ, գալ առ նա և բժշկել զնա 'ի ցաւոցն , որ գլխաւորեալ էր նմա 'ի Պարսս յառաջ քան զեւթն ամ. և թագաւորել ընդ նմա ։

---

(1) Երկու օրին. 'ի Դոսթեկայ.

Իսկ Տէրն խոստացաւ յետ խաչին իւրոյ և յարութեանն առաքել նմա բժիշկ յաշակերտաց իւրոց . և արժանի արար զնա թըղթոյ .. և երանեաց նմա ։

Եւ արքայն բարեբախտ առ անձուկակարօտութեան իւրոյ առաքեաց զՅովհաննէս նկարիչ բերել զպատկեր նորա , փոխանակ անձին նորա ։ Եւ նորա եկեալ և տեսեալ զՅիսուս , ջանայր ալեղել (1) զգեղ նորա 'ի դաստառակին Աբգարու , և ոչ կարէր զի փոխէր նա փառաց 'ի փառս , և ցնծայր 'ի հաւատս հեթանոսաց ։ Վասն որոյ խնդրեալ առ ինքն զկտաւն աղբիւրն գթութեան՝ դնէր երեսաց իւրոց , և նկարեալ լինէր տիպ նորա 'ի հանդերձեղէնն (2) և տայր ցնկարիչն ։

Եւ էր այս նախ քան զՔրիստոսի չարչարանսն եւթն աւուրբք ։ Եւ պատկերն բերաւ և տուաւ թագաւորին և բազում նշանք լինէին 'ի նմանէ (5) մինչեւ եկն Թագէտս Առաքեայն։ Եւ 'ի նոյն ամի կամաւոր մահն Տեառն խաչիւ, թաղումն, և յարութիւն, և կործանումն դժոխոց, և ազատութիւնն արարածոց, և յետ քառասուն աւուր համբառնալն առ հայր։

---

(1) Երեք օրի . նկարել ։

(2) Երեք օրի . 'ի դաստառակին ։

(5) Մի օրի . յաւելու . և բժշկեաց զկէս գողութիւն թագաւորին ։

Գրէ և զայս Յովսեպոս և ասէ այսպէս յաւուրս մեր երեւեցաւ այր մի որում Յիսուսն անէին, և 'ի ձեռն բազում նշանացն զոր առնէր, յայտնի երեւէր թէ նա լցէ Քրիստոսն. և վասն նախանձու մատնեցին զնա անօրէնքն Պիղատոսի դատաւորին, և սպանին զնա խաչիւ. և յետ երից աւուրց տեսին զնա կենդանի. և ոչ մեկնեցան 'ի սիրոյ նորա հաւատացեալքն 'ի նա։ Եւ մինչեւ ցայսօր աճէ հաւատքն նորա. և ստուգեցաւ թէ նա ինքն է Քրիստոսն որդի Աստուծոյ կենդանւոյ։

Եւ ասէ Յովսեպոս թէ 'ի նոյն ամի 'ի տօնի Պենտակոստէին Պիղատոս եմոյծ զպատկերն կայսեր 'ի տաճարն. և յայնժամ ձայն լսելի լինէր թէ գնամք, ահա գնամք աստի, և ոչ եւս այլ դարձցուք։ Յիշէ և զայս Փիլոն յերկրորդ գիրսն իւր։

Իսկ յաղագս անկար պատմուճանին Տեառըն. ասէ Սուրբն Եփրեմ. թէ արկին զինուորքն վիճակս վասն չպատառելոյ, և ել վիճակն զինուորի մի՝ որ ընդ ձեռամբ Պոնկիռանոսի. և առ զնա Պունկիանոս հարիւրապետութիւն, և եբեր զնա յաշխարհն Գաղատացւոց 'ի քաղաքն իւր Մոքսան (Ա). և պատուի անդ մինչեւ ցայսօր: Եւ միւս հարիւրապետութեան ղազիկեցի եբեր զիւր մասն հանդերձին 'ի քաղաքն իւր Փուդ, 'ի մայրաքաղաքն Եգերացւոց, և արկեալ 'ի պուտնարդ ապակեղէն կախեալ կայ յԵկեղեցին անհպելի յամենեցունց. հուպ եկեալ բերան ապակւոյն և տեսանի յամենեցունց: Եւ զայս պատմուճան անկար հիւսեաց քոյրն Աբգարու. և առաքեաց Տեառն մերոյ 'ի ձեռն Անան սուրհանդակի:

Իսկ զկնի փրկաւէտ չարչարանաց Տեառն գնաց Ագրիպաս ամբաստանել զՀերովդէ հօրեղբօրէն իւրմէ. և առաքեաց կայսրն կալաւ զՀերովդէս կնաւն Հերովդիադաւ: Եւ եղաւ 'ի բանտի 'ի Գաւանիա քաղաքի. և յետ աւուրց սպանան երկոքին:

Իսկ Աբգար արքայ երկիցս գրեաց առ Տիբեր վասն Քրիստոսի աստուածութեանն և տրտունջ զՊիղատոսէ: Եւ առաքեաց Տիբեր կոչեաց զՊիղատոս. և զամենայն ինչ տուգեալ 'ի նմանէ, սպան զնա: Գրեաց Աբգար. և 'ի Բաբելոնի առ Ներսեհ արք-

---

(Ա) Երկու. օրի. Մաքսան:

քայ․ Նոյնպէս և սա Պարսից Թագաւորն հաւատայր ՚ի Քրիստոսի աստուածութիւնն։ Եւ սա ՚ի բարի կամացն Աստուծոյ եղեւ. զի մի կրեսցէ աւետարանն հակառակութիւն ՚ի նորութեանն խորում, մինչեւ կատարելապէս հաստատեսցի․ որպէս և եղեւ ՚ի ժամանակս այսր Թագաւորաց ընդարձակութիւն և խաղաղութիւն քարոզողաց բանին․ և յանկարծակի Թռեաւ աւետարանն ընդ չորս կողմանս աշխարհի ՚ի ձեռն աստուածասէր և նախընծայ այսր Թագաւորի, որ յառաջեաց ձեռն ետ ՚ի Քրիստոս․ ըստ Դաւթայ մարգարէի գնալով ընդ ոլորտս երկրի սրբոց Առաքելոցն՝ հրամանաւ Հոգւոյն որպէս և գրեցաք վերագոյն։

Իսկ Տիբերիոս կեցեալ ամս եւթանասուն և ութ, և թագաւորեալ ամս քսան երեք, մեռաւ։ Եւ թագաւորեաց Գայիոս ամս երիս և ամիսս չորս․ և եգիտ զԱգրիպաս կապեալ ՚ի Հռովմ ՚ի Տիբերէ․ և հանեալ զնա առաքեաց թագաւոր Հրէից։ Եւ զՓիլիքս դատաւոր Եգիպտացւոցն, ետ նմա իշխանութիւն հոգալ և զՀրեայսն խընամով։ Վասն որոյ նեղէր զնոսա խստագոյնըս․ և զաւուրք տեղիս նոցա պղծէր զոհիւք պղծովք զամս եւթն․ վասն որոյ առաքեցին զդեսպանս առ Գայիոս աղաչել զնա, որոց մի էր և Փիլոն փիլիսոփայ, և ոչ լուաւ նոցա այլ և սրտմտեցաւ յոյժ. և առաքեաց 'ի Պատրոնիա իշխանն Ասորոց դնել զպատկեր նորա յամենայն մեհեանս և 'ի տաճարն Հրէից պաշտել իբրեւ աստուած, ըստ որում և արարն իսկ. և կատարեցաւ ասացեալն 'ի Դանիէլէ, պղծութիւն աւերածոյն:

Յայսմ ժամանակի Սիմոն և Մենանդրոս և Կերինթոս երեւեցան:

Իսկ Գայիոս սպանաւ 'ի ներքինեաց միջէ իբրեւ զմարդ մի չար և մահկանացու. և թագաւորեաց Կղօդիոս ամս չորեքտասան:

Իսկ Ագրիպպաս կեցեալ չորրորդապետ ամս երիս. և թագաւորեաց ամս ութ և յօժար կամօք ընկալեալ զպատիժն Աստուծոյ յամբոխէն՝ եհար զնա հրեշտակ Տեառն և մեռաւ:

Յայնմ ժամանակի 'ի զատկի տօնին ամբոխեալ Հրէիցն 'ի տաճարին սպանին անձինս երեսուն հազար: Եւ կացոյց Կղօդիոս թագաւոր Հրէիցն զԱգրիպ (1) որդի Ագրիպպայ և զՓիլիքս առաքեաց դատաւոր Գալիլեացւոց եւ Սամարացւոց ։ Եւ Կղօդիոս վախճանեցաւ առ զթագաւորութիւնն Ներոն որդի նորա ամս երեքտասան ։ Եւ առաքեաց զՓեստոս դատաւոր եւ եհան զՓելիքս , որոյ առաջի եկաց Պօղոս . եւ դարձեալ հանաւ Փեստոս եւ եկաց 'ի տեղի նորա Ալբինոս. եւ զսա եւս եհան Ներոն եւ ետ զՖլորոս ։ Յորոյ աւուրս ապստամբեցին Հրեայք 'ի Կայսերէ ։ Ի սոյն ժամանակս հուր էջ յերկնից եւ այրեաց շինուածս բազումս եւ ամբոխ մարդկան ընդ նոսա ։

---

(1) Երկու օրի. զԱգրիպպաս:

Եւ յետ այսորիկ խստասրտեցաւ Ներոնի սպան զընտանիս իւր . եւ յերեքտասան ամի արքայութեանն իւրոյ սպան զԱռաքեալսն . եւ յարոյց հալածանս եկեղեցւոյ . եւ առաքեաց յԵրուսաղէմ զՎեսպիանոս (1) եւ զՏիտոս որդի նորա վասն ապստամբութեանն Հրէից ։

Իսկ Յովսեպոս զօրավար Հրէից եւ իմաստասէր , ամրացեալ կայր 'ի Յուդբուղայ (2) Քաղաք . եւ պնդեաց Վեսպիանոս եւ առ զքաղաքն , եւ սկսաւ կոտորել զնա . եւ չոգաւ Յովսեպոս ընդ առաջ նորա եւ ասէ . աւետիս քեզ Վեսպիանէ , զի 'ի մօտոյ թագաւորեսցես . քանզի վճարեաց Ներոն զկեանս իւր . որպէս և եղեւն ։ Քանզի Ներոն ատեցեալ յամենեցունց սպան զանձն իւր ։

---

(1) Երկու օրի . Վեսպեսիանոս ։

(2) Երկու օրի . 'ի Յուդբուլղայ ։

Եւ թագաւորեաց Գաղբաս ամիս եւթըն և սպանաւ 'ի մէջ Հռովմոց . և թագաւորեաց Ուրիտալիս 'ի Գերմանիա ։ Եւ Աւթեմոն 'ի Հռովմ . որ և յետ երից ամսոց սպանաւ ։ Եւ թագաւորեաց Բեդալիմոս (1) ամիս ութ . և լեալ ամբոխ 'ի վերայ նորա սպանին զնա ։

Իսկ Վեսպիանոս առեալ զՅովսեպոս պատուով ընդ ինքեան պահէր և նստէր շուրջ զԵրուսաղեմաւ ։

Եւ 'ի հասանել այսմ համբաւու առ զօրսն որ ընդ Վեսպիանոս , յանկարծ .քարոզեցին զնա թագաւոր և Եւտուկրատոր ։ Եւ նա զուարճացեալ յանձն եթող զորդին 'ի վերայ Երուսաղեմի , և ինքն չոգաւ յԵգիպտոս և արար զնա հնազանդս ։ Եւ զայնր կոչմամբ չոգաւ 'ի Հռովմ . և թագաւորեաց 'ի վերայ նորա ամս ինն . և ամիս տասն ։ Իսկ Տիտոս առ զԵրուսաղէմ 'ի Զատկի տօնին . և կորոյս Հրէայս բիւրս հարիւր քսան եւ վեց . և քակեցաւ պարիսպն և այրեցաւ հրով .քան զվերջինն աւերն յահկի ամենայնն ։

---

(1) Մի օր . Քիլդալիոս .

Առումն Երուսաղեմի և աւերն լինին յԱդամայ ամք հինգ հազար հինգ հարիւր(1) երեսուն և եւթն. և ՚ի յարութենէ Տեառն մերոյ ամք քառասուն. և յառաջին շինուածէ տաճարին մինչ յետին յաւերն ամք հազար հարիւր երեք ։

Յերկրորդ ամի Վեսպիանոս առաւ Երուսաղէմ ։ Եւ ժողովեալքն անտի գաղութ երեք հարիւր բիւր էին ։ Եւ յայնմ զատկին ածին(2) ՚ի զենումն քսան և հինգ հազար գառինս. և տասն այր ՚ի մի գառն էին սուրբք և անսուրբք. ոչ կարէին ուտել, և որք կերանն երկերիւր տասն բիւրք էին. վեց բիւր սրով մեռան. հարիւր տասն բիւր սովով. տասն բիւր գերի վարեցան. ՚ի տասն եւթն ամէն ՚ի վեր յԵգիպտոս տարան յաղիւսագործութիւն. և ՚ի տասն եւթանէն ՚ի վայր բաժանեցան զօրացն ։ Եւ այսպէս խնդրեցաւ արիւն որդւոյն Աստուծոյ ։

Յետ քառասուն ամի տուաւ նոցա ժամանակ ապաշխարութեան ՚ի մարդասիրէն Աստուծոյ ։ Եւ տարաւ Տիտոս ՚ի Հռոմ զխիւնան զերկու պնչանաւորս և դուռն մի զտաճարին ։ Եւ աստ բարձաւ թագաւորութիւնն 'ի Հրէաստանէ և յԵգիպտոսէ և յԱսիոյ և Գերմանիկոյ. և որբեցին միայն Հռովմայեցիքն ։

---

(1) Երկու օրի. չորս հարիւր ։

(2) Մի օրի. ածան ։

Յետ Վեսպիանեայ թագաւորեաց Տիտոս որդի նորա. և յերկրորդ ամին Աստուած քարոզեցաւ և հաւատոյ ամբոխն, և եհար զնա հրեշտակ տեառն և մեռաւ ։ Եւ թագաւորեաց Դոմետիանոս (1) եղբայր նորա ամս տասն և եւթն և ամիս հինգ. սա հալածեաց 'ի Հռովմէ զամենայն աստեղագէտըս և զփիլիսոփայս և աւերել ետ զայգեստանսն ։ Եւ յաւուր սորա աճեաց Քրիստոնէութիւն. վասն զի եհարց Պատրուքաս (2) իմաստասէր զվարդապետն իւր զԱսքինոս և ասէ. զինչ է ուսումն այս Քրիստոնէութեանս որ հաւատան առն խաչելոյ այսքան բազմութիւն. այլ և զարմանամ զի և Թէոդորոս իմաստասէրն Աթենայ, և Ափրիկանոս Աղեքսանդրացի և Մարտինոս 'ի Բոսթա-հաւատային 'ի նա թողեալ զվայելչութիւն աշխարհի և զուսումն իւրեանց ։ Եւ պատասխանի վարդապետն և ասէ. մի զարմանար ընդ այդ, զի կարծեմ ես, թէ նմա և Աստուածք հնազանդին. և նա ասէ. զիարդ.

---

(1) Երկու օրի. Դեմետրիանոս ։

(2) Երկու օրի. Պատրուկուլոս ։

և ասէ ցնա. քանզի անմեղութիւն և խոնարհութիւն և անընչութիւն է քարոզութիւն նորա, և է դա վերագոյն ամենայն քարոզչաց:

Իսկ Դոմետիանոս արգել առնել զորակամս ներքինիս. Յաւուրս սորա երկամսոյ անուանք փոխեցան. Սեպտեմբեր՝ Գերմանոս. և Հոկտեմբեր՝ Պարթինիկոս: Իբր հրաման ետ Դոմետիանոս զազգն Դաւթի ջնջել՝ զի մի մնասցէ ժառանգ թագաւորութեանն Հրէից. և ըզբազումս հալածեաց ի Քրիստոնէից ընդ որս և զՅովհաննէս աւետարանիչն.

Զայսու աւուրբք Ապողոնիոս տիանացի ի ձեռն արուեստին իւրոյ կազմեաց տելեսմն քաղաքաց դիւական հնարիւք և ասաց, աւաղ ինձ զի որդին Մարիամու կանխեաց քան զիս. զի ես ունէի հնազանդել զաշխարհս:

Իսկ Դոմետիանոս վասն խստութեան իւրոյ սպանաւ և թագաւորեաց Ներուա ամ մի. և աստուած քարոզեցաւ ի Սինկղիտոսէն, և հիւանդացեալ մեռաւ չարաչար

Իբր թագաւորեաց Տրայիանոս ամս տասն և ինն, սա հալածեաց զեկեղեցի սուրբ և ի սմանէ պակասեցան Հռոմայոն Իշխանեանց

Երուսաղեմի Եպիսկոպոս՝ և Իգնատիոս Անտիոքու ։ Բայց զՅովհաննէս յաքսորիցն Ներուա դարձոյց և կեցք զնա ասեն ։ Եւ Յուստոս տիբերացի Հրէից պատմագիր աստ էր ։ Իսկ Պլինոս (1) Սեկնդիոս հրամանաւ Թագաւորին զբազում կոտորեաց ՚ի Քրիստոնէից և ապա զղջացաւ և գրեաց առ Թագաւորն և ասէ․ ամենայն իրք բարի է Քրիստոնէից․ բայց զի կռոց ոչ զոհեն և ընդ առաւօտս երկրպագեն Քրիստոսի ։ Եւ նա գրեաց և ասէ, ընդէր զդոսա և մի խնդրեք ։

Յաւուրս յայսմիկ ապստամբեցին Հրեայքն յԵգիպտոս և եդին իւրեանց Թագաւոր Լուքասոն (2) անուն, և եկին յԵրուսաղէմ ։ Եւ առաքեաց Տրայիանոս եւ կոտորեաց զնոսա, և մնաց ինքն իշխան ՚ի վերայ Հրէից ։

Յայսմ ժամանակի Հրեայքն որ ՚ի Կիւրոս կռուեցան ՚ի վերայ Սաղամինայ քաղաքին. և կոտորեցին զՅոյնսն որ ՚ի նմա․ Նոյնպէս և որք ՚ի Լիբեայ և ՚ի Կիւռենեական աշխարհն էին ամբարձին զգլուխս իւրեանց և կորեան ինքեանք ։

Զայսու ժամանակօք էր Սեկունդոս փի

---

(1) Մի օրի․ Պլինիանոս ։ Մի օրի․ Պլինիոս ։

(2) Մի օրի․ Լուկիասոս ։ Մի օրի․ Լուկասոս ։

ռակայն։ Եւ ՚ի Հռովմ ոսկեղէն տուն այրեցաւ հրով։ Եւ ՚ի Գաղատիայ երեք քաղաք շարժմամբ կործեաւ (1)։

Յետ Տրայիանոսի թագաւորեաց Ադրիանոս ամս քսան և մի։ Ի չորրորդ ամի սորա թագաւորքն որ յՈւռհայ՝ բարձան. և մնաց ՚ի մեծն Հայք թագաւոր։

Ադրիանոս ինքնակալ և հայր աշխարհի անուանեցաւ զի զմուրհակս պարտուց այրել ետ։ Ի չորեքտասաներրորդ ամին սորա ապստամբեցին Հրեայքն խաբեալ յառնէ միոջէ որոյ անուն Աստղ։ Եւ առաքեաց Ադրիանոս կոտորեաց զնոսա և հալածեաց զամենայն Հրեայսն որ յԵրուսաղէմ, և քանդել հրամայեաց զքաղաքն և առ ընթեր նորա հրամայեաց շինել քաղաք. և անուանեաց Իղու որ է արեգակն. և բնակեցոյց ՚ի նմա Քրիստոնեայս և հեթանոսս. և զՀրէից ականջսն կտրել հրամայեաց, զի նշանաւոր լիցին. եւ յԵրուսաղէմ հայել մի իշխեսցեն աչօք։

Ի քսաններրորդ առաջներրորդ ամի սորա եղեւ առաջին ժողովն ՚Նիկիոյ քառասուն երեք Եպիսկոպոսաց, վասն Սաբելի Լիբացւոյ աղանդին. և նզովեցին զնա որ մի անձն ասէր զԵրրորդութիւնն և Վաղեդիանոս որ ասէր զմարմինն Քրիստոսի յերկնից բերեալ։ Յաւուրս սորա էր Ակիւղաս թարգմանիչ և աստեղագէտ։

---

(1) Երկու օրի. կործանեցաւ։

Զկնի Անդրիանոսի թագաւորեաց Տիտոս Անտոնիոս, որ կոչեցաւ Սեբաստոս և արդար. և որդիք իւր ընդ նմա թագաւորեցին ամս քսան երկու։ Իսկ Անտօն աշխարհն հայր թարգմանի։

Ի սորա ժամանակս Յուստինոս Նիկիւպօլսեցի գնաց 'ի Հռովմ և ետ թուղթ աղաչանաց թագաւորին. և դադարեաց հալածումն Քրիստոնէից։ Յաւուրս սորա երեւեցան Կերդոն որ է Մարկոն. և Մարկոս եկեալ 'ի Հռովմէ ասացին ոչ գոլ զՅիսուս Քրիստոս որ 'ի մարգարէիցն քարոզեցաւ որդի Աստուծոյ, և ոչ գոլ յարութիւն, և 'ի վերայ մկրտելոյն ասէին յանուն հօր երեւելոյն, և յանուն մօրն ճշմարտի, և յանուն որդւոյն որ էջ 'ի վերայ Աստուծոյ, և այլ անուանս բաշխէին։

Իսկ 'ի թուին Ասորոց չորս հարիւր եւթանասուն և հինգ, թագաւորեաց Մարկոս Աւրելիոս ընդ որդւոյն Անտոնի և Լիւկոսի ամս տասն և ինն. յառաջին ամին սորա Վաղքէշ թագաւորեալ Պարսից եկն.

յաշխարհն Հռովմայ. և բազում գաւառս աւերեաց. եկին ընդդէմ նորա որդիքն Սերեղեայ և հալածեցին զնա. և հնազանդեցին զՊարսս և զՊարթեւս. և Լիւսիոս կայսր անուանեցաւ:

Եւ եղեւ այր պատերազմ ընդ Հռովմայեցիսն և ընդ Գերմանացիս. և ընդ Մկորուտոց և ընդ Սամասա (1) և ընդ Գալլիմացիս: Եւ դարձեալ զօրացեալ Լիւսիոս յաղթեաց նոցա և կոչեցաւ Սատուկարտոր:

Եւ զկնի մահուանն Անտոնի էառ ընկեր թագաւորութեան իւրոյ զԿոմիդոս որդի եղբօր իւրոյ. զի նեղէին յոյժ շրջակայքն զնոսա: Եւ թագաւորեաց Կոմիդոս ամս երեքտասան. և հեղձուցին զնա ի սան ձիոց: Եւ յետ նորա թագաւորեաց Պերտինաքս ամիսս վեց և սպանաւ:

Եւ թագաւորեաց Սուրինոս ամս տասն և ութ. և յառաջին ամին նորա եղեւ պատերազմ մեծ ընդ Հրեայս և ընդ Սամարացիս: Եւ յհինգերորդ ամի յարքայ հալածանս եկեղեցւոյ, և յոլովք վկայեցին:

Եւ ել ազգ մի յարեւմտից հիւսիսոյ և գնաց ընդդէմ նորա. Սուրինոս և սպանաւ: Եւ թագաւորեաց Անտոն որդի նորա ամս եւթն։ Սա դարձոյց զաքսորեալսն 'ի հօրէ իւրմէ, եւ 'ի նոցանէ էր Աղեքսանդրոս եպիսկոպոսն Երուսաղեմի։ Եւ սպանաւ Անտոն 'ի մէջ Ուռհայու եւ Խառանու։ Եւ թագաւորեաց Մակար ամ մի եւ սպանաւ։ Եւ թագաւորեաց Անտոնինոս ամս չորս։ Յաւուրս նորա շինեցաւ Նիկոպօլիս յերկրին Փղշտացւոց որ է Էմմաւուս։

---

(1) Ձեռ. Սամասաս. ան. Սարմատաց:

Եւ զկնի նորա թագաւորեաց Աղեքսանդր Մամեայ որդի կնոջ հաւատացելոյ եւ երկիւղածի, եւ եղեւ յոլով օգուտ քրիստոնէից։

Ի թուին Ասորոց հինգ հարիւր քառասուն երկու թագաւորեաց Պարսից Արտաշիր որդի Փափակայ (1) սկիզբն վերջին թագաւորութեանն Պարսից որ տեւեցին ամս չորս հարիւր տասն եւ ութ, որ եւ Սասանեանք կոչին թագաւորք քսան եւ եւթն, մինչեւ ցթագաւորութիւնն Արաբացւոց Մահմետին։

Յետ Աղեքսանդրի թագաւորեաց Փիլիպպոս ամս եւթն եւ խաղաղացան Քրիստոնեայք։ Յառաջին ամին նորա թագաւորեաց Պարսից Շապուհ որդի Արտաշրի ամս երեսուն եւ մի. եւ հազար ամ լցաւ շինութեանն Հռովմայ ։ Յետ այսորիկ Դոքսիոս սպան զՓիլիպպոս որդւովն, և թագաւորեաց ամ մի. և սպանաւ ’ի Բուրիդոս. և թագաւորեցին Բուլոս և Բուրինոս և Գաղիոս և Բալոն ամ մի ։ Եւ զկնի նոցա թագաւորեցին Ուլերիանոս և Գաղերոս ամս տասն և ութն. և յարուցին հալածանս Եկեղեցւոյ ։

---

(1) Մի օրի. Փակենայ։

Իսկ Շապուր թագաւորն Պարսից ապականեաց զԱսորիս և զԿիլիկիա և զԿապադովկիա գերութեամբ. և Գոդացիք անցեալ ընդ Դանիս գետ. գերեցին և նոքա զաշխարհն Հռովմայ. և ապա դադարեաց Գաղերոս ’ի հալածելոյ զՔրիստոնեայս. և աճեաց Եկեղեցի ’ի նշանացն որ գործիւր ’ի ձեռն սքանչելի արանցն ։

Յետ սորա թագաւորեաց Գաղատիս ամ մի. և զկնի սորա Աղուրիս ամս վեց. սա ած Հռովմայ շրջապատ պարիսպ մի այլ. և ապա մարտեաւ ընդ հաւատս մեր և եղեւ շանթակէզ ’ի Տեառնէ ։

Եւ թագաւորեաց Տակիտոս ամս վեց. և սպանաւ ’ի Պուտոս ։ Եւ թագաւորեաց Պուղերինոս և յետ սակաւուց սպանաւ ’ի Տարսոն ։ Իսկ զկնի Շապուրի թագաւորեաց Պարսից Որմիզդ ։ Ի թուին Ասորոց հինգ հարիւր իննսուն երեք ծնաւ Կոստանդիանոս։

Եւ զկնի Պուղերիանոսի Թագաւորեաց Պրոբաս ամս եւթն. և 'ի նոյն ժամանակս Թագաւորեաց Պարսից Վահրարան ամս երիս։ Եւ Յետ նորա Վահրայ որդի իւր ամըս տասն և եւթն։ Ի սորա աւուրս Մնկղիտոսն ամբայուցեալ զՄնտաք ապստամբեաց. և սպանին զնա զօրք Թագաւորին։

Իսկ յետ Պրոբայ Թագաւորեաց Կարոս, և որդիք իւր Կարին և Կարինոս և Նումերոս ամս երկու. Կարոս մեռաւ 'ի Միջագետս. և Կարինոս 'ի պատերազմի 'ի Գամբացւոց սպանաւ, և Նումերոս սպանաւ յԱփրիկէ. և Թագաւորեաց Մնկղիտոսն. և աստի սկըսանի Թուականն Դիոկղետիանոսի, որ է Ասորւոց հինգ հարիւր իննսուն և չորս. զի ետ Մնկղիտոսն զԹագաւորութիւնն Դիոկղետիանոսի. և 'ի սորա կամաց Թագաւորեցին Մաքսիմիանոս և Մաքսենդէս որդի իւր, որոց փեսայացաւ Դիոկղետիանոս։

Եւ 'ի սոյն ժամանակս Թագաւորեաց 'ի Գալլիա և 'ի Բրիտոնիայ Կոստանդիանոս։ Եւ Մաքսենդէս ունէր զՀռոմ. և Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս ունէին զկողմանս արեւելից, և կային միաբանութեամբ. յորում ժամանակի ապստամբեաց Եգիպտոս . և չօգաւ զօր 'ի հրամանէ սոցա , և հնազանդեցան ։ Դարձեալ 'ի մետասան ամին Դիոկղետիանու Թագաւորեաց Պարսից Ներսեհ ամս եւթն . և յետ նորա Որմիզդ որդի իւր ամս հինգ ։ Եւ 'ի տասն և ինն ամին Դիոկղետիանու զօրացաւ հալածումն Քրիստոնէից և քակեցան Եկեղեցիք ։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս Թէ սով սաստիկ եղեւ 'ի Դիոկղետիանոսի ժամանակին ։

Եւ եղեւ սով սաստիկ մինչեւ եղեւ մոթ մի ցորեան երկու հազար հինգ հարիւր դահեկան արծաթի ։

Եւ եհար Տէր խոցիւ զվիրտն Դիոկղետիանու , և զղջացաւ և յանձնեաց զմասն իւր Մաքսիմիանու . և նա եւս չարագոյն եղեւ քան զնա յամբարշտութիւնսն . և անկան երկոքեան Թագաւորքն յախտս դըժնեայս , և դադարեցուցին զհալածումն . և խնդրեցին աղօթս 'ի Քրիստոնէից , և ոչ կացին մնացին 'ի զղջմանն , որպէս Թէ Աստուածքն նոցա ոչ կամին . վասն որոյ և տանջեցաւ աշխարհ տարաժամ մահուամբ . զի զտասն այր գնէին 'ի մի գերեզման ։ Այլ և երաշտով պատուհասեալ լինէր և ազգի ազգի ցաւովք . և Թագաւորքն այնոքիկ վճարեցին զվարս (1) իւրեանց ։ Իսկ Կոստանդիանոս Թագաւորն Գալլիոնի ունէր երկու կանայս , զՀեղինէ և զԹէոդորէ (2) դուստր Մաքսիմիանոսի ։ Սա յութերրորդ ամի Թագաւորութեան իւրոյ էառ իւր հաղորդս և Թագաւորակից զԿոստանդիանոս որդին Հեղինեայ . և յետ երից ամաց վճարեցաւ . և տիրեաց որդին միահեծան ։

Բայց Իգնատիոս մելտենացին ասէ թէ 'ի Թագաւորելն Կոստանդիանոսի չորս Թագաւորք ունէին զերկիր Սեւերոս , Մաքսիմոս , Մաքսինդէս և Մաքսիմիանոս միաբան 'ի հալածանս Եկեղեցւոյ ։ Եւ 'ի մեռանիլն Սեւերեայ իշխանք նորա ետուն զԹագաւորութիւնն Կոստանդիանու ։ Եւ զԼիկիանէս փեսայ նորա Կեսար կարդացին ։ Եւ յետ եւթն ամի Թագաւորութեան իւրոյ Կոստանդիանոս կալաւ իւր հաղորդ զԼիկիանէս ։ Յայսմ ժամանակի Թագաւորէ Պարսից Շապուհ ամս եւթանասուն ։

Իսկ Կոստանդիանոս գնաց պատերազմել

---

(1) Մի օրի . զկեանս ։ (2) Երկու օրի . Դէոդորա

ընդ. Մաքսինդեայ 'ի Հռոմ. և մինչդեռ գնայր եղեւ ազդումն ինչ 'ի միտս նորա և ասաց. Ես գիտեմ զի կուռքդ չօգնեցին ինչ առաջին Թագաւորայն. և ասաց եթէ օգնէ ինձ Աստուածն Քրիստոնէից, նմա երկրպագանեմ ես.

Եւ 'ի հասարակ աւուրն տեսանէր առաջի իւր նկարեալ յօդն նշան խաչի (1) և գիր 'ի նմին ձեւացեալ այսու. յաղթեա 'ի տեսիլ ամենայն զօրացն. և անկաւ ահ 'ի վերայ նոցա. Եւ յայնմ գիշերի երեւեալ նմա Քրիստոս ասէ. արա զօրինակ երեւելոյն քեզ (2) և յաղթեսցես. և զարթուցեալ առաւօտուն արար այնպէս, և հրամայեաց առաջի իւր տանել. և այն եղեւ. 'ի կրօնս խաչ տանել առաջի զօրաց ըստ Քրիստոսի.

Եւ 'ի խմբել պատերազմին ել հողմ բռնութեան 'ի նշանէ խաչին, և ելից զամբարտաւանն 'ի Տիբերոս գետ. և տիրեաց Կոստանդիանոս Հռոմայ. և հաւատացին 'ի Տէր նաեւ կին իւր Դիկղիդա դուստր Դիոկղետիանոսի, և Լիկիանէս փեսայ իւր.

Բայց Լիկիանէս ոչ պահեաց զհաւատսն և սպան զնա Կոստանդիանոս. Ոմանք ասեն

---

(1) Մի օրի. յաւելու աստեղօք.

(2) Մի օրի. ընդ քեզ և ընդ ժողովրդեան զօրաց.

Կոստանդիանոս խաբեալ 'ի կնոջէն ուրացաւ, և հալածէր զԵկեղեցի Աստուծոյ մինչև բորոտեցաւ 'ի Տեառնէ . և 'ի ձեռն Սեղբեստրոսի մկրտեալ՝ ողջացաւ ։ Այլ Յովհաննէս ասիացին զկիրքս զայս հօր նորա ասէ Կոստանդեայ կրել. և հաւատացեալ 'ի Տէր և հարսն առեալ զՆիկղիդա, որ ոչ ետ գնալ որդւոյն 'ի ճանապարհ հօր իւրոյ . մինչեւ երեւմամբ երկնաւոր լուսոյ երկոքին հաւատացին 'ի Քրիստոս սրտի մտօք . վասն որոյ և սպառեցան ամենայն Թշնամիք Եկեղեցւոյ. և եղեւ ինքնակալ Կոստանդիանոս ։

Բայց յիշեսցուք տառանոր զբանս իմաստնոյն Թէոդորեայ որ ասէր՝ Թէ նկարիչք ըզտախտակ և զորմ զարդարեն 'ի վայելս աչաց. իսկ վիպասանք՝ զպատմութիւնս բանիւ զարդարեն նշանաւոր իրօք ։

Արդ զայսու ժամանակօք երեւէր արեգակն արեւելեան սքանչելին Գրիգորիոս Պարթեւն . որ և մեծամեծ հրաշիւք և նորագոյն նշանօք լուսաւորէր զբովանդակ Հայս, զվիճակն Թադէի և Բարդողիմեայ, նմանեալ նոցա ամենեւին . նա մկրտեաց զՏրդատէս Թագաւոր զազգայինն իւր . և առեալ ընա գնայր 'ի խնդակցութիւն Կոստանդիանոսի բազում սքանչելագործութեամբ 'ի ճանապարհին :

Եւ ելանէր թագաւորն Կոստանդիանոս ընդ առաջ նոցա, և առնէր նաւակատիս գալստեան նոցա ամենայն արքայութեամբ իւրով :

Եւ խորհեալ 'ի միասին զկարգս Եկեղեցւոյ, և զօգուտ աշխարհի. և ուխտեալ միմեանց անլքելի դաշամբք դառնային յաշխարհն իւրեանց երեւելի փառօք և պարգեւօք (1) :

Իսկ Կոստանդիանոս խաղաց գնաց 'ի Բիւզանդիոն և ընդարձակեաց զնա. և յաւել 'ի նա չորս միլ, և զարդարեաց զնա զարդուք յերրորդ ամի թագաւորութեան իւրոյ, և յանուն իւր կոչեաց : Շինեաց 'ի նմա մեծ եկեղեցի յանուն Եռինեայ. և միւս ևս յանուն Առաքելոցն. և անդ փոխեաց զարքունիս Հռովմայ. և եդ զամենայն հոգս իւր ընդ Աստուծով. և ետ հրաման ընդ ամենայն երկիր, քակել զմեհեանս և շինել Եկեղեցիս և հրամայեաց ոչ զինուորիլ և ելանել 'ի զօրս, որ ոչ իցէ ծնունդ աւազանին:

---

(1) Մի օրի. մեծաւ չքեղութեամբ :

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս Արիոսի հերձուածողին։

ՅԱՅՆՄ ժամանակի երեւեցաւ Արիոս երէց Աղեքսանդրացի ՚ի մէջ եւթն բարեկամաց իւրոց. զորս եգիտ սատանայ զէն չարութեան իւրոյ. եւ ջանայր նոքօք կրկնել զերկրպագութիւն արարածոյս։ Քանզի ետ նոցա ասել զՈրդին Աստուծոյ արարածոց անդրանիկ։ Նա գրեաց թուղթ առ Եւսեբի Նիկոմիդացի, եւ եցոյց ընդ ինքեան զվեց բարեկամս իւր, եւ արար զնա ընդ իւր. եւ են համախոհք նորա այսոքիկ. Սեբէոս՝ Կեսարու. Թէոդոս՝ Լաւոդիկոյ. Փաւլինէ՝ Սրոյ եպիսկոպոսք. Աթանաս՝ Անաւարզայ. Գրիգոր՝ Տարութայ. Ադիոս Դեւդիոյ կամ Լեդիոյ։

Իսկ յորժամ յայտնեցաւ չարութիւն նորա նզովեաց զնա Պետրոս Աղեքսանդրու եպիսկոպոսն։

Իսկ նա յետ վկայութեան հայրապետին արար իւր խորհրդակիցս արս երեւելիս ըզՄարիս Քաղկեդոնի եպիսկոպոսն, զՍեբի Նիկոմիդայ. զՄելիտոս եպիսկոպոս Եգիպտացի, որ հալածման ժամանակին զոհեալ էր, և լուծեալ յաստիճանէն, և զԱյիմթալէօ և զայլս բազումս, և արար ընդ ինքեան։ Յորում ժամանակի եղեւ շարժ սաստիկ Եգիպտոս. և բազում քաղաքս և աւանս ապականեաց զշարժումն աղանդին Արիոսի նշանակելով։

Եղեւ այլ ինչ պատառումն (1) եկեղեցի վասն զատկի։ Քանզի կողմանքն արեւելից ընդ Հրեայսն առնէին 'ի չորեքտասան լուսնին. և արեւմտից կողմն միշտ 'ի կիւրակէի։

Իսկ սուրբն Աղեքսանդրոս փոխանորդ Պետրոսի արար ժողով Եգիպտոս բազում եպիսկոպոսօք սակս Արիոսի և նզովեաց ըզնա, և զամենայն խորհրդակիցս իւր։

Գրեաց զնզովսն և ետ տանել ընդ ամենայն երկիր. բայց ոչ շիջանէր հուրն ապականիչ մինչեւ իմացոյց թագաւորին զբանն և աղաչեաց հրաման տալ տիեզերական ժողովոյ։

Եւ իբրեւ լուաւ թագաւորն տրտմեցաւ յոյժ. և նախ գրեաց թուղթ առ Աղեքսանդրոս և առ Արիոս զի թողուսցեն ըզբանն, և հաշտութիւն արասցեն։ Եւ ջանացաւ Աղեքսանդրոս. և ոչ դադարէր հիւանդութիւնն, այլ տարածանէր ընդ ամենայն երկիր. և զայն եւս զգացուցին Թագաւորին. այլ և զխանգարումն զատկին։

---

(1) Մի օրի. պատահումն։

Եւ Կոստանդիանոս եհան հրաւիրակ ընդ ամենայն երկիր զի ժողով լիցի ՚ի Նիկիա Բիւթանացւոց գլխաւորաց Եկեղեցւոյ, և առաքինի արանց։ Եւ կատարէր հրամանն, և ժողովէին հազարք և բիւրք երիցունք և սարկաւագունք. իսկ եպիսկոպոսք երեք հարիւր տասն և ութ։ Եւ պատրիարգունք էին այսոքիկ Աղեքսանդրի՝ Աղեքսանդրոս, Երուսաղեմի՝ Մակար. Անտիոքու՝ Եւստաթէոս. Հայոց՝ Արիստակէս. և Սւստինոս(1) Կուռտաբիայ, Բիգոս, և Բիգէնդ երիցունք Հռովմայ փոխանորդք Պապուն. Յուլիոս՝ Սեբաստոյ, Յակովբ՝ Մծբնայ։

Եւ շինեալ էր Թագաւորին լայն և ընդարձակ ապարանս. անդ նստոյց զժողովն, և ինքն յոտն կացեալ պաշտէր զնոսա։ Եւ հայրապետացն տեսին շնորհս աստուածային յերեսս Թագաւորին. և եդին նմա աթոռ ՚ի մէջ իւրեանց. և աղաչէին զնա նստել, և ոչ լուաւ նոցա բնաւ. այլ կայր յոտն, և ունկն դնէր բանից հաւատոյ։ Եւ կայր ամենայն բազմութիւնն յռոճիկս Թագաւորին. ՚ի քսանէն Իար ամսոյ մինչեւ ՚ի տասն և ինն Հզիրան ամսոյ ։ Իսկ զառաջինն սկսան քննութիւն առնել հռետորական աճոջն, և յոլովք երթային զհետ նոցա ։

---

(1) Երկու օրի. Ուսիոս։

Ապա յարուցեալ ոմն մանկագոյն իշխան, այլ և իմաստասէր, ասէ առ բազմութիւնն։ Քրիստոս և աշակերտքն նորա ոչ աւանդեցին մեզ զբանս արուեստաւորս․ այլ հաւատս հաստատունս, որ պահի գործովք պարկեշտութեան ։ Եւ ապա խափանեցաւ ատեանն փիլիսոփայից․ և թողին յեկեղեցականն հրամանաւ արքային ։ Իսկ նորա առաջնորդ ունելով զՀոգին սուրբ հաստատեցին զդաւանութիւն Առաքելոյն խոստովանութեան․ և կրօնս զքարոզութիւն նոցա և բազումք անհաւանեալք հակառակէին ։

Եւ Թագաւորն հանէր զնոսա 'ի բաց․ և ճշմարտիւք լնոյր զթիւն խորհրդաւոր ։ Եւ աղաչեաց Թագաւորն 'ի միասին կատարել զզատիկն 'ի հիման ճշմարտութեանն որպէս և էն (1) իսկ․ և զամենայն տօնս տէրունիս, զի մի պատառեսցի մարմինն Քրիստոսի ։ Եւ զկիւրակէն մեծարել հանդիսաւոր ժողովով և պարապմամբ գործոյ և բանիւ վարդապետութեան․ և շաբաթու յիշատակ կատարել մարտիրոսաց և հաճոյացեալ ծառայից Աստուծոյ:

---

(1) Մի օրի, որպէս և ե- ղեւն իսկ ։

Զի լուեալ էր Թագաւորին ՚ի Սեղբեստրոսէ և ՚ի Պարթեւէն Գրիգորէ յաղագս այսոցիկ, և արարին այնպէս և կանոնեցին զայն սահման յաւիտենական հրամանաւ Հոգւոյն սրբոյ: Իսկ Թագաւորն կանոնս հաստատեաց ձեռօք իւրովք, զանարգողսն եկեղեցականաց չար և դառն տանջանօք սպանանել:

Ի քսան ամի արքայութեանն Կոստանդիանոսի եղեւ ժողովս այս յամի հինգ հազար ութ հարիւր երեսուն երեք ելիցն Ադամայ: Եւ նզովեցին զկնի Արիոսի զԵւսեբի Նիկոմիդու եպիսկոպոս և զԳէոգնիս ՚Նիկիու, և զՄարիս Քաղկեդոնի, և զԹէովնաս Մարկակի, որք էին (արք) նշանաւորք:

Իսկ մայր Թագաւորին տեսլեամբ Աստուծոյ ել յԵրուսաղէմ Սեղբեստրոսիւ. և եգիտ ՚ի վերայ գերեզմանին Քրիստոսի պատկերս կանգնեալ Աստղկայ. և խոշտանգանօք եգիտ զխաչն Քրիստոսի որ թաղեալ կայր ՚ի Գողգոթա, ՚ի ձեռն Յուդայի յայտնեալ առ Մարկոսիւ Հայրապետիւ Երուսաղեմի:

Եւ սրբեաց դշխոյն զԵրուսաղէմ և շինեաց եկեղեցիս ՚ի անօրինական տեղիսն. և յանձնեաց 'ի Մակարիս, որ է Մարկոս եպիսկոպոս Երուսաղէմի։ Եւ շինեաց վանորայս արանց և կանանց և կուսանաց. Եւ խնամէր զնոսա ծախիւք արքունի։

Բայց Արիոս 'ի հնարս մտեալ խաբեաց զպարզամիտս Թագաւորին. որպէս զղջացեալ աղաչէր տեսանել զԹագաւորն, զի տացէ զխոստովանութիւն ուղիղ դաւանութեանն. և եմուտ առաջի արքային ունելով երկու կոնդակս 'ի ձեռին. մինն մեծ գրեալ պարզապէս. զկնի զդաւանութիւնն, զոր կալաւ առաջի Թագաւորին. և զմիւսն փոքր, զոր ծածկեաց 'ի թեզանին որ էր իւր հայհոյութիւնն. և ասաց թէ Արիոս այլ ազգ փառաւորէ զԱստուած քան թէ որ այսր է, մի՛ տեսցէ զփառս նորա։ Եւ հաւատաց Թագաւորն մինչև ծածկատեան խայտառակեաց զնա պատառմամբ աղօթիւք սուրբ եպիսկոպոսին Աղեքսանդրի։

Եւ Թագաւորն առաւել հաստատէր 'ի հաւատսն Նիկիոյ և փառաւորէր զԱստուած. արար ազատ զԵկեղեցի ընդ ամենայն երկիր. և կարգեաց առատ հռոգս իւրաքանչիւր եկեղեցւոյ. զի որբք և այրիք խնամեսցին 'ի ծախս եկեղեցւոյն. և ամենայն եկեղեցի ասէ կալցի անպակաս զհին և զնոր կտակարանսն. և ուսման հոգասցեն եկեղեցականքըն, զի գիտունք լիցին 'ի Քրիստոս։ Եւ մասն մի յԱստղավարաց ուսցին զտումարական արուեստն զի անմոլար վարեսցեն ըզտօնս և զժամանակս, և յայլ բաշխմանցն բնաւին 'ի բաց կացցեն. զի մի տկարասցի հաւատն։ Եւ կազմել հրամայեաց եկեղեցիս կտաւեայ շրջեցուցանել ընդ ինքեան 'ի հեռանալն պատերազմու. զի անպակաս կատարեսցի խորհուրդն Յիսուսի 'ի տեսս արքայի և 'ի պէտս հաղորդութեան։

Եւ շինեաց յԱնտիոք զեկեղեցի մեծ ութանկիւնի և շինեաց թագաւորն կամուրջ 'ի վերայ Տանաւիս գետոյ. և անցեալ 'ի վերայ նորա զօրօք՝ գնաց 'ի Սկիւթիա, որ է Ռուզք. և կոտորեաց զնոսա յոյժ. և զմնացեալսն դարձոյց 'ի Քրիստոնէութիւն. և դարձաւ անտի։

Զայսու ժամանակօք հաւատացին Հընդիկք և Վիրք 'ի Քրիստոս Աստուած. և գընայր և մեծանայր սուրբ Եկեղեցի և բերկրէր ամուլն յորդիս իւր։

Եւ էին Կոստանդիանոսի երեք որդիք Աւագն՝ յանուն հօրն Կոստանդի, և միջնոյն Կոստանդիանոս. և կրսերոյն Կոստաս. և արար զնոսա Կեսարս 'ի կենդանութեան իւրում. և իշխէին ընդ նմա։

Եւ ունէր մեծն Կոստանդիանոս եղբայր մի Դալմատիոս անուն. և էին նորա երկու որդիք Դաղոս (1) և Յուլիանոս։

Եւ եղեալ Կոստանդիանոս ամաց վաթսուն և հինգ, հիւանդացաւ 'ի Նիկոմիդիա, որպէս ասէ սուրբն Յակոբ. թէ կամեցաւ ելանել 'ի Պարսս, և յորժամ եկն 'ի Նիկոմիդիա կալաւ զնա ցաւ. և խնդրեաց մկրտութիւն և ետուն նմա. զի մինչեւ ցայն վայր չէր մըկրտեալ, զի ակն ունէր Յորդանան երթալ մկրտիլ։

Եւ արար կտակս երից որդւոցն զի ոչ դիպեցան առ ընթեր, և ետ աւագ որդւոյն զաթոռն Կոստանդնուպօլսի. և միջնոյն՝ զԱնտիոք. և կրսերոյն՝ զՀռովմ, և ետ զկտակն յերէց մի Եւսեբի անուն՝ որ էր Արիանոս 'ի ծածուկ։

Կատարեցաւ մեծն Կոստանդիանոս 'ի տօնի իջման սուրբ Հոգւոյն 'ի կիւրակէի 'ի քըսաներկու Իար ամսեանն. Թագաւորեալ ամըս երեսուն և երկու. և տարեալ զմարմինն 'ի Կոստանդնուպօլիս. եդին յեկեղեցւոջ սուրբ Առաքելոցն. փառաւորապէս։

Եւ նախ եկն միջին որդին և առ զկտակն յերիցէն. և զԿոստանդնուպօլիս սեպհականեաց ինքեան խոստանալով երիցուն պահել զաղանդ նորա ։ Եւ ետ աւագ որդւոյն զԱնտիոքու կողմն ։ Իսկ զկնի աւուրց գնաց երէց որդին պատերազմել ընդ կրտսերոյն վասն Հռովմայ . եւ Դաղմատիոս որ էր Կեսար եւ զօրագլուխ ՚ի Հռովմ, ել ընդառաջ նորա եւ սպան զնա . եւ ապստամբութիւն մտաբերեաց , եւ սպանաւ ՚ի չարիս իւր ։ Կամեցաւ Կոստոս եւ զորդիսն սպանանել . եւ դարձեալ խնայեաց ՚ի նոսա զի Գաղոս հիւանդագին էր , եւ Յուղիանոս մանուկ ։ Եւ այսու պատճառաւ զերծան ՚ի մահուանէ ։

---

(1) Մի օրի. Գաղլոս։

Եւ յետ աւուրց գնացին առ միջին որդին Կոստանդիանոսի . եւ նա ետ զնա յուսումն մերձ ՚ի Կեսարիա ՚ի գիւղ մի Մակաղի անուն . եւ էին կայտառք յաստուածպաշտութիւն . եւ եղեն վկայասէրք . եւ սկսան շինել վկայարան յանուն սրբոյն Մամասայ ՚ի Կեսարիա . եւ վաստակէին երկոքին անձամբ . եւ շինուածն Գաղոսի հաստատէր , եւ Յուղիանոսին փլանէր եւ ցրուէր գուշակելով զհանդերձեալն ։

Եւ կոչեաց զԳաղլինոս առ ինքն Կոստանդիանոս , եւ Կեսար կարգեաց յԱնտիոք . եւ խորհեցաւ ապստամբութիւն եւ նա նման

Հօր խուրդ․ և սպան զնա Թագաւորն ։ Եւ զՅուլիանոս կալաւ եդ 'ի բանտի զի ձեռն ետ եղբօրն․ բայց զկնի աւուրց բարեխօսութեամբ Թագուհւոյն Եփսիայ եհան 'ի բանտէն․ և առաքեաց զնա ուսանել յԱթէնս․ ուր կային և ամոլքն հաւատոյ Գրիգոր Նզիապու և Բասիլիոս, որք մարգարէացան նմա զհանդերձեալն ։

Յայնմ ժամանակի շինեաց Թագաւորն Կոստանդին քաղաք մի 'ի յերկրին Սելեւկացւոց, և անուանեաց Կոստանդնուպօլիս ։

Ի վեցերրորդ ամին Կոստոսի Հռովմայ Թագաւորին բռնացաւ Մագնիտիոս, և եհան 'ի նմանէ զԻտալիա և զԱփրիկէ․ եւ Թագաւորեաց 'ի Սիրմի։ Եւ ոյժ առեալ չարեաց ոմանց սպանիւն զԿոստոս․ և զեղբօրորդին նորա Կոստանդիանոս՝ որ Թագաւորեալն էր ընդ նմա զամս երիս ։

Եւ լուեալ զայս Կոստանդին և զայրացեալ գնաց 'ի վերայ Մագնիտի, և սպան զնա, և Ջուփիլիս (1) որ ընդ նմա էր Թագաւորեալ ։

Եւ երեւեցաւ յաւուր յայնմիկ նշան լուսեղէն խաչի յարեւելից կուսէ ։

Եւ չոգաւ Թագաւորն 'ի Հռովմ․ եւ

---

(1) Մէ օրի․ զՈւփիլլոս ։

հնազանդեցան նմա. և դարձաւ 'ի Կոստանդնուպօլիս և արար զՅուլիանոս Կեսար։ Եւ ետ նմա կին զԱլինէ զքոյր իւր որ Կոստիա կոչեցաւ. և առաքեաց զնա ընդդէմ բարբարոսացն. և նորա գնացեալ յաղթահարեաց զթշնամիսն. և էառ բազում գաւառս նոցա։

Իսկ Թագաւորն գնաց զԱնտիոքու կողմամբքն. զի լուաւ թէ ապստամբեցին Հրեայքն որ 'ի Կեսարիայ Պաղեստինացւոց. և առաքեաց զօրս 'ի վերայ նոցա և կոտորեաց զնոսա։ Սակայն կայր նա չարափառութեամբ և մարտնչէր ընդ ուղղափառսն։

ԳԻՐՔ Ժ.

Յաղագս Յուլիանոսի ուրանալոյ։

Իսկ Յուլիանոս յանցանելն ընդ փոքր մի որպէս և կարծէրն բախտի ինչ պատահեաց։ Քանզի թագ ինչ հիւսածու անկաւ 'ի գլուխ նորա. և քարոզեցաւ նա թագաւոր 'ի զօրացն որ էին ընդ նմա։ Եւ ապա յայտնի արար զծածկեալն անօրէնութիւնն. և 'ի բաց եկաց յԱստուծոյ՝ որով փրկեցաւն.

և երկիր եպագ կռոց և կուտեաց զօրս 'ի վերայ Թագաւորին։ Եւ լու եղեւ բանն Կոստանդիանոսի, և զահի հարաւ. և մկրտեցաւ 'ի Զոյիասէ(1) Անտիոքու եպիսկոպոսէ որ էր Արիանոս. և ել ընդդէմ Յուլիանոսի։ Եւ 'ի մէջ Կիւլիկեայ և Սուրիայ հասանէր նմա հիւանդութիւն. որով և մեռաւ իսկ. կեցեալ ամս քառասուն և ութ, թագաւորեալ ամս քսան և հինգ։ Բայց՝ նախ քան զաւանդել հոգւոյն զղջացաւ և դաւանեաց(2) զուղղափառութիւն. և ասաց “եթէ ես արարած ոչ երբէք իմացայ զՈրդին Աստուծոյ, և ետուն ինձ ասել զնա կրսեր քան զհայր։ Եւ մեղայ առաջի նորա. եւ այժմ դաւանեմ զնա և զՀոգին սուրբ համագոյ հօր”։ Եւ ետ կանոնել յեկեղեցի թէ առանց հոգեւոր զինու, այսինքն հաղորդելոյ 'ի պատերազմ մի՛ ոք ելցէ. և վճարեաց Կոստանդին զկեանս իւր։

Իսկ Յուլիանոս քանզի վարժեալ էր կախարդասար աղանդոյն կարդաց զդիպուած բախտին զօրութիւն դիւաց. և եկեալ 'ի Կոստանդնուպօլիս թագաւորեաց. և պղտորեաց զկարգ թագաւորութեանն. եթող ըզկինն և զգեցաւ հանդերձ փիլիսոփայի սեւներկեալ զոր Ադեմն կոչեն. և ծաղր արար զծիրանիսն :

---

(1) Մի օրի. 'ի Զրիասէ։ սխալանօք։

(2) Զայս օրի. աւանդեաց.

Բայց ոմանք այսպէս աստուգեն վասն Յուլիանոսի. եթէ Ասկղէպոս և Լիկիանէս եղբարք երկոքին փեսայք Կոստանդիանոսի Թագաւորին՝ երկու քեռ :

Յուլիանոս որդի էր Ասկղեպոսի. և Գաղոս եղբայր իւր որ սպանաւ 'ի պատճառս ապըստամբութեան. և Յուլիանոս անկաւ 'ի սեղանն սուրբ և ապրեցաւ, Աթանաս հայրապետին աղաչանօք : Եւ Լիկիանէս ունէր դուստր մի Եղութրա անուն. որ զկնի հօրն սպանման ժառանգեաց զինչս նորա և կեայր կուսութեամբ և քրիստոնէութեամբ. և կամեցաւ գնալ Երուսաղէմ, և աղօթել անդ, և վստահացաւ զստացուածս իւր 'ի Յուլիանոս որպէս յանապահ և 'ի փիլիսոփայ. զի մաշկեայս զգենոյր. երեքտասան Թագ ոսկի ականակուռս, հարիւր յիսուն և հինգ կենդինարս զարդ կանանց ոսկի և իննսուն եւ եւթն կենդինարս անգին ոսկի, և հանդերձեղէնս անգինս և անթիւս :

Իսկ Յուլիանոս խորհեցաւ ընդ վարդապետն իւր հեթանոս Մելենոս չտալ զինչսն Եղութրիս, և թաքոյց 'ի տան նորա. և 'ի դառնալ կնոջն ուրայաւ և երդուաւ յաւետարանն . և երթայր Ելութրա թաղծեալ 'ի տուն իւր . և էր ժամացոյց որ 'ի ճանապարհին , և 'ի նմա պատկեր կուոց , և խօսեցաւ ընդ նմա դեւն և ասէ . երկրպագեա ինձ և լեր իմ սիրելի որպէս և հայրն քո , և առ քեզ դարձուցից զինչսն քո . և ոչ արար փոյթ բանիցն խօսեցելոյ Ելութրայ։

Եւ եղև զի անցանէր ընդ այն Յուլիանոս , ասէ ցնա նոյն դեւն արարից զքեզ նշաւակ ընդ ամենայն երկիր , զի առեր զինչսն Ելութրայ զոր ես ետու հօր նորա սիրելւոյն իմոյ , և երդուար սուտ . և զահի հարաւ Յուլիանոս և պատմեաց Մելենոսի . և նա ասէ ցնա . երկրպագեա նմա զի մի արասցէ զսպառնալիսն և առ տարաւ զնա , և նուիրեաց դիւաց , և էր դուստր մի Մելենա յղի , զնա զոհեցին և հանին զմանուկն և ողջակիզեցին՝ և եմուծ զՅուլիանոս յայրս ինչ խորագոյնս բնակութիւն դիւաց, և խոստացաւ նմա ժամանակս հարիւր ամսոյ և թագաւորութիւն նմա զամենայն երկրի ։ Եւ Յուլիանոս կրճատեաց զանձն . և հաւատաց դիւաց զանձն իւր . և յորժամ եղեւ Կեսար և յաջողեցաւ նմա թագաւորութիւնն , եւս առաւել հաստատեցաւ և սկսաւ կախարդել և հմայել և զոհել դիւաց և յարենէ զոհիցն ցանել յաղբերակունսն և յամենայն կերակուրս. զի ըմպողքն և կերողքն իբրեւ զնա սիրտ ստասցին: Սա լուաւ թէ պատկերն Քրիստոսի որ 'ի Կեսարիա պղնձի՝ որ 'ի տան կնոջն տեռատեսի բազում բժշկութիւնս կատարէ, առաքեաց քակել ետ, և 'ի տեղւոջն կուռս կանգնել: Եւ իջեալ հուր 'ի Տեառնէ այրեաց զկուռսն:

Եւ եկն Յուլիանոս Անտիոք, և յորժամ մնանէր 'ի քաղաքն, պատմեցաւ նմա իրքս և զայրացաւ յոյժ. և 'ի նմին ժամն ետես զմի ոք 'ի վարդապետաց Քրիստոնէից, և ասէ ընդ Լիբանիոս իմաստասէրն, հարց ընդ վարդապետդ և ասա, ո՞ւր է հիւսանըն որդին: Պատասխանի ետ և ասէ, զարուեստ հօրն կատարէ. դագաղս և թաւուղթս կազմէ սպանման թագաւորիդ, որ դիպելոց է դմա 'ի Պարսս. և խոցոտեալ նոցա 'ի սիրտս ոչինչ ետուն պատասխանի առժամն. և մտեալ 'ի քաղաքն առատացոյց հրամանաւ զռոճիկն և սղեաց զդահեկանն 'ի պատճառս զօրացն, զոր ժողովեալ տանէր 'ի Պարսս:

Եւ Սամիկք քաղաքին ասացին նմա բանըս նախատանաց, զխոր և զերկայն մօրուսդ ասէն պարապ ընդէ՞ր ունիս, բե՛ր, ճողեմք զգա, և արա չուան, և դիր յեղջիւրս ցըլուց, և տար զոհեա դիցն քո պատուեալդ 'ի մէջս նոցա։ Եւ կատաղեալ Թագաւորն հրաման ետ զօրաց սրով մաշել զնոսա. և ողքեաց զնա Ճարտասանն, ոչ պարտին քեզ մահ արքայ, այլ նախատինս։

Եւ ժողովեալ զնոսա 'ի միասին ձաղեաց զնոսա և եթող։

Եւ կայր 'ի լեառն Անտիոքու վանք մի Ապուլա անուն յորում կայր շիրիմն Բաբելայ հայրապետին. հրամայեաց հանել զնա և տանել 'ի քաղաքն. և զուարճացեալ քրիստոնէիցն հանին զնա և տարան սաղմոսիւք և օրհնութեամբք, քանզի կանգնեաց անդ պատկեր Ապողոնի և եհարց վիճակաւ վասն երթալոյ նորա 'ի Պարս. և դեւն ոչ ետ նմա պատասխանի։ Եւ գիտաց եթէ վասն Բաբելայ է, և յետ տանելոյն զնա խօսեցաւ ընդ նմա դեւն բանս բարիս, եւ ցնծացեալ Թագաւորն եդ առաջի պատկերին սեղան երկու. զմինն ելից հրով, և ըզմիւսն ոսկւով, և ասաց որ ոք արասցէ անձին իւրոյ բարիս, ահա առ ձեռն է. և եդ սեղան մի այլ, և ելից զնա խնկով և հրամայեաց ափով մի խունկ առնուլ, և արկանել ՚ի վերայ հրոյն. և առնուլ նովին ձեւամբն յոսկւոյն, և բազումք պարզմտութեամբ պատրեցան (1) ոչ իմացեալք զխնամսն։

Ապա գնացեալք ՚ի ճաշ և նստեալք ՚ի սեղան նկարէին զխաչն ըստ սովորութեանն ՚ի վերայ բաժակին և հացին։ Իսկ ոմն ՚ի գիտողացն ասէ զի՞նչ է այդ. զոր գործէք զկնի ուրացութեանն։

Իսկ նոցա զարհուրեալ ասեն և Երբ ուրացաք, և նա ասէ. ՚ի խունկն զոր նուիրեցէք ՚ի հուր և առիք ոսկին։

Եւ նոցա լուեալ արտաքս ելանէին իբրեւ զմոլեկանս. և տարեալ զոսկին ընկեցին յերեսս թագաւորին՝ քրիստոնեայ զինքեանս կարդալով և պատրաստ ՚ի մեռանել վասն սիրոյն Քրիստոսի։

Եւ ներեաց նոցա թագաւորն զի մի արասցէն զնոսա մարտիրոս. զնոյն նախատինս կրեաց և ՚ի Կեսարիա. և կոչեաց զանուն քաղաքին Սաղկէն և զԿոստանդնուպօլիս Սիուղաս կոչեաց հանեալ զանունն Կոստանդիանոսի, և հրամայէր տալ զդըպրոցս ՚ի հեթանոսս. և շինել տայր հիւրանոցս և կուսանոց յանուն դիւացն, և ուսանել և գրել զառասպելս հեթանոսաց։

---

(1) Մի օրի. խաբեցան. ոմանք պարտեցան։

Եւ Ռոպէր ապա յՈւռհայ քաղաք պատրաստել անդ նմա արքունիս, և ոչ ընկալան զնոսա. և զբարկութիւն իւր 'ի վերայ Ուռհայի ապա ընկենոյր 'ի դառնալն Պարսից խաղաղութեամբ: Եւ եկին 'ի Խառան. և ընկալան զնա պատուով և զոհեաց անդ զոհրս բախտից. և մեծարեաց զՀրեայսն որ անդ էին, և գովեաց զհրէութիւնն և հրաման ետ երթալ յԵրուսաղէմ, և շինել զտաճարն և զոհել ըստ օրինացն:

Եւ նոցա թեթևամտութեամբ ձայն տուեալ միմեանց և ժողովեալ 'ի միասին, բարձին կիրմոքս երեք հազար, և գնացին յԵրուսաղէմ. և սկսան շինել զտաճարն. և իջեալ հուր 'ի Տեառնէ այրեաց զհիմունսն զոր արկին, և զգործիսն որովք գործէին զինուածս:

Իսկ Յուլիանոս յամեալ 'ի քաղաքն Խառան, կանգնեաց անդ կուռս և սկսաւ զոհել. և յանկարծ անկաւ թագն 'ի գլխոյն, և ձին զոր պնդէին առ ընթեր կոխեաց զնա. և ձգեալ զոտսն պատառեաց զհանդերձ թագաւորին: Եւ ասացին Հմայքն եթէ յանդիմանութիւն է քեզ այդ, փոխանակ զի ունիս ընդ քեզ զայդ զօրադ Քրիստոնեայս թշնամիս Աստուածոյն: Եւ հաւատաց նոցա, և դարձոյց 'ի նոցանէ քան երկու հազար։ Բայց զնշան խաչին զոր տանէին առաջի ըստ առաջնոյ սովորութեանն՝ ոչ դարձոյց. զի ասաց, ո՞ գիտէ եթէ յաղթեն մեզ Պարսք, պարտութիւն խաչելոյն լիցէ և նշանի նորա։

Եւ թիւ զօրացն զորս ընդ իւր տարաւ երեք հարիւր իննսուն և ութն հազար էին պաղեալք յերկաթս, բաց 'ի սպասաւորացն և յարուեստաւորացն և 'ի վաճառողացն. և ուր երթայր կուռս կանգնէր և զոհէր նոցա և հարցանէր զնոսա. և նոքա ասէին համագունդք գամք ընդ քեզ։ Քաջալերեաց զի Արէս աստղն կայ 'ի գլուխ զօրացդ քոյ. և բախտ Աղեքսանդրու և գիր ճակատու նորա քեզ շնորհեալ է։

Եւ գնաց 'ի Տիզբոն և աւերեաց զնա. և Շապուհ արքայ Պարսից ել 'ի Տիզբոնէ, և գնաց փախստական 'ի նմանէ. և առաքեաց առ նա և խնդրեաց խաղաղութիւն, զի տացէ նմա հարկս, դարձցի 'ի նմանէ, և ոչ մնասց նմա ըստ հպարտութեան սրտի իւրոյ։

Իսկ Շապուհ ժողովեալ առ ինքն զզօրս Պարսից եկն 'ի վերայ նորա առ Տիգրիս գետով. և նստան բացագոյն. և տակաւին գնային և գային պատգամաւորքն, և ոչ լսէր նորա Յուլիանոս, և յանկարծ եկն նետ մի և եհար զնա յաղխն. և վայթեցաւ արիւն բազում առաջի նորա. և առեալ յարենէն ցանեաց ընդ երկինս ասելով. յաղթեցեր յաղթեցեր, Գալիլեացի արդ առ 'ի վերայ Աստուածութեանդ և զթագաւորութիւնս իմ։

Այլք զնետն ասեն որ էառ ոչ 'ի մարդկանէ այլ 'ի ցասմանէ Աստուծոյ։ Եւ թէպէտ հպարտութեամբ ոչ ագանէր զրահս, այլ բարկութեան Տեառն ո՞ ընդդիմանայ։

Եւ եղեւ բան առնն Աստուծոյ որ յԱ՛նտիոք։ Կազմեալ թաւութ եդաւ մարմին նորա 'ի ներքս լի ամենայն գարշութեամբ. նա արար ճառս փիլիսոփայականս հազար (1)։ Իսկ զօրացն տարակուսեալ 'ի սովյն եդին իւրեանց թագաւոր զՅուբիանոս զօրագլուխ որոյ զառաջինն ընդդիմացեալ ասէր, ես ոչ կամիմ՝ թագաւորել դիւանուէր զօրաց. և նոյա միաբանեալ ասացին ծառայք Քրիստոսի Աստուծոյ եմք. և երկրպագեալ նշանի խաչին, և հաւանեցաւ և եդ զթագն 'ի գլուխն, և արար սէր ընդ Պարսս. և ետուն 'ի նոսա զՄծբին հանեալ 'ի նմանէ զՔրիստոնեայսն։ Եւ դարձեալ բերելով զմարմին անօրինին 'ի Կիւլիկիա, Թաղեցին 'ի սահմանըս Տարօնի ։

---

(1) Մի օրի. քառասուն. Մի օրի. Թ։

Իսկ զի տէրն բարերար սաստիկ մեծ ցաւոցն արար զօրաւոր զըժշկութիւն զՅոբիանոս այր բարի և աստուածասէր։ Բայց զի ոչ էաք արժանաւոր սակաւ ինչ վայելեցաք. եւթն ամիս միայն թագաւորեալ կալաւ ըզնա ցաւ երիկամացն, և մեռաւ 'ի մէջ Գաղատոյ և Բիւթանիոյ. և ոչ եհաս 'ի Կոստանդնուպօլիս ։

Եւ եկեալ զօրացն 'ի Նիկիա թագաւորեցուցին զՎաղենտիանոս 'ի Կապելիոն քաղաքէ 'ի Փանւոյ երկրէ այր իմաստուն և քաջ, և կամեցան դնել նմա ընկեր. այդ ոչ 'ի կամս ձեր է ասէ. այլ յիմս զի դուք զիս ընտրեցէք և ես զընկերն իմ. և հաւանեցան նմա։

Եւ առ նա հաղորդ թագաւորութեանն իւրոյ զՎաղէս, և ետ նմա զկողմ արեւելից։ Եւ զի առեալ էր մկրտութիւն յԵւդոքսիա Եպիսկոպոսէ Կոստանդնուպօլսի, մեծարեաց զչարափառութիւն նորա՝ որ էր Արիոսին. և էր սա եղբայր Վաղենտիանոսի որ կալաւ զՀռոմ և զկողմ արեւմտից, և պահեաց զհաւատն Նիկիոյ. և զորդի իւր Գրատիանոս Օգոստոս քարոզեաց ։

Իսկ Վաղէս գնաց յԵգիպտոս և եմուտ

՚ի քաղաքն Մարկիանուպօլիս. և ընդ մտանել նորա եղեւ շարժ ահագին և եզարկ ըզնաւսն ընդ ցամաքն, և խորտակեաց։ Եւ դիմեցին բազմութիւն արանց զի առցեն ինչ ՚ի նաւացն զի գնաց ծովն ՚ի ներքս քան զսահմանս իւր. և դարձաւ անդրէն և տարածեցաւ ընդ երկիրն. և բազում քաղաքս և գաւառս ապականեաց, և հազիւ զերծաւ Վաղէս։ Եւ եղեւ հրաշքս այս գուշակումն աւերման Եկեղեցւոյ ՚ի Վաղեսէ. որպէս արարն իսկ մեծ պատերազմ ընդ ուղղափառսն։ Եւ եղբայր նորա յանդիմանէր զնա և ոչ լսէր. և եղեւ պատերազմ Վաղեսի ընդ Գոթացիսն և նեղացաւ և խնդրեաց օգնութիւն յեղբօրէն. և նա ասէ. ոչ օգնեմ առն՝ որ ընդ Աստուծոյ պատերազմի։

Եւ ինքն Վաղէնտիանոս չոգաւ ՚ի Սարմատիայ պատերազմել ընդ նոսա։ Եւ զահի հարան յերեսաց նորա և առաքեցին առ նա խնդրել զխաղաղութիւն. և զարմացաւ արքայն ընդ գարշ տեսիլն նոցա և ընդ տըգիտութիւնն. և տեղեկացաւ ՚ի նոցանէ, զի առ նա եկեալքն ընտրելագոյնք էին քան զամենեսեան. և ասէ բարձր ձայնիւ եղուկ են Հռովմայեցեցիք, եթէ ընդ սոսա խաղաղութիւն արասցեն. և զիարդ թողին ըզսոսա մինչեւ ցայսօր կենդանիս։ Եւ խաստագոյնս գոչելոյն պատառեցան երակք փողիցն, և մեռաւ. ութսուն և չորից ամաց․ Թագաւորեալ ամս մետասան ։

Սա արտաքոյ օրինաց ունէր երկու կանայս զՍիւերա և զՈւստինէ դուստր Յուստիանոսի իշխանի՝ զոր սպան յաղագս երազոյն զոր ետես՝ և պատմեաց ծիրանիս ելեալ յինքենէ․ զի մի ասէ ծնցի Թագաւոր՝ և առեալ զդուստր նորա ծնաւ որդի մի համանուն իւր, և երիս դստերս․ անուն միումն Գալիէ, որ եղեւ կին Թէոդոսի Թագաւորի՝ որ ծնաւ զԱրկադէ և զՈնորէ ։

Իսկ ՚ի յառաջնոյն ունէր զԳրատիանոս երէց որդին՝ որ ոչ էր մերձ մահուան հօրն․

Իսկ զօրքն Թագ. եդին Վաղենտի որ էր տղայ ամաց չորից ։

Իսկ Վաղէս արար զզօրս իւր Գրատիանոսի և առաքեաց ՚ի վերայ Գոթացւոցն, որ և կորագլուխ դարձաւ ՚ի նոցանէ․ և սպանեաց զնա ։

Ասէ ցնա Գրատիանոս յաղթահարութիւնս այս ոչ է իմ այլ չարափառութեան քում․ զի կռուիս ընդ բազուկն հօր ։

Յայնմ ժամանակի բազում վկայս հասուցանէր Մաւրիէ դշխոյն Տաճկաց աշխարհին Հռովմայեցւոց՝ որ էր ազգաւ հռովմայեցի և օրինօք Քրիստոնեայ, գերեալ 'ի Տաճկաց կին եղեւ Թագաւորի նոցա։ Իսկ զկնի մահուան առնն, ինքն ունէր զիշխանութիւնն, և 'ի պատճառս նորա բազում եղեն քրիստոնեայք։

Սա խնդրէր Եպիսկոպոս երկրին իւրում զՄովսէս կրօնաւոր․ զոր Թէ տացէ Մաղէս լուծցէ զպատերազմն որ ընդ նմա․ և առաքեաց Մաղէս կոչեաց զնա և աղաչեաց երթալ։ Իսկ նա հազիւ հաւանեալ զգնալն՝ բայց ոչ ընկալաւ ձեռնադրութիւն յարիանոսացն․ այլ յաքսորելոցն սակս ուղղափառութեան՝ որ և 'ի գնալն նորա 'ի Տաճկաստան՝ բազմացաւ քրիստոնէութիւն։

Իսկ Մաղէս ետ չլինել Յ̈նաւիրք դիմիսոն՝ որ է բանդ ուղղափառաց։

Եւ 'ի նոյն ժամանակս երեւեցան անբաւութիւն զօրաց՝ որք գնային ընդ երկինս մարմնաւոր տեսլեամբ։

Եւ ծնաւ տղայ մի Յ̈նուիրք միականի՝ որոյ չորս ձեռք էին, և չորս ոտք, և մօրուք թաւ։ Եւ զկնի սակաւուց եկին Գոթացիքն և գերեցին գաւառս բազումս, զԱկիւթիա, զԹրակիա, զՄիսիա, զՄակեդոնիա, զԱ̈քայիա, և զամենայն Եղլադա։

Իսկ Վաղէս փախեաւ ՚ի Կոստանդնուպօլիս. և ռամիկն այպանէր զնա ասելով. չարահաւատ, ել պատերազմեա ընդ թըշնամիսն. կամ տուր զէնս զի գնասցուք մեք։ Եւ բարկացեալ Վաղէս գնաց զայրացեալ. և սպառնայր եթէ դարձցի խաղաղութեամբ, այրեսցէ զքաղաքն նոցա հրով։ Եւ երթեալ Վաղէս ՚ի կռուել ընդ Գոթացիսն. և պարտեցաւ ՚ի նոցանէ, և փախեաւ ՚ի գեօղ մի· և բարբարոսքն պատեցին զգեօղն. և թաքեաւ ՚ի տան յարդի. և իբրև ոչ գըտին զնա, այրեցին զգեօղն և այրեցաւ ընդ յարդն չարն չարեաւ կորուսեալ։ Եւ կայ մնայ ՚ի հանդերձեալ գեհենին։

Եւ բարբարոսացն ասպատակեալ մինչև ցդուռն Կոստանդնուպօլսի առին աւար բազում։

Եւ Թէոդոս զօրագլուխ ընդդէմ նոցա ել և կոտորեաց զնոսա։

Իսկ Գրատիանոս առեալ զթագաւորութիւնն՝ զկնի կորստեանն Վաղեսի՝ որ թագաւորեաց ամս հնգետասան (1), արար ըզԹէոդոս հաղորդս թագաւորութեան իւրոյ, տալով նմա զբաժինն արևելեան, այլ Սպանիացի իմաստուն և արի և աստուածապաշտ՝ որ և սպառեաց զբարբարոս զօրսն, և գնաց յաշխարհն նոցա և արար զնոսա ընդ հարկաւ ։ Եւ դարձաւ անուանի և երեւելի փառօք․ և գնաց ՚ի Կոստանդնուպօլիս հրամանաւ Գրատիանոսի․ այն՝ որ զառաջինն Թէոդոս քարոզեաց զնա ինքնակալ Թագաւոր․ և նա փոխարինեաց նմա ։

---

(1) Մի օրի. եւթն և տասն։

Եւ աստ եղեւ խաղաղութիւն մեծ Եկեղեցւոյ զկնի քառասուն ամի արիանոսացն չարութեան (1) ։

Եւ ՚ի նմին ժամանակս Թագաւորեաց Պարսից Շապուհ, զկնի մահուանն Արտաշրի ։

ԳԼՈՒԽ ԺԱ․

Յաղագս Մելիտոսի որ կանխեաց չառնել խոստովանութիւն անիմաստ քահանայի ։

Եւ յերրորդ ամին Թէոդոսի սպանաւ Գրատիանոս ՚ի Մաքսիմոսէ բռնակալէ, և եկին ընդդէմ նորա Թէոդոս և փոքրն Վաղենտիանոս և սպանին զբռնակալն՝ և ինքեանք մտին ՚ի Հռովմ երեւելի փառօք ։ Եւ Թագաւորեաց ՚ի Հռովմ Վաղեն տիանոս . և Թէոդոս դարձաւ 'ի Կոստանդնուպօլիս . և առաքեաց զԱտրատիկոս զօրավար յարեւելս , որ և եկեալ յԱնտիոք եգիտ հակառակութիւն յեկեղեցին , և արար խաղաղութիւն , և ետ զաթոռն 'ի Մելիտոս :

---

(1) Այ օրի․ չարափառութեան․

Ի չորրորդ ամի արքայութեան նորա Թէոդոս կամեցաւ սրբել զեկեղեցի յարիանոսացն 'ի ձեռն խրատու Գրիգորի աստուածաբանի . որ եկեալն էր յօգնութիւն հաւատոյ յառաջ քան զութն ամ Թագաւորելոյն Թէոդոսի :

Եւ ետ Թագաւորն հրաման ժողովել ընդ ամենայն եկեղեցիս , և ժողովեցան հարք հարիւր յիսուն որոց գլխաւորքն են այս : Տիմոթէոս՝ Աղեքսանդրու . Կիւրեղ՝ Երուսաղեմի . Մելիտոս՝ Անտիոքու . Սուրբն Ներսէս՝ Հայոց մեծաց , դարձեալ յարտասահմանութենէն Վաղեսի . Գրիգոր Աղիազու՝ Կոստանդնուպօլսի . և Գրիգոր Նիւսիոյ , որ և նախ որոշեցին զաղանդն Արիոսի . ապա զՄակեդոնին՝ որ իշխեաց հայհոյել զՀոգին սուրբ : Եւ յաւելլին 'ի հաւատն Նիկիոյ ըզյիշատակ Հոգւոյն սրբոյ :

Իսկ Գրիգոր աստուածաբանն եղ կամաւ թողուլ 'ի Կոստանդնուպօլսէ . և ետուն զաթոռն Նեքտարեայ :

Եւ մեռաւ Մելիտոս ՚ի ժողովն․ և եկաց Թագաւորն ՚ի վերայ նորա և ասաց․ զնա տեսանէի ես ՚ի տեսլեան, զի օծանէր զիս Թագաւոր մինչ ոչ էի առեալ զնա արդեամբք։ Եւ պատուեաց զնա Գրիգոր Նիւսեայ ներբողական ճառիւ․ և բերաւ մարմին նորա յԱնտիոք և անդ եդաւ։

Այս Մելիտոս կանոնեաց․ մի՛ առնել(1) խոստովանութիւն Քահանայից որոց ոչ իցէ փորձեալ հին և նոր կտակարանօք․ զի Քահանայ մի յԱնտիոք հրապարակեաց զխոստովանութիւն Սարկաւագի միոյ՝ որ անկեալ էր ընդ կնոջ գլխաւորի քաղաքին․ ուստի եղեւ բազում խռովութիւնս և սպանմունս։

Եւ ասաց Մելիտոս լաւ է դնել ձեռն ՚ի վերայ դժնկի կամ Թիւնաւորի ինչ, քան ՚ի վերայ տգիտաց և անարժանից։

Յաւուրս յայսոսիկ խօլթացաւ Թէոդոս ՚ի Թեսաղոնիկէ և մկրտեցաւ յԱկիւղասայ եպիսկոպոսէ և առողջացաւ․ և եկեալ ՚ի Կոստանդնուպօլիս շինեաց զմեծ եկեղեցին զԱնաստասիայ և աստ եղեւ նմա որդի Հոնորիոս ՚ի Գալլիոսէ կնոջէ։ Եւ զկնի նորա Արկադէոս և յետ այնորիկ մեռաւ կինն։

---

(1) Ոմանք՝ առնուլ։

Եւ կայր նմա պատկեր յԱնտիոք. և ռամիկք քաղաքին լուեալ զմահ նորա քարշեցին զպատկերն և ձգեցին նախատանօք ։ Եւ լուեալ Թագաւորն բարկացաւ և դատաւորք քաղաքին արարին յոլով սպանութիւնս։ Եւ եառ Թագաւորն զպատիւ քաղաքին զկոչիլն մայր քաղաքաց, և ետ Ղատիկ քաղաքին ։

Եւ լուեալ զայն միայնականն Ապողոն. և եկեալ յանդիմանեաց զիշխանս քաղաքին. և գրեաց առ Թագաւորն թուղթ և ասաց, Թագաւո՛ր, ապաքէն գիտես զի օր ըստ օրէ անարգեմք զպատկեր Աստուծոյ զոգիս մեր, ընդէ՞ր ոչ բարկանաս և ցաւիս. իսկ վասն անարգանաց պատկերի կնոջ քո պղընձեղէն՝ ցասնուս. այլ և զպատկերս Աստուծոյ զմարդիկ սպանանես. միթէ անգիտանա՞ս եթէ պատկերս պղնձիս շատ կարես ստեղծանել բայց ոչ զպատկերս Աստուծոյ ։ Եւ լուեալ Թագաւորն պատկառեաց և ցածեաւ ՚ի բարկութենէն և հաշտեցաւ ընդ քաղաքին ։

Յայնմ ժամանակի Թեսաղոնիկէ գլուխ Իտալւոյ ապստամբեաց ՚ի Թագաւորէն, և քարկոծեցին զիշխան քաղաքին. և զայրացեալ Թագաւորին առաքեաց զօրս ՚ի վերայ քաղաքին, և հրամայեաց կոտորել զնոռա. և մեռան հինգ հազար անձինք արդարք և մեղաւորք։

Իսկ Ամբրոսիոս եպիսկոպոսն եկն առ Թագաւորն 'ի Ռանդուլիէ. և դիպեցաւ Թագաւորին առ դրան եկեղեցւոյն զի կամէր մըտանել, արգել զնա և ասէ ցնա. ո՞չ ամաչես արեամբ շաղախեալդ, մտանել 'ի տուն Աստուծոյ. այլ դարձիր յետս. և առ կապանս զոր առաքեաց քեզ Աստուած 'ի ձեռըն իմ. Եւ դարձաւ Թագաւորն արտասուօք. և եղեւ յետ ութն ամսի տօնի ծննդեանն նստեալ Թագաւորն լայր 'ի սենեկի իւրում դառնապէս։

Եւ համարձակեցաւ առ նա Ռուփինոս մագիստրոսն և կացեալ մօտ ասէ. ընդէ՞ր լաս արքայ, ետ պատասխանի և ասէ ցնա. զիա՞րդ ոչ լացայց, զի ծառայք իմ և մուրականք երկրի ազատք են և արձակք. և Թագաւորս անուանեալ կապեալ յերկինս և յերկրի, զի նոքա մտանեն 'ի տուն Աստուծոյ. և վայելեն յերկնաւոր պարգեւս տօնիս և ես զըրկեալ եմ։

Ասէ ցնա Ռուփինոս. եկ երթամք աղաչեմք զեպիսկոպոսն. ո՞չ ապաքէ՛ն ութն ամիս է ապաշխարութեանդ։ Եւ ասէ Արքայ ես ոչ հաւատամ եթէ լուէ նա, և ակն առնու երեսաց . և արհամարհէ զօրէնս Աստուծոյ իւրոյ , եթէ ոչ իցէ լցեալ ժամանակն ։ Եւ գնաց Ռուփինոս և թագաւորն զկնի ։

Իսկ յորժամ ետես եպիսկոպոսն զՌուփինոս իմացաւ զկիրն սատանայ նմա և ասէ . անօրէնութեան խրատու. և յորդորիչ չարի . ո՞ւր երթաս . և անկաւ յոտս նորա Ռուփինոս և ասէ . ահա թագաւորն գայ զկնի իմ 'ի խոնարհութիւն . բարեխօս առնել ըզտօնիս խորհուրդս . ասէ ցնա եպիսկոպոսն , եթէ 'ի սպանանել գայ զիս ընդունիմ 'ի ձեռաց նորա իբրեւ զպսակն , այլ յեկեղեցի Աստուծոյ իմոյ ոչ թողից զարիւնարբուն զայն, և գնացեալ պատմեցին թագաւորին ։

Ասէ թագաւորն թող երթամ առնում զնախատինս յանցանաց իմոց , որում արժան իսկ եմ ։

Իսկ եպիսկոպոսն կայր յեկեղեցին և թագաւորն չոգաւ եկաց առ դրանն, և լայր բարձր ձայնիւ . ասէ ցնա եպիսկոպոսն ամբարտաւանիս , յանդգնիս . ասէ ցնա թագաւորն ո՛չ հայր սուրբ առանց քոյ կամաց ոչ ինչ առնեմ . միայն տեսից զդուռն եկեղեցւոյն , և լուայց զձայն քո ։

Ասէ եպիսկոպոսն զո՞ր ապաշխարութիւն կրեցեր , զի զայդ տաց քեզ ։

Ասէ ցնա Թագաւորն զպահօն և զողորմութիւն զոր պատուիրեցեր հայր սուրբ․ և զոր ինչ այլ հրամայեսցես դեղ վերայ իմոյ կամ առաջի քո ։

Ասէ ցնա եպիսկոպոսն, բարկաւոր ես, խիստ ես առ յանցաւորս և դիւրակործան 'ի բանս զրպարտչաց վնասախօսաց քսողաց ։ Գրեա՛ ձեռամբ քո օրէնս քննել զերիս աւուրս զմատնութիւնս զոր լսես․ և զմահապարտսն յայտնիս պահել զաւուրս քառասուն և հարցափորձք լիցի․ և սիրտք քո հանդարտեսցի (1) և հանգիցէ 'ի զայրացմանէ ։ Եւ զայդ արասցեն ամենայն դատաւորք, և իշխանք երկրի որ ընդ ձեռամբ քո են ։

Եւ առ ժամայն գրեաց և առաքեաց առ ամենայն դատաւորս երկրի․ և առ իշխանս ։

Եւ ապա հրամայեաց եպիսկոպոսն Թագաւորին մտանել յեկեղեցին․ և նորա մտեալ ահիւ և դողութեամբ․ և լոյր ամենայն բազմութիւնն զկական բարձեալ ։

Իսկ Թագաւորն ընկեցեալ զինքն յերկիր ասէր, մերձեցաւ անձն իմ 'ի հող Տէր ապրեցո զիս ողորմութեամբ․ և շատ արտասուեալ արքայի կանգնեցաւ․ և գնաց մերձ առ խորանն և կամեցաւ դնել 'ի տեղին իւր ։

---

(1) Ոմանք՝ պարապեսցի ։

Ասէ ցնա եպիսկոպոսն . լաւ է քեզ խոնարհութիւնն կալ ընդ ժողովրդեանդ Տեառըն , և յետոյ քան զամենեսեան մինչև կարասցես կատարելապէս սրբիլ ։

Եւ գնաց արքայն խնդութեամբ կալաւ զյետին տեղին և կանգնեցաւ. ընդ ապաշխարողսն ։ Այսպիսի էր հաւատ և երկիւղ Թագաւորին ։

Յայսմ ժամանակի գտան նշխարք սրբոյն Ստեփաննոսի և որոց ընդ նմա . առ Յովհաննու հայրապետիւ Երուսաղեմի . առն յոյժ առաքինւոյ և ուղղափառ քարոզի ։

Յերեքտասան ամին իւր Թէոդոս՝ զորդին իւր զԱրկադէոս Թագաւոր քարոզեաց կողմանն արևելից ։

Ի նմին ժամանակս Օգանոս և Արբոգաստես իշխանք 'ի Հռոմ սպանին զՎաղենտիանոս ։

Եւ լուեալ Թէոդոս տրտմեցաւ ել սակաւ զօրու ընդդէմ բռնակալացն . և յորժամ եհաս առ նոսա , և լուաւ եթէ կարի բազումք են . ասացին որ ընդ նմա էին, թոյլ տուր արքայ մինչև հասանէ զօրն ։

Իսկ Թագաւորն 'ի ժամ երեկոյին առանձնացեալ եմուտ 'ի քարայր մի և գոչեաց առ տէր զմեծ մասն գիշերոյն ։

Եւ երեւեցաւ նմա Յովհաննէս աւետարանիչն և Փիլիպպոս առաքեալքն Քրիստոսի. և ասեն ցնա ահաւասիկ առաքեաց զմեզ տէր օգնել քեզ. արդ մի զարհուրիր և օգնականի մի մնար, և վաղիւն է օրն յաղթութեան:

Եւ սրտապնդեալ արքային ՚ի վաղիւ անդր կատարեաց զյաղթութիւնն կոտորեամբ բռնակալացն և թագաւորեցոյց ՚ի Հռովմ զՈնորիոս որդին իւր ըստ ոմանց ասելոյն կրտսեր քան զԱրկադէոս:

Եւ դարձաւ թագաւորն ՚ի Սիտիլու. և հիւանդացեալ անդ կատարեցաւ ՚ի Քրիստոս. կեցեալ ամս վաթսուն, թագաւորեալ ամս վեշտասան և ամիս ութ:

Իսկ ՚ի Պարսս թագաւորեաց Ուրհաբաւն Գերմանշահ որդի Շապհոյ եղբայր Արտաշրի ամս մետասան:

Իսկ Թէոդոս բազում ունէր դրուատիս և մանաւանդ հնազանդութիւն Եկեղեցւոյ և զխաղաղութիւն. քանզի զառաջինն ոչ կամէր հալածել զարիանոսն մինչ Ամղիքոս եպիսկոպոսն յաւուր միում եմուտ առաջի արքային և ետ ողջոյն նմա. և զթագաւորեալ որդին որ ընդ նմա նստէր, ոչ ողջունեաց և ոչ հայեցաւ ՚ի նա. և ասէ արքայ օրհնեա հայր զորդի իմ զԹագաւորեալ։

Ասէ ցնա եպիսկոպոսն դու բաւական ես մեզ Թագաւոր. զդա ոչ պատուեմք, բայց եԹէ՝ ընդ ծառայսդ։ Եւ բարկացաւ յոյժ Թագաւորն։

Պատասխանի ետ Ամփիլոքոս և ասէ ցնա, դու մահկանացուդ զանպատուութիւն որդւոյ քո ոչ տանիս. իսկ անմահն Աստուած զմիածնին իւրոյ զարարած ասելն տանիցի՞։ Եւ զի՞նչ կամիս ասել առաջի նորա։

Եւ զարհուրեալ Թագաւորն ետ (հրաման) հալածել զարիանոսն և ընկենուլ յամենայն համարձակութենէ։ Եւ զնոյն պատուիրելով որդւոցն և իշխանացն հանգեաւ ՚ի Քրիստոս։

Եւ զկնի մահուանն Թագաւորին ծնաւ յԷմաւուս աղջիկ մի՝ որոյ ՚ի յանձացն վեր երկու գլուխ էր և չորս ձեռք և ՚ի վայրն միաւոր, և ապրեցաւ երկու ամ. ՚ի յուտել միոյն ոչ ուտէր միւսն. և ՚ի ննջել միոյն արԹուն կայր միւսն։ Եւ էր զի խաղային ընդ միմեանս և ծիծաղէին, և էր զի լային. և մինն քան զմիւսն չորս աւուրբք յետոյ մեռաւ։

Իսկ Թագաւորն Արկադէոս գնաց ՚ի ճանապարհս աստուածպաշտութեան հօր իւրոյ, զի էր ուղղափառ և պարկեշտ. և ագանէր 'ի ներքոյ ծիրանեացն այծեայս և էր առաքինասէր և բարեսէր յոյժ. ըստ որում եւ ածել զՅովհան 'ի յԱնտիոքայ Ասորոց փափագեալ համբաւոյն որ զնմանէ գայր: Եւ յորժամ ետես զնա, գտաւ, (եգիտ) տառանապատիկ բանիւք, և նշանօք, և սրբութեամբ ըստ որում եգին զնա եպիսկոպոս Կոստանդնուպօլսի. բայց յոմանց անգունեալ լինէր վասն ոչ յատակագոյնս խօսելոյն զառաջինն 'ի բարբառն Յունաց. զի Ասորի էր 'ի հօրէ կողմանէ և այնու էր վարժեալ լեզուաւ: Սա եկաց եպիսկոպոս եւթն ամ և տուաւ յաքսորս ամս երիս և հանգեաւ 'ի կողմանս Հայոց ամաց յիսուն: Սա յորմէ հետէ մկրտեցաւ ոչ էարբ գինի և ոչ ծիծաղեցաւ և ոչ երդուաւ, և ոչ երդմնեցոյց. և ոչ զոք նզովեաց. և ոչ 'ի տեղի պատուոյ ուրեք ընթացաւ յորժամ մեծարէին:

Եւ յորժամ երթայր յաքսորս եդ զձեռըն 'ի վերայ եկեղեցւոյն և ասաց ողջ մնա սուրբ Եկեղեցի բնակարան փառացն Աստուծոյ. և մի մոռանար զաշխատութիւնս իմ, քանզի 'ի պարգեւացն զոր առի յԱստուծոյ՝ յաւելի 'ի գանձս քո դիրք ութ հարիւր, ճառս երկոտասան հազար:

Յայնմ ժամանակի թագաւորեաց Պարսից Եզտաճատ : Եւ արքայ Արկադ հիւանդացաւ . եւ ետ քարոզել զորդի իւր զԹէոդոս թագաւոր ութն ամաց : Եւ զի Անորիոս որդի ոչ ունէր եւ նա միայն էր ժառանգ թագաւորութեանն երկեաւ 'ի տղայութենէն Թէոդոսի , գրեաց կտակ եւ յանձնեաց զմանուկն յԵզտաճատ . եւ կատարեցաւ 'ի Տէր թագաւորեալ ամս երեքտասան :

Եւ լուեալ արքայքն Պարսից առաքեաց դաստիարակս մանկանն այր իմաստուն եւ սպառնալիս . եթէ ոչ միամտութեամբ ծառայեսցեն մանկանն Թէոդոսի : Եւ էր խաղաղութիւն ընդ Պարս եւ ընդ Հռոմայեցիս . եւ աճեաց Քրիստոնէութիւնն 'ի Պարսս 'ի ձեռն Մարութայի Եպիսկոպոսի երթեւեկութեամբն անդ :

Մեռաւ եւ Անորիոս 'ի Հռոմ . եւ ոչ եթող որդի . եւ թագաւորեաց Կոստանդին ազգական նորա : Եւ յետ սակաւու նա մեռաւ 'ի բռնակալէ ումեմնէ նենգութեամբ :

Եւ Թէոդոս կացոյց 'ի Հռոմ Կեսար ըզ Վաղէնտիանոս հօրաքեռ որդին իւր . ընդ նմա առաքեաց եւ զմայր նորա . եւ յետ այնորիկ առաքեաց նմա թագ , որ թագաւորեաց ամս երեսուն երկու :

Իսկ Թէոդոս էր այր պարկեշտ և չորակեր, որ և զամենայն աւուրս պահոց անձէթ և անգինի էր սեղան նորա։ Սա զԲեռրոնի եպիսկոպոսին պատուելեալ մազեղէնն առ ինքն խնդրեաց յետ վախճանի նորա. և զգենոյր զնա զամենայն գիշեր։ Էր և անոխակալ այնչափ որ յասելն յումանց եթէ վասն է՞ր թողուս զմահապարտսն կենդանի. ասէ այդ Աստուծոյ է գործ և կարողութիւն ըսպանանել և կեցուցանել, և մեզ երանի թէ կարէաք աղաչել զՏէր այսրէն դարձուցանել զվախճանեալսն թող թէ զկենդանիսըս յաւելուլ ’ի մեռեալսն։

Յայնմ ժամանակի մեռաւ Ազտաճատ, և թագաւորեաց Պարսից Ահրհարան որդի նորա ամս քսան երկու։ Եւ եբարձ զդաշն հօրն իւրոյ, և արար պատերազմ ընդ Թէոդոս. և աղօթիւք նորա յաղթահարեալ լինէին Պարսիկք և սատակեալք և գերեալք։

Յորում ժամանակի առաքինացաւ Ակակ Ամթայ եպիսկոպոսն գնելով զգերեալսն ’ի Պարսից և անդրէն առաքելով. այլ և զսպաս եկեղեցւոյն ծախեաց ’ի պէտս գերեացն. վասըն որոյ գովեցաւ հաւատ նորա ’ի Պարսս. և խնդրեաց զտես նորա Թագաւորն Պարսից. և յոյժ մեծարեաց զնա ’ի փառս Քրիստոսի։

Յայնմ ժամանակի անուանիք էին Սիմէոն սիւնակեաց յԱնտիոք. և Մօր պարսաւմաւ (1) ՚ի սահմանս փոքր Հայոց:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս Նեստորի հերձուածին:

ՅՈՐՈՒՄ ժամանակի ածաւ յԱնտիոքայ ՚ի Կոստանդնուպօլիս Նեստոր եպիսկոպոս. և էր երէց նորա ոմն Անաստաս անուն: Սա յաւուր միում խօսեցաւ յամպիոնն նոր հերձուած, ասելով զՄարիամ մարդածին. և ոչ Աստուածածին. և պակեաւ ժողովուրդն և ակն ունէին պատասխանի նմա ՚ի Նեստորէ:

Իսկ անմիտն Նեստոր օգնեալ ՚ի դիւաց հաճեցաւ յասացեալն և տարածեաց ընդ երկիր: Վասն որոյ եղեւ մեծ Սիւնհոդոս յԵփեսոս ՚ի քսան և մի ամին Թէոդոսի. և յեւթն հարիւր քառասուն երկու թուին Յունաց. և ՚ի Քրիստոսէ չորս հարիւր քսան երեք:

Եւ ժողովեցան անդ հարիւր յիսուն երեք եպիսկոպոսք և քահանայք և կրօնաւորք յոյժ բազում և գլխաւորք էին այսոքիկ․ 'ի Հռովմայ Արկադէ և Պրոկղոս եպիսկոպոսք փոխանորդք Կեղեստիանու Հռովմայ Պապուն ։ Կիւրեղ՝ Աղեքսանդրիոյ, Մեմնոս (1) Եփեսոսի, Յովհաննէս՝ Անտիոքու, Ակակ՝ Մելտենոյ, Յոբնաղիս՝ Երուսաղեմի ։ Իսկ Սահակ հայրապետն Հայոց (2) անպարապ լեալ գրեաց Թուղթ հաւանութեան զոր ինչ և սահմանեսցեն ։

---

(1) Մի օրի. Մաւրպաւրսաւմ:

Եւ արարին ամենեքին նզովս Նեստորի բայց Յովհան Անտիոքայ, և քսան և վեց(3) եպիսկոպոսք ընդ նմա ոչ հաւանեցան․ և առին նզովս և նոքա ընդ Նեստորի ։

Եւ Թագաւորին հրամանաւ տարաւ յաքսորս 'ի Խուժաստան Պարսից ։ Եւ ապա զղջացեալ Յովհաննեանքն եղեն ընդ Կիւրղի խոստովանել զանդիտութիւնս իւրեանց եթէ էյէ այնպէս Նեստորիոս ։ Եւ միաբանեալք 'ի միասին առաջին կատարեալ է ուղղափառութիւնս (4) ։

---

(1) Երկու օրի․ Մեմնոն ։

(2) Մի օրի․ Սահակ հայրապետն Հայոց և Մեսրովպ վարդապետ․ անպարապ եղեալ գրեցին Թուղթ ։

(3) Մի օրի․ քառասուն և վեց ։

(4) Մի օրի․ յաւելու և այսպէս․ և փառաւորեցին 'ի մի բերան զսուրբ կոյսն Մարիամ Աստուածածին․ և դաւանեցին զսուրբ Երրորդութիւնն մի Աստուածութիւն Հայր․ Որդի և Հոգի սուրբ․ և նզովեցին զբովանդակ Նեստորականքն․ և 'ի զատ բաժանեցին ։

Արդ որ ոք յայսմ հետէ այլ նոր հաւատոյս և դաւանութիւնս դնէ թագաւոր կամ եպիսկոպոս, կամ ժողով, եղիցի նզովեալ ։ Այլ (1) Նիկիայն կացցէ մինչև ցկատարած աշխարհի ։

Իսկ որք նզովեցան զկնի Նեստորի էին այսոքիկ. Թէոդորիտոս՝ Կիւրոս քաղաքի եպիսկոպոս։ Անդրէ՝ Սամոստիայ. Աղեքսանդրոս՝ Մմբեճայ, Արիանէ՝ Սրոյ, Յովհաննէս՝ Կիւլիկիոյ, Ութուխոս՝ Տարունայ (2). և այլք ընդ նոսա ։

Իսկ 'ի տեղի Նեստորի եդին եպիսկոպոս զՄաքսիմոս ։

Իսկ 'ի քսան և ինն ամի արքայութեան իւրոյ Թէոդոս լուաւ. զաղմուկն Փլաբիանոսի եպիսկոպոսի Կոստանդնուպօլսի. և զԵւտիքի վանապետի. և ետ հրաման երկրորդ անգամ ժողով լինել յԵփեսոս, զկնի ութ ամի առաջնոյն ։

---

(1) Մի օրի. յաւելու այսպէս Այլ երեք սուրբ ժողովքն կացցէ. Եփեսոսի և Կոստանդնուպօլսի, և Նիկիոյն. զի առաջին Սուրբ ժողովն Նիկիայ՝ թագաւոր Կոստանդիանոս, և Կոստանդնուպօլսոյ ժողովոյն մեծն Թէոդոս թագաւոր. և յայս ժողովս Եփեսոսի փոքր Թէոդոս թագաւոր. և այլ թէ եղիցի ուրիշ. եղիցի նզովեալ յԵրրորդութենէն ։ Այլ հիմն այս է, և շինեսցեն 'ի վերայ այսր հիմանս ։ Իսկ որ նզովեցան զկնի Նեստորի . . . ։

(2) Երկու օրի. Տարօնայ ։

Եւ Թագաւորն գրէ Թուղթ առ Դէոսկորոս փոխանորդն Սիւրղի զայս օրինակ։

Եւտուկարտոր կայսր Թէոդոս և Վաղէտիանոս յաղթող Թագաւորք հօրդ մերոյ Դէոսկորեայ եպիսկոպոսի խնդալ։

Գիտելի լիցի սրբութեանդ քո զի արմատն դառնութեան Նեստորի շառաւիղեաց առ Փլաբիանոս. և Մանեայ կարծիքն առ Եւտիքէս վանական, որպէս և լուաք 'ի մերոց գիտնոց. և գործք այդ հոգեւոր մշակութեան ձեր է սրբել զեկեղեցի անարատ հարսն Քրիստոսի. յաղագս որոյ փութամ 'ի Թիկունս հասանել տրտմութեան մօր քո երկնաւոր առագաստին. և բերցես ընդ քեզ տասն մետրապոլիտս և տասն եպիսկոպոս բանաւորս որ կարող են զջահն հաւատոյ ուղղափառութեան վառել և դնել 'ի վերայ աշտանակի, յուրախութիւն երկնաւորաց և երկրաւորաց. և 'ի գալն քո 'ի Պաղեստինէ ածցես անուր տասն եպիսկոպոս 'ի Փղշտացւոցն և զՅոբնաղիս եպիսկոպոսապետըն Երուսաղեմի։ Եւ մի(1) բերցես զհիւանդացեալն 'ի հաւատս առ Սիւրղիւ. ըզԹէոդորիտէս և զայլսն որք ընդ նմա. եւ Յուլիոս Հռովմայեցի առ մեզ է։ Սա ընու զոտեղի Լեւոնի որոյ տումարն զոր գրէ առ ումանս՝ ասեն ոչ է հաճելի. այն զոր ետ բերել ՚ի ժողովն, որ առ Կիւրղիւ, զոր ոչ ընկալաւ։ Եւ ած ընդ քեզ զմեծ ճգնաւորն զհայր անապատի Մաւրպարսամաւ փոխանակ վանորէիցն արեւելից. զի և մեք առաքեցաք աղաչել զնա, զի հոգի Աստուծոյ գոյ ՚ի նմա և յոյժ ատեաց սա զՆեստորիոս և զտումարն Լեւոնի։ Եւ զայս արարեալ ողջ եկեացես աջողեալ ճանապարհաւն ճշմարտութեան։

---

(1) Ոմանք՝ չունին մի։

Եւ առեալ Դէոսկորոս զթուղթն ցաւեաց նմա վասն իրացն. և փութացաւ յոյժ և կատարեցան իրքն, և եկն Եփեսոս. և եկին առ նա հրաւիրեալքն. և եղեւ թիւն հարիւր քսան (1) եպիսկոպոսաց։ Եւ գլխաւորք էին այս, Դիոսկորոս՝ Աղեքսանդրի (2). Յոբնաղ՝ Երուսաղեմի. Դոմնոս Անտիոքու. Եւստաթէոս՝ Բիւրեաւոյ. Թէոդորոս՝ Կեսարու Հայոց. Եւսեբիոս Սելեւկիոյ (3). և Մաւրպարսամաւ գլուխ վանականաց. և արարին քննութիւն. և գտին զՓլաբիանոս համաքան ՙՆեստորի։

---

(1) Երկու օրի. հարիւր քսան և ութ։ Միօրի. հարիւր տասն։

(2) Մի օրի. Աղեքսանդրացի։

(3) Մի օրի. Կիւլիկիոյ։

Իսկ Եւտիքէս նզովեաց զհերձուածն իւր բայց ոչ եկաց ՚ի բաց յաղանդոյն. զի առ աչօք ասէր զտնտեսութիւն Տեառն մերոյ. և նզովեցաւ ՚ի ժողովոյն ։

Եւ Փլաբիանոս արարեալ էր գրով ըզխոստովանութիւնն իւր. և գտաւ ՚ի նմա ձեռագիր Բասլի Սելեւկիոյ եպիսկոպոսին, և Յուլիանոսի Հռովմայեցւոյ. և զԵւստակոսի Կիպրացւոյն, և Սելեւկիոսի Եմեսացւոյ. վասն որոյ յընթեռնուլն զգրեանսն միաձայնեալ բազմութեանն ասեն. այրեցէք, այրեցէք զանաստուած տումարդ. և եղիցի նզովեալ Փլաբիանոս, և հաւանեալքն նմա ։ Եւ ընկեցին զնոսա յաթոռոյ ։

Ջնջէ ապա զԴոմնոս Անտիոքացի, և եւթն եպիսկոպոս ՚ի հնազանդելոց նորա. զԻրինոս՝(1) Սրոյ եպիսկոպոս. և զԱկիմոս զԵպաւլայ՝ և զԹէոդորիտոս Կիւրխոյ(2), և զԻբաս Ուռհայոյ, և զՍեբերիոս Թմաղոյ, և զԴանիէլ Խառանու. և նզովեցին ընդ նոսա և զտոմարն Լեւոնի զարհամարհեալն յառաջին ժողովոյն. և արժանի ոչ համարեցան ընթեռնուլ ։

Եւ գայր թուղթ աղաչանաց ՚ի թագաւորացն ոչ յաւելուլ և ոչ պակասեցուցանել յերից ժողովոյն սահմանաց. այլ ընդ նոյն հաստատել զերրորդն պատուել 'ի փառս սրբոյ Երրորդութեանն. զոր և արարին իսկ. և գրեցին խոստովանութիւն տնտեսութեանն Քրիստոսի։ Մի դէմ, մի բնութիւն, մի Քրիստոս, որոյ մի կամք, և մի գործք. նոյն Աստուած և մարդ կատարեալ այսինքն հոգի, մարմին, միտք ճշմարտապէս և ոչ կարծեօք. և յայսմանէ հրաժարեալքն եղիցին նզովեալք։

---

(1) Մի օրի. զԵրէնիոս. զԵրինոյ ։
Մի օրի. զԵրինոս. Մի օրի. (2) Մի օրի. Կիւրիոյ ։

Իսկ յետ արձակման գնացին առաքեալքն 'ի Լեւոնէ և պատմեցին զեղեալն. և խոցեցաւ խորագոյնս. և առաքեաց կոչեաց ընդ Փլաքիանոս և լուաւ զխոստովանութիւն նորա, և յոյժ հաճեցաւ։

Եւ ասաց Փլաքիանոս ցԼեւոն եթէ Նեստորական ասաց զքեզ Դէոսկորոս և ընդ նմին նզովեաց զքեզ. և զամենայն հաւանեալսն քեզ։

Իսկ Լեւոն անկաւ 'ի տարակոյս. խորհէր հնարս ընկենուլ զԴիոսկորոս։

Յայնմ ժամանակի 'ի պատճառս աղօթից գնացին 'ի Հռովմ կին Թագաւորին եւ Պօռքէր (1) քոյր նորա. և ըստ հրամանց պատուեցան 'ի Վաղենտիանոսէ Թագաւորէն, որ էր հօրաքեռ որդի փոքր Թէոդոսի, և յամենայն բնակչացն Հռովմայ. և առեալ տանէին զնոսա 'ի տաճար սուրբ առաքելոցն. և եկին ընդ առաջ նոցա ուխտ եկեղեցւոյն, և Լեւոն ոչ էր ընդ նոսա. այլ ընկէց զինքն 'ի ներքոյ վարագուրին յերեսաց կուսէ, և սկսաւ լալ. և վերացուցեալ զվարագոյրն հարցին ողոքանօք և պատկառանօք զպատճառն, և բուռն հարեալ նստուցին զնա, և ասէ ցնոսա. պատառեաց Դիոսկորոս զհաւատս ուղղափառս, և նախատեաց զաթոռ սուրբ առաքելոցն ։

---

(1) Ոմանք՝ Պօղքէր։

Եւ նոքա մխիթարեցին զնա և ասեն. լինի ըստ կամաց քոց հայր զոր ինչ և հրամայես ։

Եւ կալաւ զնոսա բարեխօս առ Թագաւորն դարձեալ հրաման տալ տիեզերական ժողովոյ ։ Եւ գրեաց ընդ նոսա Թուղթ աղաչանաց, զայն առնել, զի լուիցեն ասէ ամենայն տիեզերք զձեռագիրն իմ և քննեսցեն, և մի՛ դնեսցեն զիս ընդ նզովիւք Նեստորի չարափառի ։

Իսկ իբրեւ լուաւ Թագաւորն՝ հրաժարեաց 'ի խնդրելոյն և ասէ, ես հաւատացեալ և հաւանեալ եմ ընտրութեանն Կիւրզի և Դիոսկորոսի. որք դատեցան զԼեւոն զուգաբան Նեստորի, և այն կացցէ սահման հաւատոյ զոր նոքայն եդին ։

Եւ մնացեալ Թագաւորն երկիւղած յառաքելական հիման հանգեաւ 'ի Քրիստոս, յիսուն ամաց, Թագաւորեալ ամս քառասուն երկու ։

Եւ էառ զԹագաւորութիւնն Մարկիանոս քեռորդին Թէոդոսի, այր ծեր, տգէտ և առանց դպրութեան, ամս վեց, ընտրութեամբ Պողքերայ քեռ Թագաւորին որ և պոռնկութեամբ անկեալ էր ընդ նմա, 'ի հաւատաւորաց կարգի գոլով. և յառաջին ամին Թագաւորութեան նորա գայ նոյն Թուղթ աղաչանաց 'ի Լեւոնէ ժողով առնել որքան և է հնար յոլովաթիւ (1) քան ըզ Դիոսկորոսին 'ի պարծանս ինքեանց. և յիշեցուցանէր Պողքերայ զխոստումն իւր և ասէր. աւադիկ առաքեցի առ ձեզ զտոմարդ իմ պատուելի. զի նախ քան զգումարումն ժողովոյն առաքիցէք 'ի կողմանս Ասիոյ առ ամենայն եպիսկոպոսունսն. և պահանջիցէք ձեռնարկս, զի մեզ ոյժս ստացուք ։

Եւ նոքա յորժամ լուան հաւանեցան սակս երկու պատճառի, մի՝ վասն երդման և խոստմանն Պողքերայ, և երկրորդ՝ վասն երկիւղին Վաղենտիանոսի և Հռովմայ, և նորին Լեւոնի. զի ոչ էր օրէն առանց նոցա Թագաւոր օծանել 'ի Կոստանդնուպօլիս. յորմէ յոյժ էին զարհուրեալք, զի վարային այն ոչ ներեաց քննել ըստ օրինացն:

---

(1) Մի օրի. յոլովս. ո. մանք՝ յոլովութիւն ։

Իսկ այսու կամեցան հաճել զկամս նոցա ընդ ինքեանց. վասն որոյ գրեցին Թուղթս արքունի հրամանաւ աղաչանօք, այլ և սաստիւ և սպառնալեօք եթէ ոչ հաւանեսցին ձեռագրել 'ի տոմարին Լեւոնի: Եւ առաքեցին ընդ աշխարհն պատուաւոր արամբք արքունի. և 'ի Հռովմայ եկեալ եպիսկոպոսք ետուն ձեռագրել հաւանելոյն. և դարձուցին առ Թագաւորն և առ Պողքեր զտոմարն յորում կայր չորս հարիւր քառասուն և վեց եպիսկոպոսի ձեռագիր. և խնդացին յոյժ: Ձեռագրեցին ապա և ինքեանք:

Եւ ապա առաքեցին հրաւիրակս ընդ ամենայն երկիր բաց 'ի Հայոց, որ ոչ էր ընդ իշխանութեամբ նոցա. և յայնմ ժամանակի Հայրապետն (1) ասեն փախձանեալ էր. և այլ ոչ էր եղեալ, ոչ առաքեցին առ նոսա, և եղեւ ոչ առանց խնամոցն Աստուծոյ. զի նախնեացն յիշատակն պահեսցի առ նոսա։

---

(1) Ըստ ամենայն օրինակք չյիշեն զանուն Հայրապետին, միայն մի օրինակ դնէ զՍահակ Հայրապետն: Իսկ պատմութիւնք հաստատեն յայսոսիկ աւուրս և ըզ-

Սակայն ժողովեցան եպիսկոպոսք եւթն հարիւր, որոց գլխաւորք Տրոմփիկոս, Լելոքաս, Լունկինիոս, Ասկողայուն փոխանորդ Լեւոնի Հռովմայեցիք, Յոբնաղ՝ Երուսաղեմի, Դիոսկորոս՝ Աղեքսանդրի, Դոմնոս Անտիոքայ, Վասիլոս՝ Սելեւկիոյ, Պետրոս՝ Վիրիայքին՝ եպիսկոպոս Գաղացւոցն՝ և գըլխաւոր Փղշտացւոցն՝ և Թէոդորիտոս զոր եդին գլուխ ժողովոյն զնզովեալն երկիցս անգամ, ցոր ասաց սուրբն Դէոսկորոս ի՞նչ է այդ անօրէնութիւնդ զոր առնէք. ո՞չ յիշէք զբանն Պօղոսի, եթէ զոր քակեցին միւսանգամ շինիցեմ, յանցաւոր անձամբ գտանիցիմ, և զիա՞րդ զքակեալդ անիծիւք դնէք շինիչս՝ զմեռեալդ Աստուծոյ։ Եւ կցորդեաց նմա Յոբնաղ և շարժեցան ամենեքեան. և եղեն ընդ Դիոսկորի, և ասեն, նզովեաց մեծըն Կիւրեղ եթէ դիցէ ոք ինչ նոր օրէնս. և զնոյն ասեմք և մեք եղիցի նզովեալ նորագիրն հաւատ զոր ոչ եդին առաքեալքն.

Յովսէփ կաթուղիկոսն իսկ վախճանեալ ղ յաջորդն Սահակայ Պարթեւի։ Եւ յայսոսիկ աւուրս յաջորդէ ըղգահն կաթողիկոսութեան Մելիտէ կաթուղիկոս։

եղիցին նզովեալք, նզովեալքն 'ի Սիւնոդէ ։

Ապա տրտմեցաւ Թագաւորն և Պողքեր. և սկսան փաղաքշել սպասաւորելով անձամբք և տալով կաշառս. և ետ Յոբնաղայ 'ի Փռղւտացւոց յաշխարհէն երիս (1) քաղաքս. և ած զնա 'ի հաւան. գնացին ընդ նմա և չորս հարիւր քառասուն և վեցքն, որ ձեռագրեալ էին 'ի տոմարն ։ Այլ մնացին ընդ Դիոսկորի երկու հարիւր յիսուն և չորս, որք կապեցան չարչարեցան աքսորեցան և մեռան և ոչ մեկնեցան 'ի սիրոյն Քրիստոսի ։ Այլ այլքն որք ընդ նմա՝ յորոգայթս գնացին խաբէութեամբ, զկոյսն Աստուածածին ասացին. և երկու բնութիւնս Քրիստոսի յատկացեալս, զի թէ յատկանան բնութիւնքն ըստ նոցա չարեացն, զիա՞րդ իցէ կոյսն Աստուածածին. յաղագս որոյ լցան տիեզերք խռովութեամբ. և երկու ամ և կէս յամեաց ժողովն ։

Եկին ոմանք բանիբունք փիլիսոփայք 'ի Հայոց (2). և մեղադրեցին և յաղթահարեցին զԼէոնեանսն (3) Աստուածաշունչ գրովք և փիլիսոփայական ոճով . և գնացին աներկիւղ համարձակութեամբ ։

---

(1) Երկու օրի. երկուս քաղաքս. ոմանք՝ երկիցս քաղաքս ։

(2) Մի օրի. նշանակեալ ունի 'ի լուսանցն Մովսէս և Դաւիթ ։

(3) Մի օրի ։ զԼեւոնեանս

Իսկ նզովեալքն 'ի Կիւրղէ և 'ի Դիոսկորոսէ և պատուով և ճոխութեամբ գնացին յաթոռս իւրեանց. զօրականօք և պարգևօք.

Իսկ զՅոբնաղ ոչ ընկալաւ Երուսաղէմ. այլ եդին իւրեանց Պատրիարք զԹէոդորոս և հաւանեցան նմա ։

Բայց Յոբնաղ գրեաց զիրսն առ Մարկիանոս, և նա առաքեաց զօրս. և եհան ըզԹէոդորոս. և հաստատեաց զՅոբնաղիս . որ և շրջէր ընդ Պաղեստինէ հրէիւք և հաւանեցուցանէր աղանդին. և զոչ հաւանեալսն չարչարէր, կողոպտէր, սպանանէր 'ի ձեռն Հրէից ։

Բայց միայն պատկառէին 'ի Պետրոսէ Գաղացւոյն եպիսկոպոսէ վասն առաւել առաքինութեան նորա զոր ասեն զնա որդի լեալ արքային Վրաց, լեալ պանդուխտ(1) 'ի Կոստանդնուպօլիս որ և ուսաւ զաստուածաշունչ գիրս . յօժարեցաւ 'ի խիստ կրօնս և եղեւ հռչակաւոր, և հարկեալ զնա արարին քահանայ, և արքեպիսկոպոս Պաղեստինոյ որ նստէր 'ի Գաղայ և ոչ ոք իշխէր ընդդիմանալ նմա ։

(1) Երկու օրի. Պատանդ ։

Սա գրեաց թուղթ 'ի Հայս և երանեաց նոցա վասն ոչ լինելոյ նոցա 'ի ժողովն. և ասաց որպէս երբեմն աշխարհդ այդ տապանաւն եւս զսերմ մարդկութեանս ամենայն երկրի, նոյնպէս տալոց է և սերմ ուղղափառութեան ամենայն աշխարհի, արդ՝ պինդ կացէք յանսասան վէմն Քրիստոս որդեակք իմ սիրելիք, և ողջ լերուք յաւիտեան։

Այս Պետրոսի սրբոյ աշակերտ ոմն Յովհան անուն միայնակեաց և տեսող գրեաց բան եւթանասուն երկու (1) զոր գիտէրն, և զոր լուան նախատեսութիւնս ինչ, որ և նախ քան զժողովն. և յետ ժողովոյն ցուցանէ. և ասէ թէ ամբարտաւան ժողովն Քաղկեդոնի և անօրէն 'ի բարկութենէն Աստուծոյ եղեւ և 'ի Թողոյն 'ի ձեռաց. և ոչ 'ի յազդմանէ Հոգւոյն սրբոյ որպէս Նիկիոյն, Կոստանդնուպօլսին և Եփեսոսին. զոր մեք կամիմք աստէն 'ի տեղւոջս կարգել յօգնութիւն ուղղադաւան հաւատացելոց։

Եւ թէպէտ յետոյ և առաջին եղեւ իրքըն, մեք մի հատցուք զբանս սուրբ առն Աստուծոյ Յովհաննու որ է այսպէս։

---

(1) Ամենայն օրի. միաբան և. եւթանասուն դնեն 'ի բասեն եւթանասուն երկու, Նը., 'ի կարգի։

Ա. Պատմեաց մեզ հայրն մեր և հայրապետն սուրբ Պետրոս. թէ սկիզբն աղանդոյն Քաղկեդոնի՝ Նեստորիոս եղեւ. քանզի էի ես անդ ՚ի Կոստանդնուպօլիս ՚ի տօնի սրբոց քառասնիցն. և էաք յաւագ եկեղեցին. հայեցաւ Նեստոր ՚ի պատկեր Տիրամօրն. և ասաց. ով Մարիամ. մի պարծիր թէ զԱստուած ծնար, զի դու մարդ ես և մարդ ծնար որպէս ասաց քահանայն իմ. և առ ժամայն հարաւ ՚ի դիւէ և զարկաւ զգետնի։ Եւ բարձեալ զնա սարկաւագացն տարան յարկս իւր. և այս եղեւ սկիզբն պղտորման Եկեղեցւոյ։ Թէ և սակաւ մի լաւեաց Նեստոր յետ պատուհասին, այլ ոչ եթող զանօրէնութիւնն։

Բ. Պատմեաց ինձ և նոյն սուրբ հայրն իմ վասն Պըլակիանիսի (1) Ուռհայեցւոյ. որ էր սուրբ ճգնաւոր. և ունէր հոգի մարգարէութեան, եթէ լուաւ նա զհերձուածն Հիւբասայ, և յանդիմանեաց զնա. և ոչ լուաւ նմա. և զայրացաւ սուրբն և եկն ՚ի Փղիշտա. և կայր անդ լռութեամբ։ Եւ գայր առ իս ՚ի Գազայ օր ըստ օրէ վասն հոգեւոր իրաց ինչ։ Եւ յաւուր միում եղեւ ՚ի զարմացման (2) ժամս ինչ. և իմացաք եթէ երեւումն ինչ եղեւ նմա. և հարցեալ մեր զպատճառն, յետ այնորիկ ասաց. յառնէ թագաւոր յետ եւթն ամի Մարկի (3) անուն. և առնէ ժողով և հաստատէ զՆեստորին, և կրեմք ես և դու զվիշտս, և ՚ի նոյն կատարիմք։

Գ. Դարձեալ նոյն սուրբ Պալակիոս յաւուր միում եղեւ ՚ի տեսլեան և ասաց. վա՜յ Պողքէր. վա՜յ Պողքէր. և ժողովեցան բազումք ՚ի հարցանել. և ասէ Պողքէր որ նուիրեաց զանձն Աստուծոյ պոռնկեալ անկանի յԱստուծոյ և լինի կործանիչ ուղղափառութեան (4)։

Դ. Պատմեաց նոյն այրն Պալակիոս եթէ գնացի ես երբեմն յԵրուսաղէմ և գտի անդ զսուրբն Աստուծոյ զԵւիլէոս(1) եպիսկոպոս ճգնաւոր և առաքինի. և սուրբ Պամփիլէ սարկաւագն աղօթէր 'ի սուրբն Գողգոթայ. և եղև 'ի զարմացման. և յետ աղօթիցն ասաց, եղբա՛րք, այս Եւիլիոս որ պատուեալս է յամենեցուն, լինի ժողով 'ի Քաղկեդոն. և ընկենուն զսա յաքսորս վասն ուղղափառ հաւատոյ և յայսոսիկ մեռանի:

---

(1) Մի օրի. Պլաճիանոսի։ նոյն։

(2) Մի օրի. ՚ի զայրացման։

(3) Երկու օրի. Մարկիանէ ա.

(4) Մի օրի. հաւատոյ։

Ե. Դարձեալ նոյն սքանչելին Պալակլիոս յաւուր միում ասաց ընդ հայրն Պետրոս և ցՅովսէփ ներքինի. այժմ ընթերցարուք զգրեանդ, զի զգուշացուսջիք զհօտն (2) Քրիստոսի զոր յանձնեաց ձեզ: Զի գան աւուրք յորս ոչ պարապեմք 'ի հալածանաց: Եւ ասէ ցսուրբն Պետրոս, մեծ տրտմութիւն է կրելոց սուրբ Եկեղեցի յետ աւուրց. եւ յորժամ լինիցի ժիշէք ապաքէն. և ինքն սկսաւ աղօթել: Տէր իմ Աստուած Յիսուս Քրիստոս, մի տանիր զիս 'ի ժամանակին յայն. ոչ փախչիմ 'ի հալածանաց. այլ ոչ կամիմ տեսանել զանարգանս Եկեղեցւոյ քո: Այլ որպէս և կամիս առ զոգի իմ յինէն. և ուր և կամիս ժողովեա զիս: Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ գնալ նմա 'ի տեղի իւր. և կալաւ զնա ցաւ, և պատահեաց նմա այր մի սուրբ, և Աստուծոյ կամեցեալ լնուլ զաղօթսն Պլակիոսի, անկաւ առաջի նորա և ասէ. հայր, յիշեա զիս յաղօթս, և վճարեցաւ. և ողջ արար այրն մերձակայ գեղջն. և եկեալ տարան զնա և պատուով թաղեցին:

Զ. Պատմեաց մեզ Յովհաննէս քահանայն Աղեքսանդրացի, եթէ մինչ մանուկն էի ես կամեցայ գնալ 'ի մեծ քաղաքն Աղատիաս յուսումն իմաստասիրութեան. և մտի յայրն ուր էր մարգարէն մեռեալ. և սկսայ աղօթել, և խնդրել զկամս Աստուծոյ բարեխօսութեամբ առն Աստուծոյ. և եղեւ առ իս ձայն, որդեակ չկայ խաղաղութիւն չկայ ժամանակ բարւոյ, զի յառնէ թագաւոր Մարկիանէ անուն, և առնէ ժողով որ ուրանան զմահն Աստուծոյ խաչիւ, և ամէն մարդ խաշեցաւ. և յառնէ պատրիարք Դիոսկորոս անուն որ կայ ընդդէմ աղանդոյն՝ և 'ի նոյն մեռանի վկայութեամբ. և շփոթ ժողովոյն ոչ դադարէ մինչև ցնեռաննս

---

(1) Մի օրի. ՂԵԼԻոս: օգնութեամբ հասան՝ զհատոր

(2) Ոմանք՝ զհատորն. Ներքեւ ընդօրինակեալ:

Է. Հայրն Զենոն 'ի Վերաղոս (1) գեղջէ Փղշտացիս ասաց ցայլն Ստեփաննոս, եթէ կամիս յստակութիւն գնալ, արի՛ գնա՛. և եթէ կամիս ինչ բարի առնել, արդ ապագի ժողով լինելոց է խռովիչ Եկեղեցւոյ. և ինքն խնդրեաց 'ի Տեառնէ մահ, և վճարեցաւ ըստ կամի իւրոյ:

Ը. Պատմեաց հայրն Անոկտիոս Պամփիւլացի գլուխ եղբարց, եթէ այր մի սուրբ բնակէր յառանձնական խրճիթ: Եւ եկն առ նա սատանայ և ասէ ցնա. Հնազանդեա ինձ, և նա ասէ մի՛ բարի քեզ, և ասէ սատանայ չհնազանդիս, ահա առնեմ ժողով զի ամենեքեան հաւանին ինձ. և զայս ասաց, զի լցին զկամսն սատանայի, ասելով թէ մարդ խաշեցաւ վասն աշխարհի. զի նա հաւանեցոյց:

Թ. Ի նմին ամի յորում լինելոց էր ժողովն, խաւարեցաւ արեգակն, և տեղեաց օդք քարինս և հողս ընդ յերկիր, և էին քարինքն որպէս ձեռագործս մարդկան, և որք առին զքարինս 'ի ձեռս իւրեանց կուրացան յԵրուսաղէմ և 'ի Փղիշտ: Իսկ Եւսեբի առաքեաց 'ի Կոստանդնուպօլիս առ Եդոքսիայ զի անդ ոչ եղեւ, և գուշակեաց եթէ պատճառ խաւարման եկեղեցւոյ լինելոց է:

Իսկ Պետրոս և Անդրէաս աշակերտքն իւր վկայեցին եթէ 'ի լինել ժողովոյն կուրացեալքն օծանէին զաչս իւրեանց արեամբ սպանելոցն վասն ուղղափառութեան. և լուսաւորէին 'ի փառս խաշելոյն Աստուծոյ:

Ժ. Ի նմին ժամու յորում զթագն եդին 'ի գլուխ Մարկիանեայ (2) խաւարեցաւ արեգակն և ասաց Մարկիանէ թէ այս նշանակս այս է որ մինչև 'ի յիմ թագաւորութիւնս խաւար էր, և արդ լինելոց է բարութիւն և լոյս, մի՛ ինչ տրտմիք ընդ պատահմունս:

---

(1) Երբեմն օրի. 'ի Վերաղոս: Մարկիանէ:

(2) Ամենայն օրինակք ունին

ԺԱ. Ի գմբէթ եկեղեցւոյն որ կայ 'ի տեղւոջ համբարձման տեառն; կայր խաչ ոսկի. և 'ի լինել ժողովոյն յանկարծ այրեցաւ, և եղեւ փոշի. և գրեցին 'ի Կոստանդնուպօլիս և առաքեցին խաչ պղնձի. դնել 'ի տեղւոջն ։

ԺԲ. Եւ յորժամ՝ եղեւ ժողովն վիճելին 'ի Կեսարիա թէ մարդն խաչեցաւ և եղեւ պատարագ նոցա միս և արիւն մարդոյ, և ոչ կարացին ճաշակել. և պահեցաւ առ բազումս ։

ԺԳ. Պատմեաց հայրն Եսայի եթէ ասաց հայրն Պօղոս Եթովպացի որ հարիւր տասն ամաց էր 'ի Տէր. եթէ զկնի քսան ամաց մեծ շփոթ լինի Եպիսկոպոսաց 'ի ձեռն Մարկիանեայ, որ թագաւորէ վեց ամ. և յետ այնորիկ լինի սակաւ մի խաղաղութիւն, և դառնան վերստին 'ի նոյն չարիսն մինչեւ 'ի սուտ Քրիստոսն ։

ԺԴ. Ասաց հայրն որ ասի երեք մեռելեան որ յԱնդրեացն Աղէքսանդրի (1) էր. թէ գնացի ես առ հայրն Եսայի և նա ունէր 'ի ձեռս իւր Միրա (2) և միտք իւր վերացեալ էր և յամեցի առ նմա. և պատկառեալ իմ դարձայ. և կոչեաց զիս. և ասէ. Նիստ և գրեա՛ թէ սուրբն, Տիմոթէոս որ այսօր յաքսորս է. յետ սակաւուց դառնայ և կանգնէ ուղղափառութիւն զերկուս ամս, և ննջէ ։ Եւ յետ նորա լինի արկաւագապետն իւր եպիսկոպոս և յաւուրսն յայնոսիկ լինի պատառումն մեծ որ ոչ ողջանայ մինչեւ յերեւումն սուտ Քրիստոսին ։

ԺԵ. Պատմեաց հայրն Պօղոս անապատաւորն և ասէ ումն 'ի հարանցն տեսող մարգարէ, տեսանէր ժողովեալ զամենայն եպիսկոպոսս երկրի. և վառէին թոնիր, և կալեալ լուսապատկեր երիտասարդ մի, և ընկեցին զնա 'ի թոնիրն և ծեփեցին. և յետ երից աւուրց տեսանէր կենդանի ելեալ զերիտասարդն. և ասէ ցնա տէր. ո՞վ էին որ ընկեցին զքեզ 'ի հուրն. և ո՞վ եհան զքեզ անտի. և նա ասէ Հրեայքն

---

(1) Մի օրի. յԱնդրէայն Ա- ղեքսանդրի ։
ղեքսանդրի էր. այլ՝ յանդրիմանն Ա-

(2) Երկու օրի. միրոյ ։

Նեստորականքն • Քաղկեդոնեայքն և եպիսկոպոսքն այնք որ ասեն մարդ խաչեցաւ վասն աշխարհի • և այրեցին զեկեղեցի իմ • և ծեր մի որ ոչ միաբանեաց ընդ նոսա փրկեաց յամենեւին յայրմանէ զմարմին իմ ։ Եւ ասեմ ո՞ էր նա Տէր, և ասէ • Դիոսկորոս, զի որպէս Կիւրենացին էր Սիմոն որ եբարձ զխաչն իմ, և Կիւրենայ աշխարհ է Լիբիոյ որ բառնան զխաչն իմ պարծանաց, 'ի ձեռն Դիոսկորեայ և պահեն զուղղափառութիւն ։

ԺԶ • Սուրբն Տիմոթէոս 'ի ժամ ննջման իւրոյ պատմեաց եթէ մինչ մանուկն էի և երթայի յաւուր միում 'ի դպրոցն պատահեաց ինձ այր մի լուսազարդ ծեր, համբուրեաց զգլուխ իմ և ասէ ցիս երիցս, ողջոյն ընդ քեզ Տիմոթէոս հայրապետ կատարելութեան, դու լինիս պատճառ ողջութեան անդամոց Քրիստոսի ։

ԺԷ • Պատմեաց նոյն Տէմոթէոս, եթէ գնայի ես 'ի տեսլեան 'ի Սելովամ • և տեսի անդ վանք մի աւեր և ամենայն պտղաբերք նորա դարձեալ էին 'ի փուշ և այգիքն բեկոտեալք ուռք և որթք • և ասեմ զի՞նչ է այս . և ասեն ցիս, այս վանքն է Յոբնաղայ ուստի կոչեցաւ նա յեպիսկոպոսութիւն և եղեւ հակառակ Դիոսկորի 'ի ժողովն Քաղկեդոնի, և կատարեցաւ առ նա բանն թէ եղիցի բնակութիւն նորա աւերակ և 'ի յարկս նորա մի ոք լիցէ որ բնակիցէ ։

ԺԸ • Յաւուրս աղուհացից շրջէր Յոբնաղ ըստ առաջին սովորութեանն խրատել զնոսա և գնաց 'ի դուռն տեսող մենաւորի և փակեաց ընդդէմ նորա • և նա երթեալ բախէր • և ասէ ցնա միայնականն գնա՛ սուտ քրիստոնեայ(1) • գնա՛ Յուդա մատնիչ • և նորա հեգնեալ ասէ պահքն տարեալ է զխելսն, թող տուք դմա և գնացին ամօթով ։

ԺԹ • Անագոս մի յԵրուսաղէմ 'ի Պրոպատիկէն տեսանէր զՏէրն զի մտանէր 'ի տաճարն հրեշտակօք, որք ունէին լապտերս շիջեալս, և ասէ Տէրն մոռացան զերախտիսն զիմ՛ է զպարգեւսն իմ․ վա՜յ քեզ եղկելի Յոբնադիոս արարեր զտունս իմ՛ այրս աւազակաց․ բոզոց և պոռնկաց, և շնանոց, և բացաւ առաջի նորա խորհրդանոցն․ և սկիհն էր աղտեղեալ և փոշոտեալ կտաւով ծածկեալ. և ասաց Տէրն․ հանէք զդա և ձգեցէք, զի չէ դա իմ․ և զԱնաստասն տանել աստի․ և նա ասէ ողորմութեամբ օգնեա ինձ Տէր․ և վերացաւ Տէրն․ և լուաւ Յոբնադ զբանն և զանգիտեալ եթէ համբաւէր տեսիլն, 'ի գիշերի աներեւոյթ արարին զԱնաստասն․

---

(1) Ոմանք՝ սուտ Քրիստոս .

Ի․ Յաւուրսն յայնոսիկ ոմն 'ի սրբոցն Պետրոս անուն ետես զսուրբ խորհուրդն ապականեալ 'ի տեսլեան․ և ոչ եւս հաղորդեցաւ մինչեւ ցօր մահուանն իւրոյ։

ԻԱ․ Ոմն անապատաւոր Պօղոս անուն որ բնակեալ էր յԵրուսաղէմ հեռագոյն 'ի քաղաքէն տասն և եւթն միլ, տեսանէր 'ի տեսլեան դաշտ մի և 'ի մէջ նորա բլուր մի․ և 'ի վերայ նորա խորան մի, և 'ի վերայ նորա սեղան մի ոսկի․ ակամբք և մարգարտով զարդարեալ․ և ցոլմունք շառաւիղաց հեղեղնաց հատանէին 'ի նմանէ, և բազմութիւն զօրաց կային նմա 'ի սպասու հազարք հազարաց և բիւրք բիւրուց։ Եւ եկեւ ձայն յերկնից, որ ասէր, նզովեալք եղիցին ամենեքեան որ ասեն Քրիստոսի երկու բնութիւն․ և շուրջքն ասացին ամէն․ և ազգք և լեզուք ամենայն լցեալ ունէին զդաշտն տասանեալք յոյժ։ Եւ եկեւ կրկին ձայն որ ասէր նզովեալք եղիցին որք բաժանեն զմինն և զանբաժանելին․ անիծեալք են ուրացողք միութեանն․ և միաձայնեալ հասարակ ասացին․ ամէն եղիցի եղիցի։ Եւ տեսանէր սուրբն ըզՅոբնադ զի անցանէր և ասէր․ անցանեմ ընդ քեզ և ասի ոչ ունիմ տեսանել զքեզ․ 'ի ժողովս գնամք․ 'ի պատերազմ երթամք կռուել տան զխորհուրդն Աստուծոյ կամ մեռանել։ Ուրանալ տան մեզ զհայրենի հաւատն մեր, և զՄիածինն խոստովանել և զՀոգեկիրն․ և ասել ոչ էր Աստուած խաչեալն։

ԻԲ․ Յետ այսորիկ տեսանէր նոյն ծեր զՅոբնադիս յանկեան մի կանգնեալ սեւացեալ իբրեւ զածուխ որ բազանիրան այրէ. և ասէ ցնա ծերն ընդէ՞ր ես այդպէս. և նա ասէ, զի տեսանեմ զամօթ իմ. քանզի ոսկի բազում ժողովեմ սուտ Քրիստոսին. այն որ պատերազմելոց է ընդ բընութիւն հողոյ. և խնդաց ծերն թէ ընդ մարդկային բընութիւնս է պատերազմելոց՝ որ 'ի հողոյ է։

ԻԳ. Վանք մի էր 'ի սահմանս Տրապօլէաց և անուն առաջնորդին Պամփիլիոս որ 'ի հարկէ լինալէր եպիսկոպոս՝ այլ սքանչելի վարուք։

Իսկ Վասիլիոս եպիսկոպոսն Սելեւկիոյ մինչ գնայր 'ի ժողովն, տարաւ և զնա աղաչանօք. և յորժամ հասեն նա զի զառաջինն նզովեսցին զերկու բնութիւն ասողն, և դարձան ուրացան, և աքսորեցին զուղղափառսն, տրտմեցաւ զայրացաւ, խռովեցաւ, և առանձնացեալ զինքն 'ի տան միում, և խնդրէր յԱստուծոյ արտասուօք զգալ և ցուցանել յայտնել նմա զոր արարին նոքա. և թէ զի՞նչ է հաճոյ նորա բարեկամացն. և եղեւ առ լուսն 'ի տեսլեան և տեսանէր տախտակ մի ոսկեղէն 'ի կամարէ երկնից մինչեւ առ ինքն պարզեալ. գրեալ ճարտար գրչի յերկուց կողմանց զայս օրինակ. նզովեալ եղիցի ժողովն Քաղկեդոնի. ուրացան զիս, ուրացան զիս. նզովեալ եղիցին, նզովեալ եղիցին. և տեսեալ զայս 'ի գիշերի միում, եմուտ 'ի նաւ և գնաց 'ի տեղի իւր և պահեաց զքաղաքն իւր Տրապօլիս յուղղափառութեան ամս տասն և եօթն, կրելով միշտ ոչ սակաւ 'ի Վասիլեանէ։

ԻԴ. Ստեփաննոս հայր եղբարց Դակլեա վանից 'ի Սելեւկիայ ասէ, թէ ոչ կարէի հաւատալ եթէ Վասիլիոս անկաւ 'ի ճշմարտութենէն, զի շնորհանակ և գիտուն էր. և յորժամ դարձաւ 'ի ժողովոյն, խնդրեաց յԱստուծոյ ցուցանել նմա եթէ ուրիցի ճշմարտութիւնն. և տեսանէր 'ի տեսլեան զի մտանէր Վասիլիոս յեկեղեցին. և ժողովուրդն պատուէր զնա. և յորժամ կամէր բանալ զբերանն և ասել աղօթս, այր մի լուսաւոր մտեալ ընդ նմա. և ած զձեռն 'ի բերան նորա. և եհան զնա արտաքս և ասէ, չես արժանի. այլ որպէս դու դարձուցեր զերեսդ յԱստուծոյ, դարձոյց և Աստուած զերեսս իւր 'ի քէն։

ԻԵ. Դարձեալ նոյն Ստեփաննոս խնդրեաց 'ի Տեառնէ ցուցանել նմա թէ զի՞նչ կոչի ժողովն Քաղկեդոնի. և տեսանէր զմի առաքելոյն Քրիստոսի. որ տանէր զնա յարքունիս լինչ, ուր կային եպիսկոպոսք ժողովոյն. և ասէ ցնա առաքեալն Քրիստոսի, այս են ատելիքն Քրիստոսի. այս են ուրացողք նորա. և ետ 'ի ձեռս նորա խարազան և ասէ, հան զամենեսեան արտաքս զթշնամիսդ ճշմարտութեան։

ԻԶ. Այր մի էր հոգեւոր Ռամանոս անուն 'ի գեղջէն Աքելմէուլայ 'ի Պաղեստին, առաջնորդ եղբարց վեց հարիւրից. որք ասէին ցնա ընդէ՞ր լռեալ կաս և ոչ նախանձիս զնախանձ Տեառն. և ասէին խնդրեա՛ 'ի Տեառնէ թէ զի՞նչ է աղմուկ ժողովոյն Քաղկեդոնի որով խռովեալ է աշխարհ. և ասէ ցնոսա. ներեցէք ինձ զաւուրս տասն և գնաց ընդ յանապատն խնդրուածովք արտասուաց. և եղեւ առ նա ձայն և ասէ ցնա. գնա՛ պահեա՛ զհաւատն Նիկիոյ. և եկեալ պատմեաց նոցա. և ասեն եղբարքն. իսկ Յոյնք ասեն եթէ զՆիկիոյ հաւատն մեք ունիմք. և գնաց հայրն և կրկնեաց զպահսն. և ասա՛ ցնա երկրորդ անգամ ձայնն, գնա՛ պահեա՛ զխոստովանութիւնն Պետրոսի և Բարսղի և Գրիգորեանցն, և եկեալ ասաց եղբարցն։ Եւ նոքա ասեն վասն Տեառն որովհետեւ գտեր շնորհս յԱստուծոյ, պարզեա զմիտս մեր. նոքա ասեն եթէ մեք անսխալ ունիմք զդաւանութիւն յիշեալ սրբոցդ. և դարձաւ սուրբն անդրէն երրորդեաց զաղօթսն վասն խնդրոյն. և տեսանէր կոնդակս ինչ գրեալ և պարզեալ յերկնից մինչեւ առ ինքն. և գիրն էր այս, ուրացան զիս ժողովն Քաղկեդոնի և անցին զաւանդանօք ուղղափառացն։ Վայ է նոցա և նզովեալ է բաժին նոցա. և իբրեւ ընթերցաւ զայս և լուաւ. ոչ չոգաւ առ եղբարսն, այլ յԵրուսաղէմ երթեալ պատմեաց. և շարժեցաւ քաղաքն Երուսաղէմ և հանին զչարափառսն. և հանին զՅոբնաղ, և եդին զԹէոդորոս. և լուաւ Մարկիանէ և առաքեաց հաստատեաց զՅոբնաղ տանջելով զընդդիմացեալսն, և լռեցին. և եղբարքն հաստատեցան։

ԻԷ. Պատմեաց քահանայն Աւփիլիոս (1) Կեսարացին եթէ մինչ էր Տիմոթէոս յաքսորս 'ի Խրոսանոս կղզին, գնացի ես առ նա և տեսի վէր սաստիկ յոտս նորա՝ որ էր նա տուր ցաւ անբժշկելի. և մերձակայք նորա ոչ դարմանէին զնա. և ես աղաչեցի զի լուացից զԹարախն. և ասէ ցիս ո՞չ տեսանես սպի յաչս իմ: և ասեմ այո. և ասէ ցիս մինչ կայի ես 'ի ժողովն Քաղկեդոնի առանձնացեալ յաղօթս. երեւեցաւ ինձ եթէովպացի մի ահաւոր. և ունէր 'ի ձեռին տոմար ինչ՝ յորում կայր ձեռագիր բազում եպիսկոպոսաց, և ասէ ցիս դի՛ր զձեռագիր քո 'ի սմա, եթէ ոչ՝ առից զոգիդ քո. և իբրեւ ոչ լուայ նմա եհար ձեռամբն զաչս իմ. և փլոյց զպտուղ իմ՝ յաչաց իմոց, և հեղաւ արիւն բազում. և անուամբն Քրիստոսի եդի զձեռն իմ աչաց իմոց և բժշկեցաւ և տեսի. և մնաց սպիս այս յիշատակ իրացն։ Նոյնպէս և այս վէրքս 'ի սատանայէ է, որ կաղացոյց զիս, և ես հաճեալ եմ ընդ սա. և արդ Թող տուր, կարող է Տէր բժշկել զսա յորժամ և կամի

ԻԸ. Այր մի էր զօրագլուխ Մարկիանեայ Պետրոս անուն. պատմեաց զօրավարին Զենոնի և ասէ. 'ի սրտէ հաւատացեալ էի ես ժողովոյն Քաղկեդոնի, և էի ջերմ հալածիչ ուղղափառաց. մինչ տեսի 'ի տեսլեան զոմն փառաւոր որ ասէր ցիս. 'ի բաց կա՛ց 'ի չարէդ. և. ե՛կ տես զոր ցուցանեմ քեզ. և տարեալ եցոյց ինձ տեղի անձաւեալ հանդատիւ և լուսով լցեալ, և կային անդ Թէոդոս և Կոստանդիանոս. և տեսի այլ տեղի ուստի հուր բորբոքէր անլոյս, յորում կայր Մարկիանոս և ամենայն դաւանողքն Լեւոնի տոմարին. և տեսեալ զայն եղէ ընդ Դիոսկորեայ և ընդ Տիմոթէի։

ԻԹ. Կրօնաւորք երկու կիպրացիք՝ Պիւրակոս և Յուկիանոս անուանք պատմեցին մեզ, եթէ կայր առ մեզ վկայարան մի նշանագործ. և ՚ի լինել ժողովոյն չարի, ձայն եղև ՚ի շնորհէն որ անդ, և ասէ. ես այլ ոչ նստիմ աստ զի ուրացան զՔրիստոս ՚ի Քաղկեդոն, և առաջնորդքն ձեր ընդ նոսա. այլ մի գայք առ իս։

---

(1) Մի ձի. Աւփեւլիոս Մի ձի. [illegible].

Լ. Ի Կեսարիայ Փղշտացւոց կային տապանք երկու Յովհաննու մկրտչին և Եղիսէ մարգարէին. և սարկաւագ մի Կոստանդին անուն սպասաւորէր նոցա սրբութեամբ. և զկնի ժողովոյն Քաղկեդոնի լայր սարկաւագն հանապազօր. և եղբայր մի Պօղոս անուն եհարց զնա, և նա ասէ. քանի՛ ամք են որ կամ ՚ի սպասու սրբոցս, և ՚ի մտանելն իմ յամենայն առաւօտու տեսանէի զսուրբսն նստեալ յիւրաքանչիւր տապանի. և ՚ի տարածիլ աղանդին Քաղկեդոնի այլ ոչ տեսանեմ, և կամիմ գնալ աստի և զրկիլ ՚ի մխիթարութենէ սրբոցս. և ասէ ցնա Պօղոս. նախ աղօթիւք հարց զսուրբսդ և առ զխրատն. և արար այնպէս. և երևեալ սրբոցն ասեն ցնա արի՛ գնա՛ աստի, զի և ոչ մեք կալոց եմք աստ. բայց մի տրտմիր, զի գամք ընդ քեզ ուր և երթաս։

ԼԱ. Հայրն Զոսիմոս անապատաւորն խնդրէր տեղի, և եկն ՚ի Բեթէլ. և էր անդ վանք մի, և աղաչեցին զնա լինել առ նոսա, և նա ասէ. յաղանդոյն Քաղկեդոնի փախչիմ ես. և նոքա ասեցին նմա ասելով թէ առ մեզ ոչ եմուտ. և հաւատաց նոցա, և յանձին կալաւ կալ առ նոսա։ Եւ ՚ի գիշերին յայնմիկ երևեցաւ նմա սուրբն Յակոբ. և ասաց նմա. մի՛ մնար այսր զի յուրացողացն Քրիստոսի են. և գնաց անտի։

ԼԲ. Պատմեաց հայրն մեր Պետրոս, վասն Ալեւթորոսի սրբոյ որ բնակեալ էր ՚ի Կիլիկիայ ՚ի լեառն Տորոս գիտաւոր և ընդակեր. և կալան զնա որսորդք իբրև զանասուն. և յորժամ իմացան, զնա աղաչեցին զի կացցէ ընդ եղբարս. և լուաւ նոցա և գնացաւ. և յարեցան ՚ի նա աշակերտք յոլովք։ Նա մօտ ՚ի վախճանն ասաց աշակերտաց իւրոց. գրեցէք արդեակք, և առաքեցէք ընդ ամենայն երկէր, թէ զկնի քսան և չորից ամաց լինի ժողով 'ի Քաղկեդոն և ուրանան զՔրիստոս. և դուք գնացէք 'ի մեծն Հայք և յԱղեքսանդրիա. քանզի առ նոսա մնայ ուղղափառութիւն, 'ի նոցանէ աճէ և փառաւորի Քրիստոս։

ԼԳ. Դարձեալ պատմեաց հայրն Պետրոս, թէ 'ի մեռանելն Թէոդոսի ոմն անապատաւոր հոգւովն խնդաց, և գոչեաց մեծաձայն և ասաց. մեռաւ այսօր ուղղափառութիւն, ահա փլաւ երկինք և ոչ ոք է որ ցաւէ նմա և ողբայ զաղէտս։

ԼԴ. Մինչ կայր Նեստոր յաքսորս 'ի Թեբայս Եգիպտոսի, գնաց ոմն 'ի Թագաւորէն Կոմիտոս տալ հռոգ զօրացն. և երթեալ առ Նեստոր ասաց. թէ կամին ժողով առնել և կոչել զքեզ. և խնդաց յոյժ. և եկն կոչնական վաղվաղակի Մագիստրոս մի, և նա ոչ կարաց տանել զուրախութիւնն. այլ ասաց մի թէ կարասցի՞ց փոխել զբանն իմ. կամ ո՞ւր երբեք խօսեցայ. եթէ չէ Մարիամ Աստուածածին. և առ ժամայն թափեցաւ լեզուն. և սկսաւ ծամել զլեզուն և ուտել զմարմինն մինչ սատակել եղեւ։ Եւ գերեզման ոչ ընկալաւ զնա. զայս ասաց Տիմոթէոս 'ի գիրսն իւրում։

ԼԵ. Պատմին Մենաւոր Իսկիւթացի եկն յԵգիպտոս առ սուրբն Պետրոս և ասաց. հայր, մի՛ տխրիր վասն չար ժողովոյն, և վասն Պռոտերի, զոր առաքեցին աստ պատրիարք. զի երկրաւորն Երուսաղէմ աղաչեաց զՏէր վասն սուրբ Եկեղեցւոյ. և վաղագոյն կորնչի նա. որ և զկնի երից աւուրց սպանաւ նա։

ԼԶ. Սարկաւագ ոմն Վասիլ անուն աշակերտ Պետրոսի Թեբայեցւոյ որ էր առանձնական երեսուն և եւթն ամ։ Եղեւ առ նա ձայն երկնաւոր. թէ ել աստ և քարոզեա՛ և օգնեա՛ ուղղափառութեան. և եկն 'ի Լիկիայ գաւառ և եղեւ անդ երկոտասան ամ. և գնաց անէծ զՆեստոր առ ընթեր Թէոդոսի. և ոչ եհան 'ի բաց զՆեստոր յաթոռոյն թագաւորն. և յանկարծակի անկաւ կղմինդր մի 'ի գլուխն Թէոդոսի, և ցաւեցոյց զնա շատ. և Մագիստրոս ոմն տանջէր զսուրբն։

Եւ լուաւ 'ի տեսլեան Թէոդոս թէ վասն որոյն եզեւ, և կոչեաց զնա և ետ աղօթել 'ի վերայ գլխոյն և ողջացաւ. և նա խրատեաց զԹագաւորն առնել ժողով յԵփեսոս. և ասաց թէ որ զկնի քո Թագաւորէ, Նորոգէ վերստին զաղանդն Նեստորի։

ԼԷ. Այլնէ կին մի երկիւղած յԱստուծոյ խրատեցաւ 'ի տեսլեան, թէ Նեստոր անուն գայ պատրիարք 'ի Կոստանդնուպօլիս, մի՛ հաղորդիր 'ի նմանէ. և ժողով լինի 'ի Քաղկեդոն նովին ախտիւն, և դու զգուշացո՛ զորդիսն քո։

ԼԸ. Պատմեաց հայրն Պետրոս Փիւնիկեցին թէ մինչ մանուկն էի առ վարդապետին իմում 'ի Կոստանդնուպօլիս, անկաւ յիս տարակոյս թէ զիա՞րդ սուրբ Երրորդութիւնն իցէ հաւասար և երեք և մի. և եկն 'ի վերայ իմ հոգի. և երեւեցաւ ինձ սուրբ առաքեալն Պետրոս, և եհան զիս 'ի բլուր մի, և եցոյց ինձ լոյս անպարագիր մեծութեամբ և անհաս. ասէ ցիս. ահա Հայր. և եցոյց ինձ այլ լոյս անպարագիր և ասէ ահա Որդին. և ասեմ նման է Հօր յոյժ. և եցոյց ինձ այլ լոյս անպարագիր, և ասէ ցիս. ահա Հոգին սուրբ. և ասեմ. նման է Հօր և Որդւոյ. բայց պատկեր Որդւոյն մարդատեսակ փայլէր անճառ և անհասականն կալով 'ի մէջն յաջմէ Հօր, և Հոգին սուրբ յաջմէ Որդւոյ։

ԼԹ. Անիննոս ոմն Աղեքսանդրացի որ մկրտեալ էր 'ի հօրէն մերմէ, և կին նորա ոչ հաղորդէր ընդ առնն. զի խմորեալ էր ընդ աղանդն Քաղկեդոնի. սա հիւանդացաւ մերձ 'ի մահ և եկն 'ի տեսիլ տեղւոյն անպատմելի դրախտի. և ասէին այս է տեղի առնն քո. և տեսանէր տեղի հրախառն խաւարի. և գայր անտի ձայն լալոյ. և ասեն այդ է տեղի այդմ աղանդոյ ուր կասդ, և առողջացեալ դարձաւ յուղղափառութիւնն։

Խ. Մովսինէ (1) որ ասի խոստովանող, իմաստասէր եկեղեցւոյ, և յոյժ ողորմած. սա հիւանդացեալ եկն 'ի տեսիլ, նման ասացելոյ կնոջդ, և ետ տանել զինքն 'ի վանքն

(1) Մի օրի. Փափինէ.

Ռոմանոսի ուղղափառի, և հաղորդեցաւ. և զկնի երեք աւուր հանգեաւ 'ի Քրիստոս, զի ողորմածութիւնն իւր ոչ եթող զնա 'ի կորստեան։

ԽԱ. Պունիփատոս երէց, ազգաւ Փռանգ, որ ոչ հաւանէր երկու բնութիւն ասել Քրիստոսի ոչ մտօք և ոչ բանիւ, այլ ասէր 'ի տեսլեան մեռեալ մի հռոմեայ 'ի յարութեանն յԵրուսաղէմ որ յանկարծ կենդանացաւ. Եւ ունէր թուղթ 'ի ձեռին, երեւմամբ ոսկեներկ. և 'ի բանսն լի ամենայն աղտեղութեամբ. և պարթուցեալ ելոյծ և ասաց. դարձեալ նորոգի աղանդն Քաղկեդոնի զի յայնժամ բարձեալ էր 'ի Զենոնէ արքայէ։

ԽԲ. Սարկաւագ մի սպասաւորէր 'ի սուրբ յարութիւնն յԵրուսաղէմ, և անկաւ 'ի շնութիւն. և եկեալ 'ի սուրբ Գողգոթա ննջեաց. և շնորհն որ անդ՝ ձգեաց զնա արտաքս 'ի փողոցն, և եղեւ գոչիւն ահաւոր որ ասէր. ապականեաց Յոբնաղ և աշակերտք իւր զսրբութիւնս իմ. Եւ լուաւ քաղաքն և զղջացան բազումք յաղանդոյն և խոստովան եղեւ սարկաւագն զչարիս իւր։

ԽԳ. Պատմեաց երանելին Վասիլեոս եթէ 'ի գեղջ մեր Պօտաղինէ երէց մի Քաղկեդոնիկ և պարզամիտ աշխարհական մի ուղղափառ վիճէին վասն հաւատոյ և կատարումն իրացն եկն յայս. զի կամեցան հրով փորձել զհաւատն. և կապեցին զաջոյ ձեռս զերկուցն և վառեցին 'ի ներքոյ հուր. և այրեցաւ ձեռն երիցուն անողջանալի. և աշխարհականին և ոչ մազ մի խանձատեցաւ, և օրհնեցաք զԱստուած։

ԽԴ. Ի գիւղ մի անուն Սալասու այր մի Եպիփան անուն ոչ հաղորդէր ընդ այլսն. և երէցն սպառնացաւ նմա. և նորա առեալ զորդիսն գնաց անտի և երէցն հարեալ բարկութեամբ Տեառն մեռաւ նոյն ժամայն. և իմացեալ գեղջն դարձուցին զԵպիփան. և ամենայն գիւղն դարձան յուղղափառութիւն։

ԽԵ. Պետրոս պատրիարքն յաքսորս կայր յԱղեքսանդբնայ. եւ երեւ հայն առ Պիւռոս մենաւոր եւ ասէ. գնա՛, մխիթարեա՛ զգաւառացին Պետրոս. եւ եղ նմա առաջնորդ սիւն լուսոյ. եւ շոգաւ 'ի տանէն յորում կայր Պետրոս. եւ տեսեալ տանուտէրն շնորհ երկնաւոր 'ի վերայ նորա, եւ աղաչէր զնա մկրտել զորդիս նորա. եւ դարձաւ յուղղափառութիւն. եւ սուրբն Պետրոս 'ի ձեռն Ակակայ Կոստանդնուպօլսի հաւանեցոյց զԶենոն. եւ դարձաւ ամենայն երկիրն յուղղափառութիւն :

ԽԶ. Հայրն Պիոս ետես տեսիլ զի բազումք աբեղայից առեալ խաչ մի ձգձգէին առ միմեանս. եւ ասաց թէ հերձուած լինելոց է, որ ոչ բժշկի մինչեւ ցկատարած :

ԽԷ. Այր մի էր բարեպաշտօն յԵրուսաղէմ Ուլուակիայ անուն, զնոյն աղօթել 'ի տաճար համբարձման Տեառն. եւ ետես զտիրամայրն նստեալ անդ փառօք, եւ անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց. եւ կանգնեաց զնա տիրուհին եւ ասէ. մի՛ վախեր՝ այլ կաց յուղղափառութեան. զի չարչարանք որդւոյ իմոյ այլայլեցաւ 'ի բերանս աղծոց ոմանց. եւ եղեւ Եկեղեցի իբրեւ զկոտորեալ անտառ զերամբ. եւ ոչ խաղաղի մինչեւ ցկատարած :

ԽԸ. Զենոն անապատաւոր մարգարէացաւ վասն Լեւոնտեայ ալեքսանդրացւոյ՝ թէ լինիս եպիսկոպոս. որ եղեւ իսկ. քան զի յաջորդն Նեստորի ասաց էր զՑորենաղ զնորայն հաստատել, եւ առաւել յորժամ եղեւ ժողովն զերկու բնութիւնն. եւ 'ի դառնալն 'ի քաղաքն իւր կամեցան զնա քարկոծ առնել, եւ փախեաւ 'ի Կիպրոս. եւ ցասմամբ Տեառն մեռաւ անդ. եւ գնացին ընտանիքն բերել զմարմին նորա նաւով. եւ ամէն աշխարհական մեռաւ 'ի նաւն, եւ 'ի լինել առաւօտին հողմոյ ձգեցին զԼեւոնտիոս 'ի ծով, կարծելով զաշխարհականն՝ եւ կատարեցաւ մարգարէութիւնն.

ԽԹ. Այր մի ալեքսանդրացի Նիկէ անուն. սաստիկ պաշտանէր զՔաղկեդոնիտսն, եւ երեւեցաւ նմա սատանայ 'ի ձեւ հրեշտակի եւ ասէ ցնա. ընդէ՞ր հայհոյես զսուրբ ժողովն. եւ փչեաց զօրէն 'ի վերայ նորա եւ ոչինչ եղեւ նմա չար. այլ յարուցեալ խաչակնքեաց զինքն և չիք եղեւ չարն (1)։

Ծ. Երկու եղբարք 'ի Կիւլիկիա, պատմեցին մեզ թէ գնացաք 'ի Մամուեստիա և յանդիմանեցաք զԹէոդորոս որ անկեալ 'ի խելաց արարեալ էր մեկնութիւն գործոցն, և աւետարանին Յովհաննու. և ասացաք նմա անէծք, և մահացաւ. սա էր աշակերտ Նեստորի։

ԾԱ. Ի Պամփիւլիա բազմութիւն արանց փայտս կոտորէին. և էին երկու դասք ուղղափառաց և չարափառաց, և վիճեցան վասն հաւատոյ և վառեցին հուր. և բերին զտոմարն Լեւոնի և զսահմանն ուղիղ. և այրեցաւ Լեւոնին և անվնաս մնաց ուղղափառացն. և բոլորն դարձան յուղղափառութիւն։

ԾԲ. Երեք ամօք յառաջ քան զժողովն Քաղկեդոնի յեւթն ժամու աւուրն յԵրուսաղէմ քաղաք երեք արեգակն տեսին յարեւելս և յարեւմուտս և 'ի միջոցս երկնի. և սուրբ ոմն մեկնեաց թէ երեք ժողովլ լուսաւորեցին զաշխարհ 'ի հաւատս, այլն որ լինի ոչ է ընդունելի։

ԾԳ. Ի դառնալն Յոբնաղայ 'ի ժողովէն ('ի ժողովոյն). ելին ընդդէմ նորա եկեղեցականքն յանդիմանել զնա։ Իսկ հայրն Պետրոս նստաւ 'ի լռութեան. և երեւեալ նմա տէր ա ած, ես զրկեցայ, և հաւատն Եկեղեցւոյ իմոյ այլայլեցաւ. և դու հանգիստ խնդրես. և նորա երկուցեալ յոտն յարեաւ և առեալ զԹէոդորոս գնաց. և բուռն եհար զուրարէն Յոբնաղայ և պատառեաց և ասաց. զայլ գործսն քո թող. տեսեր զի՞նչ գործեցեր յայսմ գիշերի. և կոչեմ հուր երկնաւոր մաշել զքեզ. դու հաւատ փոխես. և անկաւ Յոբնաղ յոտս սրբոյն. և ասաց խնայեա հայր սուրբ։ Եւ առեալ զԹէոդորոս դարձաւ. այն զոր եպիսկոպոս ձեռնադրեցին զկնի։

ԾԴ. Թէոփիլոս այր սուրբ և իմաստուն տարակուսէր վասն երկուց բնութեանց, և արտասուօք խնդրէր յԱստուծոյ յայտնել նմա. և երեւեալ նմա Յովհաննէս աւետարանիչն ասէ, որ էրն 'ի սկզբանէ բանն, զնա շօշափեցէք զկեանքն. և ոչ է երկու բնութիւն. և լուեալ զայս հաստատեցաւ 'ի միութիւնն:

---

(1) Մի օրին. հալածեցաւ 'ի նմանէ չարն։

ԾԵ. Ոմն 'ի տեսողացն որբոց տեսանէր ժողով եպիսկոպոսաց և Պօղոս առաքելոյն 'ի մէջ նոցա. որ ասէր. ով եղկելիք. այդ է իմ պատուէրն, զայդ ուսուցի ձեզ. արդ առէք 'ի սափորոյս և լուացէք զէրեսս ձեր, և իբրեւ լուացան, սեւացան. և ասէր այդպէս ամենեքեան սեաւք եղէք, վայ ձեզ:

ԾԶ. Մարկիանէ անուն ոմն, աշխարհական յանդիմանէր զՊամփիլոս եպիսկոպոս վասն երկու բնութեանց. և մատնեցին զնա Տուկի քաղաքին. և տանջեաց զնա սաստիկ. մինչ իջանէր արիւն յոլով 'ի նմանէ, և ապա բժշկութիւն բազում ցաւոց, և հրեշտակաց Աստուծոյ առ ընթեր կացեալ գիւրէր նմա և մխիթարէր, և զվէրան բժշկէր:

ԾԷ. Սուրբն Տիմոթէոս պատմեաց հօրն Յովհաննու, յորժամ յուղաւորս էր, եթէ յորժամ եկին հրաւիրեցին զիս 'ի ժողովն չար. յայնմ գիշերի տեսի զիս 'ի պատարագի և նշխարին հնացեալ և սեւացեալ և գինին քացախեալ, և ոչ կարացի ճաշակել, և իմացայ զինչ լինէրն:

ԾԸ. Անաստաս աբեղայ Ուռհայեցի հաղորդեցաւ 'ի հօրէն մերմէ Պետրոսէ. և յայնմ գիշերի նոր մկրտեալ լինէր և նոր զգեցեալ. և մեկնեցին նմա թէ դառնալն յուղղափառութիւն նոր մկրտութիւն է և նորանալ:

ԾԹ. Թամախոն երէց պատմեաց մեզ թէ յորժամ դայր 'ի ժողովոյն հերետիկոս ասացեալ եպիսկոպոսն մեր, մկրտէի ես տղայ մի. և տեսի ես և ժողովուրդն զՀոգին սուրբ. զի աղաւնակերպեալ երթայր ելեալ յաւազանէն. և լուաք զի ասէր ես այսուհետեւ յայդ աւազանդ այլ ոչ լինիմ (1):

Կ. Պատմեաց մեզ հայրն Պետրոս, թէ կայր իմ եկեղեցական խմորեալ աղանդովն Քաղկեդոնի. և հանդիթուեցաւ լինել 'ի մէջ փողոցի նեղագոյն . և անկաւ յոտս իմ ողջունեաց զիս . և ես յամօթոյ առի զողջոյնն . և յայնժամ գիշերի տեսի դաշտ մի , ուր ժողովեալ կային ամենայն սուրբք . և Քրիստոս Աստուած 'ի մէջ նոցա փառօք նստեալ . և գնացի երկիր պագի նմա . և դարձոյց զերեսս իւր յինէն , և մինչեւ աղաչեցին ամենայն սուրբքն , ապա դարձաւ յիս տէր ։

---

(1) Մի գր. այլ ոչ մտից:

ԿԱ . Երկուք ոմանք աշխարհականք արեւելեայք Հայ ազգաւ 'ի պատճառս աղօթականութեան գնացին մինչեւ ցԲիւրիստինիայ . և կոչեաց զնոսա սիւնակեաց մի և ասէ . լուեալ թէ ոչ հաղորդիք յեկեղեցիս մեր . և նոքա ասեն ունիմք առ մեզ հաղորդ մեր հայրն ուղղափառաց, անտի հաղորդիմք . և նա ասէ . և դուք աշխարհականք զիա՞րդ իշխէք, և այդ ոչ է հաղորդ . և տրտմեցան նոքա . և յաւուր կիւրակէի տեսին զհաղորդն իւրեանց վառեալ հրով և լուսով և անոյշ հոտով և հաղորդեցան . և ոմն ասկաւ մի տկարացեալ էր 'ի բանս սիւնականին , մասն նորա եղեւ միս արիւնոտ , և զղջացաւ և ելաց . և փոխեցաւ դարձեալ 'ի նոյն . և հաղորդէին անխիղճ ։

ԿԲ . Ստեփաննոսի արքեպիսկոպոսին Երուսաղէմի քոյր մի էր կուսան սուրբ և պարկեշտ հասեալ 'ի կատարելութիւն այնչափ . զի յորժամ երթայր յեկեղեցի սրբոյն Ստեփաննոսի և Յովհաննու Մկրտչին . և էին(1) նմա սուրբքն՝ և զկնի Քաղկեդոնի ժողովոյն ըստ սովորութեանն երթայր աղօթէր ընդ խմորեալսն յաղանդն . և երեւեալ նմա սուրբքն Ստեփաննոս ասէ . քո՛յր , գնա՛ աղօթեա՛ 'ի տան քո . և մեք գամք առ քեզ . զի ո՛չ կամիմք լինել ընդ ուրացողաց ։

ԿԳ . Կին մի ուղղափառ Պամփիւլացի բնակէր յԵրուսաղէմ . գնաց 'ի տաճար համբարձմանն Տեառն 'ի տօնին իւրում . և մնաց պատարագին , և գնաց 'ի տուն իւր և հիւանդացաւ 'ի մահ , և խնդրեաց օրէնս , և ետ զխոստովանութիւնն հաւատոյ . և տեսանէր զհրեշտակ Աստուծոյ զի ասէր ցնա․ զիա՞րդ համարիս կատարել ուղղափառութեամբ զկեանս քո․ զի տեսեր՝ զանարժանիցն պատարագն․ և աղօթեցեր ընդ նոսա։ Իսկ կինն բարեպաշտօն խնդրեաց յԱստուծոյ ժամանակ ապաշխարութեան տալ նմա։ Եւ տուաւ նմա․ և յարուցեալ 'ի հիւանդութենէն, և արտասուօք հայցէր յեկեղեցւոջն յայտնել նմա զարժանաւոր խոստովանութիւնն․ և եղև բան լսելի 'ի սեղանոյ անտի որ ասէր․ որդին Աստուծոյ նոյնն է որ ծնաւ 'ի կուսէն նոյն խաչեցաւ, և թաղեցաւ, և յարեաւ․ մի բնութիւն փառաւորեալ, անշփոթ միաւորեալ ընդ նմա կատարեալ մարդ։

---

(1) Ամենայն օրինակք այսպէս ունին . բայց թուի թէ երեւէին

ԿԴ․ Յիտալիա վանք մի էր կուսանաց ուղղափառաց անուն աւագին Զոյի, որ յափշտակեցաւ 'ի դրախտն մտացն թուելով․ և ետես անդ զծառն կենաց․ և զի պարք մեղուաց ջանային հայել 'ի ծառն․ և սարկաւագ մի լուսապատկեր հալածէր զնոսա․ և ասէր ցԶոյի․ Քրիստոս է ծառն․ և մեղուքդ հաւանեալքն Քաղկեդոնի, որք ոչ են արժանի մերձենալ 'ի Տէր․ և իբրև եկն Կոստանդիոս յԻտալիա․ մեղադրեաց նմա Զոյի․ թէ ընդէ՞ր ձեռնադրեցեր զտոմարն Լեւոնի․ և նա ասէ ձեռօք գրեցի, բայց մտօք ոչ միաբանեցի։ Եւ ասէ ցնա․ ձեռքն մեռեալ զիա՞րդ գրեանց կենդանի մնաց․ և հրաժարեաց 'ի նմանէ։

ԿԵ․ Լեւոնտիոս անապատական տեսանէր զեկեղեցի մերկ, և զխորհուրդն հեղեալ, այս է Եկեղեցին և պատարագն որ շփոթութիւն խոստովանեցին 'ի Քաղկեդոն։

ԿԶ․ Յորժամ եւ համբաւն Քաղկեդոնի, ոմն 'ի սրբոցն տեսանէր զեկեղեցին Կոստանդնուպօլսի գոմ լեալ գորշ և զազիր, անսուրբ կենդանեօք․

ԿԷ․ Էպիփանիոս հայր վանացն Պանփելայ տեսանէր զԱմղեքսս զՍեւադրիա քաղաքի․ որ կոչէին ողորմած․ և զԵպիփան պերկացի (1) թաղեալ յաղբ մինչև ցպարանոցն․ և ասէ Ամղեքսս․ բարեգործդ զիա՞րդ եղեր այդպէս․ և նա ասէ բարին յԱստուծոյ էր․ և չարս 'ի մէնջ եղև, զի հաւանեցաք ժողովոյն Քաղկեդոնի . և ասեն թէ նորոգեաց նա զտոմարին Լեւոնի ։

---

(1) Երևի որ․ Կիպրացի․

ԿԸ. Կին մի զգաստ և սուրբ Ակթասաղխայ անուն զկնի ժողովոյն Քաղկեդոնի յերկուս բաժանեալ մտօք հայցէր յԱստուծոյ ցուցանել նմա թէ յորո՛ց հաղորդեսցի . և տեսանէր եկեղեցի մի երկխորանի մինն մեծ և մերկ . և Քաղկեդոնիք 'ի վերայ նորա . և մինն փոքր և զարդարեալ լուսով . և մանուկ մի հրեղէն 'ի վերայ նորա . որ էր ինքն Քրիստոս և ասէր . 'ի բա՛ց կա՛ց յուրացողէդ . առ իս եկ . և հաղորդեա՛ց կենաց ։

ԿԹ. Երկու եղբարք էին 'ի վանսն Ռոմանոսի . Տիմոթէոս և Յովհաննէս ։ Տիմոթէոս մեռաւ , և տարեալ 'ի թաղել , և յանկարծ նստաւ 'ի դագաղին և ասէ . գիտացէք եղբա՛րք , զի առ իս չկայր ինչ պատճառ վնասու ։ Բայց միայն իբրու կարծէի զերկու բնութիւնն , և ահա տանին զիս 'ի տանջանս . և խնայեաց Տէր 'ի ձեզ և ետ ինձ տալ ձեզ զայս 'ի զգուշութիւն , և խնդրեցէք ինձ ողորմութիւն և դարձեալ ննջեաց ։

Հ. ՅԱնտիոք Ասորոց բնակեալ էր մերձ յարքունիսն այր մի սքանչելի որ սակաւ բանջարով լնոյր զպէտս իւր . և չառնոյր ինչ յումեքէ . և էր յանդիմանիչ յոյժ Քաղկեդոնացւոցն . և ասէր եթէ հոտ անօրէնութեանն և մահու գայ ինձ 'ի ձէնջ , և ոչ կարեմ տանել լռութեամբ . և սպանին զնա . և բազում նշանք եղեն 'ի նմանէ ։

Իսկ Մարկիանէ վեց ամ բռնակալեալ . սատակեցաւ լցեալ անիծիւք ։ Եւ Վաղենտիանոս սպանաւ 'ի նոյն ամի 'ի թուին Ասորոց եւթն հարիւր վաթսուն և ինն . և պատառեցաւ թագաւորութիւնն Հռովմայ 'ի Կոստանդնուպոլսէ . նոյնպէս և բարձաւ Եկեղեցւոյ խաղաղութիւն ։ Եւ անձամբ Թագաւորեաց Լեւոն ՚ի Հռովմ Թրակացի յիշխանայն Մարկիանեայ ։

Եւ ՚ի նոյն ամի Թագաւորեաց Պարսից Պերոզ . և արար հալածումն Քրիստոնէից և պատերազմ ընդ Հռոմայեցիս ։ Իսկ Լեւոն ետ զդուստր իւր Զենոնի իշխանի . և կացոյց զնա Թագաւոր արեւելից կողմանն . և զԲասիլիսկոս արար սպարապետ ՚ի Թրակիա , և զՄուրինոս կեսար ՚ի Հռովմ , որ յետ սակաւուց սպանաւ Յրամիկոսայ (1) և քարոզեցան Անթիմոս և Լուքարոս կեսարք ։

Յայնմ ժամանակի շինեցաւ Կալանիկոս որ Մաղա , հրամանաւ Լեւոնի Թագաւորի , և կոչեցաւ Լեւոնտիպօլիս (2) ։ Եւ ՚ի նոյն ժամանակս եղեւ հրայրեաց ՚ի Կոստանդնուպօլիս , որպիսի բնաւ չէր եղեալ . և այրեցաւ ծովէ ՚ի ծով . և ել Թագաւորն արտաքոյ քաղաքին . և ոչ կարաց մտանել ՚ի նա ամիսս վեց ։ Եւ Լեւոն կանոնել ետ Թէ յօր կիւրակէի բնաւ մեծ և փոքր յեկեղեցիս կայցեն յաղօթս և յուսումն ։

---

(1) Մի օրի․ Ցրակմիուսոյ․ Մի օրի․ յՐակմիոսայ ։

(2) Երկու օրի․ Լեւոնտիպօլիք ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յաղագս նշանք որ եղեն՝ ամիս մի օդդ փոշի տեղաց և Թիզ մի կուտեցաւ ։

ԲԱՅՑ զկնի այրմանն ամիս մի օդդ փոշի տեղաց, և Թիզ մի կուտեցաւ, և առաւել 'ի Կոստանդնուպօլիս, և զահի հարաւ աշխարհ. զի շարժէր աշխարհ և հուր ելանէր 'ի պատառմանէ երկրի, և այրէր զբազում տեղիս. և ահն ունէին կործանելոյ երկրի ։ Եւ Կիզիկոն քաղաք 'ի շարժմանէն և 'ի կայծականց անյայտ եղեւ շրջելով. և յոլով մասն Թրակիայ ապականեցաւ ։

Իսկ զԹագաւորն կալաւ աղէկաւութիւն սաստիկ, և մեռաւ Թագաւորեալ ամս տասն և ութ, ոչ պարապեալ 'ի խռովութենէ. և գիտաց ամենայն այր իմաստուն, եթէ ժողովն Քաղկեդոնի զայրացոյց զՀոգին սուրբ Աստուծոյ անպատուած դաւանութեամբն ։

Եւ Թագաւորեաց Լեւոն փոքր Թոռն Լեւոնի հրամանաւ նորա՝ տղայ վեցամեայ ։

Եւ յետ ամի միոյ եկն Օենան հայր տղայոյն հնազանդել որդւ[illegible]ն. և մայրն խաբեաց զտղայն որպէս մանուկ՝ և ասաց. յորժամ տեսցես զհայր քո, դիր զԹագդ 'ի գըլուխ նորա, և երկրպագեա նմա (1). և արար այնպէս, և Թագաւորեաց հայրն միահեծան. զի զկնի սակաւու ժամու մեռաւ տղայն:

Իսկ Վերինայ Թագուհին մեծ Լեւոնի աղաչէր զԶենոն վասն աղանդոյ Քաղկեդոնի ընդունել զնա: Եւ իբրեւ ոչ լուաւ նմա՝ նենգեաց նմա. և խորհրդակցօք իւրովք զեղբայր իւր զԲասիլիսկոս Թագաւոր ետ կարդալ. և զորդի նորա զՄարկոս՝ կեսար: Եւ իմացեալ Զենոնի փախեաւ յԻսաւրիա յազգըն իւր, և մտեալ 'ի բերդն Սաղամէ դադարեաց անդ. և կին նորա Արիանիայ չոգաւ առ նա:

Իսկ Բասիլիսկոս Թագաւորեաց որդւովն ամս երկու: Եւ էր պիղծ և չարադև. և հալածիչ ուղղափառաց, և եդ յաշտանակի ըզՔաղկեդոնին (2) և եղեւ ատելի բազմաց. և գային առ Զենոն, և եղեն բազումք:

Եւ առաքեաց Բասիլն զԱրտեմոս զօրապետն իւր պատերազմել ընդ նմա, և խօսեցաւ Զենոն ըստ սրտի նորա, և խոստացաւ կեսար առնել զնա, և առին զօրքն զԶենոն և գնային 'ի Կոստանդնուպօլիս. և ընկալան քաղաքն խնդութեամբ ։

---

(1) Մի օրի. յաւէլու եւ յորժամ եկն հայրն, ետես զնա և արար այնպէս:

(2) Երկու օրի. բարձրացոյց զՔաղկեդոնիան:

Եւ փախեաւ Բասիլիսկոս որդւովն յեկեղեցին. և առաքեաց Զենոն մերկացոյց զնոսա 'ի ծիրանեացն, և ետ տանել 'ի Լամիսկատորս (1) Կապադովկացւոց. և անդ 'ի բուրգն (2) մի և փակեցին յամենայն կողմանց. և մեռան անդէն դառնապէս ։

Իսկ Զենոն արար զԱրատեմա (3) զօրապետ, և զորդին նորա Կեսար. և զկնի այնորիկ սպանաւ Արատեմիս. և որդի նորա եղև ընթերցող եկեղեցւոյ ։

Յայնմ ժամանակի Զենոն 'ի ձեռն Ակակայ պատրիարքի Կոստանդնուպօլսի հաստատեաց զուղղափառութիւն ։ Եւ առաքեաց առ պատրիարքն Աղեքսանդրի, և առ Պետրոս պատրիարքն Անտիոքու, որ կային անդ 'ի բանտի 'ի Կոստանդնուպօլիս՝ հարցանել 'ի նոցանէ զհաւատոյ խոստովանութիւնն. և նոքա ետուն զՆիկիային և զԿոստանդնուպօլսին և զԵփեսոսին և զԴիոսկորաւին. և Թագաւորն առաքեաց զդաւանութիւնն ընդ ամենայն երկիր և ձեռնագրեցին զայն եւթն հարիւր եպիսկոպոսք. և գրեցին 'ի ձեռնարկն թէ նզովեմք զտումարն Լեւոնի (1), և նզովեմք զՆեստոր. նզովեալք եղիցին ոչ նզովողք նոցա:

---

(1) Մի օրի. 'ի Լամիսկատորս ։ Մի օրի. 'ի Լամիս 'ի Կատորս ։

(2) Երկու օրի. 'ի պուրճն մի

(3) Մի օրի. զԱրատեմն ։

Եւ լուեալ Թագաւորն զուարճացաւ. և առաքեաց զՊետրոս մեծ պատուով յԱնտիոք յաթոռն իւր՝ զոր Թափիչն կոչեն: Եւ զՏիմոթէոս յԱղեքսանդրիա, զայն՝ զոր ուղղափառքն ձեռնադրեցին զկնի Պռոտերեայ (2): Եւ աքսորեաց Մարկիանէ:

Յայնմ ժամանակի ապստամբեցին Սամարացիքն. և եդին իւրեանց Թագաւոր զոմն Յուստոս անուն. որ զբազում կոտորեաց 'ի Քրիստոնէից. և մտեալ յեկեղեցին 'ի Կեսարիա աւար արիւն. և քակեաց զեկեղեցին և շինեցին անդ տաճար իւրեանց. և լուան զայն զօրքն Զենոնի. և գնացեալ 'ի վերայ նոցա կոտորեցին. և զգլուխ անուանեալ Թագաւորին կտրեցին. և առաքեցին առ Թագաւորն Զենոն, և զշինեալ տաճարն եկեղեցի օրհնեցին յանուն սրբոյն Մարիամու. և զՀրեայսն որ յԱնտիոք կոտորեցին: Ի նոյն աւուրս կործանեցաւ Նիկոմիդիայ 'ի շարժմանէ, և էր նորա վեցերորդ տապալումն (1)։ Յետ այսորիկ մեռաւ. Զենոն թագաւորն վաթսուն ամաց՝ թագաւորեալ ամս վեշտասան։

---

(1) Երկու օրի. յաւելուած և զժողովն Քաղկեդոնի, նզովեմք զԱկակ:

(2) Երկու օրի. Պռոտերեայ

Իսկ թագաւորն Պարսից չարամահ եղեւ. թագաւորեաց Պալուշ ամս չորս. և արար խաղաղութիւն Եկեղեցւոյ։

Իսկ զՀռովմայեցւոց թագաւորութիւնն էառ Անաստաս այր բարի և որբասէր. որ զի գտաւ անօրէնութիւն ՚ի դպրոցն Կոստանդնուպոլսի, զայրացեալ կոտորեաց զամենայն դպրոցսն. և տրտմութիւն կալաւ զքաղաքն։ Սա շինեաց զՏարալ աւերեալն առ սահմանն Դարեհի. և կոչեաց Անաստասուպոլիս։

Իսկ Պարսից թագաւորեաց Կաւատ՝ զոր հալածեաց Համզա եղբայր իւր ամս երկու, և դարձեալ զօրացաւ Կաւատ և սպան զեղբայրն. և թագաւորեաց ամս երեսուն։

Զայսու ժամանակօք ելին Հոնք. և աւերեցին ՚ի Պարսից աշխարհէն. և կարծեցին Պարսիկք թէ բանիւ (2) Անաստասայ եղեւ. և ելին յերկիրն Միջագետաց, և բազում աւերս արարին և գնացին։ Յորում ժամանակի եղեւ Պատրիարք ՚ի Կոստանդնուպօլիս քաներրորդ Տիմոթէոս՝ այր առաքինի և իմաստուն ։

---

(1) Երեք օրի. էր նորա ՚ի տապալումն։

(2) Չորք օրի. ու ամէնէն զբանիւք։

Սա իմաստնացոյց զՆատոսս և գրեաց կանոնս և առաքեաց ընդ ամենայն երկիր զսուրբ Աստուածն խաչեցար ասել, և ՚ի մի բնութիւն օրհնել զՔրիստոս Աստուած (1) ։

Իսկ Նեստորականքն որ ՚ի Կոստանդնուպօլիս խռովութիւնս ոչ սակաւս արարին. եթէ զԵրրորդութիւնն խաչեալ ասեն. և ՚ի ժխորմանէ անտի մեռաւ երէց մի Տիմոթէի. ընդ որ զայրացեալ Տիմոթեայ գնաց յանապատ ։

Յայնմ ժամանակի երեւեցաւ այրն բանաւոր Փիլիքսիանոս (2) եպիսկոպոսն Յարապօլսի. որ արար բազում վարդապետութիւնս և գրեանս վասն ուղղափառութեան։

Զայս կոչեաց մեծարանօք Թագաւորըն ՚ի Կոստանդնուպօլիս, կոչնականս առաքեալ նմա զՍեւերոս վարդապետն և երկերիւր (5) քահանայ ընդ նմա. և ժողովեալ ՚ի Կոստանդնուպօլիս բազմութիւն յոյժ յերկուց կողմանց Նիկիականաց և Քաղկեդոնացւոց , արարին քննութիւն յոյժ ։ Եւ յաղթող երեւեցան ուղղափառքն . և առաքեաց Թագաւորն և ետ հանել 'ի գերեզմանէն Եւփեմեայ զտոմարն Լեւոնի , և ըզկանոն ժողովոյն Քաղկեդոնի զսահմանեալն , և այրեաց առաջի իւր . և կամէր Պալաւիոս պատրիարքն Անտիոքայ մեղադրել Թագաւորին վասն իրացն . և ասէ ցնա արքայն երեւեցար Նեստորիոս . և անարգեաց զնա . և առաքեաց յաքսորս նզովիւք ժողովոյն . Եւ ձեռնադրեաց Փիլիքսիանոս զՍեւերոս պատրիարք 'ի Կոստանդնուպօլիս լի հոգւով սրբով և փարթամ գրովք . որ և յաւուր ձեռնադրութեան իւրոյ խօսեցաւ զճառն՝ որոյ սկիզբնն է որք բաժանեն զմիաւորութիւն բանին Աստուծոյ . յորում կայր արատ (1) ամենայն աղանդաւորաց . զոր ունին Յոյնք . և միշտ ընթեռնուն վասն կորովութեան և մաստիցն 'ի յանդիմանութիւնս իւրեանց ։

---

(1) խաչեցար ասելով, և նուն ։
մի բնութիւն խոստովանել
զՔրիստոս Աստուած ։

(2) Մի օրի. փելիքսի ա-

(3) Երկու օրի. քահանայ
մի ընդ նմա ։

Զայս Սեւերիոս առաքեաց Թագաւորն երեւելի փառօք յԱնտիոք քաղաք ։ Սա էր աշակերտեալ Յակոբայ սրբոյ Սրճոյ եպիսկոպոսին . այն որ ոչն էր իմաստնացեալ 'ի մարդկանէ այլ 'ի Հոգւոյն սրբոյ . քանզի

---

(1) Ոմանք՝ յորում կայ անաթեմա ամենայն աղանդաւորաց , որ Ներէաս չէր յորում կայ անաթեմա ամենայն աղանդաւորաց ։

Հինգ (1) ամաց եղեալ Հոգին սուրբ խօսէր 'ի բերանոյ նորա ։ Զոր լուեալ պատրիարքն Աթանաս, եկն 'ի փորձել զնա 'ի տան հօր իւրոյ. և նստեալ 'ի ճաշ առեալ 'ի սեղանոյն ձու մի ասաց. Յակովբ որդեակ, հա՞ւն է աւագ թէ այս ձուն, ետ պատասխանի մանուկն և ասէ. մի խաբեր զիս, ոչ է հայրն աւագ քան զձագն իւր միածին ։ Եւ հիացեալ պատրիարքն յայլում աւուր մտեալ յեկեղեցին եհան զտղայն յամպիոնն. և ասաց. որդեա՛կ, ասա՛ մեզ բան 'ի խորհուրդ աթոռոյն զոր ետես Եզեկիէլ. և սկսաւ ասել, որ 'ի բարձրդ ես յաթոռ Տանդ բարձրեալ. և 'ի միջոցի ճառին ասաց առաւ Ամիթ 'ի Պարսից, և ընկղմեցաւ արքունիքն 'ի Հալապ (2), և էր այնպէս յորժամ իմացան ։

Եւ լուեալ 'ի սմանէ պատրիարքին զմեծամեծան Աստուծոյ ասաց աստուածապէս Հոգին սուրբ խօսի 'ի բերանոյ սորա. և համբուրեաց զնա ։

Սա խօսեցաւ ճառս ութ հարիւր. 'ի սորա հոգւոյն առեալ Սեւերեայ լուսաւորեաց զաշխարհս, 'ի սոյն ժամանակս երեւեցաւ Սիմէոն բրուտն՝ որ արար ճառս վասն աստուածապաշտութեան, եւ շարական ուղղափառ մտօք լցեալ։

---

(1) Երկու օրի. Եւթն ։ մի օրի, 'ի Հարց ։

(2) Երեք օրի, 'ի Հալպ.

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս աւերման Ամթայ. և Պօղոս անուն Հրեայ եղեւ պատրիարք Անտիոքայ, և ժողովեաց զամենայն եպիսկոպոսունս. զկնի Պօղի Աւկղեպել. և չար գազան, և հերձողն որ Ջրատոյղ արար զՄուանեայ։

ԶԱՅՍՈՒ աւուրբքս խաղաց Թագաւորն Պարսից Կաւատ ընդ Միջագետս, և գնացեալ առ զքաղաքն Թէոդուպոլիս. և ոչ կոտորեաց զքաղաքն զի ոչ անարգեցին զնա բանիւք 'ի պաշարմանն. և դարձաւ եկն յԱմիթ. և պաշարեաց զնա և շինեաց բերդս փայտեղէնս. և մերձեցոյց 'ի պարիսպն, և նեղէր զնոսա խստագոյնս. և իմաստունք քաղաքին թրջեալ համեմ հացի, և զջուրն արկին 'ի վերայ փայտեայ բերդին. և ընդ նմին հուր, և այրեցին զնա. և եկն անձրեւ սաստիկ, և Պարսիկք երկայն հանդերձիւքն իւրեանց նեղացան. և խնդրեցին ոսկի զի գնասցեն. և ոչ լուան նոցա վասն աջողմանն իւրեանց։

Սակայն հասեալ էր 'ի վերայ նոցա օր վրէժխնդրութեան. զի սակաւ մի յառաջ աւուրբք եկեալ էր առ նոսա վանական վարդապետն սուրբ Յովհաննէս, և գուշակեաց նոցա զաւեր քաղաքին, եթէ ոչ պահովք և աղօթիւք (և լալով), և հսկմամբ և ողորմութեամբ հաշտեցուսցեն զԱստուած: Եւ նոքա ոչ լուան նմա: Վասն որոյ առին զքաղաքն Պարսիկքն և կոտորեցին անձինս ութսուն հազար. և բազումս գերեցին:

Բայց աւագ եկեղեցին լուսարամբք և խնայեցաւ 'ի խնդրոյ զօրագլխին Հայոց՝ և ոչ մեռան, և ոչ գերեցան. և մտեալ թագաւորն յեկեղեցին և ետես նկարեալ ըզպատկեր Փրկչին. և ասաց ով է նա. և ասեն պատկեր Աստուծոյն քրեանից է. և ասէ սա երեւեցաւ ինձ և ասաց մի յառներ 'ի քաղաքէդ, ես մատնեմ զքաղաքդ 'ի ձեռս քո. և արդ ես ոչ առի զքաղաքս, այլ Աստուածն քրեանց. զի մեղան նմա: Եւ ել գնաց թագաւորն Պարսից 'ի յՈւռհայ, և ոչ կարաց առնուլ զնա. և գնաց յերկիրն իւր թողեալ 'ի յԱմիթ սակաւ բնակիչս և հեծեալս երեք հազար. պահապանս նոցա 'ի գլխաւորս երկու վստահացեալ զնոսա:

Եւ լուեալ զօրացն Հոռոմայեցւոց եկին պատերազմել ընդ Պարսիկսն որ յԱմիթ. և նոցա մտեալ ՚ի քաղաքն ամրացան։ Եւ եկն այր մի ՚ի Կարթայոյ գեղջէ Գօթ անուն. խօսեցաւ ընդ Հոռոմայեցիսն զոր ինչ ատաճելոց էր, և գնաց խաբէութեամբ եհան ՚ի քաղաքէն զմի ՚ի գլխաւորացն որոյ անունն էր Ակդոն չորեք հարիւր արամբք. որպէս թէ երթան բերեն զերամակն Հոռոմայեցւոցն։ Եւ տարեալ զնոսա մատնեաց ՚ի կալանս։ Զոր իմացեալ Պարսիցն տասն հազար այր ՚ի Բրիտանէիցն արգելին ՚ի տան միում. և տարեալ զնոսա առաջուկս. և ինքեանք ՚ի գիշերի միում գնացին յաշխարհըն իւրեանց։

Ի քսան երկու ամին իւրոյ Անաստաս առաքեաց դեսպան ՚ի Հայս և աղաչանօք դարձոյց զնոսա ՚ի Պարսից և արար ընդ ինքեամբ. և յաղթահարեալ Պարսիկք գազարեցին ամս եւթն։ Իսկ Անաստաս լեալ քսան եւ եւթն(1) ամաց՝ կատարեցաւ ՚ի Տէր ՚ի քսան և ինն Թամուզ ամսոյ։

Ի սորա չորեքտասան ամին եկն վէց հազար այր յեկեղեցին Սգամոց յութ հարիւր երեսուն երկու թուին Ասորոց։

(1) Երկու օրի. քսան եւ հինգ։

Եւ Թագաւորեաց Յուստինոս Թրակացի. զսա ասեն զսկիզբն Թագաւորացն Յունաց, որ էր 'ի գեղջէն Բեդրինայ՝ զոր քաղաք ընդարձակեաց յանուն իւր կոչելով. զորոյ զջուրն ասեն, եթէ շատ եփեն՝ արիւն լինի :

Եւ Յուստինիանոս (1) էր անվարժ դրոց և անմիտ. և մնացեալ էին 'ի Թրակիա բազումք 'ի ծածուկ աղանդոյն Քաղկեդոնի. որք պատրեցին զնա և ասեն, թէ լսես և հաւանիս պատուական ժողովոյն՝ հնազանդին քեզ ամենայն տիեզերք (2), և խնդաց յոյժ. և եհան քարոզ զօրօք և զօրագլխօք ընդ ամենայն երկիր ընդունել զչորրորդ ժողովն. և որք ոչ հաւանին ասէ, զրկեցին յաթոռոյ և 'ի պատուոյ և յամենայն համարձակութենէ. և արարին այնպէս խմբեալ և կաշառեալ զօրքն և զօրապետքն. և լցան տիեզերք պատերազմաւ :

Իսկ Սեւերոս պատրիարքն Անտիոքու բարկացաւ յոյժ, և անէծ զԹագաւորն. և որոշեաց նզովեաց (3) զամենայն հաւանեալորն(1) չար կամաց Թագաւորին զեկեղեցականս և զաշխարհականսն. և ինքն գնաց յԵգիպտոս։ Ընդ ելանելն սրբոյն 'ի քաղաքէն իջեալ հուր այրեաց զարքունիսն. և զվեց ամիս ոչ շիջաւ հուրն, մինչեւ ծախեաց զամենայն քաղաքն Անտիոք։

---

(1) Երկու օրի. Ուստինոս:

(2) Ոմանք՝ յաւէլուած այն է կատարումն երրորդ ժողովոյն և հաւատ ուղիղ. անտի էառ և հաւատաց ուղիղ և խընդաց յոյժ:

(3) Ոմանք՝ որոշեաց նզովիւք:

Իսկ զկնի ամի միոյ Պօղոս անուն ազգաւ Հրեայ անօթ բարկութեան եղեւ պատրիարգ Անտիոքու. և առ ինքն ժողովեալ զամենայն Ասորոց եպիսկոպոսունսն հրամանաւ Թագաւորին և ողոքեաց և սպառնացաւ. զի ընկալցին և քարոզեսցեն զչորրորդ ժողովն ընդ ուղղափառսն. և զհաւանեալսն բանից իւրոց, առաքէր յաթոռս իւրեանց, և զոչ հնազանդեալսն յաքսորս առաքէր։

Եւ արդ թող զկորուսելոյն բազմութիւն որք մնացին յուղղափառութեան, և հալածեցան այսոքիկ են ըստ Յովհաննու Ասիացւոյն։

Անտիբերոս`(2) եպիսկոպոս Անաւարզայ, Յուլիոս` Հագոնի.(5) Յովհաննէս` Մետրապօլիտ Մամեստիայ(4). Պօղէ` Եբերիոյ, Յովհաննէս` Յարապօջսի. Պօղոս փոքր` Եղեքսանդրի, որ է Սկընդրունն (1)․ Նիկողաս՝ Տարսոնի։ Իսկ ’ի Կապպադովկիայ երկրէն Պրոկղ՝ Կողոնիոյ․ Մակինոս՝ Արմասոյ․ Լեւկոքոր՝ Սեբաստիոյ Հայոց։ Իսկ յԱնտիոքայ Ասորոյ Կոստանդինայ՝ Լուրկինայ եպիսկոպոս, որ վասն առաւել սրբութեան իւրոյ նստէր աթոռով առ ընթեր պատրիարքացն, և անուամբ յիշատակէին զնա յամենայն պատարագս զկնի անուանց պատրիարքին։ Անտոնինոս (2) Հալպայ․ Փելաքսինոս արհի եպիսկոպոս Ամբեճայ․ զոր յետ յոլով տանջանաց և խոշտանգանաց այրեցին ’ի կրափուռն ընկեցեալ ’ի Գանգրա։ Բադրա՝ Լուփիմիոյ․ Թէոդոս և Անէսիմոս՝ Զղմոյ և Սուրեմին։ Նոննա Սելեւկիոյ․ Իսիդորակ՝ Կնշրի․ Մարի՝ Ամթայ․ Թովմաս՝ Դամասկոսի, այր սուրբ և ճգնաւոր որ դքսան և ութ ամ հաց ոչ եկեր, բայց միայն ունդ և բանջար։ Աղեքսանդրոս՝ Աբէլ-քաղաքի․ Թովմաս՝ Նարգաբայ․ Յովլաս՝ Թէուրայ։ Յովհան՝ միւս Ահուրանի․ Սարգիս՝ Կրաբիսայ․ Թովմաս՝ Մարաշոյ, որ ’ի Գերմանիկէ․ Պօղոս՝ Ուռհայոյ, որ զկնի ուրացաւ և դարձաւ յաթոռն։ Յովհաննէս՝ Խառանոյ. (1) Յովհաննէս՝ Իմինու։ Եւստաթէ՝ Փիւրնին. Պետրէ՝ Ռասալին. Նոննա՝ Կրկեսոնի. Պօղ՝ Կալանիկոսի. Մարիոն՝ Հռովմայ քարն կոչեցելոյ, որ է Հռովմ Կլայն. Յովհաննէս Թլային (2). Թովմայ՝ Տարայոյ. Ահարոն՝ Աշմուշայ։ Իսկ յԱսիոյ ի Կարիոյ եպիսկոպոսապետն Ռուփիմիոս (3). յԱնտիոքու Պիսիդեայ՝ Մինիբանոս։ յԱլկոայ քաղաքէ Օդեսիս. յԱլրանայ՝ Պետրոս. Յուլիայ Միկառնցին՝ որ յետոյ հերձուած խօսեցաւ։ Թուքեպիոս՝ Եփեսոսի, որ արար սքանչելիս ի Կոստանդնուպօլիս մեծամեծս. և զերիս աւուրս լուելեայն աղօթեաց կալով կանգուն ամենեւին։ Եւ հրեշտակ տեառն աւանդեաց զոգին. և պատեցաւ մարմինն երկնաւոր լուսով զտիւ և զգիշեր. և զահի հարաւ քաղաքն. և առին զնա գողութեամբ զի դիցեն զնա ընդ առաւել մարտիրոսս։ Եւ ձայն եղեւ ի մարմնոյն զի տարցին զնա յաթոռն իւր. և տարան զնա յաթոռն իւր. և տարան զնա ի Լերինէ Նէոկեսարու։ Եղափետ՝ (4) Կաստուրանայ. Թէոդորոս՝ Ռուլեբիոյ. Ղուկաս՝ Իմիրոյ.

---

(1) Երեք օրի. հաւատացեալն։

(2) Մի օրի. Անտիգոնոս [illegible]եայ։

(3) Երկու օրի. Հագոնիայ

(4) Երկու օրի. Մամեստ-

---

(1) Աղեքսանդրիա Ասոր․ (2) Երկու օրի․ Անտոնինոսաւոց, որ է Խոջէնդէրան։

---

(1) Մի օրի. միայն ունի զայս։

(2) Մի օրի. Թալացին։

(3) Մի օրի. Նուփիոս։

(4) Մի օրի. Ելափէս։

Եւսեբիոս՝ Յեդրանոսի. Ակոլթիոդոր՝ Աոնֆիփաղէկ՝ Սանտարի. Ռուֆինոս՝ Արսենիայ. Աղեքսանդրոս՝ Գանքարայ. Թող զանհաշուան տեղեաց եպիսկոպոսն՝ զորս ոչ գրեցաք։

Իսկ երիցանց և սարկաւագաց թիւ ոչ գոյր. որք ընդ ասացեալ եպիսկոպոսունսն գնային յաքսորս, և տուան ի բանտս և ի կապանս ի Կոստանդնուպօլիս և յԱղեքսանդր, և բազումք ի մուխս (1) խեղդեցան։

Իսկ որք ի տեղիս իւրեանց յաշխարհէն Ասորոց սպանմամբ կատարեցան բաց ի հալածելոցն են այսոքիկ։ Եփրեմոս՝ ի գաւառէն Անտիոքայ, Աբրհամէ՝ Սասուփտոնի ի զօրագլխէն մեռան. և Յովհաննէս իմաստունն խոյս ետ և գնաց ի Ալրայ վանս ի Սելեւկիայ. որք երթեալ սպանին և զեղբարս ընդ նմա։ Կորիս՝ գլուխ վանացն Անտիոքու սպանաւ ամենայն բնակչօք վանիցն. և բնակիչքն Թլայահու վանից յոյժ տանջանօք կատարեցան. և վանք սրբոյն Սամանոսի, և վանք սրբոյն Սիմէոնի և Եղիայի առաքելոյն վանքն ի Բեռոն. և Ելնասա գլուխ և մայր վանորայից սրով կատարեցան յետ բազում աղմկի։ Նոյնպէս և կրօնաւորքն Սանանի, և Յովհաննէս վանապետն

---

(1) Երկու օրի. ի միոյ խեղդեցան։

Բափրայի պլրային, և վանորայքն որ շուրջ զՄուռհոյ քաղաքաւ բազումք, ամենեքեան կոտորեցան 'ի տեղիս իւրեանց. և վանքն սրբոյն Յովհաննիսի յարեւելից կողմանէ Խառանու, և վանքն Մականոսի, և վանք սրբոյն Մարգսի, և աւագ վանք լերինն հիմնարկեալն Թումայի Առաքելոյն որպէս ասեն իսպառ կոտորեցան: Եւ վանք սրբոյն Մահակայ՝ և վանք մի մեծ Մեփոսայ և Կիզալայ, և Գեգուգեղ և Կանեար եւթն առաքելադիր՝ յԱմթայ երկիրն իւրեանց եպիսկոպոսաւն և միաբանօքն 'ի միասին կոտորեցան: Եւ վանք սուրբ Անանիանց և վանք սըրբոյն Աբրահամու, և վանք սրբոյն Դանիէլի. և վանք սրբոյն Սամուէլի նմանապէս նահատակեցան: Եւ վանք սրբոյն Աբամու. և վանքըն Թրայի աւընթեր Մասլին կոտորեցան բազում ճգնութեամբ. և զի՞նչ ասասցուք մանրամասնելով քանզի յՄասլայէ (1) մինչեւ 'ի Բաղդատ. և յԵփրատ անապատ արարին զքաղաք և զգիւղ ուղղափառաց:

Իսկ որք փախչէին առ ժամանակն խուզէին զնոսա խստագոյնս, և սպանանէին:

Իսկ վարդապետք՝ որք քաջալերէին ըզհօտն և վիճէին ընդ Թշնամիսն՝ Եղիայ՝

---

(1) Մի օրին. յՄալէն Թե- րեւս Երասխ:

Իոկաւնոյ և Սամէ, Կոզմաս, Յովհաննէս և Սարոն յարևելից. և Կալթուխայ (1) և սուրբն Սարգիս սքանչելագործն. և Ենոսն. և միւս Եղիա, և Սիմէոն, և Կազր, և միւս Սարգիս, և Յովհաննէս միւս, և Սիմէոն միւս. և սուրբն Ենանիա (2) այր Աստուծոյ և նշանագործ. որքա յետ զգուշացուցանելոյն և քաջալերելոյն զերկիրն տասյեալ, գնացին 'ի միասին առ Թագաւորն յանդիմանել զնա ամենայն համարձակութեամբ:

Իսկ անօրէնն՝ բնակարանն սատանայի եհան հրաւիրակ (3) իւրոյն զի պատերազմեսցին բանիւք ընդ սրբոցն. որք յաղթահարեցան 'ի սուրբ Հոգւոյն որ բնակեալ էր 'ի նոսա. և գաղտապէս հեղձուցին զնոսա, և ծածկեցին: Եւ զվանեարն որ կայր շուրջ Ուռհայ, զսուրբ Զակքէ, և զսուրբն Եբէ և զսուրբ Սադէ, եպիսկոպոսաւն և ամենայն կրօնաւորօքն կոտորեցին: Եւ էր անդծիւնակեաց մի Սիմէոն անուն որ զամենայն աւուրս իւր հաց ցանկութեան ոչ էր կերեալ. բայց միայն արմատս 'ի ձմերայնի, և բանջարս յամարայնի. որ յար և հանապազորդ 'ի զարմացման լինէր աստուածայնոցն:

---

(1) Մի օրի. Կալթիփեայ. Եպիսկոպոսն Ենանիա

(2) Մի օրի. յաւելու սուրբ (3) Մի օրի. հրաման.

Եւ միւս սիւնակեայն Թովմաս տարոցին նշանագործն՝ յորմէ հրեշտակք պատկառէին, վարդապետն սքանչելի. զոսա զկնի աշխատ առնելոյն բանիւք, որով կատարեցին։

Իսկ անօրէն ուրացողն Պօղոս ուռհայեցին լցեալն դիւօք՝ եկեալ արեամբ զՄիջագետս եւ փախստական արար զբազումս 'ի Պարսս. եւ ոմանք իբրեւ զգազան շրջէին 'ի լերինս մերկ եւ բոկ եւ սովեալ. եւ ոչ ոք է կարող զպղծութիւն նորա պատմել գրով։

Սա բազում (անգամ) աղաչանօք կոչէր առ ինքն զսուրբն Յակոբ Սրճեցին։

Իսկ նա ազօթիւք խնդրեաց զկամն Աստուծոյ, եւ ել գնաց մինչեւ ցվանքն՝ որ Պարսից կոչի. եւ անդ երեւեցաւ նմա հրեշտակ տեառն, եւ ասաց ցնա. դարձիր 'ի տուն քո եւ պատուիրեա հօտի քո զգուշութիւն վասն ուղղափառութեան. զի յետ երկուց ամաց կատարիս։ Եւ դարձաւ եւ խօսեցաւ ընդ աշակերտսն իւր բանս օրհնաւորս եւ աղօթեաց. եւ ետ զխոստովանութիւն հաւատոյ, եւ կատարեցաւ ըստ բանի հրեշտակին։

Յայնմ ժամանակի խնդրեաց Կաւատն թագաւորն Պարսից հինգ հազար հինգ հարիւր կենդինարս ոսկւոյ 'ի Յուստինիանէ. զի տացէ զօրավարին՝ որ պահէր զդուռն Հոնաց․ և ոչ կամեցաւ տալ։ Իսկ նա սրտառեալ (1) եկն ՚ի Միջագետս մինչեւ յԱնտիոք․ և աւերեաց, և կոտորեաց․ և գտաւ (եգիտ) ՚ի գերիսն չորս հարիւր կուսանս․ զոր զոհեաց Կուզիայ կռոց իւրոց․ և դարձաւ։ Իսկ այսպէս կորոյս Յուստինիանոս հոգւով և մարմնով զերկիր։

Ի սոյն աւուրս ջուրն Մելտինայ անյայտ եղեւ, և ոչ երեւեցաւ զամս հնգետասան․ և անկաւ հուր յերկնից, և այրեաց զԲաալբաք (2) քաղաք․ զոր շինեաց Սողոմոն ՚ի լեառն Լիբանանու։ Բայց զերեք վէմն զոր եդեալ էր իմաստունն ՚ի խորհուրդ Երրորդութեանն, որ քարոզելոց էր յիւրում ժամանակի ոչ վնասեաց հուրն։

Յաւուրս յայսմիկ երեւեցաւ ՚ի Կիլիկիայ կին մի որ երկայն էր քան զամենայն մարդ գիրկ մի․ և լեզու ինչ ոչ խօսէր․ և կերակուր մարդոյ ուտէր, և ՚ի խանութէն փող մի առնոյր և այսպէս կեցեալ զբազում ժամանակս անյայտ լինէր․ և ասէին ոմանք թէ ՚ի յաւերժահարսանցն էր։

---

(1) Մի օրի․ Սրտմտեալ։

(2) Պաալպէք․ քաղաք հին աւերեալ մերձ ՚ի Դամասկոս շինուած Նաղուրէնի, որոյ աւերակքն պէսպէս նշան են հոյակապ և ճարտարարուեստ շինուածոյ․ որոյ ճարտարութիւնք հաստատեն Եգիպտական հնամենեանցն համբաւելոց։

Յետ չարասիրին Պօղէ, Ասկղիպ եղեւ եպիսկոպոս Ուռհայոյ չարագաղան և կատաղի այր. որ ժողովեաց յուղղափառացն քսան այր կրօնաւորս և պարկեշտս. և ուրանալ հարկաւորէր. և ապա արկ զնոսա ՚ի բանտ և կեղեքէր զկեանս նոցա։ Ի գիշերի միում եկն հեղեղ ՚ի վերուստ կողմանէ քաղաքին, և եհար զպարիսպն և փլոյց զնա և անցաւ ՚ի վերայ քաղաքին. և էառ մարդ և անասուն բազում և տարաւ ելից յԵփրատ. և անօրէնն Ասկղիպ զերծաւ ՚ի Ալայն ընդ այլս ոմանս. և կամեցան քարկոծ առնել զնա. զի գիտացին թէ վասն նորա չարեացն եղեւ. և փախեաւ յԱնտիոք։ Եւ տեսեալ զնա Եփրեմ աղանդակիցն իւր որ պատրիարգն էր Անտիոքայ, ասէր. տեսէք եղբարք զերկրորդ Նոյ, որ ղերծաւ ՚ի ջրհեղեղէն, որ եղեւ վասն ոչ ընդունողացն զսուրբ ժողովն։

Իսկ Յուստինիանոս առաքեաց ոսկի բազում շինել զՈւռհայ. և ՚ի պեղելն գտաւ գիր ՚ի վէմն քաղդէայի գրով, թէ երեք անգամ ջրհեղեղ կրէ Ուռհայ. և գտին մեռեալ ՚ի հեղեղէն (1) երեսուն հազար անձինս. և ՚ի թուելն զբնակիչս քաղաքին իմացան

---

(1) Մի օրի. ունի այսպէս. և գտին մեռեալ ՚ի հողոյն։

Թէ երկու հարիւր հազար այր տարեալ էր ջուրն զորս ոչ գտին :

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս Անկղիմայ և Եփրեմի, որ անիծանէին զուղղափառսն. և եկն պատուհաս 'ի վերայ նոցա.

Եւ մինչ Անկղիմ և Եփրեմ խրախանային 'ի միասին և անիծանէին զուղղափառսն, շարժեցաւ քաղաքն Անտիոք հինգերորդ շարժումն. և տապալեցան ամենայն ձեռագործք. և եղեւ հրաշ նորանշան, զի օդդ բերէր զպատիժն Սոդոմայ. և եռայր գետինն. և գայր յանդնդոց սեաւ ջուր, և բերէր խեցեմորթս և կրայս. և ոսկերք գազանաց և հուր և ջուր 'ի ներքուստ 'ի վեր գայր. և ոչ դադարեաց ամ մի ողջոյն պատուհասն, և հոտ գարշութեան գայր անտանելի. և մեռանէին մարդ և անասուն և փախչել ոչ կարէին. և ամենայն աշխարհ լուեալ լային զնոսա և չիշխէին մերձենալ առ նոսա : Եւ մեծ եկեղեցին զոր շինեալ էր Կոստանդիանոս՝ դողաց զեւթն օր, և պատառեցաւ տեղին և ել հուր և այրեաց զեկեղեցին. և երեւեցաւ խաչ լուսեղէն յօդն . և մնացեալքն ի պատուհասէն սկսան ասել . տէր ողորմեա ։ Եւ էին ապրեալքն 'ի բազմութենէ քաղաքին հազար երկու հարիւր և յիսուն այր . ընկղմելոցն ձայն հեծեծման լսելի լինէր յեղանել ոգւոց նոցա։ Բայց ոչ գտանէին զԱսկղիպ և զԵփրեմ զի աղօթս խնդրեսցեն . և ոմանք ասէին թէ Աստուած յերկինս էառ զնոսա 'ի բարկութենէս . և 'ի շրջելն գտին զնոսա զի դողալով գետնոյն ընկեցեալ զնոսա 'ի սան մի կրպրեփեաց , և էին երկուցն մարմինքն եփեալ և մաշեալ և ոսկերքն միայն կային . բայց գլուխք նոցա մնացեալ էին 'ի դուրս , վասն զի ճանաչիցեն 'ի տեսողացն։ Եւ քսան միլ շուրջ զքաղաքաւն ապականեցաւ ։

Եւ Սելեւկիա Ասորոց և Դափնէ կործան 'ի շարժմանէն . և Անաւարզայ գլուխ Կիլիկիոյ և Կորնթոս մայր Եղլադայ . կործան բազում շինուածք և յոլովութիւնք արանց 'ի չար թագաւորութեանն Յուստիանեայ ։

Լուարուք և զայս սիրելիք , Բամերացւոց երկիրն կայ յարեւելից Եգիպտոսի ։ Իսկ Հնդկացն 'ի հիւսիսոյ . Հրեայ ոմն թագաւորեաց անդ յայսմ ժամանակի . և լուաւ թէ Հռովմայեցիքն նեղեն զՀրեայսն և կոտորեն որ կան ընդ իշխանութեամբ նոցա .

և զայրացաւ, և սպան զվաճառականսն որք երթային 'ի Հնդիկս յԱսիոյ կողմանց, և հատաւ ճանապարհ յերթեւեկաց:

Իսկ Թագաւորն Քուշանաց Հնդացն առաքեաց առ Հրեայն, և սպառնացաւ նմա զի կոտորեաց զանմեղսն. և լուաւ ընդդէմ պատասխանի:

Եւ Հնդացն ժողովեաց զօրս և ուխտեաց Տեառն մերոյ Յիսուսի. որ թէ տացէ նմա յաղթութիւն, լիցի նա քրիստոնեայ. և գնաց 'ի վերայ Հրէին և յաղթեաց նմա երկիցս. և հալածեաց զՀրեայն 'ի տեղւոջէն:

Եւ առաքեաց երկու յիշխանաց իւրոց առ Յուստինոս. և ծանոյց զիրսն. և խնդրեաց Եպիսկոպոս, զի արասցէ զնոսա Քրիստոնեայս. և նա առաքեաց զՅովհաննէս իւրով աղանդովն, և մկրտեաց զնոսա այսինքն զՀապաշիքն. և խրախուսեալ 'ի Քրիստոս Հնդացն, արար զերկիրն Քամերայ ընդ իւրով հրամանաւ. և եդ նոցա Թագաւոր Աբրահամ:

Կային և 'ի Քամիրայ յոլով քրիստոնեայք. վասն որոյ առաքեաց Աբրահամ յԱղեքսանդրիայ առ Տիմոթէոս; և խնդրեաց 'ի նմանէ հովիւս այնր հօտի. և նա առաքեաց ուղղափառ հաւատով եպիսկոպոս և քահանայս։ Որոց գնացեալ արք նշանագործք համբաւեցան և ՚ի Քուշանան. և խնդրեցին զնոսա առ ինքեանս. որք երթեալ խաւսեցին զուսումն Յովհաննու յաղթելով նոցա բանիւք և գործովք. և դարձուցին զամենայն Քուշանան և զՔամիրոյ յուղղափառութիւն։

Եւ գիտասջիք, եւթն թագաւորութիւն է անդ. երեք թագաւորութիւն Հնդկաց. չորս թագաւորութիւն Հապէշեացն, որք են Քուշացիք. որք ունին զաւելի մասն երկրին զհարաւոյ և զարեւելից. քանզի քսան և չորս զերատ է աշխարհս, և զվեշտասանն Քուշանքն ունին և (1) Հնդիկք. և ողորմութեամբն Աստուծոյ կան յուղղափառութեան. և մի բնութիւն ասեն զՔրիստոս զծնունդն Հօր։

Եւ առաքեաց Յուստինոս առ թագաւորն Հրեայ, և քաջալերեաց զնա և ասաց. "բարձ զաղանդդ զայդ, զի դոքա ոչ ընդ մեզ են և ոչ ընդ ձեզ. և մանաւանդ մեր ասելս վասն Քրիստոսի և ձերդ՝ 'ի մի իրս հայի. զի դուք ասէք՝ որ հարքն ձեր մարդ խաչեցին. զնոյնն ասեմք և մեք. զի զմարդն սպանին. և դոքա ասեն զԱստուած սպանին հարքն ձեր։»

---

(1) Ամենայն օրինակք այսպէս ունին, բայց առք պատճառին խօսք. զի առնուլ էր եւ զմնացեալն Հնդիկքն։ Միայն մի օրինակ հնագոյն որ այլում թարգմանչի էրեալ չինէլ թարգմանութեան. ասէ. քսան և չորս զերատ է աշխարհս. և զչորեքտասանն Քուշացիքն ունին, որ են Հապաշիք. և ողորմութեամբն.

Եւ դու մի զարմացիս ընդ այս քանզի զկնի ժողովոյն Քաղկեդոնի, Հրեայքն որ 'ի Փղիշտ՝ գրեցին առ Մարկիանոս զնոյն բանս. և մեք իսկ գտաք զթուղթն, որ ունէր օրինակ զայս։

«Ինքնակալդ Եւատուկարոր Մարկիանէ, և թագաւոր երկրի և ծովու, Ազգս Հրէից որդիք Աբրահամու կամիմք խնդալ միշտ ձեզ յաղթութեամբ։ Շնորհս պարտիմք ձեզ զի քոյին կորովի խոհեմութեամբդ ազատեցեր զմեզ 'ի նախատանաց անուղղայ Քրիստոնէից. որք հայհոյեն զմեզ ասելով որդիս աստուածասպանից։ Արդ այժմ լուաք եթէ իմաստուն արամբք և հանճարեղ ծերակուտօք սահմանեցեր մի ումեք իշխել ասել ընդ հարսն մեր տէրասպան, այլ մարդասպան. և այժմ աղաչեմք զինքնակալութիւնդ քո, զի դիցես առն միոյ արիւն 'ի վերայ մեր՝ զոր սպանին հարքն մեր. զի տացուք զայն, և ազատեսցուք զհարսն մեր և զմեզ 'ի բամբասանաց. ողջ լեր։»

Զայս մեք գտաք գրեալ ըստ հաճոյս զոր երկրորդեաց Յուստինիանոս. մանաւանդ ըստուգեաց զՀրէից ասելն առ Մարկիանոս: Յորմէ քաջալերեալ Հրեայն չոգաւ 'ի վերայ Նենգրանայ (2) և կոտորեաց զՔրիստոնեայս. զոր ցուցանէ պատմութիւնն՝ որ յաղագս նոցա:

Եւ Թուղթն առ Յուստինիանէ. և դեսպանքն նորա որ գնացին առ Մնդուրն Թագաւորն Տաճկաց սիրոյ աղագաւ. և մինչդեռ անդէն կային, գրեցին առ Յուստինիանէ զրոյց զայս օրինակ:

«Գիտասցէ ինքնակալութիւնդ ձեր, զի աջողելովն Տեառն եկաք 'ի Հերեթաս քաղաք արքայանիստ Տաճկաց. և ոչ էր անդ Թագաւորն. և առեալ անտի առաջնորդ, գնացաք ընդ անապատ և ընդ աւազուտ երկիր աւուրս տասն, և տեսաք զԹագաւորն Մնդուր նստեալ երևելի փառօք. և տուաք զընծայսն:

Իսկ նա յառաջինն արար զմեզ այպն. և ասաց. ո՞ւր է Քրիստոսն ձեր, որ արարէք Աստուած երկնի և երկրի. և արդ՝ որպէս լուաք, առիք 'ի նմանէ ոչ միայն զԱստուածութիւն, այլ և զՀռովմայեցւոց Թա-

---

(1) Քաղաք:

գաւորութիւնն. և ասացիք զնա մարդ մի մեռեալ և կենդանացեալ։

Եւ մինչ զայս ասէր, եկին դեսպանք 'ի Ջհուտ թագաւորէն, և տուին թուղթ գրեալ զայս ձեւ։

«Զօրացաք մեք Աստուծովն Իսրայելի և հալածեցաք զԳալիլեացին, և զհաւատացեալսն 'ի նա կորուսաք։ Առաք և զՆեգրան երդմամբ, և կոտորեցաք զնա գիտելով զի ոչ մեղադրէ մեզ Աստուած վասն երդմանն 'ի կորուսանել զթշնամիս նորա։ Բայց ոչ կարեմ գրել առ քեզ՝ զսէրն զոր ունին (1) 'ի Քրիստոսն իւրեանց. զի մանուկ մի ոչ կարացի պատրել 'ի բաց դառնալ 'ի նմանէ։

Եւ էր անդ կին մի թագուհի չորիւք դստերօք, զամենայն հնարս փորձեցի և ոչ լուաւ ինձ. ապա ասացի ցնա քաւ լիցի ինձ ապականել զայդպիսի գեղեցկութիւնդ. միայն ասա՝ զոր դաւանէ թագաւորն Հռովմայ, թէ մարդ էր Քրիստոս, և մարդ խաչեցաւ և թողում զքեզ։ Եւ զայրացեալ ենթուք յերեսս իմ անզգամն այն և մահասէրն. և սպանի զնա ընդ դստերս իւր չարամահ։

Եւ Յուստինանէ յորդորեաց զնա յայս.

---

(1) Մէ օրէ. զոր ունէ 'ի Քրիստոսեան իւրեանց.

բայց մի արասցես ընդ նմա խաղաղութիւն․ այլ գնասցուք 'ի միասին և բարձցուք զթագաւորութիւն նորա ։»

Եւ զայս գրեցաք առ քեզ 'ի ձեռն Աբրահամու երիցու որ ընդ մեզ, զի նախագոյն ծանիցես, և թէ զի՞նչ տայցէ մեզ պատասխանի ոչ գիտեմք․ ողջ լեր ։»

Յետ այսորիկ Պարսք և Տաճիկք միաբանեալք եկին մինչև յԱնասք և յԱփեմիա, և գերեցին ։ Ի սոյն աւուրս եղև շփոթ 'ի Կոստանդնուպոլիս և սպանին զդատաւորն․ և 'ի նոյն օրն այրեցաւ մեծ կաթուղիկէն․ և այս ամենայն պտուղք էին չարեայն Յուստինեայ․ այլ մեք սակաւն գրեցաք 'ի բազմացն․ չարածերին այն և անիմաստն՝ որ այնչափ եթող իւր արձանագրութիւնս նզովից ։

Սա մերձ 'ի վախճանելն իւրում արար զՐուբեր որդին իւր զհոմանունն Կեսար, և առաքեաց ընդդէմ Պարսից․ որ եկեալ 'ի Սրմբէճ, լուաւ վասն կուսի միոյ դստեր երիցու, և խնդրեաց 'ի կնութիւն․ և երէցն պահանջեաց 'ի նմանէ ուղղափառութիւն ։ Եւ նա երդուաւ նմա պահել զդուստր նորա ուղղափառ եպիսկոպոսիւ և քահանայիւք․ և թէ լիցէ հնար դարձուսցէ զամենայն երկիրն 'ի նոյնն ։ Զի այդ հաճոյ է ինձ ասէ . և դու աղօթեա՛ վասն իրայդ ։ Եւ ետ նմա զաղջիկն որում անուն էր Թէոդորայ . վասն որոյ բազում դիւրութիւն եղեւ եկեղեցւոյ , և տարաւ զնա 'ի Կոստանդնուպօլիս ուղղադաւան եկեղեցականօք . և յետ երից ամաց մեռաւ ծերն Յուստինոս , թագաւորեալ ամս ինն։

Եւ թագաւորեաց տղայ Յուստինոս ամս երեսուն և ութ՝ և ամիս եւթն ։

Իսկ Պարսից թագաւորն Կաւատ ետ զորդին իւր 'ի Մանիքեցիսն 'ի դպրոց . և ուսաւ զաղանդ նոցա . և ուխտեաց , թէ թագաւորէ նա՝ պաշտէ զուսումն նոցա ։ Եւ իմացեալ Կաւատն՝ ժողովեաց զամենայն Մանիքեցիսն , և այրեաց զնոսա զի մի ասէ լուցեն թագաւորք մոգուցն , և սպառեսցեն զիս . և զեկեղեցիս Մանիքեցւոցն ետ 'ի Քրիստոնեայսն ։

Լու եղեւ բանս այս և 'ի Կոստանդնուպօլիս . և հաւաքեցին զանդ գտեալ Մանիքեցիսն , և ջանացին զի արասցեն զնոսա քրիստոնեայս , և ոչ հաւանեցան . և այրեցին զնոսա նոյնպէս ։

Ի սոյն աւուրս առաքեաց Բելիսարիո զօրագլուխ մեծ զօրու 'ի Պարս , և եհաս անդ 'ի մեծի Պասեքին ։

Եւ ասաց Կաւատն՝ պատուեսցուք զանուն Քրիստոսի վասն ձեր և վասն քրիստոնէիցս որ ընդ մեզ են. և մի պատերազմեսցուք մինչև անցցէ օրս երեւելի. և ոչ լուաւ յանդուգնն. վասն որոյ յաղթահարեալ մատնեցան ի ձեռս Պարսից և կոտորեցան. և ոմանք գետասոյզ եղեն, և դարձան սակաւք:

Մեռաւ Կաւատն յետ յաղթութեանն. և թագաւորեաց որդի նորա Խոսրով: Եւ մայր նորա չարչարէր ի դիւաց, և ոչ կարէին օգնել նմա մոգքն և կախարդքն: Եւ հաւատաց ի Քրիստոս, և մկրտեցաւ ի Սիմէոնէ միայնակեցէ և բժշկեցաւ:

Զայսու ժամանակաւ ապստամբեցին Հրեայքն որ ի Սամարիա, և կոտորեցին զՆիկոպօլիս (1). և երթեալ զօրն Հոռոմայեցւոց ջնջեցին զնոսա:

Իսկ թագուհին Թէոդորայ աղաչէր ըզթագաւորն վասն ուղղափառութեանն. և գրեաց թագաւորն թուղթ յանապատն Եգիպտոս առ միանձունսն. զի եկեալ իւրեանց առ Աստուած համարձակութեամբքն խնդրեսցեն յԱստուածոյ զկրաւացին: Գրեաց և առ Սեւերոս Աղեքսանդրիա, զի աշխատ լիցի, և եկեսցէ ի գործ եկեզեցւոյ, և եկին յոլովութիւն անապատաւորաց և սուրբն Սեւերոս։

---

(1) Մի օրի. Նիկիոպօլիս:

Նոյնպէս և հրամանաւ թագաւորին եկին և յամենայն կողմանց բազմութիւն եկեղեցականաց, և արարին քննութիւն զտարի մի. և շահ այս եղեւ. զի Անթիմոս եպիսկոպոսն Կոստանդնուպօլսի դարձաւ յուղղափառութիւն, յաղթեալ 'ի ճշմարտութենէն. և դադարեաց հալածումն Եկեղեցւոյ ուղղափառաց. և գրեթէ բազմութիւն քաղաքին հաւանեցան ուղիղ խոստովանութեանն 'ի տեսանելն բազու՛մ նշանս 'ի սրբոցն, բաց յեկեղեցականացն՝ որք լրբէին վասն հպարտութեանն։

Եւ մինչ յայսմիկ էին, եհաս համբաւ ասպատակի բարբարոսաց յաշխարհն Թրակացւոց. և ելին զօրքն գնալ 'ի վերայ հինին քսան հազար արանց սպառազինաց. և գընային խնդութեամբ բազմաւ, յուսալով թէ լինի ուղղափառութիւն։ Եւ թագաւորն յուղարկէր զնոսա ելեալ 'ի քաղաքէն և դարձաւ յեկեղեցին յաղօթս. և շարժեցաւ քաղաքն ամենայն և լցան փողոցք և վերնատանք և տանիք բազմութեամբ արանց և կանանց. որք աղաղակէին միաբերան և ասէին. բարեպաշտ արքայ, ողջա՛յց զօրատատումն եկեղեցւոյ. և արա՛ միադաւան զամենեսեան. փութա՛ Թագաւոր, և 'ի կեանս քո արա՛ խաղաղութիւն և միաւորութիւն եղբարց բաժանելոց. որ լինի միաբանութեամբ, և միաւորութեամբ բանին Աստուծոյ: Եւ ելաց արքայ լալիւն մեծ. լայր և ամենայն քաղաքն. զի ասէին եթէ միակեացք որք երկնային վարուք են և աստուածախօսք և սքանչելագործք զոր ինչ դաւանեն, այն է ճշմարիտն:

Ախորժէր յոյժ Թագաւորն քարոզել ընդ ամենայն երկիր զուղղափառութիւն: Բայց զի մտանէին առ նա Քաղկեդոնիկքն և արկանէին նմա երկիւղուկս հոգեւոր և մարմնաւոր, ասելով վեց հարիւր երեսուն և վեց եպիսկոպոսք միաբան են կապեալ նզովիւք. զիա՞րդ լուծանես զայն. այլ և ոչ ներէին քեզ կեալ ըստ մարմնոյ յայտնի կամ 'ի ծածուկ այսմ դաւանութեան հետեւողքն: Մի՛ խաբիր արքայ 'ի կնոջէ: Եւ երկեաւ Թագաւորն 'ի նզովից և 'ի մահուանէ, և լռեաց:

Իսկ Սեւերոս ասաց 'ի նզովից նոցա մի՛ զանգիտեր. զի Պետրոսի տուաւ իշխանութիւն կապել և արձակել, որ մի՛ դաւանեաց զՔրիստոս որդի Աստուծոյ միաւոր բանիւն զերեւեալն՝ զոր տեսանէր. և բաժանողքն կապեալք են և նզովեալք, ոչ զոք կարեն կապել կամ արձակել. այլ՝ մահն մարմնոյ կարծելի է 'ի դոցանէ ։

Բայց լսել արժան է Քրիստոսի, և ոչ երկնչել 'ի սպանողացն մարմնոյ ։ Իսկ միադաւանքն և կրօնաւորքն յորժամ տեսին թէ յերկարեաց բանն, և ոչ լինի խաղաղութիւն և բարի ինչ, ասեն. ո՛վ Թագաւոր, հաւատս մեր ոչ է մանկագոյն և նոր, թէ հասանի. և ոչ ծերացեալ՝ թէ նորոգի. և ոչ թերի՝ որ լնու. և ոչ առաւելեալ՝ որ պակասի. այլ զոր սերմանեցին մարգարէքն՝ այսինքն Հոգին սուրբ էր սերմանօղն, նոյն ինքն ժողովեաց առաքելովքն. և Տէր Քրիստոս Աստուած ճշմարիտ հաստատեաց և կնքեաց արեամբն անճառելի. յայնմանէ մեք ոչ թիւրիմք. ոչ պարգեւօք. և ոչ փաղաքշանօք. ոչ մահուամբ, և ոչ կապանօք, այլ յայնմ եմք և կացցուք մնասցուք առաջի մարդկան. որպէս եմք առաջի Աստուծոյ. ընդ ձերն դուք գիտէք ։

Եւ զայս ասացեալ գնացին մենաւորքն (1) առեալ ընդ ինքեանս և Սեւերոս և զԱնթիմոս ։

Եւ լուեալ զայս Սօրզօրու (2) որ 'ի սահմանս Ապլթայ քաղաքի, և գնաց առաւ աշակերտօքն 'ի Կոստանդնուպօլիս. և տեսեալ զԹագաւորն ասէ. մինչև յե՞րբ է անիծեալ ժողովոյն չարիքն. վասն է՞ր ոչ լուար հարանցն Եգիպտոսի սրբոցն։ Եւ ցասուեաւ Թագաւորն և եհար ձեռամբ զբանից սրբոյն, և ասէ. զի՞ նզովես զսուրբ ժողովն, և կամ զի՞նչ նշանս առնես վասն այդչափ համարձակելոյդ քո առաջի իմ։ Եւ ասէ սուրբն. Նզովեսցի և եղիցի նզովեալ ինքն չար ժողովն և ամենայն հաւատացեալքն նորա. և զի նշանս խնդրեցեր, յուսամ 'ի տէր զի զքեզ արասցէ նշան. և ել բարկութեամբ 'ի Թագաւորէն։

---

(1) Այլք միանձնունքն ։

(2) Մի օրի. Մաւրզաւբաւ ;

Եւ Թագաւորն առաւել տրտմեալ գրեաց թուղթ և առաքեաց ընդ ամենայն երկիր. եթէ որ անիծեսցէ ասէ զժողովն Քաղկեդոնի, սպանցի։ Եւ առաւել փութացուցին զհրամանն քաղկեդոնացեալքն 'ի յաղանդն։

Զկնի աւուր միոյ փայլատակեաց հրեշտակ մի Աստուծոյ առաջի Թագաւորին և եհար զգլուխ նորա. և անկաւ Թագաւորն և անշնչացաւ. և տեսեալ Թագուհին չոգաւ և անկաւ առ ոտս սրբոյն. և աղաչանօք էած զնա 'ի հաւատ, զի եկեալ աղօթսցէ ՚ի վերայ նորա . և յարեաւ առողջացեալ. և խրատեաց զնա և ած ՚ի հաւան ։

Եւ խնդրեաց Թագաւորն ժողով, զի արասցեն վերստին քննութիւն ։ Եւ լուեալ զհրամանն, եկին Սեւերոս և Անթիմոս և Թէոդորոս պատրիարքն Աղէքսանդրի . և ընդ նմին նոցա եկն Ագադոն պապն Հռովմայ ։ Իսկ Թագաւորն և քաղաքն ելին ընդ առաջ նորա և մեծարեցին զմուտ նորա ։

Բայց երեք պատրիարգունք ոչ ելին ընդ առաջ նորա. և մեղադիր եղեւ Թագաւորին Ագադոն և ասէ. ո՞վ է խաբեբայն այն Սօրզօրաւ (1) . զի վասն նորա մաղես (2) դարձեալ զհաւատս սուրբ ժողովոյն . արա՛ զնա ՚ի հրամանս իմ, և խրատեսցես զնա . և ասէ Թագաւորն, որպէս և կամիս հայր, արա՛ ։

Իսկ այրն սքանչելի առանձնացեալ էր և կայր ՚ի լռութեան և ՚ի զգուշութեան . զի էր առաջին շաբաթն աղուհացիցն . և առաքեաց կոչնականս նմա երիցս (3) և ոչ ետ պատասխանի . յղեաց ապա առ նա և ասէ . կամ՛ եկ առ մեզ . և թէ ոչ՝ գամք առ քեզ ես և Թագաւորս ։

(1) Այս ամենայն օրինակք ունին Զօրաւ . միայն մի օրինակ որպէս ՚ի վերոյ, ունի և աստ Մօզզօրաւ ։

(2) Երեք օրի . մաշէս ։

(3) Մի օրի . երկիցս անգամ ։

Նա պատասխանի և ասէ. ես մինչև 'ի մեծ հինգշաբաթն ոչ գնամ առ ոք. և ոչ ընդունիմ զոք առ իս։

Իսկ Ագադոն բարկացեալ արար ատեան և նզովեաց զսուրբն Սեւերոս և զԱնթիմոս, և զԹէոդորոս, և զՍօրղօրաւ. և դաւանեաց երկու բնութիւն. և առ ժամայն եհաս բարկութիւն Տեառն 'ի վերայ նորա և թանձրացաւ լեզու նորա և ոչ տանէր բերանն և եհան արտաքս. և երեք անգամ կտրեցին բժիշկքն զթանձրութիւն նորա և ոչ դադարէր կեղն. և դառնագոյն տանջեաց զնա զաւուրս սուրբ պահոցն. և 'ի մեծի հինգշաբաթուն սատակեցաւ չարապէս։

Իսկ Թոյլ Թագաւորն այլ ինչ ոչ արար. բայց միայն զի եբարձ զհրաման սպանմանն անխծողայն զՔաղկեդոնի ժողովն. և գնացին սուրբքն յիւրաքանչիւր տեղիս։

Աստ յայտնեցաւ նշխարք սրբոյն Մարինեայ 'ի գաւառին Անտիոքու 'ի Ճանդարիս (1) գիւղն, և էր անփուտ. և ամենայն մարմինն վէրք, և մածեալ ընդ տախտակն, և բերաւ յԱնտիոք։ Եւ բազում բժշկութիւն եղեւ 'ի փառս Քրիստոսի։

---

(1) Մի օրի. 'ի Ճարգարիս։

Զայսու աւուրբք(1) ելին Պարսիկք 'ի Միջագետս, և գերեցին մինչև 'ի Հալապ և յԱնտիոք կամակարութեամբ. մինչև տարան զկնի սունս կոճս:

Եւ գնացին Հռովմայեցիք և առին զվրէժն գերելով զաշխարհն Պարսից:

Եւ զհետ նոցա ել Խոսրով արքայն Պարսից անձամբ, և քակեաց զԱնտիոք. և գերեաց զՍրուճ. և ոչ կարաց առնուլ զՈւռհայ, և գնաց:

Յաւուրս յայսոսիկ առաքեցան 'ի Կոստանդնուպօլիս եպիսկոպոսք երկու քաղկեդոնիկք, գտեալք յարուագիտութեան, Եսայի և Աղեքսանդրոս. և եհատ զերանս նոցա Թագաւորն, և հանեալ 'ի ձող եցոյց քաղաքին և աղաղակէր մունետիկն, թէ այս է դատաստանն այնպիսի գործողացն: Եւ կատարեցաւ բան առաքելոյն թէ որովհետև ոչ ընտրեցին զԱստուած ունել 'ի գիտութիւն, մատնեաց զնոսա յանարժան գործս:

Ի հնգետասան ամին Յուստինիանեայ ելին Պարսք և գերեցին զԿիմիտոն(2). և զԿալանիկոն (1). և զՊեղիայ քակեցին. և հանին անտի զսուրբ նշխարն Բաքոսի, և զոսկին որ 'ի տապանն սրբոյն Սարգսի. զպարդն քակեցին առին, և տարան յաշխարհն իւրեանց ։

---

(1) Մի օրի․ ունի 'ի լուսանցսն զայսու ժամանակօք Պարսիկք գերեցին զՀալապ, և Հռովմայեցիք զՊարսիկքն:

(2) Մի օրի․ զՄիտոն:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս որ յութ հարիւր քառասուն թուին Ասորւոց եղեւ հրաշք անհաւատալի. և զկնի եղեւ մահատարաժամ որ բնաւ չէր լեալ։ Եւ եղեւ սով և շարժ քառասուն օր։

Ի յութ հարիւր քառասուն և ութ թուին Ասորոց եղեւ հրաշք 'ի վեր քան զհաւատալ. թէ ոչ էր գտեալ բազում գրչաց գրեալ, և ոչ ես կարէի գրել. խաւարեցաւ արեգակն տասն և ութ ամիս, զերեք ժամն յաւուրն լոյս տայր, և զայլն որպէս ոչ տիւ և ոչ գիշեր. և ոչ հասան պտուղք տարւոյն այնորիկ. և ամենայն երկիր եղեւ իբրեւ զբազմօրեայ հիւանդ ։

Եւ զկնի այնորիկ եղեւ մահատարաժամ որ բնաւ չէր լեալ։ Եւ նախ սկսաւ 'ի Կոստանդնուպոլիս. և մեռան առաջին օրն հինգ հազար. և միւս օրն տասն հազար. և յերլոյծ աւուրն հնգետասան հազար. և չորքորդումն աւուր տասն և ութ հազար. զի եդիր (եդ) Թագաւորն համարողս առ դրան քաղաքին, և թուեցին մինչեւ երեք հարիւր հազար յաւուրն մեռանել։

---

(1) Մի օրի. Կալանիկոս ։

Նախ սկսաւ յաղքատսն, ապա 'ի մեծատունսն և յիշխանսն և 'ի տուն Թագաւորին. Նախ 'ի մէջ ձեռացն բուշտ երեւէր. և այն էր նշանն և այլ ոչ կարէր փոխել զտուն. և ուռնոյր ցայրքն և պատառէր, և երթայր չարաւն. և քառասուն գահեկան առնոյր մարդ որ հանէր մեռեալ մի 'ի քաղաքէն. որ և 'ի տանիքն բազում անգամ անկանէր եւ մեռանէր։ Եւ էր զի մեռանէր ոք 'ի տուն հասեալ 'ի մարդկանէ և դատարկացեալ, և լի գանձիւք. և բառնայր 'ի գանձուցն ըստ կարի. և յելանելն ընդ դուռն՝ անկանէր և մեռանէր. և սկսան ընկենուլ 'ի ծովն ընդդիմակուռնսն. և դարձեալ ձգէր (արտաքս) 'ի քաղաքն. և հոտեցաւ քաղաքն և ձգեցաւ մահ ընդ երկիր ամենայն։

Եւ յերկիրն Եգիպտոսի ընկղմեցաւ քաղաք մի և մնացին միայն եւթն այր և տղայ մի. որ և 'ի գնալն նոցա ընդ քաղաքամէջն երեւեցաւ նոցա հրեշտակ տեառն որ կոտորէրն. և մեռան դարձեալ նոքին այրքն եւթանեքին, և լայր տղայն. և հրեշտակ տեառն բուռն եհար զմանկանէն և եհան ’ի քաղաքէն և ասէ. մի լար, զի բարկութիւնս Տեառն յաղագս չարութեան հերձուածոյ է և մեղաց. և երեւեցաւ հրեշտակն (Տեառն) տղայոյն ’ի կերպարանս ծերոյ:

Իսկ յերկիրն Փղշտացւոց ’ի քաղաք մի երեւեցան դեւք և ասեն. Թէ կամիք ապրել (’ի մահուանէ), գտանէք յանդս ձեր պատկեր մի պղնձի, երկրպագեցէք նմա. և երթեալ շրջեցան և գտին զպատկերն, և բերեալ ’ի քաղաքն պատուեցին. և մեռան առհասարակ, և ոչ մնաց մի ’ի նոցանէ:

Բայց քաղաքն Հեմս խնայեցաւ. զի ապաւինեցաւ ’ի բարեխօսութիւն Մկրտչին Յովհաննու. զի անդ կայ գլուխ նորա:

Ի տասն և իններորդ ամին Յուստինեայ բարբարոսքն առին զՀռոմ և աւերեցին: Եւ ’ի սոյն ժամանակ կատարեցաւ սուրբն Սեւերիանոս Աղեքսանդրիայ:

Իսկ Անտիոք էր պատրիարք ուղղափառաց սուրբ ճգնաւորն Սարգիս. յորում ժամանակի այրեցաւ վանք սրբոյն Սիմէոնի Անտիոք. և Թագաւոր եղեւ ’ի բնակչաց:

Ի քսան երեքերորդ ամին Յուստինեայ գետն Տարսոնի ապականեաց զքաղաքըն ։ և ՚ի շարժմանէ կործանեցաւ Լատիկն. և մեռան եւթն հազար այր ։ Եւ կէս քաղաքին Պանտուպօլի ընկղմեցաւ . և կենդանւոյն իջին ՚ի խորս բնակիչքն ։ Եւ յետ աւուրց լսելի լինէր հեծութիւն և մռնչութիւն ։ Ընկղմեցան և ՚ի Փիւնիկէ Տրապօլիս և Պիլաս (1) և Տրավաս ։ Նոյնպէս կործանեցաւ քաղաքն Գաղղիացւոց և գնաց ծովն ՚ի ներքս միլս երկու . և մնային նաւք ՚ի ցամաքի ։

Ի սոյն ժամանակս առին Պարսիկք ըղ-Ասպարտաս , և ամրացուցին . և գնացեալ զօրըն Հոռոմայեցւոց պաշարեաց զնա զեւթն ամ, և առին դարձեալ ։

Զայսու ժամանակօք եղեւ սով սաստիկ. մինչ զի ուտէր մարդ հինգ հինգ լիտր հաց և ուռնոյր, և ոչ յագենայր. և եղեւ անասնոց մահ զերկուս ամս ընդ ամենայն երկիր. և պակասեաց վաստակ եզին ։ Եւ եղեւ շարժ ՚ի Կոստանդնուպօլիս զքառասուն օր. և բազմութիւնք տանց եղեւ գերեզման բնակչացն. և տապալեցան եկեղեցիք ։

Եւ յերեսներրորդ ամի Յուստինեայ երկու պարիսպքն Կոստանդնուպօլի՛ անկան չինեալքն ՚ի Կոստանդիանոսէ եւ ՚ի Թէոդոսէ ։ Եւ ընկան քաղաք տասն օր շարմնացաւ իբրեւ զաներեւ. եւ յետոյ չքնեցաւ ։

---

(1) Երկու օրի . Պիլաս ։

Յայսմ ժամանակի էր սուրբն Յակովբ Կուրդնկարն կոչեցեալ ։ Սա առաքեաց Թագաւորն Արաբկաց քրիստոնէից Հերեթն առ Յուստինիանոս մեղադրանս առնելով. ընդէ՞ր ապականեցիք զաշխարհ Քաղկեդոնի ժողովովն. եւ արարիք զԵրրորդութիւնն չորրորդութիւն ։

Իսկ Յուստինիանոս յղեաց առ նա արս ուսեալս գրոց հաւանեցուցանել նմա զորպէսն. որ եւ ՚ի տեսանելն զնոսա Հերեթն ասէ. եթէ եւ դուք յաշակերտաց նզովեալ ժողովոյն էք, ես ոչ ողջունեմ զձեզ. եւ նոքա ասեն ընդէ՞ր հրամայեցեր թագաւորութիւնդ այդպիսի բանս, եւ նզովեցեր վեց հարիւր երեսուն եւ վեց սուրբս՝ որ թէ աշխարհականք էին ծանր էր, թող թէ առաջնորդք եկեղեցւոյ. եւ ասէ թագաւորն ես անգէտ եմ գրոց եւ բարբարոս. բայց ասացէք ինձ թէ ՚ի հազարաց կերակուրս անկանիցի մուկն մի, պղծի՞ թէ ոչ. ասեն պղծի այն. եւ պատասխանեաց թագաւորն. եւ զի՞արդ ոչ պղծէր զվեց հարիւր երեսուն եւ վեց արանն տոմարն Լեւոնի, որ ՚ի հրէութիւն դարձոյց զքրիստոնէութիւնս. եւ ամաչեցին յոյժ ։

Եւ յետ աւուրց ասեն ցԹագաւորն հրամայեցէք պատարագ տեսանել զմերն և հաղորդիլ 'ի մէնջ. և ասէ արքայն մեք ոչ հաղորդիմք 'ի ձէնջ և ոչ հաղորդեմք զձեզ. և 'ի ժամ ճաշուն հրամայեաց տալ նոցա միս անսուրբ իշու և ուղտու. և ասեն մեք ոչ պղծիմք ուրօք. և արքայն ասաց մեզ զիա՞րդ ոչ պղծիմք ուտելով զմիս մարդոյ, զի այդ և է պատարագն ձեր (1). և արձակեաց զնոսա լի ամօթով։

Յայնժամ մեռաւ Թէոդորայ Թագուհին ուղղափառ հաւատով, և Թաղեցին զնա Անթիմոս և Թէոդորոս պատրիարքունք։

Եւ 'ի ժամանակս Յուստինեայ յայտնեցան հերձուածք այսոքիկ։

Ա. Հատեալք 'ի Մանիքեցւոց որք եկին 'ի Պարսից կերպիւ աբեղայից. և արեամբ սպիտակ հաւու և սպանեալ տղայոյ հաղորդէին 'ի տարւոջն միանգամ, և առնեն զսճրագործութիւն Մանիքեցւոցն։

Բ. Յովհաննէս Ափեմից, որ նիւթ ասէր զԱստուած որպէս տարր ինչ։

Գ. Ստեփաննոս Ուռհայեցի, որ զսան

---

(1) Մի օրի. զի այս է և զիարդ և է պատրիարքն ձեր պատարագն ձեր։ Մի օրի.

ջանք մեղուցելոցն նոյնչափ աւուրբք ասէր և ապա հաւասարիլ արդարոցն ։

Դ. Յուլիանէ Աղիկառնացին, որ ասէր Քրիստոսի առեալ զանմեղ մարմինն Ադամայ որ յառաջ քան զյանցանսն. զոր յանդիմանեաց սուրբն Սեւերոս, ասելով թէ Ադամ կրկին է. նախ անխառնուածն և զկնի խառնեալն յապականացութեան ։ Որդ տէրըն զխառնեալն էառ, և աստուածացոյց անապական գործելով. բայց նա ոչ զղջացաւ ։

Ե. Յովհաննէս տրիթացին, որ երեք բնութիւն ասէր զաստուածութիւնն. և աշակերտ էր սա Սամուելի ռապլացւոյն. զսա կոչեաց Յուստինոս առ ինքն. և լուեալ զհերձուած նորա հալածեաց ։ Սա արար գրեանս՝ վկայութիւն որսալով յԱստուածունչ գրոց՝ իւրում աղանդին ։

Զ. Փոտինոս(1) անտիոքացին՝ սա երեք բնութիւն ասէր զաստուածութիւնն. արար և սա գրեանս ։

Է. Թէոդորոս Կապպադովկացին որ ըզնոյն ասէր թէ Քրիստոսի Աստուածութիւնըն ոչ է Հօր ։

---

(1) Մի օրի. Տուփինոս ։ մի օրի. Ռուփէինոս ։

Ը. Աթանասիոս որդի դստերն Թէոդորայ Թագուհւոյ. սա զՅովհաննիսի աղանդն հաստատէր։ Եւկանոն Տարսոնի եպիսկոպոս, և Եւգէն Սելեւկիոյ զնոյն աճեցուցին երեք բնութիւն ասելով Քրիստոսի Աստուծոյ։

Թ. Ամբրիգոս Կոստանդնուպօլսի, զնոյնն ասաց. թէ որ երեք անձանցն յատուկ բընութիւն ոչ ասէ երեք, նա հրեայ է և հակառակ ուղղափառութեան։

Յայնմ ժամանակի եկն Հերեթն Թագաւոր առ Յուստինիանոս, և ունէր գիր ուղիղ հաւատոյ զարեւելեան եպիսկոպոսաց, զՀայոց մեծաց և զՅակոբեայ Կուրդնկարին և զԱղեքսանդրու պատրիարգին. և եցոյց յարքունիսն և ասաց. որ ոչ ձեռնագրէ սա, ոչ է Քրիստոնեայ. և հրաժարեցին յոլովք։

Եւ բարկացաւ Հերեթն Յուստինիանեայ, և ասէ ցնա. ապշեալ և յիմարեալ ոչ գիտես թէ այս ամենայն ապականութիւնք երկրի վասն չար ժողովոյն է. և ընդէր ոչ բառնաս զնա, զի լիցի խաղաղութիւն (երկրի) ՚ի Տեառնէ։

Եւ ասէ ցնա Յուստինիանոս. վասն քո եբեսայ կալցին ախորժողքն (1) զուղղափառութիւն յայտնապէս, և համարձակեալք լեալն. և այլ ինչ մի նեղեր զմեզ:

---

(1) Երկու օրի. ուղղափառքն։

Ապա կոչեաց Հերեթն եպիսկոպոս ուղղափառս. և ետ ձեռնադրել պատրիարքունս ուղղափառացն, որք իցեն 'ի Կոստանդնուպոլիս և յԱնտիոք և յԱղեքսանդր և յԵրուսաղէմ. և առաքեաց զնոսա անդ ապառնալեաց թղթովք, թէ որ նեղեսցէ ըզնոսա (կամ նզովեսցէ): Եւ գնաց ինքն յաթոռ իւր:

Բայց զի համարձակեցան 'ի բանս աստ ուղղափառքն և ասէին ընդ Քաղկեդոնիկսն, թէ դուք զՆեստորին ունիք, և զԹէոդորիտոսն և զԹէոդորոսն. լուաւ Յուստինիանոս և արար ժողով պատասխանի առնել իրացն. և պատրիարգունքն էին այսոքիկ. Դոմնոս՝ Անտիոքու. Ապողինար՝ Աղեքսանդրի. Եւտիքէս՝ Կոստանդնուպոլսի. Փաքիլոս՝ Հռովմայ. որ կայր 'ի Կոստանդնուպոլիս 'ի Պաղատ, որ և ամբաստանեալ ոչ գայր 'ի ժողովն. և հազիւ բերին զնա. և արարեալ քննութիւն գրոց, նզովից արժանի դատեցան որք՝ Նեստորի հաւանին կամ Մամուեստացւոյն կամ Տարոնացւոյն. և եթէ նոքին իսկ նզովեալք են:

Իսկ Փաքիլոս ասէ զկնի հարիւր երետուն ամի ոչ է մարթ անիծանել զպղծելիսն Թուեցեալ առաջնոցն. և խափանեցաւ առաջնորդութիւնն և գնացին ։

Բայց Պօղիկոս աշակերտն Յուլիանեայ յանդիմանեալ 'ի բազմաց՝ ոչ զղջացաւ. ընդսա աղաչէր ժողովուրդն իւր զի արասցէ իւր փոխանորդ. և նա ասաց ես միայն զիա՞րդ արարից եպիսկոպոս. Երեք պարտ է լինել ձեռնադրողացն եպիսկոպոսի ։

Իսկ յորժամ՝ մեռաւ, զձեռն մեռելոյն առեալ կենդանի եպիսկոպոսին եդին 'ի վերայ Սեւտրոպոսի, և արարին եպիսկոպոս. և նա ձեռնադրեաց տասն եպիսկոպոս. և առաքեաց ընդ ամենայն երկիր տարածել զաղանդն ։

Եւ ոմն 'ի նոցանէ Սարգիս անուն գնաց յերկիրն Բամիլրայ, և աշակերտեաց զբազումս. և արար նոցա եպիսկոպոս Մոշքէս անուն, որ և կենի երեք ամի մեռաւ ։ Եւ զսուրբն Սեւերիանոս զրպարտեն նոքա, թէ զՔրիստոսի մարմինն ապականացու ասէր. այլ սուրբն անպարտ է աստի, զի նա ասէր թէ զապականացու բնութիւնս մեր· էառ. և անապական գործեաց ։ Եւ նոքա ասեն թէ յորովայնէ կուսին անչարչարելի մարմին էառ և անմահ. և չարչարանքն և մահն կերպարանօք ՚է, և ոչ ճշմարտութեամբ։

Գնաց ոմն ՚ի Նոցանէ յԱղեքսանդրիա. և խառնեցան ՚ի նմա այլ ևս աղանդք Պոնտացիք և Լաւինացիք (1), և ձեռնադրեցին աղանդին պատրիարք. և նա արար բազում եպիսկոպոս. և ցրուեաց ընդ ամենայն երկիր։

Մի ոմն ՚ի Նոցանէ չոգաւ զհիւսիսիւ և յարեւելս. և եկն յԱզրուննի (2) և եկ ՚ի Հայս. և ոչ ընկալան զնա. այլ առաքեցին Թուղթ առ Թէոդորոս պատրիարքն Անտիոքու. եթէ դուք զինչ ասէք այսմ աղանդոյ, տա՞ք ողջոյն՝ թէ ոչ. և նա կատարեալ էր զկեանս իւր։ Բայց յաշակերտաց նորա լուան զճշմարիտն և հալածեցին զնոսա։ Բայց ՚ի Կապադովկիոյ բազումք խաբեցան ՚ի Նոցանէ։

Ասեն ոմանք թէ և ՚ի մասնէ ՚ի Հայոց սակաւք հաւանեցան առ ժամանակ ինչ մինչեւ ՚ի կատարելոյն իւրեանց սաստեալք եղեն, և ՚ի բաց կացին։

Յուստինիանոս թագաւոր կամեցաւ նորոգել զեկեղեցին Առաքելոցն և զտապանատուն թագաւորացն. և գտան երիս տապանս Արճճափակս (3), և գիր ՚ի վերայ նոցա.

---

(1) Մի օրի. Լազինացիք։ Մի օրի Լանինտացիք։

(2) Երկու օրի. յԱրզուն։

(3) Մի օրի ՚ի լուսանցն ունի գտին զնշխարս առաքելոյն։

սուրբ Անդրէաս, սուրբ Ղուկաս, սուրբ Տիմոթէոս․ և խնդաց քաղաքն ընդ գալուստ առաքելոցն և փառաւորեցին զԱստուած։

Եւս և Աստոնն որ ՚ի Կեսարիա Պաղեստինացւոց առաքեաց աջոյ ձեռն մի յանուն Յովհաննու Մկրտչին, և եղեւ կարծիք վասն նորա․ սակայն պատուեցաւ ոսկեղէն յարկօք և ակամբք։

Իսկ Յուստինիանոս շինեաց երկոտասան վանք և եկեղեցիս իննսուն և վեց․ և ոչ դադարեաց ՚ի ժամանակս իւր յաղքատանոցս և ՚ի հիւրանոցս շինելոյ։ Աստի սկսանի թուական Հայոց։

ԳԼՈՒԽ ԺԵ․

Յաղագս որ յութ հարիւր եւթանասուն և մի թուին Ասորւոց, և Ամթայ պատուհասին։

Ի յութն հարիւր եւթանասուն և մի թուին Ասորւոց սկսաւ թուականն Հայոց, յերեսներորդ չորրորդ ամին Յուստինիանեայ, առ տէր Ներսիսիւ հայրապետիւ, ՚ի թագաւորութեանն Պարսից Խոսրովու։ Այլք առ Մովսիսիւ կաթողիկոսիւ ասեն զկնի քառասուն ամի հալածմանն մերոյ վասն աղանդին Քաղկեդոնի ։

Լուարուք և վասն ցասմանն Ամիթ (1) քաղաքի որ կրեաց ի վեր քան զոտքիրականս պատուհաս ․ քանզի ութն ամ սով կրեաց , և տարի մի հարան ի դիւաց առ հասարակ , և թափեցան ի խելաց ․ և կորուսին զբանականութիւն , հաչէին իբրև զշունս և մըրկանային առաջի մարդկանց ․ և զտունս և զստացուածս իւրեանց ոչ ճանաչէին ․ և ի մարդկանց ոչ պատկառէին ․ և չնային ընդ կանայս ի հրապարակս և յեկեղեցիս ․ և ողորմէին նոցա մերձակայ գաւառքն ․ և երթային և զգուշանային նոցա , և աղօթէին վասն նոցա ․ և ոչ դադարեաց չարն մինչև ի լնուլ ամին , և ապա զգաստացան ։ Եւ ի զգաստութիւն (2) եկեալ պատկառէին և ամաչէին , և զգեցան սեաւ ․ և գնացին յԵրուսաղէմ և յայլ նուիրեալ տեղիս և ապաշխարեցին ․ և անկաւ ի նոսա մահտարաժամն ․ և մեռան ի սակաւ աւուրս անձինք երեսուն և վեց հազար ։

Իսկ Թագաւորն Յուստինիանոս մեծարէր

---

(1) Մի օրի․ ամէ․ ի լուսանէ․ (2) Երկու օրի․ ի գզգայուջն․ ՅԱմիթ գիւղանգարեալ Թէքէնս։
ամէ լինէր ։

զժողովն Քաղկեդոնի, բայց զԹուղթն Հիբասայ ուռհայեցւոյն ոչ ընդունէր. և ոչ հաւատայր ասողացն թէ ընկալան ժողովն Քաղկեդոնի։ Իսկ յորժամ ստուգեաց ՚ի Բաբիլոնէ Հռովմայ պապուն որ ասաց այս ընկալան, և ընդունելի է, յոտն յարեաւ զայրացմամբ (1) և ասաց երկիցս. հեռի եղէց և հեռի եմ յայդմ դաւանութենէ. և եղիցի նզովեալ։ Եւ զայս ասացեալ հրաժարեաց ՚ի նմանէ։

Բայց խոտորեցաւ ՚ի հակառակն, և ընկալաւ զՅուլիանեայ հերձուածն, և գրեաց առ Աթանաս պատրիարքն Անտիոքայ ժողովանել և տեսանել զկին. և ժողովեցան յԱնտիոք հարիւր յիսուն և հինգ եպիսկոպոսք և նզովեցին զՅուստիանէ. և գրեցին առ Թագաւորն զոր արարին, և յերկուց աղանդից որբեցաւ Թագաւորն. և մեռաւ ուղղափառութեամբ Թագաւորեալ ամս երեսուն և ութ և ամիս եւթն։

Եւ ոմն իմաստուն և սքանչելի այր պատմեաց եթէ տեսանէի տեսիլ. դաշտ մի ընդարձակ, և ՚ի մէջ նորա հնոց բորբոքեալ անլոյս հրով. և գոլայր յոյժ. և ասեն ցիս այս՝ տեղի տանջանաց Յուստինիանոսի էր, բայց ողորմութիւնն իւր և եկեղեցապատիւ բարքըն ոչ եԹող զնա հերձուածող մեռանել և գալ յայս տեղի տանջանաց, և անդ յիշեսցի յեկեղեցիս ուղղափառաց ։

---

(1). Մի օրի, զայրանցմամբ։

Յետ նորա Թագաւորեաց քեռորդին իւր Յուստինոս Թրակացի․ և էր այր պատերազմող և ահարկու․ և խոյս ետուն ամենայն չարագործքն յերեսաց նորա․ բայց ցաւէին ոտք նորա ։ Առ սա եկին արք արուեստաւորք ՚ի Զամինէ և ՚ի Սանգոնէ, որ օծանէին զանձինս և վառէին հրով փայտըս և ելանէին ՚ի վերայ և ոչ այրէին ։ Յառաջին ամին սորա երեւեցաւ հուր բորբոքեալ(1) յօդս ՚ի կողմ՝ հիւսիսի այնպէս ահագին, մինչ զի բազումք ՚ի տեսանելէն մեռան․ և բերէր օդն քարտէզ այրեցած(2), և ժողովեցին յոլովք ՚ի զամբիւղս, և զահի հարաւ երկիր ։

Եւ յինն ժամ առաւուրն եղ ամպ միգախառըն, և ՚ի նմա խաչ մի կարմրեալ ՚ի լուսոյ ։ Եւ տեսեալ բազմութեանն որ ՚ի Կոստանդնուպօլիս, ասէին․ տէր ողորմեա՝ ըստ մեծի ողորմութեան քո ։

---

(1) Մի օրին․ ունի ՚ի լուսացըն հուր յերկնից և այլ նըշանք ՚ի Կոստանդնուպօլիս ։

(2) Մի օրին․ ջառէլըս և փայտ այրեցած ։

Եւ ասէ պատրիարքն ցԹագաւորն մի երկնչիր. պատուեաց զքեզ տէր երեւմամբ խաչի որպէս զՄեծն Կոստանդիանոս. և արդ ընդէ՞ր ոչ կարօտիս և առաքես յԱփրեմիէս քաղաք Ասորոց և բերեն անդի զխաչն տէրունական. և առաքեաց Թագաւորն զօրս և զօրագլուխս, և առին զնա հազիւ անտի և բերին յԱնտիոք. և նոքա եւս ընդդիմացան, զի մի տացեն զխաչն պարծանք և պահապան աշխարհին տանել յերկրէ անտի։ Եւ զկնի յոլով հակառակութեան հատին զնա սղոցաւ ընդ մէջն, և թողին անդէն զհաւասարորդն. և զկէս նորա առին և տարան։

Եւ ել ընդ առաջ նորա Թագաւորն և ամենայն քաղաքն, և տարան զնա և եդին 'ի մեծ եկեղեցւոջն մեծաւ պատուով։

Յայնմ ժամանակի խնդրեցին Հայք յօգնութիւն 'ի Յուստինեայ, զի մի տացեն հարկս Պարսից. և ետ նոցա զօրս և ընդդիմացան Պարսից, և կոտորեցին զօրս նոցա։

Եւ առաքեաց Խոսրով Թագաւորն Պարսից. առ Յուստինոս և ասէ. տուր. ըզհարկն Հայոց դու թէ ցաւես վասն նոցա. և թէ ոչ՝ թող զնոսա կալ 'ի հնազանդութեան իւրեանց. և լուաւ ընդդէմ պատասխանի։

Զ՚ինչ կայ առէ քո և քրիստոնէից. և անգիտանամ եթէ ՚ի ձեռն Հայոց այսրէն առնում զՄծբին և զոր ինչ ունիս ՚ի Միջագետայ. և երկեաւ Խոսրով և լռեաց։

Զայսու աւուրբք եկաւ հրաման ՚ի թագաւորէն Յովհաննէս Պատրիկն խօսել ընդ Հայս և ընդ Ասորիս յաղագս հաւատոյ. և եկին ՚ի Կալանիկէ, և խօսեցան ընդ Յակոբ Կուրդնկարն. և եղեւ ժողով մեծ։ Եւ կամէր Պատրիկն տալ ընդունել զանուրբ ժողովն Քաղկեդոնի, և քամահեցին զբանիւք (1) նորա և ոչ լուան նմա։

Բայց Յովհաննէս եպիսկոպոս Սամոստոյ մարդ պիղծ և ապականիչ եդիր ՚ի կամս թագաւորին կռուել ընդ ուղղափառսն. և առնու զաթոռ նոցա և զեկեղեցիս և զհամարձակութիւն. և մտանել կապանաց և տանջանաց և մահու եթէ ոչ դաւանեն զնոցայն. որ եղեւ խսկ յետ քառասուն ամի աքսորանաց (2) և հալածանացն մեր. և շրջէին եպիսկոպոսք հանդերձ զօրականօք սուսերաւորօք, և զհաւանեալսն կրկին մկրտէին և եկեղեցականսն ձեռնադրէին. և զոչ հաւանեալսն պէս պէս տանջանօք բռսպանանէին և յաքսորս և 'ի բանտս տային։ Եւ ցաւէր երկիր ծանր աղէտիւք, զորս ոչ կարեմ ընդ գրով արկանել զանցս չարչարանացն, զոր կրեաց սուրբ եկեղեցի։

---

(1) Ոմանք՝ բանիւք։ լայ աքսորանացն։

(2) Երկու օրի, դադարէ.

Իսկ զկնի հագարաց և բիւրուց աղանդանելոյն հրամանաւ չարին Յովհաննիսի որ եղաւ պատրիարք Կոստանդնուպօլսի. տարակացեալ թագաւորին. և խոստանէր սիրով նորա։ Եւ տեսաց ընդ անօրէնն Յովհաննէս. տացես ինձ գրով զխոստովանութիւն քո. և նա յապաղէր զբանն և տայր ցթագաւորն. զի՞ է քեզ այդ. եդաք 'ի բանտի զայրն հռչակաւոր զՅովհաննէս. եթէ զնա կարեմք 'ի հաւանս ածել՝ բարձրանայ թագաւորութիւն քո անմխիթար ամենայն թագաւորաց։ Եւ առաքեցին առ նա թագաւորն և պատրիարքն պատգամաւորս քաղցրամ աղաչանօք. զի ելցէ 'ի բանտէ և արասցէ խաղաղութիւն անդամոցն Քրիստոսի, դաւանելով զչորրորդ ժողովն. և աղաչէին զայս բազում անգամ։ Եւ նա անիծիւք դարձուցանէր զպատգամաւորսն։ Եւ էր նա 'ի գեջին բանտի, և որորէին մարմինք նորա 'ի պէս պէս ցաւոց գլխոյ և ոտից և ամենայն անկերաց. և եռային (1) 'ի նա որդունք, ոջիլք և բորբոսք և պահէին զդուռն նորա, և ոչ ոք մտանէր առ նա. և ճանճք և պիծակք կեղեքէին զնա, և նա գոհութեամբ փառաւորէր զԱստուած:

---

(1) Ընթեռ՝ եռային.

Իսկ զկնի բազում աւուրց եմուտ առ նա երիտասարդ (1) մի ուղղափառ, և խնդրող աղօթից. համբուրեաց զնա և լուաց 'ի վիրաց ամառի. և զգեցոյց զնա և մխիթարեաց. և եդ առաջի նորա կերակուր (2) և գինի անոյշ. և եկեր և արբ և բերկրեցաւ յոյժ ծերն. և զաւուրս ութ այնպէս առնէր և օրհնէր զնա. և գոհանայր զնմանէ: Եւ երիտասարդն որ ըստ օրէ քաջալերէր զնա իմաստուն բանիւք 'ի վկայութենէ գրոց. երանի առնէ համբերողաց իբրեւ զՅոբ, և ըզԴանիէլ. և զովէր բոլորին պսակք նահատակաց և որ ինչ ամենայն գիրս գրեալ է բանայր նմա. զարմանայր սուրբն, և ասէ ցնա. օրհնեալ ես դու որդեակ զի հանգուցեր զիս և ուստի է քեզ այդ իմաստութիւն 'ի տղայութեանդ զոր ես ծերութեամբ իմ ոչ գիտեմ. օրհնեալ է Հոգին Աստուած, որ խօսի 'ի քեզ:

Եւ յետ այսորիկ եկն առ նա արքեպիսկո

---

(1) Մի օրի. ունի 'ի լուսանց. առ Պատրիարքն:
ոչն. Երիտասարդ եկն 'ի զնդանն (2) Մի օրի. ակղին:

կոպտոս պատրիարքին և ասէ ցնա. Հայր սուրբ շատ է լո՛ւր արդ, և լե՛ր առաջնորդ խաղաղութեան ։ Եւ ասէ ցնա. որդիք սատանայի զիա՞րդ ո՛չ ամաչէք. Քրիստոս Աստուած մի՛ խնայեսցէ ՚ի ձեզ. զի եթէ ճշմարիտք էիք. ամաչել արժան էր զկնի այսքան դառնութեան զոր արարիք եկեղեցւոյ. Թող թէ հերետիկոսք և չարափառք և ատելիք Աստուծոյ. և նա գնաց և պատմեաց զամենայն ասացեալսն Թագաւորին և պատրիարքին ։

Իսկ երիտասարդն համբուրեաց զծերն և ասաց, ողջ մնա՛ հայր զի ելանես աստի և լուսաւորես զքաղումս. որ էր ինքն Քրիստոս մխիթարիչն պատուանի և զայս ասացեալ ծածկեցաւ ՚ի նմանէ ։

Եւ նոյն ժամայն եկին զինուորք և հանին զՅովհաննէս հրամանաւ Թագաւորին և պատրիարքին. և տարան ընկեցին զնա ՚ի կղզի մի բարբարոս միացեալ ՚ի կռապաշտութեան. զոր զամենեսեան լուսաւորեաց նշանօք և արուեստիւք և բանիւք վարդապետութեամբ բազում բիւրս (1) արանց մկրտեալ ՚ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։

Յետ այսորիկ խնդրեաց դարձեալ Թագաւորն զդաւանութիւնն Քաղկեդոնի գրով. և ետ ցնա պատայփարքն ։

---

(1) Մի օրի. ունի. ՌՃ բիւրս ։ Մի օրի. ԽՌՃ բիւրս ։

Եւ հառաչեաց թագաւորն և ասէ. աւա՜ղ զուր աշխատեցայն, ՚Նեստորինն է այս աղանդ. և ընկէց յաթոռոյ զպատրիարքն. և հալածեաց զնա նախատանօք. և ասէ ցԱնաստաս զօրապետն, դարձո փողփողակի զուղղափառսն յաթոռ և ՚ի հայրենիս իւրեանց, և Քաղկեդոնիկքդ բարձցեն զարիւն սպանանելոյն. և մի երեւեսցին երեսաց իմոց մինչեւ հանգեայց սակաւ մի ։

Զայսու ժամանակօք ժողովեցան մոգք և մոգպետք առ թագաւորն (1) Պարսից. և ասեն ընդէ՞ր ոչ առնես դու. նման թագաւորին Յունաց. զի զամենեսեան որք ոչ հաւանին օրինաց նորա, չարաչար տանջանօք սպանանէ զնոսա. և քանի՞ք են ընդ քո թագաւորութեամբդ, որք արհամարհեն զարեգակն և զհուր, և ներես նոցա ։

Եւ յայնժամ շարժեալ թագաւորին անթիւս կոտորեաց ՚ի քրիստոնէից, և արար վկայս ճշմարտութեանն ։

Եւ առաքեաց ՚ի Հայս դնել անդ առն

---

(1) Մի օրի. ամի ՚ի լուսոյն. բռնացեալ էր. և չարչարէր զՆ. Պարսից Թագաւորն, հզ. զքրիստոնեայսն ։

կրակի , և հարկ առնել նոցա ՚ի հրապաշտութիւն ։

Իսկ նոքա խոստովանեալք Աստուած դիմեցին ՚ի վերայ նոցա և կոտորեցին զմոգսն և զզօրսն Պարսից ։

Եւ մեծ Կաթուղիկոս Հայոց չոգաւ ՚ի Կոստանդնուպօլիս առնել անտի զօրս յօգնականութիւն իւրեանց ։ Եւ ել քաղաքն ամենայն ընդ առաջ նորա ՚ի պատիւ . և տարան զնա ՚ի պատրիարքարանն , և յամեաց անդ զի ոչ էր յատակ զօրն Յունաց ։

Իսկ ժողովուրդք երկրին Հայոց երկեան , մի գուցէ խաբիցի Կաթուղիկոսն յաղանդաւորացն ՚ի պատճառս կարեացն (զօրաց) նոցա ։ Եւ առաքեցին առ նա թուղթ ըզգուշութեան և վարդապետս իմաստունս և ասեն . Աստուած ապաւինեցուք և մի տացուք զյաւիտենական կեանքն և զհաւատս կենդանիս և աստուածընկալս անցաւոր և անաստուած կենաց . դարձիր ՚ի տուն քո ։

Իսկ սուրբ հայրապետն նախ քան զգնալ դեսպանացն կատարեալ էր ուղղափառ հաւատով . և պատուով եդեալ ՚ի շիրմի ուղղափառացն որ անդ հրամանաւ արքային . և ընդ յուսոյն իւրեանց ապրեցան Հայք աստուծով զօրացեալ 'ի Պարսից և 'ի Քաղկեդոնացւոյն. և եղև մեծ անիրութիւն հաւատոյ ուղղափառութեանն ։

Իսկ Սոփիայ Թագուհին մնեալ ուղղափառութեամբ հաղորդէր Անդրիասայ յերիցուէն իւրմէ, և ածեն զնա երբեմն 'ի հաւան զի գնասցէ յեկեղեցի Քաղկեդոնացւոյն ։ Եւ (իբրեւ) գնայ անդ ամ՝ մի, երեւեցաւ Աստուածածինն և ասաց, դուստր ընդէ՞ր թողեր զիս և գնացեր ընդ հերետիկոսան. և (նա) ասէ ցնա. մայր տեառն, ուա՛, ուա՛ (1) ինձ դաւանութիւն ճշմարիտ ։ Եւ ասէ սուրբ կոյսն բաւական է քեզ ասելն. Հայր և Որդի և Հոգի սուրբ ողորմեա՛ ինձ. և ոչ երթալ առ Հերետիկոսան ։

Եւ յութերորդ ամին իւր Յուստիանոս արար զմօրաքեռ որդին իւր զՄարկիանէ՝ Կեսար. և առաքեաց զզօրսն 'ի վերայ Մծբնայ. և գնացեալ նորա 'ի Տարայ, առաքեաց զզօրսն 'ի Պարսս, որք դարձան բազում աւարաւ. և երկեան Պարսիկք յերեսաց Մարկիանեայ։ Եւ Մարզպանն որ կայր 'ի Մծբին. հնազանդութեամբ և ընծայիւք յամեցոյց զՄարկիանէ 'ի Տարայ. մինչև եկից զքաղաքն ուռձկոք. և եհան զքրիստոնեայսն անտի։

---

(1) Մի որ. որ՛ ինձ դաւանութիւն ճշմարիտ.

Իսկ 'ի զատկի տօնին չոգաւ Մարկիանէ և պատեաց (1) զՄծբին և նեղեցին յոյժ. և մերձ էին յառնուլ. և յանկարծ եկն Ակակիոս ոմն փոխանակ Մարկիանեայ և եհան զնա 'ի պատուոյն հրամանաւ Թագաւորին. և ասէր Մարկիանէ. Թող տուր ինձ աւուրս երկուս և առից զքաղաքս, և ոչ կամեցաւ. և կարծեաց զօրն եթէ մեռեալ իցէ Թագաւորն, և թողեալ զքաղաքն ցրուեցան։ Եւ պատճառ խռովն եղեւ այսպիսի։

Երկիրն Տաճկաց կային ընդ երկու իշխանութեամբ ընդ Պարսից և ընդ քրիստոնէից. Քրիստոնեայքն Թագաւոր ունէին իւրեանց զՄնդուր զորդին Հերիթայ, և էին բարեկամք և օգնականք Հռովմայեցւոցն հայրենեօք սակս Քրիստոնէութեանն։

Արդ Մնդուրն գնաց 'ի վերայ Պարսից և գերեաց զերկիրն և դարձաւ. և եկն նստաւ 'ի Տաճկաստան 'ի բաժնին Պարսից. և նոքա կարծեցին թէ Թագաւորն Պարսից է. և ոչ պատրաստեցան. և բազումք եկին առ նա պատարագօք և սպան զնոսա. և տարածեցաւ ընդ երկիրն և կոտորեաց և գեբեաց զնոսա. և ժողովեցան զօրն Պարսից գնալ յերկիրն Մնդուրին ։

---

(1) Մի օրի. պաշարեաց.

Եւ խռովեցաւ Մնդուրն առաքեաց առ Յուստինիանոս. և խնդրեաց ոսկի բազում զօրս վարձելոյ ընդդէմ Պարսից ։

Եւ ցասեաւ Յուստինիանոս և գրեաց և ասաց. եկեսցես առ Մարկիանէ, և տացես նմա օգնութիւն վասն Մծբնոյ. և առ զնա ընդ քեզ և ապահեա զերկիր քո. և պատուիրեցի նմա տալ քեզ ոսկի (բազում) որչափ և կամիս։ Եւ գրեաց առ Մարկիանէ թէ ջանա փութով որսալ զՄնդուրն ՚ի կորուստ. և առ զգլուխ նորա և առաքեա ինձ աւետիս ։

Եւ ՚ի խնամոցն Աստուծոյ փոխեցան թուղթքն և տարան զՄարկիանեայ թուղթն առ Մնդուրն, և զՄնդուրին առ Մարկիանէ. և կարծեաց Յուստինիանոս յորժամ լուաւ. թէ Մարկիանէ առաքեաց զթուղթն առ Մնդուրն. և առաքեաց ընկէց զնա ի պատուոյն ։

Իսկ Մնդուրն օրհնեաց զնախախնամութիւն Աստուծոյ, զի օգնեաց նմա և կեցոյց. և գրեաց առ Յուստինիանոս զչարութիւն նորա ։

Իսկ Պարսիկքն իբրև գիտացին զիրքն,

եթէ Մնդուրն ոչ օգնէ Հռովմայեցւոց. չոգան 'ի վերայ զօրացն Հռովմայեցւոց, եւ կոտորեցին զնոսա. եւ գնացին մինչեւ յԱնտիոք եւ գերեցին զամենայն Միջագետս որ ընդ Հռովմայեցւովք, եւ երթեալ նստան 'ի վերայ Տարայոյ. զի բազումք զերծեալք 'ի զօրացն յանձն էին անկեալ յամուրս որք եկեալ (ելեալ) արտաքս ցուցին մեծ քաղցրութիւնս։

Եւ Պարսիկքն խաբէութեամբ տեղի ետուն որպէս թէ կամիցին գնալ, եւ աշխատեալ զօրացն Յունաց թողին զպարիսպն. եւ գնացեալ հանգչէին եւ ուտէին հաց. եւ դարձան Պարսիկքն եւ քակեցին զպարիսպն եւ յամենայն կողմանց սանդուխս եդեալ մտին 'ի ներքս եւ կոտորեցին առ հասարակ. եւ գնացին բազում ուրախութեամբ յաշխարհն իւրեանց։

Իսկ Թագաւորն Պարսից Խոսրով ընտրեաց 'ի գերեացն աղջկունս հինգ հազար կուսանս եւ պանծս բազումս. եւ առաքեաց յերկիրն Թետալացւոց 'ի Թուրքաստան պատարագս նոցա, եւ գիր աղաչանաց զի եկեսցեն նմա յօգնականութիւն պատերազմել ընդ Հռովմ եւ ընդ Հայս եւ ընդ Տաճկաստան։

Իսկ 'ի գնալն իւրեանց որք ունէին կուսանս

քըն թանային արտասուօք զճանապարհն. զի անդամքն Քրիստոսի երթային կէշ գազանաց. և խորհեցան կուսանքն ընդ միմեանըս զոր ինչ առնելոց էին. և իբրև հասին ՚ի գետն մեծ ասեն ցզօրսն, արարէք ընդ մեզ ողորմութիւն, ՚ի բաց գնացէք յաչաց մերոց զի լուասցուք ՚ի գետս վասն տօթոյս. և հաճոյ թուեցաւ բանն առաջի նոցա և գնացին հեռագոյնս:

Իսկ իմաստուն կուսանքն հեղին արտասուս բազում և եդին ծունր ասելով, Աստուած հարցն մերոց սպանելոց. Քրիստոս որդի Աստուծոյ, պսակ և փրկութիւն Քրիստոնէից և անախտ փեսայ սրբութեան կուսանաց, եկ առ մեզ և տես զհանդէս մեր. և ընկալ զմեզ առ քեզ. և մի տար զգառինս քո կերակուր գազանաց աղաչանօք մօր քո անարատի և բարեխօսութեամբ ամենայն սրբոց քոց. և մեր ծնողացն արեանցն հեղմամբ առ զքոյս ՚ի քեզ ապաւէն մեր Յիսուս. և քեզ փառք յաւիտեանս ամէն: Եւ զայս ասացեալ ելին ամենեքեան ՚ի կամուրջն և վայթեցան ՚ի գետն մեծ և անհուն ապընջական յոլովից գետոց:

Իսկ իմացեալ զօրացն ՚ի ճշմարտէ փախեան ընդ առաջ նոցա. և զմի ոք ոչ գտին կենդանի և լացին բազում ժամս, և տրտմութեամբ դարձան և պատմեցին Թագաւորին, և հիացաւ յոյժ. և ոչ եղեւ նոցա մեղադիր։

Յետ այսորիկ Յուստինիանոս հաշտեցաւ ընդ պատրիարքին Յովհաննիսի. և լուաւ բազում դորովանս 'ի Քաղկեդոնացւոյն յաղագս դադարեցուցանելոյ զհալածանս ուղղափառացն. զի ահա ամենայն աշխարհ հաւանեալ էին։ Վասն որոյ դարձաւ 'ի չարութիւնն իւր յոյժ առաւելութեամբ 'ի հալածումն և 'ի մահ ուղղափառացն. զոր գիր ոչ բաւենայ 'ի պատմել, և լսելիք ոչ տանին զծանրութիւն աղետիցն՝ զոր արար նա սուրբ Եկեղեցւոյ։ Վասն որոյ առաքեաց Աստուած դեւս չարագոյնս 'ի Թագաւորն և 'ի պատրիարքն և մոլեգնէին. և երբեմն զշուն հաջէին. և երբեմն զկատու մլկէին, և տասն մատամբ ձեռացն զհերս և զմօրուս ծողէին. ունէին և այլ ցաւս՝ որ 'ի մահ փութացուցանէր։

Եւ 'ի սակաւ մի դիւրեալ հարցանէին զԹագաւորն. ո՞վ նուագի յաղթող քո. և նա բազում անգամ անուանէր զնօտար մի Տիբերիոս անուն Թրակացի, ազգաւ Յոյն. զոր եդին Թագաւոր, և 'ի նմանէ և այսր է Յունաց թագաւորութիւն. զի 'ի Պայիոս

Յուլիոսէ մինչեւ 'ի սա՝ յիսուն թագաւոր Ֆռանկ էին ազգաւ:

Բայց 'ի ժամանակս Մակեդոնացւոցն երեսուն և ութ թագաւորքն Յունաց կոչէին 'ի Կռոնոսաէ մակեդոնացւոյ մինչեւ 'ի Բրասոս (1): Իսկ արդ երկրորդ անգամ՝ սկսաւ 'ի թուիս Բոռոց ութ հարիւր ութսուն և վեց, և Հայոց 'ի հնգետասան: Բայց տակաւին Հռովմայեցիք կոչին վասն Կոստանդնուպօլսի, զի Նոր Հռոմ՝ կոչեաց զնա Կոստանդիանոս, և զօրքն խառնեն ընդ միմեանըս վասն հոմ՝ իշխանութեանն:

Յայնմ ժամանակի թագաւորն (2) Գարոլից հպարտացեալ վասն յաղթութեանն որ եղեւ նմա 'ի Միջագետս, չոգաւ 'ի վերայ Հայոց որք ցուցին մեծ քաջութիւնս. և երկրորդ անգամ՝ կոլապըլուխ դարձուցին սակաւ ինչ սատարելով նոցա Յունաց:

Իսկ երրորդ անգամ՝ ժողովեալ գայ զկողմամբքն հիւսիսոյ պատելով զերամբ (3) եկն 'ի Կապադովկիա. և ընդդիմացան նմա (նոցա) զօրքն Յունաց սակաւ ինչ, և դարձան ընդ կռունկն. և իջեալ Պարսիկն ՚ի վերայ Սեբաստիոյ, առ զնա և այրեաց հրով:

---

(1) Մի օրի. Բրասաս:

(2) Երկու օրի. Յայնմ ժամանակի թագաւորեաց Գարոլից Ռոմբեղ հզօրապա-

գետով:

(3) Ընմանք՝ պատուելով զերբին: Մի օրի. պատալով զերբին: Մի՝ պատապատելով:

Իսկ վերստին զօրացեալ Յունաց եկին և առին զբանակետողն Պարսից և զտուն կրակին զոր շրջեցուցանէին ընդ ինքեանս, և քակեցին զնա. և թէ ոչ էին աղմկեալ ինչ զօրքն Յունաց՝ սպառեալ էին զՊարսիկս:

Բայց գտեալ ՚ի նոսա պատճառս քաղաքացն Պարսիկքն. և չոգան ՚ի Մելտենի Հայոց. առին և այրեցին զնա: Իսկ յղեցին առ նա զօրքն Յունաց և ասեն. այդ ոչ է օրէն թագաւորաց այրեցողութիւն. ո՞չ գիտես, եթէ մեք ո՛չ արարաք երկրին քում այդպիսի ինչ. թէպէտ ոչ ունէաք ընդ մեզ թագաւոր:

Արդ զատեղի առ, և պատերազմեցուք դարձեալ. և իբրև լուաւ զբանս Յունաց Պարսիկն, ամաչեաց յոյժ. և դադարեաց յարեւելից կուսէ քաղաքին. և հասեալ առ նոսա զօրացն Յունաց զամենայն գիշերն, և կացին հանդէպ նոցա յառաւօտէ մինչեւ ցինն ժամ աւուրն, և ոչ խառնեցան:

Ապա Պարսիկքն սկսան անցանել ընդ Եփրատ և գնալ. և իմացեալ Յունացն դիմեցին ՚ի վերայ նոցա, և փախեան Պարսիկքն և՚ի տագնապէ փութոյն առաւել մեռան նոցա գետամոյն եղեւ . եւ գնացին Պարսիկքն ոչ յաջողեալք . և եդ օրէնս Թագաւորն Պարսից , մի ելանել Թագաւոր 'ի յաւար 'ի պատերազմ զօրու . բայց եթէ ընդդէմ Թագաւորի նմանոյ իւրոյ :

Իսկ զօրքն Յունաց գնացին առ Հիւսիսով . 'ի մասն ինչ Հայոց յաւար , վասն պատճառի ուղղափառութեան նոցա :

Իսկ նոքա խաչիւ և աւետարանաւ ելին ընդ առաջ նոցա որպէս քրիստոնէից , արկանելով երկիւղ և գութ փրկական զինուքըն Քրիստոսի :

Իսկ ատեցողքն լուսոյ , և ատելիքն Քրիստոսի Աստուծոյ (1) մոլեգնեալք արկանէին 'ի խոնարհ զխաչն և զաւետարանն . և կողոպտէին զեկեղեցին և եկեղեցականսն . և զաշխարհականսն անողորմ սպանանէին . և զհաւատաւոր կուսանսն խայտառակէին , և զստինս կանանցն ականջօքն կտրէին . և զպարանջանսն մորթովք բազկացն խլէին . և բազում և այլ անօրէնութիւնս գործէին . և առեալ աւար բազում դարձան որպէս 'ի մեծ յաղթութենէ , և նստան յերկիրն իւրեանց անհոգութեամբ 'ի խրախանալ .

(1) Երկու օրի . ատեցող- ճշմարտութեան :
քըն լուսոյն եւ Թշնամիքն

թողով զերիվարս, և մերկանալով զզէնս։

Իսկ եհաս բարկութիւն տեառն ՚ի վերայ նոցա. և դարձոյց զմեղս նոցա ՚ի գլուխս իւրեանց. քանզի մասն ինչ ՚ի զօրացն Պարսից երբեւ իմացան զչարիս նոցա, ծածկեցին զանձինս և ոչ գնային ընդ Թագաւորին Պարսից. այլ այնմ սպասէին, և եկին գտին զնոսա այնպէս անպատրաստս և թողեալս ՚ի ձեռաց Աստուծոյ. և առին զամենայն երիվարսն և զզէնսն, և հարին զնոսա, և գնային բազում ուրախութեամբ։

Յայնմ ժամանակի ժողովեցան եպիսկոպոսք և միաբանք և վանաց երիցունք Միջագետաց և Հայոց որք ընդ Հռոմովք էին. և չոգան առ Տիբեր, և ասեն տուր մեզ խաղաղութիւն վասն հաւատոյս մերոյ. և մի խռովեր զմեզ և ծառայեսցուք մեք միամտութեամբ. և կամ սրով քո սպան զմեզ։ Իսկ սաստէին նոցա Բաղկեդոնիկքն. և լռեցոյց զնոսա Թագաւորն. և ասէ. լուարուք ինձ ասացից զոր գիտեմ. Թագաւոր Յուստինիանոս կայր ՚ի չարաչար ցաւսն և ըսպասաւորէի նմա ես, և տեսանէի զհրեշտակ Աստուծոյ, զի ժամու ժամու սաստէր դիւին որ նեղէր զնա. և յիշատակէր նմա զչարիսն զոր արար նա ընդ յուղղափառսն.

և դարձեալ թոյլ տայր դիւրին լինել զնա. և ասէր ցիս մի գնար ընդ շաւիղս դորա, որ ջանայ առնուլ զթագաւորութիւնն այնմ. որ արար զդա թագաւոր. վասն որոյ կրէ զարժանն իւր։ Եւ ՚ի յելս հոգւոյն ասաց ինձ Յուստիանոս. երկու բան զիմ արա որդեակ, դարձո զհալածեալսն յինէն և գնա օրինօք նոցա. և կաց հնազանդ Սոփեայ որ էր քո թագաւոր. և արդ եղեւ քեզ մայր. և խնդրեցէք ինձ ողորմութիւն։ Եւ այժմ երթայք խաղաղութեամբ հանգերուք ՚ի տեղիս ձեր, և արարէք աղօթս կենդանեաց և մեռելոց. և որ ոք աւելի ինչ ասէ յաւելիս է անձին իմոյ. և գնացին ուղղափառքն գոհութեամբ Աստուծոյ ՚ի տեղիս իւրեանց։

Յետ այսորիկ պատրիարքն Կոստանդնուպօլսի խրատէր զթագաւորն թողուլ ըզկինն, և առնուլ զթագուհին իւր. քանզի ոչ կամի ասէ Սոփիայ մտանել կնոջ քո ՚ի քաղաքս։ Եւ ասէ ցնա թագաւորն. ճըշմարտութեամբ հասեալ եմ ՚ի վերայ եթէ Հոգի Աստուծոյ և երկիւղ նորա ոչ է յաղանդդ ձեր. արդ ասես ինձ թողուլ զկին իմ օրինաւոր որ եղեւ ինձ աղքատութեան իմոյ կցորդ, և ծնաւ ինձ երիս որդիս, և ինչ ոչ մեղաւ ինձ, և առնուլ զթագուհին որ տուաւ (ետ) ինձ մայր իմ. և (1) եհան զնա ամօթով յաչաց իւրոց ։ Եւ լուաւ Սոփիայ, և ած երեւելի փառօք զկին նորա ՚ի քաղաքն . և սիրեաց զնա և կոչեաց զանուն նորա Հեղինէ ։

Իսկ Տիբերիոս էր աղքատասէր և ողորմած . և եդ սահման անձին իւրում ՚ի կեանս իւր աւուրն եւթանասուն երկու կենդինարս բաշխել աղքատաց ։

Յաւուրսն յայնոսիկ լուաւ Մնդուրն զմահն Յուստիանեայ և զթագաւորելն Տիբերեայ . և եկն առ նա , և եղեւ մեծ ուրախութիւն ։ Եւ ասէ Տիբեր ընդէ՞ր թոյլ ետուր Պարսիցն համարձակել ՚ի վերայ մեր։ Իսկ նա հանեալ զթուղթն եւ ցնա զոր գրեալ էր Յուստիանոս առ Մարկիանէ վասն սպանման նորա . և ամաչեաց Տիբեր և ամենայն զօրն Յունաց ։ Եւ ասէ Մնդուրն . ես վասն զի լուայ թէ արարիք խաղաղութիւն ուղղափառացն , հաշտեցայ . սիրտ իմ ընդ ձեզ և հանգեաւ ։ Եւ արդ՝ ՚ի պատիւ երեսաց իմոց քարոզեսցի ուղղափառութիւն յայտնապէս ։ Եւ հրամայեաց Տիբերիոս և գրեցին ։ Եւ գնաց Մնդուրն յԱ՛նտաք. և իբրև խօսէր սակս ուղղափառութեան ընդ Գրիգորի պատրիարքին. եհաս առ նա թուղթ, եթէ լուան Պարսիկք վասն Քրիստոսի և ահա գան 'ի վերայ մեր յերկիրս Տաճկաց. և գնաց Ս՛նդուրն յաշխարհն իւր ։

---

(1) Ամենայն օրինակք ունին . առնուլ զթագուհին իմ , որ տուաւ ինձ մայր . և եհան զնա ամօթով յաչաց իւրոց։

Եւ դադարեցին Պարսիկքն ։

Ի չորրորդ ամին Տիբերեայ ելին Սկլաւքըն (1) անզէն և անձի և մերկք. և եկին 'ի Թրակէ և 'ի Թեսաղոնիկէ, և առին զերամակն արքունի, և զտունս զինուց և զինագործաց. և եղեն զօրք և գնացին պաշարեցին զՍեամի. և առաքեցին առ Թագաւորն կամ՝ կռուել ընդ նոսա կամ տալ զքաղաքն Սեամի, զի բնակեսցեն 'ի նմա խաղաղութեամբ ։

Իսկ Տիբեր յամեցոյց զնոսա ակն ունելով գալոյ Լակվարտացն (2) և ապա ետ նոցա զքաղաքն. բաց 'ի մարդոյն ։

Իսկ բարբարոսքն մտեալ 'ի քաղաքն տեսեալ զբնակիչսն ներքեւեալ 'ի սովոյն, և արարին ոչ սակաւ մարդասիրութիւն տալով նոցա հաց և գինի. զի պակասեալ էր 'ի սըղարն մինչեւ ցշուն և ցկատու զոր կերեալ էին. բայց 'ի յուտելն զհացն անյագութեամբ մեռանէին ։ Իսկ նոցա զայն եւս գիտացեալ տային նոցա կակղագոյն կերակուր և տակաւ տակաւ մինչեւ հաստատեցան ․ և ապա հանեին զնոսա 'ի քաղաքէն ․ և ինքեանք բնակեցան ամ մի , և այրեցաւ քաղաքն յանկարծակի ․ և նոքա ելեալ գնային յաշխարհն իւրեանց կարծելով թէ Աստուած երկրին հալածէր զնոսա ։

---

(1) Ոմանք՝ Սկլօքն.

(2) Մի օրի. Լունկվարտացըն ։ Մի օրի. Լանկվարտացն ։ Մի՝ Լուկվարտացն ։

Յայնմ ժամանակի Տիբեր արար զՄօրիկ հեծար ․ և առաքեաց 'ի Պարսս ․ և նորա երթեալ եգիտ զկամուրջ մեծի գետոյն քակեալ 'ի Պարսից ․ և կարծեցաւ թէ Մնդուրն իցէ քակեալ ․ և դարձաւ չարախօսեաց, և անկան 'ի հնարս կորստեան ։

Իսկ ոմն յիշխանացն Մանկանոս անուն խոստացաւ ըմբռնել զնա ․ և առեալ զզօրսն գնաց որպէս թէ 'ի Պարսս ․ և առաքեաց առ Մնդուրն աղաչանս զի սակաւ արամբք եկեսցէ առ նա 'ի գաղտ ․ զի խորհեսցին ինչ վասն Պարսից ։

Իսկ նա առանց կասկածանաց գնաց առ նոսա ․ և կալան զնա 'ի գիշերի յարբեցութեան և յանհոգութեան ժամու , և առաքեցին առ Տիբեր ․ և եդին զնա 'ի բանտի ։

Իսկ լուեալ զբանն զայն անկարծելի որդին Մնդուրայ՝ ել զօրօք յերկիրն Յունաց յաւոր . եւ առնոյր զանձս և զանասունս . եւ մարդկան ինչ ոչ խնայէր ։ Եւ զայս արարեալ միանգամ դարձաւ . և իբրեւ գիտաց եթէ ոչ արձակեն զհայրն նորա քաջասրտեալ յանձըն իւր եկն առ Տիբեր դեսպանօք գնել ուխտ յաւիտենական երդմամբ չափ , և առնուլ զհայր իւր վասն որոյ և արարին իսկ և երդուան յանլուծանելի երդումն ։ Բայց ՚ի վախճանի բանին ասաց անօրէնն Մօրիկ . այդ եղիցի նշանակ մնալոյ երդմանդ , եթէ հաղորդիք ՚ի ձեռաց առաջնորդացս մերոց և ոչ գարշիք ՚ի մէնջ ։ Եւ ասաց Մնդուրն ես զայդ ո՛չ կարեմ առնել . զի բազում է ազգ՛ն իմ . և քարկոծեն զիս ։ Եւ զճշմարիտըն ասացից վասն մահու երկիւղի , ասէլ Աստուծոյ ոչ կարեմ լինել երբեք զձեզ ։ Եւ կատաղեցան ՚ի բանի աստ ՚ի վերայ նոցա . և առաքեցին զնոսա յանլոյծ տեղիս ։

Եւ իբրեւ զբօթս զայս լուան յերկիրն նոցա խռովեցան խոցոտեցան սրտիւք և քակտեցան ՚ի միմեանց . և եղեն հնգետասան բաժինս , եդեալ իւրեանց առաջնորդս ։ Ոմանք ՚ի նոցանէ եղեն ընդ Պարսիւք կաշառեալք ՚ի նոցանէ . և կէսք ձեռն ետուն յերկիրն Բամիրայ . և ոմանք ՚ի նոցանէ մտին ընդ ծառայութեամբ Յունաց (1) ։ Եւ

---

(1) Յոմանս՝ ՚ի ծառայութիւն ։

՚ի պատճառս չար աղանդին Քաղկեդոնի բարձաւ վայելուչ թագաւորութիւնն այն ՚ի միջոյ։

Իսկ Տիբերիոս երկեաւ ՚ի Տեառնէ և ըզչորրորդ մասն ստացուածոց իւրոց ետ կարօտելոց. և եբարձ զմաքսն յամենայն իշխանութենէ իւրմէ։

Զսմանէ ոմանք ասեն ամ մի թագաւորեալ. բայց մի հաւանիր դու. զի մեք բազում վկայս կալաք մատենիս մերում զի չորս ամէ թագաւորութիւն նորա։

Սա ետ զդուստրն (իւր) Օգոստիայ Մօրկայ կնութիւն. որ և առ զթագաւորութիւնն զկնի մահուանն Տիբերի. և էր Մօրիկ կապադովկացի յԱրփսուս (1) գեղջէ։

Բայց Հռովմ ապստամբեաց ՚ի Մօրկայ և եդ իւր թագաւոր զՊրամկոս ոմն. որ և գնաց ՚ի վերայ Պարսից. և աջողեցաւ նմա. և դարձաւ յաղթութեամբ. և զի կասկածէր ՚ի Մօրկայ, առաքեաց նմա մասն յաւարէն երեք հազար գերի. և խնդաց Մօրիկ և յանձն առ զթագաւորել նմա Հռովմայ ընդ ձեռամբ նորա։

Բայց Մօրիկ զԱրփսուս շինեաց քաղաք մեծ, որ զկնի չորից ամաց փլաւ շարժմամբ. և վերստին շինեաց մեծ հոգաբարձութեամբ և դարձեալ տապալեցաւ 'ի շարժմանէ . և զի յերկրորդ Հայս էր գիւղ նորա. ասեն թէ Հայ էր ազգաւ ։

---

(1) Մի օրի. յԱրփասաս գեղջէ։

Սա զՓիլիկտոսն քեռայր իւր առաքեաց 'ի կողմ արեւելից կալ ընդդէմ Պարսից ։ Քանզի Որմիզդ թագաւորեալ Պարսից զկնի Խոսրովու առաքեաց զօրս և գանձս և առ զՄուփարկինն 'ի Յունաց . և չոգաւ Փիլիկտոսն և առ զքաղաքն դարձեալ . և զՊարսիկքն որ անդ էին կոտորեաց ։

Ի յութերորդ ամին Մօրկայ յարեան Պարսիկք 'ի վերայ Որմզդի . և հանին զաչս նորա . և թագաւորեցուցին զԽոսրով որդի նորա ։ Իսկ Մօրիկ արար զԹէոդորոս (1) զորդին իւր Կեսար . և արար նմա հարանիս մեծարգի . և պատրիարգն կապեաց զթագ նորա ։

Եւ 'ի նոյն ամի Վահրամ իշխանն Պարսից հալածեաց զԽոսրով թագաւորն . և եկն յՄերհաց . և առաքեաց առ Մօրիկ աղաչանս , զի լիցի նմա հայր . և տացէ նմա օգնականս առնուլ զաթոռ իւր . և ետ նմա զզօրսն Հայոց և զզօրսն Թիրակաց , և չոգաւ առ զթագաւորութիւն իւր . և թողին զՏարայն և զՄասալայ 'ի Յոյնս ։ Եւ ետ Մօրիկ զՄարիայ դուստր իւր Խոսրովու 'ի կնու-

---

(1) Մի օրի . Թէոդոս ։

Թիւն առաքելով ընդ նմա եպիսկոպոս քահանայս ։

Եւ Խոսրով շինեաց 'ի պատիւ դստեր նորա երեք եկեղեցիս, և զպատրիարգն Անտիոքու չոգաւ օրհնեաց զնոսա. զմինն յանուն Աստուածածնին. և զմինն կոչեաց սուրբ առաքեալք, և միւսն սուրբ Սարգիս. և եղեւ մեծ խաղաղութիւն. վասն որոյ հըպարտացեալ Մօրիկն՝ անփոյթ արար զզօրացըն. և եհատ զկարգեալ պարգեւսն և ըդհաս նոցա ։

Եւ եղեւ զի ապստամբեցին (1) Բուլղարք 'ի Թիրակ, և զօրն Յունաց գնացին հալածեցին զնոսա, և դարձան 'ի Կոստանդնուպօլիս. և յղեցին առ Մօրիկ և ասեն. արար Տէր խաղաղութիւն յաւուրս քո, բայց ըսպայն ոչ ապրի խաղաղութեամբն միայն. արդ եթէ ոչ դառնայ 'ի մեզ պատիւն և ռոճիկն մեր օրինաւոր, 'ի խաղաղութեան աստ կալ զմեզ թշնամիս քո ։ Եւ լուան պատասխանի նախատս. որպէս Իսրայէլ Ռոբովամայ. և ասեն զօրքն ցՊետրէ եղբայր Մօրկայ. Թոյլ տուր մեզ սպանանել զնա. և թագաւորեա դու 'ի վերայ մեր. և նա ոչ առ յանձն. այլ ազդ արար եղբօրն, և փախեաւ Մորիկն 'ի Բաղկեդոն. և ել զօրն զհետ նորա և սպանին զնա անդ, և թագաւորեցուցին զզօրագլուխն Փոկաս զկնի քսան ամի թագաւորութեանն Մորկայ:

---

(1) Երկու օրի. ապաստա. կեւ.

Եւ իբրեւ լուաւ թագաւորն Պարսից թէ սպանին զՄորիկ և զորդիսն իւր, տրտմեցաւ մեծապէս. և զգեցաւ սեաւ, և ելաց զնա զաւուրս բազումս ամենայն տամբըն Պարսից:

Յետ այնորիկ ասէ ցմեծամեծ աւագանին իւր. ով առնու զվրէժ արեանն Մորկայ 'ի ձեռացն Յունաց 'ի դիւրութիւն սրտի իմոյ, և դարձուցանէ նմա զերախտիսն զոր արար նա Պարսից և կանգնեաց զխախտեալ թագաւորութիւնս զայս:

Եւ յառաջ եկն ոմն Մոմիզոն անուն, և ասէ. ես երթայց եթէ հրամայեսցես. և լցից արեամբ զտունն Յունաց:

Եւ ուրախ եղեւ (թագաւորն) Խոսրով և ասէ ցնա վստահ եմ 'ի քեզ, զի այր քաջ ես դու և կարասցես և յաջողեսցես:

Եւ արդ ոչ եղիցի անուն քո Մոմիզոն. այլ Շահրպարազ եղիցի անուն քո, և ետ նմա զամենայն կարողութիւնն (1) Պարսից:

Եւ եկն 'ի Միջագետս և առ զՏարայ և

---

(1) Մի օրի. զօրս Պարսից

և զԱտալայն . և զՄերտինն , և ձմերեաց անդ ։ Եւ առ զԽառան և զՀալապ և զԱնտաք , և տայքն ցնա յօժար կամօք զքաղաքսն , ոչ ումեք մեղանչէր բաց ՚ի Յունացն և ՚ի Հռովմայեցւոյն ։

Եւ յութերորդ ամին Փովկայ եղև ամենայն Միջագետք Պարսից . և ապա անցին ՚ի Կապադովկիա , և յԱնկիւրիայ և յԱսիայ . և հասին մինչև ցՔաղկեդոն , և հեղին արիւն բազում . և առէին թագաւորութիւնս այս Խոսրովուէ իրաւամբք . զի որդեգիր է Մօրկայ . և ժառանգ թագաւորութեան նորա ։

Իսկ թագաւորն Փովկաս թոյլ էր և կընաստ . և վասն կասկածանաց եսպան զբազումս ՚ի զօրագլխացն , և եղև ատելի ամենեցուն ։

Եւ էին երկու Պատրիկք (1) յԱփրիկէ եղբարք և քաջամարտիկք . անուն միոյն Գրիգոր , և միւսոյն Հերակլ ։ Խորհեցան երկոքեան զմահն Փովկասայ . և զօրս ժողովեալ ետուն ՚ի ձեռս որդւոյ իւրեանց , և առաքեցին զնոսա վիճակաւ ընդ ծով և ընդ ցամաք . և գրեցին թուղթս յարքունիսն և ՚ի քաղաքն , զի սպանցեն զՓովկաս . և որ վաղ երթայ յերկուցն, նա առցէ զթագն. և որ յետոյ գնայ յերկուց որդւոյն իւրեանց լիցի առաջնոյն կեսար: Եւ էր որդին Հերակլեայ անուամբ հօրն որ եհաս վիճակ նմա ընդ ծովն. և աջողակ հողմով գնաց կանխագոյն. և տեսեալ զթուղթն՝ նոյն ժամայն սպանին զՓովկաս, և թագաւորեաց Հերակլ այր քաջ և իմաստուն. և ուրախ եղեւ զօրն և քաղաքն և հանդարտեցին:

---

(1) Ձոյք օրի. պատրիարք ։

Իսկ Թագաւորն Պարսից յորժամ տիրեաց Միջագետաց, առաքեաց առ նոսա եպիսկոպոսս նեստորականս և քաղկեդոնիկս. և անուն էր գլխաւորին Սախշիմա. բայց ոչ ընկալան զնոսա ուղղափառքն, այլ գրեցին առ Թագաւորն աղաչանս զի մի խախտեսցէ ըզհայրենի կրօնս նոցա. և ունկնդիր եղեւ նոցա Թագաւորն Խոսրով և անդէն կոչեաց զնոսա. և նոքա խնդրեցին 'ի Թագաւորէն կոչել զգլխաւորսն 'ի նոցանէ և հարցանել զպատճառս չընդունելութեան նոցա. և Թագաւորն ախորժէր եւս 'ի վաղուց գիտել՝ թէ զի՞նչ է հակառակութիւն 'ի Քրիստոնեայս վասն որոյ առաքեաց 'ի Հայս և յԱսորիս. և առ ինքն կոչեաց զարս աստիճանաւորս զիմաստունս, և գնաց մեծ կաթուղիկոսն Հայոց Ներսէս. և պատրիարգն Ասորւոց ուղղափառաց Աթանաս. և Սեւերիանոս եղբայր իւր : Եւ տեսեալ զմիմեանս ժողովեալքն 'ի Հայոց և յԱսորոց խնդացին (և ուրախացան) և գոհացան զԱստուծոյ : Եւ արարեալ բազում քննութիւնս հարցման և պատասխանւոյ՝ պարտեցան 'ի ճշմարտութենէն՝ Նեստորականքն և Քաղկեդոնիկքն. և զգացուցին Թագաւորին. և կոչեաց զժողովն առաջի իւր և ասէ. որպէս կարող իցեմ ես հասկանալ՝ ասացէք ինձ զհակառակութիւնդ ձեր. ասեն՝ Նեստորականքն և Քաղկեդոնիկքն :

Ամենայն քրիստոնեայք խոստովանիմք ըզՔրիստոս Աստուած յաւիտենից. և յետ ժամանակաց վասն մեղաց մարդկային բնութեանս մարդ եղեալ. բայց առանձինն մեք զայս ասեմք, եթէ երկու բնութիւն է. զի մարդն մեղաւ, մարդն մեռաւ. Աստուածն. զի ոչ մեղաւ. և ոչ մեռաւ : Իսկ դոքա ասեն մի բնութիւն Աստուծոյ և մարդոյն. և զայն մեռեալ խաչիւ և յարուցեալ և համբարձեալ : Եւ ուղղափառքն ասեն այդ զատ բան է և յերկար ժամանակօք. և ժողովովք և Թագաւորօք քննած և հաստատած, այն զոր մեք ունիմք, և դոքա յետոյ աւերեցին :

Եւ ասէ Թագաւորն ո՞վ էին Թագաւորքն որովք ապիմաստացաւ հաւատդ ձեր :

Եւ ասեն Կոստանդին մեծն. և Թէոդոս մեծն, և Թէոդոս միւսն որդի Արկադեայ:

Եւ ասեն Քաղկեդոնիկքն իսկ Մարկիանոս ո՞չ էր թագաւոր. և նորա ժողովն սակա՞ւ էր:

Եւ ասեն ուղղափառքն. այն էր արքայ աւերիչ առաջնոյն, զոր ոչ ընդունիմք:

Ասէ թագաւորն՝ լուայ զի պարտեցարուք 'ի գրոցն ձերոց դուք որ զՄարկիանին մեծարէք. այլ ես ոչ հաւասարեմ զՄարկիան այնց թագաւորացն. և ճշմարիտ թուի ինձ ասելն, թէ մահ մարդոյ փրկութիւն ոչ կարէ առնել. և այն որ հաճոյ եղեւ նմա խառնիլ ընդ մարմնոյ, կարծեմ թէ և ոչ հաճի նա ընդ բաժանելն. և ես յորժամ եկի 'ի Միջագետս, լուայ զայդպիսի վիճմունսդ յերկուց կողմանցդ. և եղեւ զօրականացն իմոց հիւանդացելոց բժշկութիւն 'ի հալածականացն Մօրկայ. վասն մահ ասելոյն Եւտուծյ: Այլ և պատմեցին ինձ զօրքն իմ հրաշս ինչ, (գտաք) մտաք ասեն յեկեղեցի մի լցեալ ժողովրդօք, և երէցն կատարէր զաղօթս պատարագին իւրեանց. և կատարեցաք զպաշտօնութիւնն յեկեղեցւոջն. և երէցն ոչ ստեաւ և ոչ հայեցաւ 'ի մեզ. և զարմացաք և տեսաք հացս բրդեալ բաւական երեք արանց 'ի գինի. զի կամէր տալ 'ի նմանէ հինգ հարիւր արանցն զոր սպանաք. և բռնադատեցաք զնա ասել մեզ զինչ է այդ. և ասաց այս մարմին և արիւն Աստուծոյ իմոյ է, որ մեռաւ վասն իմ. և ապա նեղեցաք զնա և կերաք զամենայն. և յետ այնորիկ սպանաք զնա և բացեալ զփոր նորա ոչ ինչ գտաք. և եղեւ այս յերկիրն Ինդուրին որ այդպէս խոստովանին. և ես յոյժ եմ հիացեալ. քանզի հարցաք ասեն ցքահանայն թէ հոգեւո՞ր է կերակուրդ. թէ մարմնաւոր. և նա ասաց հոգեւոր. և ճշմարիտ ասաց:

Արդ ես այնմ վկայեմ իրաւացի գոլ, և այսպիսի բանք ոչ 'ի նմանէ, այլ յԱստուածոյ ազդմանէն, որպէս Փարաւոնին, և Նաբուգոդոնոսորայն և Բաղաամուն: Վան որոյ պատուեաց մեծարեաց զմեծ կաթողիկոսն Հայոց և զպատրիարքն և զտուրքն Սեւերոս. և լուաք թէ մկրտել ետ զորդին իւր, և ետ սան հայրապետին Հայոց. և զաշխարհն Պարսից յանձն արար նմա խնամել զՔրիստոնեայսն որ անդ, ձեռնադրել անդ եպիսկոպոս և քահանայս:

Եւ այսպէս Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ:

Ասացից և վասն Աթանասայ պատրիարքին և Եւսերոսի եղբօր նորա, թէ ո՞րպէս եղեւ ընտրութիւն սոցա, և կամ ուստի՞ էին։

Այր մի էր 'ի Սամոսատայ երկիւղած 'ի Տեառնէ, որ մեռաւ և եթող զասացեալդ Աթանաս և Եւսերոս փոքր մանկունս ընդ մօրն, որոյ Սանիա էր անունն. որ սպասաւորէր զամենայն ինչս իւր աղքատաց. և ետ զմանկունսն Աստուծոյ նուէրս, և սնուցանէր զնոսա աղօթիւք և հաւատովք և յուսով մեծաւ. զի յորժամ արտաքոյ տեսանէր եպիսկոպոս և միակեացս և քահանայս, առաջի անկեալ հայցէր աղօթս և ասէր. կնքեա զիս խաչիւ, և ինքն տարածէր զթեւսն, և որպէս զգոյաւոր իրք ծրարէր և տարեալ թափէր 'ի գլուխս տղայոցն, կոչելով զնոսա առ ինքն. և հարցանէին տղայքն զի՞նչ է այդ մայր. և նա ասէր օրհնութիւն է այս որդեակք, զոր առի ձեզ 'ի սրբոց (Աստուծոյ) առէք պահեցէք երկիւղիւ Տեառն։

Եւ ետ զնոսա 'ի դպրոց. և յետ սակաւու 'ի վանս սրբոյն Յովհաննիսի. և 'ի կատարման հասակի նոցա ետուն Աթանասայ ուղտս բերել նոքօք զպէտս վանացն։

Յաւուրսն յայնոսիկ կատարեցաւ պատրիարքն ուղղափառաց. և ժողովեցան 'ի վասն հռչակաւոր բազմութիւն եղբարց յԱուծափայ վանք կոչեցեալն․ զի ընտրութեամբ ըստ Աստուծոյ կամացն դնիցեն պատրիարք․ և ընտրեցին արս երիս, և գրեցին զանուանս նոցա յ'երեք թուղթ․ և 'ի թուղթ մի զ'Քրիստոս անունն․ և եդին զնոսա 'ի մէջըս գնդեալ մոմոց և ծածկեցին. և արարեալ հսկումն՝ եդին 'ի սեղանն, և մատեաւ և 'ի վերայ պատարագ․ և յետ պատարագին առին զմի 'ի մոմոցն և բացին. և ահա Քրիստոսի անունն էր․ և ընտրեցին երեք այր այլ և նոյնպէս արարին․ եւ դարձեալ եկն Քրիստոսին․ և փոխեցին երեք այլ և արարեալ զարժանն, եկն նոյնպէս Քրիստոսի անունն․ և գիտացին թէ ոչ ընտրեաց 'ի նոցանէ Տէր․ զի զ'Քրիստոսին վասն այնորիկ գրեն․ որ թէ յերեք անուանէն միոյն անունն գայ, մի այլ առնուն 'ի մոմոցն, թէ Քրիստոսի անունն գայ՝ ապա է ընդունելի. զի Քրիստոս վկայեաց նմա։ Իսկ թէ այլ մարդոյ անուն գայ յերկուցն որ կան 'ի տեղն՝ չէ ընդունելի, զի Քրիստոս ոչ վկայեաց․ և թէ միայն Քրիստոսին գայ զառաջինն, երեւի թէ Քրիստոս միայն է Քահանայապետն․ յընտրելոցն չէ ոք արժանի։

Իսկ ապա երեք այլ զկնի միմեանց հըկեցին և լացին առաջի Աստուծոյ. և երեւեցաւ Քրիստոս ՚ի վերայ սեղանոյն և ասէ. վաղիւն ընդ բանալ դրանն առաքեմ առ ձեզ այր մի Աթանաս անուն, նա է արժանի. և գնայ նա ուղտիւք, և այդ նշանակ ձեզ. որպէս և եղեւն իսկ։

Եւ խնդաց բազմութիւնն. և սպասեցին իւրայն նոյնպէս աղօթիւք, և ՚ի ժամ առաւօտուն կայր առ դրանն. և հարցեալ զանունն, զուարձացան և բազում աղաչանօք և երկիւղիւն Աստուծոյ ածին ՚ի հաւան և ձեռնադրեցին. և յետ ձեռնադրութեանն ելաց առաջի նոցա և ասէ։

Սիրոյն Քրիստոսի աղաչեմ զձեզ ծածկեցէք զբանդ, և թող տուք ինձ հանդերձիւս երթալ ՚ի վանս իմ և լնուլ զաւուրս իմ. զի մօտ է ժամանակս, և արարին այնպէս։

Եւ ոչ ծածկեցաւ յետ այնորիկ. և խնդրեցին զնա և գտին. և հռչակեցաւ անուն նորա մեծամեծ նշանօք, և եղբայր նորա եղեւ այր սուրբ և սքանչելի. յաղագս որոյ յոյժ սիրեցեալ եղեւ. յաշխարհէն Հայոց ՚ի մեծամեծաց և ՚ի փոքունց։

Այլ Հերակլեայ ՚ի քսան և մի ամին Խոսրովու Պարսից արքայի թագաւորեալ առաքեաց առ նա և ասէ. արա ընդ մեզ խաղ գողութիւն. և այդրէն դաձո առ քեզ ըղզօրան քո. զի մեռաւ Փոկաս սպանողն Մօրկայ. և մեք ոչ ինչ մեղաք քեզ: Եւ ոչ անսաց Խոսրով:

Այլ եւ նա 'ի բանի անդ և եկն 'ի Կեսարիա Հայոց 'ի յամրութիւն զօրաց իւրոց. և կոտորեաց զհազարս հազարաց, և բիւրս բիւրուց և դարձաւ:

Իսկ Շահրպարզն 'ի չորրորդ ամին Հերակլեայ հնազանդեաց զԴամասկոս Պարսից. և 'ի գալ տարւոյն զԳալիլիա. և 'ի վեցերորդ ամին Հերակլեայ առ զԵրուսաղէմ, և սպան 'ի նմա իննսուն հազար անձինս և գերեաց զայլսն Հրէիցն ոչ մեղանչելով զառաջինն. վասն որոյ սակաւ գնոյ առեալ 'ի քրիստոնէիցն սպանանէին. բայց զկնի ջնջեաց զՀրեայսն յԵրուսաղեմէ և յամենայն սահմանաց նորա. և առեալ Շահրպարզն զխաչն Քրիստոսի զմասն բաժնի Անտիոքու, զոր տարեալ էին յԵրուսաղէմ. և առաքեաց զնա 'ի Պարս առաքելով ընդ նմա զԶաքարիա պատրիարքն Երուսաղեմի 'ի պատիւ խաչին սպասաւոր նմա:

Եւ զկնի ամի միոյ չոգաւ յԵգիպտոս և առ զնա. և հնազանդեաց զամենայն Լիբիա Պարսից մինչև ցՔուշանս:

Եւ 'ի նոյն ամի առաքեաց Խոսրով զՇահէն զօրագլուխ իւր, որ եկն 'ի Կիւլիկիայ և առ զնա. և ծանր աւարաւ դարձաւ 'ի Պարսս, մինչեւ տանել նմա սիւնս կճեայս (1) և անօթս պղնձիս։

Իսկ Հերակլ զԿոստանդին որդին իւր անուանեաց Օգոստոս, և առաքեաց ընդդէմ զօրացն Պարսից. և ոչ վստահացաւ պատահել նոցա, և դարձաւ անդրէն։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս որ յայսմ՝ ժամանակի երեւեցաւ Մահմէտ որդի Աբդլլահի 'ի Թուին Հայոց վաթսուն և եւթն. զայսու ժամանակօք խաւարեցաւ կէս արեգականն յարեգ աշնանամոտին մինչեւ 'ի քաղոց ամիս։

ՅԱՅՍՄ ժամանակի երեւեցաւ Մահմէտ որդի Աբդլլայի յԵթրա յԱրաբիա (2). և է Արաբիա յԵփրատ գետոյ մինչեւ 'ի ծովն հարաւոյ. և յարեւմտից 'ի կարմիր ծովէն մինչեւ յարեւելս 'ի Պարսից ծովն։ Եւ բնակիչքն կոչին Իսմայելացիք՝ վասն Իսմայելի, և Սարակինոսք (3)՝ վասն Սառայի. զի յանուն Սառայի ծնաւ Իսմայէլ որդեգրութեամբ . և կոչին Հագարացիք՝ վասն Հագարայ . և Մադիանացիք՝ վասն Մադիանայ որդւոյ Կենդուրայ :

---

(1) Մի օրի. կճեք։

(2) Երկու օրի. 'ի յԵթրա Արաբացի։

(3) Սարկինոսք։

Այս Մահմէտ ելանէր յԵթրապ քաղաքէ և գնայր վաճառականութեամբ յԵգիպտոս և 'ի Պաղեստինէ . և եղև ծանօթութիւն նմա ընդ Հրէից . և ուսուցին նմա զօրէնսն , և հաւատաց յԱստուած . և ետուն նմա կին , և երթեալ քարոզեաց ազգին իւրում . և ոմանք հաւատացին և այլք փախուցին զնա իբրև զմոլեգնեալ . և ել սակաւուք յանապատ և յարեցան 'ի նա այլք : Եւ երթայր նոքօք գերէր կողոպտէր զանհաւանսն՝ և զհաւանեալսն յանկուցանէր յինքն:

Եւ սիրեցին զնա Հրեայքն և տարան առ ինքեանս . և նովաւ հալածեցին զզօրսն Պարսից . և ել համբաւ զնմանէ , և գային կուտէին առ նա . և տիրեցին բազում գաւառաց . և հռչակեցաւ անուն նորա յինն հարիւր երեսուն և վեց թուին Յունաց . և 'ի վաթսուն ութն թուին Հայոց , և յերկոտասաներորդ ամի թագաւորութեան Հերակլեայ :

Ընդ այսու ժամանակօք խաւարեցաւ կէս արեգական յարեգ յաշնանամտին մինչև 'ի քաղոց ամարան ամիս. և կարծեցաւ թէ այլ ոչ յղորդի արեգակնդ յաւիտեան (1)։

Ի հնգետասան ամին Հերակլեայ առին Պարսիկք զՌոդոն կղզի և գնացին նստան ՚ի Կոստանդնուպօլիս. և սփռեցաւ զօրն ՚ի Թրակիայ և յարեւմուտս կոյս. և ամ մի պաշարեցաւ Կոստանդնուպօլիս և անյուսացաւ յամենայն կողմանց։

Իսկ ՚ի խնամոյն Աստուծոյ եղեւ հնարք սակաւ ինչ այսպիսի օրինակաւ. քսեցին առաջի Պարսից արքային եթէ Շահրպարզն հպարտացեալ է ընդ գործս իւր և ասէ. կընամոլն Խոսրով նստեալ է յարբեցութիւն ՚ի մէջ հարճից և վարձակաց. և զայս ոչ կարծէ եթէ ոչ տամ՝ ես նմա զերկիր զոր առի վաստակօք իմովք. և ցասեաւ Խոսրով և գրեաց թուղթ առ Պարտօղան երկրորդն զօրագլուխ, եթէ յորժամ տեսանես զգիրդ՝ հատ զգլուխ Շահրպարզին, և առ իս առաքեա։

Եւ անկաւ թուղթս այս ՚ի ձեռն ծառայից Հերակլեայ և տարան առ նա. Հերակլ գաղտապէս ազդ արար Շահրպարզին զգիրն։ Եւ եկն առ Հերակլ ծածկապէս և ուխտեաց նմա. և առ զթուղթն և շրջեաց և գրեաց այսպէս . "Շահրպարզ և Պարատօղան հաւատարիմք իմ ։ Ընդ դալ Թղթոյդ առ ձեզ . երեք հարիւր իշխանք որոց անուանք այդ և այդ գլխատեցջէք . և գրեաց զանուանսն . և տարաւ եցոյց մեծամեծացն և Պարատօղանայ . և դառնացան և անարգեցին զխոսրով . և արարին սէր ընդ Հերակլ . և դարձան 'ի Պարս . և առաքեաց Թագաւորն Հերակլ առ Թագաւորն հիւսիսոյ Խաքան . զի տացէ նմա զդուստր իւր Եւդոտիա 'ի կնութիւն . և խնդրեաց 'ի նմանէ քառասուն հազար հեծեալս 'ի վերայ Պարսից . և յանձին կալաւ Խաքանն . և խոստացաւ առաքել զոր խնդրեացն ընդ դուռն Կասպից , զի իմ բան ինչ է առէ առ Փոյտակարան քաղաք աւերել զնա ։ Եւ լուեալ Հերակլեայ եւ 'ի Հայս ընդ առաջ հիւսիսականաց , զի նոքօք երթիցէ 'ի վերայ Պարսից . և լուեալ Խոսրով որ ինչ եղեւ , և ժողովեաց զօրս . և կացոյց նոցա գլուխ զՄոզրիբահան , և առաքեաց ընդդէմ Հերակլեայ. և Հերակլ զհիւսիսականսն առեալ , չոգաւ ընդ առաջ Մոզրիբահանայ , և եհար զնա իսպառ . և իմացեալ Խոսրովու փախեաւ 'ի Սադան (1) յամրոց իւր ։

---

(1) Երկու օրի. ոչ հաւա- տալի ՚ի նոյն յաւիտեան։

---

(1) Երկու օրի . Սադար դա ամրոց իւր ։

Իսկ Շիրի որդի Խոսրովու կայր 'ի բանտի, ել անտի հրամանաւ Պարսից. և սպան զհայր իւր, և թագաւորեաց. և Հերակլ դարձաւ 'ի Նինուէ ձմերել անդ։

Եւ առաքեաց Շիրի առ Հերակլ խնդրել զխաղաղութիւն. և հաւանեցաւ Հերակլ, և առաքեաց զԹէոդորիկէ զեղբայր 'ի Միջագետս և չոգաւ յՈւռհայ. և Հրեայքն որ անդ բնակեալ ընդդէմ նորա և առեալ զքաղաքն կոտորեաց զբազում 'ի նոցանէ, և Հերակլ դարձաւ 'ի Թէոդուպօլիս. և տկարացոյց զՀայս վասն ուղղութեանն Եզրի նոցա առաջնորդի։ Բայց ոչ կարաց զամենեսեան որպէս կարծէրն, հայելով Աստուծոյ 'ի քրտունս նահատակին Գրիգորի. և յետ այնորիկ եկն յՈւռհայ, և ելին ընդ առաջ նորա բազմութիւն եկեղեցականաց. քանզի վանորայք լերինն առհասարակ եկին և խառնեցան 'ի բնակիչս քաղաքին, որոց թիւն էր իննսուն հազար. և պատկառեաց թագաւորն. և խոնարհեալ երկիր եպագ սրբութեանցն և ասէ. ոչ է արժան անմասն առնել զմեզ յաղօթից սոցա թէպէտ մի բնութեանն են սիրողք. և 'ի տօնի ծննդեանն էր մուտ նորա 'ի քաղաքն. չոգաւ 'ի սուրբն Սոփի, և մատոյց ընծայս եկեղեցւոյն և քահանայից. և 'ի ժամ պատարագին խնդրեաց հաղորդիլ, և ոչ ետ ցնա արքեպիսկոպոսն Եսայի. Նախ նզովեա՝ ըզտումարն Լեւոնի և զժողովն Քաղկեդոնի. և բարկացաւ Թագաւորն. և առ զեկեղեցւոյն բանալին և ել. և յետ պատարագին արտաքս եհան զնոսա յեկեղեցւոյն, (զբանալին) ետ ցՔաղկեդոնիկսն:

Եւ սուրբն Աթանաս պատրիարքն ելեալ յԱնտաքայ եկն 'ի Մընբէճ՝ 'ի պատահումն Թագաւորին, և երկոտասան եպիսկոպոսք ընդ նմա, որք էին այսքիկ՝ Թովմաս՝ Թրմուրին, Վասիլ՝ Հեմսայ, Սարգիս՝ Արիսոյ, Յովհաննէս՝ Կիւրիսոյ, Թովմայ՝ Յարապօլսոյ, Դանիէլ՝ Խառանու, Սեւերէ՝ Կնշըրայ, Աթանասիոս՝ Յարապիսոյ, Կոզմա՝ Եպիփանոյ, որ 'ի Կիւլիկիա. միւս Սեւերէ՝ Սամոստիայ, Եսայի՝ յՈւռհայոյ, որ և գնաց առ նա պատմել որ ինչ եղեւն. և 'ի գալ Թագաւորին 'ի Մնբէճ, տեսին զնա անդ և ասեն (ցնա). մի առներ արքայ սիրելի մեզ զփառս Պարսից քան զքրիստոնէից. և մի վանել փութացիս զճշմարտութիւնն:

Իսկ Թագաւորն հասկացաւ զբանն՝ և նստաւ 'ի քննութիւն զաւուրս երկոտասան իւրովք իմաստնովք խորհրդականովք ընդդէմ ուղղափառացն. և յաղթեաց ճշմարտութիւնն. և ասէ Թագաւորն՝ բիծ ինչ ոչ գոյ 'ի ձեզ, այլ զմերս պահեսցուք մեք. և գնաց յԱնտաք. և խորհեցան (ընդ միմեանըս) իշխանքն և եկեղեցականք քաղաքին, և որք 'ի դրան արքունի էին, և ասեն ցԹագաւորն. եթէ ոչ պատերազմիս երեւելապէս ընդ ուսումնդ ընդ այդ՝ զոր առեն Հռովմայեցիք և Յոյնք, ոչ յերկարէ Թագաւորութիւնդ քո. այլ և ոչ հաճի Աստուած 'ի քեզ, տապալել զայնքան արանց աշխատութիւն. և ոչ յաւելուլ 'ի նոսա:

Եւ լուաւ նոցա Թագաւորն և ետ հրաման նախատելոյ և չարչարելոյ զմիադաւանսն. և մի կալցին առ իս ասէ համարձակութիւն և մի կալցին կաթուղիկէ եկեղեցիս, քանզի դարձուցի ասէ առ իս զմեծն Հայք. և ո՞ք են որք ոչ հնազանդին ինձ. և զայն ոչ գիտաց անմիտն զի թէ կաշառեաց զանմտութիւն Եզրի, և պատրեաց(1) զանիմաստութիւն նորա: Այլ պարկեշտ վանորայքն արեւելից և բազում մասն աշխարհին արհամարհեցին զնա, և զխաբեբայըն 'ի նմանէ անուանեալն կաթուղիկոս. մինչեւ ամենեւին բարձաւ հետք չարութեանն 'ի նոցանէ:

---

(1) Երկու օրի. պարտեաց.

Իսկ նա սիրեաց զփառս մարդկան, և ոչ զփառս Աստուծոյ. և պատահէ արժանեաց իւրոց։

Իսկ Թագաւորն Պարսից Շիրի զկնի ինըն ամաց մեռաւ, և թագաւորեաց Արտաշիր որդի նորա ամս երկու. և զսա եւս սպան Շահրվարազն, և ինքն թագաւորեաց կամակցութեամբ Հերակլեայ։ Եւ զի Պորանդուխտն(1) ժողովս կատարեաց ի վերայ նորա. առաքեցաւ նմա զօր յօգնականութիւն. և սպան զնա։ Եւ ամ մի կալեալ զթագաւորութիւնն Շահրվարազն որ նա ինքն է Խոռիանէ, և սպանաւ. և առ զթագաւորութիւնն Պարամ դուստր Խոսրովու սակաւաւուրս և մեռաւ։ Եւ թագաւորեաց Զարմանդուխտ քոյր նորա։

Եւ զկնի նորա առին, Շահրօրի և Դրաբուրան, Խոսրով, Պերոզ, Զրուանդուխտ, Արմիզդ. ընդ ամենեսեան ամս երկու։

Իսկ Հերակլ յաւել ի չարիս իւր, և առ կին զՄարտինէ դուստր եղբօր իւրոյ ի ծերութեան իւրում. և ծնաւ ի նմանէ զՀերակլէ որդի անօրէնութեան։

Եւ Մահմէտն բռնացեալ ի վերայ բազում գաւառաց և քարոզեալ կրօնս ըստ կամաց խուրից եղեալ օրէնս կալեալ զիշխանութիւնն ամս եւթն , մեռաւ և փոխեաց Բուբաքր զնա ամս երկու . և ամիսս եւթն ։

---

(1) Օրինակ՝ ղարատողն.

Եւ զկնի նորա Ոմար էառ զիշխանութիւնն որ էառ զԲասրա յասորի իշխանէ . և առաքեաց զօր մեծ 'ի Պարսս . և գտին ընդ նոսա ամբոխեալս , զի սպանեալ էր զՈրմիզդ և կամէր թագաւորել Աղոտաճաստ. և առին բազում գերի և աւար 'ի Պարսից . և դարձան և հարին զզօրն Յունաց և զզօրավար նոցա զՍարգիս . և զօրացան 'ի վերայ Պարսից և Յունաց , և եղեն իշխանութիւն մեծ ։

Իսկ Հերակլ ժողովեաց զօրս ընդդէմ նոցա և առաքեաց 'ի վերայ նոցա , զԹէոդորիկէ զեղբայր իւր , եղեալ գլուխ զօրացն . որք եկին իջին (1) յԱնտաք 'ի գիւղն որ կոչի Կուսիդ ։ Եւ կայր անդ սիւնակեաց մի Սիմէոն անուն . և գնաց առ նա Թէոդորիկէ և մեծամեծք իւր ընդ նմա խնդրել աղօթս, և հարցանել (2) նովաւ զՏէր . և նա ասաց ցնոսա ուխտեցէք ինձ զի 'ի յաջողելն ձեզ 'ի Տեառնէ անհետ առնիցէք զհակառակորդըս սուրբ ժողովյն Քաղկեդոնի . և ասեն երդնումք քեզ զի արասցուք զայդ . և ընդդոյն պատուէր ունիմք 'ի Թագաւորէն . և

(1) Ոմանք՝ իջան ։ (2) Երկու օրի . հայցել ։

տան ցնոսա, երթայք աղօթիւք սուրբ ժողովոյն. և իբրև գնային սրտմտութիւն Տեառն եղև 'ի վերայ նոցա. և փախեան առաջի թշնամեացն, և մաշեցան 'ի սուր սուսերի. և առան ամենայն պատրաստութիւնք նոցա, և մաղապուր զերծաւ Թէոդորիկէ սեաւ երեսօք յԱստուծոյ և 'ի մարդկանէ:

Իսկ Հերակլ դարձեալ քաջալերեցաւ յանձն իւր, և հաւաքեաց զօրս և ետ 'ի ձեռն որդւոյն Շահրպարզայ, որ կայր առ նմա պատանդս 'ի հօրէն տուեալ՝ անուամբ հօրն կոչեցեալ. և չոգաւ եւթանասուն հազարաւ, և կռուեցաւ ընդ Տաճկին առ գետոյն Դամասկոսի. և պարտեցաւ դարձեալ առաջի նոցա. և փախեաւ զօրն Յունաց, և անկան 'ի նոցանէ քառասուն հազարք: Եւ Շահրպարզն անկաւ 'ի Հռոմ, և յղեաց առ նա Ոմար, զի ուխտեսցէ նմա գալ առ նա, և առնուլ զօրս և երթալ 'ի Պարս, և դարձուցանել առ նա զթագաւորութիւնն Պարսից. և կոչեաց զնա առ ինքն ուխտիւ: Եւ քանզի կային առ Ոմար դստերք Խոսրովու 'ի գերութեան, ասացին ցնա. որդի ապստամբի է և երթայ կորուսանէ զզօրսդ, և թագաւորէ 'ի Պարս հակառակ քեզ. և հաւատաց նոցա Ամիր, և սպան զնա կախաղանաւ փայտի. և ինքն առ զԴամասկոս և նստաւ ՚ի նմա. և առաքեաց զԱտզ ամիրայն ընդդէմ Պարսից, որ և չոգաւ և եհար ըզբանակս իւր ՚ի վերայ Ռուփայ (1) քաղաքի.

Եւ բուռն Աղասձառ Թագաւորն Պարսից, և եկն ՚ի վերայ նոցա և փախեցաւ առաջի Տաճկացն. և անկան յոլովք և փախեան սակաւք։

Եւ եկին անդէն Արաբիկքն արմնուզ (2) երիվարօք զհետ նոցա. և կոտորէին զսպառազինեալ և զյաղթահարեալ Պարսիկսն։

Եւ պատմեաց արայ մի, եթէ հալածեցի ես ամիրայ մի սպառազինեալ, և եհար ՚ի զրահս իմ տասն անգամ նետիւ, և ոչ կարաց խոցել զիս. զի նալականը մի կայր ՚ի գրպանս իմ, և ՚ի վերայ այնր դիպէր միշտ նետն. և ամիրայն զարմացեալ լինէր զի ոչ կարէր խոցել կորովի գրկօք զմարդ մերկվան որոյ եդեալ առաջի իւր բաշ ցցեալ ՚ի կոթոյն յեղը նորբաւոգ (3) արար. և եհար զնա և անց նետն Թափ ընդ երկաթն և ցըցեցաւ ՚ի գետինն. և վաղվաղակի անկաւ յերիվարէն, և եխուք (խբեալ) զաչս իւր․ և սպանին զնա սրով իւրով։ Քանզի իմացաք երկոքեանս եթէ բարկութիւն Տեառն հանեալ է ՚ի վերայ նոցա ։

---

(1) Երկու օրին. Քուփայ։ [illegible]

(2) Երկու օրի. կղմուր. [illegible] ընդօրինակութեան. [illegible] ՚ի բան [illegible]

(3) Երկու օրի. չոր [illegible]

Յաւուրսն յայնոսիկ ժողովեցան բազմութիւն քրիստոնէից ՚ի վանս սրբոյն Սիմէօնի կատարել տօն վկային․ և իմացան Տաճիկքն և երթեալ կոտորեցին զնոսա և գայթակղեցան բազումք․ զի ոչ փրկեաց զնոսա Տէր․ և զայս ոչ իմացան զի սահման առաջնոց տօնողացն բարձաւ․ որք պահօք և արտասուօք և հաւատովք կատարէին․ և այժմ լուծութեամբ ուտելով և արբեցութեամբ տօնս անուանեն, որ չէ հաճոյ Աստուծոյ․ այլ ՚ի մեղս և ՚ի դատապարտութիւն անձանց ։

Յետ այսորիկ դարձեալ եկն Ալպասճառ թագաւորն Պարսից ՚ի վերայ Տաճկաց առ Տիգրիս գետով։ Եւ յորժամ տեսին զբազմութիւն նոցա, քակեցին զկամուրջ գետոյն ։

Եւ ասեն Տաճիկքն եկայք անցցուք ընդ գետս և գնասցուք առ նոսա, զի այն որ օգնեաց մեզ ՚ի ցամաքի, նոյն կարող է և ՚ի ջուրս․ և զայս ասացեալ թափեցան ՚ի գետըն և անցին․ և մի ՚ի նոցանէ ոչ վնասեցաւ․ և հարին զՊարսիկքն և հալածեցին․

և չորից անգամ կռուեալ Մղտաճաս ընդ Տաճիկան , հարաւ (1) ՚ի նոյանէ ։ Եւ ապա գիտացեալ եթէ եկեալ է կատարած նոցա փախեաւ ՚ի Սլկիտան յերկիրն Մարագանի ՚ի սահմանս Թուրքաց . և եկաց անդ ամս հինգ , սպանաւ ՚ի Թուրքաց ։ Եւ այսու օրինակաւ բարձաւ գոռ թագաւորութիւնն Պարսից , որ կոչի Սասանեայ , տևեալ ամս չորեք հարիւր տասն եւթն . և առին Տաճիկքն զթագաւորութիւնն Պարսից ։

Եւ գնաց Սմբատ յԵգիպտոս . և եկն ընդ առաջ նորա եպիսկոպոսն Կիրոյ (2) և խոստացաւ տալ նմա յամի երկու հազար դահեկան , զի մի մտցէ նա յԵգիպտոս . և հաւանեցաւ Սմբատ , և դարձաւ ։ Եւ լուաւ Հերակլ զկորայսն . և առաքեաց ոստիկան Եգիպտոսի զՄանուէլ հայկազնի և արտաքսեաց ըզԿիրոս . և յորժամ եկին հարկառուքն , ասէ Մանուէլ . ոչ ունիմ ես փիլոն եթէ տայց քեզ ոսկի . այլ թուրս՝ զոր տամ քեզ ։ Եւ լուեալ Սմբատայ չոգաւ յԵգիպտոս և առ զնա . և դարձաւ եկն յԵրուսաղէմ ։ Եւ իբրև ետես Սոփրոնիոս եպիսկոպոսն Երուսաղեմի զՍմբատ խամ և հին հանդերձիւ և հին մուշտակով ՚ի մորթոյ մաքեաց , եբեր առաջի նորա պատուական հանդերձս, զի զգեցցի. և աղաչէր եւս. և ասէ (Ամարն) ցնա. ետ ինձ Աստուած զգանձս Պարսից 'ի Տիզբոն զՅունացն, զԴամասկեայն, և զԵգիպտոսին, և այլս բազումս. և ես ոչ փոխեցի զհանդերձըս աղքատութեան իմոյ. զի մի գուցէ մոռանամ զիս թէ ով իցեմ. և ոչ զայդ առից և ծածկեցից զաղքատութիւն իմ. և պատուեաց զեպիսկոպոսն, և ետ զաշխարհն 'ի ձեռըս նորա. և հրամայեաց նմա 'ի տեղի տաճարին շինել մզկիթ։ Եւ գնաց Ամար յԱսորիս (1)։ Իսկ զօրագլուխն Յովհաննէս, որ կայր յՈւռհայ, եկն առ Ամար 'ի Կնշրի, և ետ նմա հարիւր հազար դահեկան հարկս տարւոյ միոյ. զի մի մտցէ նա 'ի Միջագետս յարեւելից կողմանէ. զոր լուեալ Հերակլեայ ցասեաւ և կալաւ զՅովհաննէս. և ետ 'ի կապանս. քանզի Աստուած որ կամէր եղծանել զնա, ետ նմա հպարտ և դառն միտս։ Վասն որոյ 'ի գալ տարւոյն եկին առին զՄիջագետս և աւրեցին։

---

(1) Մի օրի . հալածեցաւ ։ (2) Մի օրի . Կիւրիայ ։

Իսկ Ուռհայ քաղաք իմաստութեամբ իւրով եհան զօրն Յունաց որ անդ կային. և գնացին խաղաղութեամբ. և եդ Ամար գլխահարկս քրիստոնէից որ էին ընդ իշխանութեամբ նորա ։ Իսկ զԹմլուզն (1) և զՏաւրայ կոտորեաց Ամար, զի բռնացան ընդդէմ նորա. յորում՛ ամի մեռաւ Հերակլ թագաւորեալ ամս վեց ։

---

(1) Մի օրի. յԱսորիս։

Սա եթող երիս որդիս զԿոստանդիանոս որ թագաւորեաց ամս չորս. զոր եսպան դեղով Մարտինէ կինն Հերակլեայ, և թագաւորեցոյց զիւր որդին զԵրակլեակ. զոր իշխանքն սպանին ։ Եւ երկրորդն Երակլէս զոր ոչ եդին զնա թագաւոր իբր զծնունդ չար խառնակութեան. այլ զԿոստաս զորդին Կոստանդիանոսի զթոռն Հերակլի ։

Իսկ Ամար աղաչեցեալ 'ի ծառայէ միոջէ առնել նմա դատաստան, և նա յերկարէր զներն. և ոխացեալ ծառայն սպան զնա դանակաւ խոցեալ զնա 'ի կուշտն, յորժամ՛ առանձնացեալ կայր յաղօթս. որ իշխեաց ամս տասն և երկու ։

Եւ ետուն զպատիւ նորա Աւթմանայ. որ էր այր ագահ և խակ, և անցանէր զսահմանաւ (2) առաջնոցն. և սպառնացան նմա՝ եթէ ոչ կացցէ 'ի չափու ։ Եւ եդին գլուխ զօրացն զՄաւին՝ որոյ առեալ զզօրսն չոգաւ 'ի Կեսարիա և արար ընդ հարկաւ ։ Եւ անտի յարուցեալ գնաց յԵմասիա. և առեալ

(1) Ոմանք՝ զԹըլմուզն

(2) Ոմանք ընդ սահմանաւ ։

աւար բազում, դարձաւ 'ի Կիլիկիայ. և հնազանդեաց զնա ։

Եւ Թագաւորն Կոստաս բաժանեաց ըզզօրսն յերկուս. զբաժինն առաջին ետ 'ի ձեռս Վաղինեայ` որ չոգաւ 'ի Կիլիկիա. և հալածեցաւ 'ի Տաճկաց. և զբաժինն երկրորդ ետ 'ի ձեռն Դաւթի հայկազնոյ, որ չոգաւ զվերին կողմամբն, և հալածեաց ըզՀագարացիսն 'ի Կապադովկիայ ։ Բայց զօրն Յունաց առնէին պղծագործութիւնս ընդ կանայս քրիստոնէից յերեսս արանց իւրեանց, և յափշտակէին զկարասիս նոցա. զոր իբրև լուաւ Դաւիթ` սաստեաց նոցա և ասէ. այդ մատնեաց զՔրիստոնեայս, զի ոչինչ է խտիր ընդ անհաւատսն և ընդ հաւատացեալս 'ի գործս աղտեղութեան. և առեալ զզօրսն դարձաւ 'ի Կոստանդնուպօլիս. և այլ ոչ կամէր առաջնորդել այնպիսեացն ։

Իսկ Մաւի ետ ածել յԵգիպտոսէ նաւս հազար եւթն հարիւր. և ել նոքօք 'ի Կիպրոս կղզի, և խնդրեաց հնազանդութիւն և հարկ. զի խնայեսցէ 'ի նոսա ։

Իսկ նոքա ամրացան 'ի քաղաքս, և արարին ընդդէմ պատասխանի. և սուրն Հագարու զարթեաւ 'ի վերայ նոցա. և եղեն քաղաքք նոցա ամուրք գերեզմանք նոցա. առին և զքաղաքն Կոստանդեայ ուր ամենայն գանձ կղզւոյն կայր. և արանցն ոչ գոյր թիւ զոր կոտորեցին զնոսա, և կորուսին իսպառ. և արարին պղծութիւն 'ի սուրբ կաթուղիկէն մեծ 'ի շինեալն Եպիփանայ սրբոյ. զի ոչ գտին զեդեալ կանոնքն Եպիփանու 'ի նմա վասն հաւատոյ և գործոյ. և լցաւ Մաւր աւարաւ. անչափիւք և դարձան: Եւ տուեալ մասն եգիպտականացն յուղարկեաց զնոսա 'ի տեղիս իւրեանց:

Զայսու ժամանակօք գրեաց պատրիարքն Ասորւոց ուղղափառաց սուրբն Աթանաս առ պատուական կաթուղիկոսն Հայոց զայս օրինակ:

« Հօր իմոյ և Տեառն Քրիստափորի 'ի Տէր խնդալ:

« Լուայ եթէ անմտութիւնն Եզրի ոչ եղեւ հաճոյ սրբութեանդ քո, և փառաւորեցի զՔրիստոս Աստուած, և զշնորհս նորա առ քեզ: Յիշեցուցից քեզ հայրապետ պարկեշտ բան ինչ զոր գտի գրեալ սրբոյն Մարութայի ազգականին ձերոյ. եթէ Բարսումայ առաքանիչն յաշակերտաց անտի Նեստորի էր, և յորժամ եղեւ սուրբ ժողովն յԵփեսոս նա կայր 'ի Ուռհայ. և 'ի

Պարսս կաթուղիկոս էր Պաւլի (1) ձեռնադրեալն 'ի Հայոց։ Գնացին նմա խնդրակք երիցունք վանից երկուք։ Նոյնպէս և ըզԲարսումայ կոչեցին 'ի ձեռն առն միոյ։ Իսկ Բարսումայ արար պատասխանի թէ ես ընդ ձեռամբ Պաւեայ կամ։ Եթէ նա գայ և ես գամ։ Իսկ Պաւլի անսատակ եղեալ ոչ եկն. այլ գրեաց թուղթ 'ի ժողովն, և ասաց. մեք ընդ իշխանութեամբ անօրինաց կամք և չար տերանց, և չեմք 'ի կամս մեր. վասն որոյ երկնչիմք եթէ կարծեն զմեզ բանաբերս այդր եկեալք 'ի Պարսից. և սուրն սպանող հարցն մերոց և ոչ 'ի մեզ խնայեսցէ և ոչ 'ի հօտս մեր. այլ զոր ինչ և Հոգին սուրբ խօսեսցի առ ձեզ, տուք առ իս բերել, և հաւանիմ։ Եւ զարսն որ գնացին առ նա սիրով դարձոյց. և զթուղթն ոչ ետ 'ի ձեռս նոցա զի մի փնասեսցեն. այլ ընտրեաց արս երկու յիւրոյն, և պատուիրեաց զնոսա և առաքեաց թղթովն. զի և նոքա և գիրն լիցեն զտեղի նորա։

«Իսկ նոքա եկին 'ի Մծբին և գտին ըզԲարսումա անդ խոյս տուեալ 'ի կոչողացն յԵփեսոս. և հարցեալ զնոսա Բարսումայ, և ուսեալ զիրն, խնդրեաց թուղթն և ասաց.

---

(1) Երկու օրի. սուրբն Պաւլի։

գնացէք 'ի տեղիս ձեր, զի մի լրտեսս կարծեսցեն զձեզ և սպանցեն. և ես երթամ և տանիմ զթուղթս. և նոքա դարձան պարզմտութեամբ։

“Իսկ օձն խորամանկ (1) յորժամ լուաւ եթէ նզովեցին զՆեստոր, և աքսորեցին, խացեցաւ խստագոյնս. և չոգաւ առ Պարսից թագաւորն և ասէ ցնա. այր մի էր 'ի Կոստանդնուպօլիս Նեստոր անուն՝ որ միշտ ըզբարիս խորհէր Պարսից և արգելոյր զՅոյնս. և զՀռոմայեցիս ասպատակել 'ի Պարս. և լսէին նմա զի առաջնորդ էր եկեղեցւոյ. կամեցաւ և կրօնս ինչ մուծանել յեկեղեցին՝ որ չէ կարի հեռի 'ի Պարսից. և վասն այնորիկ քսեցին զնա թագաւորքն, և աքսորեցին. և զեդեալ սահման նորին նզովեցին. և արդ հրամայեա ինձ հաստատել 'ի քրիստոնեայս զկանոն բարեկամին Պարսից. և որք ոչ հաւանին կողոպտել յընչից և լնուլ ըզգանձս քո։ և ոչ գիտես եթէ կաթուղիկոսս այս լրտես է եկեալ առ ձեզ Հայոց և Հոռոմոց. և ահա թուղթն՝ որ գրեալ է զքեզ անօրէն և չար և արիւնահեղ (անուանէ)։ Եւ հաւատաց նմա թագաւորն. և ետ ըզ-

---

(1) Մի օրի. յամէնջ 'ի լրա չարն Բարսաւմ։ [illegible] տեսէք թէ ինչ արար

Պաւղի 'ի ձեռս նորա և զամենայն քրիստոնեայս որ ընդ իշխանութեամբ Պարսից. և ետ զօրս որչափ և կամիցի. և չոգաւ առ Պաւղի:

«Եւ ասէ ցնա ապաքէն լուար զհաւատն Նեստորի դու. և ասէ. լուայ. զի նզովեցին զնա. զի ոչ պահեաց զաւանդ սուրբ առաքելոցն. և եղէցի նզովեալ: Եւ բարկացեալ կատաղին այն եհատ զլեզու նորա, և առաքեաց առ Թագաւորն և ասէ. հայհոյեաց զքեզ. և նա ասաց կտրեա և զգլուխն: Եւ արար այնպէս. և չոգաւ 'ի Բաղտատ և սերմանեաց անդ զՆեստորին. և գնաց 'ի Նինուէ. և ըմբռնեաց զարհեպիսկոպոսն Մարտիրոս, և երկոտասան եպիսկոպոսս ընդ նմա և երիցունս իննսուն, և ասէ ցնոսա. այլ ինչ ոչ խնդրեմ՝ 'ի ձէնջ. հաղորդեցէք դուք զիս. կամ՝ հաղորդեցարուք յինէն:

«Իսկ նոքա ասեն՝ ոչ տամք զսրբութիւն շանց, և ոչ առնումք զսրբութիւն 'ի շանէ. և սրամտեալ սպան զերիցունսն. և զեպիսկոպոսունսն բերեալ 'ի Մծբին եդ 'ի բանտի 'ի տան Հրէի միոյ. և հանեալ անտի ետ քարկոծել զօրացն, և զմարմինսն կախեաց զփայտից. և երեւեցաւ 'ի վերայ նոցա նշան երկնաւոր փառաց. և հաւատաց Հրերեայն 'ի Քրիստոս ըստ կրօնից սպանելոյն, և մկրտեցաւ ։

“Իսկ վնասակարն այն գնաց եմուտ յերկիր Հայոց և առաքեցին հալածեցին զնա և զզօրսն որ ընդ նմա. և գրեցին սպառնալիս, որ եթէ կրկնեն զգալն հրով մաշին ։

“Իսկ պիղծն այն գրեաց առ Թագաւորն և ասաց. ապստամբեցին Հայք 'ի քէն, և վայրացոյց. զնա և գրեաց Թագաւորին առ Հայս զի երթիցեն արասցեն պատասխանի վասն իրացն Թագաւորն Հայոց և Կաթուղիկոսն ։ Եւ պատասխանեցին Հայք Պարսից՝ և ասեն. վասն հաւատոյ մեք քեզ ինչ ոչ պարտիմք. աւադիկ առաքեցաք զգիր երդմանդ քո, յորում գրեալ է. եթէ Հայք յորժամ գան առ մեզ 'ի գնալն մեր 'ի վերայ թշնամեաց մերոց, եկեսցեն խաչիւք իւրեանց և քահանայիւք և օրհնաւոր կարգօք հարցն իւրեանց ։ Արդ եթէ ոչ ես դու 'ի բանս քո, ազատ եմք և մեք յերդմանէ մերմէ. և ոչ գամք առ քեզ վասն այդր բանի. և ոչ դարձցի առ քեզ Բարսումայ և. օրք ընդ նմա, եթէ գան առ մեզ ։

“Եւ այսու օրինակաւ (1) սուրն սատանայի

---

(1) Երկու օրի. Եւ զայս Եւ այսու պատճառաւ սուրն սատանայի ։ Մի օրի. ըրն սատանայի ։

և երկրորդ ջրհեղեղն աշխարհի ոչ եմուտ ՚ի Հայս . այլ դարձաւ ՚ի վերայ Ասորոց . յեքիս տեղիս արար ժողովն հակառակ երից սուրբ ժողովոցն ՚ի Կպատիքոն ՚ի Պադրի ՚ի Պրօմիա (1) . և գրեաց կանոնս զՆեստորին միտս , և բռնադատէր դաւանել զայն . եւ զոչ հաւանեալսն կողոպտէր , հալածէր . եւ զբազումս սպանանէր անողորմաբար . որոց Թիւ եկեղեցականացն սպանելոց ընդ. եպիսկոպոս և ընդ քահանայս և ընդ սարկաւագ եւթն հազար ութ հարիւր : Իսկ աշխարհականացն՝ Թիւ ոչ գոյր . զայսպիսիս աղէտս զոր կրեաց Ասորեստան գրեաց սուրբն Մարութայ , յորմէ դուք ապրեցարուք շնորհօքն Քրիստոսի :

« Եւ արդ աշխարհդ Պարսից եւ կողմանքդ Նինուէի որ ընդ իմով իշխանութեամբս է աթոռոյս Անտիոքայ . և ես ՚ի բազումս վտանգից միջի կալով , ոչ ժամանեմ խնամել զմնացեալ ուղղափառսդ , զորս յանձն առնեմ սրբութեանդ ձերում հոգալ ցաւակցաբար . և առաքել քարոզս և բժիշկս ուր մանաւանդ յաճախեաց հիւանդութիւնն . և ըստ պատշաճի ձեռնադրեք նոցա հովիւս և տայք նոցա օգնութիւն եղքարոզ· մերովք աղաչանօք . ողջունեմք զամենայն աթոռակիցս ձեր մերովք աթոռակցովքս 'ի Քրիստոս Յիսուս Աստուած մեր յաւիտեան » :

---

(1) Գրաւմիա :

Այլ մեք անդրէն դարձցուք 'ի յոճ կարգին մերոյ զոր թողաքն :

Արդ 'ի յամին հարիւր վաթսուն և հինգ թուին Ասորոց, և Հայոց իննսուն և վեց՝ գնաց Ալլուր զօրագլուխն Տաճկաց 'ի Կիպրոս և յատակեաց քակեաց ծակախիլ(1) արար զամենայն կղզին . և զմնացեալսն անդ 'ի Մաւեայ և զայլսն ևս ժողովեալսն ընդ հարկաւ արարեալ, դարձաւ :

Իսկ Մաւի չոգաւ յՌոդոն կղզի և առ զնա և աւերեաց . և տեսեալ անդ զպատկերն պղնձի՝ որ մի էր յեւթն հրաշիցն՝ շըրջեալ պարանօք շատ աւուրբք ձգնեալ և հազիւ կարացեալ . և գտաւ չափ երկայնութեանն հարիւր եւթն ոտն . և վառեալ 'ի ներքոյ նորա հուր՝ քակեցան շամփուրքն . և գնեաց զնա Հրեայ մի 'ի Հեմսայ . և կապեաց 'ի նմանէ բեռինս երեք հազար . և տարաւ 'ի տուն իւր : Նա ևս Մաւի զՄարուդ(2) կղզի, և զԿրուէ(3) . և դարձաւ :

---

(1) Մի օրի . տակախիլ արար .

(2) Մի օրի . զՄարխուդ :

(3) Երկու օրի . զԿրուէ .

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յաղագս սով սաստիկ եղեւ. և զկնի եղեւ հողմ սաստիկ հիւսիսային և փլոյց բազում եկեղեցիս և բրգունս քաղաքաց։ Եւ Ոմարայ՝ որ հրամայեաց ոչ ընդունել զքրիստոնէից վկայութիւն.

ԶԱՅՍՄ *ժամանակօք եղեւ սով դառնագոյն, և կերան մարդիկ զմիմեանս. և յերկիրն Գերմանիկէ պատրիկ կրօնաւոր մի անօրէն Եղիշէ անուն՝ բնակեալ յայրի կերաւ յիսուն և մի մանկունս, զոր գողանայր ՚ի ծնողացն. և մխիթարէր զնոսա վասն կորուսեան որդւոց իւրեանց, մինչև յայտնեաց Աստուած. և կրեաց աստէն, և կրելոց է յաւիտեան զհատուցումն իւր։*

Եւ զկնի սովոյն եկն հողմ հիւսիսային ահագին փչմամբ. և փլոյց բազում եկեղեցիս և բրգունս(1) *քաղաքաց և բերդից. և խլեաց անտառս բազումս։*

Յաւուրսն յայնոսիկ երեւեցաւ այր մի ՚ի Կոստանդնուպօլիս Մաքսիմոս անուն, որ խօսեցաւ հերձուած՝ ՚ի Քրիստոս երկու կամս ասելով և երկու ներգործութիւնս. և ոչ ընկալան 'ի նմանէ ։ Սակայն նա սերմանեաց և շշջէին զնմանէ ։

---

(1) Երկու օրի. զրգունս.

Իսկ Թէոդորիկէ կոմսն խնդրեաց 'ի պապէն Հռովմայ որում՝ անուն էր Ագաթոն՝ զի արասցէ քննութիւն վասն այսորիկ ։

Իսկ ապականիչն Ագաթոն արար ժողով և հաստատեաց զհերձուածն Մաքսիմոսի ըզկընի հարիւր քսան և եւթն ամի ժողովոյն Քաղկեդոնի . քանզի ասացին երկու բնութեանն յատուկ կամք և գործք արժան է լինել . և մեք ասեմք , եթէ և անձն եւս պիտի , զի լցցի չափ չարեաց նոցա , և մի կացցեն հեռի 'ի Նեստորէ ։

Ի թուին Ասորւոյ ինն հարիւր վաթսուն և վեց , և Հայոց իննսուն և եւթն , յերեսուն և եւթն ամին Տաճկաց , և յինն ամի իշխանութեանն Ութմանայ , կազմել ետ Մաւի յոյժ բազմութիւն նաւաց 'ի Տրապոլիս , երթալ 'ի Կոստանդնուպոլիս . և էին 'ի վերայ նաւացն երկու զինուորք որդիք քրիստոնէից . սոքա արձակեցին զգերիսն և այրեցին զնաւսն և ելեալ 'ի մի նաւացն ինքեանք գնացին 'ի Հռովմ , զի Փռանկ էին ազգաւ ։

Իսկ Մաւի եւս զայրացեալ կազմեաց առաւել քան զառաջինն . և ետ 'ի ձեռս

Բլշուրին զի գնասցէ 'ի Կոստանդնուպօլիս ։

Եւ լուեալ Թագաւորն Կոստոս, եթէ խորհին Տաճիկքն գնալ առ նա, հաւաքեաց զզօրս ըստ կարի և նաւս բաւականս, և չոգաւ 'ի վերայ նոցա 'ի Փիւնիկէ ընդ ծով և ընդ ցամաք. Կազմեցան և Հագարացիքն կրկնակի պատրաստութեամբ ։

Իսկ 'ի գիշերին յորում վաղիւն մարտն լինէր, զարթոյց 'ի քնոյ զայլն երազալոյծ և ասէ. տեսի զիս 'ի Թեսաղոնիկէ 'ի խրախութեան ։ Ետ պատասխանի այլն և ասէ. Երանի թէ ոչ ննջեալ էիր և ոչ տեսեալ. զի Թեսաղոնիկէն յաղթութիւն այլոց թարգմանի. և սաստեաց նմա Թագաւորն, և լռեաց. և 'ի վաղիւն խմբեցաւ պատերազմըն 'ի վերայ ծովուն ահեղ յոյժ, մինչ պղտորեցաւ յօդն փոշւով որպէս 'ի ցամաքի. և պարտեցաւ Կոստոս և փախեաւ, և անկաւ 'ի նմանէ քսան հազար արանց. և դարձոյց զՊտղոմէոս իշխանն առ Մաւի, զի մի գնասցէ 'ի Կոստանդնուպօլիս, և տացէ նոցա հարկս. և լուաւ Մաւի և դարձաւ ։

Բայց ստեաց ուխտին Կոստոս և ոչ առաքեաց զխոստացեալն. և դարձան Հագարացիքն 'ի Մուրիս յաւար. և եկն Պտղոմէոս և եբեր հարկս երեք ամի, և զԳրիգոր զորդին իւր պատանդ . և եհան զնոսա յերկրէն ։

Յետ այսորիկ սակս կասկածանաց եսպան Կոստոս զեղբայր իւր զԹէոդոսիէ (1) և եղեւ ատեցեալ 'ի զօրայն . և գնաց 'ի Հըռոմ՝ երեսաց նոցա . և նոքա յղեցին և կոչեցին անդրէն և յարեաւ 'ի գնալ . և չոգաւ մինչեւ 'ի Սիրակուսայ . և անդէն առաքեաց կոչեաց զորդիսն իւր զերեսին՝ ըզԿոստանդինոս , զՏիբերիոս , զՀերակլ . և ոչ ետուն զնոսա . այլ կոչեցին զնոսա Կեսարս . և անդէն պահեցին ։

Յաւուրս յայսմիկ սպանին Հագարացիք զՈւթման Թագաւորն իւրեանց յԱթրապ(2) քաղաքի վասն պղծութեանն իւրոյ . և առ զիշխանութիւնն Ալի փեսայն Մահմետի 'ի վերայ Բաբելոնի և Ասորոց ։

Իսկ Մաւի իշխանացաւ 'ի վերայ Եգիպտոսի , և զօր առեալ էր անձամբ . և կըռուեցան ընդ միմեանս միանգամ և երկիցս , և բազումք սատակեցան 'ի մէջ նոցա ։

Եւ զկնի այնորիկ ծառայ մի Մաւեայ չոգաւ նենգութեամբ առ Ալի և սպան զնա . և հնազանդեցան ամենեքեան Մաւեայ և փոխեցին զարքունիս իւրեանց յԱթրապեայ 'ի

---

(1) Մի օրի . Թէոդորիանէ Մի օրի . Թէոդորիկէ .

(4) Երկու օրի . յԱփրապ քաղաքի .

Դամասկոս։ Եւ տիրեաց Մաւի ամս քսան. և աւերեաց մինչև ՚ի Բիւթանիա զամենայն տունն Յունաց. և դողային ՚ի նմանէ ամենայն երկիր։

Իսկ Թագաւորն Կոստաս նենգեալ ՚ի զօրացն սպանաւ ՚ի բաղանիս յԱնդրէասայ ստրատելատէ ՚ի Սիկիլիա։ Եւ թագաւորեցուցին զՊատրիկն Մժէժ (1). այր քաջ և կորովի յիր և ՚ի բան հայ ազգաւ և բարեպաշտօն։

Իսկ որդի Թագաւորին Կոստընդին զօրաժողով լեալ սպան զնա. և թագաւորեաց ընդ եղբարս իւր։

Իսկ զօրն Տաճկաց եկին յԱփրիկէ. եւ գերեցին ութսուն հազար անձինս. և վերստին դարձան ՚ի Կիւլիկիայ, և սպանին ՚ի նոցանէ երեսուն հազար արանց յունական զօրքն, որ էր առաջին պարտութիւն նոցա։

Եւ այր մի ՚ի Բաղբաքայ Կալինիկէ անուն իմաստութեամբ իւրով գործեաց զնաւթըն (2). և այրեաց զնաւսն ՚ի ծովուն լցեալ զօրօք Տաճկաց, որ է սկիզբն գիւտին փայտի (3). և այրն ասորի էր ազգաւ։

---

(1) Որ է Մծէծ. Մի օրի. մեծ յոյժ։ Մի օրի. Մէժմէժ։

(2) Երկու օրի. զՆըֆթան

(3) Մի օրի. և այն եղև սկիզբն գտանելոյ զնաւթն. ուրգ ինչ գիտացեալ նոցա։

Յայսմ ամի երեւեցաւ ծիածանդ զգիշեր մի բոլորանդակ զերկնիւք ծածկելով զնա. և զանհի հարաւ երկիր ՚ի Նմանէ ։

Յերեք հարիւր ինն ամին Կոստընդեայ. ելին որիկայք և բնակեցան ՚ի լեառն Լիբանանու և կոչեցան ապստամբք. և Ասորիք անուանեցին զնոսա Ջ՛ուռճանս. (Թերեւս այսու պատճառաւ կոչին Վրացիք Ջ՛ուճանս ՚ի Փռանկաց. զի ապստամբեցին ՚ի Հայոց հաւատակցութենէ և ՚ի ծառայութենէ). և չոգան Տաճիկք և սպառեցին զնոսա սպանմամբ ։

Եւ ՚ի նոյն ամին Յովհաննէս որդին Մեժեժայ հալածեաց զԿոստանդին զեւթն ամիս յաղագս քինու հօր իւրոյ. և սպանաւ ՚ի Նմանէ. և հպարտացեալ Կոստընդին յաղթութեամբն արհամարհեաց զեղբարսն իւր. և զԼեւոն իշխանն ծայրակտուր արար զի բարեկամ էր եղբարցն. և եղեալ Նմա որդի, կոչեաց զանուն Նորա Յուստինանոս ։

Իսկ Մ՛աւի իշխանն Տաճկաց մեռաւ. և առ զիշխանութիւն Նորա Իզիտ (1) որդի Նորա ամս չորս, և մեռաւ. և շփոթեցաւ զօրն Տաճկաց զի Մ՛ուխթար ապստամբեաց ՚ի Բաբելոն, որ ասէր զինքն մարգարէ. եւ ՚ի յԱթրապ Աբդլլայ, և 'ի Դամասկոս որդին Իզիտի. և տապս ծեր մի տասց. ժողովեցարուք ամենեքեան, և զոր Աստուած ընտրէ նա է իշխան. և ժողովեցան, և գրեցին երեք անուն երեք նետ և ձգեցին. և մանուկ մի արձակեցին 'ի նոցանէ առնուլ զմինն, և որ գայցէ՝ այն լիցի Թագաւոր. և բերաւ անուն ծերոյն որ խորհեցաւ զայն. և իշխանացաւ ամ մի. և զկնի նորա Աբդլմելք՝ որդին Մրուանայ։

---

(1) Յայլ պատմագրութիւնս Եզիտ նշանակի ։

Մեռաւ և Թագաւորն Յունաց Կոստանդին. և Թագաւորեաց Յուստինիանոս որդի նորա։

Եւ Աբդլմելքն նեղեալ յապստամբացն արար խաղաղութիւն ընդ Յուստինիանէ ամս տասն, և խոստացաւ տալ նմա յամին հազար դահեկան և ծառայ մի և ձի մի, և Կիպրոս լիցի կիսովն (1) երկուցն. քանզի Հայք օգնէին Յունաց։

Յայնժամ և երկոտասան հազար հեծեալ բնակեալ էր 'ի Լիբանան ընդդէմ Տաճկաց, զորս անդրէն ածին Յոյնք։

Ի սոյն ժամանակս էր սուրբն Յակովբ. որ էր 'ի գաւառէն Անտիոքայ շնորհապայծառ և ուսումնասէր, որ եղև եպիսկոպոս

---

(1) Մի օրի. կիսուղէ։

Ուռհայոյ. սա չոգաւ եմուտ ընդ հրէութեամբ պատճառանօք, զի արար հնարս և թարգմանեաց զծածուկս նոցա յասորի լեզու. սա հանգեաւ յերկիրն Քեսենոյ(1). 'ի վանքն որ կոչի յանուն նորա սուրբ Յակովբայ։

Ի ժամանակին յայնմիկ գերեաց Յուստիանէ զԿիպրոս, և ժխորեցան ընդ նոսա Տաճիկք։

Եւ առաքեաց Աբդլլայն զամիրայն Ճժերոյ յերկիրն Յունաց 'ի Կեսարիայ. և վարձեցին Յոյնք զՍկլաւսն. և եկն 'ի վերայ նոցա, և կոտորեցան յԱրապկացն. և մնացեալ Սկլաւքն խնդրեցին ուխտ և խառնեցան 'ի Տաճիկսն եւթն հազար հեծեալ. և կացուցին զնոսա Տաճիկքն յԱնտաք և 'ի Կիւրխս և ետուն նոցա ապրանք և կանայս։

Ի թուին Ասորոց հազար վեց, և Հայոց հարիւր երեսուն և եւթն, եկին Յոյնք 'ի վերայ Տաճկաց մինչեւ յԱնտաք. և հարան 'ի նոցանէ. և մնացեալքն փախեան։ Եւ թիւ անկելոցն 'ի սուր յերկուց կողմանցն էր քառասուն բիւր. և էր տեղի պատերազմին Բուզիրիքն. որ մինչեւ ցայսօր երեւին ոսկերք նոցա տարածեալ ընդ դաշտն։

---

(1) Մի օրի. Քեսրոնոյ։ Մի օրի. Քեսնու։

Ի յերեք հարիւր եւթանասուն և եւթն ամին իւրեանց Տաճկունք բարձին զպատկերս 'ի դահեկանաց, և 'ի դրամէ և 'ի փողոյ վասն կարծեաց կռապաշտութեան · և եդին միայն զգիրն ։

Իսկ Յուստինիանոս խստացեալ սրտիւ կայր ընդ մեծամեծս իւր · վասն որոյ կալան զնա · և հատին զքիթ նորա և եդին 'ի բանտի · և եդին իւրեանց թագաւոր զԼեւոն ։

Սա եհան զԼեւոն Ափսիմարոս զօրագլուխն · և ինքն թագաւորեաց և հնազանդեաց զԿիկլաւսն · և եկն 'ի վերայ Տաճկացն 'ի Սամիռոն · և սպան 'ի նոցանէ հինգ հազար այր, և գերի բազում առեալ դարձաւ ։

Ի սոյն ժամանակս կացոյց Աբդլլայ երկու զօրագլուխս զՀաջաջ, և զՄահմետ այր անաստուած և չարադեւ · որ և զՀայկազունն իշխանս ազնուականս նենգիւ ժողովեալ 'ի Նախջաւան · և ածեալ յեկեղեցին այրեաց հրով, վասն ոչ առնլոյն յանձն ըղկրօնս նոցա · որք հանդիսակից և մասնակից եղեն սուրբ Անանիանցն · որոց մաղթանօք նոցա զթասցի Քրիստոս Աստուած յազգս և յեկեղեցիս ։

Զայսու ժամանակօք գովեցին առաջի Աբդլլայի այր մի Ուռհայեցի Աթանաս անուն, որդի Կումիայ իմաստուն և աստուածապաշտ, և կոչեաց զնա Աբդլլայ, և կացոյց զնա 'ի վերայ արքայութեան իւրոյ մատակարարս. և յաջողեցաւ նմա, և եգիտ շնորհս առաջի նոցա. և տայրն նմա յամին վաթսուն հազար դահեկան. և ամենայն զօրն Տաճկաց ըստ թուոյ իւրեանց տայրն մէն մի դահեկան. և շատ մխիթարութիւն և դիւրութիւն եղեւ սա քրիստոնէից։

Սա շինեաց երկու եկեղեցի յանուն սուրբ Աստուածածնին, և յանուն Թէոդորոսի, բերեալ անդ զնշխարս նորա յԱւխայիտոյ, որ է Ապլասթայն. և 'ի մէջ եկեղեցեացն երկուց շինեաց գետնափոր որքատունս. և դաստառակն Քրիստոսի էր ընդ իշխանութեամբ Տաճկաց. գնեաց 'ի նոցանէ յիսուն հազար դահեկանի և եդ անդ. և սանդղօք եղանէին և իջանէին անդ. և յաւուր տօնին իւրոյ հանէին 'ի տեսիլ տօնողացն մինչեւ 'ի ժամանակս Յովհաննէս պատրիարքին՝ որ եդ զնա 'ի մէջ երկուց վիմաց, և ամփոփեաց և անյայտեաց զտեղին ոչ ուրեք գիտելով. և գրեաց թէ արարի վասն երկիւղի անօրինաց. և մի ոք ելցէ 'ի խնդիր զի ոչ գտանէ զնա։ Բայց թէ իրաւի է զոր Հռոմայեցիքն ունին ես ոչ գիտեմ։

Իսկ Յուստիանոս զկնի տասն ամի արգելման իւրոյ ել 'ի բանտէն և գնաց փախստեայ առ Թագաւորն Խազրաց Խաքան. և ընկալաւ զնա խնդութեամբ. և ետ նմա կին զդուստր իւր. և օգնեաց նմա զօրօք և դարձաւ 'ի Կոստանդնուպօլիս. և փախեաւ Տիբերիոս. և զԼեւոն եսպան. և կոտորեաց զարքունի արսն, և վեց հազար գերի տաճիկ ապատեաց, և գնացին խաղաղութեամբ. Եւ արար զօրս բազում եւ առաքեաց ընդ ծով, ածել զկին իւր, և խեղդեցան յալիս ծովուն. և լուեալ Խաքան տրտմեցաւ, և առաքեաց զկին նորա, և զՏիբերիոս որդին և մեղադրեաց աներով. անմիտ, ընդէ՞ր էր բազմութիւն զօրացն 'ի կորուստ. կարծէիր եթէ արգելո՞ւմ զկին քո. Թէպէտ կորուսեր զորդին իմ, եւ ոչ ատեցից զքանս իմ:

Ի թուին Ասորոց հազար տասն և ութն և Հայոց հարիւր քառասուն և ութ, շինեցաւ Մամուեստիայ 'ի Մսլիմայ ընդարձակս, և կացուցին 'ի նմա զօրք ընդդէմ Յունաց:

Զկնի Աբդլլայի իշխանացաւ Տաճկաց Աբդլմելք. և յետ նորա Վլիթ ամս ինն. յորոյ աւուրս հալածեաց Յուստիանոս զազգս Հայոց յիշխանութենէ իւրմէ վասն ուղղափառութեան. և խնդրեցին Տաճիկք և բնակեցուցին զնոսա 'ի Մելտենի և 'ի Միջագետս. և եղեն մեծ ամրութիւն ուղղափառաց Ասորոց. և շինեցան անդ գիւղք և վանորեայք, և սնապատք նոցա. և կան մինչև ցայսօր։

Իսկ Մահմէտ արար բազում մարտիրոս յերկրին 'ի հաւատացեալ Տաճկացն. և զգըլխաւոր նոցա ազգի ազգի հարուածովք եսպան. և ընկէց զնա կէշ. գազանաց. և ոչ մերձեցաւ 'ի նա գազան, և ոչ թռչուն, և ոչ ապականեցաւ. և զաւուրս երեսուն, և բուրէր 'ի նմանէ հոտ կնդրկի. և յայնմանէ յորդորեցան 'ի մարտիրոսութիւն և մեռան հազարք և բիւրք։

Իսկ Մալէմ շոգաւ 'ի Կապադովկիայ. և եկին ընդդէմ նորա զօրքն Յունաց, և անկան 'ի Տաճկաց յանողորմ սուրն. և մեռան քառասուն հազար հեծեալ թող զգերեալսըն. և առաւ Տանայս քաղաք և Տարանդաբերդ. և դարձաւ Մալիմ 'ի Կիլիկիա. և առ զՈռձումբերդ. և զՊօտանդա քաղաք և այլ բազում տեղիս։

Ի սոյն ժամանակս զօրացաւ Փիլիկոսս, և եսպան զՅուստինիանոս և զորդի նորա ըզՏիբերիոս, և թագաւորեաց։ Էր սա վարժ գրովք, և ջանաց նզովել զվեցերորդ ժոզօճն և բառնալ զաղանդն Մաքսիմոսի, և ոչ եղե՛ն ձեռնտուք նմա խմորեալքն յաղանդին հպարտութեան ։

Ի սոյն ժամանակս ոգի պղծութեան շարժեաց զՎլիթ. և հրամայեաց բռնադատել զՔրիստոնեայս յուրացութիւն. և զոչ հաւանեալսն սպանանել յեկեղեցւոջ իւրեանց. և նահատակութեամբ պայծառացան բազմութիւնք յոյժ արանց և կանանց ։ Եւ չոգաւ Մսլիմ յԱմասիայ և առ զնա և գնաց մինչև յԱնտաք Պիսիդեայ, և մարտեաւ ընդ նմա և առ զնա. և յերկրորդ ամին Փիլիկտոսի հանին զաչս նորա և աքսորեցին. և թագաւորեաց Անաստաս ։

Եւ զկնի Վլիթայ թագաւորեաց Տաճկաց Սուլիման ամս երկու. յորում ժամանակի առ Մսլիմ զերկիրն Գաղատացւոց ։ Իսկ Անաստաս զկնի երկուց ամաց փախեաւ ՚ի Սինիկիայ, զի կամէին սպանանել զնա. և թագաւորեաց Թէոդոսիէ ։ Յայսու ժամանակօք գնաց Մսլիմ յերկիրն Թուրքաց. և բազում աւարաւ դարձաւ ։

Եւ դարձեալ գնաց ՚ի վերայ Ասորոց (1) և առ զԱրաքմիայ և զՍադրիա և գերեաց. հպարտացաւ ՚ի միտս իւր. և խորհեցաւ գնալ 'ի Կոստանդնուպօլիս. և առ ընդ ինքեան երկու հարիւր հազար հեծեալ. և նաւս երկու (հազար)(1) և ելից հեծելօք. և էառ այլ ևւս երկոտասան հազար Բուլղարս և եբարձ ռոճիկս վեց հազար ուղտուց և վեց հազար իշուց. և եկին ընդ նմա Օեհետք երեսուն հազար. և զայս ամենայն բազմութիւն առաքեաց առաջի իւր ընդ ծով և ընդ ցամաք. և ինքն երկոտասան հազարաւ գայր զհետ նոցա մեղմով։ Իբրև եկեալ նստաւ 'ի Նիկիայ, և ընդ որ անցանէին զօրքն՝ տային բան խաղաղութեան, և ոչ մեղանչէին ումեք։ Լուաւ զայս զօրագլուխն Յունաց Լեւոն. և չոգաւ առ Արալիմ 'ի ծածուկ. Իբրև ուխտեաց նմա Ասլիմ գնել զնա Թագաւոր, զի ձեռն տացէ նմա, և դարձաւ Լեւոն 'ի քաղաքն։

---

(1) Երկու օրի. Աօրից ։

Իբրև իմացաւ Թագաւորն, և կալաւ զընտանիս նորա. և փախեաւ Լեւոն և չոգաւ առ Սուլէյման Թագաւորն Տաճկաց, և առ 'ի նմանէ վեց հազար հեծեալս. և եկն (իջաւ) էջ 'ի վերայ Լամուրին քաղաքի. և խօսեցաւ գաղտ յականջս քաղաքին եթէ նենգութեամբ շրջիմ ընդ սոսա։ Իբրև լուեալ թագաւորին առաքեաց առ նա զընտանիս նորա և ասէ ցնա. մի մեղանչեր քաղաքիդ 'ի գինս ընտանեաց քոց. և եթող զքաղաքն, և գնաց 'ի վերայ Կոստանդնուպօլսի Լեւոն։

---

(1) Մի օրի. եռ (5000) ասելով միայն երկու։
Այլ օրինակք լռէն զհազար.

Եւ եկին զօրքն Յունաց ընդդէմ Լեւոնի, և յղեցին պատգամս և ասեն. Թագաւորեա մեզ մերովք յօժարութեամբ և երդուան նմա. և առաքեն առ նա զորդին Թէոդոսի. և հաւատաց նոցա. և ասէ. ընդ զօրն Տաճկաց կացէք մնացէք աստ, և ես մտից 'ի քաղաքն. և արարից զկամս ձեր։ Եւ գնաց Լեւոն 'ի Կոստանդնուպօլիս քարոզիւք թագաւորութեան. և լուաւ Թէոդոսի և կտրեաց զհերս իւր. և եղեւ եկեղեցական։ Եւ Լեւոն թագաւորեաց. և ամրացոյց զքաղաքն։

Եւ իմացաւ Մսլիմ թէ խաբեաց զնա Լեւոն, բախեցաւ 'ի վերայ ոսկի դրանն չորս հազարօք. և օգնեաց Տէր, և միայն զերծաւ Մսլիմ և կոտորեցան զօրքն որ ընդ նմա չորս հազարքն։ Եւ 'ի միւս կողմանէն անկան երեսուն հազարք. և եհաս 'ի վերայ նոցա ձմեռն. և անկաւ սով 'ի բանակն նոցա։

Եւ մինչ յայսոսիկ էին մեռաւ Սուլիման թագաւորն նոցա, և առ զթագաւորութիւնըն Օմար. և լուեալ զայս դարձաւ Մոլեմ ամօթով յոյժ սակաւուք. և վառեալ քինու զբազումս կոտորեցին 'ի քրիստոնէից. զի յանկցեան (1) զօրք նոցա 'ի պատճառս աղօթից եկեղեցւոյ.

Յայսմ ժամանակի ասորի մի Սեւերոս անուն սկսաւ մոգութեամբ խաբել զազգն Հրէից թէ նա իցէ Քրիստոսն. և պարտ է ժողովել բազում գանձս, և երթալ թագաւորել յԵրուսաղէմ. և հաւատային բազումք. և կուտեաց բազում ինչս.

Եւ լուաւ Օմար և կոչեաց առ ինքն. և կատակաբանութեամբ կակղացոյց զբարս նորա, որ էառ զինչքն (2) և եթող զայրն 'ի կամս իւր.

Իսկ այսու պատճառաւ եդ օրէնս Օմար ոչ ընդունել զՔրիստոնէից վկայութիւն. և ոչ հեծանել երիվար թամբօք. և թէ ըսպանանէ Տաճիկ զքրիստոնեայ, ոչ մեռցի ինքն. այլ տացէ գինս արեանն հինգ հազար դրամս. Բայց եկեղեցականքն ասէ մի տացեն հարկս յարքունիս յամենայն ստացուածոց իւրեանց. և Տաճիկքն մի արբցեն ասէ գինի.

Եւ մեռեալ սորա՝ առ զթագաւորու-

---

(1) Երեք օրի. անցան. (2) Երկու օրի. զերքն.

Թիւնն Եզիտ ամս չորս ։ Սա առաքեաց ընդ ամենայն երկիր և ջնջեցին զնկարս պատկերաց յեկեղեցւոյ 'ի գրեանց 'ի հանդերձից յարձանաց և յամենայն իրաց . և ետ նմա իրաւունս Լեւոն արքայն Յունաց . և Թափուր արար 'ի պատկերաց զաշխարհն Յունաց . և տրտնջէին ընդ գործ նորա բազումք , և ոչ հաճէին ։

Դարձեալ նեղեաց Լեւոն զՀրեայսն դառնալ 'ի քրիստոնէութիւն կամ մեռանել. և յոլովք մկրտեցան , և ոմանք սպանան . և կէսք փախեան ։

Մեռաւ Եզիտ և Թագաւորեաց Հեշմ ամս տասն և ինն . այր չար և ագահ , որ և հարկապահանջութեամբ հատոյց զերկիրն 'ի ցանկութիւն մահու (1) ։

Սա եհան ջուր յԵփրատայ և 'ի վեր քան զԿալանիկէ ոռոգանել զդաշտս, սա էառ զանմատոյց բերդն Շիղէ յերկիրն Կիւլիւկեցւոց և զԱփոկէսարն 'ի վերայ Դայլն գետոյ ։

Յայսմ ժամանակի էին Աթանաս պատրիարքն Անտիոքու , և Յովհաննէս իմաստասէրն հայրապետն Հայոց. և Սիւնիք և Վասպուրական և աղուանք և Սասանունք և Յակոբիկ Ասորիք էին 'ի մի դաւանութեան առաքելական հիման. և վասն այսորիկ երթային Ասորիք առ Սասանօք առ Հայք և առէին մեք սուրբ Գրիգորի դաւանութեամբն եմք, և առնուին 'ի նոցանէ ձեռնադրութիւն, և ոչ գոյր հակառակութիւն. և վասն այսորիկ կոչեցան Գրիգորիկք:

---

(1) Ոմանք՝ 'ի գրչուն մա. հա .

Յայնժամ երէց մի Բարշապուհ անուն. և սարկաւագ մի Գաբրիէլ անուն 'ի Մուփարկնայ եղեն բանսարկուք 'ի մէջ Հայոց, և Ասորոց. զՀայոց ասէին թէ Յուլիանոսիտք են և զԱսորոց թէ ապականացու ասէին զմարմինն Քրիստոսի. այլ և աղտորումն Եզրի մնացեալ էր 'ի Հայս 'ի տեղիս տեղիս առ բաղում:

Իսկ Յովհաննէս այր սուրբ և սքանչելագործ և լուսաւոր բանիւ գրեաց առ Աթանաս առաքեալ առ նա եպիսկոպոս իւրեանց դաւանութեան գրով. և ինքն եկն 'ի քաղաքն Մանազկերտ Հայաստանօք. և վեց եպիսկոպոսք գնացին յԱսորոց, եւ ժողովութիւնք երիցանց. և արարեալ քննութիւն, ամենք յԱսորոցն ասեն զի՞նչ է որ գրեալ է 'ի գործս Առաքելոցն եթէ «Աստուած յարոյց զՅիսուս 'ի մեռելոց և այսուհետեւ ոչ եւս դառնալոց է յապականութիւն». և խնդրեցին զօրինակն Հայոց և ոչ գտին զայտուհետեւն. բերին և զԱսորոյն և ոչ անդգտին. և նզովեցին զՅուլիանիտսն և զապականացու խոստովանողսն զՔրիստոս, և ըզԲարշապուհ և զՊաբրիկէլ. և զԱղրիտսն. և եղեն Հայք միադաւանք ’ի վերայ ճշմարտութեանն. և Յակոբիկ Ասորիք՝ դաշնակիցք նոցա:

Բայց սակս տօնից և արարողութեանց գտաւ զանազանութիւնս ինչ. որոց ոչ արարին կարի փոյթ, և արձակեցան սիրով: Եւ եղեւ այս ’ի հազար երեսուն և հինգ թուին Ասորոց և Հայոց հարիւր վաթսուն և վեց. այլք զՀայոցն հարիւր երեսուն և հինգ ասեն:

Յայնմ ժամանակի ելին Թուրքք յերկիրն Արթուխի (1) և առին քաղաքս բազումս. և գնաց Մսլիմ ընդ առաջ նոցա. և անկան յերկուց կողմանցն հազարք և բիւրք: Եւ ապա արարին սէր ընդ միմեանս. և թողին Տաճիկք զառեալ քաղաքսն ’ի նոսա և դարձան: Եւ այս եղեւ սկիզբն ելանելոյն Թուրքաց:

Ի սոյն ժամանակս եղեւ անձրեւ սաստիկ, որ կարծեցին թէ բացեալ են սահանք երկնից. և վերստին անկաւ պարիսպն Ուռհայոյ: Եւ չոգաւ Հեշմ առ Հռովմովք. և առ զՃ՛ենձերայ քաղաքն, և զՏփխիս. և առեալ գերի բազում դարձան ։ Ընդ հռոմայեաց Հեշմ սպանանել զգերեալն առհասարակ. և եղեւ յաղագս կոտորելոցն քննութիւն ՚ի յՈւռհայ թէ իցե՞ն մարտիրոսք թէ ոչ. և ոչ յայտնեցաւ իրքն, այլ տարակոյս մնաց ։

---

(1) Երեք օրի · Արտուղի:

Իսկ թագաւորն Լեւոն ՚ի քսան և չորս ամի արքայութեան իւրոյ, էառ զդուստրն Խազրաց թագաւորին որդւոյ իւրում Կոստանդիանոսի ՚ի կնութիւն մկրտելով զնա. և ետ զթագն յորդին. և մեռաւ ՚ի նոյն ամի ։ Բայց Արտաւազ փեսայ թագաւորին հալածեաց զԿոստանդիանոս, և ինքն թագաւորեաց ։

Մեռաւ Հեշմ թագաւորն Տաճկաց. և առ զթագն(1) Վլիթ, որ արար չար տանն Հեշմայ. և եդ զօրագլուխ զԱբաս ոմն. և արկ զնա ՚ի ծոմն ոսկեղէն ՚ի գանձս Տաճկաց. որ բաշխեաց զայն առ աւելապէս և թագաւորեաց ։

Բայց յոլովք ոչ ընդունէին զի հարճորդի էր. և Վլիթ եղեւ սատեցեալ վասն զազրագործութեան. և խոտեալ(2) զերկրորդին թագաւորեցուցին զԻզիտ եղբայրն Վալիթայ 'ի Դամասկոս. որ և կտրեաց զգլուխ եղբօրն. և եդեալ 'ի սայլի և ընդ նմա տիկս գինւոյ, շրջեցուցանէին ընդ քաղաքն ։

---

(1) Մի օրի. զթագաւոր. (2) Չորք օրի. խոցեալ։
քութիւնն.

Եւ յետ այսորիկ մատեան ընդ միմեանս ամիրայքն, և խնդրելով իւրեանց թագաւորութիւնս։ Մրվան՝ զՀայս էառ, և զԿարոս Վախդն. և զԽորասան՝ Սարիթն և զԱփրիկէ Աբդհէլ և Իզիտ մեռաւ յետ եւթն ամսոյ. և առ զտեղի նորա Աբրեհիմ. այր բարեբարոյ և ողորմասիրտ. և սակաւօրեայ եղեալ մեռաւ ։

Եւ Մրվան ելեալ 'ի Հայոց. եկն և դիպեցաւ եղբօրն Սուլիմանայ 'ի վերայ Եփրատայ. և կռուեցան անդ. և անկաւ 'ի մէջ նոցա երկոտասան հազար այր ։ Եկն Մրվան 'ի Դամասկոս, և թագաւորեաց անդ. և առ զգանձն թագաւորութեանն և բարձեալ ընդնա երեք հազար ուղտ եբեր 'ի Խառան. և չոգաւ 'ի Հեմս, և յամիսս չորս էառ զնա. և քակեաց զպարիսպ նորա ։ Նոյնպէս էառ զԲալբաք, և քակեաց զնա. առ զՍլիմնուէ և գնաց 'ի Պարթեւս, որ կոչի Բահլ՝ և տիրեաց նմա ։

Իսկ Ալի որդին գնաց 'ի Խորասան. և 'ի պատերազմելն Տաճկաց ընդ միմեանս խաղաղացան Յոյնք. և խորագիտութեամբ իւրով օգնականս գտեալ Կոստանդիանոս եկն 'ի Կոստանդնուպօլիս . և կուրացոյց զԱրտաւալ . և թագաւորեաց դարձեալ, և եղեւ նմա որդի . և կոչեաց զանուն նորա Լեւոն

ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս որ նշանք մեծամեծք և ցոլմունք, և փոշի գայր. և 'ի ծովն խռովեալ սիւնք հրեղէնք երեւեալ . և եկն կարկուտ, կշիռն երկու լիտր, և Ջամբրի հարկապահանջութեան անյիշելի ։

ՅԱՐՈՒՄ աւուրս եղեն նշանք մեծամեծք 'ի սկիզբն մարտի ամսեան մինչեւ ցելսն ապրիլի . օդդ փոշի տեղեաց, և տիւն գիշեր կարծէր . և ապա երեւեցան երեք սիւնք ամպեղէնք խառնեալ ընդ հրոյ զերրիս աւուրս . և ելանէին և իջանէին 'ի վայր։ Եւ զկնի սորա երեւեցաւ աստղ մի անծանօթ 'ի չափ լուսնի և ելանէր յարեւելից ընդ արեգականն . և երթայր յարեւմուտս երեք օր տեսանելով մարդկան ։ Եւ զամենայն գիշերս լինէին ցոլմունք, և թռչէին հանդէպ յարդգողին ։ Եւ զկնի նորա եղեւ շարժ սաստիկ և պատառեալ երկիր ելին աղբիւրք 'ի գոյն արեան ։ Եւ յետ նորա խռովեցաւ ծովն մեծ։

և եռայր յանդնդոց, և բարձրանայր ալիք նորա իբրև զերկինս. և բազումք 'ի կենդանեաց մեռան մարդ և անասուն 'ի ձայնէ որոտման. որ ծովեզերեայք էին կործանեցան տունք և ապարանք. և բերդ մի որդւոցն Բմնայ որ կայր 'ի մէջ ծովուն խլեցաւ յատակաց. և բուրգն մեծ զոր շինեաց Սողոմոն 'ի վերայ ջերմկին որ գտաւ յաւուրս նորա 'ի ծովուն՝ փլաւ և ընկղմեցաւ:

Եւ յետ նորա եղեւ սով սաստիկ. և ապա մահտարաժամ փողացաւութեամբ, որ մեռանէր 'ի Բասրա աւուրն քան հազար անձինս. և յերկիրն Մադիամու կատաղեցան կապիկք և ապականեցին զբազմութիւն մարդկան յոյժ:

Զայս ամենայն տեսեալ Թագաւորին Տաճկաց, զահի հարաւ և զղջացաւ սիրտ նորա. և եհան քարոզ ընդ ամենայն երկիր վասն ապաշխարութեան, զոր և արարին իսկ պահս և աղօթս հսկմամբ գիշերաց, և ողորմութիւնս և արտասուս. քանզի հաւատացին թէ կատարած ամենայն երկրի հասեալ է յաղագս նորանշան և ազգի ազգի պատուհասիցն մանաւանդ վասն շարժմանն անծանօթի. զի գիւղ մի յոտն լերինն Թաբովրայ նոյն տեղեաւն 'ի բաց վազեաց միլս երկու.

և շինուածքն ոչ խախտեցան. և ոչ պակասեաց հաւ մի։ Եւ Մնբէճ քաղաք ընկղմեցաւ ՚ի տեղւոջն. և երրորդ (1) մասն Կոստանդնուպոլսի անկաւ. և Նիկիայ բովանդակ տապալեցաւ. և այլ բազում քաղաքք Բիւթանիայ։ Իսկ Քաղկեդոնիտք ոչ զղջացան և ոչ դադարեցին ՚ի չարեաց իւրեանց. քանզի այնք որ կային յԱնտաք կաշառեցին զՄրվան. և եդին պատրիարգ իւրեանց ըզԹէոփիլէ Մաղմանի որդի, որ գնաց ՚ի Խառան. և առ զեկեղեցին Ասորոց ուղղափառաց. և արքեպիսկոպոսն նորա ձգեաց զձեռըն իւր և եհար յեկեղեցին ասելով. ո՛վ պղծեալ խորան, վաղիւն սրբեսցիս օրհնութեամբ և ուղղափառ պատարագաւ։ Եւ ընդ յելանել բանին վառեցաւ հրով և այրեցաւ. և անկաւ ահ ՚ի վերայ նոցա և առեալ զմխարեալ ոսկերան փախեան ՚ի գիշերին։

Յայնմ ժամանակի եկն Աբդլայ որդին Ալեայ ՚ի Խառան. և փախեաւ Մրվան յերեսաց նորա առեալ ընդ իւր ոսկի բարձեալ վեց ուղտու. և գնաց յԱսկաղոն, և անտի յերկիրն Նուբեայց. և Աբդլայն զհետ նորա. և եհաս նմա ՚ի Նասուան (2) ՚ի վերայ Նեղոս գետոյ և եսպան զՄրվան. և առ զամեծայն ստացուածս նորա զժողովեալն ագահութեամբ. և թագաւորեաց միայն Աբդլլայն:

---

(1) Մի օրի. երկրորդ մասն

(2) Երեք օրի. ՚ի Նինուէ.

Եւ մինչ նստէին 'ի տեղի մի առ ընթեր գերեզմանաց, եղեւ թնդմունք ինչ. և բացան գերեզմանք ութ. և ահա ելանէին արք իբրեւ ծերք և ներկեալ զմօրուս. և մինչև ցմէջն 'ի դուրս եկեալ զտեղի առին զերիս աւուրս. և հարցանէին զնոսա և ոչ խօսէցան. և ձանձրացեալ թողին զնոսա. և ոչ ոք իմացաւ թէ զի՞նչ նշանակէին. և ծածկեցին հողով:

Իսկ թագաւորն Յունաց Կոստանդիանոս վարժ էր գրովք և իմաստուն միտօք. վասնորոյ ծածկապէս ունէր զուղղափառութիւն. և զի մեռաւ կին նորա, ստիպէին զնա առնուլ կին. և ասէ ցնոսա ոչ է պարտ երկրորդ կնաւ թագաւորութիւն առնել. ապա զորդիսդ իմ դի՛ք թագաւոր. և արարից զոր ասէքդ. և թագ եդին Լեւոնի. և հայրն խնամէր զաշխարհն: Եւ առեալ զօրս չոգաւ 'ի Սելաւնի. և եհան անտի զհայս և զԵռորիս, և տարաւ յիշխանութիւնն իւր աւելով. քրիստոնեայք են առ մեզ կացցեն իբրեւ զեղբայրս մեր. և ասեն Յոյնքն առեն զմեզ դոքա և անիծանեն. և ոչ են եղբարք.

և խնդրեաց Թագաւորն դաւանութիւնս. և ետուն գրով ՚ի վերայ միոյ բնութեանն և կամաց գործոց նոյնութեան Բանին :

Եւ տեսեալ Թագաւորին յոյժ գովեաց. և ետ հրաման ժողովոյ. և յորժամ եղև ժողովն զոր եւթներրորդն կոչեն, և արարին քննութիւն, և ոչ կարէին աղարտել զուղղափառացն խոստովանութիւնն. և ասէ Թագաւորն. երկու իրք կամ՝ են ինձ. եթէ բառնայք զժողովն Քաղկեդոնի և ըզպատկերապաշտութիւնդ. և անկան յոտս Թագաւորին և ասեն. չէ հնար այդմ լինել. բայց եթէ սրոյ ճարակ տայցես զմեզ. և ասէ Թագաւորն. երդնում յԱստուած, եթէ ոչ բառնայք գոնէ զՄաքսիմոսին զնեստորականին, ես ոչ եղէց ընդ ձեզ :

Եւ լուան նմա և նզովեցին զՄաքսիմոսին, որ երկու կամս և գործս ասէր, Քրիստոսի : Եւ վասն այնորիկ բազումք ՚ի Յունաց ոչ մեծարեն զեւթներրորդ ժողովն : Եւ ասէ Թագաւորն. ընդ ուղղափառսն գնացէք յաշխարհն ձեր, ուստի հանի զձեզ. զի մի զկնի մահուան իմոյ չարչարեսցեն զձեզ. և ետ նոցա պաշարս և պարգևս, և գնացին խաղաղութեամբ :

Ի նոյն ամի եկն մարախ և կերաւ զզաւառս բազումս. և 'ի գալ միւսոյ ամին եկն կարկուտ անլուր և անտես. և փլոյց բազում շինուածս, և սպան յոյժ բազմութիւն կենդանեաց վայրենեաց և ընտանեաց. և էր կշիռն լիտրս երկու ։

Ի նոյն ամի մեռաւ Աբդլլայ. և թագաւորեաց Աբուջաբր. և շինեաց զՄելտենի, և զԿարնոյ քաղաք. զոր ոմանք 'ի Յունաց Կալանիկոն կոչեն, և Տաճիկք Արզրում. որ կոչի Մոշտնկոյ կամ Արեւելք ։ Շինեաց և զԱնի որ է Կամախ. քանզի աւերեալ էր զոսա Կոստանդիանոս Թագաւորն Յունաց ։ Եւ զկնի շինելոյն զքաղաքս զայսոսիկ առ զԱփրիկէ. և չոգաւ առ զԻաբբրաստան աշխարհն Պարսից, և զշրջակայսն ամենայն, և դարձաւ և առ զՄէ քաղաք ամուր ։

Ի թուին Ասորոց հազար եւթանասուն և երեք. և Հայոց հարիւր խնսուն և չորս, շինեաց Ջամբրի (1) 'ի վերայ Տիգրիս գետոյ 'ի վեր քան զԿատիզըն (2) քաղաք և կոչեաց զնա Բաղդատ որ թարգմանի միջոց. այսինքն Պարսից և Ասորոց ։ Յորում ամի ել Բուրգն հաւաքածոյ որ է Մարն. և գերեաց 'ի Գազանայ (3) յիսուն հազար անձինս ։

---

(1) Երեք օրի. Ջաբր ։

(2) Երկու օրի. Կատիքըն.

(3) Մի օրի. 'ի Գօզանայ.

Ի սոյն ժամանակս համբաւեցաւ կին մի թէ ՚ի ծնանելն կաթն ոչ եկեր ՚ի մօրէն. և զարգացաւ հասակաւ ՚ի չափ երեսուն ամաց և չկերաւ ինչ. և ածաւ առաջի Գաբրի. և գտաւ որպէս համբաւն էր. և արար Գաբր ժողով իմաստնոց, գիտնոց զի իմասցին վասն նորա. և ասացին թէ երբէք չէ լեալ. և մեք ոչինչ կարեմք իմանալ. սակայն գործ նշանի Տեառն Աստուծոյ է։ Յորմէ նշանէ խաբեալ զօրքն Պարսից եդին իւրեանց թագաւոր և ապստամբեցին։

Եւ գնաց ՚ի վերայ նոցա զօրն Տաճկաց, և հարան ՚ի նոցանէ. և դարձեալ գնաց Գաբր ՚ի վերայ նոցա. և կոտորեաց քառասուն հազար անձինս. և սպան զթագաւոր նոցա։ Եւ դարձաւ ՚ի Միջագետս. և կացոյց գործակալս երկու հարկապահանջս։ Հրեայ մի Մուսի անուն. և Տաճիկ մի Սուլէման անուն. որ ՚ի դրունս մահու հասուցին զաշխարհս անողորմ՝ տանջանօք՝ վասն Դիմոսին անիրաւութեան։ Եւ հատաւ ոսկի և արծաթ յաշխարհէ. և փորէին զգերեզմանս կռապաշտից և գտանէին ինչս և տային ՚ի հարկն։

Սովորեցին և Յոյնք զնոյն առնել. և բացին զգերեզման Ակիմիդայ չքնաղ համանուն քաղաքին, և գտին յոլովութիւն ոսկւոյ լուսատու ականց. և ազդեցին Թագաւորին Կոստանդեայ. և չոգաւ ետես զայն ամենայն. և ոչ կամեցաւ առնուլ ինչ այլ կոփածու վիմօք փակեաց զնա. և ասէ. զինչ գարշագոյն քան զայն իցէ, յորժամ կենդանին կողոպտիցէ զմեռեալս: Եւ սաստեաց և սպառնացաւ, եթէ այլ ոք զայն մի իշխեսցէ առնել:

Իսկ 'ի չարագոյն ագահութենէն Զամբրի վաճառէին զէշ և զեզն ընդ դրամի միոյ. և զողայս ընդ հինգ դրամի. զի տային հարկս պահանջողացն: Որ և զկնի քան ամի սատակեցաւ. և հանգեաւ երկիր 'ի չարեացն Զամբրի. և Թագաւորեաց Մահադի որդի նորա:

Եւ 'ի նմին ամի մեռաւ Թագաւորն Կոստանդիանոս Թագաւորեալ ամս երեսուն և չորս. և հաստատեցաւ Լեւոն որդի նորա որ ընդ նմա էր Թագաւորեալ:

Իսկ Մահադի ցրուեաց զամենայն ժողովեալ ստացուածս հօր իւրոյ. և հաւատաց աստեղագիտաց, և ուսաւ զարուեստն. և վարէր նոքօք:

Եւ լուեալ Լեւոնի առաքեաց նմա ընդգիրսն Անիայ և Ամրիայ հակառակացն

Իսրայելի. և խնդաց յոյժ. և կախարդութեան ետ զանձն :

Եւ եկն Մահադի ՚ի Հալապ. և ելին ընդ առաջ նորա երկոտասան հազար քրիստոնեայք ՚ի պատիւ նորա : Իսկ նորա նախանձեալ խոցեալ ընդ բազմութիւն նոցա. ասաց մի յերկուց առաջի կայ ձեր. կամ մեռանիլ կամ ուրանալ զՔրիստոս. և հինգ հազար այր ՚ի նոցանէ տաճկացան. և եւթն հազարքն վկայեցին Քրիստոսի Աստուածութեան և մեռան. և կանայք և տղայք ուրացողացն թողին զնոսա և գնացին :

Եւ Մահադի գնաց յերկիրն Արաբիոյ. և առաքեաց զԱհարոն զորդին իւր յԵփեսոս յաւար :

Որ և գերեաց անտի եւթն հազար (1) այր. բայց պակասեաց ՚ի զօրաց նորա չորս հազար այր :

Եւ Լեւոն առաքեաց զօրս ՚ի Միջագետս. և ետ ածել անտի զքրիստոնեայսն ըզՀայս և զԱսորիս ուղղափառս, և բնակեցյան ընդ նմա ՚ի Թիրակ : Եւ գնաց նա ՚ի ճանապարհս հօրն իւրոյ զի ոչ երկրպագեաց պատկերաց. և ոչ հաղորդեցաւ ՚ի Քաղկեդոնացւոցն. վասն որոյ ոմանք ՚ի պատմագրուրացն Յունաց տրտնջելով, Յակոբիկ կոչեն զնա։ Որ և թագաւորեալ ամս տասն մեռաւ։

---

(1) Մի օրի. հինգ հազար:

Եւ թագաւորեաց Կոստանդին որդի նորա երկոտասանամեայ. և Իրինէ մայր նորա ընդ նմա։

Եւ լուեալ Ահարոնի եկն յերկիրն Յունաց և դարձաւ ամօթով։

Եւ ՚ի սոյն ամի շինեաց Ալի Մահադեայ հրամանաւ զՀադ քաղաք յանուն նորա յերկիրն Մարաշու. և ոչ յաջողեցաւ նմա. քանզի մեռաւ Մահադի. և թագաւորեաց Մուսի որդի նորա ամս երկու։

Եւ յետ նորա առ զթագաւորութիւնն Ահարոն եղբայր(1) նորա, որ կոչեցաւն Ռազիտ. որ և հրամանաւ սորա շինեաց Աբդըլմելք զՀաշիդ։

Իսկ Հռովմական զօրացն եկեալ աւերեցին զՀադ։ Եւ Ահարոն սկսաւ շինել զնա կրկին. և կազմեաց սպայս երկու հազար։ Եւ քակեաց զեկեղեցին, որ կայ յարեւմտից Շնձէ գետոյն. որ է մերձ Սամուսատայ. և ետ տանել զքարինս նորա։ Նոյնպէս քակեցին զառաքելաշէն եկեղեցին որ ՚ի Քեսոն եւթն և տասն խորանի(2). և սոքօք շինեաց զպարիսպն Հաթայ։

---

(1) Մի օրի. որդի նորա։ (2) Երկու օրի. Բժ. խորանի։

Ի սոյն ժամանակս գտաւ յՈւռհայ տապան մի Հրէի որ ունէր գիր հազար ամաց հետէ. և այս է գրեալն 'ի նմա. Թէ «Աստուած մարմնով ծնցի 'ի կուսէ. և խաչիւ ծագէ լոյս փառաց նորա 'ի տիեզերս. և ողորմութիւն նորա տեսցէ(1) զիս »:

Ի նոյն աւուրս լուաւ Կոստանդին Թագաւոր. Թէ Փիլիկէ պատրիկն Սիկիլիոյ, շնայ ընդ մօր նորա, և կամեցաւ ըմբռնել զնա: Եւ նորա իմացեալ փախեաւ առ Ահարոն. և առեալ 'ի նմանէ քառասուն հազար հեծեալս, գնաց դարձուցանել զՍիկիլիա 'ի Տաճիկս. և կալաւ զնա ձիւն սաստիկ. և կոտորեցան այրուձի բազում. և սակաւ մնացորդքն եկին 'ի Կոստանդնուպօլիս. և նոքա արարին նոցա ողորմութիւն, և ետուն զկարիս նոցա և արձակեցին:

Եւ Կոստանդին արգել զյիշատակ մօր իւրոյ յեկեղեցիս: Եւ զի մեռաւ կին նորա, էառ կին երկրորդ, և արհամարհեաց զկանոն առաքելական. վասն որոյ ատեցեալ եղեւ 'ի բազմաց: Եւ իմացեալ մօրն զտրտունջ զօրացն արար խորհրդակից. և օգնականս. և կալեալ զորդին եհան զաչս նորա: Եւ թագաւորեաց և արար երկրորդ իւր զներքինին Փիլադէ.

---

(1) Մի օր. տիրեսցէ.

Ի ժամանակս յայս Թոռունքն Աթանասայ Ուռհայեցւոյ գտին զգանձն հաւուն իւրեանց. և օձս և կարիճս ոսկեղէնս մորամէջս լցեալ քեմիայիւ որ ցանէին 'ի վերայ հալեալ պղնձից. և աղէ մի որ սրսկէին 'ի վերայ սեաւ արճճոյ, և դառնային 'ի բնութիւն ոսկւոյ: Եւ գրէր անդ ի բաժինս եկեղեցւոյ և աղքատաց: Եւ ետուն զայն, և ինքեանք մեծացան յոյժ. և ստացան ձիս և ջորիս. այլ և բազէս և շունս. և ելանէին և որսային և զբօսնուին:

Եւ լուաւ Թագաւորն Տաճկաց, կոչեաց զնոսա և չարչարեաց և առ զամենայն ստացուածսն. բայց զքիմիայն ոչ ճանաչելով զառաջինն Թափէին զնոսա յերկիր իբրեւ զհող կարմիր. որ և ապա իմացեալ զղջացան և ապաշաւէին: Բայց զորդիսն Աթանասի եդին 'ի կապանս և կուսան մի արգելին 'ի մերնատան. և եդին պահապանս. և նա երկուցեալ 'ի խայտառակութեանց ընկէց զինքն բարձուէն 'ի խոնարհ և մեռաւ:

Եւ իմացեալ Թագաւորն զղջացաւ, և եհան զեղբայրն նորա 'ի բանտէն:

Իսկ զօրացն Յունաց գիտացեալ, եթէ նախատէին զնոսա Տաճիկք վասն Երինեայ. զի կին էր Թագաւոր նոցա. եդին իւրեանց թագաւոր զոմն՝ Նիկեփոռ անուն. և նա արտաքսեաց զԻրինէ յԱթէնս ։

Յորում ամի շինեցին Տաճիկք զՈւպատարա քաղաքն (1) Հայոց ։

Եւ զի այր քաջ էր՝ Նիկեփոռ և իմաստուն չոգաւ յերկիրն Տաճկաց. և դարձաւ բազում աւարով ։ Եւ ասեն վասն նորա ոմանք թէ 'ի տաճիկ ազգէ էր ։

Եւ պատմեցաւ Ահարոնի թէ՝ Նիկեփոռ որդի զօրութեան է, և պահող և աղօթող, և սիրեաց զնա. և չոգաւ առ նա, և արարին սէր և երդուան միմեանց. և կերան հաց 'ի միասին ։

Եւ Ահարոնն ետ զամենայն պատրաստութիւն սպասուցն և զկրանս իշխանացն Նիկեփոռայ, և արձակեցան 'ի միմեանց ։

Եւ առ Ահարոն կին յԵրակլեայ, և շինեաց յանուն նորա քաղաք 'ի վեր .քան զԿալինիկոս. և կոչեաց զնա Երակլեա. և Նիկեփոռ շինեաց զԱնկիւրիայ ։

Յայսու ժամանակօք սուրբ եպիսկոպոսն Անանիայ, որ էր 'ի լեռնէն Հազարաւորաց. այսինքն 'ի լեռնէն Նինուէի շինեաց վանք մի յանուն սուրբ Անանիանցն 'ի վերայ աւերակ դղեկի միոյ. զոր գնեաց 'ի Տաճկաց և շինեաց 'ի մէջ նորա տուն սրբութեան խորանազոյնս և անյայտս, և եբեր 'ի Տարայոյ զնշխարս Անանիանցն, և զսուրբ առաքելոցն զԲարդողիմէոսի 'ի Հայոց և զՓիլիպպոսի 'ի Մնբեճայ, և երթեալ 'ի Հռովմ աղօթեաց անդ արտասուօք առ Տէր և տուաւ նմա 'ի նշխարացն Պետրոսի և Պօղոսի, և եբեր անդ: Եւ չոգաւ 'ի Բաբելովն, և առ անտի զմարմին Դանիէլի մարգարէին. և զԵզեկիէլի մարգարէին, և զՍեմայ զորդւոյն Նոյի, և այլ բազում նշխարս. և բերեալ եդ 'ի սրբատանն զոր շինեաց, և ծածկեաց: Եւ շինեաց 'ի վերայ նորա եկեղեցի փառաւոր, և է մինչեւ ցայսօր. և կատարին անտի խնդիրք աղօթից:

---

(1) Ամենայն օրինակք բաց 'ի միոյն՝ ունին զերկիրն ։

Իսկ Ահարոն Թագաւորն Տաճկաց արար խնդիր գանձուց իւրոյ. և գտաւ աւելի քան զ.Ձ ամբրայն հազար բիւր. և բերկրեցաւ և կրկնեաց երեք ծունր Աստուծոյ, և կոչեաց զերիս որդիսն իւր. զՄահմէտ, զՄահմուտն (1) և զԿասումայ, և գրեաց նոցա գիր, զի կարգաւ առցեն զԹագաւորութիւն ըզկնի մահուան նորա ըստ աւագութեան և կրտսերութեան: Եւ առեալ զՄահմուտն և տարաւ 'ի Խորասան, և ինքն մեռաւ անդ․ Թագաւորեալ ամս քսան երեք։

---

(1) Երեւի որ է զՄամունն:

Իսկ Թագաւորն Յունաց Նիկեփոռ չուգաւ 'ի վերայ Բուլղարաց. և եհաս մինչև ցաթոռ թագաւորութեան նոցա զօրութեամբ մեծաւ. և կոտորէր զնոսա անողորմ այնպէս, մինչև ժողովեալ զմատաղ մանկունսն կալսէր զնոսա կամնասայլիւք. զոր տեսեալ Փռանկի միոջ զվայրենի և զգազանացեալ բարս նորա, եհար զնա յանկարծ և սատակեաց, մեկուսի գտեալ զնա յուրոց մարմնապահաց։ Եւ դարձաւ զօրն և թագաւորեցուցին զԼեւոն ոմն. և յանկարծս սպան զնա զօրագլուխն Միխայէլ. և թագաւորեաց Յունաց։

Իսկ թագաւորութիւնն Տաճկաց շփոթեցաւ. յերկուս տէրութիւնս։ Քանզի թագաւորեաց Մահմէտ 'ի Միջագետս և Մահմուտն 'ի Խորասան, և կռուեցան ընդ միմեանս. և հարան զօրքն Մահմետի, և փախեաւ 'ի նմանէ և չոգաւ ամրանալ 'ի Սամուսատ ամրացուցեալ զնա։ Իսկ Հուսէյն զօրապետն Մահմետի յարեաւ 'ի վերայ նորա, կալաւ և եդ 'ի բանտի. և ինքն գնաց նստաւ 'ի Բաղդատ։ Եւ աղաչէր Մահմէտ զՀուսէյն, զի միայն արձակեսցէ զնա 'ի կա պանաց և ոչ պիտի նմա թագաւորութիւն ։

Իսկ նորա խողձացեալ ետ ցնա զթագաւորութիւնն, և կոչեաց զնա ՚ի Բաղդատ ։

Եւ լուեալ Մամոնայ առաքեաց զհօրթոմ Ամիրայն պաշարել զԲաղդատ. որ եկեալ պաշարեաց զնա պատնիշօք. և զօրացաւ ՚ի վերայ Մահմետի. և առ զքաղաքն և սպան զՄահմէտ գտեալ զնա ՚ի թաքըստեան ։

Եւ Դահիրն եկն ՚ի Կալանիկոս չորս հազարօք հրամանաւ Մամունի. և առ զնա և իշխանացաւ Միջագետաց. և նեղէր ըզքրիստոնեայսն յոյժ ասելով. գնացէք առ թագաւորն ձեր զի հանգիցուք մեք. փոխանակ զի բացօթեայ շրջելով տառապէաք մինչեւ ցայժմ. և արդ մեզ տուեալ է զերկիրս Տէր ։ Եւ այսպէս ոչ գոյր դիւրութիւն և ոչ ողորմութիւն քրիստոնէից ուղղափառաց և ոչ ուսանէք. այլ յայն անմահութեան միայն ։ Յորում ժամանակի եղև շարժ ահագին մինչեւ բերինք Կողոսաւ (1) որ կան աստի և անտի Եփրատայ, մօտ եկին առ միմեանս տեսանելով մարդկան. և փլաւ լեառն մի և անկաւ յԵփրատ, և արգել օր մի. և դարձաւ ջուրն յետս, և բազում նորածին աղբիւրք բացան նաւթոյ և կղեր և ջրոյ, և յորդք լցան։

---

(1) Երկու օրին. Կողոսայ ։ Մի օրին. Փողոսայ ։

Իսկ Մահմուտ (1) Թագաւորն Տաճկաց ունէր առ ինքն այր մի յոյժ ազգաւ Թումաս անուն, որ եկեալ էր առ հայրն նորա Ահարոն և ասէր զանձնէ թէ իցէ որդի Թագաւորի. և ունէին զնա պատուով. և հաւատացին նմա։

Վասն որոյ առաքեաց զնա զօրօք 'ի Կոստանդնուպօլիս գէթ կամ առցէ զնա և կամ գոնէ արասցէ զնա յանհանգիստ. և չոգաւ Թումասն և պաշարեաց զԿոստանդնուպօլիս զվեց ամիս. և յոյժ նեղեաց զքաղաքն։ Եւ Միխայլն եհան զՏաճիկ ծառայսն և խոստացաւ նոցա ազատութիւն, եթէ սրտի մտօք կռուեսցին ընդդէմ Տաճկաց. և մարտեան նոքօք ընդ Թումասուն և պարտեաց զնա. և փախեաւ սակաւուք, և հասեալ կալան զնա. և կորեալ զաչս և զձեռս նորա շրջեցուցին ընդ քաղաքն։ Բայց զծառայսն ոչ ազատեաց Միխայլն ըստ խոստմանն։

Իսկ Մահմուտն լուաւ եթէ Կուրբիշայքեքըն (2) ազանդ մի Տաճկաց ապստամբեցին 'ի Բաղդատ և եդին իւրեանց Թագաւոր զՄը րեհիմ ամն . և եկն 'ի վերայ նորա ։ Այլ փախեաւ Իբրեհիմն և անյայտ եղեւ ։ Այլ նըստաւ Մահմուտն 'ի Բաղդատ . և գնաց առ նա Դահերն , և առաքեաց զնա իշխան 'ի Խորասան ։

---

(1) Զայս մի և նոյն անուն Մահմուտ երբեմն Մայմուն. երբեմն մինչև Մահմատ. երբեմն (2) Մի օրի. Գուշքպայքեն.

Յայսս աւուրքս ծովն Անդրիանոս , ձուկն մի ընկէց յերկիրն Կիլիկիոյ քառասուն կանգուն երկայն և նոյնչափ լայն . և ստուար որպէս բլուր մի սոսկալի տեսլեամբ ։ Այլ ժողովեցաւ երկիրն և կտրատեցին զնա . կերան և աղխատեցին և հանին 'ի նմանէ իւղ բազում ամանօք , և վաճառէին և ուտէին և հիւանդային ։

Ի Թուին Ասորւոց հարիւր քառասուն առ հազարաւ , և Հայոց երկու . հարիւր և վեց մեռաւ Միխայլ Թագաւորն Յունաց և Թագաւորեաց Թէոփիլոս . և եկին Բուլղարք . և Բուրդանք 'ի հնազանդութիւն նոցա ։

Այլ Բուրդանքն ազգ են առանձին լեզուաւ . և գոյր 'ի հին ժամանակաց բան ինչ դիւթական 'ի մէջ նոցա . եթէ այր մի 'ի նոցանէ յայտնելոց է Մահադի անուն , և Թագաւորէ . և որ հաւատայ 'ի նա և մեռանի՝ զկնի քառասուն աւուր յառնէ . և սակաւ ինչ կեցեալ փոխի յանմահական աշխարհն։ Եւ ոմանք կարծեցին թէ Աստուած իցէ, և այլք զօրութիւն ինչ, և կէսք թագաւոր. և սպասէին նմա։

Զայսու ժամանակօք յայտնեցաւ այն անուամբ ոմն։ Եւ կարծեցին թէ նա է, և ինքն ասէր թէ ես եմ ն.եղիւր թագ. և հաւաքեցան առ նա ազգն իւր, և ել յերկրէ անթիւ բազմօք. և ել համբաւ զնմանէ և գային յամենայն կողմանց. և ձգէր նա քող 'ի վերայ երեսաց իւրոց. և անցեալ զբազում գաւառօք և չոգաւ յաշխարհն Հայոց 'ի լերինն Արարատու կոտորելով զանհաւանեալսն։ Եւ զահի հարաւ Մահմուտն 'ի Նախճանէ քաղաքէ դարձաւ. և եկն 'ի Ռղերա, աւերէր և կոտորէր զամենայն ազգ նմանապէս։

Եւ պնդեաց զանձն զօրագլուխն Մահմուտայ Հասան, և խաղաց գնաց 'ի վերայ նորա և սկսաւ կոտորել։ Եւ Մահմուտն ընկեցեալ զքողն և զթագն և փախչէր. և անկաւ յերկիրն Սահակայ հայկազնոյ. և դարձաւ Հասան 'ի Նախճանէ։

Եւ Սահակ ել զհետ Տաճկաց և կոտորեաց 'ի նոցանէ զբազումս և փախոյց. և յորժամ դարձաւ 'ի կոտորածէն Տաճկաց եգիտ պաշարեալ զտունն իւր 'ի Քուրդանացն, և եհար զնոսա. և կալեալ զՄահմուտն կտրեաց զգլուխ նորա, զայն՝ որ երբեմն ասէր թէ Աստուած եմ ես, և երբեմն հոգի ասէր զանձն։ Եւ առ զբանակ նորա Սահակ իշխանն և սակաւք 'ի նոցանէ ապրեալք թաքստեամբ եկին առ Թէոփիլոս։

Եւ գնաց Թէոփիլոս նոքօք 'ի Զուպատրայ. և առ զնա և աւերեաց և դարձաւ։

Իսկ Մահմուտ վերստին շինեաց զԶուպատրայ. Եւ եկեալ յՄուշահայ եհարց ըզմուտս եկեղեցւոյն. և ասացին թէ որքան և ունի հարկատու ձեր է։ Եւ ետ Մահմուտ գրել օրէնս, զի ազատ լիցի եկեղեցի յամենայն ստացուածս իւր և ոչինչ տացէ յարքունիս։ Եւ գնաց Մահմուտ յամարայնի 'ի Կապպադովկիայ, և առ բերդս չորս. և դարձաւ 'ի Դամասկոս ձմերել։

Եւ 'ի գալ միւսոյ ամին չոգաւ պաշարեաց զբերդն Լուլուայ(1) և ոչ կարաց առնուլ զնա. և եթող զօրս 'ի վերայ նորա. և չոգաւ 'ի Պետոն։

Եւ ել ընդ առաջ նորա պատրիարքն Դիոնէսիոս և մեծարեցաւ յոյժ. և հաստատեաց նմա զազատութիւն եկեղեցւոյ։

Եւ մինչ խօսէր ընդ նմա Մահմուտ հասին աւետաւորք թէ առաք զԼուլուայ. և հը մայեաց զերքն . և 'ի սրտէ սիրեաց զպատրիարգն , և ետ նմա պարգեւս ։

---

(1) Մի օրի. Լուլվայ։

Եւ առաքեաց Թէոփիլոս առ Մ՝ահմուտ խնդրել խաղաղութիւն ։ Եւ ասէ Մ՝ահմուտ տուք ինձ հարկս . և կարդացէք զիս Թագաւոր 'ի վերայ ձեր , և արարից զոր խնդրէքդ . և ոչ եւս լուաւ պատասխանի ։ Եւ գնաց Մ՝ահմուտ 'ի Սիկիլիայ . և եկն առ նա ոմն 'ի Յունաց խաբեբայ . և ասաց զինքն որդի Թագաւորի . և հաւատաց նմա Մ՝ահմուտ , եւ կազմել նմա Թագ յերէք հազար դահեկանէ . և կոչեաց զՅոմէ պատրիարգն Ն՝ախիզու , և ասէ ցնա . օրհնեա զսա Թագաւոր ըստ օրինացդ ձեր . և արար այնպէս ։ Եւ լուեալ 'ի Կոստանդնուպօլիս նզովեցին զՅոմէ ։ Իսկ Թագաւորեալն 'ի Յոմէայ յետ սակաւ աւուրց ուրացաւ զ՝Քրիստոս . և սատակեցաւ ։

Իսկ Մ՝ահմուտ գնաց յերկիրն Յունաց և խաբէութեամբ զամենայն երկիրն հնազանդեաց մինչեւ 'ի քաղաքն Տայանա . զոր աւերեալ էին Տաճիկք . և նա սկսաւ շինել 'ի հարկաց երկրին զոր առնոյր դառն և խիստ և անողորմ դահճօքն . մինչեւ ամենայն լեզու նզովէր զնա ։ Եւ եհաս յականջս Տեառն զօրութեանց . և սպան զնա Աստուած 'ի տեղւոջն ։

Եւ Թագաւորեաց Աբուսահլ (1) եղբայր նորա որ և այրեաց զամենայն շինուածն և գնաց 'ի Բաղտատ :

Եւ եկին առ նա արք 'ի Բասրայ և ասեն. կղզի մի է 'ի մէջ ծովուն որ կոչի Պարսից 'ի տեղւոջն ուր խառնին Տիգրիս և Եփրատէս 'ի ծովն. և է անդ բերդ մի միշտ ապստամբ բանից լեալ. և կողոպտեն զվաճառականսն որ կամին գնալ 'ի Հնդիկս, և յԵթովպիայ : Եւ առաքեաց Թագաւորն յԵգիպտոս և 'ի Սաբայ (2) և ետ ածել անթիւ արս արուեստաւորս ծովամուխս հնարիմացս, որք ծածկէին ընդ գայարանս սաղմով տղայոց, և առեալ ձէթ ապակեօք ընդ իւրեանս մխէին 'ի խորն. և ուր և պիտէր, ելանէին :

Եւ գնացին հանդերձ բազմութեամբ զօրաց լցեալ 'ի նաւս, և եկին բնակիչք բերդին կռուել ընդ նաւսն. և խորամուխքն ծովասուզեալք 'ի ներքոյ նոցա ելին 'ի գուբս առ դրան դղեկին. և գտին զդուռն 'ի բացրս. և զարս բերդին, զի կռուէին նաւաւք ընդ զօրս Տաճկաց : Եւ առին զբերդն և քանդեցին 'ի հիմանց. և զարսն սպանեցին, և բարձաւ խուշն այն. և եղեւ գիւրութիւն յանցս ուղեւորաց. և շինութիւն քաղաքաց գաւառաց. եւ ընդարձակեցաւ Բասրա. և շինեաց Աբուսահլ 'ի մէջ Նինուէի և Բաբելոնի զգիւղն Շահրայ արքունիք մեծավայելուչ. և շինեաց անդ դրախտս և ելից ամենազանազան տնկօք. և բերեալ յԵգիպտոսէ տունկս պալասանայ տնկեաց անդ 'ի զբօսանս զուարճութեան։ Նոյնպէս 'ի Բաղտատ, և 'ի Բաբելոն. (քանզի Բաբիլոն և Բաղտատ չորս աւուր ճանապարհ հեռի են 'ի միմեանց. և դու մի կարծեր զերկոսեանն մի)։

---

(1) Երկու օրի. Աբու. (2) Երկու օրի. 'ի Պարսս հասաւ. մի՛ Արաբստանայ :

Ի ժամանակին յայնմիկ առաքեաց Աբուսահլն դեսպանս առ Դուքիծն(1), և յիշեցոյց նոցա եթէ կայ դաշն ուխտի մեր և ձեր 'ի վաղուց հետէ տալ մեզ ձեզ ցորեան և ձէթ, և հանդերձս. և թէ ելանէ թագաւորդ ձեր յերկիրս մեր, հնազանդիմ յամենայն պէտս որպէս մերում թագաւորի. և դուք տայք մեզ յամենայն ամի երեքհարիւր սեաւ ծառայ. և տասն արուզնայ(2). և զօրաֆէ մի որ է կենդանի մի խայտ, առաջքըն բարձր 'ի չափ գոմշոյ, որ արժէ քսան հազար դահեկան. և փայտս անփուտս. և արդ լիցի ձեզ ասէ նորոգել զառաջին ուխտադրութիւն։

---

(1) Այլ օր. Դուքիծայի։ (2) Այլ օր. ապրուզնա։

Իսկ յորժամ գնաց դեսպանն մեռեալ էր թագաւոր նոցա և թողեալ դուստր մի ժառանգաւորութեանն, զոր իշխան մի Զաքարիա անուն ետ որդւոյ իւրում 'ի կնութիւն, և թագաւոր կարգաց զնա. որում անուն էր Գորգի. կամեցաւ Զաքարիա (1) առաքել զթագաւորեալ որդին իւր առ Աբուսահլն։

Զոր իբրեւ լուաւ թագաւորն Տաճկաց Աբուսահլն, արար խնդութիւն. և առաքեաց և եհար սպաս արքայութեան 'ի ճանապարհին մեծամեծ ծախիւք, պէսպէս մարդոյ և գրաստուց բազում առատութեամբ. և ել քարոզ հրամանէ եկանել ընդ առաջ նորա արանց պատուաւորաց եկեղեցականաց և աշխարհականաց քրիստոնէից և տաճկաց. փառօք յորդեալ ընթանայր ամենայն աշխարհն ընդ առաջ նորա, ընդ որ գայրն. և տեսանէին նոր իրս պատանի մի քսանամեայ փայլելուչ հասակաւ, նստեալ յուղտու նորակազմ զարդուք պաճուճեալ ականակուռ թամբօք. և կուբայ ոսկեղէն և նկարեալ 'ի չորս մարգարտաց 'ի վերայ նորա գմբեթաձեւ զարդ խաչ ոսկեղէն ունելով 'ի գլուխն. և ինքն զգեցեալ և պսակեալ անասելի բանիւ հանդերձս և թագիւ: Իսկ խաչ ոսկի 'ի վերայ ոսկեղէն խնձորոյ 'ի մի ձեռն, և 'ի միւսն գաւազան ոսկի խաչիւ. Նոյնպէս և բազմութիւն երիցանց ընդ նմա, և չորս եպիսկոպոսք և չորս քահանայք աստի և անտի գնային ընդ նմա խաչիւ բարձեալ. և զօրքն զգեցեալք և սպառազինեալք ազգի ազգի յօրինուածովք արժանաւոր տեսողաց: Եւ ել ընդ առաջ նորա գոռոզն Տաճկաց, և գովեաց զյօրինուածս զարդուն, և տարաւ զնա 'ի Բաղտատ երեւելի փառօք. և նստան 'ի միում բարձի:

---

(1) Ամենայն օրինակք բաց 'ի [illegible]. [illegible] ունին կամեցաւ թագա-

Եւ կոչեաց զպատրիարգն Դիոնէսիոս. և եհարց զուղղափառութենէ նորա, և ետ նմա պատարագ առնել, և հաղորդեցաւ 'ի ձեռաց նորա:

Եւ զարմանայր պատրիարքն ընդ իմաստուն և կատարեալ հաւատ պատանւոյն. զի անորդէր զերկու (բնութիւնն) ասողն 'ի Քրիստոս:

Իսկ թագաւորն Տաճկաց ետ պարգեւս թագաւորին Քրիստոնէից անհամար և անկշիռ, գիտելով թէ ոչ ոք յառաջնոց թա գաւորացն պատուեցաւ իբրեւ զնա գալստեամբ թագաւորին Նուբեաց. և հաստատեցին սէր կատարեալ ոչ ծախիւք իբրեւ զառաջինն 'ի Նուբեացն այլ միայն բարի կամօք և անմոռացութեամբ. և զԱսուան քաղաք և զԳոզան արարին կիսաբաժինս, որք կան 'ի վերայ Նեղոս գետոյն ։

Եւ գնաց գեղեցիկն Գորգի երեւելի փառօք յաշխարհն իւր ։

Բայց երկու եպիսկոպոսք և բազումք 'ի զօրացն մեռան զի չէին սովորք փոփոխական(1) օդոյ ամարան. և ձմերան ։ Իսկ երկու զօրագլուխքն Տաճկաց, Նասրան և Պապաքն(2) հաճեալ ընդ վարս քրիստոնէից զոր տեսին, Նուբեայն, գնացին առ Թէոփիլոս թագաւոր, և եղեն քրիստոնեայք ։

Եւ Թէոփիլոս հպարտացեալ նոքօք չոգաւ 'ի Զուպատրայ, և առ զնա. և կոտորեաց նմանապէս զքրիստոնեայս և զՏաճիկսն ։

Եւ գնացեալ 'ի Մելտենի գերեաց զնա. և ել յԱշմուշայ և 'ի Հանձիթ, աւերեաց և գերեաց ։

Եւ լուեալ զայս Աբուսահն բարկացաւ և խաղաց ամենայն ուժով իւրով 'ի վերայ Յունաց, եղեալ յերկուս բանակս անթիւ հեծելով և յոլով կազմութեամբ. զի կայր ընդ նմա և երեսուն հազար Մուղրի, և փախստականս երեսուն հազար, որ ունէին բարձեալ բեռինս քան հազար ջորիս (1). զայն դու տես. և գնացեալ յԱնկիւրիա առ անմիջեաս. և աւերեաց մինչև յԱմուրին քաղաք մեծ և բազմամարդ և փայելուչ և ամուր յոյժ. և ոչ գոյր նման նմա 'ի վերայ երկրի. և պաշարեաց զնա երկոտասան օր. և առ զնա մատնութեամբ իշխանի միոյ Ռուծ անուն. և սպան 'ի նմա անձինս տասն և ութ հազար: Եւ եգիտ անդ կուսանաց վանորայս (2) հազար, զորս ետ 'ի կնութիւն ծառայից իւրոց, և այրեաց զքաղաքն:

---

(1) Երկք օրի. փոփոխանակի ։ (2) Մի օրի. Բուպաքն ։

Եւ անճառ է իրաւունք դատաստանին Աստուծոյ. և ոչ ոք է հասու նմա. և որչնեալ են խորք նորա մեզ անծանօթ:

Եւ էր որդի Աբուսահլայ, Դաւութ անուն նորա որ շնչեալ 'ի դիւաց աղաչեաց զհայրն բառնալ զքրիստոնէից համարձակութիւնն ամենեւին. ոչ երեւել խաչի արտաքոյ եկեղեցւոյ և ոչ բառնալ մեռեալ 'ի բազկայ և ոչ լսելի առնել զպաշտօն եկեղեցւոյ և խոզ ոչ ունել ումեք, և ուտել խոզ.

---

(1) Մի օրի. յիսուն հազար ուղտս. և քան հազար ջորիս:

(2) Հինգ օրի. վանս.

զենի. և արար այնպէս։

Իսկ յայտնեցաւ Աբուսահլայ թէ Աբաս եղբօրորդին քո արարեալ է բազում օգնականս և կամի թագաւորել. և ուխտեալ է ընդ Հռովմայեցիս զի լինիցի քրիստոնեայ. և բառնալ զթագաւորութիւն Տաճկաց։ Վասն որոյ կալաւ զնա և սպան ՚ի սովոյ. և գրեաց զմեղս նորա ընդ ամենայն Տաճկաստան. և վասն այնորիկ նզովեն և ատեն զԱբասն Տաճիկք։

Իսկ ՚ի նոյն աւուրս երեւեցաւ ՚ի կողմ հիւսիսոյ ամպ կարմիր զերիս գիշերս. և ապա եկն անձրեւ օտար. զի տեղայր ընդ անձրեւուն քարինս և կեղեւեաց զծառս. և մերկացոյց հեղեղն զդաշտս ՚ի հողոյ, և բարձրացաւ ջուրն ՚ի վերայ Խառանու. և ըսպան մարդ և անասուն բազում, և տարաւ ելից յԵփրատ գետ. և յոլով գաւառս և գիւղս ապականեաց։

Զկնի այսորիկ առաքեաց Թէոփիլոս նուէրս Աբուսահլայ, և ասաց նմա փոխել զգերիսն, տալ քրիստոնեայսն և առնուլ ըզտաճիկսն։ Իսկ Աբուսահլն արար դարձուածըս բազմապատիկս, առաքելով պատարագս յիսուն բեռն ուղտու. և ասաց ոչ է մարթ փոխել այր պատուական ընդ յոյն մարդոյ յուսոյ (1). բայց տաց քեզ վերադիրս. և արարին այնպէս. և եղև խաղաղութիւն 'ի մէջ նոցա։

Յորում ժամանակի յայտնեցաւ այր մի Թամամ անուն. որ ասէր զինքն պատգամաւոր եկեալ յԱստուծոյ (2). և ասէր՝ «մի տանուք հարկս 'ի քրիստոնէից աւելի քան ըզչորս դրամոյ» և խնդացին յիսուսացիք (3). և հաւաքեցան առ նա աւելի՝ քան զերեսուն հազար արանց 'ի յաղքատաց. և ել նոքօք յԵրուսաղէմ։ Եւ քակեաց զսուրբ Յարութիւնն։

Եւ գնաց առ նա Եմիրայն Դամասկոսի և սպան զնա. զի հակառակ էր օրինաց նորա։

Յայնժամ մեռաւ Եբուսահկն և թագաւորեաց որդի նորա Եհարոն այր կերող և արբեցող. և ոչինչ գիտէր յանցից և 'ի պատահմանց երկրի։ Եւ վեց ամ արքայութեամբ կեցեալ մեռաւ։ Եւ 'ի սոյն ամի մեռաւ Թէոփիլոս։ Եւ թագաւորեաց Միխայէլ որդի նորա մարբն Թէոդորաւ։

Եւ 'ի ժամանակս սորա վեց թագաւորք

---

(1) Մի օրին. ոչ է մարթ փոխել արար մարդ պատուական ընդ յայն մարդոյ յուսոյ։

(2) Չորք օրին. պատգամաւորեալ։

(3) Մի օրին. քրիստոսացիք. Մի օրին. հնազայն. քրիստոնեայք։

փոխեցան Տաճկաց. Ահարոն, Զամբր, Մահմէտ, Ահմատ, միւս Ահմատ, Աբուբդալլայ: Իսկ Միխայլն քսանեւեւթն ամ վարեալ թագաւորութիւնն մեռաւ. և զի ոչ ունէր որդի, թագաւորեաց ոմն 'ի պալատէն Վասիլ անուն ամս երկու. և զկնի՝ որդի իւր Լեւոն ամս քսան և եւթն. և յաւուրս սորա թագաւորեաց Տաճկաց Ահմատ ամս քսան երեք:

Իսկ Լեւոն յանցաւոր եղեալ Աստուծոյ էառ չորս կին զի ոչ գոյր յանդիմանիչ. և կանոնեաց թէ առանց մեղաց է չորեքկնութիւնն, և անկաւ յախտ աղեցաւութեան. և մեռաւ ոչ բարւոք: Եւ թագաւորեաց Ալէքս որդի նորա ամ մի. և յետ նորա եղբայր իւր Կոստանդին ամս յիսուն և եւթն: Ի սորա ժամանակս երեք պատրիարգ նստան 'ի Կոստանդնուպօլիս զկնի միմեանց կախարդք, որք 'ի ներքս սեղանոյն պաշտէին կուռս եդեալ 'ի ժամ կատարելոյ պատարագին. և վասն այսորիկ բարձին Յոյնք զվարագոյրն ժամանակս բազումս:

Իսկ թագաւորութիւնն Տաճկաց փոխեցաւ 'ի ցեղէն Ալեայ յազգն Մահմետի. և նախ թագաւորեաց Աբլ Աբաս ամս քսան: Իսկ Բուլղարքն զօրացեալ նեղէին զաշխարհրն Յունաց բազում աւարս և արկին զնոսա ՚ի Կոստանդնուպօլիս ։

Ի քսան երեք ամին Կոստանդնեայ Թագաւորեաց Աբուբկրայ Մահմետ ամս վեց. և յետ նորա Օմար ամս քսան երեք ։ Ի քսան երեք ամին Կոստանդնեայ Թագաւորեաց Աբաւկայն Աբումսար ամս երկու ։ Եւ յետ նորա Աբաս ամս եւթն ։

Եւ ՚ի յիսուն և եւթն ամի արքայութեան իւրոյ Կոստանդին մեռաւ ։ Եւ Թագաւորեաց փոխանակ նորա Յուստինիանոս. որ և արար խաղաղութիւն ընդ Աբդլմալքայ ՚ի ձեռն զօրագլխին Մլեհին. և դադարեաց մարդն յարտամնից կորստենէ. և պատերազմեցին յարեւելս ։

Իսկ Տաճիկքն որ ունէին ընդ ձեռամբ զԿապադովկիայ Հայոց և զՄիջագետս Ասորոց և զԿիլիկիա ՚ի յՄարէ հեռանէ և ՚ի Հերակլեայ, այժմ ապստամբեցան և պակասեցան. վասն զի ետուն զանձինս արբեցութեան և գիճութեան. քանզի եղ Կիրակոս ստրատելատն Մուսմանոս ՚ի Մելիտինի մերձ Հայոց և նստաւ ՚ի մերայ քաղաքին. և նորա խնդրեցին նեղութիւն զքաղաքն օր. մինչև հարցցեն զԹագաւորն իւրեանց, եթէ կարէ՞ փըրկել զնոսա. և անսաց նոցա ։

Բայց կալեալ զաւրհանգամն՝ որ ասանէք

զթուղթն, ածին առ Կիրակոս և ապարին զնա խուրեանց` ու խոտեցին նմա և պահեցին զնա 'ի ծածուկ (1)։ Եւ զկնի աւուրց եմուտ 'ի քաղաքն և ասաց. աւետիք ձեզ. զի այսօր ընդ մտանել արեգականն մտանեն զօրքն մեր 'ի քաղաքս. և հաւատացին նմա ։

Իսկ Յոյնքն կազմեցան իբրեւ զՏաճիկք 'ի գալ երեկոյին մտին 'ի քաղաքն իբրեւ զնոսա. և առին զքաղաքն ։ Բայց ոչ կոտորեցին [illegible]. այլ հանեին զնոսա և գնացին խաղաղութեամբ ։

Եւ առ Կիրակոս զԿարնոյ քաղաք. և զԿամախ և [illegible]. և չոգաւ 'ի Կիւլիկիա. և առ զնա և դարձաւ [illegible] և հնազանդեցան նմա. Նոյնպէս և ամենայն ծովեզերեայքն ձեռն ետուն 'ի Յոյնս, զի տկարացան Տաճիկք ։

Եւ յայսոսիկ մեռաւ և Ռոմանոս. և Թագաւորեաց Կոստանդին փեսայ նորա. այր բարի և վարժ հանճարոյ ։ Եւ 'ի քսան և չորս ամի նորա Թագաւորեաց Տաճկաց Մրուան հլըն . և առաքեաց Կոստանդին զորդի իւր զՎասիլն որ առ՝ զՍամուսատ քաղաք։ Եւ նոյն ժամայն եհաս գուժկան թէ մեռաւ հայրն նորա . և թագաւորեաց Ռոմանոս միւս եղբայր նորա . և դարձաւ Վասիլ և եղեւ հընազանդ եղբօրն ։

---

(1) Այնոյն օրինակ այսպէս ունէին [illegible]. Հնագոյն օրինակն ունի. կալան և ածին զդեսպանն առ Կիւրակոսն. Եւ նա վասն երկեղի [illegible] երդուաւ նոցա [illegible] նոցա զքաղաքն, և յամեաց առ նոսա. Եւ ապա մտեալ 'ի քաղաքն ետ նոցա աւետիս թէ այսօր գայ զօրքն մեր.

Եւ առաքեաց Ռոմանոս զօր ՚ի վերայ Հալպայ և առին զնա ։ Եւ մեռաւ Աբուսահլն և թագաւորեաց Արասկայ Ապուլեամն ամս վեց։ Եւ յետ սակաւու մեռաւ Ռոմանոս . և թագաւորեաց Նիկիփոռ այր տըգէտ և ատեցող ուղղափառութեան . որ և ընթացեալ ՚ի Մելտենի եգիտ աւերեալ և անմարդ զնա . և ետուն նմա խրատ զի կոչեսցէ զտէր Յովհաննէս պատրիարքն Անտիոքայ և տայցէ ցնա զերկիրն . զի բերեալ զազգն իւր շինեսցէ զաշխարհն ։ Եւ թէ դէպ լիցի և դարձեալ զօրանան Տաճիկք , լաւ է մեզ ասեն զի նորա կորիցեն . և արար այնպէս . և երդուաւ նմա դադարեցուցանել զհալածանս ուղղափառաց . և հաւատաց նըմա պատրիարքն . և շինեաց զքաղաքն և զաշխարհն և ելից զերկիրն գեղիւք և վանորայիւք , ածեալ ՚ի Միջագետայ և ՚ի Հայոց ուղղափառս . և արար զբնակութիւն իւր ՚ի Պերխան ։

Իսկ յորժամ յաջողեցան իրքն կոչեաց զՏէր Յովհաննէս 'ի Կոստանդնուպօլիս. և չոգաւ եպիսկոպոսօք և վարդապետօք. յերեք հարիւր եւթանասուն և ութ թուականին Հայոց. և արարին ժողով մեծ և մարտեան ընդ ուղղափառսն. քանզի և զօրութեամբն Քրիստոսի այնպէս յաղթեաց ճշմարտութիւնն. որ և ամենայն լեզու օրհնեաց զհաւատս մեր:

Բայց անօրէն թագաւորին խոստանայր աթոռս և պատիւս ուղղադաւանիցն. թէ ասեն միայն զերկու բնութիւն. և սպառնայր, թէ ոչ լսեն նմա.

Ետուն պատասխանի և ասեն. մեք ոչ վասն երկիւղի, և ոչ վասն յուսոյ փառաց սնոտեաց չբաժանեմք զմինն. զի մի քակտեսցուք 'ի նմանէ. և զայրացեալ թագաւորին եդ զնոսա 'ի բանտի չորս ամիս: Իսկ թագուհին Թէոփանէս սպան զՆիկիփոռ՝ զի չէր ամուսնացեալ ընդ նմա. և առ զՅովհաննէս ոմն այր ինքեան և եդիր նմա թագ, որ և յառաջագոյն կրէր զմուշկ թագաւորին. և շնայր ընդ թագուհին, և խորհեալ ընդ միմեանս սպանին զթագաւորն:

Եւ թագաւորեաց Յովհաննէս, որ և Չմշկիկն կոչի. և սա եհան 'ի բանտէ ըզպատրիարքն և զեպիսկոպոսունսն և գնացին 'ի տեղիս լուրեանց պատուով. և եղեալ յաջողակ, և առեալ 'ի Տաճկաց աշխարհս բազումս. բայց պատրիարքն Անտիոքու քաղկեդոնիկ՝ արար բազում հալածանս եկեղեցւոյ ուղղափառաց ձեռնտուութեամբ երեւելի իշխանաց. զորոց սան էր առեալ զորդին յաւազանէն: Որ և առեալ զաւետարանն Ասորոց և զմիւռոնն և զհաղորդն երեք անգամ ընկեցին 'ի հուր բորբոքեալ, և ոչ այրեցան և ոչ զղջացաւ. այլ գտաւ չարագոյն քան զՆաբուգոդոնոսոր. Բանզի նա յոչ այրել Անանիանցն, փառաւորեաց զԱստուած նոցա. և հաւատայ 'ի նա. իսկ սորա կատարեալ 'ի վերայ ուղղափառացն 'ի տօնի յայտնութեանն եհան զնոսա արամբք և կանամբք 'ի քաղաքէն. և էառ զեկեղեցիս նոցա. որք խօսեցան ընդ Աստուծոյ աղօթիւք և երդմամբ եթէ՝ ոչ մտցեն 'ի քաղաքն մինչև տացէ զվրէժն նոցա, որպէս և եղեւն իսկ: Բանզի 'ի նոյն աւուրս չարցաւօք սատակեցաւ կատապանն Աբափի: Եւ դարձուցին մեծաւ պատուով զուղղափառսն 'ի քաղաքն փառաւորելով զարդար դատաստանն Աստուծոյ: Եւ եղեւ այն 'ի Թըւին Հայոց յերեք հարիւր ութսուն երեք.

Իսկ Զմշկիկ էր 'ի Հանձիթ գաւառէ.

և վասն այնորիկ առնէր զբնակութիւն իւր յայն կողմանս. և ասեն զսա Հայ ազգաւ. և էր սա առատաձեռն և ողորմած. վասն որոյ ազատեաց զամենայն գերիսն. և ասեն սորա շինել երեք հարիւր եկեղեցիս. և մեծ եկեղեցի մի. 'ի Հռոմ. սա թագաւորեաց ամս երիս և մեռաւ. և սուգ մեծ աշխարհի եղեւ մահ սորա։

Եւ թագաւորեցին որդիքն Ռոմանոսի թագաւորքն Վասիլն և Կոստանդին. և կային սիրով առ միմեանս. Կոստանդին կալով 'ի թագաւորութեանն. և Վասիլն մեծագործութեամբ կայր ընդդէմ Տաճկաց յերկարեալ 'ի թագաւորութեանն ամս յիսուն և եւթն. և հնազանդեաց զՀայս յարեւելից և զԲուլղարս յարեւմտից վանելով բազում պատերազմաւն. և երկու ամ և կէս աւելի քան զսա եղբայրն եկաց թագաւոր։

Ի սորա ժամանակս թագաւորեաց Տաճկաց Ալփասալ ամս քսան և ինն. յետ նորա Բուղայքը ամս տասն և ինն և զկնի նորա Ապլլաքաս (1) ամս քառասուն և երկու։

Իսկ զկնի Կոստանդեայ եղբօր Վասիլին թագաւորէ Ռոմանոս եղբօրորդին իւր. և գնաց պատերազմել ընդ Տաճիկսն. և եղեւ փախստական և հալածեն զորս նորա . քանզի ապստամբեցաւ վանորէից Սեաւ լերինն որ ՚ի Կիւլիկիայ . եԹէ դարձցի խաղաղուԹեամբ արասցէ զնոսա քաղկեդոնիկս , քանզի յոյժ ատեցող էր՝ ուղղափառաց . որ և արար ժողով ՚ի Կոստանդնուպօլիս երկերիւր եպիսկոպոսաց , և կոչեաց զպատրիարքն Եղիայ զոտէր Յովհաննէս՝ որ գնաց վեց եպիսկոպոսօք . և պահեցին զնա յոտն առաջի իւրեանց երկաբնակքն . և խօսէր ընդ նոսա կարճի բանիւք . և երկու եպիսկոպոսք աստի և անտի անկեալ օգնէին նմա վասն ծերուԹեան մարմնոյն :

---

(1) Մի օրի. Ապդլոքաս։

Եւ ասաց Թագաւորն , բան մի խօսեաց , և պատուեմ զքեզ քան զամենայն . ասա « յետ միաւորուԹեան երկու բնուԹիւնս յատկացեալս » . և նա ասէ . և Երրորդութեանն խոստովանուԹիւն մի բան է , և ուրացուԹիւնն մի բան է , և զայդ ոչ ասեմ բնաւ :

Եւ Թէոդորոս եպիսկոպոսն Մելատենոյ ած նմա ապտակ ՚ի ծնօտն աջոյ , իսկ նա դարձոյց զմիւսն . և ոմն յեպիսկոպոսացն յոտն եկաց և եհար զԹէոդորոս , և ասէ զքաղմուԹիւնն , Քրիստոս ապտակ էառ և յոտն կայ , և դուք նստիք . և լցին ամենեքեան . և ՚ի տրտմուԹենէն արձակեցին զժողովն :

Եւ յետ այնորիկ դարձեալ արարին ատեան և նստան, և ասեն ցպատրիարքն. Հաւանեաց մեզ և տուր զաթոռն Անտիոքու միայն: Եւ ասէ ցնոսա. Ես աթոռ ունիմ յերկինս և յերկրի (1) և մարմնական աթոռ ոչ է պիտոյ ինձ. և ասեն դարձեալ դուք ոչ մկրտութիւն ունիք և ոչ քահանայութիւն, առէք 'ի մէնջ և գնացէք: Ասէ սուրբըն. զոր Քրիստոս և Առաքեալքն ետուն և պահեաց Դէոսկորոս և Սեւերոս, մեք ունիմք. և հաւատամ զոր ասեմս, թէ դուք բնաւ ոչ ունիք,. բայց միայն նզովք 'ի գըլուխս ձեր: Եւ բարկացեալ նոցա վճիռ ետուն յաքսորս երթալ յարեւմուտս: Եւ տարան զնա քսան և ութ օր, և դարձեալ զղջացան, և դարձուցին 'ի Կոստանդնուպօլիս. և եդին զնա 'ի բանտի. և եղեն 'ի ձեռս նորա բազում բժշկութիւնք 'ի կոյրս և 'ի կաղս և 'ի հիւանդս. և ել համբաւ բարի ընդ ամենայն երկիր. և բազումք դարձան յուղղափառութիւն. և անդէն 'ի բանտին կատարեցաւ սուրբն Յովհաննէս. և նըշխարք նորա եդաւ ընդ Մարտիրոսս յաշակերտաց նորա և ընդ սուրբս յիշատակ նորա:

---

(5) Հին. օր. ես զաթոռն յերկինս. և մարմնաւոր աթոռոյ ունիմ յերկրի և թոռ ոչ է պիտոյ ինձ:

Եւ բարկութիւն Տեառն եղեւ 'ի վերայ Ռոմանոսի եւ սատակեցաւ, եւ թագաւորեաց Միխայլն ամս ութ. եւ ոմն ազգային նորա խորհեցաւ թագաւորել, եւ արար ժողով զեւթն ամիս. եւ կալան փորեցին զաչս նորա 'ի տեղւոջն՝ ուր գտաւ գիր 'ի վերայ քարի միոյ թէ աստ թագաւոր խաւարի:

Եւ յաւուրս Միխայելի Սուլիման Տաճիկ դարձուց զՈւռհայ 'ի Յոյնս: Իսկ յետ մահուանն Միխայելին կալան զթագաւորութիւնն Զոյի, եւ Թէոդոռան դստերք թագաւորին Կոստանդիանոսի: Եւ Տաճկաց թագաւոր Տուղրլբաս էր:

Բայց հաճոյ եղեւ մեզ յայսմ միջոցի յայտ առնել ուսումնասիրաց, յաղագս ելանելոյ ազգին Թուրքաց թէ յորմէ՞ ազգէ իցեն եւ ո՞ր է աշխարհ նոցա եւ ուստի՞. եւ զի՞նչ պատճառաւ եկին յաշխարհս մեր. եւ առին բնակութիւն 'ի գաւառս գաւառս: Գլուխն մարգարէից սուրբն Մովսէս ասէ 'ի գիրս իւրում այսպէս՝. Յաբէթ ծնաւ զԹիրաս եւ նա զԹորգոմ եւ զԳոմեր եւ զայլս ընդ նմա. ուստի յայտ է թէ յազգէ Թորգոմայ են, վասն որոյ եւ Թուրքք ասի. յորմէ Գոմեր եւ Մագոգ, որ է ազգ ամբոխական. որ եւ զկնի ցրման աշտարակին գնացին արեւելեայք եւ դարձան 'ի կողմն հիւսիսի և առին բնակութիւն յայնկոյս լերանցն մեծաց և երկայնագունից՝ որ կոչին սարինք հիւսիսի: և ձգեցան տարածեցան յարևելից հիւսիսոյ, մինչև յարևմուտս հարաւոյ. և ունին երկուս մասս. մի 'ի Պարս և միւս յԱլանս և 'ի Վիրս, զոր փակեաց Աղեքսանդր Մակեդոնացին. և են նոքա հեզագնացք և անագահք և պարկեշտք 'ի ցանկութիւն կանանց. և պաշտէին մի Աստուած, և կոչէին զնա Կոքտանղրի (1) որ է կապոյտ Աստուած. քանզի զերկինքդ կարծեն Աստուած. և ուտեն զամենայն դարշելի և զմեռելոտի. և ագանին բրդեղէնս մազեղէնս զի այլ ինչ ոչ լինի առ նոսա. և օրէնս ինչ գրով կամ աւանդս ոչ ունին՝ քանզի ոչ գնաց առ նոսա մարգարէ ոք կամ առաքեալ. վասն որոյ Պարսիկք յորժամ զօրացան, ամրագոյն դրամբք փակեցին զելս նոցա. և շինելով 'ի վերայ նորա և առ ընթեր նորա բերդս վեց և կացուցին պահապանս, զի մի ելցեն լցցեն զերկիր բազմութեամբն իւրեանց. և պղծեն զնա դարշութեամբն իւրեանց.

Նոյնպէս Աղեքսանդր Մակեդոնացին գործել ետ զդուռն որ 'ի Դարպանդն երեք հազար դարբնայ 'ի պղնձոյ և յերկաթոյ զվեց ամ 'ի մէջ լերինն և ծովու երկայնագոյն աղխամբ (1) փակելով զնա։ Եւ է վասն նոցա Եզեկիէլ մարգարէ. Գովք և Մագովք կոչելով և իշխան Թովբելայ և Ռոսամոսեքայ։ Եւ նոքօք սպառնայ ազգին Հրէից. և դարձեալ կոտորել ասէ նոցա յԵրուսաղէմ. և երիցս անգամ կրկնէ մարգարէն որ յաղագս նոցա բանն է. ուստի իմանամք երիցս անգամ ելանել նոցա արտաքս. և առաջին ելանելն նոցա այն է որ նախ քան ըզՔրիստոս հինգ հարիւր տասն ամաւ, եղեւ այսպիսի պատճառաւ։

---

(1) Թուրքս կէօյ Թանկրի. Երկն. Նոյն Աստուած.

Թագաւորքն Պարսից 'ի կարեաց ժամանակի հանէին 'ի նոցանէ ընդ դուռնն որքան պիտոյ լինէր վարձուք. որ և Կամբիւսոս որդին Կիւրոսի զոր ոմանք Նաբուգոդոնոսոր կոչեն, եհան 'ի նոցանէ և կռուեցաւ ընդ արքային Եթուրայ. և զՀողոփեռնէս որ 'ի նոցանէն էր առաքեաց 'ի Պաղեստինէ. այսպէս հանէին, և զկնի վճարման պատերազմին դարձեալ տանէին արկանէին 'ի ներքս որ և տանէին ընդ ինքեանս յամենայն բարութեանց երկրի. ոսկի և արծաթ և հանդերձս ազնիւս, և պտուղս. և շարժելին նոցա ցանկութիւն ելանելոյ եթէ կարասցեն գտանել հնարս ։ Եւ եղեւ զի ըստ սովորութեանն տանէին զնոսա յարգելարանն իւրեանց ․ և սակաւք էին տանողքն (1) ․ և մօտ եղեալ ՚ի դուռնն յարեան ՚ի վերայ տանողացն և պահապանաց դրանն և կոտորեցին զնոսա և առին զմի ՚ի բերդլցն և արարին ՚ի հրամանս իւրեանց ․ և այդ արարին յերկիրն իւրեանց և ելին օգնել նոցա , և առին զայլ բերդսն և ամրացան ․ և այդ եղեւ հեռաւոր ազգի սոյա որ կային իշխանք և ծոխագոյնք նոցա , զի կենդանի մի սպիտակ երեւեալ առաջնորդէր նոցա իբրեւ զշուն ․ և յորժամ ցրուէին և մոլորէին մեծագոյնս կանչէր և դարձուցանէր առ ինքն , և պագին նմա երկիր և հաւանեցան ․ և բերէր զնոսա մինչև ՚ի դուռնն և ահա բաց էր , և ելին ընդ նմա ․ Եւ յորժամ կարի յաճախեաց բազմութիւն ազգին ելանել , դարձեալ փակեցին զդուռնն և եկին մինչեւ յԱրաղիայ մերձ աշխարհին Պարսից ․ և այս եղեն երեք բանակք ․ և արկին վիճակս ձգելով երեք գաւաղանս ընդ երկինս ․ մինն անկաւ ՚ի հարաւ , և գնաց բաժինն առաջինն ՚ի կողմն Հնդկաց ․ և միւսըն անկաւ յարեւմուտս հիւսիսի , և գնաց միջին բաժինն բնակեցաւ առ ընթեր Թուրակիոյ և յանուն աշխարհին կոչեցան Կոմանք։ Եւ երրորդն անկաւ ՚ի միջոյս երկրի, և եկին խառնեցան ՚ի Պարսիկս և հնազանդեցան նոցա ուր եւ գնային. եւ դարձեալ բացաւ դուռնն և ելին այլք բազումք, և փակեցին զդուռնն. և կային ՚ի նոսա իշխանք եւթանասուն որք արարին բոլործիրս և կացին շուրջ զնովաւ. և իւրաքանչիւր գաւազան ՚ի ձեռին իւրում և. ձգեցին յերկինս ՚ի վեր և ասացին. որ անկանի ՚ի ծիրն ՚ի գաւազանացն. տէր գաւազանին թագաւոր է. և ինն գաւազանն անկաւ ՚ի ծիրն. և մինն ՚ի նոցանէ ցցեցաւ. և կանգնեցին ՚ի տեղւոջն ինն թագաւորութիւն, և ութն հնազանդեցան միոյն, որում անուն էր Խաքան, և կան ՚ի տեղւոջն հաստատուն որ է աշխարհ ընդարձակ և տիրեն ներքոյ դրանն. և վասն դրանն ոչ մեկնին անտի զի այն է ամրութիւն նոցա. Եւ քանզի բազումք այն են որ խառնեցան յԱրաբացիս՝ նոցա անուամբ կոչին Մուսլիմանք ՚ի Մուսլիմայ առեալ զանուանակոչութիւնն. և առաւել միաբանեցան ընդ նոսա. զի նոքա մի Աստուած դաւանին իբրեւ զնոսա։ Եւ լուան ՚ի նոցանէ. թէ մի երկիրպագանէք արարածոց. անարգեն զխաչն և զեկեղեցի.

---

(1) Երկու օրի. գրամբ. երեք օրի. ասղամբ։

---

(1) Մի․ օրի․ տարողքն։

Իսկ այնոքիկ որք գնացին 'ի Հարաւ և յարեւմուտս որք դիպեցան քրիստոնէից, քրիստոնեայք եղեն. և որք դիպեցան 'ի կռապաշտ ազգ. նոյնպիսիք եղեն վասն զի հաւանականք են. Նոյնպէս և ընդ միոյ դուռն հանին Հայք և Ի իբր յօգնութիւնս իւրեանց 'ի նոցանէ և յարելով 'ի նոսա եղեն քրիստոնեայք և Խիւչախք կոչին. զի խիւն ձոր ասի և խաչն աման որպէս թէ յամանի կան 'ի ձորս և ըստ պիտոյից ժամանակի ժամանակս։ Արդ երկու ելք նոցա լեալ է և երրորդն տակաւին կատարելոց է ըստ մարգարէին Եզեկիէլի. որ ապականելով զաշխարհ գան մինչեւ 'ի Պաղեստին մօտ 'ի յայտնութիւն որդւոյն կորստեան. քանզի Յովհաննէս ասիացին ասէ թէ Տիբեր կայսր առաքեաց առ նոսա դեսպանս. և յորժամ ետես զնոսա Խաքան նեղեաց յոյժ. և հարցեալ զպատճառն ասաց բան է առ մեզ նախատեսութեան, զոր լուայ ես 'ի հարցն իմոց թէ յորժամ թագաւորքն Հռովմոց հնազանդութիւնս առաքեն Թուրքաց, մերձեալ է աւեր աշխարհի. և եհարց Խաքանն եթէ դուք հարկս տայք Պարսից. և նոքա ասեն ոչ. այլ նոքա մեզ տան դիմօսս. և զարմացաւ Խաքանն եթէ այդպէս մեծ է Հռովմայեցւոց թագաւորութիւնն ։ Եւ նոյն Յովհաննէս ասէ . թէ Տրայիանոս ընդ հարկաւ արար զՊարսս ։ Բայց դեսպանքն որ երթան ոչ 'ի բուն աշխարհ նոցա երթան . այլ 'ի Խաքանն որ կայ արտաքս դրանն յայնկոյս աշխարհին Պարսից անդր քան զլերինն Կաւկասու որպէս պատմեցին դեսպանքն Յուստինիանոսի և Հերակլեայ . և թագաւորն նոցա միշտ Խաքան կոչի. և Շապուհ արքայն Պարսից հինգ հազար կուսանս անդ առաքէր և Երաղաց էր անուն աշխարհին . և ձգին նոքա մինչև 'ի Թետալիայ որ Թուրքաստան կոչին , ուստի գերիս էած Մահմուտ ամիրայն 'ի Խորասան . յորմէ ազգէ սուլթանացն Դողլաբաքն , և յետ նորա Ալփասլանն . և կան նոքա բուն օրինօք աշխարհին իւրեանց . բայց միայն թողին զմարդակերութիւնն զոր ունէին յերկիրն իւրեանց . այլ մեք դարձցուք անդրէն 'ի կարգ առաջին ։

Ի թուին Հայոց չորս հարիւր վաթսուն. Թագաւորն Յունաց Կոստանդին Մոնոմախն թագաւորեաց ամս երկոտասան , այր մեծամիտ և առատաձեռն ։

Իսկ զթագաւորութիւնն Տաճկաց ունէր Աբլաբաս՝ յորում աւուր ընկղմեցաւ Ջրով Եզնկայն , և մնաց տուն մի ուղղափառ.

ուխ և ողորմածի առն, որում անուն էր Սկեռակոս։ Եւ 'ի նոյն ամի եղեւ շարժ ահագին 'ի պահքն առաջաւորաց։ Եւ զկնի այնորիկ եղեւ աղմուկ յԱնտաք յեկեղեցականսն 'ի միադաւանեան վասն խնդրոյ ինչ. և կէսքն 'ի նոցանէ գնացին առ պատրիարգն երկաբնակացն 'ի դատաստան։ Եւ նա արար զնոսա քաղկեդոնիկս, և առ զեկեղեցիս ուղղափառացն զոր շինեալ էր 'ի վերայ գերեզմանի Ղուկասու աւետարանչի. որպէս նախ քան զայն առեալ էին զսուրբն Պետրոս։

Իսկ 'ի զատկի տօնին էառ Տէր զվրէժն. քանզի մինչ կային 'ի պաշտամանն եղեւ որոտ յերկինս, և անկաւ հուր 'ի Տեառնէ. և այրեաց զպատրիարգն և զբազումս ընդ նմա. և ոսկր մի անգամ ոչ կարացին հանել 'ի հրոյն. և գիտացին ամենեքեան, եթէ դատաստան Տեառն է՛. և ուրացողքն դարձան 'ի խոստովանութիւնս իւրեանց. և բազումք յօտարացն մեր եղեն, և փառաւորեցաւ հաւատս մեր։

Իսկ 'ի լնուլ թագաւորութեանն Տաճկաց չորս հարիւր երեսուն ամ, պատառեցաւ իշխանութիւն նոցա 'ի բազում մասունս. և սկսաւ թագաւորութիւնն Թուրքաց. զի 'ի գերեաց անտի զոր ած Սահմուտըն և բնակեցոյց 'ի պարարտ երկրի, և եթող զնոսա 'ի կամս անձանց, աճեցին և հըպարտացան: Եւ մին 'ի նոցանէ իշխանացաւ և թագաւորեաց որոյ անունն էր Տուղրիլ բէկ. Գոզլաբէք ասացաք վերագոյն ըստ այլոց կոչման. որ և մեծացաւ բարձրացաւ. և եղև (1) գոռող մեծ և տիրեաց բազում աշխարհաց և առաքեաց զօրս բազում 'ի սահմանս Հայոց մինչև 'ի Մելտենի, և առին աւար բազում, և գերի. և դարձան վերին կողմամբքն. և կալաւ զնոսա ձիւն սաստիկ 'ի լերինս Սասնոյ. և մեռան երեք հազար անձինք ի Թուրքաց: Իսկ գերիքն ազատեալք դարձան. զի վարժ էին ցրտոյ և ձեան:

Եւ թագաւորն Յունաց Մոնոմախոս վախճանեալ. առ զթագաւորութիւնն դուստրն նորա Թէոդոռն ամ մի. և յետ նորա Միխայէլ ծերն ամ մի. այր պարկեշտ և պահեցող. որ ոչ ուտէր զվաստակս այլոց. այլ արուեստիւ ձեռաց իւրոց կերակրէր տարգալս գործելով վաճառէր: Սա յորժամ ետես թէ զօրացաւ Թուրքն. և տիրեաց Պարսից և Մարաց և Ասորեստանեայց և գայր աւերէր զերկիրն Յունաց, երկեաւ և անցոյց զքրիստոնեայն յայնկոյս ծովուն, և յամուրտեղիս։ Եւ եկեալ Թուրքացն, և գըտեալ զերկիրն Ատալիայ և զՄւճն և զԿաւնըն անմարդ (անմարդաբնակ), ապա բնակութիւն առեալ դադարեցին 'ի տեղւոջն. և վասն այնորիկ տրտնջեցին բազումք զոր արար ծերն. բայց մարդասիրութիւն արարեալ խնայեաց 'ի հաւատացեալսն։

---

(1) Մի օրի. Թագաւորեաց

Եւ իշխան մի Կոմանոս անուն յինքն շըրջեաց զԹագաւորութիւնն. և Միխայէլն գերծեաց զգլուխն գնաց 'ի վանս. և Կոմանոս վարեաց զԹագաւորութիւնն ամս երկու։ Եւ յետ նորա Կոստոս (1) Տուկիծն յերկրէն Պամիլլագոնեայ (2). ամս ինն։ Սա զօրացեալ եկաց ընդդէմ Թուրքաց. և շինեաց զպարիսպն Մելտինոյ։ Եւ եկեալ Քռեսարոս (3) զօրագլուխն Տուղրիլին առ զՀալապ. և այս եղեւ սկիզբն առնլոյ քաղաքին 'ի խորին Ասորոց որ է կողմն յարեւմտից Միջագետաց։ Եւ տիրեաց 'ի Դամասկոսէ մինչեւ 'ի ծովն Ադրիանոս (4) և գնաց 'ի ծովն Պոնտոսի։

Յաւուրս յայսոսիկ շնչեաց սատանայ 'ի պատրիարքն Կոստանդնուպօլսի. և արար գործ մի սոսկալի հրեշտակաց և մարդկան։

---

(1) Երկու օրի. Կոստիոս։

(2) Այլք՝ Պամփագոնիայ. Մի օրի. Պամփրագոնեայ։

(3) Մի օրի. Քիասարոս. Մի օրի. Քրիսարոս։

(4) Երեք օրի. Ադրիանոս։

Վասնզի գրգռեաց զԹագաւորն և զիշխանսն. և զխաչն և զՀաղորդ և զմեռոն ուղղափառացն այրել ետ և առ ոտն կոխել. և ոչ հացի անգամ և ձիթոյ պատիւ ոչ առնէին. և ետ տանել առ ինքն զպատրիարքն Աթանաս քսան և հինգ եպիսկոպոսօք. և նախ քան զհասանիլն նոցա 'ի քաղաքն 'ի բարկութենէ Տեառն հարաւ, և պատառեցաւ իբրեւ զԱրիոս ապականիչն այն. և Նախատիչն Քրիստոսի որդին կորստեան։ Եւ արարեալ քննութիւն հաւատոյ, Յոյնք պարտեալ լինէին 'ի Հոգւոյն. ըստ որում զայրացեալ սուրբն Աթանաս անէծ զնոսա. և նոքա ետուն զնա իւրովքն յաքսորս 'ի Քիոս կղզի. և աղաչանօք Թագուհւոյն դարձաւ յաթոռ իւր։

Իսկ Տուկիծն վախճանեալ Թագաւորեաց Դէօժանն Ռոմանոս. և Թագաւորն Թուրքաց Տուղրիլն մեռաւ. և առ զտեղի նորա Ալփասլան (1) որ և անձամբ եկն 'ի Հայս. և հնազանդեաց զնոսա առեալ զՇամշուտէ. և անցեալ յԱնի հարիւր հազարաւ առ զնա և սպան հազար այր 'ի փոս մի, և լոգացաւ արեամբ. և դարձաւ 'ի Նախջուան։

Իսկ Դէօժանն կուտեալ անթիւ զօրս,

---

(1) Մի օրի. Ալփասղան։ Միւ օրի. Ալփսեսլամ.

չոգաւ 'ի վերայ նորա . և եկեալ 'ի Կարս այրեաց զՀայոց եկեղեցին. և երդուաւ եթէ յաղթէ Թուրքաց կամ ջնջէ բնաւ զՀայս կամ 'ի կրօնս իւր դարձուցանէ ։ Եւ լուաւ Տէրն և ոչ յաջողեցաւ նմա. քանզի կոտորեցաւ զօրքն նորա , և ինքն ըմբռնեցաւ 'ի 'ի գերութիւն ։ Եւ լուեալ 'ի Կոստանդնուպօլիս թագաւորեցուցին զՄիխայէլն ։ Իսկ Դիէօժանն զերծեալ աղաչանօք և ուխտադրութեամբ յԱլփասլանայ կամեցաւ գնալ 'ի Կոստանդնուպօլիս . և կալեալ զնա հանին զաչսն . և շիջաւ փառք նորա սնոտիք . եւ պարծանքն 'ի չարն ։ Յետ այսորիկ առաքեաց Ալփասլան զՍուլիման քուրորդի (1) իւր 'ի Հայս . և իշխանացաւ նոցա և թագաւորեաց . որ և եմուտ 'ի գիշերի յԱնտաք և առ զնա , և զսուրբն Պետրոս զաւագ եկեղեցին արար Մզկիթ ։

Եւ 'ի սոյն ժամանակս ամիրայ մի պարկեշտաձեւ , աղօթասէր և քաղցրաբարոյ , եկն 'ի Կապադովկիայ զօրօք և հրամանաւ Ալփասլանայ . էառ զՍեւաստ և զԿեսարիայ , և տիրացաւ և մեծացաւ . և այս եղեւ սկիզբըն տանն Դանիշմանայ . զի այս էր անուն նորա ։ Քանզի յորժամ զառաջինն ածան սոքա գերութեամբ 'ի Թետալացւոցն ուսան զօրէնս Տաճկաց, և եղեն հաւանեալք օրինացն Մահմետի յայնմ հետէ. որոց առաւել վրէժխնդիր և նախանձաւոր ցուցաւ ազգս այս :

---

(1) Եղբօր որդի . որդի իւր ։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս աստի սկսանի պատմութիւնս 'ի յառնումն Կիւլիկիոյ առ Հայս :

ՅԱՒՈՒՐՍ յայսոսիկ արք յիսուն հայկազունք նեղութիւն կրեալք 'ի Թուրքաց ելին յանապատս սպառազինեալք և 'ի տեղիս տեղիս առնէին վնաս Թուրքաց ծեծելով զնոսա. և եկին յերկիրն Մարաշայ, և տեսին անդ այր մի համազգի իւրեանց. և խօսեցան ընդ նմա ըստ մտի և ասեն եկ ընդ մեզ, և լեր մեզ իշխան և խնդրեսցուք մեզ դադարս աջողելովն Աստուծոյ. և լուաւ նոցա : Եւ էր նա անձնեայ. և գեղեցիկ երեսօք, և արիական հոգւով, և գնաց ընդ նոսա. և էր անուն նորա Փիլարտոս, և մըտին յերկիրն Կիւլիկիայ. և ահա դեռ եւս տիրեալ էր երկրին Թուրքն, և Թափեցին 'ի նոցանէ բերդ մի, և ամրացան անդ ։ Եւ զի կարճ ասացից առին զբովանդակ երկիրն դղեկօք և քաղաքօք լերամբք և դաշտօք, և մեծացաւ յոյժ Փիլարտոսն, և եղեւ անուանի. և եղ 'ի դուքս և առ զՄարաշ և զԿապղթայն, և զՄելտենի, և զՔեսուն, և զԿարկառն, և անց յայնկոյս Եփրատայ. և և առ զՈւռհայ և զայլս բազումս և սարսեցին 'ի նմանէ Թուրքն ։

Իսկ լուեալ Յունաց Թագաւորին առաքեաց 'նմա պարգեւս և անուանեաց զնա Սեւաստոս. սակայն միմեանց ձայն տուեալ Թուրքաց ժողովեցան յամենայն կողմանց 'ի վերայ նորա և վանեցին զնա ։ Եւ առին ըզկէս երկրին 'ի նմանէ, և արարին հնազանդս։ Եւ յետ այնորիկ չոգաւ 'ի Բաղդատ զի առցէ զաշխարհն իւր լիով, և տկարացաւ 'ի հաւատոյն ։ Եւ էառ գիր իշխանութեան իւրում առաջնոյ, բայց ոչ յաջողեցաւ ։ Քանզի յորժամ եկն առեալ էին զմնացեալ մասն նորա, և ելին ընդդէմ և հալածեցին զնա. որ և հառաչեալ 'ի խորոց սրտէ ելաց դառնապէս. և կտրեալ զհերսն չոգաւ յապաշխարութիւն և 'ի հաւատս իւր 'ի դանխուլ կրօնաստանս ։

Իսկ Արաբացիքն որ մինչեւ ցայն վայր

Տաճիկք կոչէին յանուն գլխաւորին իւրեանց որոյ անուն էր Տայաւ, խառնեցան 'ի Թուրքն և եղեն ազգ մի վասն համակրօնութեան իւրեանց. և միմեանց անուանք կոչին: Որ և 'ի Բաղդատ իշխանն էր յազգէն Մահմետի. Թողին զնա անդ և Խալիփայ անուանեցին, որ է յաջորդ 'ի Մահմետէ, կամ յետ նորա, և հնազանդեցան նմա երկոքին ազգն գրով և երդմամբ. զի 'ի նմանէ առցեն օրէնս և հրամանս, և պատուեսցեն զնա իբրև զՄահմէտ. և ամրացուցին զնա յոյժ: Եւ յայնմ հետէ հրամանաւ սուլտանին որ 'ի Խորասան և 'ի Խալիփայէն առնուին պատիւ ամիրայութեան թուեցեալքն արժանաւորք, և գնային տիրէին աշխարհաց և գաւառաց. որպէս Սուքմանն ամիրայ Թուրք ազգաւ, գնացեալ տիրեաց Հայոց և կոչեցաւ Շահրի Արմէն որ է Թագաւոր Հայոց: Եւ Արթուխն եկեալ 'ի Միջագետս տիրեաց երկրին, ուստի կոչեցան Արթուխք և են ազգաւ Թուրք:

Իսկ Թագաւորն Յունաց Միխայէլն վատասրտեալ 'ի Թուրքաց պղերգացաւ 'ի պատերազմէ՝, և զչարեալ իշխանն Նիկեփոր ապստամբեալ մարտեաւ ընդ Կոստանդնուպօլիս և առ զքաղաքն. և սկսաւ կոտորել:

Իսկ Միխայէլն առ զթագն 'ի վերայ ձեռացն և գնաց ընդ առաջ նորա և ասէ. առ զոր խնդրեսդ և արգել զսուրդ 'ի քրիստոնէից. և արար այնպէս. և չոգաւ Միխայէլն կրօնաւորեցաւ 'ի վանս. և զերկուս որդիսն նորա ներքինացոյց Նիկիփոռ. և ոչ հաճեցան ընդ այն արքունիքն և ատեցին զնա:

Վասն որոյ փրացեալ Ալէքս ումն թագաւորեաց և արար Նիկիփորայ. զոր և նա Միխայելին արար. և թագաւորեաց ամս քսան և ինն:

Զայսու ժամանակօք մինչ տիրէին Թուրքըն Երուսաղեմի և ամենայն ծովեզերացն, իշխան մի Զնձիլ անուն եկն յԵրուսաղէմ յաղօթս. և առին 'ի նմանէ դահեկան մի ոսկէս՝ յամենայն ումեքէ աղօթաւորէ. և յետոյ այլ ևս պահանջէին. և 'ի չտալն զաւելորդն՝ հարին զգլուխ նորա և խլեցաւ աջոյ ակն, և նորա առեալ դնէր 'ի գրապանն և տանէր 'ի Հռովմ շրջեցուցանէր և շարժէր զնոսա 'ի նախանձ. և եկին անտի Կոմսունք և ամբարձին զգլուխս իւրեանց. և կուտեցան առ նոսա զօրք բազումք. և եկին 'ի Կոստանդնուպօլիս. և պաշարեցին զնա զեւթն ամ: Իսկ յամին եւթներորդի եղեւ շարժ յԱնտիոք և անկաւ պարիսպ մի յարմատոց խլեալ. և յայտնեցան 'ի նմա պատկերք պղնձիք 'ի վերայ պղնձի երիվարաց 'ի կերպարանս և 'ի ձևս Փռանգաց. և բերին առաջի Ամիրային և ժողովեալ զքաղաքն տեսանել թէ զի՞նչ իցեն այնք. և ոմանք ասացին թէ կուռք են 'ի հին ժամանակաց. և հրամայեաց ամիրայն խորտակել զնոսա և ցրուել. և եղև այնպէս Եւ լուաւ զայն կին մի հին աւուրբք կուրացեալ և ասէ, այն տլիսմ՛ էր դիւթական հնարիւք գործեցեալ 'ի Յունաց, զի մի ելցեն Փռանգք յայնոմ կողմանէ ծովուն. զի ահա ո՞չ տեսէք երկաթեղէն շղթայիւք կապեալ զնոսա։ Եւ իմացեալ Ամիրային յոյժ արտմեցաւ վասն քակման պատկերացն, և իսկոյն հնազանդեալ զԿոստանդնուպօլիս անցին յայնկոյս զօրքն Փռանգաց. և եկին յԱնտաք և առին զնա և էին ինն գլխաւորք. երկուքն 'ի նոցանէ յազգէ Թագաւորաց էին, որոց անուանքըն էին այսոքիկ Ոոծէլ, Պէամուն, Ճօսլին, Կաղարան, Կոնդոփրի, Սալէկէս, Դիբախտ։

Յայնժամ իշխանն Ուռհայոյ Թէոդորոս որ կայր անդր 'ի Փիլարտոսայ հայկազնոյն եղեալ՝ առաքեաց առ նոսա. զի առաքեսցեն տէր քաղաքին Ուռհայոյ։ Եւ զըուարճացան յոյժ և ասեն. օրհնեալ ես Քրիստոս Աստուած. նախ հաւատաց ՚ի քեզ Ուռհայ. և դու յառաջ նմա Թագաւորեցեր հաւատովքն արքային Հայոց և ապա Երուսաղեմի՝ և այժմ զնա ետուր մեզ կանխագոյն առհաւատչեայ Երուսաղեմի Թագաւորել քեզ Տէր հաւատացելովքս ՚ի քեզ:

Եւ առաքեաց Կոնոփլի զեղբայրն զՊղատոնն. և տիրեաց Ուռհայոյ: Եւ յետ այնորիկ Կիսան և Եղիւսան ամիրայն Անտաքայ. որ կային ՚ի Թաքստի ելին և փախեան. և դիպեցան նոցա արք երկու Հայ ազգաւ արխականք սպանին զնոսա. և առեալ զգլուխս նոցա բերին առ Կոմսունան. և յոյժ պատուեցան ՚ի նոցանէ:

Զայսու ժամանակաւ Սուլիման որ Թագաւորեալն էր յաշխարհին Յունաց սպանաւ ՚ի յԻկոնիոն. և Թագաւորեաց Խլիճասլան ՚ի տեղի նորա:

Եւ լուաւ Սուլտանն որ ՚ի Խորասան զելըն ՚ի Փռանգաց և յղեաց ընդդէմ նոցա՝ զԿիւռապաղատն հարիւր հազար հեծելովք, որ եկեալ պաշարեաց զՓռանգն յԱնտաք և յոյժ նեղեցին զնոսա. որպէս ապաւինեալք յԱստուած աղօթիւք անդադար գտին ըզգեղարդն Քրիստոսի յայտնութեամբ պատրխարգլին 'ի հիմն եկեղեցւոյն պահեալ. և նովաւ զօրացեալ կոտորեցին զԹուրքն երեւելի հրաշիւք։ Եւ զահի հարան այլազգիքն և խրտեան 'ի ծովեզերացն և չոգաւ զօրն Փռանգաց. և առ զամենեսեան մինչև 'ի Յոպպէ և եհաս յԵրուսաղէմ։ Եւ նա լուցեալ էր Արապկօք որք այն ինչ եկեալ յԵգիպտոսէ և առեալ էին զնա 'ի Թուրքացն, և սուր 'ի գործ արկեալ կոտորեցին զնոսա. և պատուականքն 'ի նոցանէ լցան 'ի տաճարըն. և հանեալ զնոսա արտաքս սպանին զամենեսեան, և պատրիարգն կալաւ փողոց մի և կոտորելով եհաս 'ի սուրբ Յարութիւնն և արեամբ մարզեցան ձեռք նորա ընդ սուսերն. և լուանայր անդ ասելով զսաղմոս զայս ուրախ լիցի արդար 'ի Տէր 'ի տեսանել զհատուցումն իւր և զձեռս իւր լուասցէ յարեան մեղաւորի. և նոյն ժամայն արար պատարագ և ասաց. այսպիսի հաճոյական պատարագ Աստուծոյ ես այլ ոչ մատուցի 'ի կեանս իմ։

Եւ թագաւորեաց յԵրուսաղէմ Կոնոփրի ամս երկու. և զկնի նորա Ապախտոյնն (1) ամս հնգետասան։

Իսկ Խլիճասլան կամեցաւ ելանել 'ի կողմանս Մելտենւոյ, և լուեալ զառնուլն Երուսաղեմի դադարեաց: Բայց Դանիշմանն կռուէր ընդ Մելտենի զամս երիս այրելով զվաստակս նորա:

---

(1) Մի օրի. Պաղտոյն։

Եւ իշխան մի կայր անդ 'ի Փիլարտոսէն հետէ որ խոստացաւ զքաղաքն տալ 'ի Փռանգն և ստեաց. և ետ զնա 'ի Դանիշմանըն տալով նոցա հաց և անասուն և ազատութիւն, և շինեցաւ քաղաքն. և յայնժամ 'ի տեղիս տեղիս իշխէին ոմանք յազգէն Հայոց 'ի Փիլարտոսին ժամանակաց: Վասիլըն ունէր զՔեսոն և զՌաբան. և որդիքն Ռոբենի զԿիւլիկիայ:

Զայսու ժամանակօք անկաւ աղմուկ 'ի մէջ Տաճկաց և Թուրքաց 'ի Խորասան. և կռուէին ընդ միմեանս և յափշտակէին ըզմիմեանց: Բայց 'ի Կապադովկիա, և 'ի Բիւթանիա ոչ գոյր Տաճիկք, այլ Թուրքք ունէին զնոսա. և տային պատերազմ ընդդէմ Յունաց: Իսկ Դանիշմանն յետ առնլոյն զՄելտենի անցելոյ երկու ամաց մեռաւ: Եւ եկն Խլիճասլան. և առ զՄելտենի 'ի Սաղուրէն (1) յորդւոցն Դանիշմանայ. և տիրեաց նմա:

Իսկ Սուլտանն Խորասանայ կոչեցաւ Խիաթատին. և յղեաց զՉաւլի ընդդէմ փռանգաց. և յորժամ եկն 'ի Մօսուլ Սղրմիշ ամիրայն ել ընդդէմ նորա. և կապանօք ած զնա 'ի քաղաքն և 'ի սակաւ աւուրս մեռաւ Սղըրմիշն և ազատեցաւ Չաւլի. և յղեցին Մօսլցիք առ Խլիճասլան և խոստացան նմա զերկիրն. չոգաւ և տիրեաց նմա: Եւ Չաւլի դարձեալ զօրացեալ չոգաւ 'ի վերայ Խապուրին և առ զնա. և Խլիճն լուաւ և գընաց պատերազմել ընդ նմա. և յանցս գետոյն կորեաւ սատակմամբ. և խնդացեալ Չաւլի գնաց և առ զՄօսուլ և զՄծբին. և առեալ բազում գանձս դարձաւ 'ի Խորասան:

---

(1) Երկու օրի. 'ի Սանղուրէն.

Իսկ զմահն Խլիճասլանայ լուեալ 'ի թագաւորութեան նորա թագաւորեցուցին ըզՏօղասլան որդի նորա փոխանակ հօրն. և նա արար իւր երկու զօրագլուխս Ղայլաղան(1) և զՊիզմիշն. էին նորա երեք եղբարք, որոց անուանքն Սրապ և Շահնշահ և Մասուտ. և Շահնշահ սպան զՄասուտն. և զՍրապն սպան Ամիրխազէ որդին Դանիշմանայ զի ոչ կամէր տիրել նմա իշխանութեան հօր իւրոյ. և այլ ոչ ևս պակասեաց թշնամութիւն 'ի տանէ նոցա:

Յաւուրսն յայնոսիկ եկն իշխան մի Փըռանգաց երեսուն պատուական արամբք անուն նորա Կունտափրի յԵրուսաղէմ յաղօթըս . և այլ ոչ կամեցաւ դառնալ անդրէն այլ եղէն կրօնաւորք . և կացին աղօթիւք և սրբութեամբ յԵրուսաղէմ ։

---

(1) Մի օրի. Ջելալան.

Իսկ երկրորդ թագաւորն Երուսաղեմի Պաղտունն և պատրիարգն աղաչեցին զնոսա ելանել ՚ի պատերազմ ընդդէմ Թուրքաց զի այն առաւել հաճոյ է ասեն Աստուծոյ պատերազմել ընդ անօրէնսն ՚ի փրկութիւն քրիստոնէից . և ետուն ՚ի բնակութիւն նոցա զտաճարն և ապրանք ՚ի ծովէ . և ՚ի ցամաքէ նաւս գեղերս և այգիս . և սովորեցին այլք գալ և յարիլ ՚ի նոսա ՚ի նոյն կրօնըս և հաստատեցին իւրեանց կանոնս զի կացցեն անարատ կուսութեամբ ՚ի փառս Աստուծոյ , և ունիցին զամենայն ինչ հասարակաց . և չունիցին առանձնականս և ոչ ինչ հոգեւորս կամ մարմնաւոր . և կոչեցին զինուորք Քրիստոսի կռուելով ընդ անօրէնսն և մի բնաւ ընդ հաւատացեալսն ։

Եւ լուեալ բանս այս ՚ի Հռովմ և յամենայն տեղիս , և ետուն նոցա միաբանութիւնս բերդս և գիւղս և մուտս հարկաց յերկրէ քրիստոնէից . վասն որոյ մեծացան և փարթամացան . և եղէն զօրք առանձինն.

այսու օրինակաւ եղեւ սկիզբն Փրերացն որ կոչին Սւսպեթալք. քանզի ստացան տունս աղքատաց և հիւանդաց։ Եւ զինի բաժանեցան այլք որք առանձնացեալք ասացին տուք մեզ բաժին զամենայն հնոտիս ձեր գըրով, և ետուն նոցա. և առեալ ծախէին զայն և հարստանային, և խնդրեցին հող ՚ի ստացուածս պարտիզի որչափ կրէ գրաստ մի և կրէին զայն զցայգ և զցերեկ։ Եւ հայեցեալ տեսին զի ոչ կարէին դիմանալ երկոցունցն գնեցին դարձեալ զհինս իւրեանց և զհողն բազում գնոց տալով ոսկի արծաթ և գեւղս։ Եւ ետուն այլք միաբանութիւնս և նոցա. և կոչեն նոքա Դամիլ(1) որ է աղքատաւորուն. և մեք զայս լուաք պատճառ նոցա։

Իսկ ՚ի յազգէն Արթուխեայն յարեաւ ոմն Պաղակ անուն և Թագաւորեաց և եղեւ անուանի և գնաց ՚ի վերայ Կամախայ. և Մակուճակն(1) տէրն Կամախայ փախեաւ ՚ի Տրապիզոն ապաստանեալ ՚ի Յոյնս. և և առեալ ՚ի նոցանէ օգնականս եկն ՚ի վերայ Պաղակին. և հարան զօրքն Յունաց և ըմբռնեցաւ Մակուճակն ՚ի Խաւռաւան(3) զոր վաճառեցին երեսուն հազար դահեկանի։

---

(1) Մի օրի. ունի ՚ի լուսանցն Դամփլքէ։

(2) Ոմանք՝ Մանկուճակն։

(3) Մի օրի. Խաւվաւան. Մի օրի՝ Խօռաւղն։

Ընդ այն ժամանակս արքայազունքն Հայոց որ յաւուրս Վասլի կայսերն եկեալ էին 'ի Վասպուրականայ և առեալ զՍեւաստ և զԿեսարիա և զԽաւատանէքն փոխելով զերկիրն իւրեանց. որ և զկնի ժամանակաց պակասեցան 'ի նենգութենէն Յունաց և տկարացան. և մտին յերկիրն Կիլիկեցւոց և բռնացեալ ունէին զբազում գաւառս դղեկօք և ամրոցօք Ռուբինեանքն կոչեցեալք. որք էին յազգէ երկուց արմատոց ազնուական և գոռոզ Թագաւորաց Հայկազանց և Սենեքերիմանց խնամութեամբ խառնեալ ընդ միմեանս՝ որք զառաջինն Թագաւորեցին 'ի Վասպուրական յորում ժամանակի և Բագրատունիքն Թագաւորեցին 'ի մեծն Հայք. և այժմ դարձեալ սկսան Թագաւորել յերկիրն Կիլիկեցւոց և Սաւրացւոցն։

Նախ Ռուբէն սկիզբն արար զօրանալոյ նոցա. և ապա Կոստանդին և Թորոս և այլք մի ըստ միոջէ։ Ի հինգ հարիւր ամի իշխանութեանն Տաճկաց դարձեալ Թագաւորեաց Սատաղ(1) Տաճիկ 'ի վերայ Թկրթայ, և առ զնա. ժողովեցան ազգայինքն իւր. և լուաւ Խիաթատին Սուլթանն 'ի Խորասան, և ել ամենայն ուժով 'ի վերայ նորա . և վանեցաւ առաջի նորա Սատաղայ և ըմբռնեալ սպանաւ : Եւ կէսք աստ աւեն բառնալ Թագաւորութեանն Տաճկաց զկնի եւթանասուն ամի իշխանութեանն Թուրքաց :

---

(1) Մի օրին. Սատախ։

ԳԼՈՒԽ ԻԳ .

Յաղագս կռուելոյ արագիլք և խորդք :

Զայսու ժամանակօք եղեւ մեծ պատերազմ հաւուց . քանզի խորդք և արագիլք զբազում աւուրս ժողովեցան յաշխարհն Ամթայ 'ի տեղին՝ որ կոչի Թլխում . և ապա յերկաքանչիւր կողմանց եւթն եւթն դեսպանս արձակեալ առ միմեանս ղերիս աւուրս . և ապա բախեցին զմիմեանս մեծամեծ ճչիւք . և կռուեցան յերրորդ ժամէ աւուրն մինչեւ ցիններորդ ժամն . և անկան յերկոցունց կողմանցն բազումք յոյժ . և ապա պարտեցան արագիլքն և փախեան . և խաղաղացաւ պատերազմն . և զպատճառն գիտէ արարիչն :

Յորում ժամանակի մեռաւ Պաղակն . և բռնեալ Ամիրխազէ որդին Դանիշմանայ զօգաւ և առ զՄելիտինէ. և արար նոցա դիւրութիւն, զի Պաղակն նեղէր զնոսա յոյժ. և խալիփայն առաքեաց նմա թագ և անուանեաց զնա Մելէք խազի, թագաւոր Հիւսիսոյ:

Իսկ Յունաց թագաւորեաց Կոմանէ և առ զԿաստամանի և բերդս երկու. և չոգաւ Մելէք խազի, և առ ՚ի ձեռաց նորա դարձեալ: Ի սոյն աւուրս (1) Զանկի ամիրայն Մօսլայ եկն և առ զՀալապ. և ետուն ՚ի նա սիրով վասն համբաւոյ նորա թէ քաղցր և արդարադատ է: Եւ ՚ի նոյն ամի առաքէն դարձեալ Մելէք խազեայ պարգեւս խալիփայն և թագաւորին չորս ալամ սեաւ, և շղթայ մի (ոսկի) պարանոցին և գաւազան ոսկի և նաղարայ և փող: Եւ յորժամ բերին զայս, գտին զնա մեռեալ. և ետուն զպատիւն որդւոյ նորա Մահմուտին. և արկին զշղթայն ՚ի պարանոցն և կապանս ոսկեղէնս յոտսն. և հարին զնա գաւազանաւ երկոտասան անգամ, նշանակեալ այնու զհնազանդութիւնն. և քարոզեցին զնա Մելէք այր պարկեշտ ՚ի վարս Տաճկաց զի գինի ոչ ըմպէր և անօրէնապէս ոչ գնայր. սակայն ատէր զքրիստոնեայս, և նեղէր զնոսա:

(1) Մի օրի. ՚ի սոյն ամի:

Իսկ Զանկի ամիրայն տարեալ պատերազմ ընդ Արթուխին հնազանդեաց զնոսա։

Զայսու ժամանակօք եղանէ պապն Հռովմայ և գայ յԵրուսաղէմ. և անտի յԱնտաք. և մատեան առ նա Յոյնք քաղկեդոնիկք և սկսան կատակել զՅակոբիկ Ասորւոյն և ասեն. խաբեբայքս այս ատեն զմեզ և զժողովն Քաղկեդոնի, և պատուեն զԲարսամաւ որ անէծ զժողովն. և ունին զաջն նորա ոսկի գզրոցաւ և պատրեն զմարդիկ ասելով նշանս առնէ։ Եւ յորժամ աղաչեմք ցուցանել մեզ՝ ասեն ոչ կարեմք. զի մի լիցի ասեն հեղեղ և կարկուտ. և զայս ասէին և ծիծաղէին։ Եւ հրամայեաց պապն բերել զաջն 'ի սուրբն Պետրոսի յեկեղեցին եւ երթեալ բերին 'ի լեռնէն. և ասաց բանալ. և ասեն մեք ոչ իշխեմք, բաց դու հայր. և յորժամ բացաւ, միգացաւ երկինք և եղեն ձայնք և որոտմունք անձրեւք, և կայծակունք և կարկուտ մեծամեծք, և կամէր տապալել զքաղաքն. և անկան յերեսս պատրիարգն և ամենայն քաղաքն եւ անդէն անփոփեցին զաջն. և լալիւն մեծ եղեւ՝ ապա դադարեաց վնասն. և յամին յայնմիկ մարախ ուտէր ըզսահմանսն Անտաքու. և ասաց պապն արարէք հսկումն վասն մարախս. դուք Ասորիքդ, և հաւատամ եթէ ողորմեսցի Տէր. աղաչանօք սրբոյն որ արար զնշանս զայս մեծ ։ Եւ ժողովեալ ապա ուղղափառացն արարին աղօթս յայգուէ մինչեւ յառաւօտն . ապա առեալ զաջ սրբոյն ելին արտաքոյ քաղաքին հանդերձ կենսակիր նշանաւն և զօրութեամբըն Քրիստոսի և աղօթիւք ուղղափառացն . և միջնորդութեամբ և բարեխօսութեամբ սուրբ աջոյն միահաղոյն ամենայն բազմութեան մարախոյն վերացեալ գնաց և լցաւ ՚ի ծովն ։ Եւ փառաւորեցին զԱստուած և զսուրբն Պարսամա ։

Եւ եդ նզովս պապն եթէ ոք իշխեսցէ հայհոյել զնզովողսն Քաղկեդոնի ժողովոյն ։ Այլ համարձակ նզովեն . զի ահա որ քննէ ըզծածուկս Աստուած հանգուցեալ է յոսկերս նոցա , և մեք ոչինչ կարեմք ասել առաջի նորա . և խնդրեաց զչարախօսս սրբոյն զի պատժեսցեն , և ոչ գտան (1) . զի փախուցեալ էին . և ասաց մի ընդունիլ զնոսա ՚ի քաղաքս զի պատճառք վնասու եղեն մեզ ասէ ։ Այլ դուք անդամքդ Քրիստոսի խաղաղութիւն կալարուք առ միմեանս առաջի Աստուծոյ. և տուք պատերազմ միայն ընդ անօրէնսն:

---

(1) Աստ՝ այլ օրինակք երեւին պակաս ունել . յորոց զմիոյն դնեմք աստ , որ է . և եդ նզովս պապն . եթէ ոք իշխեսցէ հայհոյել՝ առցէ զնզովս Քաղկեդոնի ժողովոյն . զի ահա ասէ որ քննէ զծածուկս Աստուած հանգուցեալ է յոսկերս նոցա . և մեք ոչ ինչ ունիմք ասել առաջի նորա ։

ԳԼՈՒԽ ԾԴ.

Յաղագս գեղարդեանն Քրիստոսի:

Եւ յետ այնորիկ բերին զգեղարդն Քրիստոսի անուանեալն, և ասաց. զքո՞ւն գեղարդն Քրիստոսի գիտեմ, եթէ Թադէոս առաքեալն 'ի Հայք տարաւ. այս ո՞ր է. և գտաւ պատմութիւն զնմանէ որ գրեալ էր, թէ ազգն Հրէից որ բնակեալ էր 'ի Տիբերիա՝ յաւուր ուրբաթու խաչելութեանն Տեառն գողացան մանուկ մի և տարան յանապատ, և խաչեցին զնա և փշով պսակեցին և ծիրանի և կարմիր զգեցուցին, և գեղարդեամբ խոցեցին զնա. և զամենայն որպիսութիւն կատականաց (1) Տեառն արարին նմա. նոյնպէս և հրաշք Տեառն (2) մերոյ կատարեցան 'ի վերայ մանկանն զի խաւարեցաւ

(1) Երեք օրի. կապանաց: Մի օրի. [զամենայն կատականս որպէս արարին Տեառն:

(2) Երկու օրի. հրաշքն որ 'ի վերայ Տեառն մերոյ. կատարեցաւ 'ի վերայ մանկանն

արեգական և շարժեցաւ երկիր և պատառեցան վէմք և արիւն և ջուր բղխեաց 'ի տիգախոց կողէն . և գիտաց ամենայն աշխարհըն Փիւնիկեցւոց զգործեցեալն յեղեալ նորշաննէն . եկեալք 'ի խնդիր և յայտնեցան իրքն և փախեան Հրեայքն յիշխանութիւնս Տաճկաց . և առաքեցին առ քրիստոնեայսն զի թողցեն նոցա զմեծ մեղանսն . և նոքա խոստովանեցին զՔրիստոս Աստուած ճշմարիտ քարոզեալ 'ի մարգարէից , և խաչեալ 'ի փրկութիւն աշխարհի :

Եւ երդուան նոցա քրիստոնեայք և կոչեցին (զնոսա) անդրէն . և մկրտեցան առհասարակ և եղեն քրիստոնեայք յոյժ բազմութիւն հաւատացելոց 'ի փառս Քրիստոսի . և այս է գեղորդն այն ուստի լինի 'ի սմանէ մեծամեծ սքանչելիք . և լուեալ պապուն զգրեալն հաւատոյ . և փառաւորեաց զԱստուած և երկրպագեաց նմա :

Եւ առ ժամայն եկն զրոյց թէ եղև շարժ ահաւոր 'ի Խորասան , և շատ վնաս եղեն . և փլաւ մզկիթ մի , և սպան ութ հազար այր և կին , որք եկեալ էին յաղօթս , և 'ի լուր քարոզութեան իւրեանց . քանզի ուրբաթ էր օրն :

Ի հազար չորս հարիւր յիսուն և հինգ

թուին Ասորոց, և Հայոց հինգ հարիւր եւթանասուն և մի՝ մեռաւ թագաւորն Յունաց Եյովաննէ 'ի Կիւլիկիա. և թագաւորեաց կրտսեր որդի նորա Մանիլն որ կայր առընթեր. և երթեալ 'ի Կոստանդնուպօլիս հնազանդեցաւ նմա երէց եղբայր նորա և քաղաքն արքունական։

Եւ 'ի նոյն ամի մեռաւ թագաւորն Երուսաղեմի. և թագաւորեաց որդի նորա Պաղտոյնն տղայ հասակաւ. և վարէր զիշխանութիւնն մայրն։ Եւ 'ի նոյն ամի մեռաւ ամիրայն Խարբերդոյ Տաւուդն որ էր արթուխի ազգաւ. և առ զտեղի նորա Դազար(1) ասլան որդի նորա։ Ի հինգ հարիւր եւթանասուն և երկու թուին Հայոց Զանկի աթապէկն էառ զՈւռհա 'ի Ջաւշլեայն(2)։ Եւ զկնի ամի միոյ սպանաւ Զանկի. և առ ըզտեղի Նուրատինն որդի նորա տէրն Մօսլայ։

Յաւուրսն յայնոսիկ շնչեաց սատանայ 'ի պատրիարգն Կոստանդնուպօլսի. և ասաց եթէ Քրիստոս կախարդութեամբ առնէր ըզնշանսն զքանչելիսն և արուեստսն. և առաքեալքն այնու հաւանեցուցին զաշխարհս։ և յոլովք հաւանեցան նմա. և թագաւորն տպան զնոսա ։ Բայց աղանդն մնաց մինչեւ յաւուրս մեր չարագոյն քան զամենայն հերձուածն ։

---

(1) Երկու օրի. Ղարա ասլան։

(2) Մատթէոս Ուռհայեցի Ջօսլին անուանէ։

Իսկ Ջօշլինն տէրն Ուռհայոյ արար ժողովս զկնի մահուանն Զանկեայ եւ չոգաւ մտաւ 'ի գիւղերն յՈւռհայ եւ առ զիւրն . եւ իմացեալ Թուրքաց ձայն ետուն միմեանց եւ եկին պաշարեցին զնա ։ Եւ զարհուրեցան փռանգքն յերեսաց նոցա եւ անգիտացան անգիտութիւն մեծ կորստեանն Ուռհայոյ . քանզի հանին զքրիստոնեայս բռնութեամբ անցուցանել զնոսա յայնկոյս գետոյն Եփրատայ . եւ խաղաց 'ի վերայ նոցա Թուրքն, եւ սպան 'ի նոցանէ երեսուն հազար, եւ առ գերի վեշտասան հազար . իսկ զլիով զրոյցն յայլ պատմագիրս գտցես ։

Բայց լուր 'ի տեղւոջ աւերմանն Ուռհայոյ եւ զլինութենէ նորա թէ ով շինեաց զնա, եւ զինչ պատճառաւ ։ Ասեն գիրք ըղամանէ թէ Ովրէդ է անուն սորա . զոր շինեաց Նեփրովթ զկնի ջրհեղեղին . եւ ըստ մեր լեզուիս կոչեաց Ուրհաւ՝ որ է գեւղ ըստ Քաղդէացւոց . քանզի ուրն գիւղ ըսի, եւ հաւն քաղդէացի . որպէս եւ Մելքիսեդեկ որդի Քամայ շինեաց 'ի Պաղեստինէ քաղաք, եւ կոչեաց զնա Ուրիշլէմ . որ է գեւղ խաւգաղութեան. քանզի ըստ Ասորոց լեզուին քաղաք ոչ կարէ ասել, այլ գիւղ։

Իսկ զշինեալն 'ի Նեբրովթայ քակեաց Սենեքերիմ Թագաւորն Աթուրացւոց, և մնաց աւերակ մինչեւ յաւուրս Աղեքսանդրի մակեդոնացւոյն. որ և 'ի տեսանելն ըզտեղին ասաց ցՍելեւկոս բարեկամ իւր. սիրեմ զտեղիս զայս, շինեա՛ զաս քաղաք. և զկնի մահուանն Աղեքսանդրի շինեաց, և կոչեաց Եդեսիայ, որ ասի Մակեդոնացւոց լեզուաւն սիրեմ զդա. զի Աղեքսանդր ասաց՛ սիրեմ զդա, շինեա՛ զաս քաղաք։ Իսկ Յոյնք կոչէին զնա Սօրտաւ.(1) Մակեդոնիայ որպէս ասել Ասորոց Մակեդոնիա։ Եւ զկնի երեք հարիւր ամի Աբգարոս արքայ Հայոց և Ասորոց որդի Արշամայ(2) եգիտ զնա պակասեալ(5), և նորոգեաց զնա. և հաւանացոյց Քրիստոսի դշխոյ արքունի։ Եւ ըզկնի նորա և որդւոյ նորա եղեւ ընդ Հոռոմովք ամս երեք հարիւր։

Իսկ նահատակք որք 'ի սմա եղեն այսոքիկ են Շմոնի, Կուրի, Հաբիբ(4) Կոզմա.

---

(1) Մի օրի. Սաւտրաւ. Մի օրի. Սարտաւ։ Մի օրի. օրտաւ։

(2) Երկու օրի. Աշամայ։

(3) Երկու օրի. ապականեալ։

(4) Երկու օրի. Հաբիբէ։

Դամիանէ, Գուրիանիայք և այլք բազումք ընդ նոսա։ Եւ առ Կոստանդիանոսիւ շինեցան վանորայք 'ի լերինն բազմաթիւ։ Եւ Յուլիանոսի ոչ հնազանդեցաւ քաղաքս այս։ Եւ առ Վաղեսիւ ոչ ընկալաւ զհերձուածս նորա՝ վիշտս կրեալ վասն անուանն Քրիստոսի ոչ սակաւս։ Եւ առ Մարկիանոսիւ ոչ ախտացաւ. բայց զկնի սակաւ ինչ տկարացաւ յանզգամ՝ առաջնորդէ. և եմուտ ընդ ձեռամբ Տաճկաց Ամորէ հետէ ամս չորս հարիւր մինչեւ 'ի տիրելն Թուրքաց։

Եւ արդ սակաւ ինչ տիրեալ 'ի Փռանգաց լցաւ աղետիւք և 'ի սուգ նստոյց զորդիսն Սիոնի. և աւաղ կորստեան նորա. և Տէր տեսցէ զնա յաւետիսն իւր։

Ի հինգ հարիւր եւթանասուն և չորս թուին Հայոց եկն պարոն Թորոսն 'ի Կոստանդնուպոլսէ զերծեալ 'ի գերութենէն զկնի մահուան հօրն իւրոյ Լեւոնի. զոր տարեալ էին Յոյնք չարութեամբ իւրեանց տարագիրս առնել զնա 'ի հայրենեացն իւրոց յերկրէն Կիւլիկեցւոց. զոր ստացեալ էր զնա սրով և աղեղամբ. և եկն հետեւակ առ Տէր Աթանաս Մետրապօլիտն Յակոբիկ Ասորոց, և ետ նմա զերիվարն իւր. և ետ երկոտասան այր, և ած զնա 'ի բերդն՝ զոր Ամուտայն կոչեն 'ի գիշերի. և վաղիւն կապեաց զնշանակս իւր, և ցցեաց. և տեսին մերձակայքն և ծանեան եթէ գթութիւնն Քրիստոսի եհաս քրիստոնէից, և խնդացին յոյժ ուրախութիւն մեծ. և տարածեցաւ համբաւ նորա: Եւ այլ կարճ ասացից. զկնի սակաւ ժամանակի դարձեալ տիրեաց ամենայն երկրին: Եւ յայնմ հետէ անկաւ ահ Տեառն և երկիւղն նորա 'ի վերայ ամենայն Թուրքաց և Յունաց և սարսէին 'ի նմանէ. մինչ յաւուր միում երթեալ յՌաբան երկոտասան հեծելով առ Գօղինն. և դիպեցաւ բազմութիւն զօրաց Թուրքաց եկելոց յաւար և յասպատակ. և եհար 'ի նոցանէ Աստուծով յաջողեալն այն երեք հազար անձինս. և դողացին 'ի նմանէ ամենայն մերձակայ Թշնամիքն:

ԳԼՈՒԽ ԻԵ.

Յաղագս առման կլային Հռովմայ (Հռոմկլային):

Ի նոյն աւուրս գնաց Գօղինն 'ի վանքըն Մօր Պարսամաւ, և ելին ընդ առաջ նորա քահանայքն աւետարանաւ և խաչիւ որպէս քրիստոնէի, և տարան զնա յեկեղեցին։ Իսկ նա էառ զամրոցս վանացն, և կացոյց անդ պահապանս 'ի զօրացն։ Եւ 'ի նոյն ամի ել յորս 'ի միում աւուր. և հեծեալն ցրուեցան 'ի նմանէ. և երիվար նորա եհար զնա ընդ ծառ և անկաւ 'ի վայր. և կորոյս զխելսն. և ելին 'ի վերայ նորա երկու Թուրքք և առին. տարան զնա 'ի Հալապ յանծանօթս, և վաճառեցին զնա հրէի միոջ. և ապա իմացան և տարան առ Նորատինն և ետ զնա 'ի բանտի և էառ զամենայն երկիրն նորա. զՇղաղն, զԹլուաշարն, զԱկրն, զԽաքան, զՄարաշ, զՔէհեանի, զՀարմնմուր (1), զԿարկառն և զԿախթայն. և մնաց միայն Հռոմկլայն՝ ուր կայր կինն նորա երկու դստերօք. և կուրացուցին զՋօսլինն և մեռաւ անդէն։

Եւ կինն այն առաքեաց առ Տէր Գրիգոր Կաթուղիկոսն Հայոց որ կայր 'ի Ծովք, զի եկեսցէ նա նստցի 'ի բերդն. և նա դընացէ առ ծնողսն իւր յայնկոյս ծովուն. և է նորա (2) որդի մի, թէ իցէ կենդանի և գայցէ, 'ի նա տացէ. և թէ ոչ՝ լաւ իցէ քեզ լինել, քան թէ առցէ Թուրքն։ Եւ

(1) Երկու օրի. Հարմնապտուր։

(2) Երկու օրի. և էր նորա որդի։

եկն Կաթուղիկոսն և եղեւ անդ մինչեւ եկին որդին Գօշլնին և հաւանեցուցին դրամով. և դարձուցին անդրէն ։ Քանզի և ինքըն ոչ հաւատայր եթէ կարէ ունել զնա 'ի մէջ Թուրքաց. և խնամօքն Աստուծոյ եղեւ նա նոցա աթոռ յաւիտենական ։

Ի նոյն ամի յաւուր քան զՀամբարձումն միով աւուրբք եկն անձրեւ 'ի Պաղեստինէ, և լինէր 'ի նմա կաթիլք արեան. 'ի Մայիս ամսոյ յաւուր ցօղ առաւօտուն որ իջանէր յԵրուսաղէմ արիւնագոյն լինէր ։ Եւ 'ի Յունիս ամսեան եկն ձիւն կարմիր. և այս ամենայն գուշակէր զհեղումն արեանն, որ լինելոց էին յառնուլն զԵրուսաղէմ ։

Ի թուին Ասորոց հազար չորս հարիւր վաթսուն և չորս, և Հայոց հինգ հարիւր ութսուն՝ զօրացաւ թագաւորն Պաղեստինու Պաղտոյնն, և կամեցաւ զրկել զմայրն 'ի պատուոյ արքայութեանն. և նա արար զոմանս զօրացն ընդ ինքեան. և մտեալ 'ի պուրջ Դաւթի ամրացաւ. և որդին մարտ եդեալ կռուէր ընդ նմա. և եղեւ զի խօսեցաւ մայրն բանս խանդաղատականս ընդ որդւոյն, և ելաց թագաւորն, և երդուաւ մօրն. և եհան զնա անտի, և ետ զԵրուսաղէմ 'ի հրամանս մօրն. և ինքն առեալ զօրս չագաւ ՚ի վերայ Ասկաղոնի Փղշտացւոց, եւ եդեալ մեքենայս փլոյց մասն ինչ ՚ի պարսպապէն և կոտեցան ՚ի փլեալ տեղւոյն քան հազար սպառազինեալ Տաճիկ և ասէին. այս է քաղաքն՝ որում Մահմէտ զօրացաւ ՚ի սկիզբն հաւատոյս մերոյ. քաջ մարտիցուք և բաց ՚ի սմանէ զարեւ մի տեսցեն աչք մեր: Եւ չորս հարիւր հեծեալ ՚ի Փռանկգացն դիմեցին ՚ի վերայ քան հազարացն. և մի ոք ոչ դարձաւ. այլ անդէն մեռան. և խաւարագոյն սարջացաւ թագաւորն զօրքն և սգացին: Իսկ քաղաքն զբովանդակ գիշերըն ջանային շինել զփլածն. բայց իշխան մի Սիրունազո (1) անուն մահու չափ ջանացեալ ոչ ետ շինել զնա.

Իսկ ՚ի լուսանալ առաւօտուն թագաւորն էառ զխաչն ՚ի ձեռնն, և գնացեալ մերձ առ պարիսպն ձգեաց զնա ՚ի մէջ քաղաքին և ասաց. ահա թէ գոյ քրիստոնեայ, և է յոք հաւատ խնդրեսցէ զնշանն Քրիստոսի զներկեալն արեամբն Աստուծոյ. և խոկոյն բորբոքեցան սիրտն Քրիստոսի զօրն Փռանգաց. և յական քթթելն մտին ՚ի քաղաքն յամենայն կողմանց. և ոչ ոք գիտէր թէ մարմին զգեցեալ իցէ և առին զքաղաքն, և սպանին անդ վեշտասան հազար անձինք և առին գերի բազում. և սակաւք 'ի նոցանէ մնեալ 'ի նաւ փախեան յԵգիպտոս. իսկ զԱսկաղոն արարին տէր Անորիքու և ետուն նմա զկինն Պաւեայ։

---

(1) Մի օրի. Սիրնուազո Սիրախոս:
Մի օրի. Սիռունաս. Մի օրի.

Ի սոյն ժամանակս մեծ իշխանաց իշխանն Թորոս որդին Լեւոնի որդւոյ Կոստանդեայ որդւոյ Թագաւորին Ռուբենայ ել յերկիրն Կապադովկացւոց 'ի վերայ Թուրքաց, եւ դարձաւ բազում գերութեամբ և աւարաւ և արիական անուամբ։ Իսկ 'ի Կօնն Թագաւորեաց Մասուդն յորդւոյն Խաքանայ. և ետ զդուստրն իւր Ապուբասլանայ Դանիշմանեանց. և նա հպարտացեալ կամեցաւ մըտանել 'ի Կիւլիկիայ. և մերձ երթեալ երկրին ոչ համարձակեցաւ. քանզի դարան գործեալ էր նմա 'ի նեղուցս մտից երկրին. և դարձաւ ամօթով անդէն.

Եւ Թագաւորն Յունաց բարկացաւ 'ի վերայ Թորոսին զի առ զամենայն երկիրն 'ի ձեռաց Յունաց, և առաքեաց զԱնդրոնիկոս զօրագլուխն իւր ծանր ամբոխիւ 'ի վերայ նորա։

Եւ մեծն Թորոս առ ինքն հաւաքեալ ըզզօրս իւր գնաց ընդ առաջ նորա. և պատահեցան մրմեանց առ ընթեր Տարսոնի. և կռուեցան. և օգնեաց Աստուած Հայոց, և պարտեցան Յոյնք առաջի նոցա. և անկաւ 'ի նոցանէ երեք հազար անձանց, և առին գերի բազում 'ի պատուաւորացն Յունաց և արգելին 'ի բանտս և վաճառէին մեծամեծ ստացուածոց. և առեալ զկազմուած բանակի նոցա և զգինս գերեացն, և փառթամացաւ յոյժ մեծն Թորոս գոհանալով զՏեառնէ, որ արար վրէժխնդրութիւն նմա 'ի թշնամեացն իւրոց։

Ի սոյն ժամանակս որդիքն Զանկեայ որ 'ի Մօսլ միաբանեցան ընդ ամիրային Թկրըթայ. և ապստամբեցին 'ի Խալիփայէն. և նորա լուեալ եկն 'ի վերայ Մօսլայ և ոչ կարաց առնուլ զնա. և դարձաւ 'ի վերայ Թըկրթայ, և խոստացաւ զնա աւար զօրացն. և առին զնա և հարին յաւարի և քակեցին. և զբերդն տուին 'ի Շմսատին ամիրային քաղցրաբարոյ և քրիստոնէասէր, որ փութով շինեաց զքաղաքն նոյնպէս և զեկեղեցին. և կայր 'ի հնազանդութիւն Խալիփային։ Իսկ Նորատին տէրն Հալպայ չոգաւ և առ զԴամասկոս երդմամբ, և կորոյս ապա զմեծատունն որ 'ի նմա և քակեաց զաղիւսաշէն պարիսպն, և շինեաց քարամբք։ Յայնժամ ժամանակի հիւանդացաւ Տամբուաշն արթուխի տէրըն Մերտնայ. և բժիշկք ոչ կարէին հնար գտանել բժշկութեան, և յուսահատեալ թողին զնա և գնացին և նա ապաւինեցաւ յաղօթս քրիստոնէից և առաքեաց 'ի վանքն Մօրաքայի. և բերին զաջ նորա. և նա տեսանէր այր մի հրեղէն, զի գնաց հալաւ զձեռանէ նորա ղաչոյ և ասէ ցնա քրիստոնեայքն առաքեցին զիս առ քեզ. զի մի մեռցիս. և առ ժամայն ողջացաւ, և փառաւորեաց զՔրիստոս, և շատ մխիթարութիւն արար քրիստոնէից և դիւրութիւն եկեղեցւոյ 'ի Մերտինն 'ի Նսեպին, 'ի Մուփարղինն, յՄալայն և 'ի Տարս. և յայլ բազում տեղիս որ ունէր ընդ ձեռամբ. և զնոյն պատուիրեաց որդւոց իւրոց՝ որոց բաժանեաց զիշխանութիւնն իւր. զՄուփարղինն և զՄերտինն ետ 'ի Նաճմատինն, և զԽառան ետ 'ի Դամլադինն, և զՏարս ետ 'ի Շամսատինն։

Յայնմ ժամանակի թագաւորն Յունաց լուաւ եթէ եկեալ է Մասուտն սուլթանն առ Միջագետօք. և առաքեաց առ նա հրեշտակս պատարագօք, զի մնացէ 'ի Կիւլիկիայ 'ի վերայ Թշնամւոյ իւրոյ Թորոսին. և գնաց ամենայն ուժով իւրով. Իսկ նորա խնատութեամբ խոյս ետուն և գաղթեցին յամուրս իւրեանց, և զօրքն Հայոց նստան առլերամբն. և սուլտանն իջաւ ՚ի վերայ Թլին Համդնոյ, և եհար զնա տէր Աստուածն քրիստոնէից ոչ հրեղէն զինուք որպէս երբեմն զզօրսն Սենեքերիմայ, և ոչ ՚ի ձեռն կնոջ որպէս զՀողեմփեռնէս, այլ ճանճիւ և մժղկաւ. որք և առէին բազումք թէ այս հարուածն է խստասրտին Փարաւոնի. զի ամառնային էր եղանակն և մեռանէր մարդ և անասուն, և դարձան ՚ի փախուստ. և իջին զօրքն Հայոց ՚ի լեռնէն և կոտորեցին զյոլով մասն նոցա, և առին աւար զմեծութիւն անօրինացն. և լցին զտունս իւրեանց գոհանալով զԱստուծոյ: Իսկ Մասուտն մեծաւ ամօթով գնացեալ ՚ի Կօնն և կրկին հարեալ ՚ի տեառնէ, մեռաւ ՚ի թուին Ասորոց հազար չորս հարիւր վաթսուն և վեց՝ և Հայոց հինգ հարիւր ութսուն և երկու. և թագաւորեաց որդի նորա Կլիճ ասլանն. և էին նորա երկու եղբարք զմինն եսպան դեղօք. և միւսն փախեաւ յեզր ծովուն, և ամրացաւ անդ ՚ի բերդսն զոր տուեալ էր նմա հայրն իւր նախ քան զմահն. որոյ անուն էր Շահնշահ և էր փեսայացեալ տանն Դանշմանայ. և վասն այնորիկ Աղուչ ասլան մարտ եդեալ կռուէր ընդ Խլիճ ասլանայ, և առաքեաց առ Նորատինն որ եկն և առ զՓարզման և զԸնթափ ։ Իսկ զԵգիպտոս դեռ եւս Տաճիկք ունէին 'ի Մահմետէ և այսր, և ոչ կարացին տիրել նմա Թուրքք . և լինէր նոցա խալիփայ յազգէն Ալեայ, յորմէ հետէ և Բաղդատայն նստաւ ։ Եւ յայսմ ժամանակս մեռաւ խալիփայն Եգիպտոսի . և էր որդի նորա Աբաս անուն՝ որ կամեցաւ առնուլ զտեղի հօրն՝ բայց զի իշխանն Եգիպտոսի ոչ կամէր, էառ Աբաս զամենայն գանձս խալիփայութեանն, և եհան երեք հազար ծառայ Հայ ազգաւ, և կազմեաց զնոսա զինուք և առաջնորդ ճանապարհին իւրոյ 'ի Պտոյեացն, և ել 'ի գիշերի և կամէր երթալ առ Նորատինն։ Եւ փաղիւն պնդեցան զհետ նոցա զօրքն Եգիպտոսի և հասան նոցա ։ Եւ դարձան ապատեալ ծառայքն Հայազունք և հարին զնոսա 'ի հարուածս մեծամեծս . և մնացեալքն փախեան անդրէն և գնացեալ 'ի Պաղեստինէ իջին անդ . և ոմն 'ի Պտոյեանցն գնացեալ յԵրուսաղէմ ազդ արար Փռանգացն . և նոքա պատրաստեալ զինքեանս եկին 'ի վերայ նոցա . և Աբասն կազմեաց զզօրսն և ասաց . հապա որդեակք քաջացարուք որպէս 'ի վերայ Եգիպտացւոցն, և ես մեծացուցից զձեզ յոյժ։ Իսկ նոքա զգեցան և զգաստացան և ելին ընդ առաջ նոցա. և յորժամ տեսին զնշան խաչին առաջի նոցա վառեալ թուլացան ձեռք նոցա և սկսան լալ. և իջեալք յերիվարացն երկրպագեցին նշանի խաչին որպէս կարօտեալք. և Փռանգն էառ դիւրաւ զանչափութիւն գանձուն. և զԱ.բամն վաճառեցին իշխանքն Եգիպտոսի և նա առեալ կախեաց զփայտէ։ Իսկ զօրդխն Հայոց թողին Փռանգքն միայն հանդերձիւք իւրեանց երթալ ՚ի խաղաղութիւն՝ ամորդխլք լեալ առ երախտաւորսն և առ քրիստոսասէրսն որ կամօք իւրեանց լցին ըզնոսա մեծութեամբ ստացուածոց։

Յայսմ ժամանակի Անաղտն որ կոչեցաւ Բրինծ Անտաքու վիճէր ընդ պարոն Թորոսի վասն բերդերոյն (1), զոր Յոյնք առեալ էին ՚ի Փրերացն՝ և նա էառ ՚ի Յունացն. և ասէր թէ վասն ամենայն քրիստոնէից են ՚ի պատերազմիլ. տուր՝ ՚ի նոսա զիւրեանց լեառն. և կռուեցան ՚ի Ակնտըրունն(2) և անկան բազումք յերկոցունց կողմանցն. եւ դարձաւ Ռենաղտն 'ի տուն իւր ամօթով. բայց յետ այնորիկ իւրով կամօք ետ 'ի Փըրերոն զդղեակսն որ կայր 'ի Ամանոուն Լնտաքու : Եւ նոքա երդուան նմա օգնել Հայոց յամենայն կարիս մահու չափ և յամենայն իրս ցաւակցել :

---

(1) Հին օրի. վասն բերդին՝ որ կայր ՚ի սինոռն Կիւլիկիոյ. զոր առեալ էին ՚ի Փրերացն Յոյնք։

(2) Երեք օրի. իսկ ընդդրանն սխալ ընդ. օրինակաւն Բէւանն

Ի թուին Հայոց հինգ հարիւր ութսուն և չորս ել պարոն Ստեփանէս եղբայրն պարոն Թորոսի յերկիրն Մարաշայ՝ և եմուտ ընդ զօրսն 'ի գիշերի 'ի Մարաշ 'ի տունս քրիստոնէիցն՝ որ անդ կամակցութեամբ քահանայի միոյ 'ի նմին քաղաքէ . և ընդ լուսանալն առաւօտուն առին զքաղաքն և կոտորեցին զԹուրքսն որ անդ . և հպարտացեալ նախատէին զպահապանս բերդին և չնային յայտնապէս ընդ կանայս նոցա . և բարկացաւ տէր և ոչ մատնեաց զբերդն 'ի ձեռս նոցա . այլ այրեցին զքաղաքն և առեալ զքրիստոնեայսն որ անդ , մտին յերկիրն : Բայց զերէցն կամակից գործոյն ջալեալ կենդանւոյն քերթեաց և հրով այրեաց Ամիրայն :

Ի նոյն ամի Ռենաղտն կամակցութեամբ և օգնութեամբ Թորոսի չոգաւ 'ի Կիպրոս կղզի , և առ զնա , և յաւարի եհար . և ած զմարդ և զանասուն յեզր ծովուն , և կրարեաց ամենեցուն գինս, և եթող զնոսա. և առեալ պատանդս ած ընդ ինքեան եպիսկոպոսս, և քահանայս, և ազատս մինչև բերցեն զհատեալ գինսն. և եղև այս վասն երկու պատճառի. մի՝ զի նեղէին Յոյնք ըզՓռանգսն որ անդ էին, և մի՝ զի յորդորէին նոքա զԹուրքն ՚ի կորուստ Հայոց։ Իսկ Պարոն Ստեփանէ չոգաւ ՚ի վերայ Մերդուսին և նեղեաց զնա. և նոքա խնդրեցին երդումն զի թողցէ զնոսա կենդանիս, և տայցեն ըզբերդն. և երդուաւ նոցա. և առեալ զբերդն եթող զնոսա եւ. գնացին խաղաղութեամբ։

Եւ պատմեցաւ Ստեփանեայ եթէ ըսպառնալեօք երթային Թուրքն. թէ երթամք և առնումք զօրս, և գամք և աւերեմք զաշխարհս զայս. և նա եհարց զեկեղեցականսն. և նոքա ասեն թէ այդպէս սպառնան՝ անխիղճ են յերդմանէն. և յղեաց զկնի նոցա. և կոտորեցին զամենեսեան. և լուան զայս ամենայն այլազգիքն. և դարձան ՚ի թշնամիս (1) քրիստոնէից։

Յայսմ ամի մեռաւ աւագ Սուլտանն Խորասանայ Մասուդն. և եթող որդի մի տղայ փոքր, և եդին նմա աթաբակ (աթառապահ)(1) զԷլտկուզ(2) ամիրայն. որ առ 'ի կնութիւն զմայր տղային. և վարէր զսուլթանութիւնն։ Եւ զկնի սակաւու մեռաւ տղայն. և հաստատեցաւ սուլթանութիւնն Էլտկուզին. բայց անուն աթապակութեանն ոչ բարձաւ. զի յայնմ հետէ թագաւորն Խորասանայ Աթապակ կոչի և աշխարհն տուն Աթապակեան մինչև 'ի Մօսլ. և 'ի Միջագետս, և յԻրան ամենայն երկիրն(5). Նոյնպէս և որ 'ի Կապադովկիայ է թագաւորութիւն Խաքանեանք և Սալչուքեանք կոչի. սակս անուան նախնւոյն(4). և Դանիշմանիքն ոչ էին կատարեալ թագաւորութիւն։ Բայց զի Խլիճ ասլանն և Դարասլան(5) տէրն Սեւաստայ վիճէին ընդ միմեանս, պարոն Ստեփանէ ելեալ 'ի դուրս աւերէր զերկաքանչիւրոցն զերկիր։

---

(1) Ոմանք՝ ՚ի թշնամանս։

---

(1) Աստ՝ ամենայն օրինակք ունին աթապակ։ Հին օրի. ունի այսպէս։ Յայնմ ամի մեռաւ աւագ սուլտանն Խորասանայ Մասուդն, և ոչ ունէր որդի. բայց միայն մանկիկ մի փոքրիկ. վասն որոյ եղև աթոռապահ նմա ամիրայ մի Ելտկուզ անուն։

(2) Մի օրի. Երկտուզ։

(3) Երեք օրի. մինչև 'ի Խորասան ամենայն երկիրն։

(4) Հին օրի. Նոյնպէս և որ 'ի Կապադովկիայ լինէին թագաւորք, զի ընդ ձեռամբ Այլտկուզին ('ի վերոյ Ելտկուզ) մտին, Աթաբակեանք կոչին։

(5) Յառաջագոյն զսա Դազար ասլան յիշեցին ամենայն օրինակք բաց 'ի միոյն. որ Դարա ասլան ունէր. և աստ ամենայն օրինակք ունին Դարասլան։

Եւ Թագաւորն Երուսաղեմի եկեալ յԱնտաք, և առեալ զօրս 'ի Հայոց չոգաւ առ զՀերիմն և աւերեաց մինչեւ 'ի Հալպ(1)։ Յորում աւուր չարախօսութիւն մատուցին առաջի Թորոսի, թէ Ստեփանէ խորհի սպանանել զքեզ. և հաւատաց նոցա. և կալեալ զեղբայրն եդ 'ի բանտի զտասն ամիս. իսկ միջնորդութեամբ բազմաց, երդմնեցուցեալ եհան զնա(2). և սիրէին զմիմեանս։

Իսկ Խլիճ ասլան զՏանուն ամիրայն Կեսարու արար իւր սիրելի. և նովաւ խաբէր(3) զտունն Դանիշմանայ։

Ի հազար հարիւր եւթանասուն թուին Ասորոց, և հինգ հարիւր և վեց Հայոց՝ Տաճիկք որ կոչին Աբդլմումնիք ապստամբեցին 'ի Սպանիայ, և յամեցին անդ տարի մի. և թէ ո՞յք են սոքա, պատմեսցուք։

Ի չորրորդ Խալիփայէն որ նստէին յԵգիպտոս յազգէն Ալեայ եղեն երեք որդիք. և 'ի մեռանել հօրն էառ աւագն զխալիփայութիւնն և խորհէր սպանանել զեղբարսն. և նոցա իմացեալ առին երկու գիրք, և փախեան յարեւմուտս. և անցին ընդ Սպանիայ և գնացին առ ազգս բարբարոս և վայրենամիտըս, այլ և աղքատս և անարուեստս և անթագաւորս, և բնակեցան անդ. և ունէին ընդ ինքեանս յազգէն իւրեանց, և ղերկոսին գիրսն յառաջ բերեալ ընթերցան. մին ուսուցանէր քիմեայս արուեստս ոսկեգործութեան, և արծաթապարութեան, և յօրինման մարգարտաց. և միւսն արուեստս հըրաշագործութեան և տլսմից և կախարդութեան. և սկսան ստանալ ոսկի և արծաթ և նոքօք անասունս ձիս և ջորիս ՚ի ձեռս վաճառականաց և զօրս անդէն կային. և մեծացան յոյժ. և մասնաւորէին ՚ի բարութեանց անտի դրացեացն և մօտակայից. և յանգուցին յինքեանս և առին կանայս ՚ի նոցանէ և ստացան որդիս և աճեցին և փարթամացուցին զերկիրն. և ապա սկսան քարոզել զօրէնս իւրեանց՝ զոր թէ առնեն, լինին իբրև զնոսա յաջողեալք. և նոքա ասեն ցնոսա. և ո՞ գիտէ թէ բարի են օրէնքդ ձեր. և յետ մահու արարէք մեզ նշանս. և նոքա խնդացեալք առնէին տլսմերս պէս պէս. և հանէին դիւթութեամբ դև ՚ի գերեզմանաց նոցա ՚ի պատկերըս մեռելոց նոցա որք և ասէին. այդ է հաւատս, այդ է Աստուածապաշտութիւն, երանելիք էք[1] եթէ առնիցէք զոր դոքայդ ասեն․ զի և յետ մահու անեզրապէս թագաւորէք։ Իսկ նոքա լսելով զայս եւ տեսանելով ապշեալք լինէին, և զարմանային. և հաւատային նոցա. և նոքա առեալ զնոսա թլփատէին և դնէին կրօնս զօրէնս Մահմետի զոր ինքեանք ունէին. և այսպէս առ սակաւ սակաւ աճէին և բազմանային և շինէին քաղաքս և ամրացուցանէին բերդս առ ծովեզերօքն և ՚ի լերինսն. և եդին յորդւոց իւրեանց թագաւորս և խալիփայս. և զի անուն էր միոյն Աբդալլա, և միւսոյն Մամունի այնպէս կոչեցան ազգն Աբդլմումնիք և կարի ընդարձակեցան, եւ տիրեցին բազում աշխարհաց և ճոխացան. և եղեն անուանիք. և հաստատեցան այնքան, մինչ զի շինեցին բերդս պղնձիս, և բերդս երկաթիս. և ապա բերդս ոսկիս և արծաթիս. և եղեն մեծ և հզօր թագաւորութիւն մինչեւ կարել գալ նոցա ՚ի Սպանիա. և կռուել բովանդակ ամ մի ընդ արիական ազգն Փռանգաց ՚ի Սպանիա, և առնել ընդ հարկաւ զնոսա. և դառնալ յոլով աւարաւ և գերութեամբ։

---

(1) Առեալ զօրս և չոգաւ էառ 'ի Հայոց զՀերիմն, և աւերեաց մինչեւ 'ի Հալպայ։

(2) Չորք օրի. և միջնորդեալ բազմաց, առեալ երդումն դարձեալ եհան զնա։

(3) Երկու օրի. խաբանէր։

Վասն որոյ դիպող ժամանակ գտեալ

---

[1] Մի օրի. երեւելիք էք։

Մանիլ Թագաւորն Յունաց եկն 'ի Կիւլիկեայ յերկիրն Թորոսին. զի անպարապ էին Փըռանգքն 'ի նմանէ՝ վասն նեղութեան Ըբդըլմումնեացն. և Թորոս խոյս ետ 'ի նմանէ զօրօքն առ լեռնակողմամբն. և եանց ընդ դաշտն Մանիլն և չոգաւ մինչեւ յԱնտաք և կամէր Փռանգօքն երթալ 'ի վերայ Հալպայ. և լուաւ գոյժ եւթէ ոմն յիշխանաց նորա կամի Թաղաւորել. և դարձաւ խնդրելով 'ի Թորոսէն հնազանդութիւն. և բազում վիշտս հասուցին նմա 'ի ճանապարհի Թուրքն, որ զառապարօքն բնակեալ էին կոծոպելով 'ի զօրացն. զոր իմացեալ Մանիլն առաքեաց զօրս աւերել զերկիրն Խլիճ ասլանայ ըստ կարողութեան. և կայր անհաշտ պատերազմ 'ի մէջ Յունաց և Թուրքաց։ Զոր իմացեալ Նորատինն գնաց աւերել զերկիրն Խլիճայ որ առ սահմանօքն Եփրատայ, զԲեհեսնի և զՌաբան և զՄարաշ և զայլսն, և յինքն գրաւեաց զնոսա վաղվաղակի։ Բայց յետոյ հաշտեալք ընդ սուլտանն դարձոյց առ նա վերստին. հաշտեցաւ նոյնպէս և Ըղուբ ասլանն, և արարին խաղաղութիւն ընդ միմեանս։

Իսկ Թագաւորն Երուսաղէմի ետ զՀերիմն յորդին Ջօշլնին որ էր անուամբ հօրն.

և էր ժառանգ Ճոսլին կոմսին, և նա սակս քինու հօրն մահու աւերէր զերկիրն Ճալպայ զցայգ և զցերեկ, զոր և զկնի երկուց ամաց ըմբռնեցին զնա զօրքն Ճալպայ (տարան 'ի Ճալապ) և մեռաւ 'ի կապանս. Զայսու ժամանակօք եւ Թագաւորն Երուսաղէմի Պաղտոյնն որ առ սահմանօքն Դամասկոսի և արար ընդ ինքեան զՊատոյիսն, ոյք հըրամանաւ Նորատնին կային անդ. և չոգաւ նոքօք ընդ անապատն յերկիրն Եգիպտոսի, և եհար զնա յաւարի. և եդ 'ի վերայ նոցա հարկս հարիւր վաթսուն հազար դահեկանըս. և դարձաւ բազում փառօք ածելով ընդ ինքեան գերիս ոչ սակաւս և յոլովութիւն աւարի կայուն և գնայուն.

Եւ 'ի նոյն ամի Թագաւորն Վրաց Գէորգի եհար զՍալտուխ ամիրայն որ նստէր 'ի Կարնոյ քաղաք և կալեալ զնա վաճառեաց, անդէն: Եւ միւս անգամ ժողովեալ բազմութիւն Թուրքաց 'ի վերայ Գէորգայ, և կոտորեցան 'ի նմանէ հազարք և բիւրք, և դարձեալ կռուեցան ընդ միմեանս Սուլտանըն Կլիճ և Եղուբ ասլան և յաղթահարեցաւ սուլտանն. և էառ Եղուբ ասլան զամենայն կազմած արքայութեանն Կլիճայ. և մեծահոգի եղեալ անդրէն դարձոյց և խընդրեաց հաշտութիւն . եւ արարին իսկ :

Ի սոյն ժամանակս ազդ եղեւ Թագաւորին Երուսաղեմի, եթէ տէրն Սայիտայ Ճիրան կազմեալ է նաւս եւ լցեալ աւազակօք . բայց վնաս առնէ առաւել քրիստոնէից քան թէ Թուրքաց . եւ բարկացաւ 'ի վերայ նորա եւ հալածեաց զնա . եւ նոքա երթեալ յԱնտաք առ Բրինձն եւ ետ նմա զՊաղրաս . եւ սկսաւ առնել եւ անդ նոյնպէս զվնասագործութիւնն 'ի ծովու եւ 'ի ցամաքի : Եւ իմացեալ Բրինձն հալածեաց զնա : Եւ նորա գնացեալ առ Նորատինն ուրախ արար զնա յոյժ . զի խոստացաւ նմա առնել զամենայն ծովեզերայսն ընդ ձեռամբ նորա . վասն որոյ ետ զզօրս իւր 'ի ձեռս նորա, որ եւ գնացեալ ապականէր զաշխարհն ծովեզերեայ :

Իսկ Թագաւորն Երուսաղեմի անուամբն Քրիստոսի զօրացեալ գնաց 'ի վերայ նորա եւ կոտորեաց զզօրս Թուրքացն, եւ զանօթն սատանայի ձերբակալ արարեալ տարաւ յԵրուսաղէմ . եւ այրեաց հրով եւ բարձաւ չարն :

Ի ժամանակս այս Մանիլն Թագաւորն սպան զկին իւր դեղով սակս ամլութեան . եւ առ կին զդուստր Բրինձին Անտաքայ հակառակ օրինաց Քրիստոնէից : Իսկ Եղուք ասլան արար խաղաղութիւն ընդ Մելտենի և եթող զնա ամիրայեալ տղային եղբօրորդւոյ իւրոյ։ Բայց քսեցին զնմանէ առ սուլտանն, թէ Ղլըճ ասլան միաբանութեամբ բազում ամիրայից կամի սպանանել զքեզ, և գնել սուլտան զեղբայր քո. և հաւատաց բանիցն և առաքեաց առ Մանիլն զՔրիստափոր դպրապետն իւր խնդրել 'ի նմանէ օգնութիւնս, և թէ երդնուցու նմա, գնասցէ առ նա կամօք սիրոյ. և խնդաց Մանիլն, և երդուաւ նմա. և չոգաւ Սուլտանն հազար հեծելով 'ի Կոստանդնուպօլիս, և յոյժ պատուեցաւ, և եղեւ անդ աւուրս ութսուն։ Եւ յամենայն աւուրս առաքէին նմա հացկերոյթս երկու անգամ ոսկեղէն և արծաթեղէն ամանօք. և ամենայն ամանքն մնային Սուլտանին և ոչ եւս դառնային. եւ զկնի ութսուն աւուրն կերան հաց 'ի միում սեղանի և զամենայն պատրաստութիւն սպասուցն ետ սուլտանին. և յորժամ կամէր գնալ ծածկեաց զհասակն նորա ոսկւով յոտն կալով նորա 'ի մէջ տաճարին. և ետ նմա զօրս և գնաց. և ժողովեաց զամենայն ամիրայսն Միջագետաց Ղլըճ ասլան առ ինքն, և ել ընդդէմ նորա և յորժամ հասին առ միմեանս՝ զարհուրեցան երկոքեան կողմանքն ՚ի բազմութենէ միմեանց. և առին զտեղի և առեալ խորհուրդս ՚ի մէջ՝ արարին երդմունս սիրոյ. և արձակեցան ՚ի միմեանց:

Յաւուրսն յայնոսիկ Անդրոնիկոս իշխանն կայր ՚ի Կիլիկիա հրամանաւ Մանուէլին, և կոչեաց զպարոն Ստեփանէ ՚ի ճաշոյ պատրաստութիւն. և դարան գործեալ սպան ըզնա գաղտնի և զօրս ընդ նմա. և շարժեցաւ պարոն Թորոսն ՚ի ցասումն ՚ի վերայ Յունաց, և սպան ՚ի նոցանէ տասն հազար անձինս: Եւ Անդրոնիկոս աղաչէր զԹագաւորըն Երուսաղեմի գալ հաշտեցուցանել զնոսա, և խոստանայր նմա բազում ոսկի ՚ի Կոստանդնուպօլսէ. և երդնոյր եթէ անպարտ է յիրացն կարծեաց և ոչ է սպանեալ նորա զնա: Եւ եկն Թագաւորն Երուսաղեմի. և արար խաղաղութիւն մեծաւ աղաչանօք, և դադարեցին ՚ի կռուելոյ զՅոյնսն:

Յայնմ ժամանակի Թագաւորն Վրաց Գէորգի էառ զԴուին քաղաք և սատակեաց զՊարսիկն որ անդ. և քակեաց զմինէրայն, զոր արեամբ և ոսկերօք Քրիստոնէից շինեալ էր: Յորում աւուրս ըմբռնեցաւ Ռընաղտոն տէրն Անտաքու ՚ի զօրաց Նորատինին հարիւր քսան հեծելօք, և հինգ հարիւր հետեւակօք գնացեալ յերկիրն Հալպայ.

ուր բազում եցոյց քաջութիւնս նախ քան զըմբռնումն. բայց զի բազում էր Թուրքն և դարան գործեալ էր 'ի ծածուկ պատեցան զնովաւ. և Թէպէտ և կարող էր պատառել և ելանել, այլ ոչ կամեցաւ միայն ապրել, ետ զանձն 'ի ձեռս նոցա, և տարան առ Նորըտինն 'ի Հալապ. և առ ժամայն տապանակեալ 'ի Լատիկն առին անդ եւթն հազար գերիս 'ի քրիստոնէից, և եղև մեծ տրտմութիւն եկեղեցւոյ. և լուեալ զայս Թագաւորն Երուսաղեմի եկն 'ի վերայ Հալապայ, և ոչ կարաց առնել ինչ նմա. և արարեալ խաղաղութիւն դարձաւ յԵրուսաղէմ. և հասեալ յԱքքայ(1) վախճանեցաւ տուեալ զԹագաւորութիւնն Ամարեայ եղբօր իւրոյ, որոյ տարեալ զդի նորա յԵրուսաղէմ Թաղեաց, և սգաց զնա յոլով աւուրս. և ինքն Թագաւորեաց ամս ինն և տասն: Իսկ Նորատինն չոգաւ յերկիրն Երուսաղեմի, և առեալ, զառ և գերի դարձաւ. և ել զհետ նորա Եմմուրի կոտորեաց զնա և փախոյց և Թափեաց զառն, և դարձաւ գերին: Եւ 'ի նոյն ամի Աղուբ ասլան հնազանդեաց զՏանուն զեղբօրորդին իւր որ ապստամբեալ էր 'ի Կեսարիա. և գնաց 'ի Կամաւի որ է Ենի.

---

(1) Աքայիա, որ է Աքքէ.

այսինքն Կամախ. և սպան զապստամբ ամիրայն որ անդ, և դարձաւ։

Եւ Պարս ասլան չոգաւ յԱմիթ, և ոչ կարաց առնուլ զնա. և դարձաւ 'ի Հարանքեփ, և կոչեաց զԱղուպ ասլան 'ի ճաշ ընդունելութեան. և նա կարծեաց թէ նենգութեամբ մեծարէ, չոգաւ զօրու մեծաւ յերկիրն նորա, և գերեաց անտի տասն հազար (1) անձինս և եպիսկոպոս երկուս զԻգնատիոս և զԻխոնէսիոս, որք զերծան 'ի նմանէ կենդանիք։ Իսկ պարոն Թորոս յետ գերութեան Անաղտին եկն յԱնտապ, և կացոյց Ըրինձ Անտաքու զորդի նորա զՊամուղն՝ ոչ կամելով մօրն։

Յաւուրսն յայնոսիկ Նորատինն զօրաժողով լեալ ասպատակեաց 'ի Տրապօլիս, և դիպեցան նոցա երեք հարիւր ձիաւոր Փռանգ ոչ գիտելով զմիմեանս. բայց Փռանգքն գիտաց թէ Թուրք է. և Նորատինն կարծեաց զԹագաւորն Երուսաղէմի, և փախեաւ. և ելին զհետ նոցա երեք հարիւրքն և կոտորէին, և յորժամ ելին յարձակն. և տեսին զյոլովութիւն Թուրքին, և իմացան թէ Նորատինն է, զահի հարան. և ելին 'ի բլուր մի, և իջեալ յերիվարացն աղօթէին զվերջին աղօթման ակն ունելով մահու ։ Եւ տեսեալ Թուրքացն անկաւ երկիւղ Տեառն ՚ի վերայ նոցա և թողին զկարասիս իւրեանց և մերկացին զապառազինութիւնս իւրեանց և փախեան անյետս դառնալեք ․ և Քրիստոսասէր զօրացն սրտապնդեալ հասին նոցա և կոտորեցին բիւրս և հազարս ․ և զերծաւ Նորատինն յոյժ սակաւուք ․ և նոցա լցեալ կահիւք և կազմածովք նոցա դարձան կազմածօքն խնդութեամբ ՚ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։

---

(1) Երեք օրի. հարիւր հազար։

Իսկ Աղուպ ասլան գնաց առ Շահնշահ եղբայր Սուլտանին որ կայր ամրացեալ առ ծովեզերեայ դղեկին իւր հայրասուր, և դարձաւ խնդութեամբ ․ և հասեալ ՚ի Գանգրայ առ Ալիս գետով մեռանէր ․ և զօրքն եդին ՚ի տեղի նորա զԻսմայիլն զեղբօրորդին նորա ։ Իսկ որք յԱպլսթայն էին զօրք թագաւորեցուցին զՍահմուան որդին Սահադեայ ․ և եղեւ ամբոխեալ տունն Դանիշմանայ ։

Յայսու ժամանակաւ չոգաւ Թագաւորն Երուսաղեմի յԵգիպտոս առնուլ զհարկսն ․ և Եգիպտացիքն փեղկեալ ՚ի միմեանց, ոմանք մեծարեցին զնա կարդեալ հասիւն, և կէսք հպարտացեալ ընդդիմացան , և առաքեցին առ Նորատինն օգնել նոցա ․ և նա յղեաց առ նոսա զՇ՟ խրաքաւ զօրապետն իւր օգնել նոցա ։

Իսկ Թագաւորն Երուսաղեմի սուր ՚ի գործ արկեալ կոտորեաց զապստամբեալսն յանխնայ անթիւ և անհամար. և չոգաւ և իջաւ ՚ի վերայ Գլապէս(1) քաղաքի ամիսս եւթն. և բերին նմա զրոյց, եթէ Նորատինն պաշարեալ է զՀերիմն և կամի առնուլ զնա. և գրեաց Թագաւորն խրատս և ասաց. ամենեւին մի ելանէք ՚ի քաղաքէդ արտաքս մինչեւ գամ ես. և ինքն եթող զԳլապէս և սկսաւ գալ։ և նոքա ոչ պահեցին զպատուէրն նորա այլ ելեալ կռուեցան ընդ նոսա, և խոյս ետ Թուրքն և հեռացաւ. և Փռանգն նստաւ բացեայ ՚ի քաղաքէն. և անդրէն դարձեալ Թուրքն եգիտ զնոսա յանհոգս. և կոտորեցին և առին զքաղաքն. և գերեցին զԲրինձն Անտաքու և զայլս բազումս ՚ի գլխաւորացն ։ Ի հազար չորս հարիւր եւթանասուն թուին Ասորոց և ՚ի հինգ հարիւր իննսուն երկու Հայոց՝ զօրացաւ Խլիճ Ասլան Սուլտան ՚ի վերայ որդւոցն Դանշմանայ ՚ի ձեռն Տանուն ամիրային, և առ զԿապատուկըն և զԱպլըթայն և զՏարանտա ։

---

(1) Մերթ Պալէս ։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Յաղագս պարոն Թորոսի և Սալահատինին և հարցմանց Տ. Ներսեսի և հաւատոյն քննութեան և երկու բնութիւն ասելոյն.

Ի սոյն ամի պարոն Թորոս արձակեաց դեսպանս պատարագօք 'ի Հալպ և խնդրեաց զՀայ գերիսն՝ որ անդ, և ոչ ետուն. և զայրացեալ Թորոս եկ յերկիրն Մարաշայ եւ աւերէր. և Նորատինն արձակեաց զօրս 'ի վերայ նորա, և Թորոս եհար զնոսա և զբազումս կալաւ 'ի ձեռս և Նորատինն երկեաւ 'ի նմանէ. և եթող զորս խնդրէրն:

Եւ բացաւ բերան Փռանգաց և խնդրեցին զԲրինձն, և վաճառեցին զնա հարիւր հազար դահեկանի. և ելեալ Բրինձն չոգաւ 'ի Կոստանդնուպօլիս առ քոյրն իւր, և բազում գանձիւք դարձաւ. և առ անտի 'ի Յունացն պատրիարք Անտիոքայ. և եմոյծ 'ի քաղաքն Աթանաս անուն. և տեսեալ զայն Փռանգ պատրիարքն Հերմի ել 'ի քաղաքէն և գնաց նստաւ 'ի Խուսայրն, և բանադրեաց զքաղաքն:

Զկնի ամի միոյ չոգաւ Թագաւորն Յունաց Մանիլն 'ի վերայ Բուլղարաց եւ պարտեցաւ, և կալան զնա գերի. և այր ումն զերծեաց զնա վասն երդման զոր երդուաւ նմա տալ. և բերեալ 'ի Կոստանդնուպօլիս էառ զակնունելին։

Իսկ Եգիպտոս եղեւ ընդ հնազանդութեամբ Նորատնին, և իշխէր նոցա Շիրաքաւ. և չոգաւ դարձեալ թագաւորն Երուսաղեմի 'ի վերայ նորա և փախեաւ Շիրաքաւ յերեսաց նորա. և առ զՄսր, և արար ընդ հարկաւ, և յոլով գանձիւք դարձաւ. և յետ աւուրց լու եղեւ թէ բռնադատեն Տաճիկքն զՔրիստոնեայսն որ յԵգիպտոս, և գնաց միւսանգամ և էառ զպալազգիսն 'ի նուաղութիւն սպանութեամբ կողոպտելով և դերութեամբ, և դարձաւ։

Յաւուրսն յայնոսիկ Անդրոնիկոս հօրեղբօր որդին Մանիլ թագաւորին ել յերկրէն Կիլիկեցւոց, և չոգաւ յԱքքայ. զի անդ էր եղբօր իւր դուստրն, որ լեալ էր կին հանգուցեալ թագաւորին Երուսաղեմի, և եղեւ տանն հօգաբարձու և անկաւ ընդ նմա պոռնկութեամբ. և յայտնեցաւ իրքն, և փախեան երկոքեանն 'ի Խառան. և անդ ծնաւ նոցա չար ծնունդ և գարշեցան 'ի նմանէ. և գնաց 'ի Մերտինն և ոչ անդ ընկալան. և գնաց 'ի Կարնոյ քաղաք և դադարեաց անդ. և առնոյր զօր 'ի Թուրքացն և երթայր և գերէր զՔրիստոնեայսն, և բերէր վաճառէր անօրինացն։ և կայր չարաչար։

Իսկ պարոն Թորոսի եղբայր մի էր Մլեհ անուն չարաբարոյ և վայրենամիտ, որ ոչ հաւատայր նմա Թորոս և ոչինչ. վասն որոյ զչարեալ նորա չոգաւ առ Նուրատինն, և ետ նմա զԿուրիս. որ և արար յոլով չարիս գերելով զՔրիստոնեայսն և յանխնայ կոտորելով զնոսա որ և գողացաւ զՄանաւէր ՚ի Հայոց և ոչ գոյր չափ պղծութեան նորա։ Իսկ պարոն Թորոս հիւանդացեալ ագանէր կրօնաւորական հանդերձս և մեծաւ յուսով կատարէր ՚ի Քրիստոս կեցեալ երեւելի փառօք և արիական քաջութեամբ. յիշատակ նորա օրհնութեամբ և դրուատիւք լցի յեկեղեցիս ուղղափառաց. և եթող տղայ մի փոքրիկ յանձնելով զնա յիշխանսն։ Իսկ զի Մլեհն ապականութիւն յոլով առնէր, երդումն առին ՚ի նմանէ, իշխանքն զի մի զբրկեսցէ զտղայն, և մուծին յերկիրն։ Իսկ նա ստեաց երդմանն և էառ զբոլոր երկիրն. և փախուցին զտղայն ՚ի Հռոմկլայն, և անդ մեռանէր։

Ի Թուին Հայոց հինգ հարիւր ինսուն և վեց բարձաւ իշխանութիւնն Տաճկաց յԵգիպտոսէ, որ սկսաւ յԱմարայ. զի անկա-

՚ի նոսա հերձուած մի որ Սսամփդիքն կոչէին. և միւս ևս ՚ի յԱթուր որ Սիւնիքն կոչէին. արդ Սսամփդիքն որք են Շէխքն՝ ասէին. մի է Աստուած, և չար ոչ արար և ոչ առնէ. և յայտ անտի է զի Աստուած մի է և չարն բազում է։ Եւ Սիւնիքն ասէին ամենայն ինչ յԱստուծոյ է չարն և մահն և ամենայն հակառակ պատահմունք. և սկսան ատել ըզմիմեանս. և բաժանեցան աղանդք անդէն յԵգիպտոս. զի յերկուց կողմանց կային անդ. Շէխքն էին ընդ Նորատինին. և Սիւնիքն ընդ Փռանգացն. և Նորատինն առաքեաց պատգամս առ Սիւնիքն զի ՚ի բաց կացցեն ՚ի Փռանգացն, և կացցեն անհարկս և օգնեսցեն դենին իւրեանց, և լուան նմա. և մտին ընդ իշխանութեամբ Թուրքաց, և ամրացուցին զՊլպէս. և արգելին զհարկն Փռանգին։

Եւ լուաւ թագաւորն Երուսաղեմի. և չոգաւ առ զՊլապէս, և եգիտ անդ երկոտասան հազար հեծեալ։ Եւ երկու հարիւր հազար հետևակ և մատնեաց զնոսա ՚ի սուր։ Իսկ Շաւուրն զօրապետ այրեաց զՄ՝սր քաղաք. և առեալ զբազմութիւն, գնաց ամրացաւ ՚ի Շարէ քաղաք. և առաքեաց առ Նորատինն զեղեալ զրոյցն ՚ի ձեռն Շիրաքուայ. և դարձոյց Նորատինն զՇիրաքաւ հարիւր հազար հեծելօք. որ ընդ երթալն նորա սպան զխալիփայն, և եբարձ զազգն նորա յԵգիպտոսէ. և սպան դարձեալ զգլխաւոր Տաճկաց և իշխանացն ինքն։ Եւ Թագաւորն Երուսաղեմի դարձաւ անդրէն 'ի տուն իւր մեծ աջողուածովք։

Եւ զկնի երից ամաց մեռաւ Շիրաքաւ. և առ զիշխանութիւնն եղբօրորդին Շէրաքայ Յուսուփն՝ որ նա ինքն է Սալահատին։ Եւ թէ ո՞վ էր սա ասացից։

Հայր սորա էր 'ի Դուին քաղաքէ Հայոց մեծաց ազգաւ քուրդ Եուբ անուն որդի Սուլիմանայ։ Այս Եուբս և Շիրաքաւ եղբայր իւր ելին 'ի Դուինայ վասն աղքատութեան, և եկին 'ի Միջագետս. և երթեալք 'ի Թկրիթ մտին 'ի ծառայութիւն բերդին. և յաւուր միում պատմեաց Եուբն երազ Հրէի միում. ելանէր, ասէ, յերանաց իմոց հուր, և այրէր զաշխարհս. և ասէ ցնա Հրեայն. ծնցի 'ի քէն որդի աւերիչ երկրի. ասէ ցնա Եուբն. եթէ ելցէ մեկնութիւնդ քո'ի գլուխ, առ դու 'ի նմանէ յորդւոց յորդիս յամենայն ամի՝ հազար կարմիր. և գրեաց Ջհուտն զբանն և զժամանակն և ամիսն. և 'ի նոյն ամի ծնաւ Յուսուփն և զարգանայր. Եւ էր կայտառ. և Շիրաքաւ հօրեղբայր նորա առ զնա և գնաց առ Նորատինն. և եգիտ Շիրաքու շնորհս առաջի նորա, և էր յառաջադէմ և յաջողէր նմա ամենայն ուրեք. և արար զնա զօրապետ, և յղեաց զնա յԵգիպտոս. և թէպէտ յաղթահարեցաւ միանգամ և երկիցս յԵրուսաղէմի թագաւորէն, սակայն ստացաւ նմա զԵգիպտոս. և յորժամ մեռաւ. եդին ՚ի տեղի նորա զՅուսուփն. և լուաւ երազահան Հրեայն. և խնդրէր ըզգրաւն յՌուբէն. և ասէ ցնա Ռուբէն եկ երթիցուք առ հուրն բորբոքեալ զի տացէ քեզ զոր պարտիմք. և չոգան առ նա, եւ խնդաց Յուսուփն. և եհարց թէ քանի՞ ամք են. և նա ետ զգիր թուականին ցնա. և ընթերցեալ հաւատաց. և ետ զանցեալ ամացն գրաւն հազար հազար դահեկան. և գնաց Հրեայն խնդութեամբ ՚ի տուն իւր ՚ի Թկրիթ: Բայց զկնի սակաւ աւուրց Ռուբէն ստամբ ձիոյ հարեալ ՚ի գլուխն մեռանէր յԵգիպտոս. և թաղեաց զնա պատուով որդին իւր. և երթալով երթայր և զօրանայր և մեծանայր Սալահատինն. և էր ահարկու և մեծամիտ և աջողէր նմա: Սա հրաման եհան յերկիրն Եգիպտոսի թէ քրիստոնեայք մի հեծցին ՚ի ձի և ՚ի ջորի և հանապազ զգօտի ածեալ ցուցցեն ՚ի հրապարակս նշանակ ծառայութեան:

Ի վեց հարիւր Թուին Հայոց Խլէճ սուլան էառ զԿեսարիա, և զՕամնդաւ յորդւոցն Դանշմանաց ։

Եւ 'ի նոյն ամի Նեստորական Եպիսկոպոս մի էառ զեկեղեցին Յակոբկաց որ 'ի Բաղդատ, և եհար զնա ցասումն Տեառն, և դարձաւ եկեղեցին առ տեարս իւր ։

Յաւուրսն յայնոսիկ պայծառանայր աստուածային շնորհօք և վարդապետութեամբ սուրբն Յակովբ որդին Սալիբայ. զոր ձեռնադրեցին եպիսկոպոս, և կոչեցաւ նա Դիոնէսիոս ։ Նա արար բազում գրեանս խրատուց և հանճարոյ, և մեկնեաց զբովանդակ հին և նոր կտակարանս ցանկալի իմաստնոց. և լինէր նովաւ նշանք և սքանչելիք և գովութիւն շնորհաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Ի Թուին Յունաց հազար չորս հարիւր իննսուն երեք՝ և Հայոց վեց հարիւր տասն երեք, Թագաւորն Յունաց Մանիլն առաքեաց առ տէր Ներսէս կաթուղիկոսն Հայոց և առ իս 'ի Միխայէլս և խնդրեաց միաբանութիւն հաւատոյ և սիրոյ և կրօնից. նախ 'ի ձեռն Քրիստափորի ումեմն, և երկիցս անգամ 'ի ձեռն Թէորիանոյ իմաստասիրի ։

Եւ գրեաց առ մեզ Տ. Ներսէս թէ խնդրեալ են 'ի մէնջ երկու բնութիւն ասել Քրիստոսի, և զչորրորդ ժողովն պատուել, և զծնունդն Քրիստոսի 'ի Դեկտեմբերի քսան և հինգն կատարել, և զպատարագն խմորով և ջրով առնել, և զսուրբ Աստուածն խաչեցարիւ չասել. և ապա խոստացեալ են մեզ շատ բարիս առնել. զինչ տացուք պատասխանի. և ես ասացի Նմա այդ զոր ինչ խնդրեն զատ յերկու բնութեանցն և 'ի չորրորդ ժողովոյն և 'ի խաչեցարէն մեր կրօնքս է։ Բայց թէ այսօր փոխես զսահմանս հարց քոց զմեծ կամ զփոքր, երեւեցուցանես այնու թէ մինչեւ ցայսօր թերի էաք 'ի ճշմարտութենէն, և արդ լցայք. և ոչ է պարտ 'ի մետասան ժամուս և 'ի վարձութեան օրինափոխ լինել ակն առեալ երեսաց. այլ մեք կատարեալ տեսանեմք զձեզ առաքելական հիմամբ, և զայն դու գիտես. և յղեցաք զմի յաշակերտացն մերոց որ վարժ էր արտաքին գրով Ընթեւինէ անուն զի խօսեսցի 'ի մեր կողմանց (1). և զի Նոցա ոչ գոյր խելամուտ փիլիսոփայական արուեստից։

---

(1) Մի օրի. որ վարժ էր արտաքին գրոց Ընթեւինէ անուն 'ի մեր կողմանց։ Մի օրի. որ վարժ էր արտաքին գրոց զի խօսեսցի ընդ Թեւինէ 'ի մեզ կողմանց.

Եւ յորժամ գնաց աշակերտն իմ, հրամայեաց կաթուղիկոսն խօսել առաջի իւր վասն բնութեանցն . ապա եհարց մեր աշակերտ Ընթեռինէ և ասէ . 'ի քանիս բաժանի բնութիւնն : Թաւրիանէ ասէ . յերկուս, յանձնաւորութիւն և յանանձնաւորութիւն. և ասաց Ասորին ցԹաւրիանէ անուանեալ իմաստասէրն առաքեալ 'ի Թագաւորէն . իսկ երկու բնութիւնդ զոր դուք ասէք և 'ի մէնջ պահանջէք , անձնաւո՞րն է թէ անանձնաւորն . և կարկեցաւ Յոյնն զբազում ժամս տարակուսեալ. և ոչ կարաց պատասխանել. զի գիտաց ըմբռնեալ զինքն յանելանելի որոգայթս : Ապա ասէ զի՞ կայ մեր և արտաքնոցն , թող զայդ. և կաթողիկոսն պարսաւեաց զնա և ասէ . ապա զի՞նչ արասցուք զախոյեանդ. զի և յաստուածային գրոց նոյնպէս խրտնուս և վազս առեալ փախչիս . և զոր դու ցնորիս 'ի մտաց իբրեւ զգետնակոչս , զայդ մեք ոչ ընկալցուք . և այսպէս զբազում աւուրս հարց և փորձ արարեալ յամօթ լինէր անուանեալ իմաստասէրն: Եւ զի խնդրեալ էր Մանիլն և զԱսորոց դաւանութիւնն, գրեցաք և մեք և առաքեցաք յետ այնորիկ . և եկն առ մեզ թուղթ աղաչանաց թէ գոհութիւն և շնորհ ձեզ վասն խոստովանութեան հաւատոյն զոր գրեալ էիք։ Բայց աշխատ լերուք և եկայք տեսցուք զմիմեանս և 'ի բերանոյ լուիցուք. և մեք ոչ կամեցաք զգնալն, այլ գրեցաք պատասխանիս. եթէ մեր դաւանելն զՔրիստոս այս է 'ի մի բնութիւն և 'ի մի կամս, և 'ի մի ներգործութիւն փառաւորեմք զնա անբաժանելի յամենայն տնօրինականսն. և թէ այդ խոստովանութեամբդ կայցէ ոք ընդ մեզ սէր և խաղաղութիւն, յօժարիմք և մեք ևս առաւել. և թէ ոք վասն այդորիկ ատէ զմեզ և հալածէ, մեք գնասցուք ընդ մերս մահու չափ որ է աւանդ հարցն մերոց կացեալ անշարժապէս 'ի հիման առաքելոց և մարգարէից. և վասն այսորիկ մատուսցուք զպարանոցս մեր 'ի վկայական հանդէս նախնեացն մերոց կարօտեալք։

Իսկ զպատասխանին Տ. Ներսիսի. զոր գրեաց մեք ոչ իմացաք. բայց կորովի էր յաստուածաշունչ գիրս և պարկեշտ և ջանացող այր ուղիղ կանոնաւ գրոց և սուրբ. նմանեալ սրբոյն Ներսիսի հաւուն իւր։

Բայց և զայս գիտացաք և հաւատամք, եթէ փառաւորեալն 'ի մէնջ տնտեսութիւն Աստուծոյ մերոյ խափանեաց զջան Թագաւորին. զի յարեաւ 'ի վերայ նորա տագնապ

Թուրքաց. և կաթուղիկոսն Ներսէս փոխէր յաստեացս, և մնաց հիմն մեր անսասան ՚ի հողմոյ որպէս և ՚ի դրանց դժոխոց աղօթիւք և արտասուօք և արեամբ հարցն մերոց։

Ի սոյն ժամանակս և թագաւորն Երուսաղեմի խնդրեաց օգնութիւն ՚ի թագաւորէն Յունաց՝ որ էր աներ նորա երթալ ՚ի վերայ Եգիպտոսի. և առաքեաց նմա զօրս ընդ ծով. բայց յորժամ հասին յԵգիպտոս, Յոյնքն ըստ հնացեալ չարութեանն իւրեանց նենգել կամէին զթագաւորն Երուսաղեմի, և իւրեանց առնուլ զԵգիպտոս. և զգացուցին ոմանք թագաւորին զկամս Յունաց։ Եւ տէրն Եգիպտոսի Յուսուփ ետ նմա ոսկի զհարկն պարտուց և խոստացան յապայն տալով պատանդս. զի տակաւին չէր բաւական Յուսուփն կռուել ընդ թագաւորին. և դարձաւ թագաւորն Երուսաղեմի թողլով անդէն զՅունաց զօրն. և նոքա ոչ իշխեցին յամել ՚ի տեղւոջն, այլ առին զնաւսն և գնացին. և առ չնոսա ձմեռն, և յոլովք կորեան ՚ի ծովուն։

ԳԼՈՒԽ ԻԷ.

Յաղագս շարժին որ եղեւ 'ի յունիսի քսան և ինն. և 'ի խաչի ամիսն եկն ձիւն քսան և հինգ թիզ:

Ի նոյն թուին եկն շարժ ահագին 'ի յունիսի քսան և ինն 'ի տօնի սուրբ առաքելոցն Պետրոսի և Պօղոսի. և դողայր երկիրն 'ի հիմանց մինչեւ ցիններորդ ժամ աւուրն 'ի ժամ պատարագին և թուէր թէ 'ի վեր բարձրանայր և 'ի վայր իջանէր երկիրն. և էաք 'ի վանքն Մօրհանայ. և հրամայեցաք ոչ ումեք ելանել յեկեղեցւոյն մինչեւ դադարեսցէ բարկութիւնն Տեառն. և ճշմարիտն է ասել ակն ոչ ունէաք դադարման՝ զի ասէաք 'ի նորանշան ցասմանէն թէ հասեալ է վախճան աշխարհիս: Իսկ յորժամ յիշեաց Տէր զարարչական խնամսն և հաստատեցաւ աշխարհ և տեսաք զիրեարս, էր ամենայն ակն յարտասուս և ամենայն բերան 'ի գոհութիւն և յօրհնութիւն բացեալ: Եւ եկն մեզ զրոյց եթէ փլաւ պարիսպն Հալպայ և ամենայն ձեռագործ շինուածն որ 'ի նմա, և մնաց միայն մի եկեղեցի. և պատառեալ գետնոյն սեաւ ջրով ծովացաւ քաղաքն, և սպան զբիւրս թիւրոց ։ Եւ այս եղեւ յարդար իրաւանցն Աստուծոյ, քանզի իբրեւ զանասուն էր անդ տեսանել զքրիստոնեայս ՚ի վաճառարանն. և իբրեւ զջուր համարեալ էր նոցա հեղումն արեանց հաւատացելոցն, և անյագ ՚ի ագահութիւն նոցա որպէս ՚ի գիւտս գանձուց. և հատոյց նոցա փրկութիւնն քրիստոնէից հաւասար չափով. Թերեւս թէ ոչ զոյգն, այլ զառհաւատչեայն անշիջական հրոյն՝ որ պահի նոցա ։ Քանզի ուր է վրէժ գործոյն Սոդոմայ՝ յորս կան հաստատեալք. և կամ Ջրակորոյս հսկայիցն անօրէնութիւնն՝ որ յաճախ է առ նոսա. մինչ զի բազումք երկմտէին ՚ի դատաստանացն Աստուծոյ կարծամիտք եղեալ ։ Նոյնպէս և յԱնտաք փլաւ սուրբն Պետրոս. և Յունաց եկեղեցին սպան զպատարագողն և զյոլովս ՚ի ժողովրդենէն. և Երինծն և ամենայն քաղաքն զգեցան քուրձ և գնացեալ անկան առաջի պատրիարքին իւրեանց. և աղաչէին, զի մնացէ ՚ի քաղաքն. զի կարծեցին թէ ՚ի բանադրանացն նորա եղեւ այս, և ապա ասէ ցնոսա. հանէք անարգանօք զպատրիարգն Յունաց. և յորժամ չոգան գտին զնա մերձ ՚ի մահ, զի անկեալ էր ՚ի վերայ նորա քար ՚ի փլմանէ եկեղեցւոյն. և գնացեալ ասացին նմա թէ յետ հոգւոյն կայ. և հրամայեաց բառնալ մահճօքն և ընկենուլ արտաքոյ քաղաքին. և արարին այնպէս. և մեռաւ յանարգութեան. և ապա եմուտ պատրիարքն փռանգաց Հերմի յԱնտիոք. և մխիթարեցաւ քաղաքն, և սկսաւ շինել զաւերեալսն 'ի շարժմանէն: Բայց թէպէտ յամենայն երկիր արար վնաս շարժն այն նորագործ բերդից և քաղաքաց և եկեղեցեաց, այլ ողորմութիւն Քրիստոսի յԱնտաք և յամենայն ծովեզերեայսն պահեաց զուղղափառացն եկեղեցիսն. ոչ վասն բարեաց գործոց այլ յաղագս հարցն աւանդից միայն:

Ի հազար չորս հարիւր թուին Ասորոց և Հայոցն հազար տասն և չորս. մեռաւ Խուդբդինն աթապակն Մօսլայ. և ամենայն Աթուրպացւոցն. և զի Նորատինն եղբայր էր նորա` առ յինքն զՄծբին և զՍնճարն, և յոյժ տրտմեցան Փխիրքն զի գինի ոչ ըմպէր Խուդբդինն, և ընդ սահման աղօթիցն նոցա ոչ անցանէր. և ասէին զնա մարգարէ:

Զայնու ժամանակօք մեռաւ Խալիֆայն Մսդնջդ, և առ զպատիւն Մսդոտինն որդի նորա. և գրեաց առ նա Նորատինն եթէ կայ վճիռ Մահմատայ, որ ասաց թէ զհինգ հարիւր ամ ոչ կամի Աստուած զջնջումն քրիստոնէից. և արդ կամիմ գալ առ քեզ. զի խորհեսցուք վասն այսոցիկ։ Եւ խնամքն Աստուծոյ արկ 'ի սիրտ նորա, թէ նենգութեամբ կամի գալ առ քեզ զի սպանցէ զքեզ և բարձցէ զխալիփայութիւնդ; որպէս եբարձ զԵգիպտոսին 'ի ձեռն Շիրաքուայ. և վասն այսպիսի կարծեաց գրեաց առ նա խստագոյնս և սպառնացաւ, և ետ հրաման հակառակ նմա ընդ ամենայն երկիր շինել եկեղեցիս և վանորայս, և համարձակել զուսումն քրիստոնէութեան. զի Նորատինն ոչ տայր հրաման նորաշէն եկեղեցւոյ, և ոչ վանաց. և կոչեաց առ ինքն զՄլէհն (1) որ կամակից էր Նուրատինին, և սպան զնա։

Իսկ Նորատինն գնաց պաշարեաց զՄօսլ. և կային անդ եւթն որդիք եղբօր իւրոյ. և երդուաւ նոցա թէ ոչ կամի մեղանչել նոցա, թէ սիրով ընկալցին զնա 'ի քաղաքն. և բացին նմա, և մտաւ 'ի քաղաքն և ել 'ի կլայն. և առ զամենայն գանձսն և եհան 'ի քաղաքէն. և եդ անդ զծառայս իւր զի յանուն նորա պահեսցեն զքերդն. և զերկիրն բաժանեաց եղբօրորդւոցն. և զամենայն ամուրսն աւար ընդ ձեռամբ, և գնաց։ Եւ սկսաւ ծանրացուցանել զհարկն քրիստոնէից, և. ետ հրաման հարթել զհերս իւրեանց՝ հաւատացելոց. և Ջ հաւուն ասէ կարմիր կարկատան ձգեսցէ 'ի փակեղայնն յաջոյ յուսն, զի նշանաւորք լիցին:

---

(1) Մէ օրի. զՎաղէրն։

Իսկ Ամրի Թագաւորն Երուսաղէմի չոգաւ 'ի Կոստանդնուպօլիս. և յոլով գանձիւք դարձաւ յԵրուսաղէմ: Եւ Խլիճ ասլան եկն 'ի Մելտենի և ոչ կարաց առնուլ զնա. և առեալ գերի անձինս երկոտասան հազար, դարձաւ:

Իսկ Նորատինն առ ընդ իւր զԻսմայելն Դանշմանայ, և զՇահնշահ եղբայրն Խլիճայ. և այլ բազում ամիրայս, գնաց 'ի Կեսարիա. և Սուլտանն ոչ կամեցաւ ելանել ընդդէմ նոցա. և առաքեն առ նա և ասեն. տուր զկէս երկրիդ եղբօր քում. և կային առ նա որդիքն Շահնշահի եւթն. և առ 'ի նոցանէ զմինն և սպան, և խոստովանեալ առաքեաց առ հայր նորա, և ասաց. եթէ ոչ երթաս այդի, դովին օրինակաւ առցես զմնացորդս: Եւ տեսեալ զայն լացին, և անկաւ ահ 'ի վերայ նոցա, և յարեան գնացին:

Ի նոյն ամի 'ի խաչի ամիսն եկն ձիւն նաք, որ ոչ 'ի լրոյ, և ոչ 'ի տեսանելոյ, կամ յիշմանէ աւանդից և 'ի գրոց կարէ գիտել ոք. քանզի չափեցին զթանձրութիւն ձեանն քսան և հինգ թիզ առ մեզ. և 'ի հնդիկս, որ բնաւ ոչ գայ, չորեքտասան(1) թիզ ձիւն եկն, և մեռան վայրի երէք, և թռչունք և սողունք, և պաղեցան ջուրք, և մեռան ձըկունք. և ընտանի անասունք նոյնպէս կոտորեցան 'ի չգոյէ կերակրոյ, և այրեցաւ ամենայն բոյս սերման. և 'ի գալ ամին եղեւ սով սաստիկ, մինչ զի իշխանքն Կապադովկիոյ ըմբռնին զՍոլիմ ամիրայն Սեւաստոյ Դանիշմանեայ, և յափշտակեցին զամբարս ցորենոյն, զի մի մեռանիցին. և գործ պղծութեանն ծածկեցաւ ամիսս երեք վասն ձմերանն ։ Եւ զկնի այնորիկ լուան զեղեալսն, և դժուարացան ամենայն ազգն շուրջանակի. և ոմանք 'ի բնակչաց աշխարհին առաքեցին 'ի Դամասկոս առ Տանուն ամիրայն Կեսարիոյ. զոր փախուցեալ էր Սուլտանն ազգականօք իւրովք. և կոչեցին զնա, և եկն էառ զիշխանութիւնն Սեբաստիոյ ։

Յայնմ ժամանակի հիւանդացաւ Նուրատինն. և յուսահատեցան 'ի նմանէ. և անկան ընդ միմեանս ամիրայքն և գործակալք երկրին ։ Իսկ նորա դարձեալ կանգնեալ 'ի հիւանդութենէն որպէս յարուցեալ 'ի մեռելոց անակնունելի. և անկաւ ահ նորա կրկնակի 'ի վերայ երկրի։ Եւ Տանունն յուսացաւ 'ի նա զի փրկեսցէ զնա 'ի Սուլտանէն։

---

(1) Մի որի. երեքտասան ։

Եւ զօրս հաւաքեալ Նորատնին եկն 'ի Սեբաստիայ, և հաստատեաց զՏանուն, և սպառնացաւ Սուլտանին եթէ՝ կռուիցի ընդ նմա. և դարձաւ և առ զԲեհեսնի, և զՔեսուն, և զՄարաշ. և լուեալ Սուլտանն գնաց 'ի վերայ նորա. և եկն ընդ առաջ նորա Նուրատինն. և նստան աստ և անդ Ջահան գետոյ և երկեան 'ի միմեանց։ Եւ անկաւ սով 'ի բանակն նոցա, և նեղեցան և ապա խօսեցան 'ի խաղաղութիւն։ Եւ եթող Սուլտանն զՏանունն կալ 'ի հնազանդութիւն Նուրատնին, և դարձան 'ի տեղիս իւրեանց։

Ասացից և յաղագս աղանդոյ միոյ որ երեւեցաւ յաւուրս մեր։ Նախ քան զվախճանն Ներսիսի կաթուղիկոսի երեք արք եկեղեցականք երկուքն վանաց երիցունք Յուսիկ և Պետրոս անուն. և գեղջերէց մի Կարապետ անուն գնացին առ Տ. Ներսէս, և ամբաստանեցան 'ի նմանէ վասն անուղղայ համբաւոյ նոցա. և ելին 'ի նմանէ սրտմտութեամբ, և չոգան յՈւռհայ. և սկսան բամբասել զնա եթէ զաղանդն Սիմոնի կախարդի ունի. զի առնէ արծաթով ձեռնադրութիւն. և ինքեանք դաւանեցին զՔաղկեդոնին. և դարձուցին զկնի մոլորութեան իւրեանց չորս հարիւր տուն ՚ի քաղաքին. և քաղաքն կոչեցին զնոսա Յուսիկեանք նախատանօք։

Եւ կաթուղիկոսն գրեաց առ իշխան քաղաքին. զի հալածեսցէ զնոսա, և արար այնպէս։ Եւ գնացին ՚ի Հալապ առ Նորատինն. և առին ՚ի նմանէ համարձակութիւն և դարձան ՚ի յՈւռհայ։

Եւ ես կոչեցի զնոսա առ իս մեղադրեցի և հաւանեցուցի դառնալ ՚ի կրօնս իւրեանց. և առաքեցի զնոսա իմ պատուաւոր արամբք առ կաթուղիկոսն. և մինչ գնացին նոքա կատարեալ էր հայրապետն ՚ի Վրխառս։ Եւ յԱստուածածնին ամսին յութն, յաւուրն հինգշաբաթւոջ. ՚ի թուին Հայոց վեց հարիւր քսան, և Ասորւոց հազար հինգ հարիւր։ Իսկ անօրէնն Յուսիկ գնաց յԱնտաք և վերստին մկրտեցաւ ՚ի Յունաց։

Իսկ Տեառն Ներսիսի կային երկու եղբօրորդիք եպիսկոպոսունք Գրիգոր և Գրիգորէս անուամբ նոցա. աւագ եղբօրորդին Տ. Գրիգոր չէր մերձ ՚ի վախճանին. վասն որոյ զՏ. Գրիգորիսն քարոզեցին կաթուղիկոս. բայց ոչ ձեռնադրեցին։ Իսկ յետ աւուրց եկեալ տէր Գրիգոր. և իմացեալ զիրքն դարձաւ, և գնաց առ փեսայն իւր Մլեհն. և առռեալ զնա տարաւ առ Կրասորինն, և նորին հրամանաւ ածաւ 'ի Հռոմկլայն. և ձեռնադրեցին զնա Կաթուղիկոս։ Եւ յաւուր ձեռնադրութեան իւրոյ կոչեաց զերկուս յեպիսկոպոսացն մերոց զԳրիգորէս Բէսնոյ եպիսկոպոս, և զԱսաւիլեաս Սաքանայ եպիսկոպոս, և մեծարեաց զնոսա։ Եւ զկնի ձեռնադրութեանն առաքեաց առ մեզ այս երևելիս բան Հին աւանդութեանն Հայոց և Ասորոց. զի յորժամ Ասորոց ուղղափառաց պատրիարքք ձեռնադրէին, առաքէր զիւր դաւանութիւնն և զգաշն սիրոյ առ կաթուղիկոսն Հայոց. և յորժամ Հայոց նստի հայրապետ՝ նոյնպէս արասցէ։

Իսկ ես խնդացի յոյժ, զի այր գիտնական և սուրբ էր. և առաքեցի առ նա զուխտ միաբանութեանս մերում. բայց սակաւ ինչ մեղադրեցի. զի ընդէր հակառակութեան եղեւ 'ի հոգեւոր շնորհս, և 'ի մէջ ազգականաց, զի միայն անուանեալ յաստիճանդ տեղի տալի էր քեզ։ Այց եղիցի գթութ͞ի Տեառն Աստուծոյ 'ի վերայ քո. և յոյժ աղաչեցի զնա. եթէ բարձ զկեղտ անուանդ զարծաթառութեան 'ի պարգեւս Հոգւոյն յանարատ և յանքամբաս յանդգէդ. և մի տար կրկնել զՅուսիկեան չարախօսութիւն տու ձեզ, սիմոնեան կոչել զձեզ։ Եւ գրեալ էր առ իս յանձնառութիւն. և այլ ևս աղաչէր զնա վասն ազգականին իւրոյ. որ անուանեցաւն զառաջինն զի կալցի զնա արատուով. զի ասեմ ընդարձակ և բազմամարդագիր վայել է հայրապետ ունել ըստ թուոյ աւետարանչացն. և զայն ևս լուաւ ինձ, առաքելով զնա 'ի Պամբոսնն տալով նմա զՏարսոնի վիճակն, և 'ի վերայ վերկրին Կապադովկիոյ արար ընդ իշխանութեամբ նորա, զոր Կալիտասն կոչէին. որ և զկնի այնորիկ, և նա եկն յաւժթուն։

Ի նոյն թուականին Կրքաստրինն սկսաւ զօրաժողով լինել յամենայն աշխարհաց յԵմանացւոց յԵգիպտացւոց և յԻթուրքացւոց և 'ի Հայոց և 'ի Կապադովկացւոց. զի բարձցէ զԵրուսաղէմի թագաւորութիւնն, և զԻռըլըձ աւլունայ տուրանութիւնն. և ինքն զառոգացեալ նստէր և լսէր զքաղումն ժամն, և ոչ խօսէր. այլ կարդայր և աղօթէր, և ոչ տայր գինի ըմպել 'ի բանակին. և ոչ ձայն խաղուց և երգոց. և կաքաւչաց լսելի լինէր 'ի զօրուն. և յաղագս այսպիսի առաքինութեան ակն ունէր թէ հրեշտակ խօսի ընդ նմա. զի պատրէին զնա Փխիրքն և Շեխերն. թէ տեսանէաք զքեզ, զի յերկինս ելանէիր, և ոմանք թէ հրեշտակ Աստուծոյ կայ առ քեզ և խօսի ընդ քեզ, և հաւատայր նոցա. և մինչ յայսպիսի միտս հպարտացեալ նստէր 'ի Դամասկոս, և յամենայն կողմանց գային առ նա զօրք որ ոչ էր թիւ, յանկարծակի եհար զնա Տէր և սպան. որ թագաւորեաց ամ քսան և ինն. և ցրուեցան զօրքն յիւրաքանչիւր տեղի: Եւ առ զթագաւորութիւնն Մելիք Սալեհ որդի իւր:

Եւ թագաւորն Երուսաղեմի եկն 'ի վերայ Դամասկոսի և գերեաց զաշխարհն. և նստաւ 'ի վերայ քաղաքին. և խոստացան տալ նմա հարկս թէ գնասցէ 'ի նոցանէն. այլ նա ակն ունէր առնուլ զքաղաքն, բայց մեղքն քրիստոնէից ոչ ներեաց. զի կալաւ զնա ցաւ մահու. և առեալ ոսկի 'ի Դամասկոսէ դարձաւ յԱքքայ. և մեռաւ անդ զկնի քառասուն աւուր մահուան Նուրատնին, թագաւորեալ ամս տասն և երկու: Եւ եղեւ տրտմութիւն ամենայն քրիստոնէից մահ նորա. և որդի նորա Պաղտոյնն առ ըզթագաւորութիւնն ամաց հնգետասանից:

Իսկ յորժամ լուաւ Խլիճ Ասլան զմահ Նուրատնին, չոգաւ 'ի Սեբաստիա և առ զնա. նմանապէս և զՆոխինայ և զՆէոկեսարն. և հատոյց զազգն Դանիշմանայ. որ տեւեաց ամս հարիւր քան երկու, և կացին իշխանք վեց զկնի միմեանց:

Իսկ Սեփետինն եղբայր Նորատինին ել 'ի 'ի Մօսլայ, և առ զՄծբին և զՌաղա և ըզԽառան. և հնազանդեցաւ նմա եղբօրորդին իւր Մելիք Սալեհն. և ելոյծ զկանոնք եղբօրն որ գրեալ էր յամենայն Մզկիթ, նալաթ զգինին Թուրքաց և Տաճկաց. և ետ հրաման տաշել զգիրն, և ետ հրաման համարձակութեամբ ըմպել յամենայն տեղիս թէ եւ 'ի Մզկիթ կամ իցէ ումեք:

Իսկ Յուսուփն որ նա ինքն է Սալահատինն, որ տէրն էր Եգիպտոսի իշխանեցաւ 'ի վերայ Ներքսագոյն Արաբիայ և մասին ինչ 'ի Նուբեաց աշխարհէն:

Եւ 'ի սոյն ժամանակս զդղեակսն զոր ունէին Հայք ընդ ձեռամբ ինքեանց յերկիրն Սասնոյ, նեղեալ 'ի Մուփարղնայ ամիրայէն տուին յամիրայն Խլաթայ 'ի Շահի արմէնն:

Յայնմ ժամանակի սպանին զՄլեհ իշխանն Կիւլիկեցւոց կամաւ իշխանացն. և զի որդին Թորոսի տղայն մեռեալ էր 'ի Հռոմկլայն ետուն զիշխանութիւնն Ռուբէն որդին Ստեփանեայ ածեալ զնա 'ի Տարսոնէ. և նա եսպան զսպանողսն հօրեղբօր իւրոյ: Զի ասացին թէ ոչ միայն սպանին, այլ և ընկեցին զնա շանց. զոր լուեալ ոչ կարէր համբերել։

Յորում ժամանակի ել Սալահատինն յԵգիպտոսէ եւ առ զԴամասկոս. եւ չոգաւ 'ի Հալապ. եւ դողաց 'ի նմանէ Մելիք Սալէհն. եւ առաքեաց առ նա Սալահատինն եւ ասէ. Ես ծառայ քո եմ եւ եկեալ եմ յօգնութիւն Տեառն իմոյ, կալ ընդդէմ թշնամեաց քոց. եւ ոչ հաւատաց նմա, եւ ոչ եբաց զքաղաքն. եւ նա դարձաւ 'ի Հալպայ եւ առ զՀեմս եւ զՀամայ պատերազմաւ. եւ գնաց 'ի Դամասկոս. եւ եհան զՓռանգ գերիսն որ անդ, եւ վաճառէր դիւրագին. եւ արար խաղաղութիւն ընդ Փռանգն. եւ ետ ածել ոսկի բազում յԵգիպտոսէ եւ կուտեաց զօր բազում։

Եւ Սեփետինն եկն 'ի վերայ նորա խրոխտանօք եւ նախատանօք. եւ ասէր զնա շուն կատաղի որ հաչէ ընդդէմ տեառն իւրոյ, եւ փութայր զգալն զի մի փախիցէ։

Եւ Սալահատինն բազում անգամ առաքեաց ընդ առաջ նորա, մի գալ եւ մի պատերազմել. զի մի ազգ՝ մի հաւատոս՝ եմք ասէ. եւ ոչ լուաւ նմա. այլ եկն եւ բախեաց 'ի վերայ նորա. եւ յարեան եւ կռուեցան եւ սկսան կոտորել զզօրս Սեփետինին. եւ փախեան յերեսաց նորա եւ անկանէին բազումք առանց ձեռին ։ Եւ իբրեւ ետես Սալահատինն, եթէ յաղթեցաւ Մեփետինն, արգել զզօրսն իւր 'ի կոտորելոյ և անց 'ի մէջ, և բարկութեամբ դարձոյց և ասաց. բաւական է, զի մի բարկասցի Աստուած. և զկենդանի ծառայսն հանգոյց և արձակեաց ազատս. և զսպանեալն թաղեաց. և իբրեւ լուան զայս, երկեան 'ի նմանէ ամենայն Մսլիմանքն, և ազգն Թուրքաց. ևս առաւել զահի հարաւ Մելիք Սալեհն ։ Եւ ետուն զՓռանգ գերիսն և վաճառեցաց սակաւ գնոց. զԿոմսն Տրապօլսոյ ութսուն հազար դահեկանի. զՋօսլին որդին Ջօշլինին՝ յիսուն հազար դահեկանի. զԱնալտ Բրինձն՝ հարիւր քսան հազար դահեկանի։ և խնդրեաց յԱնտաքայ օգնութիւնս ։

Իսկ Մեփետինն դարձեալ արար ժողով. և առ ընդ իւր զտէրն Մերտնայ և զՀարանքեփայն. և եկն 'ի վերայ Սալահատինին վաթսուն հազար հեծելով. և Սալահատինն ունէր երկոտասան հազար. և առաքեաց Սալահատինն առ Մեփետինն և ասէ. մի գար 'ի վերայ իմ. և մի կռուիր ընդ իս, ո՞վ եմ ես և զի՞նչ մեղայ քեզ, ծառայ եմ՝ քոյ, եթէ յաղթիմ՝ 'ի քէն ոչ է ինձ նախատինք. բայց եթէ հարկանես զիս, և անիրաւիս յիս, և յաղթիս յինէն, մեծ կորանք (1) է քեզ տեառնդ պարտիլ 'ի ծառայէս. և ոչինչ եղեւ նմա ունկնդիր. և եկեալ կացին առ ընթեր և պատրաստեցաւ Սալահատինն. և յարեան 'ի վերայ միմեանց. և վերստին պարտեցաւ Սեփետինն, և փախեաւ. և մատուցին նմա ուղտ, և նստաւ 'ի վերայ. և գնաց մազապուր և զերծաւ 'ի Մօսլ:

Եւ գնաց Սալահատինն և առ զՄմբէճն. եկին առ նա տեարքն Թլպաշարայ և Անթապայ. և գնաց յԱզազն և կռուէր ընդ նմա. և յարեան 'ի վերայ նորա Հաշըշիք և խոցեցին զնա. բայց ոչ մեռաւ. այլ սպան զնոսա, և ինքն ողջացաւ փութով. և առաքեաց զօրս յերկիրն Հաշըշեացն և գերեաց զնոսա. և էառ զԱզազն. և գնաց նստաւ 'ի վերայ Հալպայ. և առաքեցին յԱնտաք առաջանս գալ օգնել նոցա. և չոգաւ Ռնաղտն զոր վաճառեցին, և կոտորեաց մասն ինչ 'ի զօրացն Սալահատինին, և արար զնա փախստական. և գնաց յԵգիպտոս:

Ի վեց հարիւր քսան երկու թուին Հայոց մեռաւ Նաճքատին տէրն Մերտնայ. և առ զիշխանութիւնն Խուդբդինն որդի նորա:

Եւ 'ի նոյն ամի վարազ մի եհար զԹագաւորն Յունաց և համբաւեցաւ թէ մեռաւ. անդի ։ Իսկ Խլիճ ասլան ասպատակեաց յերկիրն նորա և յաւարի եհար զբաղում տեղիս ։ Բայց նա ողջացաւ 'ի խոցոյն և կային առ նա երկու յորդւոց տանն Դանշմանայ առ նա փախուցեալք · և ժողովեաց զօրս և արար զնոսա զօրագլուխս · և առաքեաց դեսպանս առ Խլիճ ասլանն, և ասէ · դարձո զհայրենիսն որդւոց Դանշմանայ որ կան առ իս · և ինքն կարճագոյնս գնաց զկնի և անպատրաստ գտեալ զԹուրքն, յաւարի կոտորեաց ։

---

(1) Մի. օրի. կոտրանք: Մի. օրի. կորեանք:

Իսկ Թուրքն որ կայր յՈւճն գնաց ընդ կողմն հիւսիսոյ ծածկապէս, և գերեաց յերկրէն Յունաց հարիւր հազար անձինս կանայս և տղայս կոտորելով զարսն · և Թագաւորն խնդրէր զՍուլտանն · և վարէր զնա առաջի իւր · զի ոչ կամէր կռուիլ ընդ նմա Սուլտանն ։

Եւ Թագաւորն առաքեաց զորդիսն Դանշմանայ յիսուն հազարաւ 'ի վերայ Նէոկեսարու, որք երթեալ նստան 'ի վերայ նորա ։

Իսկ Թուրքն խորամանկ որ իշխէր քաղաքին, գրեաց թուղթ առ զօրսն յերեսաց քրիստոնէիցն որ անդ, եթէ Դանշմանիքդ զորս եդեալ էք մեզ առաջնորդս, ահա մատնել կամին զձեզ 'ի ձեռն Թուրքաց. որ գործեալ էին դարան ձեզ, և սպասեն ժամանակի. և Թուղթն ընկեցին արտաքս:

Եւ տեսեալ զօրացն հաւատացին, և փախեան. և ելին զհետ նոցա զօրքն Թուրքաց պահապանք քաղաքին, և զբազումս կոտորեցին 'ի նոցանէ. և սպանին զքեռորդին Թագաւորին. և տրտմեցաւ յոյժ. և իջաւ մերձ 'ի Կօնն, և նստաւ 'ի ձորակի միում 'ի մէջ երկուց բլրոց դժուարագունից. և ահա պատահեցան զնովաւ Թուրքմանքն Պռի յոլովութիւնք յոյժ. և պաշարեցին զնա անդ յաւուրս եւթն. և ընկենուին նմա գլու վիմաց աստի և անտի, և նետիւք խոցոտէին զնոսա 'ի տուէ և 'ի գիշերի. և սպանին 'ի նոցանէ մարդ և գրաստ բազում. և առին զռոճիկս նոցա հինգ հարիւր (1) բեռինս. և երկեան յոյժ զօրքն Յունաց: Եւ առաքեաց Թագաւորն առ Սուլտանն, և ետ ցնա երեք քաղաքս, զոր նոքայն էին չինեալ. և աղաչեաց զնա զերծուցանել զնա 'ի նեղութենէն, և առնիցեն սէր ընդ միմեանս. և ուրախ եղեւ Սուլտանն և յղեաց առ նա, երեք ամիրայ հեծելօք, հանել զնոսա անտի և տանել 'ի Կոստանդնուպոլիս. որք եկեալ հալածեցին զԹուրքն, և յուղի անկեալ լակոտն գնալ. և Թուրքմանն երթայր աստի և անտի. և անարգէր զՍուլթանն. զի Թափեաց զնոսա 'ի ձեռաց նոցա զտկարացեալ Թշնամին և զառեալ առանձինն անաշխատ. և զայս ասէին և հետզհետէ բանակէին և յափշտակէին հանդերձս և զէնս և երիվարս. և սպանանէին զբազումս նետիւք և պարսաքարիւք: Իսկ Յոյնքն մեղադիր լինէին ամիրայիցն, թէ դուք տայք ծախել զմեզ. իսկ նոքա երդնուին թէ ոչ, այլ նոքա իսկ անհնազանդք են և վայրենաբարոյք և այլանոլք, և ոչ ոք կարէ զնոսա արգելուլ 'ի վնասէ. և այնպէս առնէին մինչև հանին զնոսա յերկրէն իւրեանց. և անկան զճանապարհայն 'ի Յունայն քան հազար անձինք. և գնաց Մանիլն լի ամօթով (պատկառեալ) և պակասեալ 'ի քաղաքն իւր, այն՝ որ խոստանայրն յաղթել երեւելի պատերազմաւ աշխարհի, և իմանալ կռուով ուղղափառայն եկեղեցւոյ, այսպէս անավաստակ գտաւ յերկոսին պատերազմին: Իսկ յետ այնորիկ առաքեաց Սուլտանին բազում գանձս, և գնեաց զգերիսն որ մնացեալ էին կենդանիս:

---

(1) Երկու օրի. հարիւր հազար:

Յայսու ժամանակօք քրիստոնեայքն որ 'ի Մելտենի՝ կային 'ի մեծ նեղութիւն յամիրայէն իւրեանց որ կայր անառակութեամբ , և 'ի ուղութենէ հայի ։ Եւ քարոզեաց նոցա եկեղեցւոյն և ասաց. եղբարք թշուառութիւնս այս վասն մեղաց է . քանզի կատարեալ տեսանեմք առ մեզ զբամբասանս Իսրայելի , զորոց ամբաստան լինի մարգարէն և ասէ . «Խառնակեցան ընդ հեթանոսս և ուսան ըզգործս նոցա . ծառայեցին սովորութեանց նոցա և եղեւ. նոցա գործք իւրեանց 'ի գայթակղութիւն » . և արդ ահա սպառեցաք , ջնջեցաք և խոպան նուաղեցաք և լքեալք եղաք 'ի Տեառնէ . և այժմ եկայք դարձցուք իւրաքանչիւր ոք 'ի Ճանապարհաց մերոց չարաց , և աղաչեսցուք զերեսս ողորմութեանն Աստուծոյ և հայեսցի առ մեզ ողորմութեամբն իւրով բնականաւ . և նովաւ կեցցուք և մի մեռցուք ։ Եւ լուան ժողովուրդն զպատուէր եկեղեցւոյն . և դարձան առ Տէր պահօք և պաղատանօք և արտասուօք և հսկմամբք գիշերականօք ։

Եւ ցածեաւ Տէր 'ի բարկութենէ իւրմէ , և արկ 'ի սիրտ ամիրային և ցաւեցոյց զմիտս նորա խղճիւ վասն գործոց իւրոց , և ետ զքաղաքն 'ի Սուլտանն և ինքն գնաց 'ի Խարբերդ . և դիւրացաւ. քաղաքն և առատացաւ հացն , և թեթեւացաւ հարկառութիւնն (1), և փառաւորեցաւ Աստուած շնորհակալութեամբ, և քաղցրացաւ ճաշակ ապաշխարութեանն երեւեալ արդեամբք. զի առն պազանացելոյ և խակամիտ զղջմանալ ետ և թողուլ զհայրենիս իւր և գնալ. և միայն նա էր մնացեալ ՚ի ամենէն Դանշմանայ:

Ի վերջ հարիւր քսան և ինն թուին Հայոց ել Սալահատին յԷգիպտոսէ երեսուն երեք հազար սպառազինեալ հեծելովք ՚ի սակաւականացն և հետեւակացն (2). յիսուն երկու հազար գրաստս զինաբարձս առաջի իւր. և եկեալ ՚ի Պաղեստին կալաւ փռանգ մի, և արեամբ նորա լուացաւ աղօթից (3) և աղօթեաց, և յայնմհետէ կազմեցաւ պատերազմի և աւերման աշխարհին:

Իսկ թագաւորն Երուսաղեմի Պաղտոյին յորժամ լուաւ զայս հաւաքեաց զզօրս իւր առ ինքն. և ահա սակաւք էին յոյժ առ բազմութեամբ անօրինացն. և անկաւ թագաւորն ՚ի վերայ երեսաց իւրոց հանդէպ արեւելից առաջի զօրաց իւրոց. արարին և նոքա նոյնպէս. և աղաղակեցին առ Տէր սրտի մտօք և լային, և յարուցեալ կանգնեցան և ուխտեցին առաջի Աստուծոյ ոչ դարձուցանել զթիկունս 'ի թշնամեացն. այլ յօժարութեամբ մեռանել 'ի վերայ սուրբ եկեղեցւոյ: Եւ ապա կազմեցան սպառազինեցան լի հաւատով. և գնացին ընդ առաջ նոցա. իբրև երևեցաւ գունդ այլազգեացն, և էին բազումք, և ելեւելս առնէին զմիմեամբըք, դարձեալ իջին յերիւարացն և 'ի ծունր խոնարհեալ աղաստաւեցին. և լցին զբերանս իւրեանց ահաւոր անուամբն Քրիստոսի, Աստուած ղնա կարդալով և իշխան մահու և կենաց. և վառեցան 'ի սէր նորա և նստան յերիւարս իւրեանց և խոյացեալ իբրև զարծուիս յերամակս նապաստակաց հարին իւրաքանչիւր զնիզակ իւր 'ի լանջս թըշնամեացն չեշտակի, և ձգեցին զնոսա:

---

(1) Մի օրի. հակառակութիւն:

(2) Հին օրի. բաց ՚ի սակաւականացն և ՚ի հետեւակացն:

(3) Թէրեւս լուացաւ ՚ի ձայն աղօթիցն և աղօթեաց:

Եւ Քրիստոս Աստուած օրհնեալ թագաւորն մեր եհան հողմ ուժգին ընդդէմ նոցա՝ որ ընկենոյր զնոսա 'ի ձիոյն առանց ձեռքին, նիզակի. և նոքա կոտորէին զնոսա և ոչ զոք ապրեցուցանէին. և ցրուեցան փախստականքն ընդ կողմն հարաւոյ առ անապատովն. բայց սուրն ոչ դարձաւ 'ի նոցանէ մինչեւ 'ի մուտս արեգականն. և 'ի վաղիւն սկսան դարձեալ 'ի մնացեալսն և մինչև յեւթըն օրն գտանէին 'ի նոցանէ լքեալս 'ի սավոյ և սպանանէին. և առին զամենայն ծանրութիւն ռոճկացն նոցա, և զառատախանոյս նոցա կոչեցեալն ընետան և զաղեղունս և ըզնիզակս և զվրանս նոցա և զամենայն պարարտութիւնս սպասուցն, և լցան և փարթամացան. և ուրախ արար Տէր զյուսացեալս իւր. և ցնծաց սուրբ եկեղեցի 'ի համբաւս յայս աւետեաց. և տային օրհնութիւն Աստուծոյ որ եբեկ զմէջս անօրինացն, և թափեաց զոխրաս նոցա պղնձացեալս 'ի սնոտի յոյսն իւրեանց։

Իսկ Սալահատինն նորապարտ և նախամօթ անկաւ 'ի Միսր յոյժ սակաւուք. և զգեցաւ սեաւ և արգելաւ 'ի սենեակ, և տանջեաց զինքն խաւարաւ զբազում աւուրս։ Եւ վասն այսր յաղթութեան ամիրայն որ կայր 'ի Հերիմն, դարձաւ 'ի Թուրքաց և եղեւ ընդ Անտաքու հնազանդութեամբ. և երդուաւ նմա Բրինձն թողուլ զբերդըն առ նմա. և յետոյ, սուտեաց երդմանն, էառ ընդ ինքեան զՌոբէն զիշխանն Կիլիկեցւոց, և պնդաց առնուլ զՀերիմն. և ոչ մատնեաց զնա Տէր 'ի ձեռս նոցա, քանզի սուտեաց Բրինձն երդմանն։ Եւ դարձաւ 'ի Հալպայ հնազանդութիւնն ամիրայն որ անդ։

Ի թուին Հայոց վեց հարիւր երեսուն

գնաց Թագաւորն Երուսաղեմի 'ի Յորդանան, և նստաւ 'ի տեղւոջն՝ որ կոչի անց Յակովբայ. զոր ասեն հուն Յակովբայ Փղշտացիքն, և սկսաւ շինել անդ քաղաք առնուլ նուլաւ զԴամասկոս. և յաջողեցաւ զառաջինն գործն, և շինէին և գային բնակէին անդ քրիստոնեայք ։

Եւ լուաւ Սալահատինն, և երկեաւ վասըն Դամասկոսի, և ժողովեալ վերստին զօրս չոգաւ եկն եմուտ 'ի քաղաքն. և զի ամիրայն Բալբաքու, որ կոչի Արեգական քաղաք որ ասի Իլուպօլիս ապստամբ լեալ յանձին զօրութիւն, ոչ հնազանդէր Սալահատինին, չոգաւ 'ի վերայ նորա. և սիրով և խոստմամբ առ զնա և զօրացաւ. և վստահացեալ յանձըն, գնաց 'ի վերայ Նոր քաղաքին, զոր շինեալ էին Փռանկքն. և յարեան ընդդէմ նորա զօրքն փառաւորեալ Փռանկացն. և յաղթաճաշակքն հարին զնոսա և կոտորեցին որպէս յերէկն և յեռանդն. և փախեաւ Սալահատինն, և անկաւ 'ի Դամասկոս. և Փռանկքն առեալ աւար բազում և գերի 'ի նոցանէն և յերկրէն, դարձան 'ի քաղաքն զոր շինէին. և դարձեալ միւսանգամ ասպատակեցին 'ի Դամասկոս, և առին սակաւ ինչ կարասի և գերի և կամէին գնալ. և պնդեալ զինքն Սալահատինն , եւ զհետ նոցա . և կալաւ 'ի նոցանէ հարիւր Ֆրեր . եւ քաղցրացաւ. 'ի Ճաշակս (1) իւր զոր ետ նմա չարութիւնն մեր և մոռացութիւն պատուիրանին Աստուծոյ . և ժողովեալ զԱրաբն անապատին չոգաւ 'ի վերայ Նորաշէն քաղաքին . և ոչ եգիտ անդ զԹագաւորն Երուսաղեմի . այլ միայն հինգ հարիւր Ֆրերս , և պաշարեաց զքաղաքն և յաղթահարեաց զնա . և ընկեց հուր 'ի շինուածս նորա , և բորբոքեցաւ , և վառեցաւ բոլոր շինուածն նորակազմ : Եւ յորժամ տեսին Ֆրերքն թէ վանեցան , և տկարացան ոմանք 'ի նոցանէ , արկին զանձինս 'ի հուրն և կէսք 'ի գետն , զի մի անկցին 'ի ձեռս նոցա : Եւ զայլ բնակիչսն կոտորեցին , և գնացին 'ի Դամասկոս :

Ի վեց հարիւր երեսուն (2) թուին մեռաւ Մանուէլն թագաւորն Յունաց զկնի երեսուն և եւթն ամի արքայութեանն իւրոյ . և թագաւորեաց որդի նորա Ալէքս տղայ երկոտասանամեայ . և իշխանք երկոտասան կարգաւորէին զթագաւորութիւնն : Իսկ մայր նորա եղեւ հաւատաւոր , բայց ընդձեռամբ ունէր զտունս պանձուցն . և սըտեալ Աստուծոյ անկաւ ՚ի պոռնկութիւն, և ոչ պահեաց զհաւատ պարկեշտութեանն. և յորժամ յայտնեցան իրքն խորհեցան ըսպանանել զնա օրէնք Թագաւորութեանն և դնել զդուստր Մանիլին որ էր յայլմէ կնոջէ. և իմացաւ կինն և որդին իւր Ալէքսն. և հրամայեցին ըմբռնել զմետասան իշխանսն. և փախեան յեկեղեցին, և չոգան դահիճքն առնուլ զնոսա, և սպանանել. և կալաւ ամբոխ քաղաքին զդուռն եկեղեցւոյն լաւուրս եւթն, և ապա չոգաւ պատրիարգն և աղաչեաց զԹագաւորն և զմայրն. և առ ՚ի նոցանէ երդումն. և եհան զիշխանսն յեկեղեցւոյն, և տարաւ յարքունիսն։ Եւ ստեցին երդմանն. ատելքն Տեառն ոչ սպանին զնոսա բայց հանին զաչս նոցա վատթար քան զսպանութիւնն։

---

(1) Երկու օրի. 'ի Ճաշս իւր :

(2) Մի օրի. 'ի վեց հարիւր երեսուն և մէկ :

Իսկ տէրն Քեսնոյ և Հարսնքեփոյ որում անուն էր Նորըդլին փեսայ էր Սուլտանին. և ատեաց զկին իւր և արար իւր օգնական ըզՍալահատինն. զի կռուեցին ընդ աներին իւր. և լուաւ նմա Սալահատինն, և չոգան ՚ի վերայ Սուլտանին։ Բայց եկն ընդ առաջ նոցա Հասան ամիրայն. և իմաստուն բանիւք դարձոյց զնոսա. և խաղաղութիւն եղեւ ՚ի մէջ նոցա։

Եւ ամիրայն Ուռհայոյ և Խառանայ ապստամբեալ 'ի Մօսլայուն գնաց առ Սալահատինն ։

Բայց պատրիարքն Թէոդորոս(1) որ առեալ էր յերաշխի զիշխանսն, որոց խաւարեցան աչքն, ել 'ի քաղաքէն և գնաց. եւ թ՛ն ամիս պատարագ ոչ մատեաւ 'ի Կոստանդնուպալիս, և մեռեալ ոչ թաղեցաւ. զի անմտութեամբ անէծ զանպարտսն, և ոչ զթագաւորն և զպոռնիկ մայրն իւր զերդմնազանցսն։

Եւ Սալահատինն չոգաւ 'ի վերայ Ամթայ և առ զնա և ետ 'ի Նորըդինն. զի խոստացեալ էր նմա (2) ։

Եւ Սեփետինն դարձեալ զօրս ժողովեալ եկն 'ի վերայ Սալահատինին, և ոչ իշխեաց պատերազմել ընդ նմա ։

Ի թուին Հայոց վեց հարիւր երեսուն երեք մեռաւ Սեփետինն և Մելիք Սալեհն. և առ զիշխանութիւնն Եզատինն միւս եղբայր Սեփետինին (3) ։

---

(1) Երկու օրի. Թէոդոս ։

(2) Այս պարբերութիւն գտանի 'ի միում օրինակի և եթ ։

(3) Հնագոյն օրի. 'ի թուին Ասորւոց հազար չորս հարիւր իննսուն երեք, և վեց հարիւր քսան, մեռաւ Մելիք Սալեհն տէրն Հալպայ մեռաւ. և Սեփատինին տէրն Մօսլա. և առաւ Հալպ և Մօսլազգին Սեփատինին. և Ազատինըն ետ զՀալպ եղբօր իւրում և էառ 'ի նմանէ զՍնճարն ։

Ի թուին Հայոց վեց հարիւր երեսուն և չորս անօրէննն Անդրոնիկոս սպանողն պարոն Մանուէլայ, որ փախեաւ յԱքքայ և առ ընկեց[1] զհարազատն իւր, և շրջեցաւ չարութեամբ ՚ի տեղիս տեղիս, այժմ եկն և եմուտ խաբէութեամբ ՚ի Կոստանդնուպօլիս որպէս թէ ցաւակցաբար եկեալ է ՚ի խնամակալութիւն տղայ թագաւորին. և աւուրս ինչ ընտանեցեալ տան թագաւորին, ապա յայտնեաց զչարութիւնս իւր՝ խեղդեաց զԱլէքսն և զմայրն նորա ՚ի ծովին. և ինքն նստաւ յաթոռն և սպան հազար այր յիշխանաց տանըն Յունաց. և չորեքտասան հազար գիւղ եւ վանորայք աւերեաց յիշխանութենէն Յունաց. եւ առ զկին Ալէքսին իւր ՚ի կնութիւն չարածերն այն որդին Մելլարայ. և հալածեաց զՓռանգն. զորս եգիտ ՚ի քաղաքին և ՚ի գաւառսն. և կամեցաւ սպանանել զՓիսակ իշխանն որ էր յազգէ թագաւորութեանն. և առաքեաց կոչեաց զնա, և ոչ կամեցաւ գնալ. զի գիտէր զկամս նորա. և սպառնացաւ կոչնականին եթէ ոչ ածցէ զնա բռնութեամբ, փոխանակ նորա ինքն մեռցի.

Միւս այլ օրի. Մեռան Սէյֆատտին և Մելիք Սալեհն. և եառ զիշխանութիւնն միւս եղբայրն Սէյֆատտինն. Բէբրս Սէյֆատտինին:

[1] Մի օրի. առևանգեաց:

և յորժամ չոգաւ նուիրակն ածել զնա, 'ի հարկէ եհան Փխիկն զսուրն և եհար զնա. և ինքն գնայր յեկեղեցին, և սուրն արիւնոտ 'ի ձեռին իւրում. և ասէ լուարուք ազգք և հասակք ամենայն, զի Անդրոնիկոս ջնջել կամի զբոլոր ազգս Յունաց. և շարժեցաւ քաղաքն ամենայն. և հաւաքեցան յեկեղեցին. զի ո՞վ էր որ ոչ էր սրտառեալ 'ի պղծոյ անտի. և ասացին իշխանք Թագաւորութեանն որ մնացեալ էին ցպատրիարգն. օծ վաղվաղակի զՓխիկդ Թագաւոր 'ի վերայ մեր, և արար այնպէս. և լուաւ Անդրոնիկոս և մտեալ 'ի նաւ փախեաւ. և ելին զհետ նորա և հասին նմա, և դարձուցին. և 'ի բերելն կորատէին զնա պատառս պատառս և ընկենուին 'ի ծովն (1). և զմնացեալն բերեալ 'ի քաղաքն այրեցին զնա հրով։

Իսկ Սալահատինն տիրեցեալ Միջագետաց չոգաւ ամենայն ամիրայօքն, և նստաւ 'ի վերայ Բարսքոյ և Ճաւպաքոյ. և եկեալ Փռանգացն մարտեան ընդ նոսա և յաղթեցին օգնութեամբն Աստուծոյ և հալածեցին 'ի բաց. և ամրացուցին զքաղաքսն և զբերդսն ծովեզերեայս։

Բայց եղեւ պատահար ինչ 'ի վերայ Թագաւառին Երուսաղեմի, և անկաւ յախտ գոդութեան և բժիշկք ոչ կարացին օգնել նըմա. և կացոյց զքոյր որդին իւր Թագաւոր, որ էր անուամբն իւրոլ, յայժ տղայ:

---

(1) Մի օրի. տային 'ի ծովն.

Իսկ Սալահատինն չոգաւ էառ զՄծբին. և գնաց ՚ի վերայ Մօսլայ. և ոչ կարաց առնուլ. բայց յաւաւել նեղութենէ պաշարմանըն խոստացան նմա հնազանդութիւն, տալ զօրս նմա ՚ի ծառայութիւն. և առեալ ՚ի նոցանէ երդումն գնաց ՚ի Մուփարղինն և առ զնա դարձաւ ՚ի Դամասկոս: Եւ ՚ի նոյն ամի մեռան· Նորըտինն, և Խուդբդինն տեարքն Ամթայ և Մերտնայ. որք էին ազգականք միմեանց յԱրթուխեաց անուէ, աւերիչք եկեղեցւոյ և ատեցողք քրիստոնէից, և թշնամիք ճշմարտութեան: Եւ յետ նոցա էառ զՄերտինն Հուսամադինն որդի Խուդբդնին. և Իւմրդինն տէրն Բալուայ էառ զԽարբերդ. և ՚ի նոյն ամի մեռաւ Ամիր Սիրանն տէրն Խլաթայ Շահի արմէնն: Եւ առ զտեղի նորա Բակդեմուր ծառայն իւր: Եւ ՚ի սոյն ժամանակս Բրինծն Անտաքայ արար գործ սիրոյ ընդ Սալահատինն և որսացաւ զՌոբէն տէր Կիլիկիոյ կալաւ զնա. և եդ ՚ի բանտի, և եմուտ յերկիրն նորա. և յամեաց անդ զեղանակս ամիան, և ոչ կարաց վնասել երկրին զի Լեւոն եղբայրն Ռուբենայ իմաստնապէս կռուէր ընդդէմ նորա և խնամարկէր աշխարհին 'ի շնութիւն և 'ի դիւրութիւն. և ել ամօթով յերկրէն Բրինձն։

Բայց վասն սիրոյ եղբօրն Լեւոն ետ զԲոանա և զԹիլն և եհան զՌոբէն 'ի բանտէն. որ և յետ այնորիկ առին զիւրեանցն որպէս և էրն։

Ի վեց հարիւր երեսուն և վեց Թուին պատերազմեցան ընդ միմեանց Մադայիքն որք են Մարք․ և Թուրքն որք են Թուրգոմեանք, և յերկարեաց մարտն զամս ութ․ և այս էր պատճառն։ Ազգք Թուրքաց որ բացօթեայ շրջին խորանօք շատացեալք ընդդէմ խորշակի և ցրտոյ, զձմեռնային եղանակըն երթային 'ի կողմն հարաւոյ սակս կակղութեան օդոյն և ցամաքութեան երկրին․ և զամառնայինն երթային առ հիւսիսիւ յաղագս առատութեան ջրոյ և զովութեան խորշակ օդոյն․ և յերթեւեկութիւնս յայս կցորդ լինէին Մարքդ որք անկեալ յարքայութենէն իւրեանց պանդխտանան ուր և դիպի․ և զաղքատութիւն իւրեանց դարմանեն ծածկապէս շորթելով զայլոցն։ Առ որում առաւել քան զայլոց, մեղանչէին Թուրքաց, գողութեամբ շորթելով զանասունս նոցա։

Եւ յասացեալ թուիս գտան երկերիւր Քուրդ. դարձեալ յերկիրն Շպղթանայ յանցս Թուրքին սպասելով 'ի գողանալ զնուցայսն. և կալեալ զնոսա սպանին. և վասն այսորիկ ժողովեցաւ Քուրդն տասն հազար, և Թուրքքն կրկին քան զնոսա, և կռուեցան 'ի Շպղթան, և վանեցաւ Քուրդն և խապառ կոտորեցան 'ի Թուրքէն։

Եւ լուան զայս ազգն Մարաց որ բնակեալ էին 'ի լերինս Ջզերոյ, և յերկիրն Տիւրեւանդայ. և ձայն տուեալ միմեանց ժողովեցան երեսուն հազարք եկին 'ի Միծբին և գրգռեցին զԹուրքն. և նոցա նոյնպէս հաւաքեալ բազմաձեռնութեամբ գնացեալ ընդդէմ նոցա կռուեցան 'ի մէջ Տարայոյ (1) և 'ի մէջ Միծբնայ (2) և զօրացաւ Թուրքն և պարտեցաւ Քուրդն իբրեւ զառաջինն. և խապառ կորեան քանզի սատակեցին զերեսուն հազար արան։ Եւ փութացան 'ի բանակետղս նոցա և: 'ի բնակութիւնս. և առին զկանայս և զտղայս և զկարասիս նոցա, և դարձան 'ի հանգրուանս իւրեանց. Եւ հատաւ ազգն Քրդաց 'ի մեծէ մինչեւ 'ի փոքունս յերկրէն Միջագետաց. մինչեւ անցին ամք ոչ սակաւք և մնացօնքն եղեն իրացն. քանզի մնացեալքն 'ի նոցանէ յոյժ սակաւք գնացին մօտն յերկիրն Կիւլիկեցւոց խնդրելով 'ի նոցանէ օգնութիւն։ Բայց զկնի պատերազմին անցելոյ գտին 'ի տունս քրիստոնէից թաքուցեալ 'ի Քրդացն վասն խղճալոյ նոցա. զայրացան Թուրքքն 'ի վերայ հաւատացելոցն և առին զՀրապ Թիլն և ըզԹլպմնէ(1), և սկսան կոտորել և վաճառել ըզքրիստոնեայսն, և աղաղակեցին առ աւագսն և շարժեցան 'ի բարկութիւն ընդդէմ շրջակայ Թուրքմանին, և առին տուգանս և իւրաքանչիւր ոք յամիրայից այնուհետեւ խնամարկէին ընդ ձեռամբ անկեալ քրիստոնեայս։

---

(1) Մի օրի. 'ի միջատարայոյ. (2) Երկու օրի. Բծբին.

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս Սալահատինի և մեծին Լեւոնի։

Ի վեց հարիւր երեսուն և ութ թուին Հայոց զօրացաւ Սալահատինն 'ի յաճախութենէ մեղաց մերոց և ժողովեաց զամենայն հնազանդեալսն իւր, զԵգիպտացիս և զներքին Իլբէացիս, և զՊոտյիա զԱթուրացիս և

(1) Երկու օրի. Թլմնէ.

զՄիջագետս, և եղեւ բանակ մեծ և ահագին. և առատ պատրաստութիւն զինուց և մեքենայից որոյ ոչ էր թիւ. և խաղաց գնաց ամենայն բազմութեամբ Լեգէօնին իւրոյ 'ի վերայ Թագաւորին Երուսաղեմի, առնուլ զքէն վրիժուց կորանաց իւրոց զորս կրեաց 'ի նոցանէ յառաջինն յելմանէն իւրում յԵգիպտոսէ երեսուն երկու հազար սպառազինօքն՝ զօրս կորոյս և տկարացաւ. Եւ գանձեաց 'ի սրտի իւրում զթոյնս տրտմութեան մինչև եկեալ օր թափելոյ զնոսա: Եւ զօրն որում ցանկայր նա, եկն եբեր ընպանօղն մեր հին չարութիւնն զոր սերմանեաց որոմնացան մշակն:

Արդ՝ գնաց երկրորդն Յերոբովամ (1) սատանն Սողոմոնին մերոյ Սալահատինն և եհար զբանակն իւր մօտ 'ի Տաբարիա (2). և գնաց Թագաւորն Երուսաղեմի 'ի վերայ նորա. և յիշատակեցան մեղքն քրիստոնէից առաջի Տեառն. և քննեցան 'ի քանոնս արդար իրաւանցն Աստուծոյ և կշռեցաւ 'ի կշիռս (3), և գտաւ պակասեալ. քանզի կոմսն (4) Տրապօլեաց եղեալ յառաջագոյն բանս ընդ ա-

---

(1) Երկու օրին. Յորոբովամ. կշիռս:
(2) Տիբերիա: (4) Մի օրին. Տարաբուլուզ
(3) Մի օրին. կշռեցան 'ի կամին:

Նորէնան․ և ծարաւեցոյց զզօրսն և տկարացոյց, և մատնեաց Թշնամեացն․ և ինքն գնաց անցաւ ՚ի կողմ օտարացն․ և զօրացան աւելիքն ՚ի վերայ անդամոցն Պրիսոսի․ և արկին զնոսա ՚ի սուրս իւրեանց անողորմն։

Ո՜հ ահագին ժամուն և նմանացեալ պահուն և կորստեան աւուրն մերում, յորում հօտն դրօշմաւոր և գառինքն երկնաւոր՝ գազանաց մատնեցան ընդ երեսս դիակոյտ դաշտին․ քանզի ծարաւեալ երիւարքն խնդրէին ջուր դիմելով ՚ի ծովն․ և Թուլացուցանէին զգազուկս արիական քաջացն․ և դայլքն գիշակերք ծարաւեալք արեան պարարտ զըւարակացն խնդրէին զնոսա եռանդնոտ՝ և արեալ ժանիքն ՚ի համառօտ ժամու զպատեղապեղ բանակն ցուցանէին իբրեւ զկոյտս դերբուկ քարանց, և զդրախտն աստուածատունկ իբրեւ զմայրիս կոտորեալս ՚ի փայտահարաց․ և արդարեւ սաստկացաւ կոծ յԻրուսաղէմ, այսինքն յամենայն եկեղեցիս իբրեւ զկոծ Նանենեաց կոտորելոց ՚ի դաշտի (1)։ Զի կալան զԹագաւորն մասսաղ, և զխառեալ գունդ Փրերացն գոմելեայ․ և սպան ՚ի նոյանէ կատաղին Զամբրի անձինս երեք հարիւր և զԲրինծն Անտաքայ, և լուացաւ արեանք նոցա և ետ փառս Մահմետի և աղօթեաց. և առ զՏապարիայ և կոտորեաց զնոսա: Եւ չոգաւ 'ի Մեքքայ և առ զնա. եւս և իշխանքն որ կային անդ. փախեան նաւու 'ի Սուր: Իսկ Կեսարիա և Նազարեթ և Ղաւին թողին զտեղիս իւրեանց և փախեան. և դիւրաւ տիրեաց 'ի վերայ նոցա որպէս և կամէրն: Եւ ո՞չ է կարող ողբալ զնախատինսն զանհնարութիւնն զոր առնէր նա մեզ. Ըզպէսպէս կատականսն և զթուքսն. և զմնացորդս կրիցն Քրիստոսի, քանզի ոչ գրեմք մի ըստ միոջէ (1) զորպիսութիւն անցիցն, զոր ինչ գործեցին և զոր ինչ խօսեցան. զորս բերին յինքեանս յոլով մատեանք ըստ լեզուաց ազգաց՝ այլ մեզ թեւաբեկութիւն է ցանկալի. և մանաւանդ անողջանալի աղետիցն մերոց հանդուրժամք որոշեալ զալեացն դառա ըստ ազգաց (2) տարուաց և իգաց հասակաց և արժանաւորութեանց: Վասն զի յետ այսուրիկ գնաց 'ի Մսրայն, և զի մի աշխատ լիցի վասն ամէնութեան ատեղեցն, և սակաւ մի հանգիցէ 'ի սպանութենէ հօտից հաւատացելոց, խօսեցաւ կակղութեամբ, և երդուաւ թողուլ զթագաւորն նոցա ազատ.

---

(1) Մի օրի․ իբրեւ զկոծ Նանենեաց հարեալ ՚ի հարկան։

---

(1) Այլ օրինակք ունին, ոչ գրեմք ըստ մասանցն:

(2) Եւս օր. որոշեալ զդառնացն ըստ ազգաց:

ուր և կամեսցի երթալ հանդերձ նոքօք. և ետուն զքաղաքն ՚ի ձեռս նորա. և առեալ զԹագաւորն Երուսաղեմի գնացին ՚ի Տիւրոս որ է Սուր անառիկ քաղաք եթէ տէր պահեսցէ. և թէ ոչ՝ ՚ի նանիր տքնին շինողքն և ընդունայն զգուշանան պահապանքն:

Եւ Սալահատինն մխեալ յաղթութեամբըն իբրեւ զպղոզովատ եւ խնդութեամբ ՚ի սուրբն Երուսաղէմ, և աւուրս ինչ պաշարեաց զնա՝. և զի ոչ գոյր նոցա ուստեք ակնկալութիւն, կամեցան տալ զքաղաքն և մատնել զանձինս անյագ սրոյն հեթանոսաց:

Բայց նա անդանօր եցոյց զանձն մեծախորհուրդ, և կտրեաց նոցա գլխս տասն դահեկանս ըստ գլխոյ տալ և գնալ ՚ի խաղաղութիւն, և արարին այնպէս. և ելանէին կականելով յարտասուս իբրեւ զգառինս ՚ի մօրէ զատչէին բառաչելով յաստուածընկալ քաղաքէն՝ շարժելով յարտասուս զվիմեղէն սրտից անգամ. որ մնացին ՚ի տեղւին էին քան հազար արք և կանայք. և ազատեաց ՚ի նոցանէ չորս հազար (1) անձինս ծերս և պառաւունս. և եւթն հազար տղայս արու և էգ բաշխեաց զօրաց իւրոց. և հինգ հազար երիտասարդս առաքեաց Եգիպտոս յաղիւսագործութիւն 'ի շինութիւն պարըսպաց և ապարանից. ազատածին որդիքն Միոչնի դարձան 'ի գործս հնոյն Իսրայելի 'ի մերոյն Փարաւոնէ. զոր եւ մեզ չարչարիչ անմարմինն Փարաւոն. և հինգ հազարս եթող անդէն յԵրուսաղէմ շինել զպարիսպն յամրութիւն, իւրում անձինն սեպհականեալ զնա: Իսկ զտաճարն լուացին արեամբ քրիստոնէիցն զոր անդէն սպանին. և դարձեալ լուացին ջրով, և ապա վարդի ջրով. և աղօթեցին 'ի նմա և ստացան ինքեանց. և եւ Սալահատինն գիր սահմանի, զի մի մըտցէ 'ի նա քրիստոնեայ. և որ մտանէ, մահու պարտական լինիցի կամ հաւատոյն. և զտաճար սուրբ Յարութեանն արար ընդ հարկաւ զի որք գան 'ի նմա աղօթականք, տացեն դահեկան մի կարմիր ըստ գլխոյ մարդոյ:

---

(1) Մի օրի. երեք հազար.

Եւ յետ այնորիկ գնաց Սալահատինն 'ի վերայ Տիւրոսի ամենայն պատրաստութեամբ. և քանզի եկեալ էր անդ կոմս մի՝ և մտեալ 'ի քաղաքն նախ քան զպաշարելն զնա, այր քաջ և հանճարաշատ, 'ի ձեռն նորա ապրեցոյց տէր զՍուր 'ի պաշարմանէն, և ոչ ինչ կարաց նմա մեղանչել: Եւ ել անտի Սալահատինն և գնաց 'ի Ակդան, և առ զնա դիւրաւ: Եւ գնաց անտի և մարտեաւ ընդ

Պերութ, և ընդ Ճեպելն և ընդ Տվինին (1). և զկնի սակաւուց մատնեցան 'ի ձեռս նորա. և տիրեաց 'ի վերայ նոցա ։

Իսկ 'ի Թուին վեց հարիւր քառասուն՝ գնաց Սալահատինն 'ի Քարաք և 'ի Շոպաք. և նստաւ 'ի վերայ նոցա. և շատ աշխատեալ զզօրս իւր յաղթահարեաց զնոսա, և առեալ կոտորեաց զնոսա և գերեաց և յաւարի եհար. և գտաւ 'ի Քարաք (2) այր մի լցեալ արծաթով որ հալ մի էր պակաս առ 'ի զտել և սրբել զնա ամենեւին. և ոչ կարացին առնուլ 'ի պէտս. և ոչ գտաւ արուեստաւոր որ կարէր իմանալ ինչ 'ի նմա. և թողին զնա նոյնպէս և գնացին ։

Զկնի այնորիկ գնաց Սալահատինն յերկիրն Սեհունին և պաշարեաց զԼատիկն, և առ զնա. և մարտուցեալ ընդ Ճեպելէ քակեաց զնա. և թողեալ զնոսա չոգաւ 'ի Պալըաս և հնազանդեաց զնա. և 'ի վեր մատուցեալ կռուեցաւ ընդ պարսպակն (3), և փլոյց զնա ։

Եւ դարձաւ 'ի Դամասկոս. և զոհեաց Սուռկանին իւրոյ. և արար խնդութիւն տանըն Սոլիմանայ, և խնդացոյց զզօրս իւր պարգեւօք և առատ ռոճկօք . և արար սուգ սիրելեացն Քրիստոսի ։

---

(1) Մի օրի. Տփնին ։

(2) Մի օրի. և գտաւ 'ի քարայք մի լցեալ ։

(3) Մի օրի. դարպասակն ։

Մի օրի. Պարսկակն ։

Յաւուրսն յայնոսիկ Հասան զօրագլուխըն Կլիճ սուլտանայ դառնացոյց զնա ընդդէմ որդւոյն իւրում, և ատեր զնա . իսկ նորա զբազումս յանգուցեալ յինքն՝ արար մեծ հանդէս զօրաց պատերազմել ընդ հօրն . հաւաքեցաւ (1) և հայրն նոյնպէս ընդդէմ որդւոյն ։ Իսկ նախ քան զդիպելն նոցա Բահրամ շահն տէրն Երզնկային, որ էր փեսայ նոցա անկեալ ՚ի մէջ նոցա՝ նուաճեաց ՚ի խաղաղութիւն սիրոյ . և հաշտեցան ։ Քանզի ամաչէին ՚ի ծերութենէ Սուլտանին զօրքն որ ընդ որդւոյն միաբանեալ էին, և առ ժամայն խաղաղութիւն խօսեցաւ ընդ ամենեսեան Սուլտանն ։ Բայց զկնի այնորիկ սպան ապստամբացն չորս հազար անձինս . և զՀասան զօրագլուխն սպանին հրամանաւ որդւոյն . և մի յորդւոցն Սուլտանին որում անուն էր Մզըդին Կայսար շահ (2) էառ զՄելտենի ՚ի ժառանգութիւն իւր ։

Ի վեց հարիւր քառասուն և. մի թուին Հայոց շարժեցաւ տունն Փռանգաց խառնիճաղանճ բազմութիւն առանց թագաւորի . սակայն բորբոքեալ սրտիւ յաղէտս քրրիստոնէից և 'ի սէրն Երուսաղեմի յօժարութեամբ դիմեալք եկին ընդ ծով. և ելին միայն (1) Աքայոյ 'ի դուրս. և զԱքքայ ամրացուցեալ էր Սալահատինն և կացուցեալ 'ի նմա հարիւր հազար այր պատերազմող, և մարտնչէին ընդ միմեանս. և Սալահատինն ոչ վստահանայր օգնել քաղաքին. և հանդարտեցին Փռանգքն և շինեցին տունս բազումս, և եկեղեցիս և ջրաղացս (2) որպէս ասեն չորս հազար շինեցին. և եղեւ 'ի յամենլնոցա անդ, եւ թագաւորն Ալամանաց (3) և գնաց 'ի Կոստանդնուպօլիս. և ժամանակ մի կռուեցաւ ընդ նոսա. և զի յերկարէր գործն արար ընդ նոսա սէր և անց յայս կոյս (4) ծովուն. և որպէս է նենգութիւն Յունաց առաջնորդեցին նոցա ընդ անջուր և ընդ առապարս քարաժայռաց և անկոխս. և պակասէր 'ի նոցանէ օր ըստ օրէ: Այլ և Թուրքմանն վնասէր նոցա յայտնի և 'ի ծածուկ: Բայց հասեալք յԻկոնիոն քաղաք զբազումս կոտորեցին 'ի Թուրքացն. և իմացեալ Սուլտանին արար ընդունելութիւն նոցա և ետ ճանապարհ եւ առաջնորդս , եւ բերին զնոսա 'ի Սելեւկիայ . եւ մինչ հանգչէին նոքա անդ . եւ Թագաւորն կամեցաւ լոգանալ 'ի գետն , յանկարծակի յազդմանէ չարին 'ի նոցն մնացորդաց մեղացն մերոց ընկղմեցաւ եւ հեղձաւ (1) 'ի ջուրն . եւ կորեաւ անդէն : Եւ գըտեալ զմարմինն եւ տարեալ յԱնտաք Թաղեցին անդէն ըստ արժանւոյն ողբալով զնա (2) : Իսկ զօրքն առանց գլխոյ մնացեալ տարակուսեցան անդէն :

---

(1) Մի օրի . հաւաքեցան ։ (2) Մի օրի . Կաւհար շահ ։

---

(1) Երեք օրի. 'ի միւայն: յուայանէն:

(2) Երկու օրի. ջրաղացս և ջրաղացս. այսինքն աղօրի ջրոյ ջրիւ և հողմոյ շինուածոյ գործ.

(3) Երեք օրի. Ալամանց:

(4) Չորք օրի. յայնկոյս:

Եւ Լեւոն իշխանն Կիւլիկիոյ եղբայրն Ռուբինեայ որդին Ստեփանեայ արար բազում մարդասիրութիւն բաժանելով զզօրսն յերկիրն . եւ զաւելի մասն առեալ 'ի տուն իւր կերակրեաց եւ խնամեաց զնոսա զձմեռնային եղանակն , մինչեւ եկին նոցա առաջնորդք երկու . եւ գնացին յԱքքայ , եւ առին զքաղաքըն եւ կոտորեցին զԹուրքն որ անդ . այլով մասն պահեցին կենդանի զի գնեսցեն նոքօք զգերեալսն որ 'ի Դամասկոս յազգէն Փռանգաց . Եւ յորժամ ոչ կամեցան փոխել զնոսա . կոտորեցին 'ի նոցանէ քսան եւ հինգ հազար անձինս 'ի վերայ միմեանց . եւ կանգնեալ 'ի վերայ դիականցն արարին աղօթս 'ի փառս անուանն Քրիստոսի. որպէս արար Սալահատինն 'ի վերայ քրիստոնէիցն. և չինեցին վերստին զԱքքայ և բնակեցան 'ի նմա: և զորդի քեռ Անկլիթեռ (1) թագաւորին եղին կոմս Աքքայոյ. և քանզի եհաս համբաւ ինչ տրտմագին յերկրէն իւրեանց, արարին խաղաղութիւն ընդ Սալահատինն. և գնացին յաշխարհն իւրեանց:

---

(1) Զորք օրի . հերձաւ :

(2) Այս ինչ եւ խօսք . մանաւանդ զանձինս , որ չեմ արժան լեալ . որ Բէրէա ասէ խոմեցի Բն ինքն Միխայէլ Տէր Ներսէս Լամբրոնացին . եւ զնոյն ողբայ :

Իսկ 'ի թուին վեց հարիւր քառասուն երկու՝ մեռաւ Կլիճ ասլանն 'ի Կոնն, և անդէն թաղեցաւ թագաւորեալ ամս երեսուն և ութ. և մնաց թագաւորութիւն նորա երկոտասան որդւոց նորա:

Եւ զկնի ամի միոյ մեռաւ Սալահատինն 'ի Դամասկոս, և եթող քան երեք որդիս. զաւագն կացոյց 'ի Դամասկոս, և զերկրորդն 'ի Միսր, զերրորդն 'ի Հալապ, և կարգեաց զնոսա Սուլտանս. և այլոցն տուեալ տուրս կացոյց ընդ ձեռամբ նոցա: Եւ եղբայր մի էր նոցա Յետլ անուն. կոչեաց զնա Մելիք. և ետ նմա զՈւռհայ զԽառան, զՄերտին, զՄուփարղինն, զՍամուսատ, զԿլճապար, զՔարաք և զՇովաք, որ և յետոյ առ զՄծբինն և զԽաղայ:

---

(1) Երեք օրի. Եւ զորդի քեռանկլի թագաւորին:

Եւ տէրն Մօսլայ արար միաբանութիւն ընդ եղբարս իւր ընդ տէրն Ճզիրայ եւ ընդ տէրն Սնճարայ. եւ եկն նոքօք առնուլ զԽառան, եւ կալաւ զնա ցաւ (1) 'ի ճանապարհին եւ դարձաւ անդրէն 'ի Մօսլ. եւ գնացին եղբարքն 'ի տեղիս իւրեանց : Յորժամ գնացին նոքա մեռաւ Ազըդինն. եւ առ զտեղի նորա Նորըտինն որդի իւր :

Եւ 'ի նոյն ամի մեծն Լեւոն իշխանն Հայոց կալաւ զԲրինձն Անտաքայ, եւ արկ զնա 'ի չարչարանս, փոխարինեալ նմա զյանցանս նորա՝ զոր արար Ռոբենայ եղբօր իւրում. եւ եկեալ կոմսն Անտաքոյ թափեաց զնա աղաչանօք 'ի ձեռաց նորա, զի այր խաղաղարար էր նա եւ բարեսէր, որում անուն էր Հեռի : Իսկ արփագոյնն Լեւոն տիրեաց եւթանասուն եւ երկու բերդից. եւ ել անուն նորա ընդ ամենայն երկիր. եւ փութացան պսակել զնա տունն Յունաց եւ տունն Փռանգաց. ըստ որում առաքեցին նմա թագ յերկոքանչիւր կողմանց, 'ի պարծանս իւրեանց առնելով զնա. եւ էր այնուհետեւ թագաւոր ծոխ եւ անուանի եւ ահարկու 'ի վերայ օտար ազգացն որ շուրջ էին զնովաւ. եւ դողային 'ի նմանէ. վասն որոյ ապաւինեցան

---

(1) Երկք օրի. չունին զցաւն :

՚ի նա որդիքն Խլիճ ասլանայ. քանզի տկարացան ՚ի բաժանել իշխանութեան իւրեանց ՚ի բազում մասունս. քանզի ոմն Թագաւորեաց ՚ի Կոնին որ կրտսերն էր, և ոմն յՄալաթիայն, և ոմն ՚ի Նէոկեսարն. և այլք զայլ մասունս աշխարհին առին, և էր հակառակութիւն ՚ի մէջ նոցա. մանաւանդ յառաջաւ ՚ի նա Մելիքն որ ունէր զվերջին աշխարհն (1), և նստէր յՄալաթիայն. և նա ել ՚ի դուրս և յաւել ՚ի բաժինն նորա բերդս և գաւառս։

Իսկ Թագաւորն Մսրայ Մելիք Ազիզն եկն ՚ի վերայ եղբօր իւրոյ ՚ի Դամասկոս։ Եւ լուեալ զայն Մելիք Ադէլն հօրեղբայրն նոցա գնաց առ նոսա առնել խաղաղութիւն ՚ի մէջ եղբարցն, և արար նեղութիւն մեծ. քանզի արբոյց դեղ մահու Թագաւորին Մսրայ. որ և ընդ հասանելն ՚ի Մսր մեռաւ, և առ յինքն զԵգիպտոս և տիրեաց նմա։ Այնպէս խաբեաց և զՄելիք Սալեհն. և ասաց գնա յերկիրն իմ ՚ի Սամուսատ և կաց ՚ի խաղաղութեան և ՚ի հանդարտութեան, և քեզ լիցի Ուռհայ և Խառան և Մաղայ. և ես նստեալ ՚ի Դամասկոս կացից ընդդէմ փռանգին, և ամենայն թշնամեաց մերոց. և հաւանեցաւ եւ կամեցաւ առնուլ զգանձս հօր իւրոյ եւ գնալ. եւ ասէ ցնա միթէ ո՞չ վստահանաս յիս, քանզի եւ իմն ում է, եթէ ոչ քո. արի եւ գնա եւ ես բառնամ զամենայն եւ առաքեմ զկնի քո. եւ հաւատաց նմա. եւ յարեաւ գնաց եւ զառաջինն չոգաւ նա յՌաղայ, որ մանաւանդ պատրեաց(1) զնա ։ Բայց նոցա գիտելով զկամս Յետոլին՝ ոչ ընկալան զնա 'ի ներքս, եւ ոչ պատուեցին զնա. դարձաւ անտի եւ եկն յՈւռհայ. եւ ոչ նոքա ընկալան զայլն պարզամիտ. զի եւ ոչ 'ի նոցանէն էր ծածկեալ խաբամանկութիւն հօրեղբօր նորա. դարձաւ յայնմանէ զայրացմամբ եւ չոգաւ 'ի Սամուսատ, եւ զայն ետուն 'ի ձեռս նորա. եւ նստաւ անդ. այլոցն եւս ակն ունելով յետ այնորիկ։

---

(1) Մի օրի. զվերին աշխարհն.

Իսկ Մելիք Յետոլն չոքեալ եւ տեսեալ զտունս գանձուց Սալահատնին, եւ զարմացեալ ընդ յառաւելութիւնն եւ ընդ պատուականութիւնն զոր ոչն կարծէր ագահեաց 'ի յինչսն, եւ ոչ կամեցաւ տալ 'ի նմանէ եղբօրորդւոյն իւրոյ. այլ եւ արար զնա ծաղր. քանզի եգիտ նա տուն լցեալ մատուտակով զոր կոչեն ըստ աշխարհաց Մարուխս կուտեալ 'ի պէտս ինչ, զայն եբարձ քսան բեռն եւ կնքեաց մատանեաւ, եւ առաքեաց առ նա ։ Իսկ նորա տեսեալ զնախատինս իւր, ապաշաւէր այնուհետեւ զանմտութիւն իւր. քանզի չէր ձեռնհաս օգնել խելաց իւրոց և կամ փոխարինել նենգչին, որ ընկէց զնա 'ի բարձրութենէ 'ի խոնարհ. վասն որոյ ոչ ետ նմա պատասխանի, այլ եթող կարող դատողին (1) Աստուծոյ և վերջին օգնականին ։

---

(1) Երկք օրի. պատրաստեաց։

Իսկ պսակաւորն Հայոց Լեւոն բարուք կարգաւորեալ զաշխարհն իւր լայն իմաստութեամբ և կարող ձեռօք ընդդիմանայր արտաքին թշնամեացն. եւ խաղաղացաւ 'ի կեանս իւր շինելով բազում վանորայս և զառաջագոյն շինեալսն ընդարձակելով առատապէս տալով զպէտս նոցա. այլ և արձանագրով սեպհականէր նոցա գիւղս և ագարակս այգիս և անդաստանս, և գրեթէ ետ նոցա զպարարտութիւն երկրին իւրոյ, և առատացոյց զռոճիկս նոցա պատրաստագոյնս 'ի ծովէ և 'ի ցամաքէ. և ոչ միայն զհամազգի վանորայսն այնպէս փարթամացուցանէր, այլ և զայլալեզու քրիստոնէից, զԱսորոց և զՓռանգաց, այլ և զՅունացն և զՎրաց ոչ պահելով նոցա ոխս զոր արարին նոքա ընդ նմա և ընդ ազգն նորա արենոյս. այլ և ընդ ամենայն ուղղադաւանս առ հեռաւորս և առ մերձաւորս ։

---

(1) Մի օրի. դատաստանին ։

Իսկ նա բարեգութ լեալ առ ամենեսեան բարի առնէր եկեղեցականաց և աշխարհականաց. և էին եկեղեցիք նոցա պայծառք և անկարօտք յանապատս և 'ի քաղաքս սահմանեալ մոլիւք որ են մինչեւ ցայսօր ժամանակի. և այսպէս բազում դրուատիւք կեցեալ առ ամենայն ազգս, հանգեաւ 'ի Քրիստոս. Թողլով դուստր մի ժառանգ թագաւորութեան իւրոյ. զոր տուեալ յամուսնութիւն որդւոյ Պրինծին Անտիոքայ, որում անուն էր Փիլիպ, և եդին զնա թագաւոր գրաւեալ զնա երդմամբ զի պահեսցէ զդաւանութիւն և զօրէնս Հայոց. որ և կեցեալ ամս երկու խաբեալ լինէր 'ի հօրէն իւրմէ, և ընդ ակամբ հայէր յաւագ իշխանսն Հայոց, և խորհէր բառնալ զնոսա. զոր իմացեալ նոցա ըմբռնեցին և եդին յարգելանս ժամանակս ինչ, և անդէն վճարէր 'ի կենաց ։

Եւ ընտրեցին զորդի Կոստանդեայ իառաւոր իշխանին Կիւլիկեցւոց, որ էր յազգականութենէ անտի Լեւոնի արքայի, որում անուն ճանաչիւր Հեթում. և պսակեցին ընդ նմա զաղջիկն Պայազատ արքայութեանն Զապէլ կոչեցեալ ըստ փառգաց բառին. որ է ըստ Հայոց Եղիսաբէթ, պարկեշտ կենօք. և երկիւղած 'ի Տեառնէ, հաճոյ Աստուծոյ, և գովելի 'ի մարդկանէ, բարեսէր կամօք, և զգոյշ քաղաքավարութեամբ. զոր զուգեալ ընդ Հեթմոյ ետուն ցնա զթագաւորութիւնն տղայ տիովք բայց զարդարեալ ծերունական հանճարով հանդարտ արդասիւք և լայն խորհրդով. զոր յարդեան ժամանակիս ունի զթագաւորութիւն հայկական զարմից յաւելլով օր ըստ օրէ յիմաստս և 'ի վարս հաճոյս նովին Թագուհեաւն՝ զուարճացեալ և ծաղկեալ որդւովք. և լիցի հայցուած 'ի մէնջ և աղաչանք 'ի սրբոց Տեառն բարերարի և ամենակալի և մարդասիրի յերկարել և յաւելուլ 'ի ժամանակս նոցա, և 'ի պատիւ փառաց իշխանութեան նոցա ընդարձակեալ և տարածեալ ընդ բնաւ Հայաստանեայս յորդիս յորդւոց մինչեւ 'ի գալուստն ինքնաբուն և ամենակալ Թագաւորին անմահի Տեառն և Աստուծոյ մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ է օրհնեալ ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյն։

(1)Իսկ պարոն Լեւոն որդին Ստեփանեայ.

---

(1) Այս պարբերութիւնս որ զԼեւոնէ և զյաջորդութենէ նորա պատմէր գտանի յայլում օրինակի, և 'ի հնագունին, ոչ. գիտեմք զպատճառ յաւելլուլ։

որ ըստ օրէ երթայր և զօրանայր Աստուծով յաջողեալ, և յամենեցունց փառաւորեալ. և յայնժամ յորժամ տկարացոյց Աստուած շուրջանակի զթշնամիս նորա, և 'ի կոր կործանեաց զամենայն հակառակորդս նորա. և տիրեաց նա լիով երկուց Կիլիկեաց, լեռամբք և դաշտօք, քաղաքօք և ամրական դղեկօք, էառ քաջութեամբ իւրով և զհասարակն Մորսուոց. և մասունս ոչ սակաւս Երկրորդ Կապադովկացւոց. յԵրրորդ Հայոց զոր ոմանք Առաջին անուանեն Հայք: Գրաւեաց ընդ իւրով իշխանութեամբ և յԱսորեստանեայց գաւառաց. և ցուցաւ ինքնագլուխ և ձոխ իշխանութեամբ. զի ոչ ոք տիրէր 'ի վերայ նորա: Եւ համբաւ արիութեան նորա թուլացուցանէր զջիլս անօրինաց. և պարզէր զերեսս քրիստոնէից և լնոյր խնդութեամբ և ուրախութեամբ:

Վասն որոյ փութային պատուել զնա թագիւ. թագաւորն Յունաց վասն պատճառին, զի թերևս հնար լիցի նովաւ յաղթել Թուրքացն, որ բռնացեալ կալան զիշխանութիւն նորա:

Իսկ թագաւորն Փռանգաց, վասն դաշանց սիրոյն զոր ունէին ընդ Հայք ուխտիւք 'ի հին ժամանակաց: Եւ վասն այսաջիկ երկուքին առաքեցին նմա թագ ոսկեհակազմ. և պսակեցին զնա յաղթութեան պսակաւն ըստ վայելման և պատշաճի արժանաւորութեան իւրում ։

Եւ այսպէս վերստին նորոգեցաւ թագաւորութիւն Արամեան զաւակին, և թագըն Հայկազանց և Սենեքերիմանց եղաւ ՚ի գլուխ արժանաժառանգ զարմին Լեւոնի ՚ի վեց հարիւր քառասուն և հինգ թուին Հայոց՝ այր բարի և աստուածամիտ և արիական և հեզ, և մեծահաւատ ։ Որ և բազմացոյց զարդիւնս աստուածպաշտութեան, ելից վանորայիւք և անապատաւորօք զաշխարհն իւր և շինուածօք եկեղեցեաց, զմասն՝ ազնիւ և զպարարտութիւն երկրի իւրոյ տալով նոցա և նուիրելով Աստուծոյ՝ արձանագրութեամբ և կնքօք անլուծիւք ։ Եւ էր ահագին առ օտարսն, և բարեմիտ առ իւրսն, ահաւոր առ անիրաւեալսն, և ողորմած առ որբս և այրիս, և առ աղքատս ։ Եւ հեզ և խոնարհ առ ամենեսեան ։

Եւ այսպէս դրուատիւք թագաւորեալ ամս քսան երեք, հանգեաւ ՚ի Քրիստոս բարի անուամբ և ուղղափառ հաւատով կենցաղավարեալ. թողլով ժառանգ թագաւորութեանն դուստր մի, Զապէլ անուն.

յանձնելով զնա մեծ իշխանին Արատնայ, սոսկալի երդմամբ. տալ զնա որդւոյ Թագաւորին Ունկռաց (1)։ Մկրտելով զնա Հայ դաւանութեամբ, զի դեռ երեխայ էր։ Որոյ նենգեալ ախտին ըստ բնական ատելութեանն Յունաց ընդ ազգիս Հայոց, քանզի Հոռոմ էր ազգաւ, խորհէր ՚ի միտս յինքն առնուլ զիշխանութիւնն. վասն որոյ փութապէս ՚ի խնամոցն Աստուծոյ առեալ զարժանն պատուհաս՝ սպանաւ ՚ի Հաշիշեանցն. սակաւ ժամանակս ինչ կալեալ զպայլութիւնն։

Եւ յետ նորա տուաւ նա որդւոյ Բրինձին Անտիոքու Փիլիպ անուն. որ ատելութեամբ գնայր ընդ իշխանս Հայոց ՚ի խրատուս հօր իւրոյ խաբեալ և թագաւորեալ ամիս երկու, և վախճան էառ ՚ի կապանս։

Այլ Թերեւս կամք վերին խնամոցն տնօրինէր և դարձուցանէր զմարդկօրէն անհաւատութիւնն. և զչարաբարութիւն ոմանց ՚ի բարիս. քանզի զայն զաւազանն փոքրիկ զոր ետ Աստուած Հայկազանց ՚ի մխիթարութիւն լքեալ և խոնարհեալ ազգին, փոխան բարձրացեալ թագաւորութեան նոցա, զայն ոչ կամեցաւ տալ ՚ի ձեռն օտար ազգի. վասն որոյ յետ բազում ժխորմանց և ամբոխից և վիճմանց, ընտրեցաւ որդին պարոն Կոստանդեայ ՚ի թագաւորութիւն. զոր ընտրեալ էր Տէր յորովայնէ, գեղեցիկ հասակաւ, և բարի խորհրդով, մեծահոգի, և երկայնամիտ, հեզ և հանդարտ ՚ի տիս մանկութեան: Եւ տուաւ նմա յամուսնութիւն շառաւեղն օրհնութեան ազատուհին Զապէլ: Անթերին ՚ի գովելութենէ աստուածապաշտ և երկիւղած կնոջ, ողջախոհ և ցածուն և անզարդասէր և լռին լիահաւատ և մեծայոյս: Քրիստոսասէր և որբասէր, աղօթասէր և ծերունի հանճարով, ՚ի ողջութեան հասակի: Եւ լցաւ բանն Սաղոմոնի թէ՝ ՚ի Տեառնէ պատշաճի կին առն: Զի վայել են նոքա ՚ի մի մարմին կատարիլ ՚ի Քրիստոս օրինօք: Վասն որոյ սիրեաց զնոսա Տէր. և եհան ՚ի միջոյ նոցա զմեքենայսն սատանայի, որ զառաջինն հակառակէր ընդ բնական իւրոյ չարութեանն. և աջողեաց նոցա տէր յամենայնի և ետ նոցա ուստերս և դստերս: Եւ է այժմ թուին Հայոց վեց հարիւր իննսուն և հինգ:

---

(1) Մի օր. Ունկռուզաց։

Այլ որ ինչ ՚ի միջոցի աստ եղեն, և զայն ասասցուք համառօտ:

Ի ժամանակս թագաւորութեան Հայոց Լեւոնի, յորում էր թիւն Հայոց վեց հարիւր վաթսուն և հինգ , եւ 'ի տէրութեանըն Կապադովկացւոց աշխարհին , Խոստրով Շահ Սուլտանին . և 'ի ժամանակս Մելէք Յետլ Սուլտանին , որ բռնացեալ ունէր զԵգիպտոս , զԵրուսաղէմ , և զԴամասկոս , և զՄիջագետս Նօրուց և զԽլաթայ իշխանութիւն , ելին զօրքն Փռանգաց յԱքքայ , հրամանաւ պապուն Հռովմայ . առնուլ 'ի Տաճկաց զաստուածակոխ քաղաքն Երուսաղէմ : Զոր լուեալ զհամբաւ ելոյն նոցա ազգքն անօրինաց , սրտաբեկեալ լինէին :

Իսկ որդի Մելէք Յետլ Սուլտանին . գընացեալ յԵրուսաղէմ . քակեաց զսուրբ Սիովն որ կոչի մայր եկեղեցեաց : Եւ այլ բազում ուխտեր և եկեղեցիք և զՆազարեթայ եկեղեցին . և թողին զսուրբ գերեզմանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ զՅարութիւնն , և զԳողգոթայն և զԲեթղահեմի եկեղեցին : Եւ զայլն ամենայն և զպարիսպն Երուսաղեմի առ հասարակ քակեցին . և հայր նորա Մելէք Յետըն արարեալ ժողով ամենայն զօրաց իւրոց , առ ծովուն Տիբերական բանակեալ զտեղի առնոյր :

Եւ լուեալ Հռովմայեցի զօրացն . դիմեցին գնալ 'ի վերայ նոցա պատերազմել . և որչափ ոգք մօտենային 'ի բանակ նոցա նոքս օթեւանօք ընդ կրօնիկն դարձեալ հեռանային. և յերկարէր այս 'ի բազում աւուրս։ Մինչեւ ձանձրացեալ քրիստոնէիցն կամեցան յետս դառնալ երկուցեալք 'ի խաբէութեանց նոցա։ Եւ յաղագս անծանօթութեան աշխարհին խորհեցան դառնալ յԱքքայ. և համակամութեամբ ամենայն զօրագլխացն խորհուրդ առեալ իջին յԵգիպտոս, և հասեալք 'ի քաղաքն որ կոչի Տէմիաթ, պաշարեցին զնա. և 'ի նեղս արկեալ ընդ յերկար, մինչեւ երրորդ մասն քաղաքին սատակեալ լինէր 'ի սովոյ և 'ի տարաժամ մահուանէ որ անկաւ 'ի նոսա։ Եւ ապա առին զքաղաքն և կոտորեցին զմնացեալսն առ հասարակ. և առին յաւարի զմթերս գանձուց նոցա և լցան առ հասարակ ոսկւով և արծաթով։

Եւ յայսմ ամի մեռաւ Մելիք Ադէլն։ Եւ որդիք նորա Մելիք Քեմլն Սուլտանն Եգիպտոսի, և Աշրաֆն, և Սուլտանն Դամասկոսի Մուազամն. և այլ եղբարքն նոցա առ հասարակ ուրախեալ ժողով բազում և անհամար զօրաց, եւ 'ի թուին Հայոց վեց հարիւր վաթսուն և վեց, մտին յԵգիպտոս։ Բայց յերկեղէ լեալ, ոչ իշխէին պատերազմել ընդ Քրիստոնեայսն։

Եւ 'ի նոյն իսկ Քրիստոնեայքն իբրեւ առին զՏէմիաթն, կամեցան երթալ առնուլ և զայլ քաղաքսն ։ Եւ էր ընդ նոսա թագաւորն Աքքայոյ Սեռձուանն փեսայն Հայոց թագաւորին Լեւոնի, և Կոմսն (1), և Սապիթալն և այլք բազումք յիւրաքանչիւր կողմանց յարելոց 'ի նոսա ։ Եւ գնացեալ բազմութիւն զօրացն բանակեցան առ ափն Նեղոս գետոյ, 'ի հարթայատակ դաշտի միում. և իմացեալ անօրինացն, լուծին զկապս ջրաբուղխ առեղեացն. և եկեալ ջուրն շրջապատեաց զզօրսն ։

Եւ Սուլտանականքն յարձակեալք 'ի վերայ նեղաձգութեամբ սկսան խոցոտել զամենեսեան. մինչեւ անյոյս լինելոյ Քրիստոնէիցն 'ի փրկութենէ, տուին զքաղաքն զոր առին. և յանձն առին դառնալ յիւրեանց աշխարհն. և դաշինս եդեալ՝ հաստատութեամբ մնալ 'ի նոյն, երդուան և Սուլտանայքն նոցա անխախտ պահել զամենեսեան. և այսպէս 'ի շփոթս հասեալ զօրացն Քրիստոնէից, դարձան 'ի տունս իւրեանց ։ Իսկ Մէլք Ցեալն 'ի վախճանելն իւրում զաւագ որդին զՔեմլն, կացոյց իշխան 'ի վերայ այլոցն. և ամենեքեան հնազանդեցան նմա. զի էր բարեբարոյ և իմաստուն. և առատաձեձըն առ ամենեսեան ։ Նոյնպէս և իւր եղբայրն Աշոտն որք կալան զիշխանութիւն հօրն իւրեանց բազում ժամանակս ։

---

(1) Մի օրի. Յամփիլն ։

Ի Թուին Հայոց վեց հարիւր վաթսուն և եւթն՝ Բերքայուղ Սուլտանն Հոռոմոց, որդի Խոստրով Շահ Սուլտանին յաղթող եղեալ քան զհայրն իւր, լինի պատճառ շմօրի ընդ Թագաւորն Հայոց Լեւոն. եւ բազում զօրս ժողովեալ հասանէ ՚ի Կիլիկիան Հայոց. և պաշարէ զամուր դղեակն որ կոչի Կապան. և բազում աւուրս մարտուցեալ ոչ կարաց առնուլ զնա ։

Իսկ Թագաւորն Հայոց Լեւոն զիւրոյ աշխարհին զօրքն գումարէր, և փութայր ելանել ընդ առաջ նորա ։ Իսկ նորին զօրագլուխն պարոն Կոստանդին Գունդստապլն. որ էր քեռորդի Թագաւորին Լեւոնի, առեալ սակաւ ինչ գունդս ՚ի զօրացն, յառաջ մատուցեալ ՚ի կիրճս լերանցն, և պատահեալ գնդի միում ՚ի զօրացն Թուրքաց. և անկեալ ՚ի վերայ՝ զամենեսեան կոտորեաց և ըմբռնեաց ՚ի նոցանէ արս գլխաւորս. որք ազդեցին նմա զբուն գալուստ զօրացն Սուլտանին. և աղաչէին դառնալ, և բաւական համարել զյաղթութիւնն [զոր արար. եւ նորա ոչ անսացեալ բանից նոցա. առաւել եւս յամառեալ և քաջալերեալ զզօրսն. հանդիպի ծանր զօրու կուռ վառելովք զինու, և 'ի պարտութիւն մատնի Գունդստաբլն և զօրքն որ ընդ իւր. և ըմբռնեցան ինքն և պարոն Կոստանդին Լամբրունեցին և Սեռռակն, և այլ մեծամեծ իշխանք. Թող զորս կոտորեցան 'ի նմին տեղւոջ, իբրեւ հազար այր պատերազմող: Եւ ըմբռնեալ զնոսա դարձաւ 'ի Կեսարիայ:

Իսկ Թագաւորն Լեւոն իբրեւ լուաւ զկոտորումն զօրացն, և զըմբռնումն իշխանացն, առեալ զզօրս իւր արշաւէր 'ի միւս այլ կողմն աշխարհին Հոռոմոց և բերէր աւար անթիւ, և կուտէր իբրեւ զաւազ առ ափն ծովու:

Եւ յետ սակաւ աւուրց արարեալ սէր ընդ միմեանս. ետ Թագաւորն Հայոց Լեւոն զբերդն Գլուայ, և Թափեաց զիշխանսն որ ըմբռնեալ էին: Եւ խոստացաւ տալ Հոռոմոց Սուլտանին յամենայն ամի երեք հարիւր այր 'ի ծառայութիւն, և հնազանդեցաւ նմա: Եւ այս լինէր 'ի ծերութենէ և յանկարութենէ մարմնոյն. և իշխանայքն ոչ էին ընդ նմա ուղիղ:

Եւ 'ի սոյն իսկ յայսմ ամի արարեալ ժողով Սուլտանն Բեքայուզ զօրաց, առեալ և

՚ի Թագաւորէն Հայոց օգնականութիւն. գայ յերկիրն Հալպայ ՚ի յԽառան և առնու զնա. և անտի գնացեալ ՚ի Թլպաշար առնու և ըզԹլպաշար և զԱնթափ : Եւ կամեցաւ գնալ ՚ի վերայ Հալպայ. և երեք ամսու յառաջ Սուլտանն Հալպայ վախճանեալ էր Մելէք Տահրն : Եւ որդի նորա Մելէք Ազիզն մանուկ գոլով ամաց հնգից, ունելով զիշխանութիւնն : Եւ էր նորա աթապակ մի յոյժ իմաստուն. առաքեաց առ Թագաւորն Հայոց Լեւոն, և խնդրեաց ՚ի նմանէ օգնական լինել. Թերեւս զերծանիցին հնարիւք նորա ՚ի հասեալ բարկութենէն. և խոստացան նմա տալ բազում գանձս ոսկւոյ :

Եւ Թագաւորն Հայոց այնուհետեւ ՚ի հոգս անկեալ խորով կորովամիտ իմաստութեամբն. առաքեաց զանխլաբար առ Սուլտանն Հոռոմոց, մինչ ՚ի սահմանս Թլպաշարայ էր, գրեալ առ նա այսպիսի օրինակաւ :

«Թագաւոր Հայոց Լեւոն. եղբօր մերոյ Քեքաւուզ Սուլտանիդ ՚ի Տէր խնդալ.

«Յուշ լիցի քեզ իբրեւ սիրելւոյ մերում. զի իմացեալ հաստատեցաք. եթէ քառասուն ամիրայ ՚ի զօրաց քոց դաշինս եդեալ են տալ զքեզ ՚ի ձեռն Աշրափուն : Եւ դուն այսուհետեւ զգոյշ անձին քո խորհեաց. զի՛ մի անկցիմ ՚ի ձեռս ատելեաց քոց. ողջ լեր »։

Եւ իբրեւ ընթերցան առաջի նորա ըզպատճէն նամակին. իսկոյն զարհուրեալ ահիւ մեծաւ հրաման տայր զօրացն դառնալ անդրէն փութանակի։ Եւ ինքն յառաջ անցեալ աճապարէր գնալ. զոր իմացեալ Աշրափուն և զհետ մտեալ արար փախստական։ Եւ ինքն դարձեալ էառ զՍաւպան և զԹըլպաշար, և դարձոյց ՚ի Հալապ։

Եւ այսպիսի օրինակաւ այնքան մեծ Սուլտանն շփոթեալ ՚ի պարտութիւն մատնէր. և հասեալ ՚ի Կեսարիայ զամիրայն զայնոսիկ զքառասուն խաշել հրամայէր։

Եւ յայսմ ամի եկն դեղին մարախ եւ ծածկեաց զերկիրս և զդաշտս. և եկեր զամենայն ծառ սահմանաց մերոց մինչեւ ՚ի ըսպառ զերկիրս և զչորս ամս։

Ի վեց հարիւր վաթսուն և ութ թուականին Հայոց Լեւոն թագաւորեալ ամս քըսան երեք, մեռաւ (1)։ Եւ յանձն արարեալ զիշխանութիւն աշխարհին և զդուստր իւր զԶապելն 'ի Ռիրատանն, որ էր ազգաւ Հոռոմ. և զկնի սուղ ժամանակի սպանաւ 'ի Հաշիշեացն. որպէս վերագոյնն գրեցաւ: Եւ առնու զհօգաբարձութիւն աշխարհին պարոն Կոստանդին, որ էր քեռորդի թագաւորին Հայոց Լեւոնի:

---

(1) Մի օրի. ունի այսպէս. իսկ վեց հարիւր վաթսուն և ութ թուականին Հայոց Լեւոն թագաւորեալ ամս քսան երեք. և մեռաւ. տասն ամ իշխան եկաց Հայոց. և յետ տասն ամի թագաւորեաց ամս քսան երեք. և յետ և յառաջ զամս երեսուն երեք, և մեռաւ։

Յայսմ ժամանակի ոմանք յիշխանացն Հայոց ապստամբեալք, եղեն ընդ. Ռոբէնայ Բրնծին Անտիոքու, կամելով զնա թագաւորեցուցանել. յորոց էր Ճօսլին Ռպրաջախտ և Լեւոն կապանու տէրն և Կեռասակն և այլք. որք առեալ զԲրինձն Ռոբէն և մտին 'ի Տարսուս և ամրացան:

Իսկ պարոն Կոստանդին և տէր Յովհաննէս կաթուղիկոսն, գնացին զօրօք և պաշարեցին զնոսա սուղ ինչ ժամանակս. և յաղթեցին նոցա. և առին զքաղաքն. և ըմբռնեցին զապստամբսն որ և ամենեքեան բանդարգեալք եղեալ փախճանեցան 'ի կապանս. և հանդարտեցաւ երկիրն. բայց. տէր Յովհաննէս կաթուղիկոսն յառաջ քան զառնուլ քաղաքին փախճանեցաւ. 'ի թուին Հայոց վեց հարիւր վաթսուն և ինն:

Եւ ապա միաբանութեամբ ամենայն իշխանացն, և եպիսկոպոսացն ընտրեցաւ յամենեցունց տէր Կոստանդին. որ էր եպիսկոպոս Սըեծոյն: Եւ եղաւ յաթոռ հայրապետութեան Հայոց ՚ի թուին վեց հարիւր եւթանասուն: Եւ եղեւ ուրախութիւն ամենեցուն. յաղագս առաքինի եւ բարեբարոյ եւ խաղաղասէր մտացն. որով ամենեցուն հռչակաւոր լինէր:

Իսկ իշխանացն Հայոց բաղում անմիաբանութիւն լինէր վասն դնելոյ թագաւոր. զի ոչ հաւանէին միմեանց: Եւ ապա ՚ի մի կամս եկեալ ընտրեցին զորդին Բրնծին Անտիոքու թագաւորեցուցանել. զոր եւ արարին իսկ. եւ ետուն զդուստր թագաւորին Հայոց Լեւոնի նմա ՚ի կնութեան. եւ թագաւորեցուցին ՚ի վերայ Հայոց ՚ի թուին Հայոց, վեց հարիւր եւթանասուն եւ երկու: Եւ անուանեցին զնա Փիլիպ թագաւոր:

Ի թուին Հայոց վեց հարիւր եւթանասուն երկու, եղեւ երաշտ սաստիկ. եւ յերկարեաց յոյժ՝ մինչ զի ՚ի Դեկտեմբերի հասարակին նշենիք ծաղկեալ եղեն ՚ի ջերմութենէ օդոյն: Եւ անպատմելի վշտօք տառապէր երկիր զերիս եւ զչորս ամս: Յայսմ ժամանակի մեռաւ Սուլտանն Քաքայուզն եւ առնու զՍուլտանութիւնն կրտսեր եղբայր նորա Ալադինն:

Ի թուին Հայոց հազար եւթանասուն և երեք՝ Փիլիպ թագաւորն թղտորով(1) հօր իւրոյ, կամեցաւ ըմբռնել զերկուս մեծամեծ իշխանսն. զպարոն Կոստընդին՝ որ էր թագաւորահայրն, և զպարոն Կոստընդին՝ Լամբրունին տէրն։ Զոր իմացեալ յառաջեայ պարոն Կոստընդին, և ըմբռնեաց ըզնա ՚ի Թիլն Համտնոյ. և տարաւ ՚ի Բարձր բերդ, և անդ վախճանեցաւ։ Իսկ հայր նորա Բրինձն Անտիոքու լուեալ տրտմեցաւ յոյժ։ Եւ զի անկարանայր առնուլ զվրէժ որդւոյն՝ առաքէ առ Ալադին Սուլտանն Հոռոմոց։ Որոյ եկեալ էառ զՃանձին(2), և զԿլանչին և զԿապղոս խաչն. և արար վնաս բազում ՚ի լեռնակողմանս։

Եւ Բրինձն ժողովեալ զօրս եմուտ յերկիրն, եկն ընդ սահմանն, որ կոչի Ճկեր. և եհաս մինչեւ ՚ի Թիլն Համտնոյ։ Եւ ոչինչ օգտեալ դարձաւ ամօթով յԱնտաք։

Ի թուին Հայոց վեց հարիւր և թանասուն և հինգ՝ միաբանութեամբ ամենայն իշխանաց տուին զԶապէլ դուստր Լեւոնի թագաւորին, ՚ի կնութիւն Հեթմոյ, որդւոյ պարոն Կոստանդեայ, և թագաւորեցուցին ՚ի վերայ Հայոց. որ էր տղայ հասակաւ.

---

(1) Մի օրի. Ե ապտրով։

(2) Մի օրի. զՄանձին։

և հայրն նորա կարգաւորէր զթագաւորութիւնն. որ և արար սէր ընդ Ալադին Սուլտան. և հնազանդեցաւ նմա. տալով նմա յամենայն ամի երեք հարիւր այր ՚ի ծառայութիւն։

Յայսմ ժամանակի լուաք զհամբաւ երկուց ազգաց անհաստատուածից և գազանաբարոյից. որոց անուանքն Խորազմ և Տաթար. որք իբրեւ հուր ընդ խռիւ ընթացեալ, ապականեցին զերկիր ուր և հասան. և ոչ ոք ընդդիմացաւ նոցա, և սարսեցին ՚ի համբաւոյ նոցա ամենայն որ ՚ի ներքոյ երկնից. Այլ սկիզբն ելից նոցա ՚ի բուն աշխարհէն իւրեանց ՚ի վաղուց ժամանակաց է՝. և զբազումս աշխարհս և զազգս և զթագաւորութիւնս աւերեալ և քանդեալ, հասին յաշխարհն արեւելից։

Եւ յայսմ ժամանակի թագաւորէր Վրաց դուստր Թամարին Ռուսուդուքան, և էր Աթապակ նորա Իւանէ. եղբայրն Զաքարիայի (1), որ էին ազգաւ Հայք. և ՚ի հրապուրանաց Թամարին Վրացի եղեւ Իւանէ. և ՚ի հակառակս դառնայր կրօնից Հայոց։

Եւ յայսմ ժամանակի ՚ի գաւառն Աջնոյ եղեւ նշան ինչ, զի կրօնաւոր մի սուրբ և

(1) Սա այս իմանէ՝ հայր Զաքարիայի [illegible] ՚ի պատմութեանց յայս տեղիս։

ընտրեալ վախճանեալ Հայ ազգաւ, որոյ գերեզմանն երկնաւոր լուսովն վկայեցաւ (1), և փառաւորեցաւ, որ և ամենեքեան տեսին. և ել համբաւ նորա ընդ ամենայն երկիր։ Իսկ Իւանէ նախանձ շարժեալ ամենայն Վրացւոյքն նախատէին և թշնամանէին, և յետոյ զոսկերս սուրբ Լուսաւորին հրամայէին այրել հրով, և 'ի տեղի պատուական ոսկերացն սատակեալ շուն թաղէր։ Եւ եպիսկոպոսն Անւոյ տէր Յովհաննէս բազում բանիւք յանդիմանէր զանաստուածն Իւանէ։ Իսկ նա ըսպառնայր կամ դարձուցանել 'ի Վրացութիւն զամենայն Հայս, և կամ հանել յաշխարհէն։

Եւ մինչ յայտնի էին եհաս համբաւ Խորազմին. և նոքա փութով ժողովեալ զօրս կամէին ելանել ընդդէմ նոցա 'ի դաշտամէջքն Գառնի քաղաքոյ. զոր շինեաց մեծ արքայն Հայոց Տրդատ բերդ. և սարաւոյթ 'ի մեծամեծ վիմաց թագաւորութեան իւրոյ, որ կայ անխախտելի մինչև ցայսօր։

Իսկ ամբարիշտն Իւանէ ամենայն զօրօքն Վրաց գնաց և իջաւ 'ի լեառն Գառնոյ., որ կոչի Աղուջերմն (2)։ Եւ ապա խորհեցան միաքան առաքել զմեծ իշխանն քաջ և անուանի զԻւանէ զեղբայր Շալուայի փոքր ինչ զօրօք ընդ առաջ Խորազմին. որոյ հասեալ 'ի դաշտին Գառնոյ որ կայր առաջի իւրեանց հարիւր մղոնօք 'ի զատէ. ապա ընդդէմ ելին անօրէն Խորազմիքն և սկսան պատերազմել ընդ նմա. և յորժամ խառնեցան 'ի միմեանըս Իւանէ եղբայր Շալուային, և Խորազմիքն, յայնժամ առաքեաց զմի 'ի զօրաց իւրոց առ մեծ զօր հեծելուն գալ փութանակի յօգնութիւն նմա։ Եւ նա 'ի գնալն ձայնէր որպէս սովորութիւն է թէ՝ շուտով հասէք, և ձայնն ձիաւորին ոմանց լսելի լինէր թէ՝ փախիք և մի գայք. զի չեմք կարող դիմանալ սոցա։ Եւ ոմանց լսիւր թէ փութանակի հասէք կարող եմք յաղթել. և մինչ 'ի յայս էին, փախեաւ Աթապակն Իւանէ անկանել յամուրս երկրի իւրոյ, և բազմութիւն զօրացն փախստեամբ անկանէին 'ի գեօղաքաքըն Գառնի, որ շինեալ է 'ի վերայ բարձր քարախորամի, և գետ յորդ անցանէ ընդ տակ խորամին. և յորժամ 'ի փախուստ դարձան անկանել յամուրս տեղեացն, նոյն ժամէն մրրիկ. փոշոյ մթացոյց զաչս փախուցելոցն. և առ հասարակ լցան ընդ բարձր և ընդ յոյժ ահագին խորամն Գառնոյ 'ի գետն յորձանուտ. և Խորազմիքն յետոյ հասեալ զմնացեալսն որոց մատնէին. և ասացին Թէ՝ ալամ՝ Վրացւոյն հրով այրեցաւ. Նշանակեալ Թէ աստուածային է բարկութիւնն. Իսկ զքաջ իշխանն Շալուէ ըմբռնեցին կենդանւոյն, և տարան առ Սուլտանն իւրեանց. և այսպիսի ահաւէքն վրէժս էառ Աստուած յանպարտաւան և 'ի կենցաղասէր ազգէն Վրաց, վասն անարգելոյ նոցա զհաւատս Հայոց.

---

(1) Մի օրի. երկնաւոր լուսովն վառեցաւ։

(2) Մի օրի. Ագոռուջերմն

Իսկ Պարսիկքն որ 'ի Դունին քաղաքն, լուեալ զպարտութիւն Վրացւոյն ըմբռնեցին զգլխաւորս քաղաքին և սպանին. և ապա սուր եդեալ կոտորեցին զամենայն Քրիստոնեայս որ 'ի քաղաքին.

Իսկ զայսոսիկ լուեալ քաջ և անուանի իշխանն Հայոց որդին մեծին Վասակայ Թոռն Հաղբակայ Պռօշ անուն և առեալ ըզզօրս իւր գնաց 'ի Դունին. և գտեալ պատճառս բանի մտանէ 'ի քաղաքն սիրոյ պատճառաւ և զուգեսէր խաբէութեամբ. և կոչէ զամենայն մեծամեծսն որ 'ի նմա և 'ի սիրելըն զնոսա, յանկարծակի յիշէ զկոտորումն Քրիստոնէիցն Թէ զինչ պատճառաւ արարիք, և ապա հրամայեալ զօրացն իւրոց առժամայն սուր 'ի վերայ եդեալ կոտորեցին առ հասարակ. և ինքն դարձաւ խաղաղութեամբ 'ի տուն իւր։

Յայսմ ժամանակի եկին Խորազմիքն եւ պաշարեցին զմեծ քաղաքն Վրաց զՏփխիս. և Պարսիկքն որ կային 'ի քաղաքին, ետուն զքաղաքն 'ի ձեռս Խորազմեացն. և Խորազմիքն խոստացան թողուլ զՊարսիկսն խաղաղութեամբ ստացուածօք իւրեանց, և ապա առեալ զքաղաքն կոտորեցին զամենայն Քրիստոնեայսն որ 'ի նմա. նոյնպէս և զՋըհուտսն. և զամենայն ազգ բաց 'ի Պարսիցն. և տարեալ ընդ ձեռամբ իւրեանց զքաղաքն, գնացին։

Իսկ 'ի գալն գարնանային ժամանակին, եկն Թագաւորն Վրաց 'ի Տփխիս. և կոտորեաց զՊարսիկսն որ 'ի նմա. և մնաց քաղաքն աւեր 'ի մարդոյ և յանասնոյ։ Յայսմ ամի աստղ մի գիսաւոր երեւեցաւ յերկինս, և անյայտ եղեւ։

Ի թուին Հայոց. վեց հարիւր եւթանասուն և եւթն Ալամանաց Թագաւորն Էնբըրուրն ել բազում զօրօք 'ի Կիպրոս կղզի. և գնացեալ յԵրուսաղէմ, երկրպագեաց սուրբ տեղեացն։ Իսկ Փրերք Դամբլուն առաքեցին 'ի Քեմլըն. որ էր Սուլտան Մսրայ գալ 'նմա զօրօք որպէս զի տացեն զԷնբրաւրն 'ի ձեռս նորա. իսկ Քեմլն առեալ զթուղթ Փրերացն, և յղեաց առ Էմբրուրն, և եցոյց նմա զխենդութիւն ազգին իւրոյ. և ետ սիրով զԵրուսաղէմ յԷմբրուրն. և հաստատեցին ընդ միմեանս դաշն և ուխտ սիրոյ յաւիտեան : Եւ Էմբրուրն(1) առեալ զգերեզման ետ 'ի փռանգն, և հանին զՏաճիկն. և ինքն Էմբրուրն գնաց յաշխարհն իւր : Եւ յայնմ հետէ սպառնայր Դամիկուն քակել զտունս նոցա որ յայնկոյս ծովուն :

Ի թուին Հայոց վեց հարիւր եւթանասուն և ութ Քեմլն էառ զԴամասկոս 'ի Մելիք Նասրէն. և ետ եղբօր իւրում Աշրափուն, և տայ նմա տեղիք բնակութեան ըզզՃօպայք և զՔարաք և զՍամլուզ, և այլ բազում տեղիս. իսկ զՄիջագետս Ասորոց, զՈւռհայ և զԽառան և զՍրուճ որ էր եղբօրն իւրոյ Աշրափուն յինքն առնու Քեմլն : *

---

(1) Երբեմն Ըմբրուր :

*Այսպէս վերջանայր և յերկոսին օրինակս. և Բուն այս կամ Վարդանայ գրեալ 'ի Թարգմանելն, և կամ Գրիգորի երիցու Անեցւոյ [illegible], որոյ խնդրանօք է օրինակս : Սակայն Վարդանայ պատմիչ էն այսպիսի. ուր և Գրիգոր երէց 'ի վերջ յիշատակարանին որ 'ի վերջ թարգմանութեանս է, ասէ. " գրեցաւ գիրքս ձեռամբ տառապելոյ Գրիգորոյ զոր կամօքն Աստուծոյ գրեցաք և մեք զպակասութիւն սորա կամօք քառասուն և չորից : Տէր Աստուած ողորմեա Վարդանայ ծառայի քո յաւուր գալստեան քո ". և յաւելու զպատմութիւնն Թագաւորաց :

Այլ մեք թև ոք լցեալ զկուր բանիս և թռուցեալ ՚ի վերայ ծովացեալ պատմութեանց յորուց, և հասեալք ՚ի մինայս հանգստեան մերում կենցաղավարութեան, դարձեալ նովին յուսով երկնաւոր սքանչելեացն և շնորհաց Հոգւոյն սրբոյ, երկրորդ անգամ ծովամուխ լիցուք յանհատական խորս քահանայական կարգաց և զարդուց. եթէ ուստի՞ սկսաւ և ո՞ւր լցաւ և յո՞ կատարի, տեղեկասցուք ըստ մերում կարի աշխատեալք ՚ի պարգեւսն Աստուծոյ. եթէ զի՞նչ է քահանայութիւն և զի՞նչ է գործ և աստիճան քահանայութեան և պատիւ նոցա. և հանգուսցուք զյօժարութիւնս մեր ՚ի փառս Աստուծոյ։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Նորին տեառն Միխայելի յաղագս քահանայական կարգաց թէ ուստի առնու զսկիզբն։

ՍԿԻԶՆ քահանայութեան շնորհի է անժամանակն Աստուած, որպէս և ամենայն բարեաց. քանզի ամենայն տուրք բարիք և պարգեւք կատարեալք ՚ի վերուստ անտի իջեալ են առ մեզ ՚ի Հօրէն լուսոյ. որոյ առաջին և անդրանիկ է յայլն պարգեւքս այս քահանայական. զարդ, զոր ինքնութեամբ և անսկզբնաբար ունի զնա ամենեայն Աստուած. ոչ յումեքէ առեալ և ոչ զոք ունելով վերագոյն ինքեան՝ որով քահանայեսցէ և փառաւորեսցէ. և վասն այնորիկ ոչ է 'ի ներքոյ հարկի միայն նորա քահանայութիւնն, այլ բաշխելով և բաժանելով զպարգեւսն իւր, է նա քահանայ։ Համարձակելի է մեզ 'ի ծանօթութենէ գրոց ասել զամենասուրբն Հայր Աստուած՝ քահանայեալ յանհասական ծնունդն Որդւոյ և յանթարգմանելի և յանհատաբար բղխումն Հոգւոյն սրբոյ, անժամանակ անսկզբնապէս անախտաբար և առանց միջնորդի յէութենէ և 'ի բնութենէ իւրմէ. անձինք և երեսք ծանօթականք Որդւոյ և Ոգի կատարելապէս իմացեալք, և միացեալք 'ի նոյն բնութեան և յէութեան և յաստուածութեան և 'ի զօրութեան և յանմահական մշտնջենաւորութեան, 'ի մի կամս և 'ի մի իմաստութիւն և 'ի մի գործ և 'ի մի ճոխութիւն և 'ի մի թագաւորութիւն և 'ի փառս կացեալ յաւիտենիւ իւրով, անպատապէս բաժանեալ և անխառնաբար միաւորեալ. այս է առաջին և անստացական 'ի բնութենէ քահանայութիւն վերագոյն և աննուաստ և ազատ քաւչապետութիւն։

Իսկ երկրորդ քահանայագործութիւն ըսկսանի առ զօրս լուսեղինացն դասուց յՈրդւոյն և ՚ի Հոգւոյն, գոյացութեամբն երկնի՝ որ բնակութիւն է նոցա և խորան անձեռագործ բանիւ կատարեալք և հոգւով լցեալք. ըստ վկայութեան գրոց թէ «Բանիւ Տեառն երկինք հաստատեցան, և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա. բնութիւնք անմարմինք և անմահ կենդանիք մըշտաշարժք ՚ի բարիս և անշարժք ՚ի չարիս. և թէ հեղգաշարժս ասել յաջողակ թուիցի ումեք յաղագս խաւարեալ արուսեկին, զոր ասեն առաջին և վերագոյն ամենայն դասուց զնա գոլ. և յաղագս այնորիկ հպարտացեալ աստուածանալ կամէր անձամբ. որ է առաջին ցաւ մտեալ ՚ի կամս բանաւորաց. և այլքըն զի կան և մնան, քանզի մի քան զմի խոնարհ տեսանէին զինքեանս, և այն արգելու զախտն. և այլ ևս զի խրատեցան առաջին հրամանօքն և կան ՚ի յողջութեան. և դարձեալ զի արդ տեսանեն զՈրդի մարմնովն, և երկիւղ երեւեցելոյն պահէ զնոսա անախտս, որպէս առնէր տնտեսութիւնն զանհոգութիւնն. նախ քան զմարդեղութիւնն առաւնոցա շնորհ և աստուածային փառաց. այն՝ զոր Պաւղոս ասէ «Ո՛ արար զհրեշտակս իւր հոգիս և զսարկաւագունս իւր հուր անկիզանող» և դարձեալ ասէ «օրհնեցէք զտէր ամենայն հրեշտակք նորա հզօրք զօրութեամբ սարկաւագունք կամաց նորա և բանի նորա». Եւ այս է գործ նոցա օրհնել զԱստուած և փառաւորել զնա ըստ Եսայեայ և Եզեկիելի: Այլ և առաքինի սպասաւորութիւն, այսինքն 'ի սարկաւագութիւն այնոցիկ որ ժառանգելոց են զփրկութիւն. և են բաժանեալք յերիս երրեակս դասուց կարգաւ. 'ի կայանին առեալ զփառս և զիշխանութիւն վարդապետութեանն, զոր դայեկաբար խնամեն առաջինքն զերկրորդսն իմանալի կերակրովք սնուցանելով յաճախումն աստուածային հանճարոյն. զոր առնուն առաջինքն 'ի բացեալ նոցա լուսոյն անճառելւոյ Երրորդութեանն ըստ չափոյ կարելի բնութեան նոցա տարողութեանն. և անծերանալի կենօք սարկաւագեն Աստուծոյ 'ի նմանէ զօրացեալք տալով առաջնոյն 'ի միջինն. և միջինն 'ի վերջինն անցուցեալ և 'ի յԱստուած դարձուցեալ զնոսա կատարեն զզարդն երկնից:

Եւ քանզի առաջինն գեղեցկապէս ունէր խորան լուսեղէն հրեղինօք լցեալ պաշտօնէլուք անճառելի փառօք, և անթուական բազմութեամբ և անքանակ բարձրութեամբ։

Երկրորդ. ապա տպաստեղծէր(1) բանիւ հաստատակառոյց հրամամբ և աննեցուկ ձեռուամբ կառուցեալ խորան խորհրդական և յօրինաւորեալ եկեղեցի՝ մխիթարականն զայս աշխարհ. որոյ իշխան և գլուխ կացուցեր զԱդամ տալով նմա շուք քահանայութեան, որ է գեղ պատկերի Լուսոյ. և դնէ զնա ՚ի լուսընկալ բեմի բարձրացելոյ արեւելեան մասինն յարազուարճ դրախտին փափկութեան, ՚ի յարացոյցն հոգեւոր և անթառամ խնամութեանն Աստուծոյ. զոր հոգիացոյց փչմամբ հանճարոյն, զի այնու քահանայասցի Աստուծոյ միջնորդնաւորին միջնորդեսցէ. և այնու օրինակաւ էջ շնորհն քահանայութեան ՚ի ներքինն բանականս ընդարձակեալ. որով շնորհիւ օժանդակեալ (Ադամ) կոչեցաւ զանուն արարչին Լուսոյ Աստուած, որ է ածիչ ՚ի գոյութիւն յանգոյից. և տեսեալ զգօրծս արարչին Լուսոյ, ընդ նմա անուանեաց զնոսա հրեշտակս որ է բանաւորս. զի տանելին առ նա բանս. և ապա ամենայն շնչոյ կենդանւոյ կոչեաց անուանս յարմարանուանս որ կան մինչեւ ցայսօր ժամանակս յիշատակ իմաստութեանն արմատոյն մարդկութեանս, և շնորհի քահանայութեան նորա 'ի փառս տուողին Աստուծոյ։

---

(1) Այլ օրինակք. ապա ստեղծէր։

Իսկ եթէ զի՞նչ է քահանայութիւն, ասասցուք.

Քահանայութիւն կարգ է բարձր, և աստիճան սուրբ. որով բարձրանայ առ Աստուած ըստ կարի և լինի վերագոյն քան զամենեսեան որոց քահանայն է, և է միջնորդութիւն բարձրութեան և նուաստութեան որ բերէ 'ի վայր և տանի 'ի վեր. և ոչ ոք անձամբ կարէ առնուլ զքահանայութիւնն, որպէս ասէ սուրբն Պօղոս. այլ կոչեցեալն յԱստուծոյ. և է նա շնորհ աստուածեղէն սուրբ որ ասէ ցքահանայսն. «սուրբ լերուք զի ես սուրբ եմ, և 'ի սուրբս բնակեմ»։ և բնակէ յարժանաւորսն այսպէս. որպէս լոյս ընդ յօդ և հուր յերկաթ միանալով. և ներքուստ 'ի ներքս խօսի զկամս Աստուծոյ. և դնէ 'ի սրտի զփափականս արքայութեան, և զբանալի դրանն երկնից, և մօտին առ Աստուած. և կոչի նա ծնողութիւն երկրորդ և անախտ երկունք. և տայ դաստիարակութիւն անապական սննդեան։ Այլ ըստ մերում լեզուիս Ասորւոց քահանայն Փարթամ Թարգմանի. այսինքն երկնաւոր հարստութիւն, անմահական զանձուն ողահուսա և բաշխումն. և ըստ Հայկական բառին քաւրիչ ստուգաբանի կամ հարկանող. որ է վրէժխնդիր չպահողաց պատուիրանին Աստուծոյ, և ոչ անձին. որպէս փենեհեսն այն եղեալ զինախանձն Աստուծոյ։ Աւ ըստ այլում կողման նմանութիւն բարեբախտիկ փառաց՝ որ է Աստուծոյն. որ է ընկզընատիպ անստատացական քահանայութեամբ պարգեւք առողացն. որոց առաջինքն հանդիպին կուսական և անապական բնութիւնք հրեշտակաց. և երկրորդ՝ բաշխեցաւ նախատեղծն մարդոյն մարմնոյ և արեան վիճակելոյ. ուստի և մարդասէր կոչեցաւ տուողն. բայց զի անարատից վայել է աստիճանն տուաւ յանմեղութեանն, և 'ի մեղանչելն նուազեցաւ շնորհն. թէպէտ և ոչ ամենեւին բարձաւ 'ի նոյն ասացեալ մարդասիրութենէն մինչեւ 'ի լրումն աւուրց լցաւ։

Դարձեալ յորժամ յուղեալ 'ի խնամոց իւրոց եղև մարդ մարդասէրն Աստուած, և այսրէն դարձոյց յիշեցուցանելով 'ի վերնատանն զփչումն առաջին. և քանզի բնաւին ոչ բարձաւ շնորհն պատուիրանազանցութեամբն Ադամայ 'ի բնութենէս. ցուցանէ քեզ Աբէլ արդար որդին Ադամայ մեղաւորին. որ և քահանայական օրինօք հրէականին մատուցանէր Աստուծոյ յանքանիցն պատարագս․ և մեծացեալ 'ի նա շնորհքն մատեաւ անձամբ պատարագ Աստուծոյ, անարժան ձեռօք յօրինակ Տեառն մերոյ և Աստուծոյ, պիղծ քահանայութիւն նուիրեալ և ողջակիզեալ։ Սակայն Կայէն անկաւ 'ի շնորհէն զոհիւն իւրով յօրինակ այնոցիկ, որք զՏէրն պատարագեցին Ղեւտացիքն, և անկան 'ի քահանայութենէն զոհիւքն իւրեանց և որդւովք, նման Կայենի տարագրելոյ ծննդովք իւրովք յերեսաց Աստուծոյ և յազգէն Ադամայ, անօթն վնասակար ոչ յաջողեալն 'ի տան Աստուծոյ․ որպէս և այժմ անարժան քահանայք անկեալ լինին յեկեղեցւոյ և 'ի ժառանգութենէ․ զոր և Հեղի օրինակեաց․ քանզի եբաց նախ զգժոխս և լցնեաց զոտն մահու, և արբոյց երկրի դառնացոյն ջուր․ ուստի ածեցոյց զփուշս և զտատասկս և արգել զառատութիւն ցորենոյ և գինւոյ։

Սակայն էանց պարգեւքն այն 'ի յԵնովս, որ զլոյսն պատարագեալ Աստուծոյ, էառ վստահութիւն կոչել զՏէրն անուն օգնութիւն անկեալ ազգին։ Իսկ զանարժանիւքն զանց արարեալ քահանայական պատուոյն երեւեցաւ յԵնովք, որ յաւել 'ի յոյսն Ենովսայ զպահս և զաղօթս, պատարագելով Ա տուծոյ զամս հարիւր վաթսուն և հինգ, հաշտեցոյց զԱստուած ընդ բնութեանս կործանելոյ. և ըստ խնդրելոյն Ենովքայ օգնեաց և էառ զքահանայն արժանաւոր 'ի դրախտն, ուստի եղ անարժանն. և յայս ետ Նովաւ անմահութեան կենաց մահկանացու ազգիս. և կոյս և մնայ քահանայ միշտ 'ի Տէր Ենովք, հաճեալ ընդ նա Աստուծոյ։ Իսկ յետ Նորա դարձեալ ծածկեցաւ 'ի մեղաւորացն և ծաղկեցաւ յարդարն Նոյ փառքս այս. որ եգիտ շնորհս զայս յԱստուծոյ ըստ վկայութեան գրոցն. քանզի պատարագէր Աստուծոյ զսրբութիւն կուսութեանն ամս հինգ հարիւր, խնդրելով 'ի Տեառնէ զի պակասեսցին մեղք յաշխարհէ, և ամբարիշտ մի եւս գտցի 'ի նմա. և լուաւ նմա Աստուած և ջնջեաց զյանցաւորս յանցանօքն իւրեանց, զի մարմինք եղեն. և ոչ ետ Նոցա Աստուած հոգի քահանայութեան և եթող զՆոյ և զարդարութիւն իւր միայն, որ և յետ ջրոյն դարձեալ մատուցանէր զսրբելոյն պատարագ 'ի հոտ անուշից Տեառն Աստուծոյ. որ էր ստուերականն 'ի գոլորշի հոտոյ և ոչ յարդիւնս իւրաց կատարեալ կերակրոց. որ էր փրկութիւնն մեր զոր կատարեաց Տէրն մեր. և հոտն այն վարքն էր արդարոյն և ոչ ճենճեր ճարպոյն.

և յետ այնորիկ ամփոփեալ շնորհին 'ի կռապաշտից՝ ցուցաւ 'ի Յովբ սքանչելին յորդւոց անտի Յեկտանայ. և թէ որպէս այլք ասեն՝ Յեսաւայ. որ աւուր աւուր մատուցանէր ըստ թուոյ որդւոցն պատարագ Աստուծոյ, յորոյ վերայ եղելոց փորձութեանցն համբերութեամբ. և յետ փորձութեանն մատոյց 'ի հաշտութիւն բարեկամաց պատարագս յանմանոյն ։ Իսկ յառաւելուլ արդարութեանն և 'ի յաճախման հաւատոյն Աբրահամու բազմապատկեաց պարգեւք աստուծանին ոչ միայն յԱբրահամ՝ և յորդիսն իւր, այլ և 'ի Մելքիսեդեկ որ և գերազանցեալ գըտաւ քան զամենեսեան. զոր և գիրն յայտնապէս կոչէ զնա անուամբ քահանայ Աստուծոյ բարձրելոյ որ բարձր քան զբնաւ արդարոյն ցուցեալ խորհուրդս. զոր Պօղոս խոստովանի ածելով զնա ամենեւին օրինակ մեծին և ոչ մասամբ, որպէս զայլսն. որ և զտիպն ճշմարտութեան մատուցանէր Աստուծոյ պատարագ հաց և գինի. զոր և Աբրահամու ընծայէր և օրհնէր զնա յԱստուծոյն բարձրելոյն. որ և ասեն զնա յորդւոցն Քամայ, որոյ ազգ և հայր և մայր ոչ գրեցաւ և ոչ պատմեցաւ յօրինակ Տեառն իւրոյ ։

Բայց որպէս ասէ սուրբն Եփրեմ յաղդէն Սեմայ էր, անուանն Սէմ. որոյ երեւեալ Աստուած փոխեաց զանուն նորա Մելքիսեդեկ, որ է թագաւոր արդարութեան անհայր անմայր ոչ մարդն, այլ անունն Մելքիսեդեկ ոչ ունի հայր և մայր. քանզի Իսրայէլ և Մելքիսեդեկն պարգեւ Աստուծոյ են՝ հայր և մայր ոչ ունին. իսկ Սեմն և Յակովբն ունին ծնողս որ զայն կոչեցին նոցա անուանս.

Իսկ Աբրահամ յօրինակէն Տեառն մերոյ օրհնեցաւ և եղեւ քահանայ, և զորդին մատուցանէր Աստուծոյ զհօրն երկնաւորի բերել զնմանութիւն, տալով զմիածին ՚ի փրկութիւն աշխարհի։ Եւ Սահակ անձամբ անձին լեալ մատուցիչ ընդ հօրն որպէս և Քրրիստոս ՚ի հօրէ և յինքենէ մատեաւ, և զերկուսին միշտ, այլովք ընծայիւք մատուցանէր Աստուծոյ. և զնոյն շնորհ յինքն ձգեալ Յակովբ յօրհնութենէն հօրն, զոր առեալ երթայր յԱսորիս, և տեսանէր զխորհուրդ եկեկեղւոյ. և կոչէր զտեղին տուն Աստուծոյ և օծանէր. և ՚ի դառնալն պատարագ մատուցանէր Աստուծոյ ըստ ուխտին իւրոյ։

Այլ և Յովսէփ ընկալաւ զշնորհս զայս խորհրդով տեսլեամբ երազոցն, և իջեալ յԵգիպտոս որ է Մծրայիմ, այսինքն Մսր, և զողջախոհութիւնն մատուցանէր պատարագ Աստուծոյ . և յայնմհետէ իմաստասիրէր քահանայական շնորհիւն , և փրկէր հացիւ զԵգիպտոս ։ Իսկ յորմէ հետէ մտին որդիքն Իսրայելի անդ, մինչև յելսն , ոչ վկայի թէ մատոյց ոք պատարագ Աստուծոյ կամ քահանայացաւ . զի Մսրն կոչի մեղք. և ՚ի մէջ մեղացըն սովորեալք նոքա ոչ լինէր հնար պատարագել Աստուծոյ. իսկ երևեալ շնորհացն երկնաւորաց և ՚ի քաւութիւն մեղաց նոցա յորդեաց պարգեւ այն Աստուծոյ առատութիւնըն և մեծարեաց ողորմութիւնն Աստուծոյ զամենայն ժողովուրդն. քանզի քաւեցան նոքա դառն տանջանօք աղիւսագործութեամբն. վասն որոյ արժանացեալք առ հասարակ քահանայական պատուոյ , պատարագեաց իւրաքանչիւր ոք զգառն զատկին , տպաւորելով զշնորհսն որ տուաւ գառամբն Աստուծոյ լըման աշխարհի , բառնալով զմեղս բազմաց . այն որ ՚ի մէջ մեղաւորաց գենաւ և ՚ի մէջ դըժոխոցն արար փրկութիւն արժանաւորացն . ուստի ոչ ինչ օգտեցան խաւարեալքն սըրտիւք այսու պարգեւօք. անցին ընդ յանդունդըս , որպէս ընդ անապատ . և կերան զհաց քահանայական յանապատին յորմէ տանջեցան աններելի ախտացեալքն և տրտնջողքն անհաւատութեամբ , և ապրեցան սակաւք ՚ի բազմաց ։

Իսկ 'ի յութսուն և հինգ ամին Մովսէսի ընկալաւ Ահարոն զպատիւ քահանայութեանն յԱստուծոյ կոչեցեալ. և 'ի նմանէ առին որդիք նորա և մատուցին յաճախապէս շնչաւորս և անշունչս, զի տաղտկացին և ձանձրացին զանշահաւորն միշտ մատուցանելով, և կարօտացին օգտակարին. և շնորհապարտք լիցին համառօտ և ձրի փրկողին. Եւթէպէտ ասուեր էր՝ սպան զմռայկատս զՆաբաթ և զԱբիութ՝ որ երկրորդ անգամ ծխեցին խունկս, և այն օտար հրով. զոր միանգամ օրէն էր ծխել սեղանոյն հրով քահանայապետին Ահարոնի, և ոչ երկրորդացն. և զայն կատարեալ էր հօր իւրեանց 'ի ժամու իւրում:

Արդ կեցեալ Ահարոն յիւրում քահանայութեանն ամս երեսուն և ութ՝ կատարեցաւ. թողեալ զքահանայութիւնն Եղիազարու. որ և պաշտեաց զնա ամս քառասուն, փոխեաց զնա Փենեհէս ամս ութսուն, նախանձաւորն Աստուծոյ. որ սուրբ ձեռօք զարժանաւոր զոհն մատոյց Աստուծոյ 'ի պիղծ կենդանեացն 'ի գարշելի խորանին զԶամբրի և զՔասբիք: Յետ սորա այլ (1) զԱբիսվէթ և մեք զԵսու ասեմք, ոչ զԱաւեայն՝ ամս տասն և ութն կալաւ զքահանայութիւն։ Զկնի նորա այլք զԲորքի, և ըստ մեզ՝ Բուաքի ամս վաթսուն. և էր յաւուրս Բարակայ։ Յետ նորա Ոզիա ամս քսան և երկու. և ապա Զարեհ ամս յիսուն և երկու. և է սա եւթներորդ յԱհարոնէ։ Եւ ապա Մարու ամս յիսուն. ապա Աքիտոբ ամս քսան. յետ նորա Սադովկ ամս քսան. ապա Աքիմաս՝(1) ամս քսան երկու. յետ նորա Հեղի և որդիք իւր ամս քսան. այլք քառասուն ասեն։ Սամուէլ՝ ամս քառասուն. Աքիմելէք՝ զոր սպան Սաւուղ յիսուն և հարիւրովք(2) ի Բեթնաքսա քաղաքագեղջ(3). ապա Աբիաթար՝ որ զկնի Դաւթի շրջէր. և է սա եւթնևտասներորդ յԱհարոնէ. ապա Աքիտովբ. և յետ նորա Սադովկ զոր ասեն այլք՝ զոյլ ումն։ Այլ և ի Դաւիթ ցուցաւ եռակի շնորհն որ տուաւ Ադամայ այսինքն քահանայութիւնն թագաւորութիւնն և մարգարէութիւնն. զի նախնի Քրիստոսի եղև նշանաւոր յամենայն Իսրայելի. զի թագաւոր էր և մարգարէ, յայտնի է. բայց թէ քահանայութեան շնորհի եհաս, ապացուցք այն՝ զի եկեր զհացն առաջաւորութեան զքահանայականն. և Տէրն ստուգեաց զբան պատմութեանն որ կայ 'ի գիրս Թագաւորացն Իսրայելի։ Բայց և զայս և ս գիտացաք, եթէ էառ զեպուդն զծածկոյթս սեղանոյն արկաւ զիւրեաւ, և եհարց զՏէր. զի երկեաւ վասն քահանայքն և ոչ ետ նմա հարցանել զի երդնուցու սուտ, և կամ ասելով զճշմարիտն մեռցի. այլ ինքն եհարց և ոչ մեղադրեցաւ. զի հայրն Քրիստոսի ոչ էր պարտ թէ մեռցէ ընդ օրինօքն իբրև զծառայ։ Այլ և կարգեաց քսան և չորս դասս սաղմոսողաց. և երգել հրամայէր երիցս յաւուրն յերրորդ ժամուն և վեցերրորդն և յիններրորդն. զոր և արդ իսկ կարգեալ ունիմք 'ի սուրբ եկեղեցիս։

---

(1) Հին օրի. Եւ պաշտեալ Եղիազարու զքահանայութիւնն ամս քառասուն, փոխեաց զնա նախանձաւորն Աստուծոյ Փենեհէս. որ սպան զՔազբի և զԶմրի:

---

(1) Երկու օրի. Աղաքիմաս։

(2) Երկու օրի. երեք հարիւր հինգ արամբք.

(3) Մի օրի. Բեդնաքսա գիւղաքաղաքէ. Մի օրի. ի Թեթնաքսա քաղաքագեղջ։

Զկնի Սադովկայ շփոթեալ ցուցանեն ամենայն պատմութիւնք զօծ քահանայութեանն։ Այլ մեք աշխատեալ գտաք. թէպէտ ոչ զքանիս ամացն՝ այլ զկարգն ստուգիւ զոր գրեմքս։ Զկնի Սադովկայ՝ Ազարիայ. Սողոմ. Սուսիա. Եղեկիա. Ուրիա. Ղազարիա. Սադովկ. Աքիմելէք. Ասադովկ. Սադովկ. Ազարիա. Ահիմէէս. Աքիմելէք (1). Իյադա.

---

(1) Մի օրի. Ահիմելէք։ Մի օրի. Աքիմելէք։

Իոսադակ․ Յեսու․ Իոփյուդ․ Եղիսէ․ Սողոմ․ Յովիրդա հայր մարգարէի (1)․ Մանասէ․ Ամովխիա․ Ազարիա․ Մնասխիա․ Շմաւոն․ Մնեբարի․ Յովսադաք․ Ազարիա, որ յանդիմանեաց զՈզիա (2) թագաւոր․ ոմանք ասեն թէ սա է Զաքարիա որդին Բարաքեայ, որ վասն յանդիմանութեան թագաւորին սպանաւ ընդ մէջ տաճարին և սեղանոյն։ Ինադաւ․ Ուրիայ․ Յովհաննէս․ Անդիմաքոս․ Ոնիա (3)․ Եղեկիա․ Շմաւոն․ Սիմէոն, ոմանք զսմանէ ասեն բազմակեաց եղեալ և գտեալ զՔրիստոս գրկօք․ Ամարիա․ Ազարիա, սա նախ քան զաւերն Երուսաղեմի գերեցաւ․ և եկեալ ՚ի Սամարիա հրամանաւ Շաղմանշայ թագաւորին դնէր օրէնս և տայր նոցա ընդհինգ գիրքսն Մովսիսի․ Ամուրիա․ Աքիտա․ Սադովա․ Քեղկի՝ հայրն Երեմիայ մարգարէի, որ եգիտ զերկրորդ օրէնսն․ Ուրիա որդի Սամեայ քահանայ և մարգարէ, զոր սպան Յովակիմ արքայ․ Սարրի․ Յովսեդէկ, որ գնաց ՚ի գերութիւն ՚ի չորրորդ գերութեանն Յուդայի ՚ի վերջնումն՝ յորում բարձաւ թագաւորութիւնն։

---

(1) Երկու օրի․ հայր Երեմիա մարգարէին։

(2) Երկու օրի․ զՈքոզիա։

(5) Երկու օր․ Ոնիա, Անդիմաքոս։

Իսկ քահանայութիւնն ոչ բարձաւ 'ի գերութեան անդ. թէպէտ ոչ գոյր տաճար և սեղան, մասնաւոր ինչ առնէին քահանայագործութիւն. զի մի՛ չիջցի շնորհն այն մինչև 'ի գալ առաջնոյ քահանային, որ է Տէր մեր Յիսուս. զի ինքն իցէ առաջին և կատարումըն. որ ասաց ես եմ այբն և ես եմ քէ։ Զկնի եւթն ամի գերութեանն սպանին զՅովսեդէկ քահանայապետ, և ութսուն իշխանս երեւելիս ընդ նմա 'ի տանէն Յուդայ. ընդ Շիրիա(1). և զՍոփոնիա. և զԻսու որդին Յովսեդեկեայ. զի տակաւին յԵրուսաղէմ էր, ածին զնա 'ի Բաբելովն զկնի մահուան հօրն. բայց ոչ սպանին զնա. և 'ի դառնալն 'ի գերութենէ Հրէից, արձակեցաւ և եկն ընդ Զօրաբաբելի յԵրուսաղէմ. և էր քահանայապետ վկայութեամբ Աստուծոյ 'ի մարգարէս վասն նորա խօսեցեալ։ Եւ յետ նորա Յովակիմ որդի նորա. յաւուրս սորա շինեցաւ տաճարն. Եղիաս որդի Յովակիմայ. Յովդայ` որդի Եղիայ. Յովհաննէս` որդի Յովդեայ. Յուդա(2)` որդի Յովհաննու, առ որով Աղեքսանդր, որ զԱղեքսանդրիա շինեաց և եկեալ յԵրուսաղէմ Աստուծոյ երկրպագեաց և պատարագեաց. բայց գտի զանուն այսր քահանայապետի Անդրոմաքոս և ոչ Յուդայ ՚ի ստոյգ օրինակս, զոր սպանին Սամարացիքն. Օնիա որդի Ադդեայ. Շմաւոն որդի նորա. Եղիազար եղբայր նորա։

---

(1) Մի օրի. զՇիրայ։ (2) Երկու օրի. Յովդաա։

Զեղբայր սորա զՇմաւոն պարտ է ասել, որ եբարձ զՔրիստոս. քանզի առ Եղիազար առաքեաց Պտղոմէոս, և խնդրեաց զգրեանն և զթարգմանիչսն, յորոց մինն եղբայր սորա էր. որ եկաց երկու հարիւր յիսուն և վեց ամ։ Մանասէ. Օնիայ՝ որդի Շմաւոնի եղբօր Եղիազարու. Յովսեպոս. Շմաւոն՝ հայրն Յեսուայ որ Սիրաքն կոչեցաւ. բայց ասեն զՅեսու Սիրաքայ թէ որդի կոչի կապելոյն. զհայր սորա հրաման ասեն առեալ ՚ի Հոգւոյն չտեսանել զմահ մինչեւ տեսցէ զՕծեալն Աստուծոյ։ Օնիա՝ առ որով Անտիոքոս պաշարեաց զԵրուսաղէմ. և առաքինացան բազումք. որ և զկնի տուաւ քահանայութիւնն Յեսուայ, որ Յասոնն կոչեցաւ՝ եղբայր Օնիայ. և դարձեալ առեալ ՚ի նմանէ ետուն յՕնիայ՝ որ Մենաղոսն կոչեցաւ։ Յետ որոյ Յակիմոս ոմն առնու կաշառօք որ չէր յազգէ քահանայութեանն. վասն որոյ Օնիա՝ Մենաղեայ որդին չոգաւ յԵգիպտոս, և շինեաց անդ քաղաք զԵմուպօլիս. և ՚ի նմա տաճար նման տաճարին Երուսաղէմի յորում աւուրս առաքինացաւ Մատաթէ 'ի Մուդիիմ որդւովք իւրովք. և Յակիմոս սատակեալ 'ի Տեառնէ, քահանայանայ Յուդա Մակաբէ որդի Մատաթեայ. որ և սրբեաց և նորոգեաց զտաճարն յետ երրորդ աւերմանն՝ և արար նաւակատիս։ Յետ սորա Յովնաթանէս եղբայր նորա, և սպանաւ 'ի Տրոպոնեայ(1). ապա Շմաւոն եղբայր նորա և սպանաւ 'ի Պտղոմեայ. և յետ նորա Յովհաննէս որդին Շմաւոնի, որ կոչեցաւ Հիւրկիանոս. և յետ նորա Արիստաբուղոս եղեւ քահանայապետ և առ թագ եւս 'ի վերայ քահանայութեանն. և 'ի Յուդայէ մինչեւ 'ի սա էին զօրապետք և քահանայապետք. և 'ի սմանէ սկսաւ դարձեալ թագաւորութիւնն զկնի չորս հարիւր եւթանասուն և հինգ ամի բառնալոյն. և 'ի մի եկին երկու աստիճանքն զի եկեալ հասեալ էր միածինն որ էր ճշմարտութիւնն. Սա կալեալ զթագաւորութիւն ամ մի, սպանաւ յեղբօրէն յԱնտիգոնեայ. և առ զիշխանութիւնն միւս եղբայրն Յովհաննէս, որ կոչեցաւ Աղեքսանդրոս. և յետ նորա կալաւ կինն իւր Աղեքսանդրիա զերկոսին աստիճանսն և անարգեցան Հրեայքն. որ և յետ այնորիկ ետ զքահանայապետութիւն Հիւրկիանեայ որդւոյ իւրոյ , և զթագաւորութիւնն միւս որդւոյն Արիստաբուղեայ . զոր և Պոմպէոս զօրավարն Հռոմայ կալեալ (1) տարաւ 'ի Հռովմ , և կացոյց 'ի տեղի նորա զՀիւրկիանոս . և եկեալ զօրավարն Հայոց Բարզափրան (2) տարաւ զՀիւրկիանոս գերի և եդիր փոխանակ նորա զԱնտիգոնոս եղբայր նորա : Իսկ Հերովդի երթեալ 'ի Հռովմէ (3) էառ զթագաւորութիւնն և եկեալ յԵրուսաղէմ սպան զԱնտիգոնոս . և բարձան երկոքին աստիճանքն փառաւորք 'ի տանէն Հրէից :

---

(1) Մի օրի. 'ի Տրիփոնեայ։

Քանզի և զկնի աւուրց եկեալ 'ի գերութենէն Հիւրկիանեայ սպան և զնա Հերովդէս : Եւ ժողովուրդն ընտրեցին զԶաքարիա և զԱբիայ զի զմի ոք 'ի նոցանէ կացուսցէ Հերովդէս քահանայապետ . և կացոյց Հերովդէս զԶաքարիա քահանայապետ . բայց ոչ ետ նմա իշխանութիւն պատարագ մատուցանել . զի ոչ ունէր տալ նմա կաշառս : Եւ զի ստիպեաց ժողովուրդն վասն հարկի երեւելի տօնին քաւութեան , և արար զպատարագս նոցա . և լուաւ զաւետիս ծննդեանն որդւոյ իւրոյ Յովհաննու :

Եւ 'ի գալ ամին յետ ծնանելոյն Յովհաննու, լու եղեւ Հերովդի թէ կատարէ Զաքարիա զոմն Հրէից պատարագօք, բարկացաւ եւ ետ սպանանել զնա ընդ մէջ տաճարին եւ սեղանոյն. եւ կացոյց քահանայապետ զԱնանիէլ. ապա զԶաքի. ապա զՇմաւոն, զոր առացեալ էմք յառաջին գիրսն, եւ ապա զԱննա եւ զԿայիափա, ամի ամի փոփոխելով զնոսա կաշառեաւ։ Եւ այսպէս կացին մնացին օծեալքն, մինչեւ եկն Օծեալն Աստուած։

---

(1) Մի օրի . կապեալ : Մի օրի . Բաղզամափրանն :
(2) Մի օրի . Բաղզամիրի : (3) Մի օրի . 'ի Հռովմ :

Եւ թէպէտ ջանային Հրեայքն պինդունել զօրէնսն. եւ անուանել քահանայս եւ քահանայապետս, այն յանդգնութիւն էր, եւ ոչ ըստ հրամանի օրինացն տուողին. որ սահման եդ նմա եւ ոչ անցանէր. այն զի 'ի ծննդեանն նորա բարձեալ էր ըստ Յակովբայ նահապետին, որ օրհնեաց զՅուդայ 'ի դէմս Աստուծոյ Բանին Օծելոյ, եւ եդ զվճիռ ժամանակին երեւման ինքնակալ իշխանութեանն, եւ բնաքար թագաւորութեանն աներզականի եւ յաւիտենականի քաւչապետութեանն. որ ոչ 'ի մարդկանէ այլ 'ի Հօրէ եւ յանձնէ է փառաւորեալ. այն որ 'ի մօտ եղեալ 'ի չարչարանս, զքարիւն զայ ետ Ադամայ վերբեք աստիճանն, որ է 'ի փառս։ Ամբողջութեանն պարգեւեալ 'ի Հօրէ եւ յՈրդւոյ եւ 'ի Հոգւոյն սրբոյ թագաւորութիւնն քահանայութիւն և մարգարէութիւն, բաշխեաց զայն սուրբ Եկեղեցւոյ իւրոյ:

Զթագաւորութիւնն առաքեաց Աբգարու արքային Հայոց և Ասորոց. այն որ նախ քան զչարչարանսն առաքեաց նմա հաւատ. և մեծարեաց զնա բաժանակից արքայութեան իւրոյ. և ընկալաւ 'ի նմանէ երանութիւն և օրհնութիւն և սկիզբն լինել ըստ Քրիստոսի թագաւորութեան հեթանոսաց: Իսկ զքահանայութիւնն ետ սրբոց առաքելոցն յորժամ զաթոռն խոստացաւ, այլ և փըչմամբն և տալովն իշխանութիւն թողուլ զմեղս. և քանզի ամենայն քահանայ վասն մատուցանելոյ պատարագս կայ և ունի նիւթս պատարագի, և տէր զանձն մատոյց խաչիւն երկնաբերձ սեղանոյն. և յաղագս գերազանցեալ գթութեան (1) իւրոյ առ մարդիկ աստուածային բազկօքն և կամաւ բաշխեցաւ յառաքեալս սիրով. և զնոյն ետ յաւիտենական նոքօք ամենայն աշխարհի չենլի անծախելի և միշտ կենդանի. և այսպէս փոխեցաւ հինն 'ի նոր 'ի կատարման աւուրբն 'ի վերնատանն խորհրդեան 'ի մեծի հինգշաբաթին 'ի հին զատկին. զորոյ զյիշատակն անմոռաց ունել հրամայեաց, մինչեւ եկեսցէ ինքն աներեւոյթ աշխարհաւն և նորահրաշ կենօքն , և զգեցցի զեկեղեցի աստուածատեսակ պարեալ զնա . և այնպէս աննիւթապէս և եւս միաւորաբար լցի 'ի վայելս մարմնոյ իւրոյ եկեղեցւոյ յարազուարճ անվախճան կենօք ։

---

(1) Երկու օրի. Թագաւորութեան:

Այսու երեւի ճոխութիւնն Միածնի սըրբոյս և նորոյս Իսրայելի . քանզի յանձն իւր փոխեաց զպաշտօն պատարագին տէրն նորա սոսկալի և քստմնելի և անճառելի մնաց և զօրութեան բանի . և աստ կատարեցաւ խորհուրդըն հայրենի և գլխաւորեցաւ . գագաթն էառ չորս քահանայութեանն անսկզբնաբար յԱստուած կացեալ . և առ մեզ Աստուծով և յԱստուած կատարեալ ։ Եւ ոչ է այսուհետև այլայլութիւն պատարագաց, և ոչ բազմութիւն քահանայից վասն մահու արգելման, և ոչ տաճար ձեռագործ և քակտական . այլ մի նոյն քահանայ և պատարագ և պատարագիչ և տաճար , որ 'ի Հոգւոյն կազմեցաւ . այլ և վերինն է Երուսաղէմ, որոյ գաւիթ է նիւթականս այս եկեղեցի և աղօթարան և ճըշմարտութեան գաղափար . իսկ ճշմարիտն ժողովեալ հաւատն է հանրական կաթուղիկէ , որ ժողովէ զտիեզերս ամենայն 'ի մի խոստովանութիւն և 'ի մի յոյս կոչման 'ի մի կերակուր և 'ի մի վերարկու . և մի կարծիցէ ոք աստ բազմութիւն մահասպան քահանայից. քանզի հաւատն որ է եկեղեցի սուրբ, զայդ ոչ ուսուցանէ. զի ամենեքեան սոքա անդամք են միոյ անմահական գլխոյն, կապեալք ընդ նմա յաւիտենական յուսով. և կենաց'ի կեանըս փոփոխումն՝ մահ ոչ է. և հետեւեալքն նովիմբ պատկերեալք նոյնաբար պատարագաւ և իմանալի խորանով լնուն զտեղի նոցա, և 'ի նմանապէս ճանապարհէն նովին առաջնորդաւ յաջողեալք, լնուն զնոյն օթեվան 'ի փառս բարի և անեղաշէն յարկինն երկնաւոր և գերափառ խորանին:

Իսկ Տեառն մերոյ և Աստուծոյ կատարեալ զքահանայութիւն տանն Ադամայ կենսատու խաչիւն և լուսաբեր յարութեամբն, և համբարձեալ յերկինս հայրենի կառօք ամպեղինօք և կամ հայրաբուն զօրութեամբըն, կատարեաց և զերկնաւորացն սրբագործ քահանայութիւնն. քանզի նախ քան զտիրական տնտեսութիւնն սարկաւագունս ասաց զնոսա գիր. և թէ Դիոնէսիոս քահանայապետութիւն կոչէ զնոսա. յայտ է թէ 'ի Պօղոսէ ուսեալ ասէր: Եւ սուրբն Պօղոս յետ համբարձմանն իմացաւ զնոսա. և թէ նախ քան զտնօրէնութիւնն եւս յիշէ զնոցա պատիւն. քահանայապետ մերս ոչ է այնր հակառակ. զի մեք տեսցուք զզանազանութիւն փառաց նոցա թէ ունէին առաւելութիւն 'ի դատս և 'ի պատիւս. այլ և գոյ առաւելութիւն պատուոյ 'ի սարկաւագունս, որ առ մեզ են. քանզի ոմանք մերձ կան սեղանոյն և հայրապետին. և այլք զդրունս պահեն. են և շնորհօք և գիտութեամբ զանազանեալք, որպէս և անդ թարգմանութիւն կոչման անուանց նոցա՝ ուսուցանէ մեզ զգերազանցութիւն և զառաւելութիւն ոմանց 'ի նոցանէ, և զայլոցն խոնարհութիւն։

Արդ բազում փոյթ եղեւ մեզ ցուցանել, եթէ ամենայն պարգեւքն Աստուծոյ քահանայական շնորհիւ բաշխեցաւ և տրուաւ վերնոց և ներքնոց, և կատարումն 'ի Քրիստոսէ եղեւ հրեղինացն և հողեղինացս. և թէ նախ առ մեզ և ապա առ վերինսն կատարումն այս Աստուծոյն խորք և անզննելի դատաստանին անծանօթութիւնք. ուստի և մարդասէր անուն ժառանգեաց. զի ոչ եթէ զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ զզաւակէն Ադամայ. զի յայտնեսցի արդ իշխանութեանց և պետութեանց, որ յերկինս են 'ի ձեռն եկեղեցւոյ բազմապատիկ իմաստութիւն։ Ո՞չ ապաքէն երաշխաւորէ զմերս բան աստուածընտրին Պօղոս զայս ասելով.

քանզի երկնայինքն մատուցանելով Աստուծոյ բանեղէն պատարագ զփառաբանութիւն ոչ ունին այնպէս սրբավայելուչ պաշտօն պատարագի որովք հաղորդեցին Աստուծոյ , որպէս և արդ զՔրիստոսական խորհուրդս . և ոչ վայելէին յերեւմանէ նորա որպէս և այժմ . քանզի 'ի համբարձման Փրկչին մերոյ Յիսուսի բազմապատկեցաւ խնամութիւն լուսեղինացն դասուց , և առին առաւելութիւն փառաց քահանայական և քահանայապետական ըստ պատշաճի և ըստ չափոյ նոցա , և ըստ դասու առաւելագունիցն ևս առաւել , և նուաստագունիցն ըստ նոցա չափուն. զի որ գուցէ տացի և յաւելցի ասաց տէրն. և այսպէս յարմարական բնութեան նոցա տուաւ պատարագել 'ի տնտեսութեանն Յիսուսի խորհուրդ . դարձեալ և նոքա աննիւթապէս հաղորդին անճառելի քահանայագործութեամբ Քրիստոսի աստուածաստեղծութեանն և աստուածացուցիչ խորհրդոյն , որպէս և մեք զգաստեալ ակն ունիմք 'ի հանդերձեալ կեանսըն , ոչ հացիւ ցորենոյ , և արեամբ խաղողոյ կցորդիլ Աստուծոյ մերոյ Յիսուսի : Որպէս և այժմու կենօքս որ մեզս է անկատար , որով մարմնական կեանքս պահուի 'ի մեզ . և յորմէ գոյաւորի 'ի մեզ արիւն . այսու յարենաև յանմահական կենդանութիւնն (1). Քրիստոսի . զի որպէս յետ յարութեանն եկեր և արբ ընդ առաքելոցն զայս պաշտելի հաց և գինի . արբցէ և յարքայութեան անդ՝ նոր պատճառ միակցութեան ընդ մեզ , որպէս և ինքն խոստացաւ անսուտ բանիւն . սակայն թէպէտ և է մեզ անիմանալի և անասելի երկնաւորացն քահանայութիւնն և քահանայագործութիւնն , բայց անճառ են ասացեալքս 'ի մննդենէ հոգեշունչ բանից ։

Այլ և չէ անտեղի ասել զերիս երրեակ քահանայապետութիւնս նոցա ։ Զառաջինսն քահանայապետս և զերկրորդսն քահանայս և երրորդսն սարկաւագունս . քանզի ամենայն զգալեաց իմանալի յարացոյց արժան է իմանալ ըստ բանին , որ ասացաւ առ Մովսէս , տեսցես և արասցես զամենայն ըստ օրինակին, որ ցուցաւ քեզ 'ի լերինն. և Մովսէս զգալի ինչ ոչ ետես , այլ իմանալի անմարմին աչօք լուսաւորեալ 'ի Տէր . քանզի առ մեզ երեք են կատարելոցն դասք եպիսկոպոս և քահանայ և սարկաւագ ։ Իսկ պատրիարքն աւելի միայն իշխանութեամբն է և պատուով հրամանին . և ոչ եթէ յատուկ ձեռնադրութիւն ունի և շնորհի առումն ։

---

(1) Մի օրի . կերակրութեան Քրիստոսի .

Են և ինն աստիճանք յօրինեալք առ մեզ, ըստ իննեակ դասուցն վերնոց. և է իմանալ զնոսա զանազանս փառօք ըստ դասուցն կարգի, որպէս և առ մեզս. և է եւթն քահանայագործութիւն տեսանել ՚ի սուրբ եկեղեցւոջ ըստ եւթնեկի (1) շնորհաց Հոգւոյն սրբոյ ։

Ա. Եպիսկոպոսն՝ որ է տեսուչ ըման եկեղեցւոյ. և կատարէ քահանայս ։

Բ. Եւ որ ունի պատրիարքութեան իշխանութիւն՝ որ է կաթուղիկոսութիւն, որ կոչի ամենակալ, նա կատարէ զեւղն օծութեանն, և ՚ձեռնադրէ եպիսկոպոս ։

Գ. Իսկ քահանայն որ կոչի հարուստ. որ է փարթամ հոգեւոր շնորհիւն և սրբութեամբ մարմնոյն և գթութեամբ խնամոց առ հօտսն ։

Դ. Առնէ պատարագ արժանաւորացելոց և մկրտէ զմանկունս և օծանէ եւս ։

Ե. Բայց լաւ իցէ թէ եպիսկոպոսն օծցէ ։

Զ. Եւ այս եւս վեցերրորդ քահանայագործութիւն է յեկեղեցւոջ թողութիւն տալ մեղաց խոստովանողին, որ Աստուծոյ միայն է սեպհական թողուլ զմեղս. զոր կոչէ արժանաւոր և գիտուն խոստովանահայրն զՀոգին սուրբ առ ի՛նքն, և նովաւ թողու յանցաւորին ։

---

(1) Մի օրի. ըստ վեցեկի շնորհաց ։

Է. Քահանայագործութիւն յեկեղեցի ձէթ օրհնել յօծումն հիւանդաց առ ժամն. զոր կարէ օրհնել քահանայն ըստ Փրկչին օրինակի ։

Զի արարեալ է զայս և ըստ կանոնացն Յակովբայ եղբօր Տեառն. զի և այս ոչ է առանց Հոգւոյն սրբոյ, որ կարող է բուժումն առնել ցաւոցն և մեղացն թողութիւն. և թէ մեռանիցի հիւանդն բաւական է նմա յօծումն թաղման ըստ մեծին Դէոնիսեայ, զոր գրեաց հրամանաւ առաքելոցն ։

Իսկ զայս ամենայն կարողութիւն զոր գործէ քահանայն, ունի գերագոյնն քահանայապետ. որոյ հրամանաւ կատարին ասացեալքս. զի նախ նա կատարէ զսուրբ խորհուրդն և տայ իշխանութիւն քահանայիցն, զոր ձեռնադրէ զնոյն առնել. և նորընծայ քահանայից արժան է իւրեանցն ձեռօք առնուլ զհաղորդութիւնն իսկոյն, զի երեւեսցի պատիւն զոր էառ և զատեաւ 'ի ժողովրդականութենէ և 'ի սարկաւագութենէ. յայս եւթն զօրութիւն Հոգւոյն տուն իմաստութեան յեցեալ կայ. որով հաստատեցաւ աշխարհ սուրբք եւթամբք յոչէից գոյացեալ.

աքօք կործանի պարիսպք դժոխոց. որով զօրութեամբ յօրինակ՝ այսորիկ հալեցան պարիսպքն Երիքովի շուրջ եկեալ զնոքօք զեւթն օր։ Եւ զեւթնօրեայ արարածոցս լինելութիւն, յեւթն փողսն երգելով եւթնից յեւթներրորդումն աւուրն, և 'ի քանի անգ, թէ հանդերձ Աստուած յաւուրն եւթներրորդի, անկանէին պարիսպքն ադամանդեայք եւթնեքեան. այս է եւթն աչք, որ հայէին ընդ ամենայն երկիրս. և այս բազումս ունի զարդարիչս վկայութիւնս, որ կամիցի սոքօք իմաստասիրել։ Իսկ մեք եկեսցուք այսուհետեւ յաջ կարգին մերոյ։

Արդ յետ համբառնալոյն Տեառն հրամանաւ Հոգւոյն սրբոյ և եկելութեամբ նորին՝ կարգեցան առաքեալքն քահանայապետս աշխարհի յաւուրն սուրբ Պենտեկոստէին. և առաջին եպիսկոպոս եկաց Երուսաղէմ Քրիստոսի եղբայրն Յակոբոս. Եւ հինն էանց և եղեւ ամենայն ինչ նոր. և արար զառաջին պատարագն Յակոբոս բաշխելով զքրիստոսական մարմինն ընկերաց իւրոց և այլոց հաւատացելոցն կերակուր անապական և պտուղ անմահական 'ի կենդանի տնկոյն, ուստի զրկեցաւ հաւաակիզբն մեր Ադամ. և եղեւ սկիզբն նիւթեղէն եկեղեցւոյս վերնաստուէնն և ապա աշխարհամատուռն. և ընկլիզքն հեթանոսաց մկրտութեան ՚ի նոյն առաջին ամին ներքինին քուշայի, որում Փիլիպպոսն քարոզեաց Փոլթամիոս անուն, որ և նա սկսաւ զքարոզութիւն Քուշացւոցն հաւատալ աւետարանին։

Այս սուրբն Թադէոս ել կանխագոյն քան զայլսն ՚ի վիճակ իւր ՚ի Հայս, և մկրտեաց զնորընծայ Թագաւորն հեթանոսաց Աբգար սկիզբն հաւատոյ ամենայն Թագաւորաց. և լուսաւորեաց զՀայս և զԱսորիս, և կատարեցաւ յԱրեւելս ՚ի Սանատրկոյ Թագաւորէ Հայոց, Թողլով անդէն զգեղարդն և զփշեղէն պսակն և զեւղն օծման ՚ի Քրիստոսէ տուեալ, զոր ընդ ինքեան ունէր։

Իսկ Յակոբոս եղբայրն Յովհաննու ՚ի նոյն ամի գնացեալ մինչեւ ՚ի Սպանիա յարեւմուտս կոյս, քարոզեաց անդ զբանն կենաց. և ձգեցաւ բուն խաչին ՚ի Թադէէ և ՚ի Յակոբայ յարեւելս և յարեւմուտս. և դարձաւ անդրէն Յակոբոս յԵրուսաղէմ, և կատարեցաւ ՚ի ձեռն Ագրիպպայ, սրով զգլուխն հատեալ. և ընկեցեալ զմարմինն ՚ի ծովն տարան զնա ալիք ծովուն ՚ի վիճակն իւր ՚ի Սպանիա. զոր և Պօղոս առաքեալն ՚ի գնալն իւր իմացոյց ՚նոցա զամենայն ինչ, և հաստատեաց անդ եկեղեցի։

Իսկ սուրբն Անդրէաս գնացեալ ՚ի Միջերկրեայս յԱսիա և ՚ի շանագլուխս քարոզեաց անդ . և նմա կոչի աթոռն Ասիոյ զառաջինն. մինչեւ յետ երկոտասան ամի չոգաւ անդ Յովհաննէս աստուածաբանն ՚ի փոխման Մարիամու Աստուածածնին . և այս նմա ասացաւ վիճակն ։ Իսկ Անդրէի անուանեցաւ կատանդնուպօլիս որ ՚ի Թրակիա , զի և անդ քարոզեաց նա . և անցեալ ՚ի Սպարտա Ելլադացւոց կատարեցաւ խաչիւ յԱգիատեայ իշխանէ ։

Իսկ սուրբն Թովմաս երթեալ ՚ի կողմն Սաբայ եմուտ ՚ի ներքսագոյն Հնդիկս , քարոզեաց անդ և հաստատեաց եկեղեցի . եւ կատարեցաւ ՚ի Թեմն որ կոչի Չոլխանդ . և առաջին մայրաքաղաք է անդ , որ Իլինջն անուանի , որ է մեծանիստ . և այժմ կայ գերեզման նորա ՚ի Չուձր մեծաշահ քաղաք . և անուն երկրին Չոլխան կոչի ։ Եւ այսպէս մակադրի խոտորնակ խաչին ՚ի Հիւսիս և ՚ի հարաւ ։

Ի նոյն կողմ Թովմայի չոգաւ սուրբ Բարդողովմէոս և եմուտ յաշխարհ Սոդուց , և քարոզեալ անդ դարձաւ ՚ի Հայս ՚ի վիճակն Թադէի . և հաստատեաց անդ եկեղեցի . և կատարեցաւ ՚ի ներքին Հայք ՚ի նոյն թագաւորէն Սանատրկոյ. թողլով անդ որպէս ասեն երիս հատս մանանայ զոր ունէր ընդ ինքեան։

Եւ Յուդայ Յակովբեան և Սիմէոն եղբայր նորա, և նոքա կատարեցան 'ի Հայք։ Իսկ Սիմէոն կանանացի 'ի հարաւս աշխարհի քարոզեալ կատարեցաւ։ Իսկ Մատաթիա փոխանն Յուդայի 'ի Սեկկիլա երթեալ քարոզեաց. և անդէն վկայեաց։ Եւ սուրբն Փիլիպպոս առ ծովեզերեայս շրջեալ կատարեցաւ. առ սահմանօքն Անտիոքայ 'ի Մնբէճ, որ նա ինքն է Յարապոլիս որ կոչի քաղաք քահանայից։

Եւ սուրբ առաքեալն Յակոբոս Ալփեայ քարոզեալ 'ի Միջագետս առ Ասորոք կատարեցաւ 'ի Սրուճ 'ի փառս Աստուծոյ (1)։

---

(1) Հին օրի. Պետրոս ելեալ յԵրուսաղեմէ եկն յԱնտիոք աշակերտելով 'ի ճանապարհին զհեթանոս զերկուս ամս յամելով 'ի գաւն։ Եւ յԱնտիոք եդ հիմն եկեղեցւոյ, և ձեռնադրեաց եպիսկոպոս զԵւոդիոս։ Ասեն թէ զվարշամակ Տեառն ունէր, և զայն արկանէր 'ի վերայ գլխոյ ձեռնադրելոցն և անուանեաց զաշակերտեալսն քրիստոնեայս։ Եւ եդ անդ աթոռ, և գնաց 'ի Հռովմ. և կատարեցաւ 'ի Ներոնէ Պօղոսիւ հանդերձ. յերեքտասան ամի թագաւորութեան նորա 'ի Մայիսի 29։ Եւ Անդրոնիկոս ասէ թէ 'ի 25ն Քանունի։ Եւ զկնի Պետրոսի եկաց եպիսկոպոս 'ի Հռովմ Լինոս առաջին եպիսկոպոսն՝ մետասան ամ։ Եւ յԵրուսաղէմ զկնի Յակովբայ Շմաւոն Կղէովպեանց ամս քառասուն երկու։

Աստանօր դիցուք զգամն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զարարչականն որ ասաց ցՊետրոս. դու ես վէմ հիման Սիոնի. և յայդր վերայ շինեցից զեկեղեցի իմ. և յանձնեաց նմա երիցս զհօտն իւր արածել կենսաբեր արօտիւ. և կալ մնալ արժան է տէրունական հրամանին, ըստ որում եկեալ 'ի Պաղեստինէ սուրբ առաքեալն Պետրոս ընդ Փիւնիկէ ընդ Գերմանիկեցւոց աշխարհն քարոզութեամբ աւետարանին, և մտեալ յԱնտաք եհար նիզակաւ Հոգւոյն զապստամբն սատանայ, որ մտեալ էր անդ, և արար զնա հալածական, և էարկ անդ հիմն եկեղեցւոյ. և անուանեաց անդ զաշակերտեալսն Քրիստոնեայս. և ձեռնադրեաց անդ եպիսկոպոս զԵւոդիոս, եւ հաստատեաց զնա յաթոռ:

Եւ երթեալ անտի գնաց 'ի Հռովմ նախաթոռ ամենայն Եւրոպիոյ. և շինեաց անդ զեկեղեցիս և ձեռնադրեաց անդ եպիսկոպոս զԼինոս: Այլք ասեն եգիտ զնա Պօղոսի ձեռնադրեալ, և հաստատեաց ընդ նմա. ասեն եթէ կրէր ընդ ինքեան զվարշամակն Քրիստոսի և այնու դնէր ձեռս 'ի գլուխս ձեռնադրելոցն: Եւ զկնի Լինոսի Քսեստոս յաջորդեաց զաթոռն սուրբ: Իսկ սուրբն Պետրոս առաքեաց 'ի Հռովմէ զՄարկոս աւետարանիչ ՚ի նախաթոռ քաղաքն ամենայն Լիբիոյ Աղեքսանդրիայ · որ և անդ հաստատեաց եկեղեցի և նախաթոռութիւն. և որպէս ասէ սուրբ հայրն Նիկողոս(1) ՚ի խնդրոյ Թագաւորին Ռոձերի յաղագս նախաթոռութեան, եթէ բաժանեալ է ամենայն աշխարհ յերիս մասունս յԱսիա, յԵւրոպիա, ՚ի Լիբիայ, վասն երից որդւոցն Նոյի, որք ժառանգեցին զերկիր միայն ։

Եւ. զի նախ քան զայլսն ՚ի Պետրոս յանձնեաց Տէր զհօտն հեթանոսաց պարտ էր նմա սահմանել յամենայն հատուածս երկրի սուրբ եկեղեցի զոր և արարն իսկ ։ յԱսիա եդ զաթոռըն Անտիոքու · յԵւրոպիա զաթոռն Հռովմայ, և ՚ի Լիբիայ զաթոռն Աղեքսանդրու ՚ի ձեռն աշակերտին իւրոյ Մարկոսի ։

Արդ ունի աշխարհն Հռովմ զամենայն արեւմուտս մինչեւ ցԲիւզանդիա յարեւելս կոյս և ամենայն կղզիս, և զաշխարհ Սպանիայ և զվեհագոյն նորա զԳալլիա, որ կոչի Իտալիա և եւս վեհագոյն զԲրիտանիան և այլ բազումս ։ Իսկ Անտիոք ունի զամենայն արեւելս որ մինչև ցայժմ կաթուղիկոս ձեռնադրէ · և առաքէ ՚ի Խորասան, և ՚ի Պարսս և ՚ի Բաբելոն և յԵրկինոյպոլիս, որ է քաղաք խաղաղութեան. ունի և զՀայս և զՎիրս և զԱղուանս։ Եւ Աղեքսանդր ունի զամենայն Լիբէացիս զԵւթովպիայ և զՀնդիկս մինչև 'ի Մարմարիտոն։

---

(1) Երկու օրի · Նեղոս ։

Իսկ զի 'ի հինն ունէին քաղաքքս այսոքիկ անուանս պատուոյ, եղան կոչմունք նոցա 'ի վերայ եպիսկոպոսացն. Հռովմ պապ կոչէր յԵւրոպիայ. նոյնպէս և յԱղեքսանդրիայ պապ անուանէր. և Անտիոք պատրիարգ լինէր կոչեցեալ։

Եւ այսպէս կոչին աթոռակալքն պապ Հռովմայն՝ որ ասի երէց. նոյնպէս Աղեքսանդրուն. և Անտիոքուն պատրիարգ՝ որ է նախահայր. բայց 'ի սոսա նախապատիւ է Հռովմայն յՕգոստոսէ հետէ, և ոչ 'ի Պետրոսէ. որպէս Լատինքդ կարծեն. զի թէ այդպէս էր, ապա նախ Անտիոք է պատուելի. զի անդ առաջին ձեռնադրութիւն արար Պետրոս։

Եւ զինչ պիտոյ է ասել զԵրուսաղեմէն, զի քահանայապետն Քրիստոս անդ խաչեցաւ. և քանզի հեռաւագոյն են 'ի միմեանց աթոռքս, հարկ եղեւ 'ի մէջ աշխարհաց և գաւառաց զմայրաքաղաքաց եպիսկոպոսս պատուել. զի նոքա 'ի պատրիարգացն ձեռնադրեալք այլոցն՝ առաջնորդեսցեն մերձակայեցն 'ի հարկաւոր պէտսն. վասն որոյ կոչեցան

Մետրապօլիտք ։ Եւ վասն արքունական քաղաքացն որոյ իշխեն, արքեպիսկոպոս լինին կոչեցեալք ։

Իսկ յորժամ եղեւ մեծ սինհոդոսն ՚ի Նիկիա, պատշաճ համարեցան հայրապետքն պատուել զԵրուսաղէմ՝ զաթոռ սրբոյն Յակովբայ՝, հաւասար երից աթոռոյն. և կոչել զեպիսկոպոս նորա պատրիարք, և զատանել ՚ի վիճակէն Աղեքսանդրու. և տալ նմա Մետրապօլիտս և եպիսկոպոս. քանզի նախ Երուսաղէմ ընդ ձեռամբ Աղեքսանդրու էր յորմէ յաւերմանէն հետէ Հռովմայեցւոց, որ շինեցաւ յԵլանդրիանու Թագաւորէ. որ կոչեցաւ Ելիուպօլիս. և եմուտ Երուսաղէմ ընդ իշխանութեամբ Կեսարու, Պաղեստինեայ Մետրապօլտի. քանզի զկնի աւերմանն ձեռնադրեաց Երուսաղեմի եպիսկոպոս Մետրապօլիտն Կեսարու. և յորժամ պատրիարք եղեւ յԵրուսաղէմ, ձեռնադրեաց զձեռնադրողն իւր զԿեսարացին ։

Եւ քանզի պարտ էր մարմնոյ եկեղեցւոյ կատարեալ լինել զգայարանօք, զի ամենայն մարմին կատարեալ կենդանի ընդ հինգ զգայութեամբ է. վասն այնորիկ զԿոստանդնուպօլիս որ ընդ Հռովմայ իշխանութեամբն էր և Երակլիոյ մետրապօլիտն ձեռնադրէր նմա եպիսկոպոս, յորժամ եղեւ ժողովն առ Թէոդոսիւ՝ պատուեցաւ Թագաւորեալ քաղաքն և եղև պատրիարգարան և զատեաւ 'ի Հռովմայ. և յոլով մասն Ասիոյ եմուտ ընդ իշխանուԹեամբ նորա. քանզի Թէպէտ Կոստանդիանոս նոր Հռովմ կոչեաց զքաղաքն իւր, և զաւետարանչին զՅովհաննու զերեզմանն անդ կամեցաւ փոխել և աԹոռ կոչել զնա. այլ ոչ հաստատեցաւ մինչեւ ցայնժամ որ ասացաքն առ Թէոդոսիւ ։

Այլ և յանուն աւետարանչացն ոմանք դնեն զաԹոռս այս. զՀռովմայն՝ Ղուկայ կոչեն. և զԱնտիոքայն՝ ՄատԹէոսի, և զԿոստանդնուպօլսին՝ Յովհաննու ։

Բայց Ղուկաս որդի Կոստանդեայ Ասուրոյ և մօր յունի յԱնտիոք գրեաց զաւետարանն և տեղւոյն յայտնի է հռչակեալ եկեղեցին ուր գրեացն. և ՄատԹէոս յԵրուսաղէմ գրեաց. և Յովհաննէս 'ի Պատմոս, ընդէ՞ր ուր գրեցան չիցեն աԹոռք. և նոքօք կոչին ։

Սակայն երկոտասան առաքելոցն աԹոռս խոստացաւ Տէրն 'ի հանդերձեալն. աստէն ընդէ՞ր ոչ մանաւանդ կայցին աԹոռս. այլ ըստ ասացեալ խորհրդեանդ յօրինեցան աԹոռք. Գիտել արժան է և զայս զի են յարեւելս մեծամեծ և փառաւոր իշխանուԹիւնք՝ զոր մեծ

Հայք կոչեմք որ է սրբազան աթոռ և ազատ և ինքնագլուխ· որ ունի ընդ ինքեամբ բազում մետրապօլիտս և եպիսկոպոսս յոլովս, և ոչինչ վճարէ յաթոռն Հռոմայ որպէս և ամենայն պատրիարգունք երկրի· և ոչ առնուն ձեռնադրութիւն ուստեք, և ոչ ՚ի Հռոմայ որպէս և այլքդ· քանզի պատուեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի՝ և մանաւանդ ստացեալ սուրբ առաքելոյն որք անդ կատարեցան· և վասն այնորիկ նոցա կաթուղիկոսն յիւրոց եպիսկոպոսացն առնու ձեռնադրութիւն մինչեւ ցայսօր ժամանակի· և է պատուական և արժանապատիւ աթոռ· որպէս և կղզին Կիպրոս· զի և նա ինքնագլուխ է և ոչ ումեք հնազանդեցաւ· քանզի գտեալ եղեւ անդ գերեզմանն Բառնաբայ, և ՚ի վերայ սրտին աւետարանն Մատթէոսի ։

Է՛ ինքնագլուխ և արքեպիսկոպոսն Բուլղարաց· քանզի Բուլղարք ոչ են բուն Բուլղարք, այլ քանզի Բուլղարիոս ՚ի նոյնն տիրեաց, յանուն նորա կոչեցան Բուլղարք· և յաղագս յաղթող թագաւորութեանն ոչ ումեք հնազանդի արքեպիսկոպոսն նորա, այլ յիւրոցն առնու ձեռնադրութիւն որպէս և Հայոցն մեծաց։ որ թէպէտ Վասիլ կայսրն ծիրանածին հնազանդեաց զնոսա, այլ ոչ թոզէն զպատիւ աթոռոյն իւրեանց . և ոչ եկաց այնր հակառակ , զի ոչ վնասէր ինչ հաւատոյ սրբութեան :

Արդ այսպէս կարգ քահանայութեան Տեառն մերոյ Յիսուսի տարածեցաւ ընդ աշխարհս ամենայն. և է մի քահանայութիւն և ոչ բազում. զոր սահմանէ աւանդն հաւատոյ ուղղափառութեան , զոր կարգեցին առաքեալքն , և աւետարանիչքն գրեցին և աւանդեցին , և Հոգին սուրբ կնքեաց և կատարեաց :

Իսկ արմատն(1) չարութեան ոչ կարաց հայել հրացեալ աչօք և նախանձայոյզ սրտիւք. վասն որոյ ոչ դադարեաց տալ զմիեղէնութիւն սուրբ եկեղեցւոյ, և հնարել պատճառ քակման զէն առեալ զոմանց իշխանասիրութիւն և զկէսոց ագահութիւն , և զայլոց ընդարձակութիւն և զմարմնասիրութիւն և զոմանց զախտասիրութիւն , և ոռոգեաց այսուքիւկ զանկուածն Քրիստոսի , և արար պատերազմ 'ի տան միում և 'ի մարմնի միում, և ընդդէմ ամենայն բարութեանցն Աստուծոյ զոր արար ազգի մարդկան . եդիտ նա հակառակ սիրոյն զատելութիւնն , և խաղաղութեան՝ զպատերազմն , և խոնարհութեան՝ զհպարտութիւնն , և չափաւորութեան՝ զառաւելաստացութիւնն , և ճշմարտութեան՝ զկեղծաւորութիւնն , և լուսոյ՝ զխաւարն , և կենացն՝ զմահն , և այսոքիւք որոշմամբ փարթամացեալ մշակն անօրէնութեան որ կրէ անվաստակ զերկինս և զերկիր , և որ այլ եւս հրաշալին է զանհասականն անդունդս . որք են խորութեան խորոցն Աստուծոյ ըմբռնմունք (այսինքն է) հաւատոյն վարժմնալէք որով զարդարի սուրբն Սիոն , և պարծի 'ի փառս անզուգականս . զսա ջանաց շարժել զօրութիւնն ապստամբ . և թէպէտ զիրքն ոչ կարաց խախտել , զի աստուածապատկան(1) էր , սակայն զբազումս 'ի բաց տարաւ 'ի նմանէ . և կապտեաց կողոպտեաց և արար ծաղր , և ամօթալից . և ոչ սակաւ շարժեաց արտասուս և նախանձ առողջ իւրն մնացելոց եղբարց որք ցուցին մեծ հանդէս նովին հաւատով խրախուսեալք յԱստուած . և ձայն տուեալ միմեանց սպառազինեցան աւետարանական պատրաստութեամբն . և ամենայն զօրութեամբ ջանացան անդրէն դարձուցանել զհեռացեալսն 'ի կենաց , այսինքն առեալ զմեծ Սիւնհոդոսն ըստ թուոյ կենդանարար Երրորդութեանն , զՆիկիայն , զԿոստանդնուպօլսին զԵփեսոսին, որ թէ զկորուսեալսն ոչ կարացին գտանել, զի գիրն լցցի 'ի վերայ համախոտոր կործանելոյն, այլ զկացեալսն 'ի փարախն Յիսուսի և զշինուածն որ ունի զհիմն, 'ի զգուշութիւն պահեցին և պահեսցեն. որպէս և է տեսանել գթութեամբն Աստուծոյ ընդ յուսոյ և վստահակաց հարցն մերոց ոչ սակաւաթիւ զմնացեալսն յերախտիսն Քրիստոսի և զպատկերեալսն կեցուցիչ հաւատովքն ։

---

(1) Ոմանք կամամարտն :

---

(1) Երեք օրի . աստուածարկա .

Եւ ահա ամենայն Եգիպտոս և Քուշացիք և Հնդկաստան աշխարհք և քաղաքք մեծամեծք որպէս Պանիան, Պուրշաւուր, Խազնի, Լահուր, Խմչիր, Պանկլուր (1), Տելուլ, Սումնաթա(2), Քամթայթ, Պլատրա որ հարիւր հազար գեւղ ունի, Ճարմիքն, որ երկու հարիւր հազար գեւղ ունի, և այլք բազումք մինչև 'ի Սելան կղզին. որ ասեն թէ զԱդամ հանեալ 'ի դրախտէն Աստուած՝ անդ բնակեցոյց զառաջինն. և այլ աշխարհք ընդարձակք ուր հերձուածչարութեան ոչ եմուտ. և որպէս յառաջին գիրսն ցուցաք թէ քսան եւ չորս ղերատ է աշխարհս, և տասն և վեց ղերատն նոքա են. որ կրոն յուղղափառութեան, և ամենայն Յակոբիկ Ասորիք և ամենայն

---

(1) Մի օրի. Պանկլար ։ (2) Մի օրի. Սոմնթա ։

Հայք զոր պահեաց շնորհն Աստուծոյ 'ի սահման հաւատոյ ուղղափառութեան կրօնից. և այսօր քահանայութեան և քահանայապետութեան և հայրապետութեան աթոռք արկեալ են 'ի նոսա, յաջողեալք աջովն Տեառն զօրութեանց 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Յորս և լցի քաղցր ողորմութեան Աստուծոյ մարդասիրին պարգևուքն, և արժանիս արասցէ մասինն որոց իւրոց հաւատոց և գործոց որ այսպէս դաւանեմ:

Դաւանութիւն Միխայելի պատրիարքի Ասորւոց:

Դաւանեմ զնա, սուրբ և զուգափառ Երրորդութիւն աներբ և անուր անսկիզբն և անվախճան և միշտ անկարօտ և բոլորեալ յամենայն կատարեալ բարւոք իմացեալ, զոր բնաբար ունի, և աննուազաբար տայ կարօտիցն ինքն ունելով զամենայն. Երրորդութիւն կատարեալ անճառելի և աննուազ՝ անձամբ բաժանեալ. և է զի անուամբ և 'ի միութիւն կացեալ և կայ փառաւորեալ և փառաւորի 'ի բնութեանն յաստուածութեանն և 'ի զօրութեանն և 'ի կամսն յիմաստութիւնն

՚ի գործն ՚ի մեծութեանն և մանաւանդ յանհասութեանն և յանասելի ողորմութեանն, յոր հաւատամ յայսմանէ և ՚ի սիրոյ եկեալ միոյն անձամբ չափ ՚ի կոյսն, որ սուրբ էր հոգւով և մարմնով, և ՚ի պատճառս փրկութեան մերոյ մարդացեալ ՚ի նմանէ սահմանաւ բնութեանս մերոյ հոգի, շունչ, միտք, մարմին, որ ինչ և է կատարեալ մարդ մեղուցեալ բնութիւնս Ադամայ ուստի, Մարիամն էր, զոր առեալ Աստուած գործեաց առանց շփոթման և այլայլման անփոփոխ լուսոյն ճառագայթն զփոփոխականութիւն և զապականութիւն բնութեանս սրբեալ անփոփոխ և անախտ գործեաց զթանձրութիւնն պահելով. և ոչ յանմարմնութիւն դարձուցեալ, և ոչ զանմարմին աստուածութիւնն ՚ի մարմին շրջեալ. այլ որպէս ոչ գոյ ասել և ոչ իմանալ միաւորեալ քան զամենայն օրինակ խառնման նոր և չքնաղ խառնումն: Վասն որոյ մինն որ յէութենէն Հօր առ ՚ի կուսէն զմերս գոյութիւն, մնաց միածին մի որդի մի անձն մի Քրիստոս. և ճըշմարտապէս մի բնութիւն, մի կամք, և մի ախորժակք, մի գործ, մի ծնունդ կուսութեամբ, մի մայր առանց հօր որ և նախ քան զյաւիտեանս առանց մօր ծնեալ: Եւ խոստովանիմ զմայրն Էմմանուէլի Աստուածածին մինչեւ յաւիտեան. և զԷմմանուէլն Աստուած մինչեւ յաւիտեան նովին մարմնովն. և որ զհետ ծննդեանն եկն զամենայն տնօրինականսն խոստովանիմ գործ Աստուծոյ. զխոնարհագոյնսն զբարձրագոյնսն և զկիրսն անքամբասելի, զոր վասն մեր կրեաց, ոչ բաժանեմ, այլ մի յատուկ ասեմ 'ի Տէրն իմ, և ոչ իմանամ շփոթումն։ Եւ նզովեմ զիմացողն և զասողն շփոթումն։

Եւ նոյնպէս զկիրս խաչին խոստովանիմ Աստուծոյ խաչ և մահ. ոչ էական բնութեանըն ասեմ մահ կամ 'ի մարմնոյն բաժանումն, այլ զիմ բնութիւնն միացեալ յաստուածութիւնն և աստուածացեալ Աստուած խոստովանիմ, որով մեռաւ անմահն զբանական հոգին աւանդելով 'ի ձեռս հօր. աստուածութիւնն ոչ բաժանեալ 'ի մարմնոյն և 'ի հոգւոյն միաւորեալ անքակելի. ըստ որում և զդժոխքն աւերէր հոգւովն և զմահ սպանանէր. և մարմինն լուծանէր զապականութիւնն, որպէս զԱստուած և զԱստուծոյ մարմին ընդ ամենայն գերեզմանս արձակելով ճառագայթս, յարուցանելով զբազումս, գիտելով զսահմանեալ ժամանակն 'ի լանջս երկրի հզօրագոյն թուովն յառնէր ոչ միայնաքար ըստ

Յովնանու 'ի ձկանէն, այլ լրմամբ հոգւոյն մահակուլ, որ յԱդամայ 'ի դժոխոց և յոլովիւք մարմնովք հողացելովք 'ի գերեզմանացս ելանէր յերկինս կուսութեամբ անլոյծ կնքոյն 'ի գերեզմանէն, որպէս յարգանդէն Մարիամու. և վերացեալ մտանէր յերկինս կուսութեամբ անձեղքելիս՝ որպէս 'ի վերնատունն դրամբք անբացիւք. զի յայտ լինի եթէ 'ի վեր է քան զբնութիւն մարմնոյ. զի մարմնոյ բնութիւն մահկանացու ապականացու և ախտալի եթէ յատկացի ըստ ինքեան, և ընդ մարմնին ոչ կարէ մտանել անծանօթապէս, այլ տերունականն:

Եւ տէրն լիով ունելով զճշմարիտն մարդ իւրով սահմանովն, սակայն շողացեալ և փայլատակեալ աստուածութեամբն ներգործէր զվայելչականն Բանին, զոր շօշափեցին ձեռօք դասք առաքելոցն, և տեսին երանելի աչօք զանտեսակն տեսակացեալ:

Խոստովանիմ զնա նովին մարմնովն կեալ 'ի փառս հայրենիս դատաւոր արդարութեանըն կենդանեաց և մեռելոց:

Հաւատամ 'ի միշտ Հայրն, հաւատամ 'ի միշտ Որդին, հաւատամ 'ի միշտ ելեալն 'ի Հօրէ Հոգին սուրբ. յայն՝ որ առնու յորդւոյ եւ լնու զամենայն, եւ ինքն ոչ լինի լցեալ յումեքէ :

Հաւատամ 'ի նոյն Երրորդութենէն եղեալ յոչէից զեղեալքս ամենայն, եւ զԱդամ պատկերեալ բարւոյն, եւ յանցանօք լուծեալ 'ի մահ անձնիշխան կամօք. եւ 'ի նոյն արարչէ վերստին նորոգեալ տնտեսութեամբ միոյն Միածնի կամօք Հօր եւ Հոգւոյն :

Հաւատամ 'ի համօրէն յարութիւնն բանականացս որ յԱդամայ, 'ի նոյն զօրութենէ ստեղծողին եւ նորոգողին :

Հաւատամ յարդար յիրաւունս աւուրն ըստ արժանեաց, եւ 'ի հատուցումն յաւիտենական կենաց եւ տանջանաց :

Այս է իմոյս հաւատոյ համառօտ խոստովանութիւն, եւ ամենայն հաւատացելոց ուղղափառաց. որոց մասնաւորեսցէ զմեզ Տէր 'ի շնորհս ողորմութեան իւրոյ.

Արդ զայս դաւանութիւն յոլով մասն աշխարհաց ունի. եւ պահէ ուղղապէս քաղաքավարութեամբ, զոր պարտ է յամենայն քահանայապետութեան տալ զայս խոստովանութիւն մեծ քահանայապետին : Եւ պահանջել յայնցանէ զորս ձեռնադրելն կամին. եւ տալ յանձնառնել նզովել զգայլսն ոչխարանիշան, զամենայն զՀերետիկոսացն հարկեալ յիսուն և ինն հերձուածն մինչեւ ցայսօր ժամանակի. և դաւանել զամենայն ուղղափառսն, զհովիւսն եկեղեցւոյ որք ընդ ճշմարտութիւն առաջնորդեցին հօտին Քրիստոսի, և յորոց կենսաբեր սնուցին. և ապա իջանէ Հոգին յայնպիսի սեղանն օրհնութեան և հանգչի յընծայեալքն։ Այն որ գիտէ ճանաչել զօտարն և զքննասիրսն որպէս զգիտնականն և զիմաստուն հովիւս կացուցանել, որ կարասցէ 'ի կեանս կոչել զարժանիսն կենաց, այսինքն առ Աստուած ածել. զի այս է պարիսպ առաջնորդութեան խաչիւ և արեամբ գնեալ հաւատացելոց. ոչ միայն 'ի չարացն 'ի բաց կալ, այլ և բարեացն զհետ գնալ. զի ոչ սակաւ արիւն և քիրտն գիտէ հեղեալ վասն իւր սուրբ եկեղեցի. այլ զմեծն զԱստուծոյն և զաստուածակիր արանցն, որոյ զգուշութիւն պիտոյ է, որք խնամեն զսա յիւրաքանչիւր ժամանակս ։

Կանգնեցին և Յոյնք քսան և վեց աստիճանս յեկեղեցի, և եւթն այլ եւս զատ առանձինն, որ ոմանք 'ի նոցանէ հարկաւորք են յոյժ ։

Ա. Որպէս շրջել ընդ վանորայս և տեսանել զաղօթութիւն և զշինութիւն, և պատմել Արք եպիսկոպոսին ։

Բ. Որպէս որք տեսանեն զպարկեշտութիւն կանանց վանաց:

Գ. Խնամատարքն՝ որք տեսանեն թէ ոք են զուր և զրպարտութեամբ արգելեալք ՚ի բանտս յիշխանացն, և պատմել հայրապետին. զի փոյթ տարասցէ և հանցէ զնոսա:

Դ. Ընտիր դատաւորքն, որք քննեն իրաւամբք զդատաստանս աթոռոյն ըստ գրոց և կանոնաց հրամանի:

Ե. Յօրինողքն գրոց որք ուսուցանեն զուսումն ընթեռնլոյ զգիրն սուրբ ՚ի ժամ պաշտամանն:

Զ. Յարմարողն երգեցողութեան Սաղմոսին և Շարականին:

Է. Որ տեսանէ թէ որում եկեղեցւոյ պիտոյ է առաջնորդ, և յիշեցուցանէ հայրապետին:

Ը. Որ շրջի ընդ քաղաքս և ընդ գեօղս և տեսանէ զյօրինեալ կարգս եկեղեցւոյ, թէ որպէս առնիցեն:

Թ. Որ պահէ զսենեակ հայրապետին և զգուշանայ:

Ժ. Որ պահէ զորբութիւնսն և տայ ՚ի տեսութիւն խնդրողացն,

ԺԱ. Որ կայ ՚ի գլուխ (դասուց) սարկաւագացն և դպրացն, և բաժանէ զգործս նոցա, և չտայ զմիմեամբք ելանել։

ԺԲ․ Արք կրեն զմոմեղէնս առաջի սուրբ խորհրդոյն։

Ա՛ն և սուրբ եկեղեցւոյ տասն միաքն զոր պարտին արկանել 'ի սեղանաւորս արժանացեալքն․ քանզի ըստ առաքելոյ եդ․ Աստուած յեկեղեցւոյ առաքեալս, մարգարէս, վարդապետս, զօրութիւնս, շնորհս բժշկութեան, օգնութիւնս, վարիչս, ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց, ընտրութիւնս հոգւոց․ քանզի հաւատամք եթէ վնոյն հոգի որ յայնժամ աղբիւրանայր աւազանաւն, այժմ ունի եկեղեցի ըստ ժամանակիս պիտոյից․ զոր թէ ոք անաչառու վստահութեամբ, և անագահ հաւատով և անախտական մտօք վարէ զառաջնորդութիւն եկեղեցւոյ՝ ըստ Քրիստոսի զքահանայութիւնս, ինչ ոչ թաքչի 'ի նմանէ և ոչ սխալէ յընտրողութենէ և 'ի զօրութենէ բժշկութեան, 'ի նոյն պարգեւաց Հոգւոյն առաջնորդեալ և յաջողեալ 'ի հաճոյն Աստուծոյ․ 'ի փոքու ասա հաւատարիմ գըտեալ և բազմին արժանանայ 'ի պատշաճ յաւիտենին։

Ունի սուրբ եկեղեցի զշնորհս և պատիւ սրբոյ Աստուածածնին անախտ ծնանելով որդիս Աստուծոյ ոչ յարենէ և ոչ 'ի կամաց մարմնոյ այլ 'ի Հոգւոյն սրբոյ և 'ի զօրութենէ բարձրելոյն 'ի ժառանգակցութիւն և յեղբայրակցութիւն (1) միածնի Որդւոյն Աստուծոյ ։

Ունի յինքեան և 'ի վերայ ինքեան սուրբ եկեղեցի զնշան կենսակիր վերբերականն (2) 'ի նոյն պատիւ պաշտեցեալ 'ի մէնջ որով բաշխին 'ի մեզ երկնաւոր շնորհացն աւետութիւնք ։

Վասն որոյ հանդէս տօնելի է նոցին՝ որք շրջին 'ի մէջ նորա ահիւ և դողութեամբ լինել 'ի տան Աստուծոյ կենդանւոյ. զի ահ մեծ է անկանել 'ի ձեռս Աստուծոյ, կենդանւոյ և ազդոյ է սուրբն յորդորումն մանր քննութեանց և դատելոցն (3) որպէս հորդեցին ճանապարհ հիմնարկուքն և հիմունքն եկեղեցւոյ ։

Եւ մի նմանել խարթոյն և կամ որոտմանցն, որք յետոյ մտին, զորոց զանուանսն գըրեմ քաղքենակօք զատուցեալ եւ թէ աթոռոյդ աթոռակալաց մինչեւ յամենեցունն խոստմանն (4) զորս թողումք յիշատակ կենդանութեան ։

---

(1) Մի օրի. յազգակցութիւն ։

(2) Երկու օրի. վերբերելութեան ։

(3) Երկու օրի. դատելոցն

(4) Երեք օրի. խորանն ։

ԱԹՈՌԱԿԱԼՔ ԱՆՏԻՈՔԱՅ

ամ.					ամ.
	Ա.	Պետրոս առ̃քլ.		Դոմնոս.	13
	Բ.	Եւոդիոս. մ.րժ	ԺԸ.	Տիմոթէոս.	5
3		Լուգիոս.	ԺԹ.	Կիւրղիոս.	8
12	Գ.	Իգնատիոս.	Ի.	Տուրիանոս.	1
13	Դ.	Իրոն.	ԻԱ.	Փաղթալիոս.	8
10	Ե.	Կոռնեղիոս.	ԻԲ.	Փիլոկիոս.	2
11	Զ.	Ուրիանոս.	ԻԳ.	Եւստաթէոս.	10
17	Է.	Թէոփիլոս.	ԻԴ.	Յուլիոս.	1
18	Ը.	Մաքսիմոս.	ԻԵ.	Սալիս արիանոս	
10	Թ.	Սերապիոն.		պիղծ (1).	
12	Ժ.	Ասկղիպադես.	ԻԶ.	Ուրբոս արիանոս.	
10	ԺԱ.	Փիլիպպոս.	ԻԷ.	Փիլիդիս (2) հրա.	
12	ԺԲ.	Սաբինոս.	ԻԸ.	Ստեփանէ հրա.	
30	ԺԳ.	Բաբեղ.	ԻԹ.	Լեւոնդիս հրա.	
20	ԺԴ.	Բաւլոս.	Լ.	Եւդոքսիոս հրա.	
8	ԺԵ.	Դեմետրիոս.	ԼԱ.	Մելիտոս.	
	ԺԶ.	Պօղոս Սամոսա-	ԼԲ.	Ուղիոս.	2
		տացին հրձ.	ԼԳ.	Պուլիանոս.	1
	ԺԷ.	Դոմնինոս. կամ	ԼԴ.	Փլաւիանոս.	7

---

(1) Երկու օրի. Ալեքսանդրիոս: Մի օրի. Ոյայիս Արիանոս: Մի օրի. Ալէս Արիոս:

(2) Մի օրի. Փիլիբոս. Մի օրի. Փիլիկոս:

ամ.		
1	ԼԵ.	Եւագրիոս.
7	ԼԶ.	Պորփիւրիոս.
10	ԼԷ.	Աղեքսանդրոս.
33	ԼԸ.	Յովհաննէս.
32	ԼԹ.	Թէոդոտոս.
	Խ.	Դոմնոս հրա. արիոսական.
	ԽԱ.	Մաքսիմոս հրա. արիոսական.
	ԽԲ.	Ակակիոս հրա. երկաբնակ։
	ԽԳ.	Մարտուրի հրա.
	ԽԴ.	Պետրէ հլծէլ.
	ԽԵ.	Սանիդոն երկաբնակ։
	ԽԶ.	Սերտոլիւրոս կամ Մարտիրոս եկիրընկ
35	ԽԷ.	Յուլիանոս.
35	ԽԸ.	Ստեփաննոս.
	ԽԹ.	Ստեփաննոս երկաբնակ։

		ամ.
Ծ.	Փլաբիէ ընկեցեալն. (1)	
ԾԱ.	Սուրիակէ	
ԾԲ.	Պօղէ հրէական.	
ԾԳ.	Եւփրաս երկաբնակ (2)։	
ԾԴ.	Եփրեմ հրա.	
ԾԵ.	Դոմնոս հրա.	
ԾԶ.	Սարգիս.	7
ԾԷ.	Պօղէ սեաւն.	
ԾԸ.	Պետրէ վրջ̃ պտ.	
ԾԹ.	Յուլիանէ.	4
Կ.	Աթանաս.	41
ԿԱ.	Յովհաննէս.	42
ԿԲ.	Դիոդորոս. (4)	43
ԿԳ.	Սեւերիանոս.	44
ԿԴ.	Յուլիէ.	45
ԿԵ.	Եղիա.	
ԿԶ.	Աթանաս.	
ԿԷ.	Յովհան.	
ԿԸ.	Իսահակ.	

---

(1) Հին օրի. յառաջ քան զսա յաւելու. Փելետիոս զոմն հերետիկոս։

(2) Հին օրի. Ուղոմպիոս եւ- նաքինոյ 'ի տեղի Սեւերեայ։ Այս երբեմն յառաջ քան զսա Սեւերիոս անն ընդել աթոռակալ. որոյ փոխանակ եդին զսա. Թէպէտ չնշանակի եւ ոչ 'ի միում յօրինակաց այս Սեւերիոս։

(3) Երկու օրի. Դամանակոս։

(4) Աստի սկսեալ նոցունց զհնանուանք 'ի ցանկս օրինակաց և 'ի հին օրինակն տառաբեալ։

ԿԹ. Աթանաս.
Հ. Գէորգ.
ՀԱ. Յովսէփ հրս.
ՀԲ. Կիւրակոս.
ՀԳ. Դիոնեսիոս.
ՀԴ. Յովհաննէս.
ՀԵ. Իգնատիոս.
ՀԶ. Դիոդոս.
ՀԷ. Դիոնեսիոս.
ՀԸ. Յովհաննէս.
ՀԹ. Յովհան.
Ձ. Վասիլիոս.
ՁԱ. Յովհան.
ՁԲ. Դիոնեսիոս.
ՁԳ. Աբրահամ:
ՁԴ. Յովհաննէս.
ՁԵ. Աթանաս.
ՁԶ. Յովհաննէս.
ՁԷ. Դիոնեսիոս.
ՁԸ. Յովհաննէս.
ՁԹ. Աթանաս.
Ղ. Յովհաննէս.
ՂԱ. Վասիլիոս.
ՂԲ. Աբրոն.
ՂԳ. Դիոնեսիոս.
ՂԴ. Աթանաս.
ՂԵ. Յովհան.
ՂԶ. Գրիգոր.
ՂԷ. Յովհան.
ՂԸ. Աթանաս.
ՂԹ. Միխայէլ ես:

ԱԹՈՌԱԿԱԼՔ ՀՌՈՎՄԱՅ

	Ա.	Պետրոս առ̃քլ.	Զ.	Աղեքսանդրոս.	12
12	Բ.	Լինոս.	Է.	Քսեստոս.	30
11	Գ.	Անիատոս.	Ը.	Աղեսփոր. (1)	11
9	Դ.	Կղեմէս.	Թ.	Մեղուխանոս.	4
8	Ե.	Եւարտոս.	Ժ.	Փիոս.	15

(1) Հին օրի. Տաղեսփորոս:

ամ.		
11	ԺԱ.	Անիկետոս.
9	ԺԲ.	Սովտեր.
8	ԺԳ.	Եւպտուրիոս.
5	ԺԴ.	Կեղեստիանոս.
15	ԺԵ.	Զղուրժորոս.
70	ԺԶ.	Վեկտոր.
9	ԺԷ.	Ուրբանոս.
5	ԺԸ.	Փունդիանոս.
8	ԺԹ.	Անթիտոս.
13	Ի.	Պաւբիանոս.
2	ԻԱ.	Կուռնելիոս.
4	ԻԲ.	Ղուկիոս.
1	ԻԳ.	Ստեփաննոս.
11	ԻԴ.	Քսեստոս.
8	ԻԵ.	Դիոնէսիոս.
8	ԻԶ.	Դիմէսիոս.
1	ԻԷ.	Եւտուկիոս.
2	ԻԸ.	Գայիոս.
1	ԻԹ.	Մարկեղլիոս.
1	Լ.	Եւսեբի.
21	ԼԱ.	Մելիտոս.
23	ԼԲ.	Սեղբեստրոս.
2	ԼԳ.	Մարկոս.
15	ԼԴ.	Սեղուլիանոս.(1)
4	ԼԵ.	Լիբերիոս.

		ամ.
ԼԶ.	Փլուքսիոս.	1
ԼԷ.	Դամասոս.	18
ԼԸ.	Սիրիկիանոս.	5
ԼԹ.	Անաստաս.	3
Խ.	Իննոկենտիոս.	15
ԽԱ.	Զոսիմոսիէ.	7
ԽԲ.	Կեղեստիանոս.	9
ԽԳ.	Լեւոն երկարանակ.	
ԽԴ.	Դաղուս.	8
ԽԵ.	Իլարիանոս.	7
ԽԶ.	Սիմպելիկիոս.	1
ԽԷ.	Անաստասիէ.	11
ԽԸ.	Սիմաքէ. աստի յառաջ երկանանկք.	
ԽԹ.	Թովպանոս.	2
Ծ.	Որմիսդէս.	10
ԾԱ.	Յովհաննէս.	14
ԾԲ.	Փելիքս.	35
ԾԳ.	Նիքլիքէ.(2)	20
ԾԴ.	Ագաբոս.	1
ԾԵ.	Սեղբէտոս. կամ Սեղբեստրոս.	1
ԾԶ.	Պղակլիոս.	3
ԾԷ.	Մարտինոս*.	

---

(1) Հին օրի. Սիլէոս:

(2) Հին օրի. Բիքիլոս.

*Այս Մարտինոս անօրէն ի բաց եղեալ ջնջելն Աս-

ԱԹՈՌԱԿԱԼՔ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ

ամ.		
22	Ա.	Մարկոս աւետարանիչ.
22	Բ.	Անիէոս.
13	Գ.	Մէլիոս (1).
11	Դ.	Կարտոնիոս.
12	Ե.	Փրոգիոս.
11	Զ.	Յուստոս.
13	Է.	Եմենիոս.
10	Ը.	Մարկիանոս.
14	Թ.	Կալէրոս.
12	Ժ.	Ագրիպոս.
14	ԺԱ.	Յուլիոսէ.
63	ԺԲ.	Դեմետրիոս.
16	ԺԳ.	Իթիմոն.
7	ԺԴ.	Դիմինոս(2).
18	ԺԵ.	Մաքսիմոս.

		ամ.
ԺԶ.	Թէոմնաս.	19
ԺԷ.	Պետրոս. վկայն է.	10
ԺԸ.	Աքիւղղաս.	6
ԺԹ.	Աղէքսանդր. սա ժողովին Նիկիոյ.	20
Ի.	Աթանաս.	46
ԻԱ.	Պետրոս.	7
ԻԲ.	Ղուկիոս արիանոս պիղծ.	
ԻԳ.	Տիմոթ. եղբայր Պետրոսի.	4
ԻԴ.	Թէոփիլոս.	28
ԻԵ.	Կիւրեղ մեծ. սա է ժողովին Եփեսոսի.	26
ԻԶ.	Դէոսկորոս.	7
ԻԷ.	Պրոտերին (3) հրա-	

տուեծոյ, հաստատեաց զաւրէնքըն Յովհաննիսի Ղրամատիկոսին. որ մինչեւ ցայդ վայր ասէին երկու բնութիւնս. և արդ. հաստատեցին երկու բընութիւն երկու կամս. երկու ներգործութիւնս: Եւ վասն բուռն իշխանութեան Հոռանից տարածեցաւ աղանդն ընդ ամենայն ազգս՝ որոմն դառնութեան:

( ) Հին օրի. Միլոս: Մի օրի. Մելիտոս:

(2) Հին օրի. Դիոնէսիոս:

(3) Երկու օրի. Պերոզ: Մի օրի. Սանդիպրոս:

ամ.					ամ.
20	ԻԸ.	Տիմոթէոս հրա.	ԽԵ.	Յոհան երկաբնակ.	7
3	ԻԹ.	Տիմոթէոս (1).	ԽԶ.	Դամիանոս.	7
	Լ.	Յովհան հրձ.	ԽԷ.	Անաստաս.	1
12	ԼԱ.	Պետրոս.	ԽԸ.	Անդրոնիկոս.	2
7	ԼԲ.	Աթանաս.	ԽԹ.	Բենիամին.	30
9	ԼԳ.	Յովհաննէս.	Ծ.	Կաւրէա հրձ.	
11	ԼԴ.	Յովհան միւս:	ԾԱ.	Ագաթոն.	1
1	ԼԵ.	Դիոսկորոս.	ԾԲ.	Յովհաննէս.	2
11	ԼԶ.	Տիմոթէոս.	ԾԳ.	Շմաւոն.	3
28	ԼԷ.	Դէոդոր (2).	ԾԴ.	Սոակբէ (3).	1
1	ԼԸ.	Պետրոս.	ԾԵ.	Աղէքսանդրոս.	2
	ԼԹ.	Գայիանէ հրձ.	ԾԶ.	Կոզմաս.	40
40	Խ.	Պօղոս.	ԾԷ.	Յովհան.	
1	ԽԱ.	Օուկլիոս.	ԾԸ.	Մարկոս.	
2	ԽԲ.	Ապողինար.	ԾԹ.	Յակոբ.	
3	ԽԳ.	Թէոդորէ.	Կ.	Շմաւոն.	
1	ԽԴ.	Պետրէ.	ԿԱ.	Յովսէփ.	

---

(1) Զամանէ հինն եւ ամանք ասեն ուղղափառ. եւ ոմանք հերձուածող կամ ուրացող:

(2) Հին օրի. Դիոդոսիոս Մի օրի. Դիոսկորոս:

(3) Հին օրի. Սահակ:

ԱԹՈՌԱԿԱԼՔ ԵՓԵՍՈՍԻ

ամ.

12 Ա. Անդրէաս առաքեալ.
10 Բ. Ստախոս.
14 Գ. Տիմոթէոս.
17 Դ. Պօղիկարպոս.
15 Ե. Յուլիս (1).
8 Զ. Սապքէ.
8 Է. Դիոգինիէ (2).
13 Ը. Անտամթէ.
9 Թ. Ալաթորոս.
10 Ժ. Փիլիպպոս.
11 ԺԱ. Պօլիկարպոս.
5 ԺԲ. Սուլլոս.

ամ.

ԺԳ. Լաւրենտիոս. 8
ԺԴ. Ալուբանոս. 7
ԺԵ. Պրոտանիկէ. 18
ԺԶ. Սարկոս. 13
ԺԷ. Կիւրեղ. 10
ԺԸ. Կուռնելիոս (3). 8
ԺԹ. Դիդիոս. 7
Ի. Դոմետրիէ (4). 11
ԻԱ. Պրոբաս առ որ փոխեցաւ աթոռն Եփեսոսի 'ի Կոստանդնուպօլիս:

ԱԹՈՌԱԿԱԼՔ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ

5 Ա. Պրոբաս (5). Բ. Ալեքսանդրոս 23

---

(1) Հին օրի. Պուլիդ: Երկու օրի. Պուլիս:

(2) Հին օրի. Դիոգենիս:

(3) Երկու օրի. Կոռնէլիոս:

(4) Երկու օրի. Դեմետրիէ:

(5) Սա այս Պրոբաս վերջին Աթոռակալ Եփեսոսի փոխեաց զաթոռն 'ի Կոստանդնուպօլիս:

Զ Կոստանդնուպօլսի Աթոռակալաց ցանկ 'ի հին օրինակէն առեալ դնեմք աստ զի այլքն օրինակք, անկարգըս գտանուորէն զասաս վասն

1	Գ.	Պօղոս.	Ի.	Իգնատիոս.	
	Դ.	Մակեդոն.	ԻԱ.	Ակակիոս.	2
		հոգեմարտն է.	ԻԲ.	Պլաւիտտաս.	4
1	Ե.	Եւսեբի.	ԻԳ.	Եւփիմոս հրտ.	
	Զ.	Եւդոքսի հրձ.	ԻԴ.	Մակեդոն հրձ.	
	Է.	Եւագր հրձ.	ԻԵ.	Տիմոթէոս.	
	Ը.	Դիմոփիլէ հրձ.	ԻԶ.	Յովհաննէս.	5
10	Թ.	Գրիգոր Նազիանզացի, աստուածաբան		երկարանակ.	
			ԻԷ.	Եպիփան.	23
8	Ժ.	Նեկտարիոս.	ԻԸ.	Անթիմոս.	1
7	ԺԱ.	Յոհան ոսկեբերան.	ԻԹ.	Յոհան. 'ի սմանէ	
1	ԺԲ.	Եբեոքիոս.		յուջ երկարանունք էին:	
10	ԺԳ.	Ատտիկէ.	Լ.	Յովհաննէս.	1
2	ԺԴ.	Սիսինիոս.	ԼԱ.	Կիւրիակէ.	1
	ԺԵ.	Նեստոր.	ԼԲ.	Սարգիս:	1
		չարափառ.	ԼԳ.	Մինաս.	3
2	ԺԶ.	Մաքսիմիանոս.	ԼԴ.	Գերմանիոս.	17
12	ԺԷ.	Պրոկղոս.	ԼԵ.	Նուգոսոս.	7
	ԺԸ.	Փլաբիոս հրտ.	ԼԶ.	Բուրոս.	1
	ԺԹ.	Անատոլ հրտ.	ԼԷ.	Պօղոս.	1

հերետիկոսութեան եւ հեր- թողեալ:
ձուածոյն պատուաչինն 'ի յետս

* * *

ԱԹՈՌԱԿԱԼՔ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ամ.

Ա. Յակոբ.

42 Բ. Շմաւոն.

Գ. Յուստոս.

Դ. Զակքէ.

Ե. Տուբիայ.

Զ. Բենիամին.

Է. Յովհան.

Ը. Մատթէոս.

Թ. Փիլիպպոս.

Ժ. Սենեկաս.

ԺԱ. Յուստոս.

ԺԲ. Ղեւի.

ԺԳ. Եփրեմ.

ԺԴ. Յովսէփ.

ԺԵ. Աղեքսանդրիոս.

ԺԶ. Սիմաքոս.

ԺԷ. Գայիոս.

ԺԸ. Յուլիոս.

ԺԹ. Կապիտոն.

Ի. Յուդա որք ամենեքեան հրեայք էին

ԻԱ. Նարկեսոս.

ԻԲ. Մարկոս.

ԻԳ. Կասիանէ.

ԻԴ. Պոպլիոս.

ԻԵ. Մաքսիմոս.

ԻԶ. Յուլիոս.

ԻԷ. Վաղէս.

ԻԸ. Դողքիոս.

ԻԹ. Նարկէսոս.

Լ. Դիոսէ.

ԼԱ. Գերմանիէ.

ԼԲ. Գորդիոս.

ԼԳ. Նարկեսոս.

ԼԴ. Աղեքսանդր.

ԼԵ. Հիմենոս.

ԼԶ. Փերմիա.

ԼԷ. Հերմոն.

ԼԸ. Դապոսոս.

ԼԹ. Հրմէ սա է ձեռնաւթիւն Ս. Գրիգորի Լուսաւորչին.

Խ. Մակար.

ԽԱ. Մաքսիմոս. զորոյ խաւարեցուցին զաչս.

ԽԲ. Կիւրեղ.

ԽԳ. Ըկակլիոս հրձ.
ԽԴ. Սեւերոս.
ԽԵ. Դամասիոս։
ԽԶ. Կիւրեղ յաքսորից դարձաւ և արար ըզժողովն.
ԽԷ. Յովհան.
ԽԸ. Պրայլոս.
ԽԹ. Պրովալիս.
Ծ. Յովբնաղիս.
ԾԱ. Անաստաս ուղ.
ԾԲ. Մերտուրիոս.
ԾԳ. Սելուստոս.
ԾԴ. Վլիաս.
ԾԵ. Յովհան *։

---

* Հին օրինակն այսպէս ունի զցանկ պատրիարքացն Երուսաղեմի. Յակովբոս. Շմաւոն. Յուստոս. Զաքէ. Տուբիա. Բենիամին. Յովհան. Մատթէոս. Փիլիպպոս. Սենեկէս. Յուստոս. Ղեւի, Եփրեմ. Յովսէփ. Յուդա. ամենեքեան հրէայք էին։ Նարկեսոս. Մարկոս. Կասիանոս. Պոպղիոս. Մաքսիմոս. Յուլիանոս. Գայիոս. Սիմաքոս. Գայիոս. Յուլիանոս. Կապիտոս. Վաղէս. Դոքղիանոս. Նարկեսոս. Դիոս., Գերմանիոն. Գրիգորիոս. Նարկեսոս վերստին. Աղեքսանդրոս. Մազաբենոս. Հեմենոս. Ըզբեդայ. Հերմոնիոս. յԵրուսաղէմ ած է. Դապատոս. Հերմոն. սա է ձեռնադրեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչին։ Մակար. Մաքսիմոս. զորա աչսն հանին անօրէնք. Կիւրեղ. երեքտասան ամ, և տարագրեցաւ, Ակակիոս, որ զԿիւրեղ տարագրեաց. Սեւերիան. սա եղեւ փոխանակ [illegible], որ մէջ [illegible]։ Դամասոս. Կիւրեղ. սա արար զժողովն ընծայութեան։ Յովհաննէս. ամս ԻԷ. Պրայլիոս. Պրովալիս՝ է ամ։ Յուբնաղոս Խ։ Թէոդոս. զսա եդին ուղղափառն փոխանակ Յուբինաղի։ Անաստասիոս ուղղափառ. Մերտուրիոս հերետիկոսն. Սելուստիոս հերետիկոսն. Վլիաս. Յովհաննէս. Պետրոս. Մակար. սա էր [illegible] ուղղափառացն. Եւստաթէոս.

Արդ մինչեւ ցայս վայր յայտնի և 'ի ծածուկ լինէին յաթոռակալացս յայսցանէ ուղղափառութեան, վասն որոյ բերաք զչարս նոցա 'ի գրի աստ ։ Իսկ վասն զի զայսու առաջնորդօք բնաւին 'ի բաց կացին 'ի ճշմարտութենէն, զի՞նչ կայ մեր և նոցա շարել զնոսա 'ի կարգս ուղղոց, զորս և ոչ հայրապետս արժան է մեզ զնոսա կոչել և զանուանս նոցա արձանացուցանել, և կամ բնաւ իսկ յիշատակել, և ոչ պատշաճաւոր է զապականեալ նիւթն դնել 'ի վերայ սուրբ հիմանն ։ Բայց մեք մի տրտմեսցուք 'ի վերայ այսուցիկ, այլ և մխիթարեսցուք, քան զի եթող մեզ շնորհք գթութեանն Քրիստոսի զսուրբ եկեղեցին Հայաստանեայց, զաւակ կենդանութեան և սերմն ազնուական անձին ուղղութեան, զկայսն միշտ՝ զշառաւեղեալն յանխախտ արմատոյն, (1) զպատկերեալն յիմայն Յիսուսէ զանդրանիկ հաւատով 'ի ձեռն Աբգարու արքայի ։ Որ ունէր ընդ իշխանութեամբ իւրով զՀայս և զԱսորիս և նստէր յՈւռհայ քաղաքի, թողեալ զարեւելս 'ի Սանատրուկ ազգական իւր. և էառ 'ի ձեռն հաւատոց և զերկնից արքայութիւնն ։

---

(1) Հնագոյն օրին. մի ունի ըղձալիւոյն ։ Ա. Ս. Թարգմանութիւն մի ունի՝ ըղձելոյն յանխախտ արմատոյն և ըղձայիշելեալն 'ի նմին իսկ 'ի ծրէրէն ։

Բանզի լուաւ նա զլուր սքանչելեաց Տեառն մերոյ զոր կատարէր յերկիրն Հրէաստանի, և առաքեաց առ նա զԱնանէ հաւատարիմ իւր ինն ՚արամբք՝ աղաչել զՏէր գալ առ նա յԵդեսիա ; և թագաւորել ընդ նմա անհոգութեամբ և ապրել ՚ի սպանող և յապստամբ ազգէն Հրէից ։ Եւ կատարէր գիրն՝ եթէ յաւուր յայնմիկ եկեսցեն արք տասն խնդրել զՏէր կարօտութեամբ ՚ի սէր ջերմութեան, զորս յիշատակէ Յովհաննէս աւետարանիչ ՚ի ձեռն Փիլիպպոսի և Անդրէի մատուցեալ առ Յիսուս ․ և նորա պատասխանեալ ասաց ․ Եհաս ժամ զի փառաւորեսցի Որդի մարդոյ ։ այսինքն թէ՝ արքայն հեթանոսաց եկաց դուռն հաւատոյ ամենայն հեթանոսաց փառաւորել զնա ։

Եւ դարձեալ զկատարումն տնտեսութեանն զեկոյց զխաչն, զի եկեալ հասեալ էր, և չէր ժամանակն գնալ նմա և խօսել ՚ի չարչարանացն որովք ապրէր ամենայն մարդ որ գալոց էր յաշխարհ ։ Եւ տայր հրաման Թովմայի առաքելոյն գրել առ Աբգար երանութեամբ հանդերձ զպատճառս չերթալոյն, և զխնդիրն նորա լնուլ խոստանայր ՚ի ձեռն միոյ յաշակերտաց իւրոց զոր առաքելոց էր առ նա զկնի յարութեան իւրոյ․ զոր և արար իսկ՝ առաքելով զԹադէոս 'ի թուոյ աշակերտաց իւրոց, որ եկն առ ծովեզերօքն 'ի Կիւլիկիա, և ել անտի 'ի Կեսարիա Հայոց, և արկ անդ հիմունս եկեղեցւոյ և ձեռնադրեաց զառաջինն անդ եպիսկոպոս զԹէոփիլոս․ և Ճանապարհորդեալ զվերին կողմամբն լուսաւոր քարոզութեամբն՝ անց ընդ Եփրատ և եկն յՈւռհայ, և լուսաւորեաց զնա արքայիւն իւրով․ և հաստատեալ եկեղեցիս, և թողեալ անդ առաջնորդս զԱդդէ կերպասագործն՝ ել 'ի կողմանս արեւելից առ Սանատրուկ նամակաւն արքայի։ Եւ ընկալեալ եղև անդ Առաքեալն յերկիւղէն Աբգարու առ ժամանակ մի հաւատացեալ իշխանին ծանծաղապէս և բազմաց ընդ նմա։ Բայց զի փութով վճարեաց նախընծայն 'ի թագաւորս Աբգարիոս զկեանս, և անհոգացեալ Սանատրուկ իշխան՝ թագաւորեաց միահեծան և սպան զԱռաքեալն և զդուստրն իւր կոյս սուրբ զհաւատացեալն 'ի Վրիխաւոս։ Եւ եղեւ փոխանորդ առաքելոյն Զաքարիա եպիսկոպոս։

Եւ զկնի այնորիկ եկն 'ի նոյն վիճակ Բարդողոմէոս և 'ի նոյն թագաւորէ կատարեցաւ, և բարձաւ համարձակութիւնն հաւատացելոց ։ Բայց հաւատն հաստատեալ առաքելական հիմամբ՝ ոչ պակասեաց մինչեւ ՚ի գալն առ նոսա սուրբ նահատակացն Հռիփսիմեանց· եւ ՚ի պատճառս նոցա հաւատալ մեծին Տրդատայ ՚ի նմին ցեղէ Աբգարու՝ ՚ի ձեռն մեծահանդէս վաստակաւորին Գրիգորի . որ եւ նա ցեղակից անդրանկին պսակաւորին ՚ի Քրիստոս Աբգարու երանեցելոյն ՚ի Տեառնէ ։ Ուստի երեւեալ կենդանութիւնն պտղաւէտ երկնահաս եւ երկնաւոր՝ սքանչելին եւ նորանշանն այն եւ տիեզերալոյս վկայն՝ որոտումն աշխարհաշարժ , որ միանգամայն ելից զերկիր ծագէ ՚ի ծագ զարմանագործ նշանօք որ նովաւն գործեցաւ ՚ի փառս Աստուծոյ . նա էառ եւ ժառանգեաց զաստիճան եւ զանունն եւ զաթոռ առաքելոցն որոց՝ Թադէի եւ Բարդողոմէի . որ ելից զպակասութիւն չարչարանացն Քրիստոսի ՚ի մարմնի իւրում , եւ զմնացուածս գործոց հոգեւոր մշակացն յանդաստանս նոցա . եւ ելից աւետեացն (1)լուսով ծայրէ ՚ի ծայր զամենայն Հայաստանեայս եւ զԱղուանս եւ զՎիրս եւ որ շուրջ ըզնոքօք աշխարհք եւ իշխանութիւնք , զորս ըստ կարգի փոխեցին որդիք նորա զաստիճանն եւ զառաքինութիւն . զգոյշ վարուք եւ անաշառ բանիւք զընթացս իւրեանց կատարելով 'ի պատուիրանս Աստուծոյ պէսպէս վարուք և նահատակութեամբ ։

---

(1) Հնագոյն օրի . յաստեղ ։

Եւ թէպէտ արեանառուք նորա դադարեցին ժամանակօք, այլ քրտանցն նորա բարութիւնք, այսինքն ուղղափառ հաւատն որով ժառանգեցոյց (1) զժողովուրդ իւր, ոչ սպառեցաւ յաւիտեանց, այլ եկաց մնաց հաստատուն յըստ հոգւոյ ծնունդս նորա. որք կացին անյաղթելիս ընդդէմ բազմատարափ փորձանաց և դիպուածոց աջոյ և ձախոյ, այսինքն փառօք և պատուանալեօք և վշտօք անհատելեօք յորդւոյն Յունաց, որք 'ի ժամանակս բարձրութեան իւրեանց ջանային ընդ անյաղթելի վիմին ։

Եւ զի թէպէտ ոմանք 'ի նոցանէ տկարացան ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի 'ի սակաւ ժամանակս և 'ի տեղիս, այլ ճշմարտութեան արմատն մնաց հիմամբ կենդանի, մինչև անցին (2) աւուրք և դարձեալ էառ հիմն զշինուածն իւր վայելչական աստուածարկու և առաքելաջան արդեանցն շայեկանութեամբ յաղօթս մեծի Լուսաւորչին և մինչև ցյաւիտեան արթուն և հըսկող անձին նորա յաղագս հօտին իւրոյ առաջի Աստուծոյ։ Եւ եղեն նոքա մեզ Ասորւոցս ուղղափառաց յոլով նպաստ և մխիթարութիւն և վկայք հաստատութեան. զի թէպէտ և աթոռն Աղեքսանդրու և ամենայն Հնդկաստան և Եթովպիա ազգք և լեզուք և (1) ժողովուրդք ընդարձակք և բազում և ճոխ թագաւորութիւնք դաւանակիցք են մեր և տեղի պարծանաց, այլ սակս հեռաւորութեանն և բացակայութեանն միայն համբաւովն և ոչ արդեամբք կարեն մեզ կարեկցել և ամբառնալ զգլուխս մեր առաջի նեղչաց մերոց։ Իսկ ազգն Հայաստանեայց զի մօտաւորք են և ընդ մեզ խառնեալ, բազում եղեն մեզ առիթ բարեպաշտութեան, և գրեթէ նոքօք կարացաք տեւել ամենայն անցիցն որ եկին 'ի վերայ մեր մինչեւ ցայսօր ժամանակի, և ուխտ խաղաղութեան և դաշին սիրոյ է 'ի միջի մերում հաստատեալ։ Վասն որոյ մեր սկիզբն արարեալ խորհրդոյ քահանայութեան յանսկզբնական Հօրէ՝ աւարտեսցուք 'ի նոցա քահանայապետութիւնն, որ շնորհօքն Աստուծոյ կայ և կացցէ մինչեւ ցյաւիտեան։

---

(1) Հնագոյն օրի. ղայլէնս ։ ունէին յանցաւորս ։

(2) Նորագոյն օրինակքն

Եւ զի շնորհք քահանայութեանս զոր

---

(1) Հնագոյն օրի. ուղինք.

ասացաք՝ 'ի Քրիստոս լցեալ կատարմամբ, որ լիապէս տուաւ առաքելոցն որոց և նոքօք յամենայն տիեզերս բաշխեցաւ, յորոց լըւաք եթէ չորքն մտին 'ի Հայս և քարոզեցին և անդէն կատարեցան: Նախ Թադէոս, և ապա Բարդուղիմէոս, և Յուդա և Սիմոն եղբարք՝ որք էին որդիք Յովսեփու՝ եղբարք Յակովբայ, որք և Տեառն մերոյ կոչին ըստ մարմնոյ: Սոքա արկին առ նոսա հիմն հաւատոյ և եղեն նոցա քահանայապետք առաջին զոր կարգեսցուք ոճով, և զըստ հոգւոյ ծնունդս նոցա հասուսցուք մինչև առ մեզ, և յանգ հանգցուք զասպարէզս վաստակոց մերոց՝ հայելով 'ի նաւահանգիստ խոստմանն Աստուծոյ, որ է սկիզբն և կատարումն ամենայն բարեաց և կայ 'ի փառս իւր անբաւապէս:

Ա․ Յիսուս Քրիստոս անսկիզբն 'ի ժամանակէ, և սկիզբն և կատարումն ամենայն քահանայութեան՝ որդին Աստուծոյ:

Բ․ Առաքեալն Յիսուսի Թադէ՝ յազգէ Շմաւոնի, որ նա ինքն է Ղեբէոս՝ որ է սիրտ, և կոչեցաւ Թադէոս՝ որ է սիրելի:

Գ․ Առաքեալն Բարդուղիմէոս 'ի ցեղէ Ասերայ, որոյ անուն կոչի զարմ ստոյգ Աստուծոյ ըստ հաւատոյ և հոգւոյ:

Դ. Շռայքեալն Յուդայ Յակովբեան 'ի ցեղէ Յուդայ, որ կայ 'ի յԱրմի Հայոց։

Ե. Շռայքեալն Սիմոն յեւթանասնից անտի, որ գնաց յԱուսթաւա գաւառ 'ի Թիկանց Արմեայ, մտեալ 'ի վիճակ եղբօրն՝ որ նա ինքն է Յուդայ՝ որդիք Յովսեփու։

Զ. Շռայքեալն(1) Գաղխու յեւթանասնից անտի, որ չոգաւ հրամանաւ Թադէոսի 'ի մեծն Հայք եւ առ հիւսիսիւ, եւ լուեալ ըզկատարումն առաքելոյն Թադէի՝ դարձաւ եմուտ 'ի փոքր Սիւնիք, եւ կրօնաւորեալ անդէն կատարեցաւ, եւ տեղին յանուն նորա կոչեցաւ Գաղխա։

Այս են սկզբմունք եւ հիմունք հաւատոյ եւ քահանայապետութեան Հայաստանեայց եւ սերմանողք կենսաբեր ցորենոյն։ Այլ ունեն նշան շնորհաց բերեալ հին եւ նոր՝ 'ի Հայս, երեք մասանց 'ի Բարդողոմէոսէ եւ եդեալ տուփով 'ի հիմն եկեղեցւոյ որ հանդէպ հայի Գողթան գաւառի առ Երասխ գետով, 'ի տեղւոջն զոր Աղարթն կոչեն։ Այլ գեղարդն աստուածամուխ պսակաւն փշեայ 'ի Թադէոսէ բերեալ, եւ կայ անդէն 'ի Հայս 'ի պարծանս ազգին եւ 'ի փառս Աստուծոյ։ Բայց երկիրն այն արեամբք եւ քրտամբք հագեւոր մշակացն ուռուցեալ՝ պահեալ յինքեան ծածկապէս արմատս և ուռս սակաւս 'ի տեղիս տեղիս, մինչեւ երկնեալ ծնաւ երկիւղիւ և ահիւն Աստուծոյ զմարդն երկնաւոր՝ ըղորբավայելուչ զաւակն սրբոց առաքելոց և զարմանապէս փոխանորդ նոցին զպարթեւն Գրիգորիոս, զոր և 'ի չորս առաջնոյն կարգեցուք քահանայապետուց (1):

---

(1) Հնագոյն օրի. Թադէոս։

Է. Տէր Գրիգորիոս սուրբ պատրիարքն 'ի 17 ամի Տրդատայ արքայի ժառանգէ զաթոռ սուրբ առաքելոյն յ307 ամի գալստեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և պաշտէ ամս 30, և կատարի անյայտ երեւակի:

Ը. Տէր սուրբն Արիստակէս որդի նորին՝ ամս 7, և կատարի վկայութեամբ օրինացն Քրիստոսի յիշխանէն Արքեղայոսէ:

Թ. Տէր սուրբն Վրթանէս ամս 15, և վճարի իւրով մահուամբ:

Ժ. Տէր սուրբն Յուսիկ՝ ամս 6, և վկայէ Տեառն 'ի Տիրանայ թագաւորէ:

ԺԱ. Տէր սուրբն Փառներսեհ յայլմէ ցեղէ՝ ամս 5, յամս Տիրանայ:

---

(1) Միւս այլ թարգմանութիւնն յիշատակէ 'ի գաւազանագրին և զսոսա. Եղիշէ, Խադ, Թէոփիլոս, Ադդէ, Զաքարիա, որք քարոզեցին նախ քան զԹադէոս որ յեւթանասնից:

ԺԲ. Տէր սուրբն Ներսէս Թոռն որդւոյն Գրիգորի մեծի՝ ամս 34, յամս Արշակայ և Պապայ, և վկայէ Տեառն պատուիրանին ՚ի Պապայ։

ԺԳ. Տէր Սահակ յայլմէ ցեղէ՝ ամս 4, յամս Վարազդատայ։

ԺԴ. Տէր Զաւէն նորին եղբայր՝ ամս 4, յամս Արշակայ և Վաղարշակայ Թագաւորաց և եղբարց որդւոյն Պապայ։

ԺԵ. Տէր Ասպուրակէս նոցին եղբայր Սահակայ և Զաւենայ՝ ամս 7։

ԺԶ. Տէր սուրբն Սահակ Թոռն մեծին Գրիգորի՝ ամս 51, յամս Վռամշապհոյ եւ Խոսրովու եղբօր նորա և Շապհոյ որդւոյ Յազկերտի և Արտաշրի Թագաւորացն, առ որով բարձան Արշակունի Թագաւորք, և մարզպան եղեւ սուրբն Վարդան Մամիկոնեան՝ աշխարհին։

ԺԷ. Տէր Յովսէփ աշակերտ որդւոյն Սահակայ՝ ամս 2։

ԺԸ. Տէր Գիւտ՝ ամս 15, ՚ի մարզպանութեան Վարդանայ։

ԺԹ. Տէր սուրբ Յովհան Մանդակունի՝ ամս 12, ՚ի մարզպանութեան Մանգնասի Մամիկոնոյ։

Ի. Տէր Բարգէն՝ ամս 5, յաւուրս նոյն Մանդնոսի։

ԻԱ. Տէր Մուշէ՝ ամս 8, 'ի մարզպանութեան Վահանայ Մամիկոնեայ։

ԻԲ. Տէր Սահակ՝ ամս 5, և սա 'ի ժամանակս Մամիկոնեայ Վահանայ։

ԻԳ. Տէր Քրիստափոր՝ ամս 5, 'ի նոյն աւուրս Վահանայ։

ԻԴ. Տէր Ղեւոնդ՝ ամս 2։

ԻԵ. Տէր Ներսէս՝ ամս 9, 'ի նոյն ժամանակս Վահանայ։

ԻԶ. Տէր Յովհաննէս՝ ամս 15, 'ի մարզպանութեանն Վարդանայ Մամիկոնեայ։

ԻԷ. Տէր Մովսէս ամս՝ 30, 'ի մարզպանութեան Մժեժայ, առ որով եղաւ Թուականն Հայոց, և վկայեաց սուրբն Իզտբուզիտ 'ի փառս որդւոյն Աստուծոյ։

ԻԸ. Տէր Աբրահամ՝ ամս 23, 'ի մարզպանութեան Տաճկաց։

ԻԹ. Տէր Յովհաննէս 'ի Կոգովտայ՝ ամըս 26, 'ի մարզպանութեանն Դաւթի։ Սա եդ աթոռ 'ի Կոտայն յաւուրս Մօրկայ Թագաւորին Յունաց։

Լ. Տէր Կոմիտաս յԱղցից՝ ամս 8, յաւուրս Դաւթի մարզպանի։ Սա ընդարձակեաց զվկայարանն սրբոց Հռիփսիմեանց։

ԼԱ. Տէր Քրիստափոր յազատ տանէ յազգէ Աբրահամու՝ ամս 4, առ նոյն իշխանաւն Դաւթի։

ԼԲ. Տէր Եզր՝ տկարացեալն կաշառօք 'ի Հերակլեայ. բայց մեծ մասն Հայոց և վանորայքն մնաց շնորհիւ Տեառն և յաղօթս սրբոյն Գրիգորի։

ԼԳ. Տէր Ներսէս շինող մեծ եկեղեցւոյն 'ի Վաղարշապատ և սրբոյն Սարգսի 'ի Դըւին և Վիրապին, 'ի մարզպանութեան Թէոդորոսի ամս 20։

ԼԴ. Տէր Անաստաս յԱկոռւոյ՝ ամս 6, յաւուրս Համազասպայ մարզպանութեանն։

ԼԵ. Տէր Իսրայէլ Վանանդացի՝ ամս 10։ Սա եհան զՆերսէս հերետիկոս 'ի Պարտաւայ՝ կամօք Աղուանից, որ էր նոցա կաթուղիկոս։

ԼԶ. Տէր Սահակ 'ի Ձորոյ փորոյ 'ի գեղջէ Արքունեայ՝ ամս 25, 'ի մարզպանութեանն Ներսեհի և Աշոտոյ։ Սա էր որ եկն 'ի Խառան և անդ մեռաւ։

ԼԷ. Տէր Եղիա յԱղիովտայ՝ ամս 13, 'ի մարզպանութեանն Սմբատայ։

ԼԸ. Տէր սուրբն Յովհան յՕձնայ, իմաստնասէրն և նշանագործն՝ ամս 10։ Սա եբարձ զչարն Եզրայ։

ԼԹ․ Տէր Դաւիթ 'ի Կոտայից՝ ամս 13 յանիշխանութեանն ։

Խ․ Տէր սուրբն Տրդատ 'ի Վանանդայ՝ ամս 23 ։

ԽԱ․ Տէր Տրդատ միւսն՝ ամս 3, յանիշխանութեանն ։

ԽԲ․ Տէր Սիոն Մաղձնեւաց՝ ամս 8, յանիշխանութեանն ։

ԽԳ․ Տէր Եսայի Եղիպատրուշ գեղջէ՝ ամս 13 ։

ԽԴ․ Տէր Ստեփանոս՝ ամ մի, յանիշխանութեանն ։

ԽԵ․ Տէր Յովաբ՝ ամիս 6, 'ի Կիւրապաղաղատէն ։

ԽԶ․ Տէր Սողոմոն 'ի Գառնոյ՝ ամ մի, յանիշխանութեանն ։

ԽԷ․ Տէր Գէորգ 'ի Բիւրականց՝ ամս 3։

ԽԸ․ Տէր Յովսէփ յեկեղեցւոյն որբոյն Գրիգորի ամս 11, այր բարի ։

ԽԹ․ Տէր Դաւիթ 'ի Սապաղայ՝ ամս 25 ։

Ծ․ Տէր Յովհաննէս 'ի Կոտայից՝ ամս 22, յիշխանութեան Սմբատայ ։

ԾԱ․ Տէր Զաքարիա 'ի Ձագայ՝ ամս 22, յաւուրս Աշոտոյ իշխանաց իշխանի, որ և թագաւորեաց 'ի տանէ Բագրատունեաց. և Յիսէ որդին Շեխայ ալամ եռ, այսինքն դըրոշ՝ Զաքարիայ, բառնալ 'ի վերայ նորա խաչ։

ԾԲ. Տէր Գէորգ 'ի Գառնոյ՝ ամս 21, յաւուրս թագաւորութեանն Աշոտոյ որդւոյ Սմբատայ որ գերեցաւն, և Համամ բարեպաշտ թագաւորն Աղուանից եհան։

ԾԳ. Տէր սուրբն Մաշտոց խոտաճարակն՝ ամս 7։

ԾԴ. Տէր Յովհաննէս՝ ամս 28, 'ի թագաւորութեանն Սմբատայ և որդւոյ նորին Աշոտոյ։

ԾԵ. Տէր Ստեփանոս՝ ամ մի։

ԾԶ. Տէր Եղիշէ ամս 7։

ԾԷ. Տէր Թէոդորոս՝ ամս 11, 'ի թագաւորութեանն Աշոտոյ, և եղբօր իւրոյ Աբասայ։

ԾԸ. Տէր Անանիա Մոկացի՝ ամս 22, յամս թագաւորացն Աբասայ և Աշոտոյ որդւոյ նորին։

ԾԹ. Տէր Վահան՝ ամ մի, յամս նոյն թագաւորաց։

Կ. Տէր. Ստեփանոս՝ ամս 2, 'ի թագաւորութեանն Աշոտոյ։

ԿԱ. Տէր Խաչիկ՝ ամս 22, 'ի թագաւորութեանն Աշոտոյ և Աբասայ։

ԿԲ. Տէր Սարգիս՝ ամ մի եկաց, և եթող զաթոռն և աղօթից պարապեաց։

ԿԳ. Տէր Պետրոս՝ ամս 39։ Զսա ամ մի

արգելլին 'ի Սիջնի, և բերին յաթոռն զԴիոսկորոս հայր Սանահնին. և նա ամ մի կալեալ զկաթուղիկոսութիւնն, և կաթուղիկոսն Աղուանից երթեալ առ թագաւորն ետ հանել զտէր Պետրոս 'ի բանտէն, և Դիոսկորոս չոգաւ 'ի վանս իւր. և տէր Պետրոս երթեալ 'ի Կոստանդինուպօլիս՝ դարձաւ 'ի Սեւաստ և անդ կատարեցաւ :

ԿԴ. Տէր Խաչիկ քուրորդի նորին՝ ամս 2, և կատարեցաւ 'ի Սեւաստ նոյնպէս.

ԿԵ. Տէր Վահրամ որդի Գրիգորի Մաժիստրի առեալ զաթոռն զկնի չորից ամաց խափանուածոյն՝ եթող (1) զկաթուղիկոսութիւնն և չոգաւ 'ի թարգմանութիւն 'ի Կոստանդինուպօլիս, և դարձաւ յԵրուսաղէմ նախ գնալ և յակամայս եհան ծովն զնա 'ի Սուր. և զկնի երկուց ամաց եկեալ առ Գող Վասիլն՝ կատարեցաւ (2) 'ի Կարմիր վանս :

ԿԶ. Տէր Գէորգ սնուցիչն Վահրամայ՝ ամս 3 :

ԿԷ. Տէր Բարսեղ ազգականն Վահրամայ՝ ամս 12 : Սա մեռաւ յանկմանէ 'ի վերայ նորա հեծանի 'ի շինութիւնս ինչ եւ թաղեցաւ 'ի Կարմիր վանսն :

(1) Նորագոյն օրինակքն՝ էթող ջանաւ և յոժարու :

(2) Հնագոյն օրին. 'ի Շուղրի վանս :

ԿԸ. Տէր Գրիգոր ազգական նոցին Վահրամայ և Բարսղի՝ ամս 53, որ փոխեաց զաթոռն ՚ի Ծովքն դղեակ և անտի ՚ի Հռոմկլայն։

ԿԹ. Տէր Ներսէս եղբայր նորին՝ ամս 7, որ էր յաւուրս մեր շնորհազարդ վարդապետութեամբ։ Այսմ շնորհակարգութեան ի յօդիր արարեալ գտաք և կարգեցաք ստուգիւ յաւարտման մերոյ քաղուածի որպէս ձամուկ ՚ի մեկնոյի, յուսալով ՚ի Տէր և յերկրպագուս նորա՝ ողորմութիւն գտանել յաւուրն կարեաց վասն աղօթից արանց աննախանձից։ Բայց զՂունակ և զՅուսիկ՝ որ զկնի մահուանն սրբոյն Ներսիսի եդին, ոչ կարգեցաք՝ չհաճելով, և ոչ զՍուրմակ հակառակն և ոչ զբամբասեալ Ասորին ըզԲարդիշոյ և զՇմուէլ զընդդիմակայն սրբոյն Սահակայ։ Իսկ զկնիան այլք լցցեն։

Տէր Միխայէլ մինչեւ ցայս վայր. աստի Վարդան սիսանի վարդապետոն.

Արդ և մեք հետեւեալքս և պատահեալքս այսմ՝ հասուցուք մինչեւ առ մեզ նովին յուսովն Աստուծոյ։ Յետ կատարման պատուական հայրապետացն Գրիգորի և Ներսիսի երկուց եղբարցն՝ էառ զաթոռն եղբօրորդի նոցա՝

Հ. Տէր Գրիգոր՝ ամս 20։ Սա շինեաց ըզգեղապաճոյճ եկեղեցին 'ի Սկլայն եւ զարդարեաց զնա մեծապէս ։

ՀԱ. Տէր Գրիգորիս Տղայն՝ ամ մի ։ Սա արգելական եղեալ յարքայէն Լեւոնէ, ջանաց 'ի գիշերի իջանել յամրոցէն, եւ կորեալ պարանին՝ անկաւ եւ մեռաւ ։

ՀԲ. Տէր Գրիգորէս Ապիրատն կոչեցեալ՝ ամս 7 ։

ՀԳ. Տէր Յովհաննէս մեծաբարու եւ յաղթասէր՝ ամս 18 ։

ՀԴ. Տէր Կոստանդին յերրորդ մասնէ Հայոց, 'ի դղեկէ Բարձրբերդոյ՝ որ հայի հարաւով 'ի դաշտն Կիլիկիոյ եւ 'ի ծովն Ադրիանու կոչեցեալ, որդի առն արդարոյ եւ խաղաղականի Վահրամ կոչեցելոյ . յորովայնէ ընտրեալ յաստիճան առաքելական 'ի Հոգւոյն, եւ օրինօք նորին անեալ, եւ ըստ կարգի յամենայն գործս եկեղեցւոյ վարժեալ 'ի շնորհս քահանայութեան եւ յառաջնորդութիւն վանից եւ յեպիսկոպոսութեան տեսչութիւն, եւ յամենայնի ընտիր գտեալ եւ հանդիսաւոր ։ Սա որոյ եւ 'ի կատարման հոգեւորական եւ մարմնական հասակի վկայութեամբ Աստուծոյ և մարդկան մեծի գահոյի և աթոռոյ հայրապետութեան Հայաստանեայց արժանաժառանգ լեալ ՚ի շնորհէն և ՚ի բնաւ լրմանէն Եկեղեցւոյ բռնադատեալ. ըստ որում և փորձն ցուցաւ և արդիւնքն յայտնի արարին, և միաբանեցաւ ընդ նմա շնորհն։ Եւ է այժմ քսան և հինգ ամ հայրապետութեան նորա, ՚ի դղեակս աստուածապահ Հռոմկլայ կոչեցեալ, խաղաղասէր բարուք և անարատ վարուք առ ամենեսին խաղաղութիւն կալեալ. վկայութիւն բարի և դրուատիս յարտաքնոցն առեալ. այցելու որբոց՝ և այրեաց խնամածու, և գերելոց անխնայ ծախիւք դարձուցիչ և զարդարիչ, հայրենի գթովք զամենեքումբք փարելով. և եղեալ առատաձեռն առ ամենայն կարօտեալս ողորմածութեամբ, եւ եկեղեցեաց բազմաց պիտոյից լրուցիչ.

Եւ յաւել և ՚ի յայլ բարիսն և զայս մատեան ՚ի գանձս եկեղեցւոյ. և ետ բաղձանօք թարգմանել զսա յասորոց ՚ի հայս, պիտանի լեալ և շահաւէտ բուրաստան, լայն և երկայն իմաստիւք լցեալ, և կարճառօտ բանիւք՝ բովանդակեալ, որ ՚ի սուղ ժամանակս կարող է զպատահեալսն ՚ի վերայ կացուցանել հին և նոր դիպուածոց։ Այլ և հիմն հաստատա և աշտարակ անշարժ իսկ է հայաղական հաւատոյ և ուղղափառ խոստովանութեանս, վկայս բազումս ցուցանելով յազգաց ճշմարիտ ուղեգնացութեամբս՝ հիմամբք աստուածակալն և առաքելադիր կայիւք ամրացեալ։ Այլ և յոլովք տարակոյսք և հանգոյցք լուծանին ՚ի սմա։ Եւ չէ ինչ զարմանալ ընդ նորալուր և անծանօթ բանսն որ գտանին ՚ի սմա. քանզի Ասորիք բնակութեամբ իմն գաւառաց և բառիւք լեզուաց մօտաւորք են միշտ Հրէից լեալ քան զամենայն ազգերգ, և ՚ի դէպ է նոցա մնացանդ ծանօթս գոլ հնոյ կտակին քան այլոց։ Նաև որ զայս մատեան շարայարեալ է, ՚ի Յունաց և յԵգիպտացւոց և ՚ի Քաղդէացւոց դիւանաց և ՚ի դպրոցաց է հաւաքեալ։ Վասն որոյ առաւել սիրելի և պիտանի և հաւատալի է. և վարձս բազումս կալցի առաջի Աստուծոյ և երախտիս յեկեղեցիս ուղղափառաց՝ վաստակասէր այրն բարեփառ տէր Միխայէլ, զի յոլով սէր և գութ երեւի նա ունել առ ազգս մեր ՚ի գրոց աստի։

Արդ ՚ի յամի ութերորդի քառասներորդի երկերիւրերորդի հազարերորդի թուահարութեան անժամանակ որդւոյն Աստուծոյ գալստեանն, և ՚ի ՈՂԷ թուականութեանս

Հայոց՝ թարգմանեցաւ գիրքս այս յասորւոց 'ի հայս 'ի հայրապետութեան Հայոց տեառն Կոստանդեայ և 'ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ քրիստոսապսակի, և զգուշակենցաղ թագուհւոյն իւրոյ Զապելի՝ դստեր Լեւոնի արքայի, ըստ Աստուծոյ քաղաքավարելոց հնգից եղելոյ նոցա զաւակաց ծիրանածնաց, երկուց ուստերաց և երից դստերաց, որոց անուանքն Լեւոն և Թորոս, անուամբ հաւուն իւրեանց(1), որոց հովանի լիցի ամենակալ Բազուկն հայրենի, աճելով 'ի գահ հայրենի արքայութեանն եզերօք Հայաստանեայցս։

Յայսմ ամի կենդանի էր կորովամիտ և աջողեալն 'ի բարիս արքայահայրն Հայոց պարոն Կոստանդին, և բերկրեալ այլովք ուստերօք չորիւք, տէր Բարսեղ տէրն Դրազարկուն, և պարոն Սմբատ սպարապետն Հայոց, և պարոն Օշին տէրն Կոռիկոսայ, և պարոն Լեւոն, որոց զօրանալ լիցի ըստ Աստուծոյ և աճել արիութեամբ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

Եւ էր պատրիարք Ասորւոց ուղղափառաց Մար Իգնատիոս Անտիոքու, որ զօրինակն շնորհեաց և փոխեցաւ 'ի ձեռն Իշօխայ սրբասնեալ քահանայի վարժելոյ 'ի հանճար բժշկական արհեստի, որոց վարձատու լիցի տէր Յիսուս 'ի շնորհս իւր ։

---

(1) Հնագոյն օրի. յաւելու՝ ի [illegible]

Այլ և մեք իսկ(1) տաւնապետաւ ոգ.ի Վարդան վարդապետ, որ ըստ մերում կարի կատարեցաք 'ի գիրս յայս, ունիմք հաւատ և յոյս 'ի գթութիւն Աստուծոյ և յետ նորա 'ի բարեխօսութիւն և յաղօթս ծառայից նորա՝ առ մեզ դարձուցանել զերեսս ողորմութեանն Քրիստոսի 'ի վերայ անկշռելի պարտուց մերոց անթուապատիկ բիւրուց տաղանդացս։ Քանզի այսու անձկալութեամբ ընդոստուցաք զմեզ մոռանալ զմնդակից և զընդանացեալս մեր տկարութիւն մարմնոյ և բազմազան տրամութիւն և զցնորս հոգւոյ խորհրդոց վասն անշահաւոր տարաշրջութեանն. այլ և յաղագս Թշուառացուցիչ ժամանակիս զոր ածին չարիքն մեր յաճախեալ։ Քանզի սակաւ քան զչափ մեղաց մերոց արբոյց մեզ Տէր արտասուս, և նուազ քան զյորդաբուխ ախտիցն մերոց ջրհեղեղս խաղացին առ մեզ վտակք արեան, և ըստ գազանական գնացիցն մերոց յագեցան գազանք 'ի մարմնոց մերոց ։

Քանզի չնչեաց բարկութիւն Տեառն՝

---

(1) Հնագոյն օրի. պակասէ գաղէփ։ պատուաղէաւ ոգի Վարդան ծեր.

ճանճուն արեւելեան հիւսիսայնոյ օտար և անընդել ազգին, որպէս ասեն՝ Թորգոմազունք և'ի զարմէն Հագարու. և հողմով անօրէնութեան մերոյ ած զնոսա մինչեւ առ մեզ ըստ նախատես մարգարէութեան նախնի սուրբ հօրն մերոյ Ներսիսի արտասուապատում ողբոցն, զոր լալով նախաձայնեաց զկորուստ հոգեւոր երկանց իւրոց ծննդոց, զորս ինչ կրեցաքն յազգէն Նետողաց. զորոց զանուանս կոչէ սուր և թեթեւ, զի թերեւս Թաթարն սուր և թեթեւ ասի ըստ լծորդացդ փոփոխման, և կամ (1) հար և տար՝ որ է տաթար, քանզի հարին անյագապէս և տարան աներկիւղաբար զորդիսն Սիօնի 'ի ստրկութիւն գերութեան։ Եւ ասէ զնոսա սուրբն Ներսէս 'ի մնացորդացն Հագարու, և Արիք ասեն զնոսա Թորգոմեանս, յայտ է՝ խառնեալ ազգին Բուլկայ որ 'ի Թորգոմայ ընդ զարմն Հագարու՝ որք ունին զՍկիւթի մասն աշխարհի, որ սկսանի յԱթլ գետոյ և ձգի առ Իմաւոն լերամբն՝ ուր բնակեալ են ազգք քառասուն և երեք, որք խուժական անուամբ կոչին յիւրեանց լեզուս, և գլխաւորն նոցա Բուշխ անուանի. և անուն միոյ ազգին Թուղարք ասի, զոր կարծեմ թէ այս են Թաթարքս ։ Եւ որպէս լուաք յոմանց ՚ի նոցանէ, եթէ ելին առաջինք նոցա ՚ի Թուրքաստան աշխարհէ· և մեկնեցան մինչև ՚ի կողմ արեւելեան, և կային աղքատութեամբ ՚ի գործս աւազակութեան և յափշտակութեան. և պաշտօն ինչ ոչ ունէին, բայց ընդ արեգակն զարմանային, և ՚ի պատճառս հըմայութեան ունէին պատկերս ինչ թաղեայ, զորս տակաւին կրեն ընդ ինքեանս ։

---

(1) Յօրինակին՝ պտար և փար ։

Եւ զկնի ժամանակաց անցելոց՝ ոմանց ՚ի նոցանէ զգայուն արանց նեղեալ ՚ի թշուառական կենաց իւրեանց, կոչեցին զերկնաւորն Աստուած որ զամենայն ինչ արար՝ յօգնականութիւն անձանց ։ Եւ ուխտեցին նմա ուխտ, և ելին ՚ի վերայ քաղաքի միոյ փոքու, յափշտակեցին զնա ՚ի տերանցն, և բնակեցան անդ ։ Եւ յայնմանէ ոյժ առեալ տիրացան երկրին, և կոչեցին յերկրէն իւրեանց թիկունս և զօրացան ՚ի վերայ Պարսից, և առին զիշխանութիւնս նոցա ։ Ուսան և ՚ի մոգուց անտի զարուեստ կախարդութեան, և առեալ հրամանս ՚ի դիւթաց անտի՝ եթէ տուեալ է նոցա յԱստուծոյ զաշխարհ ամենայն, ելեն վստահութեամբ և ժառանգեցեն զնա ։ Եւ չէ ինչ զարմանալ, զի Նաբուգոդոնոսոր արքայ Բաբելացոց հմայիւք եւ Երուսաղէմ, և մատնեաց Տէր 'ի ձեռս նորա. և զԿիւրոս Պարսից արքայ օծեալ իւր կոչէր Աստուած և առաքէր 'ի վերայ Բաբելոնի ։ Նա և ինքեանք խոստովանին զամենայն ինչ Աստուծոյ առնել, և զինքեանս նորին հրամանաւ ասեն(1) եկեալ ։

Արդ հաւատացեալ նոցա հրամանի իւրեանց երեւմանն, եղեն նոքա երեք բաժին ընտրութեամբ իւրեանց թագաւորին զոր Խաքանն կոչեն, որ է խանն ։ Մասն առաջին գնաց 'ի կողմն Հնդկաց, և մասն երկրորդ չոգաւ առ անապատօք հիւսիսոյ, և երրորդ բաժինն ընդ մէջ Պարսից աշխարհին՝ և եկն մինչեւ առ մեզ ։ Եւ ասէին թէ երեք էին գլխաւորք, և մինն բարեբարոյ քան զերկուսն, զոր(2) Զարմաղանն կոչէին. որ և զկնի բազում աշխարհաց աւերման և կոտորման՝ նստեալ 'ի խորհուրդ զոր Խուռուլթայ կոչեն, և ասացեալ Զարմաղանին թէ՝ Բաւական է աւերս և կոտորուածս, յայսմ հետէ զհնազանդեալսն մի՛ ջնջեսցուք 'ի սպառ, զի մի՛ բարկասցի Աստուած ։ Իսկ երկու գլխաւորքն հակառակեալ ընդ նմա ասացին թէ՝ Ոչ է պարտ մեզ ապրեցուցանել և ոչ զոք, որովհետեւ աջողէ մեզ Աստուած ։ Եւ տրա-

(1) Նորագոյն օրինակք՝ ելեալ ։ (2) Նոր. օրինակքն՝ Զօրմաղանն

մութեամբ ննջեցին զգիշերն զայն. և յայնմ գիշերի մեռան երկոքեանն որ զանողորմութիւնն կամէին, և զարմացան զօրքն և հասուցին ըզբանն առ Ղանն: Եւ առաքեաց հաստատեաց զկամս Չարմաղանին՝ օրինօք խնայել 'ի հնազանդեալսն և դնել 'ի ներքոյ հարկի. և զնա միայն հաստատեաց 'ի գլխաւորութիւն, զի այն է ասէ կամք Աստուծոյ. վասն որոյ և կան 'ի նոյն մինչեւ ցայսօր:

Իսկ զժամանակ ելանելոյ նոցա ասէ մեծն Ներսէս, եթէ զկնի իմոյ վախճանիս յորժամ անցանէ եւթն հարիւր ամ՝ սկսանի լինել: Եւ արդ ըստ վճռոյ սրբոյն հարիւր յիսուն ամ է զօրանալոյ նոցա և յաղթութեան. եւ յորմէ հետէ մտեալ են յարեւելեան աշխարհն Հայոց՝ քսան և ութ ամ է: Եւ զոր ինչ գործեցին ապականութիւն երկրին և տապալումն քաղաքաց և դղեկաց և աւեր եկեղեցեաց և մահս ազգի ազգիս և գերութիւնս. և թէ որպէս յետ այնորիկ հաշտեցան ընդ Թաթարացն 'ի ձեռն իշխանաց աշխարհին և պարոնին խնամութիւնս, և մինացեալ եկեղեցեացն և եկեղեցականացն դիւրութիւնս և ազատ կամօք կալ 'ի կրօնս իւրեանց. սակայն անլրապէս պահանջումն հարկաց ճշգիւ և անխնայապէս ըստ գլխոյ արանց և անասնոց՝ բաց 'ի մանկանց եկեղեցւոյ և ամենայնի որք զձեւ աղօթական կարգի ունիցին ․ Զայսոսիկ զամենեսեան գրեալ է լիով 'ի տեղիս տեղիս ․ և մեք մի՛ շփոթեացուք զոճ շարագրայն կարգի՝ որ յատուկ խնդրէ հատուածս և պարապումն ժամանակաց և հաստատութիւն 'ի տեսիլ աչաց գործեցելոց ․

Սակայն զյոլովս տեսաք աչօք մերովք 'ի նախաձայնեալ աղէտից սուրբ նահատակին Ներսէսի ․ (1) զեկեղեցեան մեր նսեմացեալ և զսեղանն սուրբ կործանեալ, զմատեանս աստուածային այրեցեալ և առ ոտն կոխեալ, զապաստան որբութեան և զքրիստոսական նշանն անարժանից ձեռօք շօշափեալ և նախատեալ և յանարգ պէտս վարեալ, զաշխարհս մեր անապատացեալ, զքաղաքս բնակութիւն լեալ գազանաց ։ Քանզի լցան լերինք և անապատք մեր անզերծ փախստէիւք և դաշտք դիակամբ ոսկերօք կոտորելոցն, և անդաստանք մեր և հովիտք ոռոգեցան արեամբ, և կերպաք մնացորդքս զհասկ անդեան այնպիսի արտորէից ։ Ազատքն մեր 'ի ծառայութիւն իջին և փափուկքն մեր յանրմբելի չար-

---

(1) Նորագոյն օրինակքն [illegible] [illegible] Նորա՛ ․ և հա-[illegible] ․ և մեր [illegible] [illegible] [illegible] 'ի Գերմանեան [illegible] [illegible] ․

չարանս ։ Բարձունքն մեր խոնարհեցան, և փառաւորքն մեր յանարգութիւնս ընկճեցան ։ Անուանքն հովասուն լերանց խորշակահարք եղեն յարեւու ։ Կուսանքն մեր օտարաց եղեն, և երիտասարդքն մեր հովիւք և (1) կուտպանք այլասեռից ։ Կարօտացաք ողբոյն Երեմիայի և կրեցաք զպատուհաս հնոյն Իսրայէլի ։ Տղայք աշխարհաց մերոց որբք եղեն և մարք նոցա այրիք ։ Որդիք վերինն Սիոնի զուգակշիռք ոսկւոյ՝ իբրեւ զանօթ անպիտան համարան գարշի․ Ցրուեցաւ հօտն Տեառն, ճապաղեցան գառինք արօտի նորա։ Վաճառակուր եղեն յազգս հեռաւորս գընեալքն արեամբն Քրիստոսի ։ Բաժանեցան ծնունդք 'ի ծնողացն․ մեկնեցան հարազատքն 'ի միմեանց․ հեռացան բարեկամք 'ի սիրելեաց․ դարձաւ տօնն մեր 'ի սուգ և ուրախութիւն մեր յարտասուս, և ոչ գոյ թիւ աղաղակի մերում, զի չիք համար չարեաց մերոց։ Եւ 'ի վերայ այսր ամենայնի ոչ է 'ի մեզ զղջումն և ոչ ապաշխարութիւն․ ոչ պատառեցաք զսիրտս մեր, և ոչ խարշեցան փորոտիք մեր, և ոչ դարձաք 'ի գնացից մերոց խոտորնակաց, այլ և յաւելաք վերս յանօրէնութիւնս մեր յառաջինս, և խաւարեցան անմտութեանց խորհուրդք մեր ։ Եւ ո՞վ ո՛չ զարմասցի ընդ լրբութիւնս մեր, զի տակաւին պիտի մեղ արեւս այս, և խնդրեմք հնարիւք զսէր և զվայելս աշխարհիս և զփառս սորա զփախստականս ։

---

(1) Հնագոյն օրի․ Ջոջարածք ։

Բայց ես մանաւանդ զանձնէ ասեմ զոր գիտեմ, միայն զկիրս և զկամս ստորաքարշս անյագապէս եղեալ 'մոխրանէր յաւուրս իմ, և միայն 'ի ձեռն սակաւ սատարիս այսմ ունիմ ակն մեծի գթութեան Աստուծոյ վասն աղօթից ձերոց զոր հայցեմ լռութեամբ գրոյս, իբրեւ զոմեալ սպասեակս առընթեր սեղանոյ մեծատանց ։ Եւ յաւելում 'ի մաղթանս իմ զբարեխօսութիւն սրբոց՝ եդեալ առաջի ձեռնուէրս՝ առ իս ածել զգութս ձեր սիրով զիջանել ընդ իս, և խնդրել ինձ 'ի սրտէ ողորմութիւն 'ի կամեցօղ և 'ի կարօղ խնամոցն Յիսուսի ։ Եւ այն որ մեծ է ողորմութեամբ՝ աջն յաջողակ Հօրն բարձրելոյ, որոյ բնաբար է փրկելն և կեցուցանելն, թէպէտ և 'ի մէնջ բռնադատեալ հարկանէ յուսով խրատու, այն որ ոչ (1) ցաւելի և կամաւք չարչարէ զանդամս իւր, նա բժշկեսցէ զվիրաւորեալ մարմինս իւր զսուրբ Եկեղեցի, և զցրուեալ հօտս իւր հաւաքեսցէ առ ճիքն յարօտս խաղաղութեան բարերար կամօք իւրովք, 'ի փառս անուան իւրոյ. և զերկոսին ակունս զայնոսիկ զպատուականս՝ զկայծ և զկանաչ, զմթուքս հայրապետական և արքայական հայադաւան ազգիս ուղղափառութեան, զոր եթող մեզ զաւակ յուսոյ Տէրն զօրութեան, յորս գոյ օրհնութիւն Տեառն ամենակալի. զսոսա հաստատուն և անսասան պահեսցէ զօրութիւնն ամենակիր և ամենաստեղծ արժանաժառանգ աթոռակալօք մինչև յաւիտեան։ Եւ զայժմու նստեալքս արժանաւոր կոչմամբ Հոգւոյն սրբոյ զտէր Կոստանդին Հայոց մեծաց և հանուրց վերադիտող, և զնոյնազարմ ազգիս պսակակիրն Հեթում պարագայց ամօք առողջակիր մարմնով և անուանի փառօք խնամեսցէ 'ի գովեստ ամենասուրբ տէրութեան իւրոյ, զաւակօք և զարմօք որ ըստ հոգւոյ և որ ըստ մարմնոյ. և յետ աստեացս անասելի աթոռոյն և անթառամ պսակին արժանաւորեսցէ։

---

(1) Ամենայն օրի . ունէին՝ ոչ ինչ ասէին ։

Եւ որք այժմ ընդ մեզ հարք և եղբարք, եպիսկոպոսք և վարդապետք և պատկառելի ծերունիք, և ժրաջան ճգնաւորք, և պատարագօղք և կղերիկոսք. և գործաւորք մարմնական պիտոյից, և խնամածուք աստուածապահ դղեկիս, և սպասաւորք սրբազան աթոռոյս, որք են ամենեքեան առ միմեանս սիրունք և առ մեզ աննախանձք, և փոխման մատենիս յօժարամիտք և յորդորիչք, զամենեսեան առատաձեռն պարգեւօք լի արասցէ Թագաւորն փառաց հոգեւոր և մարմնաւոր յաջողուածովք, 'ի մեծութիւն և 'ի փառս անուան իւրոյ. որ է օրհնեալ և փառաւորեալ, գովեալ և գոհաբանեալ յազգս և յազինս բոլոր բանականաց, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՎԵՐՋ

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

ԳԼՈՒԽ ԵՐԵՍ

Ա. Յաղագս յԱդամայ հետէ մինչեւ ամաղունք ։ 1

Բ. Ամաղունք, որ եկին էր Թագաւոր, եւ այլ կարգ Թագաւորացն Բաբելացւոց ։ 24

Գ. Յաղագս Մովսէսի ընդ ծովն կարմիր ։ 46

Դ. Յաղագս Թէ դշխոյ եկն առ Սողոմոն ։ 65

Ե. Յաղագս Թարգմանութեան հին կտակարանացն 'ի Կիպրոս կղզի ։ 100

Զ. Յաղագս կարգաւ առաքելոցն ուր կատարեցան ։ 123

Է. Յաղագս Աբգարու որ առաքեաց յԵրուսաղէմ նկարագիր վասն պատկերին Քրիստոսի ։ 129

Ը. Յաղագս Թէ սով սաստիկ եղեւ 'ի Դիոկղետիանոսի ժամանակն ։ 147

Թ. Յաղագս Արիոսի հերձուածողին ։ 152

Ժ. Յաղագս Յուլիանոսի ուրանալոյ ։ 162

ԺԱ. Յաղագս Մելիտոսի որ կանոնեաց չառնել խոստովանութիւն անիմաստ քահանայի ։ 177

ԺԲ. Յաղագս Նեստորի հերձուածողին ։ 190

ԺԳ. Յաղագս Նշանաց որ եղեն ամիս մի օդփոշի տեղաց եւ Թիզ մի կուտեցաւ ։ 224

ԺԴ. Յաղագս աւերման Ամթայ եւ Պօղոս անուն հրեայ եղեւ պատրիարք Անտիոքայ եւ ժողովեաց զամենայն եպիսկոպոսունս. զկնի Պօղի Ասկղիպ եղեւ չարադաւան. եւ հեղեղն որ ջրասոյզ արար զՈւռհայ ։ 252

ԺԵ. Յաղագս Ասկղիպայ եւ Եփրեմի. որ անիծանէին զուղղափառսն, եւ եկն պատուհաս 'ի վերայ նոցա ։ 275

ԺԶ. Յաղագս որ յութ հարիւր քառասուն Թուին Ասորւոց եղեւ հրաշք անհաւատալի, և զկնի եղեւ մահտարաժամ որ բնաւ չէր լեալ, և եղեւ սով և շարժ քառասուն օր: 262

ԺԷ. Յաղագս որ յութ հարիւր եւթանասուն և մի Թուին Ասորւոց, և Ամթայ պատուհասին: 273

ԺԸ. Յաղագս որ յայսմ ժամանակի երեւեցաւ Մահմէտ որդի Աբդլլահի 'ի Թուին հայոց վաթսուն և եւթն: Զայսու ժամանակօք խաւարեցաւ կէս արեգականն յարեգ աշնանամտին մինչև 'ի քաղոց ամիս: 312

ԺԹ. Յաղագս սով սաստիկ եղեւ, և զկնի եղեւ հողմ սաստիկ հիւսիսային և փլոյզ բազում եկեղեցիս և բրգունս քաղաքաց. և Ոմարայ՝ որ հրամայեաց ոչ ընդունել ըզՔրիստոնէից վկայութիւն: 333

Ի. Յաղագս որ նշանք մեծամեծք և ցոլմունք և փոշի գայր. և 'ի ծովն խռովեալ ձկունք հրեղէնք երեւեալ, և եկն կարկուտ կշիռն երկու լիտր. և Ջամբրի հարկապահանջութիւն անյիշելի: 336

ԻԱ. * Յաղագս աստի սկսանի պատմութիւնքս 'ի յառաջումն Կիւլիկիոյ առ Հայս: 406

ԻԳ. Յաղագս կռուելոյ արաբիկք և խորդք: 418

ԻԴ. Յաղագս գեղարդեանն Քրիստոսի: 422

ԻԵ. Յաղագս առման Կլային Հռովմայ: 428

ԻԶ. Յաղագս պարոն Թորոսի և Սալահատինի և. հարցմանց Տ. Ներսեսի և հաւատոյն քննութեան և երկու բնութիւն ասելոյն: 4 3

---

* Աստ ունէաք ունայն՝ մոռացեալ դնել ԻԲ գլուխն:

ԺԷ. Յաղագս շարժին որ եղեւ 'ի յունիսի քսան և ինն. և 'ի խաչի ամիան եկն ձիւն քսան և հինգ թիզ : 464
ԺԸ. Յաղագս Ծալահատնին և մեծին Լեւոնի : 495
ԺԹ. Նորին տեառն Միխայելի յաղագս քահանայական կարգաց՝ թէ ուստի առնու սկիզբն : 532
Նորին դաւանութիւն հաւատոյ : 574
Գաւազանագիրք աթոռակալաց հնգից աթոռոց : 583
Յաւելուած 'ի Վարդանայ : 608